ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Ա. ՇՏԻԿՅԱՆ

ՀԱՅ ՆՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1865-1875

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1991

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն[1]

«Ժամանակագրությունը խարիսխն է պատմության և պատմությունը ճիշտ չէ առանց ժամանակագրության» (Սպենսեր)։

«Մտածողության կազմակերպման ամենառեալ ձևը, այդ մտածողությունը որոշակի համակարգի մեջ ներդնելու ամենաճիշտ միջոցը ժամանակագրությունն է» (Կանտ)։

«Հայ նոր գրականության ժամանակագրության» երրորդ գիրքն ընդգրկում է հայ-գրական մշակութայինն հասարակական-քաղաքական կյանքի 1866-1875 թթ.։ Եթե մեր աշխատության առաջին գիրքը (Երևան, 1973) ներառում էր այդ կյանքի 1801-1850 թթ., երկրորդ գիրքը (Երևան, 1983)՝ 1851-1865 թվականների ժամանակաշրջանը, ապա այս հատորի ընդգրկումը կազմում է տասը տարի։ Այս «մանրացումը» ծնող պատճառներից հիմնականները հետևյալներն են։

Դարի առաջին կեսի հայ ժողովրդի սոցիալ-հասարակական և մանավանդ մտավոր գոյավիճակը թեկուզ մակերեսորեն քննելիս, ուշադրությունից չի վրիպում մեր գիտական գրականության մեջ արդեն վերլուծության արժանացած հետևյալ հանգամանքը։ Օսմանյան «առատագութ» և «շնորհաբաշխ» կայսրության մամլիչի տակ անգթորեն ճզմված, այդ կայսրության մյուս բոլոր «ռայա» ազգերի նման (հույներ, հրեաներ, քրդեր, պարսիկներ, ալբանացիներ, ռումիններ), հայ ժողովուրդը, պարզ տրամաբանության թելադրությամբ, նախ և առաջ պետք է զբաղվեր իր կենցաղային-տնտեսական, ինչպես նաև՝ իր առօրյա կյանքը կազմակերպելու բազմաբնույթ հոգս ու ցավերով և ապա նոր միայն՝ մտավոր-գաղափարական գործունեությամբ։ Եվ դարասկզբին, հայ ժողովրդի համար ասված՝ «մտավոր խանձարուրի մեջ գտնվող ազգ» արտահայտությունը, որն ի դեպ, այնպես սիրում էին կրկնել հայ մտավորականության մեծ և փոքր ներկայացուցիչները, միանգամայն ճիշտ էր, այդ հասկացողության թե՛ ուղղակի, և թե՛ պատկերավոր իմաստով։ Ճիշտ է, նշված ժամանակաշրջանի հայկական իրականությունը մեզ պարգևել է ոչ քիչ թվով անուններ, որոնք իրենց կայուն տեղն են ապահովել ինչպես հայ գրականության, այնպես էլ մեր

[1]«Հայ նոր գրականության ժամանակագրության» ներկա հատորի էլեկտրոնային տարբերակում ներգրավված է միայն փաստագրական նյութը։ Մեջբերումները միտումնավոր կերպով դուրս են թողնված, էլեկտրոնային ծավալը խնայելու նպատակով։

գիտական-մշակութային կյանքի շղթայում, իսկ կրթական հայագիտական կենտրոններից՝ Վենետիկի Մխիթարյանների գործունեությունը ամենապահանջկոտ քննություննն էր բռնում նույնիսկ դարասկզբին, բայց անգամ այս պարագայում, իր ուժը չէր կորցնում ժամանակին լայնորեն տարածված այն հայտնի արտահայտությունը, որ «ամեն ինչ կարվեր ոչ թե ի շնորհիվ, այլ չնայած պատկան իշխանություններու»:

Եվ դարի առաջին կեսի գրական-գեղարվեստական-հայագիտական արտադրանքը բնորոշ արտացոլումն է հասարական-քաղաքական այդ գորշ իրավիճակի: Նախ՝ սակավաթիվ էին ժամանակի պարբերականները՝ անկանոն տնողությամբ ու պարբերականությամբ հրատարակվող, առանց առաջատար գրական կամ հասարակական ուղղության, հաճախ շատ առօրեական, կոնկրետ-կենցաղային խնդիրների ձայնափողը հանդիսացող: Դրանցում հրատարակված ինքնուրույն և թարգմանական գրական ստեղծագործություններն էլ հանդես են եկել դեպքից դեպք, առանց որևէ կայուն հետևողականության, կամ ներքին-տրամաբանական ինչ-որ թելադիր սկզբունքի համաձայն:

Է՛լ ավելի անմխիթար վիճակում էր հայագիտական, պատմաբանասիրական գրականության հրատարակությունը: Նույնիսկ հանրաճանաչ հայագիտական կենտրոն Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, ընդհուպ մինչև դարի 40-50-ական թվականները, հրատարակում էր միջին հաշվով տարեկան հինգ անուն գիրք, դրանցից մի փոքր ավելին էլ Պոլիսն ու Զմյուռնիան միասին: Այդ գրքերի շարքում հազվագյուտ չէին այնպիսիները, որոնք նախորդ տարիների «ի տիպ արձանացուցված» գործերի վերահրատարակություններն էին:

Սակայն հասարակական-քաղաքական այս իրավիճակը որոշակիորեն և հաստատուն վերելքային հետևողականությամբ սկսեց փոխվել դարի երկրորդ կեսից: 19-րդ դարը, որն իրավացիորեն վաստակել էր «Լուսավորության դար» անունը, անգամ Թուրքիայի նման կիսաֆեոդալական պետության կառավարողներին միտք հուշեց, որ անհրաժեշտ է գեթ սահմանադրական դեմոկրատիզմի պայմաններում վերակառուցել երկիրը և նրան օր առաջ մղել դեպի ժամանակի մտավոր ու հասարակական-քաղաքական առաջավոր մակարդակը: Դրա հստակ ապացույցն էր կարճ ժամանակամիջոցում ամբողջ կայսրությունը մի քանի անգամ պաշտոնապես «վերաձևելու» որոշակի քաղաքականությունը, որը դրսևորվում էր թե՛ պետական-վարչական

գործելաեղանակով (1856 թ. փետրվարի 18-ի «Խաթթի հումայուն» օրինագիծը («Թանզիմաթ»), 1864 թ. հոկտեմբերի 26-ի օրինագիծը՝ ամբողջ կայսրության կառավարական համակարգը դեմոկրատացնելու մասին, 1875 թ. նոյեմբերի 30-ի Սահմանադրությունը՝ նվիրված երկրի մտավոր ու տնտեսական կյանքի զարգացումը խթանելուն և այլն), և թե՛ այդ կայսրության մեծ ու փոքր ղեկավարների (օր. Ֆուադ փաշա, Ալի փաշա) գրավոր ու բանավոր հավաստիացումներում: Ինչ եղավ երկրում, ինչ փոխվեց և ինչպես, այս մասին համառոտակի ասել ենք[2]: Բարեփոխումների այս եռքից կարողացան ազատվել «գյավուր» ազգությունները, հարկավ նաև հայերը, իրենց հասարակական-քաղաքական և մանավանդ մտավոր կյանքը կամակերպելու խնդրում:

Գրեթե նույն երևույթը տեղի ունեցավ նաև Ռուսական կայսրության ներսում: Իրադարձությունների հիմնական «մեղավորը» հանրահայտ «Արևելյան կամ Ղրիմի պատերազմը» (1853-56թթ.), որն ամբողջ քաղաքակիրթ աշխարհին ցույց տվեց «Ճորտատիրական սիստեմի ամբողջ փտածությունն ու նեխածությունը» (Լենին), ժամանակի հրամայականը դարձրեց միապետական դեմոկրատիզմի սահմաններում վերաձևելու խնդիրը: Հաջորդաբար հրատարակվեցին «Ռուսաստանում դպրոցական գործը զարգացնելու մասին» (1854 թ., նույնը՝ 1863թ.) որոշումները և, մանավանդ, 1861 թ. փետրվարի 19-ի հանրահայտ «Մանիֆեստը»,որով կայսրության ամբողջ տարածքում մեկընդմիշտ վերացվում էր դարի ամոթը՝ ճորտատիրությունը, սրանց հաջորդած՝ զինվորական դատարանները դեմոկրատացնելու (1867թ.), Անդրկովկասում գյուղացիական ռեֆորմ անցկացնելու (1864-1871 թթ.) վերաբերյալ կայսերական կարգադրությունները՝ «Դպրոցների վիճակը բարելավելու և այդ նպատակով տեսուչներ նշանակելու մասին» (1871թ.), «Կայսրության ամբողջ տարածքում կրթությանն ու լուսավորությանը զարկ տալու և այդ կապակցությամբ միջոցների առջև կանգ չառնելու մասին» (1873թ.), որոշումներն ու հրովարտակները: Ռուսաստանի տարածքում ծվարած հայ ժողովուրդը՝ ռուսահայությունը, կարողացավ օգտվել իր համար ստեղծված քիչ թե շատ բարեպատեհ պայմաններից:

Առավել որոշակիությամբ ցուցահանելի են դառնում, երբ քննում ենք դարի երկրորդ կեսի գրական-գեղարվեստական արտադրանքը և ծավալված մշակութային-հասարակական գործունեությունը: Այստեղ կան արդեն ազգայնորեն ճանաչված անվա-

---

[2] ՇտիկյանՍ., Հայ նոր գրականության ժամանակագրություն (1851-1865), Երևան, 1983, էջ 9-13:

նի մտավորականներ (Հովհաննես Հիսարյան, Ղևոնդ Ալիշան, Գաբրիել, Միքայել և Սերովբէ Պատկանյաններ, Գևորգ Հյուրմյուզյան, Ամբրոսիոս և Խորեն Գալֆայաններ, Գաբրիել Այվազովսկի, Մսեր և Զարմայր Մսերյանցներ, Գալուստ Կոստանդյան, Արմենակ Հայկունի, Ստեփանոս Մանդինյան, Եղիշե Դուրյան, Մկրտիչ Խրիմյան, Պետրոս Մաղաքյանց-Մեյադ, Գևորգ Տեր-Աղեքսանդրյանց, Գարեգին Սրվանձտյանց և այլք), որոնց ստեղծած մտավոր արժեքները հաստատուն տեղ ունեն ժամանակի (և ոչ միայն ժամանակի) հայկական հոգևոր կանքում: Իրենց գործունեությունն են սկսում ամենատարբեր ուղղության շուրջ հիսուն պարբերականներ («Արշալույս արարատյան», «Բազմավեպ», «Բանասեր», «Մասյաց աղավնի», «Մասիս», «Մեղու», «Երևակ», «Մեղու Հայաստանի», «Արևմուտք» և «Արևելք», «Հայկական աշխարհ» և այլն), որոնց գրական-բանասիրական և հասարակական նկարագիրը երկար բնութագրականների կարիք չունի: Դարի երկրորդ կեսին, վերջապես հայկական ազգային կյանքի կազմակերպիչ-խթանող միավորները՝ կրթական մշակութային ընկերությունները եկան ամբողջացնելու ընդհանուր զարգացման պատկերը: Չենք խոսում այս ժամանակահատվածում հրատարակված հայագիտական ու գեղարվեստական գրականության մասին, որոնցից թեկուզ ամենահայտնիների անունների հիշատակությունը (Էդ. Հյուրմյուզյան «Բուրաստանք», պոեմ, «Տաղք Մխիթարյան վարդապետաց», չափածո ստեղծագործությունների եռահատոր ժողովածու, «Սայաթ-Նովա, լույս տեսած աշխատասիրութենով (կազմ. Գ. Ախվերդյան)», Ղ. Ալիշան «Նուագք» հինգ հատոր, Ա. Բագրատունի «Հայկ դիւցազն», Խ. Աբովյան «Վերք Հայաստանի, ողբ հայրենասիրի» պատմավեպ, Ալ. Լամարթին «Դաշնակք» (թարգ. Խ. Գալֆայան)», Պ. Պռոշյան «Սոս և Վարդիթեր», վեպ, Ս. Մանիկյան (ի՛մա. Մ. Նալբանդյան) «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» և այլն) մեզ համապատասխան բնութագրականներ տալու անհրաժեշտությունից ազատում է:

Եվ բնական է, որ այսպիսի անբավ քանակությամբ փաստանյութը հավաքել, ի մի բերելը, անհրաժեշտ բնութագրականներով ընթերցողներին ներկայացնելն ամենևին էլ չէր կարող դյուրին գործ համարվել: Այդ հանգամանքը կարող է հուշել, թե ավելի ճիշտ է դուրս թողնել այն ամենը ինչ գրական-մշակութային առումով «երկրորդական» արժեք է ներկայացնում և ժամանակագրել միայն այն հրատարակությունները, որոնք տոն և ուրախություն են տվել գրական-հասարակական կյանքին:

Այդ մոտեցումն սկզբից իսկ մերժեցինք: Նախ՝ չէինք կարող ստանձնել ամբողջ հայ նոր գրականության ու մշակույթի գնահատողի և որակավորողի, այլ կերպ ասած նրա դատավորի դերը հանձն առնելու «պատիվը», երկրորդ, գրականության պատմությունը հաստատում է, որ չկան «առաջին» կամ «երկրորդ» կարևորության փաստեր: Դրանք կամ առաջնային են դառնում տվյալ ենթաբնագրում և կամ, նույն այդ հասարակական-իրավական դեպքերի փոփոխության հետևանքով, իրենց տեղը զիջում են տվյալ իրավիճակի համար ավելի բնութագրականներին: Հետևաբար վերցնել փաստանյութը «հենց այնպես», տվյալ գրական-հասարակական ենթաբնագրից դուրս և անկախ և ըստ այդմ նրան տեղ տալ, կամ չտալ «Հայ նոր գրականության ժամանակագրության» հատորներում, կնշանակեր թույլ տալ անուղղելի սխալ: Հավելենք, որ դա իրեն չի վերապահել համաբնույթ գործերի հեղինակներից (Ա. Զամինյան, Գ. Զարբհանալյան, Ա. Ղազիկյան, Գ. Լևոնյան, Հ.Անասյան, Հ. Խաչատրյան, Հ. Դավթյան) և ոչ մեկը:

Այն կարծիքը, որ «Հայ նոր գրականության ժամանակագրության» հաջորդական հատորները, քանի որ մեծապես հագեցած են լինելու գրական-հասարակական բնույթի մեծաքանակ փաստանյութերով, ապա հնարավոր կլինի սեղմել, ամեն ինչ ներկայացնել ավելի համառոտ ձևով, ավելի համառոտ բնութագրականներով, իսկ շատ դեպքում՝ զուցեև առանց այդ բնութագրականների, ընդունելի չհամարեցինք հետևյալ պատճառով: Հայ նոր գրականության ժամանակագրությունը կազմելու մեր աշխատանքների ամենասկզբնական տարիներից իսկ աշխատել ենք առկա փաստանյութը ներկայացնել հնարավորինս սեղմ ու համառոտ, այս կամ այն փաստը որքան կարելի է ավելի ամփոփ ձևով ընթերցողին մատուցել, մանավանդ, երբ խոսքը վերաբերում էր պատերազմական իրադարձությունների կամ կրթական-մշակութային ընկերությունների ժամանակագրմանը: Ավելին անել, ձգտել «գերհամառոտության», արդեն կնշանակեր աղճատել փաստերը, խախտել նրանց ներքին տրամաբանական հենքը: Սա էլ իր հերթին կնշանակեր ստեղծել ոչ թե հայ նոր գրականության ամբողջական ուղեցույց, այլ, լավագույն դեպքում, նրա կիսատ-պռատ տարբերակը: Առնվազն ոչ մասնագիտորեն կհնչեր, ասենք, ժամանակագրել Պերճ Պռոշյանի «Սոս և Վարդիթեր» վեպի հրատարակության մերկ փաստը միայն, և մեջ չբերել նրա վկայությունը, թե մեր գրականության որ դասականի ուղղակի ազդեցու-

թյան ներքո է այն հեղինակվել. կամ ժամանակագրել Պոլսում իր գործունեությունը ծավալած «Ընթերցասիրած ընկերության» մասին և մի քանի խոսքով վեր չհանել այն անկրկնելի դերը, որը նա կատարել է Պետրոս Դուրյանի կյանքում: Չի կարելի ասել Միքայել Նալբանդյանի՝ գրաբարից արևելահայերեն թարգմանությամբ կատարված Ղազար Փարպեցու «Թղթի» մասին և չպարզաբանել, թե ինչու է նրա հրատարակությունը իրականացրել բոլորովին այլ մարդ՝ Միքայել Տեր-Գրիգորյանը: Այս գնով կատարվող համառոտաբանությունից, որից, ինչպես ասացինք, բնավ չէր շահելու աշխատությունը, հրաժարվել ենք ի սկզբանե:

Մնում էր դիմել ժամանակագրական-տարեգրական գործերի համար ամենատրամաբանական եղանակին, այն է՝ ելնելով փաստերի մեծաքանակությունից և դրանք հնարավորինս խորությամբ մատուցելու անհրաժեշտությունից, մանրացնել հատորների ժամանակային տարածքը, վերցնել տարիների ավելի կարճատև տևողություններ, հետևաբար, նոր գրականության ավելի փոքր հատվածներ: Նման կոտորակումը հայ նոր գրականության որևէ նոր պարբերացում չի ենթադրում, այդ գրականությունը մեր կողմից առաջարկվող նոր իմաստային բաժանում տալ չի հավակնում: Այն բխում է հավաքված նյութը հնարավորինս լրիվ ներկայացնելու ցանկությունից: Այդ սկզբունքից ելնելով՝ մեր «Հայ նոր գրականության ժամանակագրության» առաջին գիրքը հիսուն տարվա ընդգրկում ունի, երկրորդը՝ տասնհինգ, իսկ երրորդն՝ընդամենը տասը տարվա:

Իրոք, դրությունը շատ բարդացավ և որակական նոր փոփոխումների տեղիք տվեց «Ժամանակագրության» ներկա հատորի կապակցությամբ: Այդ փոփոխություններից առաջինը՝ մեր պարբերականների քաղաքական շեշտակի աճի (նախորդ շրջանի համեմատ՝ շուրջ հինգ անգամ) և դրա հետևանքով որակական այն ակնառու տեղաշարժերի փաստն էր, որն արդեն անվիճելի երևույթ էր 1866-1875 թվականներին: Նախկինում ամեն ինչի մասին գրող և ամեն հարց իր էջերում քննարկող «Բազմավեպն» օրինակ, վերը հիշատակված տարիներին հիմնավորապես «բեռնաթափվել» էր այդ բնույթի նյութերից և ավելի հաստատվելով իր հիմնական «մտային կոչմունքին մեջ», դարձել էր հայագիտական-բանասիրական ուղղվածության ամսագիր: 1864 թ. Թիֆլիսում իր գոյությունն սկսած «Հայկական աշխարհը» առաջին իսկ համարներից դիդակտիկ-մանկավարժական թեքում ուներ և հետագա 15 տարիների ընթացքում

ավելի խորացրեց և ընդլայնեց իր գործունեությունը: 1864 թ. Երուսաղեմում «ծնված» «Սիոն» և 1868 թ. Էջմիածնում՝ «Արարատ» ամսագրերը կրոնա-աստվածաբանական ուղղություն ունեին ոչ միայն մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում, այլև նրանից հետո: Կարճ կյանք ունեցավ Զմյուռնիայում հրատարակվող «Իրավունք» շաբաթաթերթը, սակայն այն հաստատուն հետևողականությամբ քննության նյութ էր դարձնում իրավական, օրենսդրական, դատական ունեցվածքի անձեռնմխելիությունն ապահովող օսմանյան օրենքների ճշտության և այս բնույթի այլ հարցեր: 1871 թ. Զմյուռնիայում իր հասարակական գոյությունն անցած «Արևելյան մամուլը» սկզբնական շրջանի իր որոշ թարթափումներից հետո, վերջնականապես ու հաստատուն կերպով ընդունեց մի պրոֆիլ, որն այսօրվա տերմինաբանությամբ բնութագրվում է որպես գրական-գեղարվեստական և թարգմանական ու այդպես էլ մնաց մինչև 19-րդ դարի սկիզբը, այսինքն՝ մինչև իր «կյանքի վերջը»:

Այսպիսին է քննության արժանի այն առանձնահատկություններից առաջինը, որն ամենայն որոշակիությամբ նկատվում է ներկա հատորի ժամանակային տարածքում իրենց գործունեությունը ծավալած մեր պարբերականների «ընթացքը» քննելիս: Դրանք եղել են գրական-հասարակական այս կամ այն մտայնության, մեր կյանքի այդ ժամանակաշրջանի միտումների ձայնափողը: Ուստի անհրաժեշտ էր հստակորեն պարզել, թե որոնք են մեր այն պարբերականները, որոնք դուրս են մնալու ժամանակագրության ներկա հատորից: Բայց այդ դուրս մնացած պարբերականներն էլ անհրաժեշտ էր գեթ հարևանցիորեն թերթել, վստահ լինելու, թե արդյոք այնտեղ ոչինչ չկա՞ր մեզ հետաքրքրող և ներկա հատորի համար պիտանի: Անհրաժեշտ էր դուրս գրել մեր գրական-գեղարվեստական կյանքն արտացոլող պարբերականների բոլոր կամ գրեթե բոլոր նյութերը, բայց և անպայման ճշտել, թե գրական որ երևույթի արտացոլումն են հանդիսանում դրանք և ինչու, կամ որտեղից է գալիս նրանց ենթաբնագիրը: Օրինակ, պետք էր ներկա հատորից օգտվողներին գեթ մի քանի խոսքով բացատրել, թե իր լրագրի աշխատանքային խնդիրներն ու նպատակները պարզաբանող հանրահայտ ծրագրում, Գրիգոր Արծրունին ինչու պետք է հայտարարեր, թե «Մշակը» բանաստեղծություններ չի տպում», երբ ժամանակի հայկական կյանքը լի էր մեծ ու փոքր բանաստեղծների մի ամբողջ աստղաբույլով, և երբ արդեն կար Րաֆֆի բանաստեղծը իր հանրահայտ «Փունջով»: Պետք էր մի քանի խոսք ասել, թե ինչու

երկու հին ընկերներն ու գաղափարական բարեկամները՝ Ստեփան Ոսկանյանն ու Մատթեոս Մամուրյանը, 70-ականներին պետք է դառնային անզիջում հակառակորդներ և իրենց վեճը շարունակեին շուրջ երեսուն տարի: Պետք էր գեթ համառոտակի տեղյակ պահել Ստեփան Ոսկանյանի և Խաչատուր «պուետ» Միսաքյանի միջև ծայր առած տեսական-գրականագիտական հակամարտության մասին, հակառակ դեպքում ժամանակի երկու նշանավոր գործերը՝ «Արևելք» արձագանք Եվրոպայի լուսավորության» հոդվածաշարը և «Սազ մի պուետ» երգիծական բանաստեղծությունը կմնային պարզապես անհասկանալի: 1873 թ. Պոլսում հրատարակված «Ազգասեր հայ մը»-ի գիրքը, որն ուներ «Յնորք և երևակայությունք դոկտոր Շիշմանյանի (իմա. պատմավիպասան Ծերենցի- Ս. Շ.) ի ազգային լսարան ի Օրթագյուղ» առաջին հայացքից տարօրինակ վերնագիրը, ըստ ամենայնի անհասկանալի կմնար, եթե չբացահայտվեր, թե ինչ է Պոլսի արվարձան Օրթագյուղում գործող «Ազգային լսարանը» և ինչ է արել այնտեղ Հովսեփ Շիշմանյան-Ծերենցը (մանավանդ, որ նրա արարքն ուղղակիորեն կապվում էր ժամանակի գրականության հետ): Նման շատ ուրիշ տվյալներ կարելի է հանդիպել «Հայ նոր գրականության ժամանակագրությունում»:

Որակական մի առանձնահատկություն էլ, որն ամենայն որոշակիությամբ բացահայտում է 1866-1875 թթ. ժամանակաշրջանը հետևյալն է: Դարի քառասնական թվականներից, հասարակական-քաղաքական մի շարք երևույթների պատճառով, որոնց մասին համառոտակի խոսել ենք[3], մեր ժողովրդի՝ արևելահայ և մանավանդ արևմտահայ հատվածներում, ծայր առավ և հաստատվեց մի երևույթ, որն աննախադեպ էր մեր հասարակական կյանքի նախորդ և հետագա ժամանակաշրջաններում: Դա՝ Եվրոպայի և Ռուսական կայսրության մտավոր կենտրոնները ուսումնառության մեկնելու, «միտքին պողովատը Եվրոպիո և Ռուսիո հեսանին վրա սրելու» որոշակի արտահայտված միտումն էր: Հաղթահարելով տնտեսական և հոգևոր դժվարությունները, հայ պարմանիները հայտնվում էին Եվրոպայի և Ռուսաստանի նշանավոր քաղաքներում, մասնավորապես Փարիզում, Լոնդոնում, Ամստերդամում, Մարսելում, Պետերբուրգում, Դորպատում, Մոսկվայում: Երևույթի բնականոն հե-

[3] Շտիկյան Ս., Հայ նոր գրականության ժամանակագրություն (1851-1865), Երևան, 1983, էջ 14-18:

տևանքն այն եղավ, որ դարի 50-ականներից սկսած հայ ժողովրդի մտավոր ու հասարակական կյանքում աստիճանաբար սերվեց ու հասունացավ եվրոպական առաջնակարգ կրթություն ստացած գրական, մշակութային, հասարակական ու գեղագիտական նվաճումներին քաջածանոթ հայազգի մտավորականների պատկառելի մի համախումբ: Փարիզյան կրթություն ստացած Հակոբ Կրճիկյանը, Սերովբե Վիչենյան-Սերվիչենը, Նահապետ Ռուբինյան-Ռուսինյանը, Հարություն Սվաճյանը, Նիկողայոս Զորանյանը, շինարար-ճարտարապետներ Նիկողայոս և Սարգիս Պալյան եղբայրները, որոնց հայ ազգին վերաբերող հոդվածները, որ գերակշռում էին մեր պարբերականներում, շատ են, Ճանիկ Արամյանը, Ստեփան Ոսկանյանը, Հովսեփ Շիշմանյան-Ծերենցը, Կարապետ Ութուջյանը, Դորպատում, Պետերբուրգում ու Մոսկվայում մտավորապես հասունացած Խաչատուր Աբովյանը, Ստեփաննոս Նազարյանցը, Միքայել Նալբանդյանը, Քերովբե և Ռափայել Պատկանյանները, Պետրոս Սիմոնյանը, Գրիգոր Արծրունին, Գևորգ Դոդոխյանցը, Գաբրիել Տեր-Հովհաննիսյանը և էլի ուրիշներ դարձան այն մեծությունները, որոնց գրական, հրապարակախոսական գործն անփոխարինելի է հայ ժողովրդի հոգևոր կյանքում: Նրանք, ինչպես նաև «տեղական կրթություն» ունեցող ազգային գործիչներից շատերը, եղան ժամանակի այն մեծությունները, որոնք անմնացորդ ստանձնեցին հայ ժողովրդի մտավոր-գրական զարթոնքը կազմակերպելու քրտնաջան աշխատանքը: Այդ գործունեությունն ամենայն որոշակիությամբ իրեն զգացնել տվեց դեռևս այն ժամանակաշրջանում, որն ամփոփված է «Հայ նոր գրականության ժամանակագրության» երկրորդ գրքում, սակայն 1866-1875 թվականներին, այդ գործունեությունը հասնում է իր գագաթնակետին: Պարբերականները բառացիորեն հեղեղվում են հրապարակախոսական հոդվածներով, լույս տեսած նոր գրքերին, թատերական ներկայացումներին, զանազան գրական երևույթներին նվիրված՝ հաճախ մի քանի համար շարունակվող «դատականներով»: Մեծ ծավալ են ստանում ռուսերենից, ֆրանսերենից, անգլերենից, գերմաներենից, իտալերենից, հունարենից, լատիներենից, պարսկերենից ու արաբերենից կատարված չափածո և արձակ թարգմանությունները, գրականագիտական-բանասիրական մեծ ու փոքր աշխատությունները, մեր պատմիչների ու գրականության դասականների գործերի հրատարակությունները և այլն:

Հայ նոր գրականության ծլարձակման վաղնջական ժամանակներից սկսած, մեր գրական կյանքում արդեն իրեն զգացնել տվեց գեղարվեստական ու գիտական գրականության թարգմանության նկատմամբ մի քանի մոտեցում, որը կարելի է որակել որպես թարգմանվելիք գործի նկատմամբ ցուցաբերվող ազատություն: Որտեղից էր գալիս այս երևույթը, որն էր նրա գիտական, հասարակական-սոցիալական հիմնավորվածությունը, առանձին քննելիք է և, հետևաբար, դուրս մեր առաջաբանի սահմաններից: Բայց փաստ էր, որ թարգմանիչները ամենայն համարձակությամբ չափածո գործերից, օրինակ, թարգմանել են այն քառատողերը, որոնք նպատակահարմար են համարել, կամ թարգմանելով տվյալ բանաստեղծությունը, նրան հավելել են մեկ կամ մի քանի քառատող իրենց կողմից, առանց իհարկե, այդ մասին որևիցե հիշատակություն անելու, իրենց հայեցողությամբ փոխել կամ պարզապես դուրս են թողել գործերի վերնագրերը: Քիչ չեն դեպքերը, երբ թարգմանիչներն ազատորեն վերաշարադրել են եվրոպացի կամ արևելցի հեղինակի բանաստեղծությունը՝ հաճախ այն կրկնակի անգամ ընդարձակելով, այսինքն՝ առավել քան հեռանալով բնագրից, բայց նույնիսկ այդ գործերի տակ անպայմանորեն զետեղելով «թարգմանութիւն», կամ «ի գաղղիականէ» կամ «Լամարթինէ առեալ» և այլ նշումներ: Թարգմանվելիք գործերի հանդեպ այս ազատ վերաբերմունքը մանավանդ դարի երկրորդ կեսից սկսած, տարածված էր, հասարակայնորեն ճանաչված ու ընդունված, և հետևաբար ժամանակի մտավորականության համընդհանուր թողտվությանն ու պաշտպանությանն արժանացած: Քիչ ավել կամ պակաս չափով՝ բայց դրությունը նույնն էր նաև հայագիտական-բանասիրական գրականության՝ իրենց բնագրերից կատարվող հայեցումների կապակցությամբ:

Եվ հասկանալի է, որ եթե գրականագետ ուսումնասիրողը, կամ գրականության պատմաբանը, զբաղվի այդ գործերի գրականագիտական կամ տնտեսական վերլուծությամբ, կամ նրանց կատարած դերի բացահայտմամբ ու բնութագրմամբ, ապա գրականության ժամանակագրության կազմողին նույն այդ գործերը հետաքրքրում են բոլորովին ուրիշ տեսանկյունով և մասնագիտական բոլորովին այլ կտրվածքով:Մենք անհրաժեշտ ենք համարում պարզել, թե տվյալ ստեղծագործությունը եվրոպական կամ ասիական որ լեզվից է եկել, որովհետև նշվող սոսկ «փոխադրութիւն», «թարգմանութիւն», «թարգմ.», իսկ ավելի հաճախ մեկ հատիկ «թ.»-ն, իսկ ոչ սակավ դեպքում

առանց որևէ նշման, այդ անելու հրամայական պահանջն անպայմանորեն առաջ էր քաշվում: Այդ ճշտելուց և հավաստելուց հետո, առաջ էր գալիս խնդրի մյուս կողմը. պարզել, թե տվյալ լեզվով գրած հատկապես որ բանաստեղծի կամ արձակագրի գրչի արգասիքն է այն, այսինքն՝ ճշտել տվյալ գործի հեղինակային պատկանելության հարցը: Սրան էլ, վերջապես, հաջորդում էին արդեն գտնված բնագրի օգնությամբ առկա հայերեն թարգմանությունը ճշտելու, թարգմանչի կատարած «ստեղծագործական աշխատանքը» հարկավոր խորությամբ ցույց տալու, բացահայտելու և ժամանակագրության պահանջի ու նպատակների սահմաններում այն ծնող արարքը մեկնաբանելու ամեննին էլ ոչ դյուրին աշխատանքները: Արդեն չենք խոսում գեղարվեստական ու գիտական թարգմանությունների՝ ամեննին էլ ոչ պատահական բնույթ և գրական-հասարակական նպատակաուղղվածություն ունենալու մասին:

Մենք սոսկ ամենաընդհանուր գծերով և այն էլ միայն թարգմանական գրականության առնչությամբ նշեցինք դժվարությունների այն համախումբը, որի հետ ստիպված եղանք գործ ունենալ մեր աշխատության ամբողջ ընթացքում: Անհնար է ցույց տալ աշխատանքի ամբողջ ներքին բարդությունը, անկարելի է ցույց տալ որոնում-ճշգրտումների ու պրպտումների այն ամբողջ ենթաբնագիրը, որն անխուսափելիորեն ուղեկցում է այս բնույթի գործերի հեղինակին: Օրինակ, Զմյուռնիայի «Արշալույս արարատյանում» հանդիպեցինք «Ի Հյուկոյե» ստորագրությունն ունեցող մի բանաստեղծության «Զ.Ս.Չ.»-ի կատարած թարգմանությանը: Նույն այդ պարբերականի նախորդ տարիների համարները մանրակրկիտ թերթելուց հետո կարողացանք պարզել, որ թարգմանիչը Զայրմայր-Ստեփան Չաքրյանն է, ինչը և հարմար համարեցինք նշել ամբողջությամբ: Իսկ ֆրանսիական դասականի չափածո ստեղծագործությունների մի քանի ժողովածուները թերթելուց հետո կարողացանք գտնել հայկական պարբերականում հրատարակված բանաստեղծության ֆրանսիական բնագիրը, որի հիման վրա, նախ վերականգնեցինք նրա վերնագիրը (նշված անկյունավոր փակագծերի մեջ) և ապա բանասիրական համեմատության միջոցով պարզեցինք, որ հայերեն թարգմանությունը կատարված է զգալի համառոտումներով: Այս դեպքում էլ, ինչպես և նախորդ գրքերում, բավարարվեցինք ընդամենը «բնագրից կատարված համառոտ թարգմանությամբ» նշումով: Կամ «Բազմավեպում» հրատարակված «Առ օվկեան» խորագրով և «թարգ. ֆրանս.» նշումն ունեցող գրաբար մի բանաստեղծության կապակ-

ցությամբ հանգամանորեն նայել ենք Բերանժեի, Հյուգոյի, Շատոբրիանի ռուսերեն ու ֆրանսերեն ժողովածուներ, անթոլոգիաներ ու ալմանախներ, բայց ոչինչ չենք կարողացել պարզել ոչ նրա հեղինակի և ոչ էլ, մանավանդ, հայազգի թարգմանչի ով լինելը, ուստի փաստի արձանագրումը կատարվել է այն ձևաչափով միայն, որքանով որ նյութ է տվել «Բազմավեպը»: Փաստերի այսպիսի «անհասցե» արձանագրությունների դեպքեր շատ են հանդիպում:

Մեր աշխատանքային դժվարությունների՝ հատկապես այս կողմի վրա քիչ ավելի մանրամասնորեն ծանրանալով, ուզում ենք ցրել այն սխալ պատկերացումը, որի համաձայն ժամանակագրությունը, տարեգրությունը, տվյալ հեղինակի կամ պարբերականի մատենագիտությունը և այս բնույթի այլ գործերը պատկանում են գիտական աշխատանքների «հեշտ» տեսակին: Կարող ենք վստահաբար հավաստիացնել, որ որոշ վերապահությամբ պետք է խոսել մեր պարբերականներում հրատարակված և մեր աշխատանքի բնույթին համապատասխանող նյութերը ներկա հատորում ըստ ամենայնի արտացոլված տեսնելու մասին, և այն էլ ամեննին ոչ մեր մեղքով[4], ապա մյուսների կապակցությամբ (հրատարակված գրքեր, կրթա-մշակութային ընկերություններ, պարբերականների սկզբնավորում և խմբագիրներ, հայ և օտարազգի մտավորականների կենսագրական տվյալներ, ռազմաքաղաքական և հասարակական կարևոր իրադարձություններ և այլն) արել ենք առավելագույնը:

[4] Պոլսի «Ավետաբերը», որ հրատարակվել է 1855-1915 թթ. մեր գրապահոցներում կա 1872 թ. սկսած: Պոլսի «Պեգասյան թռչնիկը», որը գրական-բանասիրական թեքում է ունեցել և հրատարակվել է երեք տարի առաջ (1866-1868), Հայաստանում չկա: Նիկոմեդիայի «Հույս» ամսագիրը հրատարակվել է 14 տարի (1864-1877), ունենք միայն վեց տարիների հավաքածուները: 1869-1872 թթ. Պոլսում հրատարակված «Արարատից» մեզ մոտ կան 1869 թ. 26 համարները միայն: 1868-1878 թթ. հրատարակված «Օրագիր Կ. Պոլսո» պարբերականից Հայաստանում կան վերջին 4 տարվա համարները միայն: Պոլսի «Դիտակը», որը լույս է տեսել 1870-1874 թթ., մեր գրապահոցներում «ներկայացել» է միայն 1870 թ. 3-53 համարներով: 1860 թ. «սկսած» և այս հատորի ընթացքում էլ անվերջ հրատարակված «Փունջ» շաբաթաթերթը մեր գրապահոցում կա 1966, 1870 և 1874 տարեթվերով, իսկ 1872 թ. հրատարակված «Փունջ» օրագիրն ընդհանրապես չկա: Պոլսի «Նոր-Դարը», որ հրատարակվել է 1874-1879 թթ. մեզ հասել է 1877թ. սկսած, այն էլ թերթի տարեթվերով միայն և այլն: Չենք հիշատակում նույնիսկ ամենալրիվ պարբերականների՝ տարեկան հավաքածուներից բացակայող մեկ կամ մի քանի համարների մասին: Իսկ ինչպես վերևում հիշատակված, այնպես էլ այլ պարբերականները ամբողջությամբ գտնվում ենՎիեննայի, Փարիզի, Երուսաղեմի հայկական կենտրոններում:

1865[5]

–––Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ հրատարակվում է Ժան-Բատիստ Մասիլիոնի «Փոքրիկ քառասնորդք» ժողովածուն: 186 էջ:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Զարբհանալյանի «Պատմություն հայերեն դպրության ի պետս ուսման ազգային վարժարանաց» աշխատության առաջին հատորը (հին մատենագիտություն): 649 էջ:

Նույնը՝ 1886 թ. (ԼԲ+795 էջ), 1897 թ. (ԿԱ+ 822 էջ), ամեն անգամ հավելումներով ու փոփոխություններով:

Երկրորդ հատոր (նոր մատենագիտություն), 1878 թ., 510 էջ

Նույնը՝ 1905 թ. (ԺԲ+412 էջ), հավելումներով ու լրացումներով:

–––Վենետիկում Մուրատյան վարժարանի աշակերտների՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Մկրտիչ Բականիի «Աղօթք հաղորդասեր հոգւոյ» աշխատությունը: Այն խմբագրել և հրատարակության է պատրաստել Ղևոնդ Ալիշանը: 462 էջ: Վերջում Ալիշանը զետեղել է հայ և օտարազգի կրոնական մատենագիրների աղոթքներ:

–––Վենետիկում Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է Քսավիե Վոնիֆակիոս Սենդինի «Բիչչիոլա» պատմական վիպասանությունը: 380 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում» 1865 թ. № 1-ից (հունվար) սկսած:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է Գրիգոր կաթողիկոս Տղայի և Ներսես Լամբրոնացու գործերի ժողովածուն: 339 էջ:

–––Պոլսում հրատարակվում է «Համառոտ ընտանի խոսակցությունք հունարեն, գաղղիերեն, հայերեն (իմա. արևմտահայերեն- Ս.Շ.) և թուրքերեն» խոսակցական բառարանը: Թուրքերեն բառերը տրված են հայատառ:

Նույնը՝ 1876 թ.: Նախորդներին ավելացված է նաև անգլերենը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մանուկ Կակոսյանի «Չեզոք, կամ ազգային արդի վիճակին վրա նկարագրություն մը» աշխատությունը:

[5] Մեզանից անկախ պատճառներով, 1865 թ. հրատարակված գրականության զերակշիռ մասը մեր «Ժամանակագրության» նախորդ գրքում հնարավոր չեղավ զետեղել: Այն տալիս ենք այստեղ:

Նույնը անփոփոխ՝ 1868 թ., 55 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Սինանյանի «Երկու խոսք առ ազգակից եղբարս» հրապարակախոսական աշխատությունը: 30 էջ:

–––Պոլսում հրատարակվում է «Երգարան նոր» ժողովածուն: Արևմտահայերեն և գրաբար լեզուներով տրված են հայկական ժողովրդական և դասական 60 երգ: 32 էջ:

–––Պոլսում, Հովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենցի (Չամուռչյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պողերնի «Նապոլեոն Մեծի մտածությունք քրիստոնեության վրա» աշխատությունը: 232 էջ: «Հավելվածում» (էջ 185-230) տրված է Նապոլեոնի մի քանի մերձավորների (Անտոն Տրուո, Ժոզեֆ Պոնիատովսկի, Միշել Նեյ, Էտիեն-Ժակ Մակդոնալդ և այլն) կենսագրությունները:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մարկոս Աղաբեկյանի «Տարեգիր ամենայն հայոց կաթողիկոսության այժմյան վիճակի վրա» աշխատությունը: 24 էջ:

–––Պոլսում հրատարակվում է Աբրահամ Այվազյանի բանաստեղծությունների գրաբար ժողովածուն «Անակրեոնեան նուագք» խորագրով: 64 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Դավիթ Պ. Սարգիս Բինկյանցու «Լևոն Բ» պատմական ողբերգությունը: 76 էջ:

–––Պոլսում, թուրքերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է «Պատժական օրինագիրք Օսմանյան տերության» գրքույկը: 40 էջ:

–––Պոլսում, Ատոմ Հովհաննեսի Տերոյենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է Լաթուր Սեն- Թիպարի (?) «Ռոզամոնտ. համառոտ բարոյական պատմություն» վիպակը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Դավիթ Ներշապուհի «Քնար Հովսեփա Գեղեցիկի» պոեմը: 96 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մարկոս Աղաբեկյանի «Խնդիր կաթողիկոսության ամենայն հայոց (քննություն 1836-ի սահմանադրության)» ուսումնասիրությունը: 56 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Դերձակյանի «Սուտ ազգասեր» չափածո հրապարակախոսական աշխատությունը: 48 էջ:

–––Թիֆլիսում, Զաքարիա Գրիգորյանի՝ ռուսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ստեփան Պալասանյանի «Պատմություն հայոց գրականության» աշխատության առաջին հատորը (բանավոր գրականություն): 260 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Թիֆլիսում, արևելահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ստեփաննոս Պալասանյանի «Ֆրանսերեն այբբենարան և սկզբնական ընթերցանության գիրք, այլևայլ գործնական կրթություններով, հայ դպրատունների համար» դասագիրքը: 95 էջ:

–––Պետերբուրգում, «Վերջը կիմանաք» կեղծանունով հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Հայոց ազգի ուսումնատվությունը, ուսումնարանները և ուսուցիչները» ուսումնասիրությունը: 128 էջ:

–––Պետերբուրգում, Միքայել Տեր–Գրիգորյանցի՝ ֆրանսերենից կատարած արևելահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է «Հարրիետ Բիչըր Ստոուի «Եղբայր Թոմի տնակը» վեպը: 126 էջ:

–––Զմյուռնիայում, գրաբար և արևմտահայերեն լեզուներով, հրատարակվում է Մեսրոպյան վարժարանի աշակերտների բանաստեղծությունների ժողովածուն «Մուսայք Մեսրոպյան վարժարանին Զմյուռնիո» խորագրով (տետրակ առաջին): 31 էջ:

Երկրորդ տետրակ՝ 1886 թ.: 72 էջ:

–––Զմյուռնիայում, գրաբար հրատարակվում է Միքայել Սալլանթյանի «Համառօտ ժամանակագրական պատմութիւն հայոց» աշխատությունը: 40 էջ: Ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը սկսած քրիստոսի ծննդից մինչև XIX դարի կեսը:

–––Թեոդոսիայում, արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Տեր- Աբրահամյանի «Պատմություն Ղրիմու, հանդերձ աշխարհագրական և ուսումնական տեղեկությամբք, զնախնի և զայժմու բնակչաց Տավրիո» աշխատությունը: 191 + 204 էջ:

–––Թեոդոսիայում, արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Գալստյանի «Համառոտ աշխարհագրություն քաղաքական, ի պետս բարձր դասարանի ուսումնարանաց ազգիս» աշխատությունը: 492 էջ:

–––Թեոդոսիայում, աշխարհաբար հրատարակվում է Հովսեփ Չերքեզյանի «Հայոց պատմություն համառոտած, մեր ազգի մանուկներին դասատվության համար» աշխատությունը: 272 էջ:

–––Վարազում հատարակվում է «Հայրենյանց երգեր (աշխատասիրությամբ նախկին երգչաց)» խորագիրը կրող աշխարհաբար բանաստեղծությունների ժողովածուն: 32 էջ: Ժողովածուն հրատարակության պատրաստողն իրեն հռչակում է «Արսեն Թ.Ա.Ժ.Վ. Վարազա», որ նշանակում է «Արսեն Թոխմախյան, աշակերտ Ժառանգավորաց Վարժարանին Վարազա»:

–––Մոսկվայում Մովսես Բուդաղյանցի՝ ֆրանսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է անգլիացի գրող Օլիվեր Գոլդսմիտի «Վեքֆիլդի երեց» վեպը: 232 էջ:

–––Մոսկվայում արևելահայերեն հրատարակվում է Սմբատ Շահազիզի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Լևոնի վիշտը (ժամանակակից վեպք չորս գլուխ բաժանված) և զանազան բանաստեղծություններ» խորագրով: 254 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ և հայոց պատերազմին» աշխատությունը: 431 էջ: Վերջում (էջ 401-418) զետեղված է «Նորին Եղիշայի վարդապետի բան խրատոկ հաղագս միանձանց» ճառը: Հատորը հրատարակության է պատրաստել Եսայի արքեպիսկոպոսը:

–––Երուսաղեմում արևելահայերեն հրատարակվում է Տիգրան-Հայրապետ Թումա Սավալանյանցի «Պատասխանի ընդդեմ տետրակի Հ. Ռեմիճիո Պուզելլիին» գրքույկը: 24 էջ:

–––Էջմիածնում գրաբար հրատարակվում է Ներսես Շնորհալու ճառերի և ուղերձների ժողովածուն, «Թուղթ ընդհանրական» խորագրով: Վերջում զետեղված է Ներսես Լամբրոնացու «Գովեստ ներբողական պատմագրական բանիւ յաղագս վարուց … Ներսիսի Կլայեցւոյ հայոց կաթողիկոսի» գրաբար ներբողը: 497 էջ:

1866

Հունվար. Երուսաղեմում Տիգրան-Հայրապետ Սավանանյանցի խմբագրությամբ արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Սիոն» ազգային, բանասիրական, գիտա-քաղաքական ամսագիրը: Այն դադարում է 1877 թ. կեսերին:

Հիշյալ ժամանակահատվածում խմբագրի պարտականությունները վարել են հետևյալ անձինք. **Տիգրան-Հայրապետ Թ. Սավալանյանց** մինչև 1867 թ. վերջ: **Գարեգին** (հետագայում՝ **Մելքիսեդեկ**) **Մուրադյան**՝ 1868-1873 թթ.: **Գաբրիել** (հետագայում՝ **Սահակ**) **Խապայան**՝ 1873-1874 թթ.: **Գարեգին Մուրադյան** (երկրորդ անգամ)՝ 1875-1876 թթ.: **Գաբրիել Խապայան** (երկրորդ անգամ)՝ 1876-1877 թ.:

Հունվար. Պոլսում Մարկոս Աղաբեկյանի խմբագրությամբ արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Ծիլն Ավարայրի» ազգային, բարոյական և մտավոր լուսավորության հանդեսը: 1867 թ. հունիսին հրատարակելով իր հերթական 18-րդ ամսատետրակը՝ «Ծիլն Ավարայրին» դադարում է:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1) միջին հայերենով հրատարակում է «Շարական առասպան, ասացեալ է ուրումնե բանասիրե ազնիվ և ուրախ» պոեմը, որի տների առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը: Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնսո Լամարթինի «Մարդն. առ լորդ Բայրոն» բանաստեղծությունը: Տպագրված է նաև մի հատված Վրույր Որմզդանի (ի՛մա. Էդուարդ Հյուրմյուզյան) «Առակացն գիրք երկեակք» ժողովածուի առաջին հատորի առաջաբանից («Նախերգանք»):

Հունվար. «Սիոնը» (№ 1), արևմտահայերեն, հրատարակում է «Ժամանակ» պատմափիլիսոփայական հոդվածը և «Եսայի վարդապետ Նչեցի» ուսումնասիրությունը: Այն ավարտվում է հաջորդ համարում:

Հունվար. «Հույսը» (№ 18) գրաբար հրատարակում է Աշոտ Սմբատյանի (հետագայում՝ Ստեփաննոս վարդապետ Աղաբազարցի «Կեանք մարդոյ» բանաստեղծությունը և «Ի մուտս նորո տարվո» արևմտահայերեն հրապարակախոսական հոդվածը: Հրատարակված է նաև «Ոչխար և աղվես» արևմտահայերեն անստորագիր առակը:

Հունվար. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 1) արևելահայերեն հրատարակում է Մարկոս Աղաբեկյանի «Ողջույն քեզ հայ ժողովուրդ» հրապարակախոսական առաջնորդողը: Նույնի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, սկսում է հրատարկվել Քսավիե Մարմիեյի «Շիլլերի կյանքն ու իր Վիլհելմ Տելը» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 10-ում (հոկտեմբեր):

Հունվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 1), Փիլիպոս Վարդանյանի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Անգլիական պոլիցիայի լրտեսուհվո հիշատակարանից (կաթոլիկական վանք)» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է նաև Միհրդատ Ամրիկյանի «Որբուկ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Հունվարի 1. «Երևակը» (№ 97) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Սիբիլլաներն ո՞վ են» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 104-ում (փետրվարի 25): Տպագրված է «Նապոլեոն մեծի մտածությունք քրիստոնեության վրա» գրախոսականը, որտեղ դրական է գնահատված Պոդերնի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1865թ.):

Հունվարի 1. Հաղպատում (այժմ՝ Թումանյանի շրջան) Հովսեփ վարդապետ Առյուծյանի ջանքերով իր գոյությունն է սկսում տեղի երեքդասյա արական ուսումնարանը, որը կոչվում էր «Սուրբ Նշան»: Այն ուներ 93 աշակերտ ավանդվում էր կրոն, ազգային պատմություն, թվաբանություն, քերականություն, հայերեն և ռուսերեն լեզուներ: Ուսումնարանը գոյություն ունեցավ մինչև 1920-ական թվականները:

«Մեղու Հայաստանի», 1867, № 19 («Ազգային»): **«Մշակ»**, 1913, № 163 («Ջրատար հույսեր»), № 202 («Նամակ խմբագրության»):

Հունվարի 1. Պոլսում (Խասգյուղ), Սրբուհի մայրապետ Գալֆայանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Գալֆայան օրիորդաց վարժարանը»: Առաջին տեսուչն էր Ռ. Թաղևոսյանը, ծաղկուն ժամանակ վարժարանն ուներ ավելի քան 100 աշակերտուհի: «Գալֆայան օրիորդաց վարժարանը» 1966 թ. սկզբներին տոնեց իր գոյության հարյուրամյակը:

Մարգարյան Գր., «Կենսագրություն Սրբուհի մայրապետի Նշան-Գալֆայան…», Պոլիս, 1892, 108 էջ: **Հակոբ Չինար** և **Էրզիյան Պ.**, «Հարյուրամյա հիշատակարան Գալֆայան տան», Ստամբուլ, 1966, 304 էջ:

Հունվարի 1. Բոլինգենում (Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ, բանասեր-լեզվաբան Սիմոն Վեբերը (Simon Weber): Վախճ. 1929 թ. մարտի 12-ին Ֆրայբուրգում (Արևմտյան Գերմանիա):

«Հանդես ամսօրյա», 1929, N 5 («Պրոֆ. դոկտոր Սիմոն Վեբեր»)

Հունվարի 2. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), մանկավարժ Հովհաննես Հինդլյանը: Վախճ. 1950 թ. մարտի 15-ին իր ծննդավայրում:

Թարգմանություններից մի քանիսը ստորագրել է «Գեղամ» կեղծանունով: Հ.Թ. Հինդլյան, «Քսաններինգ տարվան կյանք մը», Պոլիս, 1934, 253 էջ: **«Հայաստանի կոչնակ»**, 1935, № 45 («Հինդլյան Հ.Թ»), 1946, № 24 («Տիպար դաստիարակը»), 1950, № 14 («Մահ և հուղարկավորություն….»), № 28 («Մեծ դաստիարակ մը»), № 32 («Ուսուցչիս՝ Հովհաննես Հինդլյանի մահվան առթիվ»):

Հունվարի 4. Իգդիրմավա գյուղում (Սուրմալուի գավառ, այժմ՝ Արևելյան Թուրքիա) ծնվեց արձակագիր, գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր Ավետիս Առաքելի Ահարոնյանը: Վախճ. 1948 թ. մարտի 20-ին Փարիզում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ղարիբ» կեղծանունով:

Պարսամյան Մ., «Ավետիս Ահարոնյան (իր կյանքը և գրականությունը)», Փարիզ, 1930, 192 էջ: **Ահարոնյան Ա.** «Ժողովածու երկերի», հ. 1-10, Բոստոն, 1947-1951: **Ահարոնյան Ա**. («Հայ նոր գրականության պատմություն»), հ. 5, Երևան, 1979, էջ 81-83, 749-753):

Հունվարի 8. «Արշալույս արարատյանը» (№ 770) գրաբար հրատարակում է Սմբատ-Կարապետ Ստեփանյանի «Սփոփանք նորոյ տարւոյն» ներբողական բանաստեղծությունը:

Հունվարի 8. «Երևակը» (№ 98), Հովհաննես Չամուռճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և «Ռուսսոյի մեկ վկայությունը» խորագրի ներքո, հրատարակում է նրա «Լեռներից գրած նամակներ» գրքի չորրորդ նամակը: Թարգմանչի կարճառոտ ներածականում Ռուսսոն բնութագրված է որպես «անհավատ մատենագիր, բայց աղեկ տրամաբան»:

Հունվարի 13.- Պոլսում ծնվեց հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), գրականագետ, բանաստեղծ, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն) Գասպար Մալար-

յանը (մասնագիտությամբ՝ բժիշկ): Վախճ. 1942 թ. հուլիսի 17-ին, Ֆարկո քաղաքում (Վերին Դակոտա, հյուս. ԱՄՆ):

Մուշեղ արքեպիսկոպոս, «Ամերիկահայ տարեցույցը», Բոստոն, 1913, էջ 138-143: **«Հայաստանի կոչնակ»**, 1942, № 34 («Դոկտ. Գ. Մալարյանի մահը»), № 35 («Դոկտ. Գ. Մալարյան»):

Հունվարի 15. «Ծաղիկը» (№ 112), արևմտահայերեն սկսում է հրատարակել Մատթեոս Մամուրյանի «Հայրենասեր պատանի մը» դրաման, որն ավարտվում է № 117-ում (ապրիլի 1):

Հունվարի 16. «Երևակը» (№ 99) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի՝ «Ռեվյու դե դյու մոնդին» մեկ հոդվածը» խորագիրը կրող «բանավիճականը», որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: «Պատմություն ազգային երկամյա անցից» գրախոսականում բացասաբար է գնահատված Հակոբոս վարդապետ Չիլինկիրյանի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը:

Հունվարի 22. «Արշալույս արարատյանը» (№ 771) գրաբար հրատարակում է Հակոբ Չիվիչյանի «Ազատութիւն յաղթական», Պարույր-Կարապետ Եղիվարդցյանի «Ուղերձ առ ամենապատիւ Տ.Տ. Պօղոս արքեպիսկոպոս… ի մուտս նորոյ տարւոյ» և Հովհաննես Խաչկյանի «Բարոյական քերթված» բանաստեղծությունները:

Հունվարի 22. «Մեղու Հայաստանին» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Գերոգ Եվանգուլյանցի «Պատմություն հայոց գրականության, աշխատասիրեց Ստեփան Պալասանյան. հատոր առաջին» խորագիրը կրող գրախոսականը և Ալեքսանդր Ալեքսանդրյանցի «Շամախու հայոց սովորությունները» ազգագրական ուսումնասիրությունը: Ավարտը՝ հաջորդ համարում:

Հունվարի 25. «Պեգասյան թռչնիկը» (№ 48) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Աճեմյանի «Սահմանադրություն» բանաստեղծությունը և 16 տողից բաղկացած անստորագիր մի «Հանելուկ»:

Հունվարի 29. «Մասիսը» (№ 725) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Արշակ Բ., ողբերգություն պ[արոն] Մկրտիչ Պեշիկթաշլյանի» գրախոսականը:

Հունվարի 29. «Մեղու Հայաստանին» (№ 4) անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «օրիորդ Ք.Տ.Մ.») հրատարակում է

«Կոնգոն կռվում է մատակ առյուծի հետ (Աֆրիկայի Եվրոպացի գաղթականների կյանքից)» պատմվածքը:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), Սամվել Կայսերյանի (հետագայում՝ Գանթայան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Յիշատակ լճին Լեմանայ» բանաստեղծությունը:

Փետրվար. «Սիոնը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Ալիքներուն կամացը ձգված նավը» պատմվածքը:

Փետրվար. «Հույսը» (№ 19), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, սկսում է հրատարակել «Խոսակցություն Ֆենելոնի և պ. Ռանզեի ի վերա ճշմարտության» գրականփիլիսոփայական տրակտատը, որն ավարտվում է նույն ամսագրի № 22-ում (մայիս): Հրատարակված է Ներսես Մավյանի «Ի ծնունդն Քրիստոսի» գրաբար բանաստեղծությունը և անստորագիր՝ «Խնձորի երկու ծառերը» արևելահայերեն նովելը:

Փետրվար. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 2) արևելահայերեն սկսում է հրատարակել Մարկոս Աղաբեկյանի «Հայեցվածք նախնի և արդի լուսավորությանց վրա առհասարակ» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի հաջորդ համարում:

Փետրվարի 1. «Ծաղիկը» (№113) արևելահայերեն սկսում է հրատարակել «Պերճի» (ի՛մա՝ Գրիգոր Չիլինկիրյան) «Զմյուռնիական նամականի» գրական հրապարակախոսական հոդվածաշարը, որն ավարտվում է նույն պարբերականի 1867 թ. № 134-ում (մայիսի 10):

Փետրվարի 1. «Երևակը» (№ 101) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Զենոբ Գլակ և Բրուտոն» գրախոսականը, որն ավարտվում է № 109-ում (ապրիլի 1):

Փետրվարի 5.- Զմյուռնիայում Ստեփան Ոսկանյանի ատենապետությամբ և Ստեփան Չիլիկյանի, Պ.Մ. Ալփիարյանի, Հովհաննես Մաքսուտոֆի, Պողոս Պերկամայանի, Անտոն Աղասյանի, Սահակ Ավետիսյանի և այլոց անդամակցությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային և հասարակական «Ուսումնասեր

ընկերությունը»: Նույն օրը ընկերությունը հրատարակում է աշխատանքային գործունեության իր կանոնադրությունը («Հայտարարություն»), որը գրել էր Ստեփան Ոսկանյանը: «Ուսումնասեր ընկերությունը» իր գոյությունը դադարեցրեց 1868 թ. մարտին:

«Արշալույս արարատյան», 1866, № 772 («Ծանուցում»), № 773 «Ուսումնասեր ընկերության կանոնադրությունը», 1868, № 829 («Ազգային»):

Փետրվարի 12. «Ժամանակ» հանդեսը (№ 82) գրաբար հրատարակում է Գարեգին Սրվանձտյանցի «Ի մահ սիրելոյն իմոյ պ. Սահակ Մալխասեանի Վանեցւոյ» եղերերգական բանաստեղծությունը:

Փետրվարի 14. Վանում ծնվեց հոդվածագիր, գրական-մշակութային գործիչ, աստվածաբան Խաչատուր Գռուզյանը; Վախճ. 1941 թ. մարտի 9-ին, Սան-Ֆրանցիսկոյում (ԱՄՆ):

Աճեմյան Հ. , «Թուրքահայ աղետը», Էջմիածին, 1919, էջ 11: **«Հայաստանի կոչնակ»**, 1941, № 12 («Խաչիկ քահանա Գռուզյանի մահը»), № 16 («Հուշեր Խաչիկ քահանա Գռուզյանի կյանքեն»):

Փետրվարի 15. Մուշում (Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր, լեզվագետ Ստեփան Իսրայելյանը: Եղեռնամահ 1915 թ. Խաբերդի շրջանում:

«Հանդես ամսօրյա», 1920, N 1-3 («Հայ կաթողիկե կղերին նահատակները»)

Փետրվարի 16. «Երևակը» (№ 103) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Մամիկոնյանցի «Պարոն Մարկոս Աղաբեկյանի դեմ նամակ մը» հոդվածը (քննադատված է Մարկոս Աղաբեկյանի գրական-մշակութային գործունեությունը) և «Շանշյան Պետրոս» վերլուծական դիմանկարը:

Փետրվարի 19. Մասիսը» (№ 728) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Տյարք և տիկնայք» ատենախոսությունը, որը նա կարդացել է նույն թվականի փետրվարի 16-ին: Ի թիվս այլ հարցերի, ատենախոսն անդրադարձել է թատրոնի և գեղարվեստական գրականության փոխհարաբերությանը (տե՛ս Մ. Պեշիկթաշլյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 439-441):

Փետրվարի 23. «Երևակը» (№ 104) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Գեշ խոսքն ըսողին կդառնա» հոդվածը:

Փետրվարի 26. «Մեղու Հայաստանին» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Փիլիպպոս Վարդանյանի «Հարգո խմբագիր» հրապարակախոսական առաջնորդը:

Փետրվարի 28. Ակնում (Արևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Կարապետ Մեյրամգուլի Մանավյանը (Մանավխանումյան): Վախճ. 1939 թ., նոյեմբերի 13-ին, Ֆաուլրիում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1939, № 47 («ՎերապատվելիԿ. Մանավյանի մահը»), № 48 («Վեր. Կարապետ Մանավյան», № 52 («Վեր. Կարապետ Մանավյան»), 1940, № 3 («Վեր. Կ. Մանավյան»):

Մարտ. Ամասիայում իր գոյությունն է սկսում մշակութային «Ուսումնասիրաց ընկերությունը», որը նպատակ ուներ «Առայժմ Ամասիո Ս. Ներսիսյան վարժարանին նպաստել և թանգարան մը հաստատել»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1965, N 4-6 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մարտ. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 3) արևելահայերեն հրատարակում է [Մարկոս Աղաբեկյանի] «Պապին գլխավորությունը հնությանց համեմատ փորձված» խորագիրը կրող գրախոսականը (տե՛ս ներկա հատորը, 1866 թ.):

Մարտ. «Բազմավեպը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային բանաստեղծք. Կոստանդին Երզնկացի» հոդվածը (հեղ. Ղ. Ալիշան ?), որին հաջորդում է Երզնկացու «Ոմանք չարախոսեն, զինեն վասն նախանձու…» բանաստեղծությունը:

Մարտ. «Հույսը» (№ 20), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Թանկագին ժառանգությունը» վիպակը, որը շարունակվում է մինչև № 24-ը (հուլիս) և մնում է անավարտ: Հրատարակվում է Արմենակ Երեմյանի «Սարդին ժրաջանությունը» առակը և անստորագիր՝ «Սուտ վկայությանց աղետալի արգասիքը» թարգմանածո նովելը:

Մարտ. «Սիոնը» (№ 3), ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է «Տեսիլ կուսի միո վանեցվո ի ժամ մահվան յուրո» բանաստեղծությունը: Սկզբում «Բանասիրականք» խորագրի ներքո տրված է ակնարկ-տեսություն հայ ժողովրդական բանաստեղծության մասին:

Մարտի 1. «Երևակը» (№ 105), Հովհաննես Չամուռճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ռոսինյոլի «Պրոմեթեոս կամ նախնական ավանդություն» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 115-ում (մայիսի 16):

Մարտի 1. «Պեգասյան թռչնիկը» (№ 52) գրաբար հրատարակում է Արամ-Սարգիս Դավթյանի «Ի սուրբն Վարդան» բանաստեղծությունը:

Մարտի 5. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է «Գ. Ասողի-կի» (իմա. Գրիգոր Մսերյան ?[6]) «Խաչ օգնյա՛ ինձ» բանաստեղծությունը:

Մարտի 12. «Մեղու Հայաստանին» (№ 10), Միհրդատ Ամրիկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Հայնրիխ Հայնեի նամակը Էրնեստ Ռաուբախին, նվիրված ֆրանսիական թատրոնի մի քանի հարցերին: Ծանոթագրություններում թարգմանիչը բնութագրում է Հայնեին և քննարկում դրամատուրգիային առնչվող մի քանի հարցեր:

Մարտի 12. «Ժամանակ» հանդեսը (№ 84) արևմտահայերեն հրատարակում է Եղիազար Մուրադյանի «Իմ խաղաղ ժամերս. ծագեցավ լույսն» բանաստեղծությունը:

Մարտի 16. «Երևակը» (№ 102), արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Պրուսա և բնակիչները» պատմա-ազգագրական տեսությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մարտի 16. Բռնակոթ գյուղում (այժմ՝ Սիսիանի շրջան, ՀՀ) ծնվեց մշակութային-հոգևորական գործիչ, բանասեր, լեզվաբան Ներսես արքեպիսկոպոս Պետրոս-Բեկի Մելիք-Թանգյանը (աշխարհական անունը՝ Նիկողայոս): Էջմիածնի միաբանության անդամ էր 1901 թ., վախճ. 1948 թ. սեպտեմբերի 26-ին, Թավրիզում:

Ժամանակի պարբերականներում որոշ հոդվածներ ստորագրել է «Նիկողայոս Մելիք-Թանգյան» և «Ներսես վարդապետ» ձևերով:

Աճեմյան Հ., «Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան....», Փարիզ, 1926, 51 էջ: **«Էջմիածին»**, 1948, № 10-12, («Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան»): «Եգիպտահայ տարեցույց», Կահիրե, 1949, էջ 10-11:

Մարտի 17. Ծղնա գյուղում (Գողթն գավառ, այժմ՝ Նախիջևանի տարածք) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր, հոդվածագիր (գրում էր նաև գերմաներեն), խմբագիր Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը: Էջմիած-

---

[6]«?» նշանը դրել է հեղինակը, վիճահարույց փաստերի առկայության դեպքում:

նի միաբանության անդամ 1894 թ. սեպտեմբերի 11-ից, վախճ. 1915 թ. նոյեմբերի 19-ին Բաքվում:

1907-1908 թթ. խմբագրել է Էջմիածնի «Արարատ» ամսագիրը, որտեղ տարբեր տարիներին հանդես է եկել «Կ. Ա», «Կարապետ աբեղա», «Կ.Վ.», «Կարապետ վարդապետ», «Կարապետ եպիսկոպոս» ստորագրություններով:

«Արարատ», 1909, № 10-11 («Մայր Աթոռ»), 1915, № 11-12 («Կարապետ եպիսկոպոս»): **«Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի»** (գիրք Ա և Բ), Վաղարշապատ, 1921-1922, էջ 311-314:

Մարտի 19. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանի «Հարգո խմբագիր պարոն Սիմոնյանց» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Գրախոսված և դրական է գնահատված Ստ. Պալասանյանցի «Պատմություն հայոց գրականության» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1865 թ.):

Ապրիլ. «Հույսը» (№ 21) գրաբար հրատարակում է Աշոտ Սմբատյանի (հետագայում՝ Ստեփաննոս վարդապետ Աղաբազարցի) «Ցընտրութիւն Տ.Տ. Պօղոսի աստվածապատիւ Ս. Արքեպիսկոպոսի…» բանաստեղծությունը և անստորագիր՝ «Ազգային գրական զարգացման նոր մեկենասը» արևմտահայերեն հոդվածը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է հայկական ազգային «Առ սարյակն» բանաստեղծությունը:

Ապրիլի 2. «Մեղու Հայաստանին» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Երիցյանի «Պարոն խմբագիր» նամակ-գրախոսականը: Նամակագիրը բացասաբար է գնահատում Մ. Ամրիկյանի՝ Հայնեի նամակի թարգմանությունը (տե՛ս ներկա հատորը, 1866 թ. մարտի 12) և, վկայակոչելով Բելինսկուն և Շեքսպիրին, հայտնում է իր նկատառումները գրականության և թատրոնի վերաբերյալ:

Ապրիլի 7. Թբիլիսիի հայկական թատրոնում հայ դերասանների խումբը Գևորգ Չմշկյանի ղեկավարությամբ, առաջին անգամ բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալա» կատակերգությունը, որն անցնում է մեծ հաջողությամբ: Նույնը վրացերեն թարգմանությամբ (թարգ. Բաքրաձե) բեմադրվել է 1877 թ. ապրիլի 5-ին:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա., Երևան, 1951, էջ 477-489:

Ապրիլի 10. «Պեզասյան թռչնիկը» (№ 54), արևմտահայերեն հրատարակում է «Արժանահարգ խմբագիր «Թռչնիկ» ազգօգուտ հանդիսի» հոդվածը (հեղ.«Մ.Պ.»): Քննադատված է Մարկոս Աղաբեկյանի գրական-մշակութային գործունեությունը, մանավանդ այն, որ նա «չարաչար բամբասում է Ռուսաստանի հայերը»:

Ապրիլի 10. Երևանում, Ռուբեն Հասան-Ջալալյանի տեսչությամբ, Սոփիա Մատաթյանցի, Եղիսաբեթ Քալանթարյանցի, Թագուհի Ղորղանյանցի և Նատալիա Տեր-Զաքարյանցի հոգաբարձությամբ իր գոյությունն է սկսում «Գայանյան օրիորդաց ուսումնարանը», որը սկզբում ուներ 22 աշակերտուհի, ավանդվում էր ռուսաց լեզու, կրոն, հայոց լեզու, թվաբանություն, վայելչագրություն և ձեռագործ: Դպրոցը երկդասյա էր, ծաղկուն ժամանակ ուներ ինը դասարան: «Գայանյան օրիորդաց ուսումնարանը», որոշ ընդմիջումներով, գոյություն ունեցավ մինչև 1921 թ.:

«Մեղու Հայաստանի», 1866, № 19 («Գայանյան օրիորդաց ուսումնարան Երևանումը»), 1868, № 23 («Հարգո խմբագիր»), 1870, № 16 («.... խմբագիր»), 1874, № 31 («Հարգո խմբագիր»):

Ապրիլի 12. Թբիլիսիի հայկական թատրոնում հայ դերասանների խումբը Գևորգ Չմշկյանի ղեկավարությամբ առաջին անգամ բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Օսկան Պետրովիչն էն կինքումը» կատակը:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ. Ա., Երևան 1951, էջ 509-516:

Ապրիլի 15. «Ծաղիկը» (№ 118), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ջորջ Բայրոնի «Լացդ տեսա» բանաստեղծությունը:

Ապրիլի 16. «Մեղու Հայաստանին» (№ 14) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] գրած մահախոսականը («Մահ»), որտեղ ազդարարվում է Միքայել Նալբանդյանի «փոխվիլը առ տեր»:

Ապրիլի 23. «Մասիսը» (№ 737) արևմտահայերեն սկսում է հրատարակել Կարապետ Ութուջյանի «Անտարբերության արգասիքը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Ապրիլի 30- «Արշալույս արարատյանը» (№ 778), գրաբար հրատարակում է հանելուկների մի փունջ (17 անուն)՝ «Թեթեւ հանելուկք, կամ զուարճալիք յուղարկեալ ի Հնդկաստանէ, հանդերձ լուսաբանութեամբ» խորագրով:

Ապրիլի 30. «Մասիսը» (№ 738), արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Չիլիկյանի «…խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» ընդդիմախոսականը: Հեղինակը պաշտպանում է իր «Պապին գլխավորությունը…» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1866թ.), «Մեճմուայը հավատիս» թերթի և մանավանդ Հովհաննես Չամուռճյանի հարձակումներից:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5), իտալերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալեսսանդր Մանձոնիի «Ի հինգն մայիսի» բանաստեղծությունը և Ն. Ալլահվերդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար արձակ թարգմանությամբ, Բեռնարդեն դը Սեն-Պիերի «Գերեզմանք» նովելը:

Մայիս. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 5) արևելահայերեն հրատարակում է [Մարկոս Աղաբեկյանի] «Պարոն Ճանիկ Արամյանի դիտողությունքը կաթողիկոսական հանձնաժողովի տեղեկագրի վրա» ընդդիմախոսականը:

Մայիս. «Սիոնը» (№ 5) գրաբար հրատարակում է «Մեք թագավորի մտերիմ եմք և ոչ պատնջանի» առակը (հեղ. Վարդան Այգեկցի ?):

Մայիս. «Հույսը» (№ 22), արևելահայերեն հրատարակում է Աշոտ Սմբատյանի (հետագայում՝ Ստեփաննոս վարդապետ Աղաբազարցի) «Հանրային շարժում» հրապարակախոսական հոդվածը և Սուրեն Հովակիմյանի «Սեր հայրենյաց» բանաստեղծությունը:

Մայիսի 1. «Երևակը» (№ 114), արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Աստվածաշունչի նոր թարգմանություն մը» հոդվածը:

Մայիսի 14. «Արշալույս Արարատյանը» (№ 779), արտատպելով «Բազմավեպից», հրատարակում է Մարկոս Ավրելիոսի «Թուղթից» մի հատված, «Մարկոս Ավրելիոս կայսեր հանդիմանությունն, որ իր Փավստանտինա կնոջն ու Լուկիլլա աղջկանը տվավ» խորագրով, որը իտալերեն բնագրից արևմտահայերեն էր թարգմանել Էդուարդ Հյուրմյուզյանը:

Մայիսի 14. «Մեղու Հայաստանին» (№ 18), Կատարինե Տեր-Միքայելյանցի՝ ռուսերեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ հրատարակում է «Վիլյամ Շեքսպիր» հոդվածը:

Մայիսի 16. «Երևակը» (№ 116) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Շանշյանցին համառոտ քրիստոնեականը» գրախոսականը: Գրախոսված և բացասական է գնահատված Պետրոս Շանշյանցի «Համառոտություն քրիստոնեական ուսման…» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1866 թ.):

Մայիսի 17. Ելիզավետպոլ քաղաքում (հետագայում՝ Գանձակ, այժմ՝ Կիրովաբադ, Ադրբեջան), ծնվեց պրոլետարական բանաստեղծ, հոդվածագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), Հայկական և Վրացական հանրապետության ժողովրդական բանաստեղծ (1923 թ.), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.), ԽՄԿԿ անդամ (1904թ.) Հակոբ Մնացականի Հակոբյանը: Վախճ. 1937 թ. նոյեմբերի 13-ին, Թիֆլիսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Պրոլետար», «Հակ-Պրոլետար», «Ալ-Կաս», «Credo». «Դեմոկրատ», «Ք.», «Գործադուլավոր», «Տրիբուն», «Աշուղ բլբուլ» կեղծանուններով:

Գյուլնազարյան Խ., Մանուկյան Ս., Հակոբ Հակոբյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1965, 298 էջ: **Մանուկյան Ս.**, Հակոբ Հակոբյան, կյանքը և գործը, Երևան, 1975, 384 էջ: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, Երևան, 1986, էջ 270-272:

Մայիսի 21.- «Մեղու Հայաստանին» (№ 19), արևելահայերեն հրատարակում է Ավետիք Խազեզյանի «Ազգային» հոդվածը: Նկարագրված է Միքայել Նալբանդյանի թաղումը Նոր Նախիջևանում, տրված են նրա կենսագրությունն ու գրական-հասարակական գործունեությունը:

Մայիսի 28. «Մեղու Հայաստանին» (№ 20), Ն. Քաջբերունու՝ ռուսերենից (?) կատարված արևելահայերեն թարգմանությամբ և խմբագրական հավելումներով, սկսում է հրատարակել «Ժողովրդական ուսման վրա 19-րդ դարումը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 22-ում (հունիսի 11): Հրատարակված է նաև Պերճ Պռոշյանի «Կինարմատ (նվեր տիկին Ա.Թ.Բ.)» արևելահայերեն բանաստեղծությունը (տես՝ **Պերճ Պռոշյան**, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964, էջ 14-16):

Մայիսի 28.- «Արշալույս արարատյանը» (№ 780), «Ազգային» խորագրի ներքո տեղեկություն է հաղորդում Ստեփան Ոսկանյանի ծավալած գրական-մշակութային գործունեության մասին իր հայրենի քաղաքում:

Մայիս-հուլիս. «Հայկական աշխարհ» (№ 3-5), Իշխան Բագրատունու (իմա. Խորեն Ստեփանե)՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «***» («Թող թշնամիդ ուրախանա…») և «Կենցաղավոր մարդ» բանաստեղծությունները: Հրատարակված է «Մեր ներքին գործերը» գրախոսականը, որտեղ քննության առարկա է դարձված Գ. Սունդուկյանի «Խաթաբալա» պիեսը, Է. Տեր-Գրիգորյանի «Էս էլ քի միցիքուլութին» վոդևիլը և Գ. Այվազովսկու թարգմանությամբ հրատարակված Ի. Կռիլովի «Հատընտիր առակք» ժողովածուն (տե՛ս ներկա հատորը, 1866թ.):

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), արևմտահայերեն վերլուծական առաջաբանով (ունի «Սեր և առավոտ» խորագիրը և ցիտատ է բերված Նարեկացուց) և համապատասխան ծանոթագրություններով, հրատարակում է Կոստանդին Երզնկացու «Բանք երկու դէմս մտաց, տեսութիւնք ի հոգի և ի մարմին, զոր առակօք խոսի այսպէս» գրաբար բանաստեղծությունը (տե՛ս **Կոստանդին Երզնկացի**, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962 էջ 128-130):

Հունիս. «Հույսը» (№ 23) գրաբար հրատարակում է Աշոտ Սմբատյանի (Ստեփաննոս վարդապետ Աղաբազարցի) «Ի հանդէս զահակալութեան Տ. Եփրեմայ գերապատիւ վարդապետի» ներբողական բանաստեղծությունը և ժողովրդական աշխարհաբարով՝ «Վիրավորի մը զանգատը» անստորագիր չափածո ստեղծագործությունը (համառոտ ներածականում տրված է նրա հայտնաբերման բանասիրական պատմությունը): Հրատարակված է «Անիծյալ մարդուն աղջիկը (նկարագիր Մոլդավիո սովորության մը)» պատմվածքը:

Հունիսի 1. «Սիոնը» (№ 6), արևմտահայերեն հրատարակում է [Տիգրան-Հայրապետ Սավալանյանի] «Առաջադիմություն» հոդվածը, որտեղ հեղինակը բանավիճում է Ստեփան Ոսկանյանի հետ, պահպանողական դիրքերից քննադատելով նրա գործունեությունը:

Հունիսի 1. «Երևակը» (№ 117) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Խոսիլը ո՞վ հնարեց» տեսական-լեզվաբանական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 120-ում (հունիսի 23): Հրատարակվում է «Քրիստոնեական պարոն Շանշյանցի» գրախոսականը (հեղ. Հովհան-

նաև Չամուռճյան ?), որն ավարտվում է «Երևակի» № 132-ում (սեպտեմբերի 23): Գրախոսը բացասաբար է գնահատել Պետրոս Շանշյանի այդ աշխատությունը:

Հունիսի 2. Պոլսում ծնվեց կրթական մշակութային գործիչ, երաժշտագետ, շարականագետ Գրիգոր Մեհթերյանը: Վախճ. 1937 թ. նոյեմբերի 25-ին, Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 257-258: **Մխիթարյան Ս.**, Ժողովրդական տարեգիրք, Պոլիս, 1938, էջ 66-72:

Հունիսի 4. «Մասիսը» (№ 743) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» (Պողոս Պառնասյան) «Տրամախոսությունք» հոդվածը: Բնութագրված է ժամանակի գրական-հասարակական կյանքը, ցույց են տրված գրականության առաջիկա խնդիրները:

Հունիսի 4. «Մեղու Հայաստանին» (№ 21), արևելահայերեն հրատարակում է Աշխեն Դոլզովյանցի (հետագայում՝ Դոլզյան. Պերճ Պռոշյանի քենին) «Իմ մեկուճար սիրելվույս հեռանալուց հետո (նվեր Գ.Մ.Ա.)» բանաստեղծութունը:

Հունիսի 9. «Մասիսը» (№ 744) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսությունք» հոդվածը: Ի թիվս գրական-մշակութային բնույթի այլևայլ հարցերի, դրվատական բնութագրականներով ներկայացված է Ժան-Ժակ Ռուսսոյի «Նոր Էլոիզ» նամակային վեպը, որի հերոսուհի Ժյուլին բնութագրված է որպես «սքանչելի տիպար մը»:

Հունիսի 16. «Երևակը» (№ 119), արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Տեսություն պ[արոն] Ճանիկ Արամյանին դիտողությանը վրա» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի № 123-ում (հուլիսի 16): Գրախոսված է Ճանիկ Արամյանի «Դիտողություն ի վերա տեղեկագրի կաթողիկոսական հանձնաժողովո» գրքույկը:

Հունիսի 18. «Մեղու Հայաստանին» (№ 23), արևելահայերեն հրատարակում է «Բնիկ Թիֆլիզցի հայի» գրախոսականը «Պատվելի խմբագիր» վերնագրով: Գրախոսված է Գաբրիել Սունդուկյանի «Խաթաբալա» կատակերգությունը, որը բարձր է գնահատված: Այդ հենքի վրա արծարծված են գրական-թատերագիտական մի քանի հարցեր:

Հունիսի 18. «Ժամանակ» հանդեսը (№ 91), գրաբար հրատարակում է Կարապետ Դաքեսյանի «Ի տարաժամ մահ… Օսմանյան հյուպատոսի ի Ս. Պետերբուրգ» եղերերգական բանաստեղծությունը:

Հունիսի 21. Ֆիսսո ամառանոցային քաղաքում (Հս. Իտալիա) վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, աշխարհագրագետ, աղբյուրագետ, բնագրագետ-տեղագիր Ներսես Սարգիսյանը: Ծնվ. 1800 թ. հոկտեմբերի 3-ին Տրապիզոնում (Հս. Թուրքիա): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր դարձել 1829 թ. հունվարի 17-ին:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 222: **Ճեմճեմյան Ս.,** Ներսես Սարգիսյանի ուղևորությունը դեպի փոքր և մեծ Հայք(1843-1853), Վենետիկ, 1974, 94 էջ:

Հունիսի 25. «Մասիսը» (№ 746) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» (իմա. Պողոս Պառնասյան) հեգնական տրամախոսությունը «Բարեկամի մը հետ տեսակցություն, գրականության վրա խոսքեր» խորագրով, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 25. «Արշալույս արարատյանը» (№ 782), արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի ճառը, որը նա կարդացել էր մայիսի 23-ին Զմյուռնիայի Հռիփսիմյան վարժարանի հանդիսության ժամանակ: Բարձրացված են կրթության ու ազգային մշակույթի հետ կապված հարցեր, վկայակոչված է Էմմանուիլ Կանտը («Մեզ առաջնորդ էր Կանտ, և մենք փառք կսեպեինք անմահ փիլիսոփային շավիղեն չզարտուղիլ գիտությանց փշալիր դաշտե անցնելու ատեն»):

Հունիսի 28. Արաբկիրում (Կենտրոնական Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Կարապետ Կարագյույլյանը:

1890-ականներին Պոլսում խմբագրել է «Բուրաստան մանկանց» ամսագիրը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 477: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա., Երևան, 1973, էջ 236:

Հուլիս. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 5) վանի բարբառով հրատարակում է Տիգրան Ամիրջանյանի «Պանդուխտ վասպուրականցին իր ընկերներին» բանաստեղծությունը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7) գրաբար հրատարակում է Կոստանդին Երզնկացու «Ի լոյսն արեգական» տաղը (տե՛ս **Կոստանդին Երզնկացի,** Տաղեր, էջ 128-130) և

Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, Վ.Օ. Պիբոդիի «Ծագումն լուսնի» չափածո ստեղծագործությունը:

Հուլիս- «Հույսը» (№ 23), արևմտահայերեն հրատարակում է «Ժամանակիս բանուկ գաղափարը» հրապարակախոսական հոդվածը, Մելքոն-Սուրեն Հովակիմյանի «Կեանք հովուական» և Պետրոս-Հրաչյա Շահինյանի «Սուրբն Սահակ և Մեսրովբ» գրաբար բանաստեղծությունները, անստորագիր՝ «Գայլերուն նոր օրենքը» արևմտահայերեն թարգմանածո նովելը: Ժողովրդական աշխարհաբարով և հրատարակչի ծանոթագրություններով տպագրվում է Բաղդասարի «Թշվառի մը հառաչանքը» ժողովրդական բանաստեղծությունը:

Հուլիսի 1. «Սիոնը» (№ 7), արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մարգար Զաքարիա Գեղամյան» (ի՛մա. Մարգար Խոջենց) ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հուլիսի 2. «Ժամանակ» հանդեսը (№ 92) արևմտահայերեն հրատարակում է Եղիազար Մուրադյանի «Ի հարսանիս մեծաշուք իշխանին Նիկողայոսի Բեհբուդով, ընդ Մագթաղինյա Տատյան» ներբողական բանաստեղծությունը:

Հուլիսի 2. «Մասիսը» (№ 747) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունը» (ունի «Կրկին տեսություն մը և գրական խոսակցություն» ենթավերնագիրը):

Հուլիսի 9. «Արշալույս արարատյանը» (№ 783), արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Ոսկանյանի զեկուցումը, կարդացված հունիսի 16-ին, Զմյուռնիայի Մեսրոպյան վարժարանում: Քննարկված են կրթական-մշակութային և գրական մի շարք հարցեր, որտեղ վկայակոչված են եվրոպական գրականության դասականները:

Հուլիսի 9. «Մեղու Հայաստանին» (№ 26), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «օրիորդ Ք.Տ.Մ.») հրատարակում է «Հացիի անտառ (ֆրանսիացի որսորդի պատմությունը)» պատմվածքը:

Հուլիսի 15. «Ծաղիկը» (№ 124) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Միքայել Նալբանդյանց» հոդվածը:

Հուլիսի 16. «Երևակը» (№ 123), արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Պատմական սուտ մը» հոդվածը: Չամուռճյանն անդրադարձել է Վոլ-

տերի «Ճաշակ ի վերա բարուց և սզվո ազգաց» աշխատությանը, «Անառակ որդի» դրամային և երկուսն էլ բացասաբար գնահատել:

Հուլիսի 16. «Ժամանակ» հանդեսը (№ 93) գրաբար հրատարակում է «Յողբալի վիճակ վարժապետաց ազգիս» պոեմը: Հեղինակի մասին նշված է, որ «Ազգին մեջ իր բազմամյա աշխատությամբը հռչակավոր և բազմարդյուն, և իր ծերության օրերը թշվառությամբ կնքող վարժապետ մըն է» (Գաբրիել Պատկանյան ?):

Հուլիսի 16. «Մեղու Հայաստանին» (№ 27), Կատարինե Տեր-Միքայելյանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Անիմանալի երկչոտություն» պատմվածքը:

Հուլիսի 21. «Մասիսը» (№ 754) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Մուրադյանի (հետագայում՝ Մելքիսեդեկ եպիսկոպոս) «...խմբագիր» հոդվածը: Քննադատված է «Չամուռճյան պատվելու» և նրա խմբագրությամբ հրատարակվող «Երևակ» հանդեսի «ազգուրաց», «նենգ», «հայրենադավ» գործունեությունը:

Հուլիսի 23. «Երևակը» (№ 124) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Մահազույժ» հոդվածը, որտեղ ազդարարում է Միքայել Նալբանդյանի մահը:

Հուլիսի 23. «Մեղու Հայաստանին» (№ 28), արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Ազնիվ հրատարակող «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի» հոդվածը: Վերլուծաբար ներկայացված է Նոր Նախիջևանում ստեղծված «Հայոց բարեգործական ընկերության» պատմությունը:

Հուլիսի 30. «Ժամանակ» հանդեսը (№ 94), Ստեփան-Պողոս Փափազյանի «Խրիմյան և մարգարիտ արքայության երկնից» խորագիրը կրող արևմտահայերեն դրվատական նախաբանից հետո հրատարակում է նրա՝ վերոհիշյալ գրքի «Նախաշավիղը»:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) գրաբար հրատարակում է Կոստանդին Երզնկացու «Բանք յաղագս անցաւոր մեծութեան» տաղը և Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ՝ Վիլյամ Բրայանդի «Միջօրեայ» բանաստեղծությունը:

Օգոստոսի 1. «Ծաղիկը» (№ 125), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Շարլ-Լուի Մոնտեսքյոյի «Պարս-

կական նամականի» հրապարակախոսական հոդվածաշարը, որն ավարտվում է նույն պարբերականի №129-ում (դեկտեմբերի 2):

Օգոստոսի 1. «Սիոնը» (№ 8), գրաբար և հրատարակչի արևմտահայերեն առաջաբանով, սկսում է հրատարակել «Ստորագրութիւն ուղնորութեան Տ. Գրիգորի Շղթայակրի Պատրիարքի Սուրբ Աթոռոյս՝ յԵրուսաղեմէ ի Կ. Պօլիս» ուղեգրական աշխատությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 12-ում (դեկտեմբեր):

Օգոստոսի 1. «Մասիսը» (№ 757) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունքը»: Քննադատված է Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանի ամբողջ գործունեությունը, որը որակված է որպես «սևահոգի պահպանողականություն»: Բացասաբար է ներկայացված «Երևակը», այդ հենքի վրա դրվատված է Միքայել Նալբանդյանը:

Օգոստոսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 30) արևելահայերեն հրատարակում է նույն թվականի հուլիսի 20-ին Թիֆլիսում կայացած հանդիսության ժամանակ Ստեփաննոս Նազարյանցի արտասանած ճառը «Իմ ազնիվ եղբայրակիցք» խորագրով:

Օգոստոսի 8. «Երևակը» (№ 126) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Ողջամիտ, պարզամիտ և չարամիտ հայ» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի № 128-ում (օգոստոսի 23):

Օգոստոսի 13. «Մասիսը» (№ 758), Պողոս Պառնասյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է «Գաղղիո ծերակույտի անդամ» Պ. Պոնժանի ճառը՝ «Արդի ժամանակն և անոր ոգին» խորագրով, նվիրված ազգային կրթությունն ու մշակույթը զարգացնելու հարցերին:

Օգոստոսի 13. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանի «Գարուն» պոեմը: Այն գրվել է Ղզլարում (Հյ. Կովկաս, այժմ Դաղստանի ԻԽՍՀ), 1863 թ. ապրիլին:

Օգոստոսի 13. «Ժամանակ» հանդեսը (№ 95) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է «Դավրիժեցու» «Տասնիններորդ դարուս մեջ ի Կարին մարտիրոս-

ված երկու անձինք» պոեմը: Հեղինակի մասին հանդեսը ծանուցում է, որ «Ի Լոնդոն բնակվող պատվավոր ազգային մը է»:

Օգոստոսի 14. Մաշկերտ գյուղում (Արաբկիրի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց բանասեր, պատմաբան, հոդվածագիր, խմբագիր Դավիթ Խաչկոնցը (Խաչկյան): Վախճ. 1918թ. նոյեմբերի 23-ին, Պոլսում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 232-233, 1921, էջ 325: **Ղազիկյան Ա.,** Հայկական նոր մատենագիտություն…., Վենետիկ, 1912, էջ 1130-1132: **«Հանդես ամսօրյա»**, 1912, № 7 («Մատենագիտական»):

Օգոստոս- սեպտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 6-7) Թիֆլիսի բարբառով հրատարակում է Նիկողայոս Ալադաթյանի «Վայ իմ կորած հիսուն ոսկի» վոդևիլը (ունի «նյութը քաղված է ռուսականից» նշումը) և Իշխան Բագրատունու (իմա՝. Խորեն Ստեփանե)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, մի հատված Պիեռ Կոռնելի «Հոռասներ» (իմա՝. «Հոռացիոս») ողբերգությունից: Այն ունի «Կամիլլի անեծք» վերնագիրը:

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9), բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ հրատարակում է «Անկումն արուսեկին» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 1. «Սիոնը» (№ 9), արևմտահայերեն հրատարակում է «Սուրբ Աթոռույս միաբանության վրա նոր հարձակում մի» հրապարակախոսական հոդվածը և Եղիշե Մեսրոպյանի «Իղձ ոգւոյ առ սուրբն Սաղիմ» գրաբար ներբողական բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 1. «Երևակը» (№ 129) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Ռուսահայ ինչ ըսել է» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 3. «Արշալույս արարատյանը» (№ 787), հրատարակում է «Եթե Շնորհալի Հայրապետն մեր Ներսէս…» գրաբար բանաստեղծությունը: Այն հրատարակության է ուղարկվել Հնդկաստանից, հեղինակն է Հովհաննես Խաչկյանը, առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը:

Սեպտեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 35), ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ և խմբագրության տված համապատասխան մեկնաբանություններով, սկսում է հրատարակել Վիկտոր Հյուգոյի «Մահվան դատապարտության վերա» ճառը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Սեպտեմբերի 12. Սուլդա քաղաքում (Ախալքալակի շրջան, Վրացական ԽՍՀ), ծնվեց գյուղագիր, ազգագիր, դրամատուրգ, խմբագիր Հովհաննես Մկրտչի Մալխասյանը: Վախճ. 1931 թ., հունվարի 10-ին, Երևանում:

1907 թ. Նոր Նախիջևանում հիմնադրել և մինչև 1909 թ. խմբագրել է «Մեր ձայնը» երկշաբաթաթերթը:

Հայ գյուղագիրներ, Երևան, 1950, էջ 573-574: **Մալխասյան Հ.**, Երկեր, Երևան, 1967, 383էջ:

Սեպտեմբերի 15. «Ծաղիկը» (№ 128) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Չիլինկիրյանի «Ծանուցում և քննադատություն» գրախոսականը:

Սեպտեմբերի 16. «Երևակը» (№ 131) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Մարգարեությունք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի № 133-ում (հոկտեմբերի 1):

Սեպտեմբերի 19. Թիֆլիսում, Ղևոնդ քահանա Խարազյանցի և Ստեփան Օնանյանցի ջանքերով, իր գոյությունն է սկսում սկզբում 25 (հետագայում՝ 100) աշակերտուհի ունեցող «Հայկական օրիորդաց դպրոցը»: Ավանդում էին հայերեն և ռուսերեն լեզուներ, կրոն, ձեռագործ, իսկ հետո նաև հայոց պատմություն, թվաբանություն, ազգային երգեցողություն:

«Մեղու Հայաստանի», 1866, № 39 («Ազգային»), № 43 («Զրկինենց… ուսումնարանի վրա»): 1867, № 49 («Ազգային»): 1869, № 14 («Մի քանի խոսք»):

Սեպտեմբերի 24. «Ժամանակ» հանդեսը (№ 98) արևմտահայերեն հրատարակում է [Ստեփան-Պողոս Փափազյանի] «Վենետիկի Մխիթարյանց վանքը» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 24. «Մեղու Հայաստանին» (№ 37), Հայրապետ Ղուկասյանցի՝ գերմաներենից (?) կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Զարհուրանաց գիշեր» պատմվածքը:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10), իտալերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Անջելո Պրոֆերիոյի «Երգ պատերազմի» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 1. «Երևակը» (№ 133) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Չամուռճյանի «Տպագրության ազատություն ի Ռուսաստան» հոդվածը: Բացասաբար է գնահատված այդ հարցը Ռուսաստանում և մանավանդ՝ Խորեն Ստեփանեի «Հայկական աշխարհ» ամսագրի գործունեությունը:

Հոկտեմբերի 1. «Մեղու Հայաստանին» (№ 37), Կատարինե Տեր-Միքայելյանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ղոնձե Վարազ» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հոկտեմբերի 1. «Մասիսը» (№ 765), արևմտահայերեն սկսում է հրատարակել «… խմբագիր» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Վերլուծված են հասարակության շարժիչ ուժերը և նրանց կատարած դերը այդ հասարակության գրական ու մտավոր կյանքը կազմակերպելու գործում:

Հոկտեմբերի 8. «Երևակը» (№ 134) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Չամուռճյանի «Կրոնք և ազատություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի № 140-ում (նոյեմբերի 23):

Հոկտեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 39) արևելահայերեն հրատարակում է «Բնիկ Թելավցի հայի» «Պատվական եղբայր Սիմոնյանց հայ» հոդվածը: Քննադատված է «Հայկական աշխարհ» պարբերականի գրական քաղաքականությունը: Այս կապակցությամբ բարձրացված են ժամանակի գրական քննադատական մի քանի անկյունաքարային հարցեր:

Հոկտեմբերի 15. «Մասիսը» (№ 767), արևմտահայերեն սկսում է հրատարակել «Բանասիրական» խորագիրը կրող հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (հեղինակ՝ «Ներսես Ս.Մ.»): Վերլուծված է ժամանակի գրական-հասարակական և «հրապարակագրական» կյանքը, գնահատված են կրթական հաստատություններն ու մշակութային կենտրոնները:

Հոկտեմբերի 15. «Մեղու Հայաստանին» (№ 40), Սերովբե Ռեստենի (Պատկանյան) ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալեքսեյ Կոլցովի «Ախ ինչու զոռով…» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 22. Պոլսում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Միհրան Մոզյանը: Վախճ. 1922 թ. դեկտեմբերի 6-ին, իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 336, 1925, էջ 370:

Հոկտեմբերի 23. Վերին Ագուլիսում (Գողթն գավառ, այժմ՝ Նախիջևանի ԻԽՍՀ) ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից և գերմաներենից՝ հայերեն) Քրիստափոր Թաղնոսյանը: Վախճ. 1891 թ. հունվարի 28-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Կումայրի):

> **Թաղնոսյան Ք.,** Բանաստեղծություններ, Մոսկվա, 1899, 58 էջ:, **«Մշակ»**, 1900, № 8 («Ներքին լուրեր»):

Հոկտեմբերի 25. Արծաթի գյուղում (Կարինի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց հայագետ-բանասեր, մատենագետ, թարգմանիչ (ռուսերենից, ֆրանսերենից, գերմաներենից, անգլերենից, լատիներենից՝ հայերեն) Հակոբոս Մելքոնի Տաշյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1885 թ. մայիսի 14-ից, վախճ. 1933 թ, փետրվարի 3-ին, Վիեննայում:

> **«Հանդես ամսօրյա»,** 1933, № 1-2, («Հակոբոս վ. Տաշյան»): № 3-6, («Հակոբոս վ. Տաշյան. ցավակցություններ»):

Հոկտեմբերի 29. «Մասիսը» (№ 769), արևմտահայերեն հրատարակում է «Կշիռ մարդկային իրողությանց, կամ գործնական սկզբունք բարոյականության» խորագիրը կրող գրախոսականը:

Հոկտեմբերի 29. «Մեղու Հայաստանին» (№ 42), արևելահայերեն սկսում է հրատարակել Սարգիս Տեր-Վարդանյանցի «Մարդս ընկերական արարած է և ընկերականության համար ստեղծված» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի N44 (նոյեմբերի 12)-ում:

Հոկտեմբեր-նոյեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 8-9), արևելահայերեն հրատարակում է «Իշխան Բագրատունու» «Արա Գեղեցիկ և Նվարդ» դյուցազներգությունը (ունի «Պատմագրական վիպասանություն» ենթավերնագիրը): Հրատարակված է «Ղզլարաբնակ հայերի նամակը դեպի Ստ. Նազարյանցը» շնորհավորագիրը՝ աշխատանքային հաջողությունների բարեմաղթանքներով և «Ստ. Նազարյանցի պատասխանագրությունը Ղզլարաբնակ հայերի նամակի հանդեպ» պատասխան-հոդվածը, որտեղ նա անդրադառնում է ուսման, հայ մատենագիտության հետագա զարգացման հետ առնչվող հարցերին:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11), իտալերեն բնագրից կատարված երկու տարբեր գրաբար չափածո թարգմանություններով (թարգմանիչներ՝ *** և Սրապիոն Հեքիմյան), իր ընթերցողներին է ներկայացնում Դանտեի միննույն՝ «Մահ Ուկօլինեայ»

բանաստեղծությունը: Քերովբե Քուշներյանի՝ ֆրանսերեն և ռուսերեն բնագրերից կատարած արևմտահայերեն չափածո փոխադրությամբ, հրատարակվում է Ժան Լաֆոնտենի «Կաղնին և Եղեգն» ու Իվան Կռիլովի «Կատուն և սոխակ» առակները:

Նոյեմբեր. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 11) արևելահայերեն հրատարակում է [Մարկոս Աղաբեկյանի] «Հատընտիր քաղվածք… հատոր Ա» խորագիրը կրող գրախոսականը, որտեղ դրական է գնահատված Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը: Ժողովրդական աշխարհաբարով և հրատարակչի ծանոթագրություններով հրատարակված է «Շահիհարցվոց մի երգը» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 1. «Սիոնը» (№ 11), արտատպելով «Բազմավեպից» (տես՛ «Ժամանակագրության» նախորդ հատորը, 1860 թ. հունվար), սկսում է հրատարակել Կեսար Քանդուի «Առաքինի ու քաղաքակիրթ պատանի» վիպակը, որը որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև նույն պարբերականի 1869 թ. № 11-ը (նոյեմբեր): «Սիոնի» համար վերահրատարակությունը պատրաստել է Հ. Քյուրքճյանոֆը, որը և կատարել է զգալի փոփոխումներ:

Նոյեմբերի 5. «Մասիսը» (№ 770) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Մանզումե» հոդվածը: Բացասաբար է գնահատված «Մանզումեի էֆքյար» (իմա.՝ «Մտածումների շարք») հայատառ թուրքերեն թերթի գրական-հրապարակախոսական գործունեությունը, վերջում՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, բերված է Լաֆոնտենի «Օձն ու խարտոցը» առակը:

Նոյեմբերի 6. Շուլավերում (Վրացական ԽՍՀ, այժմ՝ Շահումյան) ծնվեց բանաստեղծ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Վահան Աղաբեկի Միրաքյանը: Վախճ.՝ 1942 թ. մարտի 21-ին Թբիլիսիում, հուղարկավորությունը՝ Երևանում:

Իր ստեղծագործությունները ստորագրում էր «Կոնո» և «Միր Կոնո» կեղծանուններով:

«Սովետական գրականություն», 1967, № 4, («Վահան Միրաքյան»), **Բատիկյան Լ.**, Վահան Միրաքյան, Երևան, 1968, 93 էջ: **Խաչատրյան Հ.**,Գրական տեղեկատու, էջ 381-382:

Նոյեմբերի 12. «Մասիսը» (№ 771) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունը»: Բացասաբար է գնահատված Հովհ. Չամուռճ-

յանի «Երևակ» հանդեսը և հայատառ թուրքերեն «Մանզումյեի էֆքյար» («Մտածումների շարք») թերթը: Դրվատաբար է ներկայացված նոր հրատարակվող «Ծիածան» շաբաթաթերթը, արված են մի շարք դիտողություններ: Վերլուծված է Շարլ-Լուի Մոնտեսքյոյի և Ալեն Լեսաժի ստեղծագործությունը:

Նոյեմբերի 15. Պոլսում ծնվեց հնագետ, հնէաբան, կրթական-մշակութային գործիչ Հովսեփ Ստեփանի Էքշյանը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 228-231:

Նոյեմբերի 19. «Մասիսը» (№ 772) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» (Մատթեոս Մամուրյան ?) «Տրամախոսություն» հրապարակախոսական հոդվածը: Բնութագրված է Կարապետ Չուխաջյանի «Ծիածան» շաբաթաթերթը և այնտեղ հրատարակված թարգմանությունները: Այդ հենքի վրա վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12) գրաբար հրատարակում է Կոստանդին Երզնկացու «Յաղագս անգիտաց սուտ խօսելոյ զբանս անպիտանս և հակառակ կալ իմաստնոց» բանաստեղծությունը (**Կոստանդին Երզնկացի**, Տաղեր, էջ 169-175) և Ղևոնդ Ալիշանի «Հանգիստ Հ. Արսենի Կոմիտասայ Բագրատունւոյ, նորոյ քերթողահօր» մահախոսականը:

Դեկտեմբերի 3. «Մասիսը» (№ 774) արևմտահայերեն հրատարակում է «Ազնես կամ փոքրիկ վինահար աղջիկը» գրախոսականը (հեղինակ՝ ***= Կարապետ Ութուջյան ?) և գրաբար՝ Մկրտիչ Աճեմյանի «Ի սգալի մահ վսեմափայլ Պալեան Կարապետ Ամիրայի» պոեմը:

Դեկտեմբերի 3. «Մեղու Հայաստանին» (№ 47) արևելահայերեն սկսում է հրատարակել «Երկու խոսք հայոց լեզվի դասատվության վերա» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Դեկտեմբերի 3. «Ժամանակ» հանդեսը (№ 103), գրաբար հրատարակում է «Շիրիմ, հառաչք ծնողասէր որդւոյ» եղերգական բանաստեղծությունը (հեղինակ՝ «Ն.Պ.Տ.»):

Դեկտեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 48), Կատարինե Տեր-Միքայելյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում հրա-

տարակել Ֆրիդրիխ Գերշտեկերի «Ամերիկյան կյանքից. գերուհի» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 51-ում (դեկտեմբերի 31):

Դեկտեմբերի 12. Սեբաստիայում (Արևելյան Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Գրիգոր Դավթյանը: Վախճ. 1924 թ. ապրիլի 27-ին, Փարիզում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 379: **«Ընդարձակ տարեցույց»,** Պոլիս, 1925, էջ 383-384:

Դեկտեմբերի 17. «Ժամանակ» հանդեսը (№ 104) գրաբար հրատարակում է Կարապետ Դաքեսյանի «Ի տխրազգած մահ … Կարապետ Պեյի Պալեան» եղերգական բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 24. Վենետիկում վախճանվեց ականավոր հայկաբան, լեզվագետ, բանաստեղծ, թարգմանիչ (հունարենից, լատիներենից, ֆրանսերենից, իտալերենից՝ հայերեն), պատմիչների քննական բնագրերի հրատարակիչ Արսեն Բագրատունին: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1810 թ., ծնվ. 1790 թ., օգոստոսի 21-ին, Պոլսում:

«Բազմավեպի» իր հոդվածները և առանձին աշխատությունները ստորագրում էր «Հ. Արսեն Անթիմոսյան», «Առան Սիսակյան», «Հ.Ա.Կ.Բ.» և «Հ.Ա.Բ.» (Հայր Արսեն Կոմիտաս Բագատունի) ձևով:

«Բազմավեպ», 1866, № 12 («Հանգիստ Հ. Արսենի Կ. Բագրատունւոյ…»): **Մխիթարյան հոբելյան,** Վենետիկ, 1901, էջ 126-146: **Ղազիկյան Ա.,** Հայկական նոր մատենագիտություն…, Վենետիկ, 1912, էջ 295-298, **Հայ նոր գրականության պատմություն**, հ 1-ին, Երևան 1962, էջ 171-193:

Դեկտեմբերի 24. «Մասիսը» (№ 777) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսություն Ժ» հրապարակախոսական հոդվածը: Նկարագրված է հայ երիտասարդության աննախանձելի վիճակը, և այն ուղղելու, «մտային շարժողություն» առաջացնելու միջոց նշված է ուսումն ու կրթությունը: Քննադատված են հայկական դպրոցները և միջոցներ են առաջարկված նրանց վիճակները բարելավելու համար:

Դեկտեմբերի 24. «Արշալույս արարատյանը» (№ 795), հրատարակում է Հայդ Կլարկի «Վիկտորիա կամ Անգլիո հայ թագուհին» բանասիրական հոդվածը: Այն Լոնդոնի «Աթենեում» հանդեսից արևմտահայերեն է թարգմանել և համապատասխան

ծանոթագրություններով «ուսումնականորեն հարստացրել է» Սարգիս Միրզա Վանանդեցին:

Դեկտեմբերի 25. Պոլսում (Լանկա) իր գոյությունն է սկսում «Հայկական բարեկամության օժանդակ ընկերություն» կազմակերպությունը, որն իր առջև նպատակ էր դնում տարածել լրագրեր ու գրքեր, բանալ ընթերցարաններ զանազան թաղերում, լուսավորել ազգը հրապարակախոսային դասախոսություններ կարդալու միջոցով: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1870-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1957, № 6-7 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Դեկտեմբերի 31. «Մասիսը» (№ 778) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Ութուջյանի «Հայոց ազգը նոր տարվույն առջև» հրապարակախոսական առաջնորդողը: Վերլուծված են 60-ականների հայկական պատմական իրադարձությունները, գրական-մշակութային և հասարակական կյանքը:

Դեկտեմբերի 31. «Մեղու Հայաստանին» (№ 51), Ա. Տեր-Միքայելյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Յոհան-Պաուլ Ռիխտերի «Քամբախտի երազը նոր տարվան մեջ» նովելը:

–––Հալեպում բնակվող Կյուրինցի վաճառականները (Մարտիրոս Արապյան, Սարգիս Չիլինկիրյան, Սենեքերիմ Թահմազյան, Մարգար Գոչունյան, Մարկոս Մակարյան, Հարություն Մարանյան, Պողոս Արապյան) հիմնում են կրթական-մշակութային «Վահանյան ընկերությունը», որի նպատակն էր «նպաստել Կյուրինի աղքատներուն և ազգային վարժարաններուն» և զարկ տալ կրթական-մշակութային գործին: Ընկերությունը 1874 թ. Կյուրինում բացում է «Ղևոնդյան ուսումնարանը» (40 աշակերտ, 1 ուսուցիչ), իսկ 1875-ին՝ գիշերօթիկ դպրոց: «Վահանյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1910-ական թվականները:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հատոր Բ, Վիեննա, 1963, էջ 263-266:

–––Մուլինում (Արևելյան Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի արևելագետ, հայագետ Անտուան Մեյեն (Antoine Meillet): Վախճ.1936 թ. սեպտեմբերի 21-ին Փարիզում:

«Հանդես ամսօրյա», 1936, № 7-9 («Անտուան Մեյե»), **Աղայան Էդ.,** Հայ լեզվաբանության պատմություն, Երևան 1968, հատոր Ա, էջ 332-350:

–––Այգեհատ գյուղում (Լոռի) ծնվեց լրագրող, հասարակական և կուսակցական գործիչ Սիմոն Զավարյանը: Վախճ. 1913 թ. հոկտեմբերի 14-ին Պոլսում (հուղարկավորությունը՝ նոյեմբերի 3-ին, Թիֆլիսում):

«Անտոն» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մշակ», 1913, № 230 («Սիմոն Զավարյան»), № 231 («Սիմոն Զավարյան»): **Կարո Գևորգյան**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1963, էջ 189-202:

–––Պոլսում ծնվեց արձակագիր, դրամատուրգ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), կրթական-մշակութային գործիչ Տիգրան Խաչատուրի Կամսարականը: Վախճ. 1941 թ. հունվարի 4-ին Վիշիում (Կենտր. Ֆրանսիա):

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Օվքիդե», «Ասեղ», «Շոզեգրիչ», «Մոլորակ», «Նետ», «Անցորդ», «Փյունիկ», «Հայկակ», «Նեստոր», «Z», «Z. Z. Z.», «Բ. Տեր-Զաքարյան» կեղծանուններով:

Մարգարյան Հ., Տիգրան Կամսարական (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1964, 308 էջ:

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, խմբագիր Հակոբ Գուրպեթյանը: Վախճ. 1913 թ. փետրվարի 23-ին Վառնայում (Բուլղարիա):

1896-1911 թթ. Վառնայում խմբագրել է «Իրավունք» եռօրյա երկլեզու (հայերեն և թուրքերեն) լրագիրը:

«Մշակ» 1913, N 50 («Հակոբ Գուրպեթյան»): **Թեոդիկ,** Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1914, էջ 393:

–––Համադանում (Պարսկաստան) ծնվեց գրական-մշակութային գործիչ, թարգմանիչ (պարսկերենից, ֆրանսերենից, անգլերենից՝ հայերեն) Հովսեփ Միրզայանցը: Վախճ. 1935 թ. հունիսի 12-ին, Թեհրանում:

«Հայաստանի կոչնակ», 1935, № 30 («Հովսեփ Միրզայանցի մահը»): **Տարեցույց ազգային հիվանդանոցի,** Պոլիս, 1936, էջ 188:

–––Ղալաչա գյուղում (այժմ՝ Բերդավան, Նոյեմբերյանի շրջան, ՀՀ) ծնվեց բառարանագիր, պատմաբան-բանասեր Հարություն Դաղբաշյանը: Վախճ. 1939 թ. Լենինգրադում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 274-275:

–––Ծնվեց գերմանացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն) Կարլ Ռոտը (Karl Roth): Վախճ. 1940 թ. հունվարի 12-ին Մյունխենում (Հար. Գերմանիա):

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձը հայագիտական դաշտի վրա»):

–––Պոլսում ծնվեց բառարանագիր, բանասեր, լեզվագետ Զաքարիա Փափազյանը: Վախճ. 1942 թ. Կահիրեում (Եգիպտոս):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 290: **Ընդարձակ տարեգիրք Ս. Փրկիչի ազգային հիվանդանոցի,** Պոլիս, 1942, էջ 305:

–––Ապուշեխ գյուղում (Ակնի շրջան, կենտր. Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, դրամատուրգ, խմբագիր Հմայակ Ազատյանը: Վախճ. 1934 թ. Կահիրեում:

1894 թ. Աթենքում հիմնել և մինչև 1896 թ. խմբագրել է «Ապտակ» երգիծական հանդեսը: 1896 թ. խմբագրել է «Միություն» ամսագիրը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 41-42: **Ազատյան Թ.,** Ակն և ակնցիք, Պոլիս, 1943, էջ 70:

–––Երևանում ծնվեց կրոնական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Մատթեոս եպիսկոպոս Մատթեոսյանցը:

1909 թ. խմբագրել է Էջմիածնի «Արարատ» ամսագիրը:

«Արարատ», 1913, № 8-9 («Մայր աթոռ»):

–––Պոլսում (Բոյուք դերե), Գևորգ և Կարապետ Երամյանների սատարմամբ, իր գոյությունն է սկսում թաղային իգական վարժարանը՝ «Ս. Հռիփսիմյանց» անվամբ: Դադարում է 1913 թվականին:

«Հանդես ամսօրյա», 1930, № 9-10 («Ծանոթությունք Ստամբոլը պատմության»):

–––Շուշիում ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), հուշագրող Պետրոս Հարությունի Զաքարյանը: Վախճ. 1922 թ. Թիֆլիսում:

«Նորք (ամսագիր)», 1930, էջ 65-87, № 1, («Իմ հիշողություններից»), էջ 306-307 («Պետրոս Զաքարյան»):**Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 328-329:

–––Ղազնաֆար գյուղում (Ապարանի շրջան, այժմ՝ ք. Արագած) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, եկեղեցական մատենագիր Բենիկ վարդապետ Տեր-Եղիազարյանը:

Իր հոդվածներն ու աշխատությունները ստորագրում էր «Բ. Վ.» և «Բենիկ վարդապետ» ձևով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա., էջ 195: **Մատենագիտություն «Արարատ» ամսագրի,** Երևան, 1970, «Բենիկ վարդապետ» հղումը:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Նվեր տղայոց, ցույցք աստուծո» արձակ գեղարվեստական ստեղծագործությունը: 56 էջ:

Նույն անփոփոխ՝ 1886, 1895 թթ.:

–––Վենետիկում, Տիրուհի Ցաղլըքճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Շարլ-Ֆորբ Մոնթալամբերի «Պատմություն սրբուհվույն Եղիսաբեթի, դշխոյին Հունգարացվո» վեպը: 441 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Արսեն Այտընյանի «Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությունը: 498 էջ:

–––Վիեննայում, Ալեքսանդր Պալճյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սեկունդոս Ֆրանկոյի «Մոլորությունք բողոքականության, հայտնյալք ի շինականս» աշխատությունը: 400 էջ:

–––Վիեննայում, գրաբար հրատարակվում է «Հատընտիր ընթերցուածք ի մատենագրութեանց նախնեաց» ժողովածուն: Բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Թադևոս Թոռնյանի: 550 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1891 թ., 483 էջ:

Երկրորդ հատոր 1910 թ., 606 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Գր. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 333 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի կազմած «Մատենադարան նախնեաց» ժողովածուի Ա հատորը: 400 էջ:

Նույնը՝ 1867, 1876, 1877, 1891 թթ., ամեն անգամ որոշ փոփոխություններով ու լրացումներով: Հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Պոլսում Գրիգոր Ճերրահյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Զվարճալի խրատական պատմություններ» ժողովածուն: 62 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն և քրդերեն (հայատառ) հրատարակվում է Մկրտիչ Տիգրանյանի «Լապտեր լուսատու» գիրքը: 185 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի «Աշխարհագրության համառոտ քաղաքական գիրքը»: 123 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Թագվորյանցի «Հրահանգ բարոյական խրատուց» աշխատությունը: 32 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Մուրադյանի (Մելիքսեդեկ եպիսկոպոս) «Եղծ բանաքաղության Չամուռճյան պատվելվույն» աշխատությունը: 100 էջ: «Եղծ գրաբանությանց պ[արոն] Չամուռճյանի» խորագրի ներքո, հատվածաբար հրատարակվում է «Մասիս» շաբաթաթերթում, 1866 թ. № 743-ից (հունիսի 4) սկսած:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է «Պատկեր Հայաստանեայց լուսաւորչական սուրբ եկեղեցւոյ» աշխատությունը: 405 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է տիկին Բրաբիոնի «Հայ աղջկանց կարգվելու դյուրին ճամբան, և հայ երիտասարդաց շռայլությունը, և հայ կանանց շըլըխտիությունը (ի՛մա. թափթփվածությունը – Ս. Շ.)» գեղարվեստական ստեղծագործությունը: 50 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Տեղեկագիր ի վերա կաթողիկոսական խնդրո, առ Ազգային ընդհանուր ժողով կենտրոնական վարչության Հայոց, ի Տաճկաստան» գրքույկը: 44 էջ:

–––1866 (?) Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Տիգրան-Հարություն Տետեյանի «Նոր ընթերցարան» դասագիրքը:

Նույնը՝ 1868 թ., 192 էջ, որոշ փոփոխումներով և լրացումներով:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ճանիկ Արամյանի «Զեյթունցիք և լուսավորչական հայք» աշխատությունը: 32 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ճանիկ Արամյանի «Ռուսիա և ընդհանուր ժողով հայոց ի Կոստանդնուպոլիս» աշխատությունը: 24 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Կարապետ Ալթունյանի (Ակնեցի) «Կշիռ մարդկային իրողութեանց, կամ գործնական սկզբունք բարոյականութեան» աշխատությունը: 240 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց» աշխատությունը (վերահրատարակության համար հիմք է ընդունված Անձնացյաց օրինակը): 453 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1873թ., 456 էջ:

Վերջում զետեղված է «Բան խրատու Եղիշեի վարդապետի յաղագս միանձանց» ճառը:

–––Պոլսում Հովհաննես-Արա Մարգարյանի (Արմտանցի)՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Առաջնորդ մարց, կամ մայրերը ինչ պարտք ունին իրենց զավակաց վրա» մանկավարժական աշխատությունը: 8+152 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Ժամանակ» հանդեսում, 1864 թ. № 28-ից (հունիսի 6) սկսած:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Խանջյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Փունջ ծաղկանց» խորագրով: 88 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Չելիկյանի «Պապին գլխավորությունը հնությանց համեմատ փորձված» աշխատությունը: 96 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Սամվել Պետրոսյանի «Նուէր հոգևոր, բարոյականք, ի սուրբ գրոց, ի պէտս տղայոց» ժողովածուն: 39 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող բացատրություններով, հրատարակվում է Գարեգին Սրվանձտյանի «Նոր ընթերցարան, քերական և հեզերեն զավառական մաքուր լեզվով ու ոճով շինված, ի պետս զավառական դպրոցաց» դասագիրքը (Ա և Բ տետր): 195 էջ:

Նույնը՝ 1875, 1883 թթ., անփոփոխ:

–––Պոլսում, գրաբար և արևմտահայերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Մկրտիչ Խրիմյանի «Մարգարիտ արքայության երկնից. խուն վաստակ երկոց Մկրտիչ վարդապետի Խրիմյան» գեղարվեստական ստեղծագործությունը: 128 էջ:

Նույնը՝ 1876 թ. (141էջ), 1887 թ. (154էջ) և 1894 թ. (Էջմիածնում, 185էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով և լրացումներով:

———Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պետրոս Շանշյանի «Համառոտություն քրիստոնեական ուսման Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո» աշխատությունը: 103 էջ:

Նույնը՝ Երուսաղեմ, 1873 թ. (192 էջ) և 1879 թ. (195 էջ), անփոփոխ:

Աշխատության առաջին տիպը ունի «Հատոր Ա» նշումը, սակայն հետագա հատորները լույս չեն տեսել: Հաջորդ երկու վերահրատարակությունների ժամանակ այս նշումը դուրս է թողնված:

———Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Թոզլյանցի (Մկրտիչ Գ. Թաթուլյան) «Արուսյակ կամ ուղեցույց երջանկության» վիպակը: 72 էջ:

———Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբոս վարդապետ Չիլինկիրյանի «Պատմություն ազգային երկամյա անցից» աշխատությունը: Վերջում զետեղված է Մարկոս Աղաբեկյանի «Խնդիր կաթողիկոսության ամենայն հայոց» ուսումնասիրությունը: 158 էջ:

———Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Կաղանդի պարգև տղայոց, ընտրություն բարոյական վսեմ գրվածոց և շահավետ պատմությանց» գրքույկը: 48 էջ:

———Զմյուռնիայում, Բաղդասար Պալղազարյանի՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Կառլո Գոլդոնիի «Առաքինությունք Պամելայի» կատակերգությունը (սկզբում «Կատակերգությանս պատմությունը» խորագրի ներքո, տրված է համառոտ բովանդակությունը): 104 էջ:

———Զմյուռնիայում, Լյուսի Պալասանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Քրիստոֆ Շմիդտի «Ագնես կամ փոքրիկ վինահար աղջիկը» վիպասանությունը: 100 էջ:

———Զմյուռնիայում, անգլերեն և հայերեն համատեղ տեքստերով, հրատարակվում է Սարգիս Վանանդեցու «Վիկտորիա Անգղիո թագուհվույն Արշակունի հայ թագավորներե սերիլը» աշխատությունը: 95 էջ:

———Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է «Երկասիրութիւնք երկուց ընկերակցաց, նախկին աշակերտաց Սուրբ Մեսրոպեան վարժարանի» խորագիրը կրող բանաստեղծությունների գրքույկը: 64 էջ:

–––Զմյուռնիայում, Տիգրան-Հարություն Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» վիպասանության առաջին գիրքը:

Երկրորդ և երրորդ գրքեր՝ նույն թվականին:

Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ գրքեր՝ 1867 թ.:

–––Զմյուռնիայում, Արամ-Կարապետ Տետեյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակվում է Վիլյամ Շեքսպիրի «Հռոմեոս և Ճյուլիեդդա» ողբերգությունը: 112 էջ:

Սկզբում, «Առաջաբան բնագրին» խորագրի ներքո տրված է Շեքսպիրի ստեղծագործության վերլուծությունը, որին հաջորդում է «Կենսագրություն Շեքսպիրա» բաժինը, ապա՝ «Շեքսպիրի կտակը» և վերջում՝ «Ի թարգմանչէն» խորագրի ներքո, Տետեյանը տալիս է իր թարգմանության շարժառիթները:

–––Թիֆլիսում արևմտահայերեն հրատարակվում է «Ուղևորություն առաջնորդի հայոց Ատրպատականի» գրքույկը (հեղինակ՝ «Հայ ումն»): 36 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Ուղևորություն առաջնորդի հայոց Ատրպատականի Տ. Գեորգա արքեպիսկոպոսի Վեհապետյան ի Թեհրան, յոթն և տասն խնդրագիրք նորա և հրովարտակք առ այնս արեգակնափայլ շահին Պարսից»:

–––Թիֆլիսում տեղական բարբառով հրատարակվում է Միքայել Տեր-Գրիգորյանցի «Էս էլ քի մոցիքըլութիւն, կամ զակուսկա, ճաշ, իրիգնահաց» ֆարս-վոդևիլը: 31 էջ: Առաջին անգամ բեմադրվել է Թիֆլիսի հայկական թատրոնում 1866 թ. ապրիլի 7-ին:

–––Թիֆլիսում տեղական բարբառով հրատարակվում է Գաբրիել Սունդուկյանի «Գիշերվան սաբրը խեր է» կատակը: 26 էջ:

Նույնը անփոփոխ՝ 1901 և 1909 թթ.:

Առաջին անգամ բեմադրվել է Թիֆլիսի հայկական թատրոնում 1863 թ. հոկտեմբերի 23-ին:

–––Փարիզում գրաբար հրատարակվում է Սարգիս Թեոդորյանի «Պատմութիւն Մուրատեան և Հայկազեան վարժարանաց և Մխիթարեան աբբայից» աշխատության Ա հատորը: 681 էջ:

Հատոր Բ (628 էջ), Գ (652 էջ) և Դ (640 էջ)՝ նույն թվականին:

–––Թեոդոսիայում, Գաբրիել Այվազյանի (ի՛մա. Այվազովսկու) ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Իվան Կռիլովի առակների ժողովածուն «Հատընտիր առակք Կռիլովի» խորագրով (զետեղված են 91 թարգմանածո առակներ): 160 էջ:

1867

Հունվար. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Աթազինեա Ղափթանյանի «Մեր ներկայն» գրական-հրապարակախոսական հոդվածը: Սկսում է հրատարակվել Հարություն Թերզոնցի (ի՛մա. Նորայր Բուզանդացի) «Բուսյուե և իր վեց դամբանական ճառերը, թարգմանյալ ի հ[այր] Արսեն Կոմիտաս Բագրատունվո» գրախոսականը, որն ավարտվում է նույն ամսագրի № 8-ում (օգոստոս):

Հունվար. «Հայկական աշխարհը» (№1) արևելահայերեն հրատարակում է Վասիլ Եղիազարյանի «Նամակ դեպի խմբագրող Մոսկվայից» հոդվածը: «Իշխան Բագրատունու» (ի՛մա. Խորեն Սեփանե)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, տպագրված է Անրի Մյուրժերի «Հուսահատի երգ» բանաստեղծությունը:

Հունվար. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 1) արևելահայերեն սկսում է հրատարակել Մարկոս Աղաբեկյանի «Գարեգին Սրվանձտյանց» ազգային ողբերգությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 4-ում (ապրիլ) (տե՛ս ներկա հատորը, 1867 թ.): Նախորդ երկու առաջաբաններում բարձրացված են թատրոնի և գեղարվեստական գրականության փոխհարաբերության մի քանի հարցեր:

Հունվարի 12. Կեսարիայում (Կենտրոնական Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, արևելագետ, լրագրող Տիգրան-Խան Կարապետի Քելեկյանը: Վախճ. 1951 թ. հունվարի 30-ին, Նյու Յորքում:

«Բազմավեպ», 1917, № 8 («Կենսագրական»): **«Հայաստանի կոչնակ»,** 1951, № 6 («Տիգրան Խան Քելեկյանի մահը»), № 15 («Տիգրան Խան Քելեկյան»),№ 21 («Հիշողություններ…»): **«Միոն»,** 1951, № 1-2 («Տիգրան Խան Քելեկյան»):

Հունվարի 14. «Մասիսը» (№ 779) արևմտահայերեն սկսում է հրատարակել Կարապետ Ութուջյանի «Վստահություն և փրկություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 782-ում (փետրվարի 4):

Հունվարի 14. Նոր Բայազետում (այժմ՝ Կամո) ծնվեց պատմաբան, բանասեր (Խորհրդային իշխանության տարիներին՝ տնտեսագետ-վիճակագիր) Ա-Դոն (Հովհաննես Գրիգորի Տեր-Մարտիրոսյան): Վախճ. 1954 թ. փետրվարի 7-ին Երևանում:

«Գրական թերթ», 1967, հուլիսի 21 («Անխոնջ հետազոտողը»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 31:

Հունվարի 21. «Մեղու Հայաստանին» (№ 2), «Հարություն Ռստանիկի» (ի՛մա. Հովհաննես Քուչուբեկյան)՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հայնրիխ Հայնեի «Երազ» բանաստեղծությունը: Առաջաբանում թարգմանիչը տալիս է այդ բանաստեղծության հայերեն թարգմանությունների բանասիրական պատմությունը, հատկապես վերլուծության նյութ դարձնելով Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլի» 1958 թ. № 11-ում լույս տեսած «հայեցումը» (տե՛ս մեր «Ժամանակագրության» նախորդ գիրքը, էջ 225):

Հունվարի 21. «Արշալույս արարատյանը» (№ 797) արևմտահայերեն հրատարակում է «Պաշտոնական այցելություն մի» հաղորդումը (դրվատված է Ստ. Ոսկանյանի մշակութային գործունեությունը) և «Հանգուցյալ Նալբանդյանի վրա երկու խոսք» կենսագրականը:

Հունվարի 27. Վենետիկում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ Անանիա Ճելալյանը: Ծնվ. 1790 թ. հոկտեմբերի 13-ին Պոլսում: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր դարձել 1814 թ. կեսերից:

«Բազմավեպ», 1867, № 1 («Հանգիստ Հ. Անանիա Ճելալյան»): **«Մխիթարյան հոբելյան»,** Վենետիկ, 1901, էջ 221:

Հունվարի 28. «Մեղու Հայաստանին» (№ 3), ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ուսումնարան» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Այն հանդիսանում է Էդուարդ-Ռընե Լաբուլյեի «Փարիզն Ամերիկայում» գրքի մի գլուխը: Հրատարակված է «Աստղեր (Նվեր Միքայել Նալբանդյանցի հիշատակին)» արևելահայերեն բանաստեղծությունը (հեղինակ՝ «Գ.Թ.»):

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) գրաբար հրատարակում է Ալեքսան Սրապյանի «Ի սգալի մահ վսեմաշուք Կարապետ Ամիրայի Պալեան» եղերգությունը, «Ողբազանձ իշխանացն հայոց» ժողովրդական բանաստեղծությունը (նախորդում է բանա-

սիրական պատմությունն ու գրականագիտական վերլուծությունը), և արևելահայերեն «Ներսես Շնորհալի» հոդվածը, որի վերջում զետեղված է նրա «Տաղ ութերորդ աւուր ծննդեան տեառն» գրաբար բանաստեղծությունը: Վերջում, «Թե որ քեզ ալ հարցնեն, դու ալ ըսե, թե բոլորն ալ կոտրած է» խորագրով հրատարակված է արևմտահայերեն մեկ առակ:

Փետրվար. Հալեպում (Սիրիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, Սարգիս Գոչունյանը: Վախճ. 1926 թ. Պոլսում:

Եղբոր՝ Միսաք Գոչունյանի մահվանից հետո (1913 թ. տե՛ս մեր «Ժամանակագրության» նախորդ հատորը, էջ 414) մինչև իր մահը եղել է «Ժամանակ» օրաթերթի (Պոլիս) արտոնատեր-հրատարակիչը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 573: **Ստեփանյան Գ.**,Կենսագրական բառարան, հատ., Ա., էջ 251:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, հրատարակում է Վալտեր Սկոտի «Առ պ[արոն] Ալեքսանդր» բանաստեղծությունը և իտալերենից կատարված գրաբար փոխադրությամբ՝ Փեդրոսի «Արեգակըն խօսնայր և գորտք» առակը: Իտալերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ սկսում է հրատարակվել «Ժամբորդություն ի Նեապոլ. ավազակաց պատմություն մը» պատմվածքը, որն ավարտվում է նույն ամսագրի № 4-ում (ապրիլ):

Փետրվար. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 2) արևելահայերեն հրատարակում է «Ազգային թղթագրություն» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղ. «Հ.Հ.»):

Փետրվարի 11. «Մեղու Հայաստանին» (№ 5), Երվանդ Տեր-Դավթյանց Օձնեցու՝ ռուսերենից (?) կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է դանիացի բանաստեղծ Նիկոլայ Ռոբերտի «Բոլորս էլ եղբայր ենք» բանաստեղծությունը:

Փետրվարի 17. Պրուսայում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց բանասեր, արձակագիր, բառարանագիր Կարապետ Աքըրյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1888 թ. մայիսի 20-ից, վախճ. 1900 թ. ապրիլին իր ծննդավայրում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 226:

Փետրվարի 18. «Ծաղիկը» (№ 132) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Պերճի» (ի՛մա. Գրիգոր Չիլինկիրյան) «Ազգային թշվառություն և փրկություն» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Փետրվարի 18. «Արշալույս արարատյանը» (№ 799) գրաբար հրատարակում է Հակոբ Չիվիճյանի «Նահատակութիւն Վահանա Գողթնացւոյն» պոեմը:

Փետրվարի 23. Այնթափում (Հարավային Թուրքիա) Կարապետ Նազարյանի, Գևորգ Սյուլահյանի, Խաչատուր Պողարյանի և այլոց ջանքերով հիմնվում է կրթա-մշակութային «Վարդանանց ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր. «1. Շաբաթը 3 օր գիշերային դպրոց պահել: 2. Պայման է՝ հայերեն խոսիլ: 3. Սեփական դպրոց մը բանալ նաև մանչերու համար, որք ու աղքատ տղաքը ձրիորեն կարդացնելու համար»: Ընկերությունը նույն թվականին բանում է գիշերային վարժարանը», 1874 թ.՝ «Մեսրոպյան սանուց վարժարանը», երեսուն աշակերտով, ինչպես նաև «Կիրակնօրյա լսարանը» այլևայլ ընթերցանությունների համար: «Վարդանանց ընկերությունը» գոյատևել է մինչև 1915 թ.:

Պողոսյան Ե.,Պատմություն հայ մշակութային ընկերություններու, Վիեննա, 1963, էջ 419-423:

Փետրվարի 25. «Մեղու Հայաստանին» (№ 7), Հ. Ղուկասյանցի՝ գերմաներեն (?) բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Մարիամ Թերեզայի վառարան լուցանողը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 14-ում (ապրիլի 15):

Փետրվարի 28. Մեզիրե քաղաքում (Խարբերդի շրջան, Հյուսիսային Թուրքիա) ծնվեց բառարանագիր (ֆրանսերեն-թուրքերեն և թուրքերեն-ֆրանսերեն), արձակագիր (հայերեն) Գարեգին Գասպարի Տնեճյանը:

«Հայաստանի կոչնակ», 1930, № 38 («Մութը մնացած դեմք մը»):

Փետրվար-մարտ. «Հայկական աշխարհը» (№ 2-3), «Իշխան Բագրատունու» ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Թշվառների» առաջին հատորի առաջին գլուխը «Միրիել եպիսկոպոսը» խորագրով (ավարտ՝ նույն պարբերականի հաջորդ համարում) և ռուսերենից՝ Պյոտր Վեյնբերգի «Ճշմարտություն և կովեր» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Ստ. Նազարյանցի «Իմ ազնիվ եղբայրներ, իմ նազելի

քույրեր» արևելահայերեն մահախոսականը, որը նա կարդացել էր ուսանող Հարություն Մուլթանյանի մահվան ժամանակ:

Մարտ. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 3), արևելահայերեն հրատարակում է [Մարկոս Աղաբեկյանի] «Խոսք պապական հայոց ազգային և բարոյական լուսավորության վրա» հրապարակախոսական հոդվածը:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3) Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակում է Հուգոն Փոսկոլոյի «Տաղ ի գերեզմանս. առ Հիպպոլիտոս Պինդեմոնտ» բանաստեղծությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ սկսում է հրատարակել «Ստեփան Մուրիլիո» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 11-ում (նոյեմբեր): Այստեղ վիպական ձևով տրված է Միգել դե Սերվանտեսի կենսագրությունը:

Մարտի 1. Թիֆլիսում ծնվեց արձակագիր Նար–Դոսը (Միքայել Զաքարի Տեր-Հովհաննիսյան): Վախճ. 1933 թ. հուլիսի 13-ին իր ծննդավայրում:

Գեղարվեստական անդրանիկ գործը ստորագրել է «Միխո-Օհան» կեղծանունով:

Տերտերյան Ա., Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 608-679: **Հովհաննիսյան Գ.**, Նար–Դոս, Երևան, 1959, 202 էջ: **Հովսեփյան Գ.**, Նար-Դոս, Երևան, 1961, 481 էջ: **Նար-Դոս**, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1971, էջ 273-284 («Իմ կենսագրությունը»):

Մարտի 4. «Մասիսը» (№ 786) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսությունք» հոդվածը:

Ունի նաև հետևյալ ենթավերնագիրը. «Մեղադրանք և գանգատներ: Երիտասարդի մը պատմության և թատրոնի ու ուրիշ նյութերու վրա չխոսելու հանդիմանություններ: Պատասխան: Թատրոն. «Առանձար Ամատունի», «Վասակ մատնիչ հայրենյաց», «Վարդան փրկիչ հայրենյաց»: Պարահանդեսներ: Ոտանավոր մը: Վերջաբան»:

Մարտի 4. «Արշալույս արարատյանը» (№ 800) գրաբար հրատարակում է «Նկարագրութիւն աղետալի արկածից, պատահելոց ի Գանգես գետ Կալկաթայ» ակնարկը (ունի «Թ.տեր, Ս.ոմն ի նաւորդաց «Կալկաթա» շոգենաւու» ստորագրությունը):

Մարտի 18. «Մասիսը» (№ 788) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Վարդան Մամիկոնյան, ողբերգություն պ[արոն] Ռոմանոս Սետեֆճյանի» թատերախոսականը: Որպես բնաբան բերված է ֆրանսիական «Կուրեր դը Օրիենտ» թերթի կարծիքը հայ ժողովրդի և նրա գրականության մասին:

Մարտի 25. «Մասիսը» (№ 789) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Ութուջյանի «Քանի մը պարզ դիտողություններ հայ լրագրաց ներքին վեճերուն վրա» հոդվածը: Վերլուծված են այդ վեճերը ծնող գրական-հասարակական շարժառիթները, քննադատված են «Մեճմուայը հավատիս», «Փունջ» և «Ժամանակ» պարբերականները:

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) գրաբար հրատարակում է Ալեքսան Սրապյանի (Կեյվեցի) «Ի գահակալութիւն Տ.Տ. Գէորգայ նորընտիր Վեհափառ Կաթողիկոսի ամենայն հայոց» ներբողը: Հրատարակված է «Գովէստ յամենասուրբ կոյսն Աստուածածին» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ և ծանոթագրություններով հրատարակում է Հիպոլիտ Պինդեմոնտիի «Տաղ ի գերեզմանս առ Հուգոն Փոսկոլոյ» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 4), հավելվածում, հրատարակում է «Թուղթ Ռուսիայեն Գալֆայան Խորեն եպիսկոպոսի մասին» արևելահայերեն հոդվածը (ունի «Անձնվեր բարեկամդ» ստորագրությունը): Հանգամանորեն քննված է Գալֆայանի մանկավարժական, գրական-մատենագիտական թարգմանական, հրապարակախոսական գործունեությունը և այդ բոլորը բացասաբար է գնահատված:

Ապրիլի 7. Կոպենհագենում (Դանիա) ծնվեց դանիացի հայագետ, լեզվաբան-բանասեր Հոլգեր Պետերսոնը (Holger Pedersen): Վախճ. 1953 թ.:

«Հանդես ամսօրյա», 1904, № 5 («Հայերենագետ…. Հոլգեր Պետերոսոն»): **Աղայան Էդ.**, Հայ լեզվաբանության պատմություն, հ. 1, Երևան, 1958, էջ 350-368:

Ապրիլի 15. «Մեղու Հայաստանին» (№ 14), արտատպելով «Հայկական աշխարհից» (տե՛ս ներկա հատորը 1867 թ. փետրվար-մարտ), հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Իմ ազնիվ եղբայրներ, իմ նազելի քույրեր, ի քրիստոս» արևելա-

հայերեն դամբանականը: Հրատարակված է Հովհաննես Քուչուբեկյանի «Բարեգործություն» արևելահայերեն բանաստեղծությունը:

Ապրիլի 21. Բռնակոթ գյուղում (Սիսիանի շրջ.) ծնվեց բանասեր, պատմաբան, ձեռագրագետ, թարգմանիչ (ֆրանսերենից, անգլերենից, ռուսերենից՝ հայերեն) Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը (աշխարհական անունը՝ Տիգրան Մելիք-Մուշկամբարյան): Էջմիածնի միաբանության անդամ էր 1890-ից, վախճ.1956 թ. մարտի 29-ին Նյու Յորքում:

Իր հոդվածներն ու թարգմանությունները ստորագրում էր «Տ. Վ», «Տիրայր վարդապետ», «Տիրայր արքեպիսկոպոս» ձևերով:

«Սիոն», 1956, № 5-6 («Հանգիստ Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի»): **«Արարատ»,** 1956, № 6 («Հանգիստ Տիրայր արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի»):

Ապրիլի 29. Մասիսը» (№ 794) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունը»: Ի թիվս ազգային-հասարակական բնույթի այլևայլ հարցերի, քննադատված է «դյուրագրգիռ Գրամատիկոսը», որն իր հիվանդ ուղեղի արդյունք» հանդիսացող հոդվածներով քննադատում է ժամանակի գրական արտադրանքը:

Ապրիլ-մայիս. «Հայկական աշխարհը» (№ 4-5), Փիլիպոս Վարդանյանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Նիկոլայ Դոբրոլյուբովի «Հայր Ալեքսանդր Գավացցին և նորա քարոզները» հրապարակախոսական հոդվածը (ավարտ՝ հաջորդ համարում), «Իշխան Բագրատունու» ռուսերենից կատարված թարգմանությամբ՝ «Խորհուրդ» բանաստեղծությունը և Գրիգոր Արծրունու՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, մի հատված Էդմոն Աբուի «Առաջադիմություն» գրքից «Աշխատենք» խորագրով: Հրատարակված է Հարություն Ոստանիկի (ի՛մա. Հովհաննես Քուչուբեկյան) «Կեցցե՛ հայություն» բանաստեղծությունը և գրաբար՝ Գաբրիել Այվազովսկու «Հրաւէր են ձեզ» չափածո ուղերձը՝ նվիրված Գեորգ կաթողիկոսին:

Մայիս. Կոթի գյուղում (այժմ՝ Շավարշավան, Նոյեմբերյանի շրջան) ծնվեց արձակագիր, մանկագիր, Վրացական ԽՍՀ աշխատանքի հերոս (1928 թ.), ԽՍՀՄ գրողնե-

րի միության անդամ (1934 թ.), ԽՄԿԿ անդամ (1918 թ.) Մաղաթ Հովհաննեսի Պետրոսյանը: Վախճ. 1944 թ. Թբիլիսիում:

«Գրական թերթ», 1937, № 7 (Մաղաթ Պետրոսյան): **«Տեղեկագիր»**, 1950, № 1-2 (Մաղաթ Պետրոսյան): **Խաչատրյան Հ.**,Գրական տեղեկատու, էջ 453-454:

Մայիս . «Ծիլն Ավարայրի» հանդեսը (№ 5), Մարկոս Աղաբեկյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով, սկսում է հրատարկել Հենրի-Թոմաս Բոկլի «Պատմություն լուսավորության Անգլիայում» աշխատությունը, որը շարունակվում է հանդեսի հաջորդ համարում և մնում է անավարտ: Հրատարակված է նույնի «Սարգիս Թեոդորյան և իր պատմությունը Մուրադյան, Հայկազյան վարժարանաց և Մխիթարյան աբբայից» գրախոսականը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) ռամկախառն արևմտահայերենով, համապատասխան ծանոթագրություններով, սկսում է հրատարակել «Ճանապարհագրություն Ջուար Ճիյերճի օղլու քահանայի և ուխտ Երուսաղեմ, յամի տեառն 1711-1712» ուղեգրական աշխատությունը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1869 թ. հունիսը (№ 6) և մնում անավարտ:

Մայիսի 3. Մոսկվայում ծնվեց բարբառագետ, բանասեր, գրականագետ, լրագրող (հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով), բանասիրական գիտությունների դոկտոր (1901թ.), պրոֆեսոր (1905թ.) Լևոն Զարմայրի Մսերյանը: Վախճ. 1933 թ. հունվարի 3-ին, իր ծննդավայրում:

«Սովետական գրականություն», 1907, № 4 («Լևոն Մսերյանց»):

Մայիսի 6. Մասիսը» (№ 795) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հայ կղերին վիճակին վրա կղերականի մը դատաստանը» հրապարակախոսական հոդվածը (հեղ. «Ս.Վ.Ց.Փ.»), որն ավարտում է նույն պարբերականի № 798-ում (մայիսի 27) (քննադատված է հայ կղերականության կատարած բացասական դերը հայ մշակույթի բնագավառում): Տպագրված է Սարգիս-Վահան Տողրամաճյանի «Սիպիլ կամ հատընտիր ծաղկաքաղ երեքլեզվյան առածոց…» հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնելով այդ խորագիրը կրող իր աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1867 թ.), ծանրանում է առակի ժանրի և նրա խնդիրների վրա:

Մայիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 16), Միսաք Արամյանցի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն ազատ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Կարլ Ֆոխ-

տի «Նախնական մարդը» սոցիոլոգիական-գրական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 20-ում (հունիսի 3):

Մայիսի 13. «Մասիսը» (№ 796) արևմտահայերեն հրատարակում է «Ցոլակի» հերթական «Տրամախոսությունը»: Տրված է ժամանակի գրական-հասարակական-քաղաքական կյանքի բնութագիրը:

Մայիսի 20. «Մեղու Հայաստանին» (№ 18), Երվանդ Տեր-Դավթյանց Օձնեցու՝ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Բանաստեղծին» բանաստեղծությունը:

Մայիսի 27. «Արշալույս արարատյանը» (№ 806, հավելված) արևմտահայերեն հրատարակում է «Առաջին, բայց ոչ վերջին պատասխան» հրապարակախոսական հոդվածը: Չնայած այն ունի «Ուսումնասեր ընկերություն» ստորագրությունը, սակայն հայտնի է, որ հեղինակը Ստեփան Ոսկանյանն է:

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5, հավելված), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Վան Դաելի անուրջքը» նովելը և «Հայրական կտակ մի է, որ կկատարեմ» առակը: «Բարոյական առածք» ընդհանուր խորագրի ներքո հրատարակված է տասնչորս գրաբար ասացվածքներ:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Թշվառություն և աղքատություն» ֆլամանդական զրույցը: Հրատարակված է «Վիկտոր Կուզեն» տեսական-քննադատական հոդվածը:

Հունիսի 3. «Մեղու Հայաստանին» (№ 20) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Տեր-Սարգսյանցի «Գայլն և գառ» առակը:

Հունիսի 3. «Մասիսը» (№ 799) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունը»: Ի թիվս այլ հարցերի, վերլուծված է հայկական պարբերականների ու հրատարակությունների կարևոր դերը ազգային թերությունները բացահայտելու գործում:

Հունիսի 10. «Մասիսը» (№ 800) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Պարույրի» հերթական «Տրամախոսությունքը», որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 17. «Մասիսը» (№ 801) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Նոր քերականություն գաղղիերեն լեզվի, Օլլենդորֆի ոճով» հոդվածը: Ներկայացնելով այդ խորագիրը կրող իր աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1868 թ.), Թերզյանը քննարկում է Հայաստանում օտար լեզվի ուսուցման և այն ավելի արդյունավետ դարձնելու համար՝ թարգմանական գրականությանը զարկ տալու խնդիրը:

Հունիսի 17. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևելահայերեն սկսում է հրատարակել Գրիգոր Եվանգուլյանցի «Մեր հայերի ուսում առնելը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 24-ում (հուլիսի 1):

Հունիսի 25. «Մեղու Հայաստանին» (№ 23) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Ազգային կրթություն. թարգմանություն Մ. Տեր-Գրիգորյանցի, տպագրություն Մ. Միանսարյանցի» գրախոսականը: Գրախոսված է Էդուարդ Լաբուլեի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1867 թ.) և դրական է գնահատված:

Հունիսի 26. Գրեֆելդում (Հս. Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն) Ֆրանց Նիկողայոսի Ֆինկը (Franz Nikolaus Finck): Վախճ. 1910 թ. մայիսի 4-ին, Բեռլինում:

«Հանդես ամսօրյա», 1910, № 9 («Հայերենագետ Ֆրանց Նիկոլաուս Ֆինկ»): **«Բազմավեպ»**, 1910, № 8 («Ուսուցչապետ Ֆրանց Նիկողայոս Ֆինկ»):

Հունիսի 29. «Մասիսը» (№ 803) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» հերթական «Տրամախոսությունը»: Քննության է առնված ժամանակի եվրոպական և հայկական գրական-մշակութային կյանքը:

Հունիսի 31. «Սիոնը» (№ 6) գրաբար հրատարակում է Կարապետ Ցազըճյանի «Մաղթանք» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել Եղիա Տնտեսյանի «Ազգային երաժշտություն» արևմտահայերեն ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն ամսագրի № 9–ում (սեպտեմբեր): «Բարոյական առածք» ընդհանուր խորագրի ներքո տպագրված են ժողովրդական հինգ առած-ասացվածքներ:

Հունիս-օգոստոս. «Հայկական աշխարհը» (№ 6-8), «Իշխան Բագրատունու»՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Վիկտոր Հյուգոյի «Վիլյամ Շեքսպիր» մենագրությունից, «Մահից հետո» վերնագրով (թարգմանիչը տվել է նաև Շեքսպիրի համառոտ կենսագրու-

թյունը) և ռուսերենից՝ Ջակոմո Լեոպարդիի «Հունգարական երգ» բանաստեղծությունը: Հովհաննես Քուչուբեկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Ճշմարտություն» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Սեյադի (ի՛մա. Հովհաննես Սայաթնյանց) «Նկարագրություն» չափածո ստեղծագործությունը:

Հուլիսի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 1) արևելահայերեն սկսում է հրատարակել [Սամվել-Բարունակ Ութուջյանի] «Սկզբունք, վարմունք և հաստատամտություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի հաջորդ համարում:

Հուլիսի 8. «Մեղու Հայաստանին» (№ 25), Սմբատ Կարենյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Հայեր» ազգագրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հուլիսի 15. «Ծաղիկը» (№ 139) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Մսերյանի «Լորդ Բայրոն» ուսումնասիրությունը, որն ավարտվում նույն պարբերականի №146-ում (նոյեմբերի 1):

Հուլիսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 26) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանի «Թիֆլիսի թատրոն և նրա երգիծաբան, հոբնաղ (իմա՝. վայրիվերո- Ս. Շ.) «Հայկական աշխարհը» գրախոսականը: Դրվատելով, վերլուծելով Գևորգ Չմշկյանի, Պայծառ և Թովմաս Ֆասուլաճյանների և մյուսների խաղը, գրախոսը քննադատում է Խորեն Ստեփանեի և նրա պարբերականի անգիտակությունը թատերական դրամատուրգիայի հարցերում:

Հուլիսի 22. «Արշալույս արարատյանը» (№ 810), արևելահայերեն համապատասխան դրվատական նախաբանով, հրատարակում է հատվածներ Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» պոեմից: Ծաղկաքաղը կատարված է 2-րդ և 4-րդ գլուխներից:

Հուլիսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի?] «Արություն և Մանվել, ազգային վեպ, հատոր առաջին, աշխատասիրություն Ղազարոս Աղայանց» գրախոսականը:

Հուլիսի 29. «Մեղու Հայաստանին» (№ 28), ռուսերենից կատարված արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակում է մի հատված Ֆրանսուա Բոնսարի «Գալիլեյ» դրամայից:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), ֆրանսերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, խմբագրության՝ առակի ժանրի վերաբերյալ վերլուծությունից հետո, հրատարակում է արաբ առակագիր Աբդուլ Կադրի առակները՝ «Աբդուլ Կադրի բարոյականը» խորագրի ներքո:

Օգոստոսի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 2) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Արվեստից հիմնադիրները» գրական-հրապարակախոսական հոդվածը: Շարունակում է մինչև նույն հանդեսի № 4-ը (հոկտեմբեր) մնում անավարտ:

Օգոստոսի 5. «Արշալույս արարատյանը» (№ 811), թարգմանելով ֆրանսիական «Կուրիեր դ՛ Օրիան» լրագրից, հրատարակում է ֆրանիացի ակադեմիկոս Դեքստիի գրախոսականը Մկրտիչ Տիգրանյանի «Ժամանակակակից հայոց ժողովուրդը» աշխատության մասին: Մեկ-երկու դիտողություններով հանդերձ, գրախոսը աշխատությունը բարձր է գնահատել:

Օգոստոսի 5. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Պատասխանիք «Հայկական աշխարհի» խմբագիր պ[արոն] Ստեփանեին…» բանավիճային հոդվածը (բացասաբար է գնահատված Ստեփանեի գրական-խմբագրական գործունեությունը), Վաղարշակ Դիմաքսյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ Հայնրիխ Հայնեի «Դաշտ թշվառության» բանաստեղծությունը: Հրատարակված է Սերովբե Ռեստենի (ի՛մա.՝ Պատկանյան) «Ընչի՞ց է» չափածո ստեղծագործությունը:

Օգոստոսի 19. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է Միքայել Տեր-Գրիգորյանի «Թե ով է Ստեփանեն, խմբագիրը «Հայկական աշխարհ» օրագրի» բանավիճային հոդվածը:

Օգոստոսի 19. Փարիզում վախճանվեց դրամատուրգ, թատերական արվեստի տեսաբան, թարգմանիչ (լատիներենից՝ հայերեն) Պետրոս Մինասյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1823 թ. նոյեմբերի 9-ից: Ծնվ. 1799 թ. հոկտեմբերի 9-ին Պոլսում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 222, **Թերզիբաշյան Վ.,** Հայ դրամատուրգիայի պատմություն (1668-1868), Երևան, 1959, էջ 155-189:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) գրաբար հրատարակում է Սողոմոն իմաստունի շարքից վերցված մի «Առակ» («Իմաստուննն Սողոմոն, զոր զամեն աշխարհս հնազանդեցոյց):

Սեպտեմբեր. Թիֆլիսում (Վանքի թաղ), Հարություն Մարկոսյանցի սատարմամբ, Սարգիս և Դշխուհի Աղաջանյանների տեսչությամբ, իր գոյությունն է սկսում «Սուրբ Աստվածածին» օրիորդաց ուսումնարանը: Ավանդվում էր հայոց լեզու, թվաբանություն, կրոն, ազգային պատմություն և ասեղնագործություն, սովորողների թիվը հասնում էր 40-ի: Ուսումնարանը գոյություն ունեցավ մինչև 1890-ական թվականները:

«Մեղու Հայաստանի», 1868, № 29 («Ազգային»): «Բյուզանդիոն», 1902, № 1657 («Տիղիսեն կգրեն»)

Սեպտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Գերդաստանի ազդեցություն և համալսարան» հոդվածը, «Հարություն Ոստանիկի» ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Իռլանդական երգ» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 33), Զարդեղյանի արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ունդինա» վեպը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Սեպտեմբերի 9. «Մեղու Հայաստանին» (№ 34), արևելահայերեն հրատարակում է Պետրոս Սիմոնյանցի «Նկատողություններ «Հայկական աշխարհի» 6, 7 և 8 համարների բովանդակության վրա» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 16. «Մեղու Հայաստանին» (№ 35), ռուսերենից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Պետրոս Սիմոնյանց?), հրատարակում է մի հատված Հիպոլիտ Տենի «Նկատողություններ Փարիզի մասին» աշխատությունից: Նախորդող՝ «Բանասիրական» խորագիրը կրող ներածականում վերլուծված է Հ. Տենի գրական-քննադատական գործունեությունը:

Սեպտեմբերի 23. «Մասիսը» (№ 815) արևմտահայերեն հրատարակում է «Վ[ադար2]»-ի «Տրամախոսությունք» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 23. «Մեղու Հայաստանին» (№ 36), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն ազատ թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Մ.»), հրատարակում է Իվան Կռիլովի «Քառաձայն դաշնակություն» առակը:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10), Արսեն Բագրատունու՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վոլտերի «Լուսինեան աղաչէ զդուստրն դառնալ ի հաւատս քրիստոնէության» բանաստեղծությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է մի հատված Վիկտոր Կուզենի «Հաղագս ճշմարտին, գեղեցկին և բարույն» ուսումնասիրությունից, որտեղ նա վերլուծել է 19-րդ դարի ֆրանսիական գրականությունն ու արվեստը: Ավարտ՝ նույն պարբերականի №11-ում (նոյեմբեր):

Հոկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 10), Հ. Միրիմանյանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիսարիոն Բելինսկու «Մանուկների կրթության և ծնողական սերի վրա առհասարակ» հոդվածը (ավարտը հաջորդ համարում) և «Իշխան Բագրատունու» թարգմանած «Աղքատ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 1. Շապին-Գարահիսարում (Հս.-արևելյան Թուրքիա) Ավետիս Սահակյանի, Թադևոս Սերջանյանի, Գրիգոր Մարկոսյանի, Առաքել Ալթունյանի ջանքերով հիմնվում է կրթական-լուսավորչական «Ընթերցասիրական ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «Կիրակի օրյա հասարակաց դասատվություն ընել», «Սուրբ գիրք, ազգային պատմություն և մանավանդ ազգային օրագիրներ և հանդեսներ կարդալ»: «Ընթերցասիրական ընկերությունը» 1880-ականներին դադարում է գոյություն ունենալ:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ., Վիեննա, 1963, էջ 233-236:

Հոկտեմբերի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 4) գրաբար հրատարակում է Ներսես Մեզպուրյանի «Առ բաղդն» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել Մանվել Ութուջյանի «Գիտության և գրականության հետևողաց օրինակներ» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 6-ում (դեկտեմբեր):

Հոկտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 38), արևելահայերեն թարգմանությամբ սկսում է հրատարակել «Փոթորիկ» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հոկտեմբերի 15. «Ծաղիկը» (№ 145) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Միքայել Ն. Նալբանդյանց, իր կենաց վերջին պարագաները» հոդվածը:

Հոկտեմբերի 21. «Մասիսը» (№ 819) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» «Տրամախոսությունք. սուրհանդակ Վոսփորի» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Վերլուծված է ժամանակի հայկական գրական-հասարակական և ազգային-քաղաքական կյանքը:

Հոկտեմբերի 21. «Մեղու Հայաստանին» (№ 38), արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «տ. Փ.), սկսում է հրատարակել «Անկենդան ձեռք» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հոկտեմբերի 21. Վերին Ագուլիսում (Ս. Քրիստափոր եկեղեցու գավթում) իր գոյությունն է սկսում «Հոգևոր օրիորդաց ուսումնարանը»: Ավանդվում էր կրոն, հայերեն և ռուսերեն լեզուներ, աշխարհագրություն, նկարչություն, երգեցողություն և ձեռագործ: Դարավերջին դպրոցը դարձավ երկսեռ, ստացավ նոր՝ «Վերին Ագուլիսի ուսումնարան» անվանումը, ունեցավ մինչև 200 աշակերտ(ուհի) և գոյատևեց մինչև 1920-ականները:

«Մեղու Հայաստանի», 1872, № 21, («Ազգային»), № 50 («Մեծահարգի խմբագիր»): **«Մշակ»**, 1908, № 2 («Կրթական գործը գավառներում»): **«Բազմավեպ»,** 1922, № 7, («Դպրոց»):

Հոկտեմբերի 28. «Մասիսը» (№ 820) գրաբար հրատարակում է Մ. Տամատյանի «Ընդունելութիւն տօնախմբութեան հանդիսի… Անտոնի Պետրոսի Հասունեան, պատրիարքի Կիլիկիո» երգիծական բանաստեղծությունը: Այն պատասխան է «Մեճմուայը հավատիս» լրագրում «Հ.Ա.Պ.Վ.» ստորագրությամբ հրատարակված՝ Անտոն Հասունյանին փառաբանող ներբողականին:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 8) գրաբար հրատարակում է «Տաղ Ներսէսի հայրապետի ի Կոստանդնէ Սսեցւոյ, Սրիկ կոչեցելոյ» և Կարապետ Ցազըճյանի «Պանդուխտ մենաւոր ի գիշեր ամպամած» բանաստեղծությունները:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11), Գրիգորիս Ճելալյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակում է Պրոսպեր Մերիմեի «Մատեո Ֆալկոնե» պատմվածքը:

Նոյեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է «Մեյադի» «Բամբասանք» բանաստեղծությունը և «Իշխան Բագրատունու» թարգմանած՝ «Աշխարհի» չափածո ստեղծագործությունը:

Նոյեմբերի 1. «Ծաղիկը» (№ 146) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Նախիջևանի ազգային երկպառակությունք» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 1. Պոլսում (Գնալը կղզի) իր գոյությունն է սկսում կրթամշակութային «Ներսեսյան ընկերությունը»: Նպատակն էր նպաստել տեղի երկսեռ դպրոցին դասագրքերով, ուսուցիչներով և ուսումնական ձեռնարկներ հրատարակելով: «Ներսեսյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ականները:

«Հանդես ամսօրյա», 1955, № 7-9 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Նոյեմբերի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Աղաբաբյանի (բժիշկ Եվդոկիացի) «Առակ» չափածո ստեղծագործությունը: Սկսում է հրատարակել [Մանվել Բարունակ Ութուջյանի] «Մարդս և մարդուն իմացական, արհեստական և զգացողական կարողությունները» տեսական աշխատությունը, որն ավարտվում է նույն հանդեսի 1868 թ. № 11-12-ում (մայիսհունիս):

Նոյեմբերի 4. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Միրզաբեկյանցի «Չար նախանձը» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 11. «Մեղու Հայաստանին» (№ 43), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն համառոտ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ալ. Պուշկինի «Ժլատ ասպետ» դրաման, որն ավարտվում է նույն պարբերականի № 45-ում (նոյեմբերի 25):

Նոյեմբերի 11. «Արշալույս արարատյանը» (№ 818), Մարիամ Ճերմակյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբձ հրատարակում է «Գոհութիւն աստուծոյ» ակնարկը:

Նոյեմբերի 18. «Մասիսը» (№ 823) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» հերթական «Տրամախոսությունքը»: Հոդվածագիրը բանավիճում է «Վարաժի» (իմա. Գրիգոր Չիլինկիրյան) հետ և առաջ է քաշում գրականության ու արվեստի հետ առնչվող մի քանի անկյունաքարային հարցեր:

Նոյեմբերի 22. Պոլսում ծնվեց հայագետ, բանասեր, թարգմանիչ (գերմաներենից և լեհերենից՝ հայերեն) Բառնաբաս Գրիգորի Պիլեզիկճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1885 թ. հոկտեմբերի 4-ից: Վախճ. 1920 թ. օգոստոսի 8-ին:

«Հանդես ամսօրյա», 1921, № 7-9 («Բառնաբաս Պիլեզիկճյան»), 1963, № 1-3 («Պիլեզիկճյան գերդաստանը»):

Նոյեմբերի 25. «Արշալույս արարատյանը» (№ 819) արևմտահայերեն հրատարակում է «Պատմություն վարուց հանգուցյալ Միքայելի Նալբանդյանց» կենսագրականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Որոշակի միտումնավորությամբ ու անսքող թշնամանքով շարադրված է Միքայել Նալբանդյանի կյանքն ու գրական-հրապարակախոսական գործունեությունը, որի ընթացքում օգտագործված են բազմաթիվ անհարգալից ածականներ:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12), Արսեն Բագրատունու՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Ժան Ռասինի «Միհրդատ» ողբերգությունից: Ունի «Միհրդատ յայտնէ որդւոյն զխորհուրդ իւր արշաւելո ի Հռովմ» խորագիրը և վերցված է հիշյալ ողբերգության 3-րդ հանդեսի 1-ին տեսիլից:

Դեկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Քանի մի մտքեր» հոդվածը, նվիրված երեխաների դաստիարակության հարցերին և Վասիլ Եղիազարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, Ժան-Բատիստ Մոլիերի «Սկապենի խորամանկությունները» կատակերգությունը: Այն ավարտվում է նույն պարբերականի 1868 թ. № 1-ում (հունվար):

Դեկտեմբերի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Նշան Տոսպեցու «Արբեցություն» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել [Մանվել-Բարունակ Ութուջյանի] «Ազգն և ազգայինք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարատվում է նույն հանդեսի 1868 թ. № 11-12-ում (մայիս-հունիս):

Դեկտեմբերի 13. Միջնթաղ գյուղում (Խոտորջրի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց լեզվաբան-բանասեր, բանահավաք Մատթեոս Հաճյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1888 թ., եղեռնամահ՝ 1915թ. Երզնկայի շրջանում:

«Հանդես ամսօրյա», 1919, էջ 107-110 («Մատթեոս Հաճյան»)

Դեկտեմբերի 17. Մարաղա (նաև՝ Մարավուզ) գյուղում (այժմ՝ ԼՂՀՄ, Մարդակերտի շրջան) ծնվեց հոգևորական, մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր, հայագետ, մատենագետ, փիլիսոփայության դոկտոր (1897թ. Լեյպցիգ), Մոսկվայի կայսերական հնագիտական ընկերության իսկական անդամ (1902թ.), Պետերբուրգի կայսերական հնախոսական ընկերության պատվավոր անդամ (1912թ.), Երևանի պետական համալսարանի արվեստի պատմության պրոֆեսոր (1921թ.), Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո (1943-ից օծվել է մինչև 1945 թ.) Գարեգին Կարապետի Հովսեփյանը (Գարեգին Ա. Հովսեփյան): Վախճ. 1952 թ. հունիսի 21-ին Անթիլիասում (Լիբանան):

«Գ.Ս.» (Գարեգին Սարկավագ) ստորագրությամբ հանդես էր գալիս «Արարատում»:

«Էջմիածին», 1952, № 6, 7 (Գարեգին Հովսեփյան): Վազգեն Ա., «Հայրապետ հայոց, Համառոտ տարեգրություն (հեղինակեց Սուրեն Շ. Վանեցի), Էջմիածին, 1986, էջ 248:

Դեկտեմբերի 26. Պիլիճիկում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց հոդվածագիր, (մասնագիտությամբ՝ բժիշկ) Հովսեփ Տեր-Ստեփանյանցը: Վախճ. 1943 թ. կեսերին:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Հովսեփ», «Արմեն Գնունի», «Հայկ Աղոնց» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս 1912, էջ 337: «Հայաստանի կոչնակ», 1928, № 16 («Դոկտոր Հ. Տեր-Ստեփանյանի հոբելյանը»), 1943, N 30 («Հովսեփ Տեր-Ստեփանյան»):

Դեկտեմբերի 30. «Մասիսը» (№ 829) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Թատրոն» թատերախոսականը: Վերլուծված է Ռոմանոս Սետեֆճյանի «Կործանումն Ռուբինյանց թագավորության» ողբերգությունը, բարձր է գնահատված Պետրոս Ադամյանի և տիկին Արուսյակի (ի՝մա. Փափազյան) խաղը:

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է «Բողոք Ֆրկանն կոչեցյալ բանաստեղծի ընդդեմ բաղդին» բանաստեղծությունը (տե՛ս Ֆրիկ, Բանաստեղծություններ, Երևան, 1941, էջ 216-224: Այստեղ ունի «Նորին Ֆրկանն ասացյալ բան պիտանի» վերնագիրը) և Հարություն Կյոմրուկճյանի՝

ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, Ֆելիցիտե Լամընյեի «Մեռյալք» նովելը:

Դեկտեմբերի վերջ. Սեբաստիայում (Արևելյան Թուրքիա) իր գոյությունն է սկսում կրթա-մշակութային «Ընթերցասիրաց ընկերությունը»: Վերջինս հավանաբար գոյություն ունեցավ մինչև 1895 թվականը:

«Հանդես ամսօրյա», 1960, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

––– Պոլսում Թովմա Պեռյանցի, Մովսես Փափազյանի, Ստեփան Փափազյանի, Աբրահամ Ոսկեմատնյանի, Հակոբ Բյուկյուլյանի, Ռուբեն և Խաչիկ Սեֆերյանների սատարմամբ իր գործունեությունն է սկսում գրական-թատերական «Բարեսեր ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դնում «թատերական ներկայացության միջոցով ազգին մեջ հավերժական հիշատակ մը թողել և ազգային վարժարանաց արդյունք մը հանել»: Ընկերությունը դադարեց գոյություն ունենալ 1872 թ.:

«Հանդես ամսօրյա», 1853, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

––– Գանձակում (այժմ՝ Կիրովաբադ, Ադրբեջանական ԽՍՀ) Գրիգոր քահանա Տեր-Կարապետյանի նախաձեռնությամբ հիմնվում է հայկական արական դպրոցը: Դպրոցն ուներ քառասուն աշակերտ, ավանդվում էր հայերեն ընթերցանություն, կրոն, սրբազան պատմություն, հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, երգեցողություն և վայելչագրություն:

«Մեղու Հայաստանի», 1870 թ. № 15 («Հարգո խմբագիր»):

–––Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական) ծնվեց հոդվածագիր, հասարակական կյանքի տեսաբան, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Գարեգին Խաժակը (Գարեգին Չաքալյան): Եղեռնամահ՝ 1915 թ.:

«Պապա Գասպար» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 12-14: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ., Երևան 1981, էջ 12-14:

–––Խույլու գյուղում (Խարբերդի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն, թուրքերեն և հունարեն լեզուներով) Ասատուր Զաքարի Եղոյանը: Վախճ. 1937 թ. նոյեմբերի 16-ին Չիկագոյում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1938, № 37 («Վերապատվելի Ա. Զ. Եղոյան»):

–––Կոփ գյուղում (Մուշի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց բանահավաք, ազգագրագետ, մշակութային գործիչ Սահակ Մովսեսի Մովսիսյանը: Վախճ. 1939 թ. նոյեմբերի 19-ին Լենինականում:

«Բենսե» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Սովետական Հայաստան», 1968, ապրիլի 8 («Բանահավաքը, ազգագրագետը, բանագետը»): **«Երեկոյան Երևան»,** 1968, № 79 («Ականավոր ազգագրագետ-բանահավաքը»):

–––Վանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր Միքայել Նաթանյանը: Վախճ. 1954 թ. հունիսի 8-ին Բեյրութում:

«Հայաստանի կոչնակ», 1954, № 25 («Միքայել Նաթանյանի մահը»): № 33 («…Մ. Նաթանյանի հուղարկավորությունը»): № 40 («Միքայել Նաթանյան»):

–––Պարտիզակում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող («հասարակական, կրթական և գրական նյութերու վրա ուշագրավ հոդվածներ ստորագրած է») Գրիգոր Մխլայանը: Վախճ. 1937 թ. Կահիրեում:

«Սիոն», 1937, № 5 («Գրիգոր Մխլայան»): **«Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի»,** Պոլիս, 1938, էջ 312: **Գևորգյան Կ.,** Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1956, էջ 210-212:

–––Բինկյան գյուղում (Ակնի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, գրականագետ-բանասեր, մատենագիր Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյանը: Սեբաստիայի հոգևոր միաբանության անդամ էր 1900 թ. սեպտեմբերի 10-ից, վախճ. 1951 հունիսի 25-ին Պոլսում:

Ազատյան Թ., Գևորգ արքեպիսկոպոս Արսլանյան (1867-1951), Պոլիս, 1952, էջ 110:

–––Հաճնում (Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ Համբարձում Պոյաճյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.: Ժամանակակիցների շրջանում հայտնի էր «Մուրատ» կեղծանունով:

Թեոդիկ, Հուշարձան 1959 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939 էջ 56-57:

–––Աֆիոն Գարահիսարում (Թուրքիա) ծնվեց լրագրող, ֆելիետոնիստ Լևոն Սեյրանյանը: Վախճ. 1946 թ. հունիսի 16-ին, Սան-Ֆրանցիսկոյում (ԱՄՆ):

«Հաճի Պապա» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1946, № 30 («Տխրունի»):

–––Պոլսում ծնվեց լեզվագետ, բանասեր, լրագրող Թովմաս Աճեմյանը: Վախճ. 1917 թ. սեպտեմբերի 27-ին իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս 1916-20, էջ 110-111: 1921, էջ 323:

–––Աստրախանի «Սուրբ Աստվածամայր» եկեղեցու գավթում Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի ջանքերով և Մկրտում Սերգեյանցի սատարմամբ իր գոյությունն է սկսում չորսդասյա ծխական դպրոցը «Հայկական արական դպրոց» անվանմամբ: Այն ուներ 43 աշակերտ, ավանդվում էր կրոն, հայերեն և ռուսերեն, թվաբանություն, համառոտ և ընդարձակ աշխարհագրություն, հայոց պատմություն և երգեցողություն: 1870 թ. նոյեմբերի 22-ից դպրոցը փոխադրվում է նոր, այդ նպատակի համար կառուցված շենք և գոյատևում է մինչև դարավերջ:

«Մեղու Հայաստանի», 1868 թ. № 50 («Ազգային»): 1870, № 7 («Ազգային»), № 40 («Աստրախանի ծխական դպրոցի հանդեսը»): 1875, № 5 («Մեզ հաղորդում են»): **«Դպրոց»,** 1875 № 3 («Ազգային դպրոցներ Աստրախանում»):

–––Աստրախանում Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանի և Գրիգոր Պոպովյանցի ջանքերով իր գոյությունն է սկսում տեղի «Հայկական օրիորդաց դպրոցը», որն ուներ 75 աշակերտուհի: Ավանդվում էր կրոն, ձեռագործ, երգեցողություն, հայերեն և ռուսերեն, հայոց և ռուսաց ժողովուրդների պատմություն: Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1920-ական թվականները:

«Մեղու Հայաստանի», 1868 թ. № 50 («Ազգային»): 1874, № 17 («Ազգային»), № 40 («Աստրախանից հաղորդում են»): 1875, № 5 («Մեզ հաղորդում են»): **«Մշակ»,** 1911, № 233 («Հարգանք արժանավորին»):

–––Պոլսում (?) ծնվեց թարգմանիչ, հուշագրող (անգլերենից՝ հայերեն) Պետրոս Տոնապետյանը: Վախճ. 1949 թ. հունվարի 7-ին Լոնդոնում:

«Վաղինակ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1949, № 10 («Պետրոս Տոնապետյանի մահվան առիթով»):

–––Կարսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն), բանասեր-պատմաբան Մկրտիչ Ղազարյանը: Վախճ. 1919 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ., էջ 239-240:

–––Պոլսում ծնվեց հոդվածագիր, երգիծաբան, գրող Կարապետ Ամիրայանը: Վախճ. 1927 թ. հունիսի 18-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս 1928, էջ 651: **«Նոր լուր»**, 1927, № 938 («Մահազդ»):

–––Վենետիկում, Աբրահամ Ճարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Նապոլեոն III կայսեր «Պատմութիւն Յուլիոսի Կեսարու» աշխատության Ա հատորը: 421 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Վենետիկում, գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Քրիստափոր Շմիդտի «Ծեր Պյուզմանը» և «Զատկական հավկիթներ» վիպակները («Զբոսարան մանկանց», հ. Զ): 132 էջ: (Տես՝ **Ս. Շտիկյան**, *Հայ նոր գրականության ժամանակագրություն, 1801-1850*, Երևան, 1973, էջ 229-230):

–––Վենետիկում, լատիներեն և գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է «Գործք քահանայապետական գաղտնի խորհրդոյ» աշխատությունը: 49 էջ:

Լրիվ վերնագիրն է. «Գործք քահանայապետական գաղտնի խորհրդոյ յԺԲ աւուր յուլիս ամսեան 1867, յորում ամենասուրբ Տէր մեր Պիոս Քահանայապետ Թ. հաստատեաց զընտրութիւն հայոց պատրիարքի Կիլիկիայ Անտոնի Հասունեան, որ էր առաջիկայ ի պալատան և շնորհեաց նմա զսուրբ Պալիումն»:

–––Վիեննայում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով և ֆրանսերեն-արևմտահայերեն զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Վարդան Ընտկարյանի «Առաջնորդ նամակագրության գաղղիերեն և հայերեն» աշխատությունը: 313 էջ:

Նույնը որոշ փոփոխություններով՝ 1877 թ., 327 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Արսեն Այտընյանի «Քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի» աշխատությունը: 266 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1883 թ., 270 էջ:

–––Վիեննայում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Հրահանգք գործնական գաղղիարեն լեզվի» աշխատությունը:

Նույնը՝ 1871, 1903 թթ.:

–––Պոլսում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանսուա Վոլտերի «Զատիկ կամ նախասահմանություն (պատմություն արևելյան)» վիպակը: 130 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր **«Մասիս»** օրաթերթում, 1854 թ. փետրվարի 4-ից (№ 106) մինչև նույն տարվա սեպտեմբերի 9 (№ 137)-ը:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Սարգիս Ջալալյանի «Նամակ Սարգսի արքեպիսկոպոսի Ջալալեանց, գրեալ առ յարգոյ ազգային ոմն ի Կոստանդնուպոլիս» գրքույկը: 99 էջ:

–––Պոլսում հրատարակվում է Հովսեփ Գաթըրճյանի կազմած հայկական ժողովրդական և ազգային երգերի, բանաստեղծությունների ժողովածուն «Երգարան նոր կամ քնար Հայաստանի» խորագրով, 103 էջ:

Երկրորդ մասը՝ նույն թվականին, 96 էջ:

Նույնը՝ 1874 (երկու մասերը միասին), ուղղումներով ու լրացումներով, 297 էջ:

–––Պոլսում արևելահայերեն հրատարակվում է Մարկոս Աղաբեկյանի «Գարեգին Սրվանձտյանց» ազգային ողբերգությունը: 84 էջ:

Երրորդ հրատարակություն՝ 1911 թ., 106 էջ: Առաջին հրատարակության վերաբերյալ տեղեկություններ գտնել չենք կարողացել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գևորգ Ալիքսանյանի «Հայաստանեայց սուրբ եկեղեցին դավաճանողներուն դեմ երկու խոսք» աշխատությունը: 11 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Աբրահամ Այվազյանի բանաստեղծությունների ժողովածուն «Քնարն յաւերակս հայրենեաց» խորագրով: 79 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հայտարարություն առ համորեն լրություն ազգիս» գրքույկը: 12 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Խաչատուր Կյումուշյանի «Նկարագիր Մեճմուայի և իր հոգվույն» հրապարակախոսական աշխատությունը: 28 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ռափայել Խազանճյանի «Առձեռն վայելչագրություն» ձեռնարկը:

–––Պոլսում, Կարապետ Ութուջյանի ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սյուի «Թափառական հրեա» վիպասանության Ա հատորը: 326 էջ;

Բ (338 էջ) և Գ (345 էջ) հատորներ՝ անդ, նույն թվականին:

Դ (343 էջ), Ե (333 էջ) և Զ (340 էջ) հատորներ՝ անդ, 1868 թ.:

Նույնն անփոփոխ 4 հատորով՝ 1884-1885 թթ.:

–––Պոլսում, Կարապետ Ագճայյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ամիի «Գեղեցկությունը պահելու և ավելցնելու արվեստ» աշխատությունը: 48 էջ:

–––Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ Ս.Ս.Տ.=Սարգիս Տետեյան?) հրատարակվում է Ֆրանսուա Վոլտերի «Ընթացք աշխարհիս. Պապուգին տեսիլքը իրմե գրյալ» պատմվածքը: 32 էջ:

___Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Սարգիս-Վահան Տողրամաճյանի «Միպիլ, կամ հատընտիր ծաղկաքաղ երեքլեզվյան առածոց, գաղղիերեն, հայերեն, տաճկերեն հանդերձ դիցաբանական և պատմական հետաքրքրաշարժ բացատրությամբ» աշխատության Ա հատորը: 160 էջ:

Բ հատորը չի հրատարակվել:

–––Պետերբուրգում գրաբար հրատարակվում է Մխիթար Այրիվանեցու «Պատմութիւն ժամանակագրական» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքներն ու ծանոթագրությունները (ռուսերեն վկայակոչումներով)՝ Քերովբե Պատկանյանի: 84 էջ:

–––Պետերբուրգում, Մ. Տեր-Գրիգորյանցի ֆրանսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Էդուարդ Լաբուլյեի «Ազգային կրթություն» աշխատությունը: 59 էջ:

–––Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Վասն Վարդանայ եւ հայոց պատերազմին» երկասիրությունը: 224 էջ: Վերջում (էջ 211-219) զետեղված է «Բացատրություն պարսկերէն և խրթին բառից ինչ մատենիս» բառարանը:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է Ալֆոնս Լամարթինի «Ռաֆայել, քսանամյա հասակի վեպ մը» վեպը: 248 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Տիլպերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Հենրի Լաքրըտելի «Լեո կամ ափիոն ծխողի մը սերը» վեպը: 143 էջ:

–––Զմյուռնիայում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով հրատարակվում է Արմենակ Կոստանդյանի «Տոմարակալություն գործնական» աշխատությունը: 120 էջ;

Նույնն անփոփոխ՝ 1875 թվականին:

–––Թիֆլիսում բարբառով հրատարակվում է Նիկողայոս Փուղինյանի «Դալալ Ղադո» կատակերգությունը: 38 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ղազարոս Աղայանի «Արություն և Մանվել» ազգային վեպի առաջին հատորը: 235 էջ:

Երկրորդ հատորը՝ նույն թվականին, 76 էջ:

Նույն վեպը վերամշակված 1888 թ. (Ա գիրք, 128 էջ), 1889 թ. (Բ գիրք, 131 էջ):

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Պետրոս Սիմոնյանցի «Դասագիրք ընդհանուր պատմության» աշխատության առաջին հատորը («Հին դարեր»): 192 էջ:

Երկրորդ հատոր («Դասագիրք միջին դարերի պատմության»)՝ անդ, նույն թվականին, 129 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Հակոբ Կարենյանցի «Նկարագիր սուրբ Սարգիս եկեղեցվո հայոց Թիֆլիսու» գրքույկը: 44 էջ:

–––Երուսաղեմում գրաբար առաջաբանով, ծանոթագրություններով և բնագրագիտական աշխատանքներով հրատարակվում է Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու «Պատմութիւնը»: 465 էջ:

–––Երուսաղեմում, Տիգրան Սավալանյանի արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Առաքինության ճամբան կամ մենտոր մանկանց և երիտասարդաց» մանկավարժական աշխատությունը: 363 էջ:

Նույնը՝ 1872 թ. (336 էջ) և 1888 թ. (324 էջ):

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Եղիա Տնտեսյանի «Պատմութիւն սուրբ գրոց հին և նոր կտակարանաց» աշխատությունը: 440 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Խորեն Մխիթարյանի (Վանեցի) «Համառոտ պատմություն Երուսաղեմի և ստորագրություն սրբազան տեղյաց» աշխատությունը: 245 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Ճառք երեք խօսեցեալք յաշակերտաց Ժառանգավորաց վարժարանի ի տօնին Վարդանանց և քերթուածք չորք» ժողովածուն:

–––Երուսաղեմում, Մելքիսեդեկ դպրի (ի՛մա. Մուրադյանց)՝ հին հրեերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սամուել Ռաբբիի «Գործ ոսկեղինիկ Սամուել Ռաբբիի, աշխարհիկ լեզվավ և հրեական կտրուկ ոճով շարադրված» աշխատությունը: 158 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Սիոն» ամսագրում 1867թ. փետրվարից (№ 2) մինչև դեկտեմբեր (№ 12):

–––Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Տեր-Աբրահամյանի «Ժլատ» կատակերգությունը: Առաջին անգամ այն բեմադրվել է 1860 թ. փետրվարի 13-ին Թեոդոսիայի Խալիպյան վարժարանում՝ աշակերտների ուժերով:

–––Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Տեր-Աբրահամյանի «Տեղագրություն Անի քաղաքին հանդերձ տեսարանացույց պատկերոք» գրքույկը: 68 էջ:

Գրքույկն ունի «Երկրորդ տիպ» նշումը: Առաջին հրատարակության վերաբերյալ մանրամասնություններ գտնել չենք կարողացել:

1868

Հունվար. Կեսարիայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ Հովհաննես Գայսերյանը: Վախճ. 1924 թ. նոյեմբերի 9-ին Պոլսում:

Ալպոյաճյան Ա.,Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ., Կահիրե, 1937, էջ 2239-2240:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1), Սամվել Կեսարյանի (ի՛մա. Կայսերյան, հետագայում՝ Գանթարյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Հենրիխ Կալոյի «Ծառ ծննդեան» բանաստեղծությունը, իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ՝ Հովհաննես-Մկրտիչ Գազոնիի «Իմ վանքս. Դրաբյանի մը անտիպ հիշատակագիրք» վեպը (շարունակվում է մինչև «Բազմավեպ», 1869 թ. № 11 (նոյեմբեր) և մնում անավարտ): Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմա-

նությամբ, հրատարակվում է Ժան Լաֆոնտենի «Կաթնավաճառ կինն ու կաթնաման» առակը:

Հունվար. Ախալցխայում (Վրացական ԽՍՀ), Ռափայել Մնացականյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում «Նոր Արշալույս» անունը կրող իգական դպրոցը, որն ուներ շուրջ 20 աշակերտուհի: Ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, վայելչագրություն, կրոն, հայոց պատմություն, քաղաքավարություն, տնայնագործություն, երգեցողություն, ասեղնագործություն և պար:

«Մեղու Հայաստանի», 1868, № 33 («Հարգո բարեկամ»): 1875, № 25 («Հարգո խմբագիր»): №49 («Ախալցխայից հաղորդում են»):

Հունվարի 13. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Միրզաբեկյանցի «Դիմառնություն անցորդ տարվույն առ 1868 ամն» բանաստեղծությունը և Հայրապետ Ղուկասյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, Իվ. Կռիլովի «Բարի աղվես» առակը:

Հունվարի 17. Խարբերդում (Արևելյան Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, խմբագիր Գարեգին Գ. Պեշկոթյուրյանը: Վախճ. 1891 թ. հուլիսի 7-ին:

«Եփրատ» քոլեջում սովորելու տարիներին խմբագրել ու հրատարակել է «Ասպարեզ» ամսագիրը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 403:

Հունվարի 22. «Մասիս» օրաթերթը (№ 106) ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակում է Ֆիրմեն Տիտո եղբայրների հայտարարությունը՝ հայ մատենագիրների քննական հրատարակություն սկսելու մասին: Աշխատանքն իր հովանավորության ներքո էր վերցրել Նուպար փաշան, գործին օգնում էին հայագետներ Մարի-Ժան Բրոսսեն, Հովսեփ Էմինը և Վիկտոր Լանգլուան:

«Մասիս» 1868, № 105 («Ֆիրմեն Տիտո եղբայրների ուղերձը»):

Հունվարի 27. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Պետրոս Սիմոնյանցի «Արգո բարեկամ» հրապարակախոսական հոդվածը (վերլուծված է ժամանակի գրական-հասարակական կյանքը) և Տիկին Ա.Թ.Բ.-ի «Ընտանեկան կյանքից» պատմվածքը: Հեղինակի և նրա «գրության» մասին համապատասխան դրվատական բնութագրականներով, պատմվածքը հրատարակության է հանձնարարել «Պահլավունին» (ի՛մա. Պերճ Պռոշյանը):

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) գրաբար հրատարակում է Հարություն Կյոմրյուքճյանի «Մուրիկ և չարասիրտն» առակը և Կարապետ Տեր-Ստեփանյանի «Ուղերձ ուրախակցութեան Տ.Տ. Եսայեայ սրբազան հօր մերոյ» ներբողական բանաստեղծությունը: Սկսում է հրատարակել «Ճշմարտություն և ստություն» հրապարակախոսական հոդվածը (հեղ. Տիգրան-Հայրապետ Սավալանյան?), որն ավարտվում է հաջորդ համարում:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Տորկվատո Տասսոյի «Երուսաղէմ ազատեալ» դյուցազներգության 12-րդ կետից մի հատված (ունի «Մենամարտութիւն Տանկրեդեայ ընդ Կլորինդայ եւ մկրտել զնա ի կարեվէր մահուն» վերնագիրը):

Փետրվարի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 8) «Ժողովածու ընթերցանության» ընդհանուր խորագրի ներքո, [Մանվել-Բարունակ Ութուջյանի]՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակում է Էմիլ Ժիրարդենի «Ճշմարիտ կինն» և Ալֆոնս Լամարթինի «Հիշողություն» գրական էսսեները:

Փետրվարի 3. «Մասիսը» (№ 834) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսությունք» հոդվածը: Վերլուծված է ժամանակի գրական և հասարակական-քաղաքական կյանքը, բացասական երանգներով ներկայացված են «Փունջ» և «Մեճմուայը հավատիս» (հ՛մա. «Ծաղկաքաղ լուրերի») պարբերականները:

Փետրվարի 3. «Արշալույս արարատյանը» (№ 824) գրաբար հրատարակում է Մկրտիչ Ջոհրապյանի «Երգ ի ծնունդ փրկչին Յիսուսի Քրիստոսի» պոեմը: Նույնի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ հրատարակված է «Ովսաննայ» նովելը: Երկու գործերն էլ խմբագրությանն են ուղարկվել «Ճավա կղզվույն Սամարանգ քաղաքից»:

Փետրվարի 3. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Հայկական նամականի» հրապարակախոսական հոդվածի առաջին մասը: Շարունակությունը չի հրատարակվել:

Փետրվարի 10. «Մեղու Հայաստանին» (№ 6), Նիկողայոս Լալայանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է Իվ. Կռիլովի «Առյուծ և մուկն» առակը:

Փետրվարի 11. Աստրախանում իր ուսումնական առաջին տարեշրջանն է սկսում Գևորգ արքեպիսկոպոս Վեհապետյանցի ջանքերով հիմնված «Աստրախանի հայկական արական երկրորդ դպրոցը»: Կազմակերպման աշխատանքերն սկսել էին 1867 թվականից: Այն իր ծաղկուն ժամանակ ուներ երկու դասարան և շուրջ 50 աշակերտ:

«Մեղու Հայաստանի», 1868, № 50 («Ազգային»), 1870, № 7 («Ազգային»), 1874, № 17 («Աժդարխանից հաղորդում են»): **«Բանբեր Երևանի Համալսարանի»**, 1980, № 2 («Աստրախանի հայոց գաղթօջախի մշակութային կյանքից»):

Փետրվարի 17. «Մեղու Հայաստանին» (№ 7) «Ազգային» խորագրի ներքո հրատարակում է հայագետ Իվան Բարտոլոմեի՝ Էջմիածնում հայտնաբերած լատիներեն արձանագրությունն ու նրա արևելահայերեն վերծանությունը: Հրատարակված է նաև Հովհաննես Միրզաբեկյանցի «Գերեզման և դագաղ» բանաստեղծությունը:

Փետրվարի 18. Տրապիզոնում (Հյուսիսային Թուրքիա) ծնվեց կուսակցական գործիչ, մարքսիզմի պրոպագանդիստ, հոդվածագիր, լեզվաբան-բանասեր, խմբագիր Գրիգոր Մինասի Վարդանյանը: ԽՄԿԿ անդամ 1905 թ.: Վախճ. 1938 թ.:

1918-ին Թիֆլիսում հրատարակել է «Կարմիր օրեր», «Կարմիր դրոշակ», 1919-ին Մոսկվայում՝ «Կարմիր դրոշակ» թերթերը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Վարդգես», «Ժիրայր», «Գրվարդ» կեղծանուններով:

«Սովետական Հայաստան», 1968 թ. ապրիլի 4 («Գրիգոր Վարդանյան»):

Փետրվարի 29. «Սիոնը» (№ 2) գրաբար հրատարակում է «Յօծումն վեհափառ հայրապետին հայոց» բանաստեղծությունը (հեղ.***) և արևմտահայերեն՝ Կյոմրյուկճյանի «Իշխանության հասած հովիվ մը» առակը: «Բարոյականք» խորագրի ներքո զետեղված են երկու գրաբար առածներ:

Փետրվար –մարտ. «Հայկական աշխարհը» (№ 2-3) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Երկուսից ո՞րն է լավը» հրապարակախոսական հոդվածը և «Նամակ դեպի խմբագրող Նիցցայից» ընդդիմախոսականը: Հրատարակված է Սեյադ Շամախեցու «Հանդիմանություն» բանաստեղծությունը և «Երգ Վանի լեզ-

վով» ժողովրդական ստեղծագործությունը: Տպագրված է նաև Հ. Միրիմանյանի «Նամակ Մոսկվայից դեպի խմբագրող» թատերախոսականը, որտեղ գրախոսված են Խ. Գալֆայանի «Արշակ երկրորդ» և Ա. Օստրովսկու (?) “Ревнивый муж и храбрый любовник” ներկայացումները:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր դը Լաբրատի «Առ ծառ մի մեծ» և «Մահ կաղնւոյ» բանաստեղծությունները («Քերթված ծառոյ» ընդհանուր խորագրի ներքո): Տողատակում տրված է Լաբրատի համառոտ կենսագրությունը, որը ներկայացված է որպես «ներկա ժամանակիս անվանի բանաստեղծներեն մեկն»:

Մարտի 2. «Արշալույս արարատյանը» (№ 826) գրաբար հրատարակում է Հովհաննես Խաչկյանի «Մահկանացուդ է՞ր զանգատիս...» տողով սկսվող անվերնագիր մի բանաստեղծություն: Հրատարակված են նաև «Քերթած բարոյական», «Տեր ով կացցէ» անստորագիր խրատականները:

Մարտի 2. «Մասիսը» (№ 838) արևմտահայերեն հրատարակում է «...խմբագիր» նամակ-հոդվածը: Անհարգալից պիտակավորումներով՝ բացասաբար է գնահատված Ստեփան Ոսկանյանի վերջին տարիների հասարակական-մշակութային գործունեությունը:

Մարտի 4. Պարտիզակում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց մատենագետ, բանասեր, խմբագիր Եսայի Հակոբի Տայեցին: Վենետիկի Մխիթարյան Միաբանության անդամ էր 1890 թ. օգոստոսի 31-ից: Վախճ. 1927 թ. փետրվարի 2-ին Միլանում:

1893-96 թթ. խմբագրել է «Բազմավեպ» հանդեսը, որտեղ հանդես էր գալիս «Հ.Ե.Տ.» ստորագրությամբ:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: **«Բազմավեպ»,** 1927, № 3 («Հանգիստ Հ. Եսայի Տայեցվո...»):

Մարտի 23. Այնթապում (Հարավային Թուրքիա) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, պատմաբան-բանասեր, հոդվածագիր (գրում էր նաև թուրքերեն), խմբագիր Բաբգեն Ավետիքի Կյուլեսերյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1892 թ. սեպտեմբերի 27-ից: Վախճ. 1936 թ. հուլիսի 9-ին Անթիլիասում (Լիբանան), հուղարկավորությունը՝ հուլիսի 15-ին, Հալեպում:

1895-97 թթ. Պոլսում խմբագրել է «Լույս» կրոնական, ազգային և գիտական շաբաթաթերթը, 1918-19 թթ. Բոստոնում՝ «Տավրոս» երկշաբաթաթերթը, 1927-30 թթ. Երուսաղեմում՝ «Սիոն» ամսագիրը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «ԲԱԿ» (Բաբգեն աբեղա Կյուլեսերյան), «Բաբգեն», «Բ.», «Բ. Ե.», «Բաբգեն եպիսկոպոս», «Շահնուրի բարեկամը» ստորագրություններով:

«Հանդես ամսօրյա», 1936, № 7-9 («Բաբգեն Ա, աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիո»): **«Սիոն»,** 1936, № 8 («Հոգելույս Բաբգեն կաթողիկոս»):

Մարտի 30. «Մասիսը» (№ 842) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Գալֆայանի «Աստղն բևեռական» և «Վերջին Հայկազն» բանաստեղծությունները: Նախորդ ընծայականում բնութագրված է «ազգային ճարտար բանահյուս» Խորեն Գալֆայանի վերջին շրջանի գործունեությունը:

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Առաջադիմություն» հոդվածը (հեղ. Տիգրան-Հայրապետ Սավալանյան?) և գրաբար՝ Հարություն Կյոմրյուկճյանի «Ի սուրբ խաչն» բանաստեղծությունը:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր դը Լաբրատի «Մայրևորն» բանաստեղծությունը («Քերթուած ծառոյ» ընդհանուր խորագրի ներքո): Արևմտահայերեն փոքրիկ ծանոթությամբ հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Տաղ Յարութեան» ընդհանուր խորագրի ներքո զետեղված 2 բանաստեղծություն («Փառք Քրիստոսի ամենազօր յարութեան, սայլն այն իջանէր ի լեռնէն...» և «Անուն անեղին Էին աստուած է...»):

Ապրիլի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 10) «Ժողովածու ընթերցանության» ընդհանուր խորագրի ներքո, [Մանվել-Բարունակ Ութուջյանի]՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընյեի «Ժայռը» և Ժյուլ Սիմոնի «Ընտանիք» գրական էսսեները:

Ապրիլի 13. «Մասիսը» (№ 844) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսությունք» հրապարակախոսական հոդվածը, որտեղ ի թիվս այլ հարցերի վերլուծված է «Փունջ», «Մեճմուայը հավատիս» և «Մասիս» պարբերականների գրական քաղաքականությունը: Հրատարակված է Խորեն Գալֆայան-Նարպեյի «Երգ աքսորելոյն առ Շահ-Աբասաւ» գրաբար բանաստեղծությունը:

Ապրիլի 13. «Մեղու Հայաստանին» (№ 14) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Միրզաբեկյանցի «Ազատ մտածմունք» տեսական-հրապարակախոսական հոդվածը և Հայրապետ Ղուկասյանցի «Գարուն» բանաստեղծությունը:

Ապրիլի 14. Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Պողոս (Պոլ) Անտոնի Այանը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 850-851:

Ապրիլի 20. «Մեղու Հայաստանին» (№ 15), ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Քահանա» ակնարկը: Հրատարակված է Հայրապետ Ղուկասյանցի «Դու սխալվում ես» բանաստեղծությունը:

Ապրիլի 27. «Մեղու Հայաստանին» (№ 16) բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ծանր դրություն» պատմվածքը (թարգմանիչ՝ Տ.Ա.Ն.):

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 3) գրաբար հրատարակում է «Վասն հայկական գրոց» գրախոսականը: «Ի քննութեան» է առնված Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայերեն դպրությանց…» աշխատության Ա. հատորը (Վենետիկ, 1865 թ., տե՛ս ներկա հատորը), արված են մի շարք դիտողություններ: Սկսվում է հրատարակվել Մ. Մկրտչյանցի «Գրականության գիտության առարկան» արևմտահայերեն ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մայիս. Մայր Աթոռ Էջմիածնում արևելահայերեն սկսում է հրատարակվել Էջմիածնի միաբանության պաշտոնական ամսագիրը՝ «Արարատ, կրոնական, պատմական, բանասիրական և բարոյական գիտելյաց» խորագրով, որն իր գոյությունը շարունակում է մինչև 1919 թ.: Այդ թվականի սկզբներին ամբողջ տարվա համար հրատարակելով մեկ ընդհանուր համար, ամսագիրը դադարում է: «Արարատի» խմբագրական հանձնաժողովը բաղկացած էր ութ բարձրաստիճան հոգևորականներից, որոնք տնօրինում էին բոլոր հարցերը: Վճռական ձայնը պատկանում էր խմբագրին, որին նշանակում կամ ազատում էր կաթողիկոսը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5), Սամվել Կեսարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի

«Առանձնութիւն» բանաստեղծությունը: Ժողովրդական աշխարհաբարով հրատարակված է «Նահապետի» (իմա՝ Ղևոնդ Ալիշան) «Հայ հանճար» չափածո ստեղծագործությունը: Այն նույնությամբ արտատպված է «Նուագքի» 2-րդ հրատարակության Գ («Հայրունի») հատորից (Վենետիկ, 1967, էջ 342-345):

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 1) համապատասխան «Ծանուցումն»-ով հրատարակում է Ներսես Շնորհալու «Հանելուկը» («Դատաւորն իրաւարար…») և Սարգիս Մանկունու (հետագայում՝ Վահրամ Մանկունի) «Արարատն առ ազգ հայոց» գրաբար բանաստեղծությունը:

Մայիսի 4. «Մասիսը» (№ 847) գրաբար հրատարակում է Թովմաս Թերզյանի «Ի մահ վսեմաշուք Աղաթոն Գրիգոր Էֆենդիի» բանաստեղծություն- դամբանականը:

Մայիսի 4. «Մեղու Հայաստանին» (№ 17) Նիկողայոս Լալայանցի՝ պարսկերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, սկսում է հրատարակել «Ասիական անապատ» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մայիսի 7. Կրման գյուղում (Խոտորջուրի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, հոդվածագիր Վահան Սարգսի Մատիկյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1891 թ.: Վախճ. 1915 թ. մայիսի 17-ին Կարինում (Արևելյան Թուրքիա):

«Հանդէս ամսօրյա», 1915, № 1-2 («Վահան Մատիկյան և Թովմաս Կետիկյան»):

Մայիսի 11. «Մասիսը» (№ 848) գրաբար հրատարակում է Եղիա Տեմիրճիպաշյանի «Ի մահ վսեմափայլ Գրիգոր Էֆետիոյ Աղաթոն» բանաստեղծությունը:

Մայիսի 16. Յարբուղ գյուղում (Զեյթունի գավառ, Հարավային Թուրքիա) ծնվեց հասարակական-քաղաքական գործիչ, հոդվածագիր Ներսես Դանիելյանը: Եղեռնամահ՝ 1915թ. ապրիլին:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սսական վարդ» և «Սսական վարդապետ» կեղծանուններով:

Աճեմյան Հ., Թուրքահայ աղետը, Էջմիածին, 1919, էջ 5-7: **Զեյթունի պատմագիրք,** Բուենոս Այրես, 1960, էջ 892:

Մայիսի 18. «Մասիսը» (№ 849) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը: Տրված է ժամանա-

կի երիտասարդության և հասարակական կյանքի բնութագիրը, վերլուծված է Գրիգոր Աղաթոնի և Կարապետ Շահնազարյանի գործունեությունը:

Մայիսի 18. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Միրզաբեկյանցի «Կորուսյալ ժամ» և գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Միհրդատ Ամերիկյան?)՝ Հայնրիխ Հայնեի «Նվեր Ն.Ա.-ին» բանաստեղծությունները:

Մայիսի 22. «Մասիս» օրաթերթը (№ 169) գրաբար հրատարակում է Նշան Միրզա Վանանդեցու «Ուղերձ առ հայրն իմ հոգեհատոր, տէր Մարգար Միրզա Վանանդեցի, որ յաղին» եղերգական պոեմը:

Մայիսի 25. «Մեղու Հայաստանին» (№ 20) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Ն. տառի մի քանի հատկությունքը մեր աշխարհաբարի մեջ» գրական-լեզվաբանական հոդվածը:

Մայիսի 29. «Մասիս» օրաթերթը (№ 173) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Վերթեր, հեղինակ՝ Գյոթե, թարգմանեց պ[արոն] Մ. Մամուրյան» ընծայական-գրախոսականը:

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Յազըճյանի «Առ հայրենիս հառաչանք» բանաստեղծությունը: Հակոբ-Հովակիմ Անուշյանի՝ գրաբար բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու փոքրիկ առաջաբանով, հրատարակում է Եղիշեի «Հաղագս միանձնյաց» ճառը:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալեքսանդրո Մանցոնիի «Պենտեկոստե» բանաստեղծությունը: Արսեն Բագրատունու՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Դանտեի «Դժոխքի» Գ երգից (ունի «Արձակագիր դրանցն դժոխոց» խորագիրը) և ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ՝ մի հատված Պիեռ Կոռնելի «Որատիոս» ողբերգությունից (4-րդ գործ., 5-րդ պատկեր. ունի «Կամիլլեայ անիծանելն զՀռովմն» խորագիրը):

Հունիսի 1. «Մեղու Հայաստանին» (№ 21) ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «տիկին Ն.Ա.») սկսում է հրատարակել Նադեժդա Վ.-ի «Աշտոնի ընտանիք» վիպակը, որն ավարտվում է նույն պարբե-

րականի № 26-ում (հուլիսի 6): Հրատարակված են նաև «Տխուր ժամեր» և Միհրդատ Ամրիկյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, Հայնրիխ Հայնեի «Զահիլ էր նա…», «Մին քանի ժամ» բանաստեղծությունները:

Հունիսի 2. Պոլսում Պողոս Աշնանյանի ատենապետությամբ և Պողոսիկ Փափազյանի, Անտոն Պալյանի, Արթին Մաքսուտյանի, Առաքել Տիվիթյանի և Գաբրիել Քեմահճյանի անդամակցությամբ, իր գոյությունն է սկսում «Էջմիածնյան ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «Հոժարանվեր հանգանակությամբ վարժարաններու եկամուտն ավելացնել և ապագայն ապահովելու միջոցներ մտածել»: «Էջմիածնյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 70-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1952, № 12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հունիսի 3. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական եկեղեցական երաժշտության մասնագետ, մշակութային գործիչ Գրիգոր Չուլհայանը: Վախճ. 1938 թ. փետրվարի 28-ին իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 261: **«Նոր լուր»,** 1938, № 6132 («Մահ երաժշտագետ Գրիգոր Չուլհայանի»), № 6134 («Հուղարկավորություն…Գրիգոր Չուլհայանի»)

Հունիսի 4. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան, հոդվածագիր, բանաստեղծ Երմոզ Գույումճյանը: Վախճ. 1945 թ.:

«Հաջի աղա» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 260-261: **Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի**, Պոլիս, 1946, էջ 373:

Հունիսի 8. «Մասիսը» (№ 852) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Գալֆայանի «Քնար Պանդխտին» բանաստեղծությունը: Նախորդ ծանոթության մեջ նշվում է, որ այն «Խորեն եպիսկոպոսին (ի՛մա Գալֆայան–Ս.Շ.) աշխատասիրած և արդեն տպագրվիլ սկսող «Քնար պանդխտին» անուն տաղերգութենեն քաղվելով, մեզ հաղորդած է»:

Հունիսի 8. «Արշալույս արարատյանը» (№ 833) գրաբար հրատարակում է «Աղերս առ աստուածաբանս», «Բարոյական», «Սաղմոս ՃԻՁ» բանաստեղծությունները (հեղինակ՝*** և «այս գործերը Հնդկաստանեն ուղարկված է ի հրատարակություն»): «Ազգային» խորագրի ներքո տեղեկություններ են հաղորդված «մեծարգո կապի-

տան» Պետրոս Մաղաքյան-Սեյաղի մասին, ապա հաջորդում է նրա «Ողջոյն Սեյեաղի Շամախեցւոյ» գրաբար ներբողականը:

Հունիսի 8. «Մեղու Հայաստանին» (№ 22), Հովսեփ Միրիմանյանցի արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Երկնային արդարադատություն» պատմվածքը: Միհրդատ Ամրիկյանի՝ բնագրերից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Հ. Հայնեի «Շատ օգտավետ խրատներ…» և Ալ. Պլեշչնի «Ճակատագրին միշտ հնազանդ…», «Երբ ես դառա իմ հայրենի քաղաքը» բանաստեղծությունները:

Հունիսի 17. «Մասիսը» (№ 853) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Պառնասյանի «Բարձրագույն դաստիարակության խնդիրը Գաղղիո ծերակույտին մեջ» հոդվածը: Բնութագրված են Շառլ Օգյուստ Սենտ-Բյովի, Տյուբենի, Անրի-Կլոդ Սեն-Սիմոնի, Օգյուստ Կոնտի և Էմիլ Լիթրեի փիլիսոփայական համակարգերը:

Հունիսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 24) արևելահայերեն հրատարակում է «Նոր գիրք» գրախոսականը: Գրախոսված և դրական է գնահատված Կոմբի «Խնամատարություն երեխայոց» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1868 թ.):

Հունիսի 22. «Մասիսը» (№ 854) գրաբար հրատարակում է «Հայք ի Հնդկաստան» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 31. «Սիոնը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Մուրադյանի (հետագայում՝ Մելքիսեդեկ եպիսկոպոս) «Ուխտ հայրենասիրի» հրապարակախոսական հոդվածը: Հարություն Կյոմրյուկճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ճանաչումն անձին» տրակտատը, որն ավարտվում է նույն ամսագրի № 8-ում (օգոստոս) և Կարապետ Բարունակյանի «Ի սգալի մահ մեծահռչակ Աղաթոն Գրիգոր էֆենդիի» եղերերգական բանաստեղծությունը: «Պատիժ բամբասողին» և «Օրինակ համբերութեան» խորագրի ներքո հրատարակված են երկու գրաբար առակներ:

Հունիս-հուլիս. «Հայկական աշխարհը» (№ 6-7) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Կրկին համալսարանի մասին» հրապարակախոսական հոդվածը: Բարձրացված է հայերի համար ուսման և կրթության անհրաժեշտության հարցը, որի շնորհիվ, ըստ հոդվածագրի, կարելի կլինի թե՛ հղկել հայ հասարակությանը, և թե՛ խթանել ազգային գիր-գրականությունը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Աթագինես Ղափթանյանի «Օգուտ և վնաս տպագրության» հրապարակախոսական հոդվածը և Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, Թովմաս Կրոսսիի «Մահ Իլդեգոնդայ» բանաստեղծությունը:

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 3) գրաբար հրատարակում է «Գարուն» բանաստեղծությունը և ինը առած Եզնիկ Կողբացուց: Առածներն ունեն հետևյալ ծանոթագրությունը. «Եզնիկ Կողբացվո առածներեն կառնունք «Ոգեշահ խրատք ամենայն կրոնաւորաց ասացեալ ի նմանէ»:

Հուլիսի 4. Նոր Նախիջևանի «Ս. Խաչ» եկեղեցում Ջարիֆյանի և Հովհան Չուպառյանցի հոզաբարձությամբ, իր գոյությունն է սկսում «Ժառանգավորաց ուսումնարանը», որը «մեր դպրոցական չոր ու ցամաք անապատի մեջ հազվագյուտ օազիսներից մին պիտի համարվի»: Ուսումնարանը վեցամյա էր, ուներ 28 աշակերտ (հետագայում՝ 50), ավանդվում էր կրոնագիտություն, ընդհանուր և հայոց եկեղեցու պատմություն, հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն լեզուներ, աշխարհագրություն, ընդհանուր պատմություն, թվաբանություն, գծագրություն, երգեցողություն:

«Դպրոց», 1875, № 2 («Ազգային դպրոցներ Նոր Նախիջևանում»):

Հուլիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 26) Երվանդ Տեր-Դավթյանց Օձնեցու՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Հենրի Լոնգֆելլոյի «Գերու երազ» բանաստեղծությունը: Տպագրված է Ս. Մարությանցի «Ուսում» չափածո ստեղծագործությունը:

Հուլիսի 6. «Մասիսը» (№ 856) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Ի թիվս այլ հարցերի, դրվատված են Է. Սյուի «Թափառական հրեայի» (թարգ. Կարապետ ՌԻթուջյան) և Վ. Հյուգոյի «Թշվառների» (թարգ. Գրիգոր Չիլինկիրյան) ֆրանսերեն բնագրից կատարած «հայեցումները»:

Հուլիսի 13. «Մեղու Հայաստանին» (№ 27), Սարգիս Տեր-Սարգսյան Թելեթցու՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Անզգուշության վատ հետևանքները» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 30-ում (օգոստոսի 3):

Հուլիսի 19. Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (վրացերենից և պարսկերենից՝ հայերեն), գրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Գևորգ Ասատուրը (Գևորգ Կոստանդինի Աստվածատրյան): Վախճ. 1937 թ. հոկտեմբերի 7-ին իր ծննդավայրում:

Ըստ Հ. Խաչատրյանի Գ. Ասատուրը ծնվել է հունիսի 6-ին: Այս հարցը ճշտել չենք կարողացել:

Մեր անվանի դասախոսները, Երևան, 1970, էջ 28-29: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 54:

Հուլիսի 20. «Արշալույս արարատյանը» (№ 836), Հակոբ Չիվիճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Հրեշտակ եւ տղայ» բանաստեղծությունը: Անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ***) սկսում է հրատարակվել Վաշինգտոն Իրվինգի «Կին» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հուլիսի 27. «Մասիսը» (№ 859) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը: Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային և հրապարակախոսական կյանքը, բնութագրված է «Հասարակաց կարծյաց» նշանակությունը հայ ժողովրդի համար:

Հուլիսի 27. «Մեղու Հայաստանին» (№ 29) սկսում է արտատպել «Մասիսում» հրատարակված «Հայք ի Հնդկաստան» հոդվածը (տե՛ս ներկա հատորը 1868 թ., հունիսի 22), որն ավարտվում է հաջորդ համարում: Այստեղ լիակատար համերաշխություն է հայտնված Մ. Նալբանդյանի գործունեությանը տրված «Մասիսի» գնահատականներին: Հրատարակված է նաև Ս. Մարության «Պանդուխտ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Հուլիսի 31. «Սիոնը» (№ 7) գրաբար հրատարակում է Կարապետ Բարունակյանի «Բան տարագիր, որդւոյ առ որդեկորոյսն Անի» բանաստեղծությունը և Խաչատուր Նալբանդյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, «Նախախնամություն» նովելը: Սկսում է հրատարակվել Աստվածատուր Տեր-Հովհաննիսյանցի «Կարճ ճանապարհորդություն յԱսուրիք» արևմտահայերեն ուղեգրությունը, որն ավարտվում է նույն ամսագրի № 10-ում (հոկտեմբեր):

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) գրաբար հրատարակում է մի հատված Արսեն Բագրատունու «Հայկ Դիւցազն» դյուցազներգությունից: Հրատարակված է Ա երգը, նոր՝ «Տօնախումբ հանդէս Նաւաստրդի» խորագրով:

Օգոստոսի 3. «Մասիսը» (№ 860), Սարգիս Չալըխյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է «Ժիլ Բլյազի վրա գաղղիացի հեղինակի մը դիտողությունները» գրախոսականը: Վերլուծված և բարձր գնահատված է Ալեն–Ռընե Լեսաժի՝ հիշյալ խորագիրը կրող վիպասանությունը:

Օգոստոսի 3. «Մեղու Հայաստանին» (№ 30), Ս. Մարությանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Ժան Բատիստ Ռուսսոյեն» խորագրի ներքո հրատարակում է մի բանաստեղծություն («Տեսա օրերս տխրագին…»):

Օգոստոսի 8. Պոլսում ծնվեց մատենագետ, տոմարագետ, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն) Խորեն Սինանյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1892 թ. հունիսի 5-ից: Վախճ. 1928 թ. փետրվարին իր ծննդավայրում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 226: **«Բազմավէպ»,** 1928, № 2 («Հանգիստ հոգվո Խորեն Սինանյանի):

Օգոստոսի 10. «Մեղու Հայաստանին» (№ 32), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Նիկողայոս Լազարյանցի «Ամերիկյան կյանքից. Հուրոնցի (Ամերիկայում բնակվող հնդկական ցեղերից մեկի անունն է. Ս. Շ.)» պատմվածքը: Հրատարակված է Ս. Մարությանցի «Հայոց աղջիկներ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Օգոստոսի 17. «Մասիսը» (№ 862) արևմտահայերեն հրատարակում է «Սուրհանդակ Վոսփորի» հրապարակախոսական հոդվածը (հեղ. «Կ.Դ.Տ.»): Վերլուծված է ժամանակի գրական-հասարակական և ազգային կյանքը:

Օգոստոսի 17. «Մեղու Հայաստանին» (№ 32), Նիկողայոս Լալայանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ճանապարհորդություն Հյուսիսային Ամերիկայի դաշտերումը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 37- ում (սեպտեմբերի 21):

Օգոստոսի 24. Մալաթիայում (Արևելյան Թուրքիա) ծնվեց հոդվածագիր, հուշագրող Մկրտիչ Որբերյանը: Եղեռնամահ՝ 1915թ. իր ծննդավայրում:

Պատմություն Մալաթիո հայոց, համադրեց Ալ. Ալպոյաճյան, Բեյրութ, 1961, էջ 757-758:

Օգոստոսի 27. Ղարասու քաղաքում (նաև՝ Ղարասու-բազար. Ղրիմ, այժմ Բելոգորսկ) վախճանվեց բանաստեղծ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Վրթանես Պատուրյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1819 թ. հունվարի 17-ից: Ծնվ. 1790 թ. մայիսի 7-ին, Պոլսում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 222:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Վոլտեր, Ռուսսոն և Մոնտեյնը հրաշքի վկայք» տեսական-աստվածաբանական հոդվածը, «Ի գեբեզման իջեր թագաւոր անմահ» գրաբար բանաստեղծությունը, Համազասպ Էլլի-Դիրիեմյանցի «Իղձք սգւոյ առ սուրբն Սաղիմ» պոեմը: Հրատարկված է նաև «Ի յիշատակ … Մարիամու Ջարուհւոյ, արձան յաւերժ» գրաբար եղերգությունը:

Օգոստոս-սեպտեմբեր. «Կիլիկիա» հանդեսը (№ 14-15) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Մանվել-Բարունակ Ութուջյանի] «Գեղարվեստից մեջ հոչակվողներն» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Վերլուծաբար ներկայացված և դրական է գնահատված «Քանի մը խոսք մեր ազգին արդի վիճակին վրա» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1868 թ.):

Սեպտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 5) գրաբար հրատարակում է Եղիշե Մեծատունյանցի «Ուղերձ առ Վեհափառ կաթողիկոսն ամենայն հայոց Գէորգ Դ» բանաստեղծությունը: Հետագայում հրատարակվել են նրա «Ջի անցանէ եւ այս ամ» («Արարատ» 1869, № 11, մարտ) և «Ջանգակ Մասեաց» (անդ, 1870, № 2, հունիս) չափածո ստեղծագործությունները:

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9) գրաբար սկսում է հրատարակել Ղևոնդ Ալիշանի «Բաժինք հայոց մեծաց» պոեմը, որն ավարտվում է նույն ամսագրի № 11-ում (նոյեմբեր): Նույնությամբ արտատպված է հեղինակի «Նուագքի» Գ. («Հայրունի») հատորից (Վենետիկ, 1867, էջ 196-243): Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանչեսկա Պետրարկայի «Բարեբանութիւն և աղերս առ սուրբ Կոյսն» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 35) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Շարունակե՞նք թե ոչ» հրապարակախոսական հոդվածը և Պողոս Քաթանյանցի «Նվեր Ն...-ին» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 9. Մուսուլում (Իրաք) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, հոդվածագիր Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1895 թ. հունվարի 18-ից: Վախճ. 1947 թ. հունիսի 4-ին Բաղդադում (հուղարկավորությունը՝ հունիսի 8-ին Երուսաղեմում):

«Սիոն» 1947, № 6 («Հանգիստ Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայանի»): **«Արարատ»** , 1947, № 5-6 («Զավեն արքեպիսկոպոս Տեր-Եղիայան»), № 9-10 («Հայաստանյայց եկեղեցին սփյուռքի մեջ»):

Սեպտեմբերի 24. Պոլսում ծնվեց արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից և ռուսերենից՝ հայերեն), գրական-մշակութային գործիչ Լևոն Բաշալյանը: Վախճ. 1943 թ. փետրվարի 1-ին Վիշիում (Ֆրանսիա):

«Ասպետ», «Ծիծեռակ», «Թափառիկ», «Զարթումյան», «Լ. Զարթումյան», «Մենիկ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: 1884-1891 թթ. Պոլսում Ա. Արփիարյանի հետ խմբագրել է «Հայրենիք» օրաթերթը, 1897-1901 թթ. Լոնդոնում միայնակ՝ «Նոր կյանք» գրական կիսամսյա հանդեսը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1921, էջ 383-384: **Բաշալյան Լ.**, Ընտիր երկեր (կազմեց Վ. Դաքեսյան), Երևան, 1962, 284 էջ: **Մանուկյան Ս.**, Լևոն Բաշալյան Երևան, 1969, 264 էջ:

Սեպտեմբերի 28. «Մասիսը» (№ 868) արևմտահայերեն հրատարակում է Ղազարոս Հովակիմյանի «Կարճ խոսքով մը, Պոլսո հայոց մեջ ինչ կանցնի» գրական-հրապարակախոսական հոդածը և «Վահրամի» (իմա՛. Գրիգոր Օտյան?) «Թատերական» թատերախոսականը (բարձրացված է թատերական ներկայացումների օգտակարության հարցը, վերլուծված են «Երկաթյա մատանի» և «Ռոզամոնտա իշխանուհվույն գերությունը» ներկայացումները):

Սեպտեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 38) արևելահայերեն հրատարակում է «Ազգային» գրախոսականը (գրախոսված և դրական է գնահատված Պերճ Պռոշյանի «Վերին Ագուլյաց երկու սեռից ուսումնարանի բացվիլը և կանոնադրությունը» աշխատությունը), գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Ա.Տ.»)՝ Գրիմ եղբայրների «Հմուտ որսորդ»

պատմվածքը: Հրատարակված է նաև Ս. Մարությանցի «Զրպարտիչ» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Գարեգին (հետագայում՝ Մելքիսեդեկ) Մուրադյանի «Խաչ օրհնյա ինձ (նվեր ծնողասեր մանկանց)» բանաստեղծությունը և Կ. Տատյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Ընտանեկան կյանք» ակնարկը: Հրատարակված է «Իղձ սրտի առ սուրբ տաճարն Յարութեան» գրաբար բանաստեղծությունը (հեղ. «Կ.Գ.Չ., Զմյուռնիացի ձուլիչ»=Գրիգոր Չիլինկիրյան?):

Աշուն. Օրդուում (Տրապիզոնի գավառ, Հյուսիսային Թուրքիա) Հովակիմ Անդրեասյանի նախաձեռնությամբ իր գոյությունն է սկսում մշակութային-թատերական «Հայկուհյաց ընկերությունը»: Իր գոյությունը դադարեցնում է 1882 թ.:

«Հանդես ամսօրյա», 1965, № 1-3, (Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հոկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 6-7) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Իդեալիստներ» հոդվածը:

Հոկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 6) գրաբար հրատարակում է Հովհաննես Միրզաբեկյանի (Շամախեցի) «Ողբալից բանք Սուրբ Աստուածածնի վանից Մեսրայու, որ ի վիճակին Շամախւոյ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 5. «Մեղու Հայաստանին» (№ 39), գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝«Տ.Ք.Փ.»), հրատարակում է Ֆոն Վիկտեի «Մարդասպան (դաստիարակչուհու կյանքից)» վիպակը: Ավարտը՝ հաջորդ համարում:

Հոկտեմբերի 10. Բանանց գյուղում (Ելիզավետպոլի նահանգ, այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ, Դաստաֆյուրի շրջան) ծնվեց կուսակցական-հեղափոխական գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), արձակագիր Մելիք Գալուստի Մելիքյանը: Վախճ. 1918թ. Բաքվում:

«Դեղուշկա», «Բանվոր», «Հայ բանվոր», «Բանվոր Մ.», «Մելիք», «Մ.-յան», «Քեռի», «Բալախանցի», «Անհաշտ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Փիրուզյան Ա., Մելիք Մելիքյան (Դեղուշկա), Երևան, 1961, 186 էջ: **Մելիք Մելիքյան (Դեղուշկա),** Երկեր (կազմ. Ա. Փիրուզյան), Երևան, 1974, 209 էջ:

Հոկտեմբերի 12. «Մասիսը» (№ 870) արևմտահայերեն հրատարակում է «Սուրհանդակ Վոսփորի» գրական-հրապարակախոսական տեսությունը (հեղ. «Կ.Դ.Տ.»): Ի թիվս այլ հարցերի դրվատված է Նար-Պեյի, Պեշիկթաշլյանի և Հեքիմյանի թատերական գործերը և Ղազարոս Հովակիմյանի «Առաջադիմության օրենքը» վերլուծական հոդվածը:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ժողովրդային կրթություն» գրական-մանկավարժական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն ամսագրի 1869 թ. № 4-ում (ապրիլ): Կարապետ Բարունակյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Մարդկային վիճակի նախկին տարբերությունը» ակնարկը: Տպագրված է Հարություն Կյոմրյուկճյանի «Թառանչ առ պանդուխտ» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Նոյեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 7), արևելահայերեն սկսում է հրատարակել «Եղիշե վարդապետ, պատմաբան 5-րդ դարու» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի 1869 թ. № 9-ում (հունվար): Հրատարակված են Արշակ Տեր-Ղազարյանցի «Ի տօնախմբութեան անուան Վեհափառ կաթողիկոսի» և Գրիգոր Մաթևոսյանի «Քրիստոսապսակ Վեհափառ հայրապետ և սրբազումար հանդիսականք» գրաբար ներբողները:

Նոյեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 43), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վալտեր Հերուդի՝ «Քսան տարիից ետ» պատմվածքը: Հրատարակվում է Հովհաննես Միրզաբեկյանցի «Կամապաշտ» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 9. «Մասիսը» (№ 874) արևմտահայերեն հրատարակում է Ցոլակ Լուսինյանի «Նոր բառարան հայերենէ ի հունարեն» գրախոսականը: Գրախոսված և դրական է գնահատված Դիմիտրիոս Չոլաքյանի (ճիշտ ձևը Չոլաքիդես) նշված խորագիրը կրող բացատրական բառարանը:

Նոյեմբերի16. «Մեղու Հայաստանին» (№ 45) արևելահայերեն սկսում է հրատարակել Գարեգին Գազազյանցի հավաքած և ծանոթագրած հայկական ժողովրդական առած-ասացվածքները «Ազգային բարոյական առածներ» խորագրով (193 անուն), որոնք ավարտվում են նույն պարբերականի № 47-ում (նոյեմբերի 30):

Նոյեմբերի 23. «Արշալույս արարատյանը» (№ 845), Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցի գիտա-աստվածաբանական գործունեությունը բնութագրող ներածականից հետո, սկսում է հրատարակել նրա «Իրավախոհ» աշխատության Ա գրքի առաջաբանը: Ավարտը՝ նույն պարբերականի հաջորդ համարում:

Նոյեմբերի 23. «Մեղու Հայաստանին» (№ 46) արևելահայերեն հրատարակում է «Հայկական քնար» գրախոսականը (գրախոսված է Մ. Միանսարյանցի «Քնար Հայկական» ժողովածուն) և Առաքել Բահաթրյանցի «Փող աշխատենք, թոփ անենք» երգիծական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 26. Մոզդոկում (Հյուսիսային Կովկաս), Գրիգոր Թուշմալյանցի ֆինանսական օժանդակությամբ, իր գոյությունն է սկսում տեղի արական դպրոցը, որն ուներ «Սուրբ Գևորգ» անունը: Դպրոցն ուներ 200 աշակերտ, ավանդվում էր կրոն, հայոց, ռուսաց և վրաց լեզուներ, ազգային պատմություն, աշխարհագրություն: Գոյատևեց մինչև 1910-ականները:

«Արարատ», 1869, № 1 **(«Ազգային»): «Մեղու Հայաստանի»,** 1870, № 29 («Հարգո խմբագիր»), 1874, № 47 («Մշակին» գրում են»): **«Մշակ»,** 1908, № 45 («Մոզդոկ, 10 հունվարի»):

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Միքայել Միանսարյանցի «Հրապարակային ընթերցանությունք Էդուարդ Լաբուլյեի» հոդվածը, որին հաջորդում է հեղինակի կոչը՝ օգնել իրեն հրատարակելու «Մեկ ընդհանուր հայերեն ցուցակ, հայերեն լեզվով տպած բոլոր գրավոր աշխատությանց»: Մկրտիչ Տեր-Ստեփանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Կենցաղ մարդկան և յուր տեսակները» ակնարկը:

Նոյեմբերի 30. «Մեղու Հայաստանին» (№ 47) արևելահայերեն սկսում է հրատարակել [Պետրոս Սիմոնյանցի] «Մեղուի հաշվի վերա երկու խոսք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12) «Սարդք» բնագիտական հոդվածում Հակոբ Իսավերտենցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Սարդն եւ ծիծառը» առակը, Արսեն Բագրատունու՝ հունարեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ՝ երկու տաղ Անակրեոնից («Կամիմ ոգել զԱստրիդայս…» և «Բնութիւն եղջերս ետ ցլուց…»): Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած

գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ալեսանդրո Մանցոնիի «Ի ծնունդ տեառն» բանաստեղծությունը:

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 8) գրաբար հրատարակում է Սարգիս (հետագայում՝ Վահրամ) Մանկունու «Էջմիածին» և Գևորգ Խուբովի (Մելքիսեդեկյան) «Ողբ ի վրդովումն Հայաստանի, ողբալով ոգեալ» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև «Տաղ վասն մահրամայի» չափածո երգիծաբանությունը, որը ձեռագիր տաղարանից հանել և հրատարակության է պատրաստել Առաքել վարդապետը:

Դեկտեմբերի 7. «Մասիսը» (№ 878), գրաբար հրատարակում է Սրբուհի Վահանի (իմա.՝ Սրբուհի Տյուսաբ) «Ի յիշատակ պ/արոն/ Մ/կրտիչ/ Պեշիկթաշլեանի» բանաստեղծությունը (տե՛ս **Մ. Պեշիկթաշլյան,** Տաղեր, հեղինակի պատկերով և Լեոյի առաջաբանով, Թիֆլիս, 1903, էջ 31-32):

Դեկտեմբերի 9. Պոլսում ծնվեց հնագետ, հոդվածագիր, խմբագիր Անդրանիկ Ալթունյանը: Վախճ. 1939 թ. նոյեմբերի 30-ին Փարիզում:

1930 թ. մինչև մահը Փարիզում խմբագրել է «Տեղեկատու» եռամսյա պարբերաթերթը:

«Բազմավեպ», 1942, № 1-12 («Անդրանիկ Ալթունյան»):

Դեկտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 49), Նիկողայոս Լալայանց Ղզլարցու՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Էդգար Պոյի «Մի քանի կարծեցյալ մեռածների ժամանակից առաջ թաղման վերա» ակնարկը, որն ավարտվում է № 51-ում (դեկտեմբերի 28):

Դեկտեմբերի 21. «Մասիսը» (№ 880) արևմտահայերեն հրատարակում է «Նետի» (ի՛մա. Հակոբ Պարոնյան ?) «Նկարագիրք» գրական-հրապարակախոսական հոդվածը և ժողովրդական աշխարհաբարով՝ Մինաս Սիսոյանի «Պանդուխտն առ կռունկ» և «Դարձ կռունկին» բանաստեղծությունները:

Դեկտեմբերի 21. «Մեղու Հայաստանին» (№ 50) արևելահայերեն հրատարակում է Պողոս Քաթանյանցի «Երազ» և Խաչոյի «Երազ (խոյեցոց լեզվով)» բանաստեղծությունները:

Դեկտեմբերի 28. «Մասիսը» (№ 881) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Ազգային» հրապարակախոսական հոդվածը (վերլուծված է պարբե-

րական մամուլի դերը ազգի մտավոր զարթոնքը կազմակերպելու գործում) և «Վահեի» (ի՛մա. Ստեփան Ոսկանյան) «Քնար պանդխտին» գրախոսականը:

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է «Մեծն Ներսես, գեղեցիկ տիպար հայրապետության» կենսագրական ակնարկը և «Նախապաշարմունք» հոդվածը: Վերջինում քննության են առնված հայկական ժողովրդական հավատալիքները (Ալափյուճուկ, Փերի, Խորթլախ, Ալ կամ Խպլիկ):

–––Սղերդում (Արևելյան Թուրքիա) Քրիստոստուր Ղազարոսյանի ջանքերով հիմնվում է կրթական-մշակութային «Անձնվեր ընկերությունը»: Վերջինիս անդամները «դասախոսություններ կկարդան, լուր օրերու ամեն առավոտները չափահաս մարդիկ կուզան դասերնին կառնեն ու կերթան վաճառանոց, իսկ կյուրակե օրերը… 40, 50 և 60 տարեկան մարդիկ անգամ ձեռվնին մեկ մեկ գիրք առած կկարդան»: Ընկերությունը շուտով «Սղերդի շրջակաները նոր ճյուղեր հաստատելե ի զատ, գյուղորեից մանկանց դպրոցներուն վարժապետներ կկարզե, անոնց թոշակն իր աղքատիկ գանձեն հայթայթելով»: «Անձնվեր ընկերությունը» իր գոյությունը շարունակում է մինչև 1874 թ.:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ. Վիեննա, 1963, էջ 457-460:

–––Պոլսում ծնվեց օպերային դերասան, մշակութային գործիչ, ռեժիսոր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Արշակ Խաչատուրի Պենկլյանը (Խաչատրյան): Վախճ. 1923թ. ապրիլի 5-ին իր ծննդավայրում:

«Հայաստանի կոչնակ», 1923, № 19 («Մահգույժ»): **Թեոդիկ,** Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 373: **Ստեփանյան Գ.,** Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. Գ, Երևան, 1975, էջ 98-122:

–––Պոլսում ծնվեց հոդվածագիր, հասարակական կյանքի տեսաբան (մասնագիտությամբ՝ բժիշկ) Ենոք Թեյանը: Վախճ. 1907թ. փետրվարի 9-ին Պոռ քաղաքում (Արևմտյան Թուրքիա):

Սահակ-Մեսրոպ, Հայոուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 265:

–––Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, հրապարակախոս, հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Գրիգոր Գալֆայանը:

1902-1907 թթ. Եգիպտոսում, տիրան Քելեկյանի հետ համատեղ հրատարակել է «Egyptian graphic» (“Եգիպտական գրաֆիկա”) և “Cairo weekly” («Կահիրեի շաբաթաթերթ») անգլերեն պարբերականները: 1912-1913 թթ. Պոլսում, Եր-

վանդ Օտյանի հետ համատեղ, հրատարակել է «Սև կատու» երգիծական շաբաթաթերթը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 928: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 221:

–––Պոլսում իր գոյությունն է սկսում կրթական-լուսավորչական «Ընթերցասիրաց ընկերությունը», որն իր առջև նպատակ է դնում գրքեր հրատարակել և ազգի մեջ կրթություն տարածել: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1874 թվականը: Վերջինիս ջանքերով 1872 թ. հրատարակվում է Պետրոս Դուրյանի «Տաղք և թատրերգությունք» ժողովածուն:

«Հանդես ամսօրյա», 1954, № 11-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

–––Ալեքսանդրապոլում, ուսուցիչ Արսեն Կրիտյանի ղեկավարությամբ, իր գործունեությունն է սկսում «Բարենպատակ ընկերություն» գաղտնի խմբակը: Այն նպատակ ուներ տարածել հայրենասիրական գաղափարներ, ազատել Հայաստանը թուրքական տիրապետությունից և դրամ հավաքել՝ զենք գնելու համար: Ընկերությունը բաղկացած էր 43 անդամներից, ուներ իր կանոնադրությունը, անդամավճարների գանձման համար սահմանված հերթակարգ, աշխատանքների որոշակի մշակված ձև: «Բարենպատակ ընկերությունը» լիկվիդացվեց 1875 թ. ապրիլին, Երևանի ժանդարմական վարչության ջանքերով:

Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, 531 էջ:

––––Ալեքսանդրապոլում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Սարգիս Տեր-Աբրահամյանը: Վենետիկի Մխիթարյան Միաբանության անդամ էր 1894 թ.: Վախճ. 1952 թ. հուլիսի 4-ին Հռոմում:

«Բազմավեպ», 1952, № 7-9 («Հանգիստ հոգվո… Սարգիս Տեր-Աբրահամյանի»):

––Տրապիզոնում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր, գրող Պետրոս Մարիմյանը: Վախճ. 1959 թ. Բաքվում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հատ. Բ, էջ 308-309:

–––Երզնկայում ծնվեց մշակութային գործիչ, գրականության տեսաբան, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Ոսկան պեյ Մարտիկյանը: Վախճ. 1947 թ. օգոստոսին, Հելուանում (Եգիպտոս):

«Սիոն», 1947, № 8 («Հանգիստ Ոսկան պեյ Մարտիկյանի»): **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 308-309:

–––Խարբեդում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր Պետրոս Գալֆայանը: Եղեռնամահ՝ 1915 թ. մայիսի 4-ին Այաշում (Հարավային Թուրքիա):

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Որդոտնունի» կեղծանունով: 1903 թ. Ռուսչուկում (Բուլղարիա) հիմնել և մինչև 1904 թ. խմբագրել է «Վերածնություն» շաբաթաթերթը:

Թեոդիկ, Հուշարձան 1915թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 62-63: **Պոտուրյան Մ.,** Հայ հանրագիտակ, էջ 929:

–––Խարբեդում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Պետրոս Հակոբյանը: Վախճ. 1931 թ. հուլիսի 2-ին Ֆրեզնոյում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1931, № 33 («Պետրոս Հակոբյան»):

–––Ղզլարում (Դաղստանի ԻԽՍՀ), տեղի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցու բակում, իր գոյությունն է սկսում քաղաքի չորսդասյա հայկական ուսումնարանը, որն ուներ 150 աշակերտ: Ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ, թվաբանություն, կրոն, վայելչագրություն, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն և ազգային պատմություն:

«Դպրոց», 1875, № 8 (մասն առաջին) («Ազգային հոգևոր ուսումնարան Ղզլարում»):

–––Թալասում (Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա), ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Ավետիս Սեյյանը: Վախճ. 1941 թ. փետրվարի 4-ին, Ուոթըրթաունում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1941, № 9 («Ավետիս Պ. Սեյյանի հիշատակին»):

–––1868 (?) Այնթափում ծնվեց հոդվածագիր (հայերեն, թուրքերեն, անգլերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ թուրքերեն) Ավետիս Ա. Նազաշյանը: Վախճ. 1943 թ. մարտի 29-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1943, № 16 («Ա. Նազաշյանի մահը…»), № 18 («Դոկտոր Ավետիս Նազաշյան»), № 36 («Դոկտոր Ավետիս Նազաշյան»):

–––Պարտիզակում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), մշակութային գործիչ Հովհաննես Ալիքսանյանը: Վախճ. 1936 թ. հուլիսի 30-ին Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Դետ» կեղծանունով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 65-66: **«Հայաստանի կոչնակ»,** 1936, № 34 («Հովհաննես Ալիքսանյանի մահը»), № 35 («Անհետացող դեմքեր»), № 36 («Հովհ. Ալիքսանյանի հուղարկավորությունը»), № 38 («Վարժապետը»):

–––Աղրիանապոլսում ծնվեց հոդածագիր, բանասեր, լեզվաբան Դավիթ Սարգսյանը: Վախճ. 1900 թ. մարտի 9-ին, Պոլսում:

«Բյուզանդիոն», 1900, № 1040 («Մահ»), № 1042 («Երկու վաղամեռիկները»):

–––Կամարակապ գյուղում (Ակնի շրջան, Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթա-մշակութային գործիչ, բանասեր, երաժշտագետ Սերովբե Պայանը: Եղեռնամահ՝ 1915 թ. Պանտրմայի շրջանում:

Պարսամյան Մ., Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 695:

–––Սվազում (Սեբաստիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց պատմաբան, գրականագետ-բանասեր պրոֆ. Նազարյանը: Վախճ. 1931 թ. վերջերին Հալեպում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 725:

–––Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, առաջաբանով, ծանոթագրություններով ու հավելվածով հրատարակվում է «Լաբուբնեայ դիւանագիր դպրի Եդեսիոյ Թուղթ Աբգարու» աշխատությունը: 71 էջ:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Մարկոս Ավրելիոս կայսեր իմաստասիրական և խրատական թուղթերը» աշխատությունը: 75+388 էջ:

–––Վենետիկում գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է «Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունւոյ» ժողովածուն: 100 էջ:

–––Վիեննայում, Պետրոս Պյուլպյուլճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Լյուդովիկոս Թիլոյի «Սկզբնական դասագիրք պարզ ուսողության» ձեռնարկը: 211 էջ:

–––Թիֆլիսում, ռուսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝«տիկին Ն.Ս.…»), հրատարակվում է Նադեժդա Վ…-ի «Աշտոնի (վիպակի հերոսներից մեկի ազգանունն է - Ս. Շ.) ընտանիքը» վիպակը: 74 էջ:

–––Թիֆլիսում արևմտահայերեն մեկնաբանություններով հրատարակվում է Ստեփանոս Պալասանյանի «Գործնական քերականություն հայերեն լեզվի» աշխատության առաջին հատորը («Ստուգաբանություն»): 205 էջ:

Նույնը՝ 1874 թ. (237 էջ) և 1885 թ. (244) էջ, ամեն անգամ որոշ փոփոխություններով և լրացումներով:

Հատոր երկրորդ («Համաձայնություն»), անդ, 1869 թ., 104 էջ:

Նույնը՝ 1874 թ. (276 էջ), որոշ վերամշակումներով:

–––Մոսկվայում աշխարհաբար հրատարակվում է Պերճ Պռոշյանի «Վերին Ագուլյաց երկու սեռից ուսումնարանների բացվիլը և կանոնադրությունքը» աշխատությունը: 76 էջ:

–––Պետերբուրգում, Միքայել Նալբանդյանի՝ գրաբարից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակվում է Ղազար Փարպեցու «Մեղադրություն ստախոս աբեղաներին» թուղթը: Թարգմանությունը հրատարակության է պատրաստել Միքայել Տեր-Գրիգորյանը:

–––Պետերբուրգում հրատարակվում է Միքայել Միանսարյանի կազմած և ծանոթագրած՝ հայկական ժողովրդական և դասական երգերի ժողովածուն՝ «Քնար հայկական» խորագրով: 590 էջ:

–––Պետերբուրգում անգլերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ (թարգմանիչ՝ Միքայել Միանսարյան ?) հրատարակվում է Անդրե Կոմբեի «Խնամատարություն երեխայոց մարմնական և բարոյական» աշխատությունը: Թ+5+VIII+276+28 էջ:

–––Թիֆլիսում արևմտահայերեն հրատարակվում է Հ. Ասկերյանի «Հասունյան քաղաքականություն. երեսուննհինգամյա պատմություն գեր[ապատիվ] Հասունյան Անտոն վարդապետին, սկսյալ ի քահանայութենեն, մինչև ցպատրիարքությունն Կիլիկիո» աշխատությունը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ձայն ճշմարտության. կղեր և իրավասություն» գրքույկը: 32 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիազար Մուրադյանի «Նոր ընթացք գրաբար լեզվի ուսուցման» աշխատությունը:148 էջ:

–––Պոլսում, Կարապետ Տագեսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է Ժոզեֆ Բուշարդիի «Սուրբ Պողոսի եկեղեցվույն զանգահարը» դրաման: Վերջում թարգմանիչը զետեղել է իր մի քանի բանաստեղծությունները: 126 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Հիսարյանի «Նեռն կամ կատարած աշխարհի» վեպը: 319 էջ:

Գրքի կազմի վրա հրատարակության թիվ նշված է 1868-ը, իսկ անվանաթերթի վրա՝ 1867:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եզնակ Գրիգորյանի «Կրոնափոխությունը բարեկարգություն չէ» աշխատությունը: 59 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մենաբանություններով, հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Նոր քերականություն գաղղիերեն լեզվի Օլլենդորֆի դրությամբ, վեց ամսվան մեջ գաղղիերեն կարդալ, գրել և խոսիլ սորվելու համար» ուսուցողական ձեռնարկը: 560 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մենաբանություններով, հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Բանալի հայ-գաղղիերեն քերականության, Օլլենդորֆի դրությամբ» աշխատությունը: 210 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Բարսեղ Այամալյանի չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուն «Նոր տարի և մտավորական սնունդ տղայոց» խորագրով: 126 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մենաբանություններով, հրատարակվում է Ստեփան Փափազյանի կազմած «Դասագիրք ընթերցանության, կամ նոր նախագիտելիք մանկանց» ուսումնական ձեռնարկը: 224 էջ:

Նույնը՝ Երուսաղեմ, 1869 թ., Պոլիս, 1874, 1882, 1886 թթ., ամեն անգամ որոշ փոփոխություններով ու լրացումներով:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Վարդան Տեր-Մարկոսյան Սեբաստացու «Ասպարեզ ազգային հայոց» գիրքը: 91 էջ:

–––Պոլսում, հրատարակվում է Դիմիտրիոս Զոլազյանի (նաև՝ Զոլակիդես) կազմած «Նոր բառարան հայերենե (իմա.՝ արևմտահայերենից- Ս.Շ.) ի հունարեն» գիրքը: 360 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ քահանա Տեր-Սարգսյանի «Սուտ լուսավորչյանն ու իր մոլորությունները (Ա. պատասխան)» գրքույկը: 66 էջ:

––––Պոլսում, Կարապետ Ղազարոսյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրիդրիխ Շիլլերի «Հովհաննես (իմա.՝ Ժաննա- Ս.Շ.) Դ՛ Արկ կամ Օռլեանի դուստրը» ողբերգությունը: 178 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Պրուսացի Տերոյենցի (իմա.՝ Չամուռճյան) «Իրավախոհ» աշխատության Ա գիրքը: 144 էջ:

Բ գիրք, 1869 թ., 236 էջ:

Գ գիրք, 1872 թ., 295 էջ:

––––Պոլսում, Սարգիս Կ. Չալըխյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանիչի ծանոթագրություններով, հրատարակվում է Ալեն Ռընե Լեսաժի «Ժիլ Պլաս» վեպը (ճիշտ անվանումը՝ «Սանտիլյանցի Ժիլ Բլազի պատմությունը»): 768 էջ:

––––Պոլսում գրաբար հրատարակվում է Խորեն եպիսկոպոս Նարպեյանի (իմա.՝ Գալֆայան) չափածո ստեղծագործությունների ժողովածուն «Քնար պանդխտին» խորագրով: 448 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Պարոնյանի «Ատամնաբույժն արևելյան (կատակերգություն երգախառն ի 5 արարս)» ստեղծագործությունը (տե՛ս **Պարոնյան Հ.**, Երկերի ժողովածու տաս հատորով, հատոր 1-ին, Երևան, 1962, էջ 65-219):

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անտոն Մաղաթիա Գարագաշյանի «Համառոտ փիլիսոփայություն կամ սկզբունք հոգեբանության, տրամաբանության, բարոյականի և բնական աստվածաբանության» աշխատությունը: 104 էջ:

––––Պոլսում, արևմտահայերեն հրատարակվում է Անտոն Մաղաթիա Գարագաշյանի «Համառոտ պատմություն փիլիսոփայության» աշխատությունը: 76 էջ:

––––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Եղիազար Մուրադյանի «Նոր ճաշակ դպրության կամ համառոտ ճարտասանություն» աշխատությունը: 132 էջ:

––––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Մելքիսեդեկ Մուրադյանի «Ուխտ հայրենասիրի» ստեղծագործությունը: 33 էջ:

Նույնը՝ 1874 թ., որոշ լրացումներով: 58 էջ:

–––Երուսաղեմում գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Նարեկ կամ մատեան ողբերգութեան» պոեմը: 518 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Ղերուբնա Եղեսիացու «Թուղթք Աբգարու թագաւորի հայոց և քարոզութիւնք Թադէի առաքելոյ» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Տիգրան-Հայրապետ Սավալանյանի: 87 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Եսայի Հասան-Ջալալյանի «Պատմութիւն համառօտ Աղվանից երկրի» աշխատությունը: 58 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սյուի «Գաղտնիք Փարիզի» վեպի Ա հատորը: 247 էջ:

Բ Հատոր՝ անդ, նույն թվականին, 233 էջ

Գ (242 էջ), Դ (194 էջ), Ե (212 էջ) և Զ (204 էջ) հատորներ՝ անդ, 1869 թ.:

Է(224 էջ) և Ը (231 էջ) հատորներ՝ անդ., 1870:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Թշվառներ» վեպի առաջին հատորը: 244 էջ:

Երկրորդ (237 էջ), երրորդ (222 էջ), չորրորդ (196 էջ), հինգերորդ (192 էջ) հատորներ՝ անդ, նույն թվականին:

Վեցերորդ (180 էջ), յոթերորդ (272 էջ), ութերորդ (238 էջ), իններորդ (244 էջ) հատորներ՝ անդ, 1869 թ.:

Տասերորդ հատոր (192 էջ)՝ անդ, 1870 թ.:

Նույնը՝1885 թ., երկու գրքով, անդ, «վերստին սրբագրված»:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Քանի մը խոսք մեր ազգին արդի վիճակին վրա» գրքույկը: 32 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով հրատարակվում է Իոհանն-Վոլֆանգ Գյոթեի «Վերթեր» վիպասանությունը: 309 էջ:

–––Թեոդոսիայում աշխարհաբար հրատարակվում է Հովհաննես Տեր-Աբրահամյանի «Ներսես Ե., վեհափառ կաթողիկոս ամենայն հայոց» գրքույկը: 32 էջ:

1869

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 5) գրաբար հրատարակում է Ավագ Խոսրովյանցի «Մոզդոկայ վարժարան», Գրիգոր Մատթևոսյանի «Աստուածարեալ վեհափառ հայրապետ և սրբազումար սրբազան հարք» և Ստեփաննոս Հակոբյանի «Աստուածարեալ վեհափառ տէր» ներբողական բանաստեղծությունները: Միջին հայերենով հրատարակված է «Ագռավ և բազե» առակը, որը հանված է ձեռագիր տաղարանից:

Հունվարի 1. Մուշում (Արևելյան Թուրքիա) ծնվեց արձակագիր, գրականագետ-բանասեր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն), խմբագիր Գալուստ Սարգսի Անդրեասյանը: Վախճ. 1906 թ. մարտի 17-ին իր ծննդավայրում:

1901-1902 թթ. Պոլսում խմբագրել է «Բյուրակն» ամսագիրը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նուրհան» կեղծանունով:

Անդրեասյան Գ., Ամբողջական գործեր, Բեյրութ, 1951:

Հունվարի 1. «Հույսը» (№ 25) գրաբար հրատարակում է «Ի մուտս նոր տարւոյ. անցեալ, ներկա եւ ապառնի» դիմառնական բանաստեղծությունը, Խորեն վարդապետ Աշըղյանցի «Վանքեր» հրապարակախոսական հոդվածը և անստորագիր՝ «Արշալույս արարատյան» «քննաբանականը»: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակված են «Նավարբեկություն Գուստավոսի Ֆրանկոնիո» նովելը և «Քնար պանդխտի, տաղերգեց Խորեն Նարպեյան (ի՛մա. Գալֆայան-Ս.Շ.)» գրախոսականը:

Հունվարի 4. «Արշալույս արարատյանը» (№ 848), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի շնորհակալական նամակը ուղղված Գրիգոր Չիլինկիրյանին, իր «Թշվառների» թարգմանության կապակցությամբ (տե՛ս **Վիկտոր Հյուգո**, Թշվառներ, առաջին մաս, Երևան, 1940, էջ 7-8: Նամակը բերված է արևելահայերեն թարգմանությամբ):

Հունվարի 4. «Մասիսը» (№ 882) արևմտահայերեն հրատարակում է Ռեթևոս Պերպերյանի «Նոր տարի» հրապարակախոսական առաջնորդողը: Ի թիվս այլ հարցերի վերլուծված է «անցած տարվույն» գրական- հասարակական կյանքը:

Հունվարի 11. «Մեղու Հայաստանին» (№ 1), Հովհաննես Միրզաբեկյանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Սիրիր թշնամիներուդ (պատմություն գաղթականների կյանքից Հյուսիսային Ամերիկայում)» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 5-ում (փետրվարի 8):

Հունվարի 14. Շամախիում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր (մասնագիտությամբ քիմիկոս) Հովհաննես Համբարձումի Ակունյանը: Վախճ. 1947 թ. օգոստոսի14-ին Բլագովեշչենսկ քաղաքում (Ամուրի մարզ, Հեռավորարևելյան երկրամաս):

«Մեր անվանի դասախոսները», Երևան, 1970, էջ 15-16:

Հունվարի 18. «Մասիսը» (№ 884) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» «Նոր տարի կամ 1869» հրապարակախոսական հոդվածը:

Հունվարի 18. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Պաքա Բահաթրյանցի «Սոխակի զգացմունքը» բանաստեղծությունը, որի քառյակների առաջին տառերը կազմում են «Պաքաէ է երգս այս» իմաստը:

Հունվարի 20. «Հույսը» (№ 26) արևմտահայերեն հրատարակում է «Գրաբար լեզվին զարգացման արգելքները» հրապարակախոսական առաջնորդողը (հեղ. «Ս. Վ. Յ. Փ.»), Խորեն վարդապետ Աշըղյանցի «Գուրգեն և յուր հյուրը» գեղարվեստական մանրապատումը (թարգմանություն?), ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ՝ ութ ասույթ Ալեքսանդր Դյումայից, «Ի նորապարգեւ պատիւ գերապատիւ վանահօր մերոյ» գրաբար ներբողը և անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Գլխատություն Կարոլոս Ա. թագավորին Անգլիո» պատմվածքը:

Հունվարի 22. «Մասիս» օրաթերթը (№ 298) գրաբար հրատարակում է «Հ. Սիսակի» «Ի վաղամեռիկն Մ.Յ.Գ. եղերերգ» պոեմը:

Հունվարի 25. «Մեղու Հայաստանին» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Ս. Մարությանցի «Ինչո՞ւ համար» բանաստեղծությունը:

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Քանի մի խոսք» գրական-հրապարակախոսական առաջնորդողը, Մելքոն Հակոբյանի «Ելք շնորհաւորութեան նոր տարւոյ» գրաբար բանաստեղծությունը և Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «Ի սգալի մահ Տիգրան Հարութիւնի Տէտէեան Զմիւռնացւոյ» եղերերգությունը: Հրատարակված է «Գրաքննականք» արևմտահայերեն հոդվածը, որտեղ համապատասխան վերլուծությունից հետո, գերմաներեն բնագրից կատարված թարգմանությամբ, բերված է Հուլիոս-Հայնրիխ Պետերմանի ճառը, ուր տրված է հայկաբանության պատմությունը սկսած Հովակիմ Շրոդերից մինչև Խաչատուր Աբովյան:

Հունվար – փետրվար. «Հայկական աշխարհը» (№ 1-2) արևելահայերեն սկսում է հրատարակել Ս. Ստեփանեի (իմա.՛ Խորեն Ստեփանե) «Մովսես Խորենացու «Հայկական պատմություն» ուսումնասիրությունը, որին հաջորդում է Պատմահոր «Հայոց պատմության» արևելահայերեն թարգմանությունը, որը շարունակվում է մինչև նույն պարբերականի 1871 թ. № 4-ը (ապրիլ) և մնում է անավարտ: Հրատարակված է Հարություն Ոստանիկի (իմա.՛ Հովհաննես Քուչուբեկյան) «Որ համբերեսցէ նա կեցցէ», «Մոլորյալին» (թարգմանություն), «Բարեկամություն» բանաստեղծությունները և Խորեն Գալֆայանի «Վերջին Հայկազն» պոեմը:

Փետրվար. Հին Նախիջևանում Մկրտիչ Թունյանցի, Կարապետ Գասպարյանցի, Ստեփան Սիթարյանցի նախաձեռնությամբ իր գոյությունն է սկսում «Նախիջևանի հայկական հոգևոր դպրոցը»: Ավանդվում էր հայերեն և ռուսերեն, կրոն, պատմություն: Դպրոցն ուներ 35 աշակերտ: Այն իր գոյութունը դադարեցրեց 1873 թ. սկզբներին:

«Մեղու Հայաստանի», 1869, № 11 («Ազգային»), 1873, № 5 («Հին Նախիջևանից…»), 1874, №2 («Հին Նախիջևան»):

Փետրվար. Թիֆլիսում ծնվեց լրագրող, մանկավարժ, դասագրքերի հեղինակ, Վրացական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ (1947թ.) Պողոս Գաբրիելի Հովվյանը: Վախճ. 1959 թ. սեպտեմբերին իր ծննդավայրում:

«Սովետական մանկավարժ», 1955, № 12 («Վաթսունհինգ տարի մանկավարժական աշխատանքներում»): **Հայ մշակույթի օրրանը**, Երևան, 1971, էջ 177-179: ՉԱԳԱԹ, Պողոս Հովվյանի ֆոնդ:

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Սարգիս Մանկունու «Էջմիածին և հայք» հրապարակախոսական հոդվածը: Ավարտը՝ հաջորդ համարում:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2) Գևորգ Հյուրմյուզյանի հիսնամյակի առթիվ հրատարակում է արևմտահայերեն դրվատական հոդված (վերջում՝ գրաբար բանաստեղծություն), որտեղ բնութագրված է նրա գրական-հասարակական գործունեությունը (հեղ. «Հ.Ա.Ե.») և Սուքիաս Պարոնյանի «Ի յիսներեակ յոբելինի ամաց տեառն Եդուարդայ Վ. Հիւրմիւզեան, տաղ» գրաբար բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել Արսեն Բագրատունու «Երուանդ» գրաբար պատմական ողբերգությունը, որն ավարտվում է նույն ամսագրի № 7-ում (հուլիս):

Փետրվարի 1. «Արշալույս արարատյանը» (№ 850) գրաբար հրատարակում է «Խթան թմրեցելոց, արար նախանձայոյզ ումն ի Բանկալա (ի՛մա. Բենգալիա. Արևելյան Հնդկաստան – Ս. Շ.)» բանաստեղծությունը և «Վճար պարտեաց ի հայրենին» պոեմը: Հրատարակված է նաև «Լա Ռեֆորմ կամ Թանզիմաթ» արևմտահայերեն ազդը:

Փետրվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է «Պանդուխտ» բանաստեղծությունը և Նիկողայոս Լալայանցի՝ ռուսերեն բնագրից կատարած թարգմանությամբ, Իվ. Կրիլովի «Ծերացած առյուծ» առակը:

Փետրվարի 7. Դսեղ գյուղում (այժմ՝ Թումանյան, ՀՀ) ծնվեց հայ գրականության դասական, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), գրական-հասարակական գործիչ Հովհաննես Թադևոսի Թումանյանը: Վախճ. 1923 թ. մարտի 23-ին Մոսկվայում, հուղարկավորությունը՝ ապրիլի 8-ին, Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատանը:

Հովհ. Թումանյան, Մատենագրություն, Երևան 1961, էջ 386: **Հախվերդյան Լ.,** Թումանյանի աշխարհը, Երևան 1966, 500 էջ: **Զրբաշյան Էդ.,** Թումանյանի պոեմները, Երևան 1964, 507 էջ: **Ինճիկյան Ա.,** Հովհաննես Թումանյան (կյանքը և ստեղծագործության պատմությունը),Երևան 1969, 595 էջ:

Փետրվարի 8. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Փամբուխչյանցի «Մի քանի խոսք» գրախոսականը: Գրախոսված են Միքայել Միանսարյանցի «Քնար հայկական» ժողովածուն, Ղազար Փարպեցու «Թղթի» Մ. Նալբանդյանի կատարած և 1868 թ. Պետերբուրգում հրատարակված թարգմանությունը, «Վերջը կիմանաքի» (ի՛մա. Գաբրիել Պատկանյան) «Հայոց ազգի

ուսումնատվությունը, ուսումնարանները և ուսուցիչները» գրքերը, որոնք դրական են գնահատված:

Փետրվարի 8. Պոլսում Գևորգ Այվազյանի խմբակցությամբ արևմտահայերեն սկսում է հրատարակվել «Մամուլ. արձագանք հասարակաց կարծյաց» շաբաթաթերթը: Իր գոյությունը, պարբերականության որոշ խախտումներով, շարունակում է մինչև 1883 թ.:

Փետրվարի 10. «Հույսը» (№ 27) արևմտահայերեն հրատարակում է «Աղվես ու գայլ» առակը, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Գինեմոլի մը երազը. Իռլանդիայի ժողովրդական պատմություն» պատմվածքը: Անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Վաշինգտոնի բարոյական խրատները» խորագրի ներքո զետեղված են քաներկու խրատաբանություններ:

Փետրվարի 15. «Արշալույս արարատյանը» (№ 851) «Առաջաբան «Արարատ» ամսագրին» խորագրի ներքո արտատպում է Էջմիածնի «Արարատ» ամսագրի խմբագրականը, որին հաջորդում է նրա խմբագիր Սարգիս Մանկունու «Արարատն առ ազգ հայոց» գրաբար բանաստեղծությունը: Հրատարակված է Հակոբ Չիվիճյանի «Լա Ռեֆորմ կամ թանզիմաթ» արևմտահայերեն ներբողականը, որտեղ գովաբանված է Զմյուռնիայի այդ ֆրանսալեզու պարբերականը և մանավանդ նրա խմբագիր Ստեփան Ոսկանյանը:

Փետրվարի 15. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Մանդինյանցի «Դիտողություն «Արարատ» օրագրի նոյեմբեր ամսի համարի վրա» բանավիճականը (քննված են Եղիշեի կենսագրության և նրա «Պատմության» հետ առնչվող մի քանի հարցեր): Սկսում է հրատարակվել Գևորգ Բարխուդարյանցի «Սեր կամ մահ» արևելահայերեն ողբերգությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 11-ում (մարտի 22):

Փետրվարի 15. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Էշ նահատակի մը խոր վիրապը» պատմվածքը (հեղ.՝ Գևորգ Այվազյան ?):

Սկսած այս համարից, «Մամուլը» անկանոն պարբերականությամբ հրատարակում է այլևայլ անստորագիր երգիծական ստեղծագործություններ (մի քանիսը հայատառ թուրքերեն), որոնց հեղինակը ամենայն հավանականու-

թյամբ խմբագիրն է՝ Գևորգ Այվազյանը, թեև կան գործեր էլ, որոնք կարող են և Հ. Պարոնյանի գրչի արգասիք լինել: Հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Թե մեր ոսկիները ո՞ւր կերթան եղեր»** (№ 4, մարտի 1): **«Մսին ու լուբիային կռիվը»** (№ 7, մարտի 15): **«Մամուլին հյուրերը»** (№ 8, մարտի 22, ավարտ՝ հաջորդ համարում): **«Բերայի մեջ բացօթյա սուարե մը»** (№ 10, ապրիլի 3): **«Մեր Մեֆիստոֆելը»** (№ 11, ապրիլի 5): **«Ապրիլի մեկը»** (№ 12, ապրիլի 12): **«Զատկական պատրաստություն»** (№ 13, ապրիլի 19): **«Պեյօղլուի բանայիրը և զաճաճի բոյով ու հսկայի լեզվավ հավկթածնունդ մը»** (№ 14, ապրիլի 26): **«Իննսուն փարայով Երուսաղեմ երթալ գալ»** (№ 16, մայիսի 13): **«Վհուկներու հրաշքը»** (№ 17, մայիսի 10): **«Երազական հարստություն»** (№ 18, մայիսի 17): **«Մեկ մարդուն երկու կնիկ»** (№ 19, մայիսի 24): **«Ազգային վիճակահանություն»** (№ 20, մայիսի 31): **«Երկրային վիճակ»** (№ 21, հունիսի 7): **«Թենճիրե յուվարլանդը քաբաղընը պուլտու»** («Ամանը գլորվեց խուփը գտավ», № 22, հունիսի 11): **«Մամուլի համար նախանջ օր մը»** (№ 23, հունիսի 14): **«Թահթա պուրուն Բենիամինին հարսանիքը»** (№ 24, հունիսի 21): **«Նոր Բաբիլոն»** (№ 25, հունիսի 28): **«Գավառական վարժապետներու վիճակը»** (№ 27, հուլիսի 4): **«Լուսավորչի նոր ճամբորդությունը»** (№ 28, հուլիսի 12): **«Թաղական աղաներու միտինգը»** (№ 29, հուլիսի 19): **«Մեֆիստոֆելի հետաքրքրական տեսիլքը»** (№ 30, հուլիսի 26): **«Չինկյանե չալար, քյուրդ Օլար»** («Գնչուն նվագում է, քուրդը պարում», № 32, օգոստոսի 9): **«Սըրասը կելդի»** («Հերթը հասավ», № 34, օգոստոսի 23): **«Ֆըստըխաբաշխություն»** (№ 35, օգոստոսի 28): **«Մանզումյեի չըթախությունը»** (իմա. լրբությունը, № 36, օգոստոսի 30): **«Ես, Մեֆիստոֆելս»** (№ 37, սեպտեմբերի 6): **«Տեսություն մը»** (№ 38, սեպտեմբերի 13): **«Ֆլաժելի հրաժեշտը»** (№ 39, սեպտեմբերի 20): **«Սեպտեմբերի 4-ի պարահանդեսը»** (№ 40, սեպտեմբերի 30): **«Պոլսո մեջ իրարանցում մը»** (№ 42, հոկտեմբերի 14): **«Օդային պատերազմ»** (№ 45, նոյեմբերի 1): **«Մեֆիստոֆելին նամակ մը»** (№ 48, նոյեմբերի 26): **«Բռնազբոս պատվելիք»** (№ 50, դեկտեմբերի 6): **«Բարձրավանդակ գյուղ մը»** (№ 51, դեկտեմբերի 13): **«Տարօրինակ հիվանդություն մը»** (№ 52, դեկտեմբերի 20):

Փետրվարի 21. Գաղատիայում (Անկյուրա, հետագայում՝ Անկարա) ծնվեց հոդվածագիր, տեքստաբան-բանասեր, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Եփրեմ Ապրոյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1892 թ. հունիսի 5-ից: Վախճ. 1935թ. հունվարի 8-ին Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Խուրին Հայկազն» կեղծանունով:

Միթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: **«Բազմավեպ»,** 1935, № 1 («Եփրեմ Ապրոյան»): **Տարեցույց Ս. Փրկչի ազգային հիվանդանոցի,** Պոլիս 1836, էջ 185:

Փետրվարի 22. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Առաքել Բահաթրյանցի «Մնաս բարև» բանաստեղծությունը:

Փետրվարի 22. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 3) արևմտահայերեն հրատարակում է [Գևորգ Այվազյանի] «Առ հարգելի ընթերցողս» հրապարակախոսական առաջնորդողը:

Փետրվարի 28. «Սիոնը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է «Եղիշե վարդապետ և յուր երկասիրությունը» հոդվածը և Մովսես Քյոմրյուքճյանի «Աղվես, կուզ և աքաղաղ» առակը:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար ազատ թարգմանությամբ, հրատարակում է Դանտեի «Աստվածային կատակերգությունից» մի հատված «Դրուագ ի մահ Ուկոլինեայ» խորագրով: Այն վերցված է «Դժոխքի» 32-34-րդ երգերից:

Մարտ. Էջմիածնի «Արարատը» (№ 11) գրաբար հրատարակում է Ավետիք Փինաճյանցի «Յաւուր մեծահանդէս տօնի նահատակութեան սրբոց Վարդանանց» պոեմը:

Վերջինիս ստեղծագործությունները հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. **«Սարեակն»** (1869, № 3, հուլիս, գրաբար): **«Անառակ որդին (յառակացն Աւետարանի)»** (1870, № 11, մարտ, գրաբար): **«Չար խորհուրդ»** (1870, № 8, դեկտեմբեր, գրաբար): **«ՈՒղերձ առ սրբազնագոյն կաթողիկոս ամենայն հայոց Տ.Տ. Գէորգ Դ»** (1871, № 9, գրաբար): **«Քրիստոս ի գետն Յորդանան»** (1872, № 1, հունվար, գրաբար):

Մարտի 1. «Մասիսը» (№ 890) արևմտահայերեն հրատարակում է «Վաղարշի» «Տրամախոսությունք» հոդվածը: Բացատրված է «տրամախոսի» անելիքները գրական -հասարակական կյանքում, վերլուծված է «Արևելյան մամուլի», «Մազումյեի էֆ-

քյարի» («Կարծիքների շարք»), «Ծաղկի» և «Մեղուի» գործունեությունը, բացասաբար է գնահատված Ստ. Ոսկանյանի ֆրանսալեզու «Լա Ռեֆորմ» թերթը:

Մարտի 1. «Հույսը» (№ 28), Յոլակ Լուսինյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Իսկիքա» բանաստեղծությունը (համառոտ ներածականում տրված է Լամարթին-բանաստեղծի բնութագիրը) և Սմբատ Շահրապյանի «Ի մեխակն» պոեմը:

Մարտի 1. «Արշալույս արարատյանը» (№ 852), «Սարգիս Մանուկյան» խորագրով և արևմտահայերեն փոքրիկ ներածությամբ, հրատարակում է հնդկահայ կրթական-մշակութային այդ գործչի կենսագրություն-դիմանկարը (հեղինակ՝ «Բարենախանձ հայու որդին»): Այն «անցյալները ընկալաք ի Հնդկաստանե»:

Մարտի 5. Պոլսում իր գոյությունն է սկսում կրթական-հրատարակչական «Ընթերցասիրաց օժանդակ ընկերությունը», որի նպատակն էր «Ընթերցասիրությունը ազգիս մեջ ծավալելու համար աժան գինով օգտակար գիրքեր հրատարակել»: Իր կարճատև գոյության ընթացքում ընկերությունը կարողացավ մեկ գիրք հրատարակել:

«Հանդես ամսօրյա», 1957, № 8-10 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մարտի 8. «Մասիսը» (№ 891) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Լամաթին» հոդվածը:

Մարտի 15. «Արշալույս արարատյանը» (№ 853) գրաբար հրատարակում է Հովհաննես Խաչիկյանի«Անգիւտ կորուստ ի Կալկաթա» մահախոսականը: Նկարագրված է «պայազատն պարոն Էմին Հովսեփ Էմինեանի» մահը, ապա վերլուծված է նրա կյանքն ու գրական-մշակութային գործունեությունը:

Մարտի 20. «Հույսը» (№ 29) արևմտահայերեն հրատարակում է «Տաճկաստանին մեջ հայերեն լեզվին արժեքը» հրապարակախոսական առաջնորդողը, Ներսես Մավյանի «արցունք պանդխտին ի գերեզմանս Ավարայրի» գրաբար բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել «Գաբավոնի պատերազմը» արևմտահայերեն պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Մարտի 22. «Մասիսը» (№ 893) արևմտահայերեն հրատարակում է Երեմիա քահանայի (Խասգյուղցի) «…խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» հոդվածը (ցույց է տրված տոմարական հաշիվների սխալները հայ մատենագիրների գոր-

ծերում) և «Արտավազդի» «Բանասիրական» հրապարակախոսական ակնարկը: Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Մարտի 22. «Մեղու Հայաստանին» (№ 11), Ս. Մարությանի ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Իր շրջանեն ելնող մարդու զղջումը» պատմվածքը:

Մարտի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական կյանքը: Ազդարարված է Ալ. Դյումայի «Մոնսորոյի տիկինը» վիպասանության՝ Մ. Փորթուգալյանի՝ բնագրից կատարած թարգմանության հրատարակությունն սկսելու և այդ կապակցությամբ նախապես բաժանորդագրություն բացելու մասին:

Մարտի 29. «Մասիսը» (№ 894) գրաբար հրատարակում է Մկրտիչ Խրիմյանի «Մրմունջ հայրենասիրի, առ քաջն Վարդան եւ նիզակակիցս իւր, ի յիշատակ տօնի սուրբ Նահատակացն» պոեմը:

Մարտի 29. «Արշալույս արարատյանը» (№ 854), Մարիամ Ճերմակյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Նկարագիր գեղեցկութեանց գարնան» ակնարկը: Հրատարակված է «Բան առ հաւատարիմ փորձառուս եւ եթ» գրաբար բանաստեղծությունը, որն ուղարկվել էր Հնդկաստանից:

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է «Ավարայրի ամպերը» բանաստեղծությունը (ստորագրություն՝ ***):

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է «Հայկական թատրոն ի Երևան» թատերախոսականը: Դրվատական գնահատականներով ներկայացված են Հ. Կարենյանի «Շուշանիկ» և Ն. Ալիխանյանի «Երվանդ Բ» ողբերգությունները ու նրանց բեմադրությունները:

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Խաչ» բանաստեղծությունը:

Ապրիլ. Ալեքսանդրապոլում, Արսեն Կրիտյանի ղեկավարությամբ, իր գոյությունն է սկսում «Բարենպատակ ընկերություն» ազգային-ազատագրական գաղտնի

խմբակը: Ընկերությունը նպատակ ուներ հայրենասիրական գաղափարներ տարածելու միջոցով համախմբել հայ երիտասարդությանը և զինված պայքարով վերականգնել Հայաստանի անկախությունը: «Բարենպատակ ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1875 թ. և ցրվեց ժանդարմական միջամտությամբ:

Պարսամյան Վ., Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան 1958, 276 էջ:

Ապրիլի 5. «Մեղու Հայաստանին» (№ 13) արևելահայերեն հրատարակում է «Բարի՛, հազար բարի սիրելի հայ ընթերցող» հրապարակախոսական հոդվածը (բնութագրված է գրական քննադատությունը և նրա անելիքները) և Առաքել Բահաթրյանցի «Թանկագին բարեկամ Հաբեթ» վերլուծականը:

Վերլուծականում ներկայացված է աշուղական գրականությունը և այդ հենքի վրա տրված են աշուղ Շիրինի, Նիրանու, Յաղուբ Օղլու, Ջիվանու, Մավջուդի, Քեշիշ Օղլու, Ջուլալի, Սեյրանի, Նիդահու և աշուղ Հաջի Թաթոսի կենսագրությունները:

Ապրիլի 5. «Մասիսը» (№ 895) արևելահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Տրամախոսությունը»: Վերլուծված են ժամանակի «հանրային, գրական, գրականաբանական և ընկերականության» հարցերը:

Ապրիլի 10. «Հույսը» (№ 30) արևմտահայերեն հրատարակում է Խորեն վարդապետ Աշըխյանցի «Անհոգություն» հրապարակախոսական առաջնորդը, Զարմայր Այվազյանի «Ի վտակն» գրաբար բանաստեղծությունը և ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Ծեր աղքատը» նովելը:

Ապրիլի 12. «Արշալույս արարատյանը» (№ 855), Մկրտիչ Ջոհրաբյանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Ահա մարդն» բանաստեղծությունը: «Ըստ թախանձանաց ազգասեր և ուսումնական բարեկամաց», սկսում է հրատարակվել Երեմիա քահանա Խասգյուղցու «Հետազություն տոմարական վրիպակաց» աշխատությունը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Ապրիլի 12. «Մեղու Հայաստանին» (№ 14) արևելահայերեն հրատարակում է Կարապետ Մատինյանցի «…խմբագիր» նամակ-գրախոսականը: Ներկայացված և դրական է գնահատված Մոսկվայում հրատարակված Սմբատ Շահազիզի «Լևոնի վիշտը» գիրքը:

Ապրիլի 12. Վիեննայում ծնվեց ավստրիացի հայագետ, բանասեր-լեզվաբան Մաքսիմիլիան Բիտները (Maximilian Bitner): Վախճ. 1918 թ. ապրիլի 7-ին իր ծննդավայրում:

«Հանդես ամսօրյա», 1904, №1 («Հայերենի դասը Վիեննայի համալսարանին մեջ»): 1906 թ. №9 («Ուսումնական»): 1917-1918, էջ 131-134 («Դոկտոր Մ. Բիտներ»):

Ապրիլի 14. Պոլսում ծնվեց բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (իտալերենից՝ հայերեն) Կարապետ Արիստակեսի Ոսկյանը: Վախճ. 1901 թ. հունիսի 11-ին:

Սահակ-Մեսրոպ, Հայուն տարեցույցը, Պոլիս 1913 (երրորդ տարի), էջ 259-261: **«Հանդես ամսօրյա»,** 1953, № 7-9 («Ոսկյան գերդաստանը»):

Ապրիլի 14. Աստրախանում ծնվեց թատերական գործիչ, քննադատ, դերասան Գևորգ Սերգեյի Բուրջալովը (Բուրջալյան): Վախճ. 1924 թ. դեկտեմբերի 10-ին Մոսկվայում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 208:

Ապրիլի 19. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Հակոբ Փամբուխչյանցի «Բարոյական առածներ» ծաղկաքաղը (213 անուն), «Հիշատակ պանդուխտին» բանաստեղծությունը և Արշակ Հովհաննիսյանցի «Առաքինի անձն» չափածո ստեղծագործությունը:

Ապրիլի 19. «Մասիսը» (№ 897) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Արտավազդի» «Բանասիրական» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Ապրիլ-մայիս. «Հայկական աշխարհը» (№ 4-5), Ալեքսանդր Տեր-Մարուքյանի՝ գերմաներենից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալեքսանդր Դյումայի «Կոմս Մոնտե Քրիստո» վեպի առաջին գլուխը «Փորձանք» խորագրով:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Առ մուսա» բանաստեղծությունը:

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Մի քանի խոսք մեր սիրելի ազգակիցներին» հրապարակախոսական առաջնորդողը և «Խորհրդածություն դաստիարակության վերա» ուսումնասիրությունը: Վերջինս ավարտվում է նույն ամսագրի № 6-7-ում (հոկտեմբեր-նոյեմբեր):

Մայիսի 1. «Հույսը» (№ 31) գրաբար հրատարակում է Արշակ Կամիկյանի «Տաճար աստծոյ» բանաստեղծությունը և արևմտահայերեն՝ «Իրավախոհ. հորինեց Հովհաննես Պրուսացի Տերոյենց» գրախոսականը: Գրախոսված է Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը և դրական է գնահատված:

Մայիսի 2. «Մեղու Հայաստանին» (№ 16) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանցի «...խմբագիր» ընդդիմախոսականը: Պաշտպանելով իր «Գործնական քերականություն...»-ը «Հայկական աշխարհի» հարձակումներից, բարձրացվում են լեզվի և գրականության մի քանի հարցեր: Նիկողայոս Հախումյանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ սկսում է հրատարակվել «Նվեր ծնողաց յուրոց (հյուրանոց անապատումն)» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Մայիսի 3. «Մասիսը» (№ 899) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը: Ի թիվս այլ հարցերի, վերլուծված է ժամանակի հայկական գրական-մշակութային և ազգային կյանքը:

Մայիսի 10. «Արշալույս արարատյանը» (№ 857) գրաբար հրատարակում է Մսեր Մսերյանցի «Բանասիրական» ընդդիմախոսականը: Մսերյանցը բանավիճում է Հովսեփ Գաթըրճյանի «Հիմնական տարբերություն կաթոլիկե և էջմիածնական դավանությանց» աշխատության (Պոլիս, 1864 թ.: Տե՛ս «Ժամանակագրության» նախորդ հատորը, Երևան 1983, էջ 471) մի քանի տեսակետների հետ:

Մայիսի 17. «Մեղու Հայաստանին» (№ 18), Ս. Մարությանցի՝ բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Դավիթ Լինգվիստոն և նորա արած զյուտերը հարավային Աֆրիկայի մեջ» հուշագրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մայիսի 17. «Մասիսը» (№ 901) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը: Ի թիվս այլ հարցերի, բնութագրված է ժամանակի մշակութային-հասարակական կյանքը:

Մայիսի 24. Վենետիկում վախճանվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Դանիել Պոլսյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1819 թ. հունվարի 17-ից, ծնվ. 1794 թ. ապրիլի 8-ին Կուտինայում (այժմ Քյոթահիա. Արևմտյան Թուրքիա):

Միթարյան հոբելյան, Վենետիկ 1901, էջ 221:

Մայիսի 26. Մանդեող ավանում (Mandeure. Կենտրոնական Ֆրանսիա) ծնվեց ֆրանսիացի հայագետ, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն) Ֆրեդերիկ Մակլերը (Frédéric Macler): Վախճ. 1938 թ. հուլիսի 13-ին Մոնտելյաղ ավանում (Montléliard. Կենտրոնական Ֆրանսիա):

«Բազմավեպ», 1938, № 6-9 («Պրոֆ. Ֆրեդերիկ Մակլեր»): **«Հանդես ամսօրյա»,** 1947, № 1, («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»):

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5) գրաբար հրատարակում է Մկրտիչ Տեր-Ստեփանյանի (Տիգրանակերտցի) «Ուղերձ շնորհակալութեան առ Ջալալյան Սարգիս...» և Գաբրիել Կարապետյանի «Ի սգալի մահ վեհազն Տատեան ազգախնամ Յովհաննէս պէյի» բանաստեղծությունները:

Մայիսի 31. «Մասիսը» (№ 903) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 31. Տրապիզոնում (Հյուսիսային Թուրքիա) ծնվեց բնանկարիչ, հոդվածագիր-տեսաբան Վարդան Արիստակեսի Մախոխյանը: Վախճ. 1937 թ. փետրվարին Նիցցայում (Հարավային Ֆրանսիա):

«Բազմավեպ», 1940, № 1 («Վարդան Մախոխյանի նկարները»): **Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի,** Պոլիս, 1938, էջ 306-308: **Շիշմանյան Ռ.,** Բնանկարն ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 289-304:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), Սամվել Կեսարյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Սրբազան քերթութիւն. դիւթիւրամբեան տաղ» բանաստեղծությունը:

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Նորին վեհափառության օծման երկրորդ տարեդարձը» հրապարակախոսական հոդվածը: Գրաբար՝ «Ոտանաւոր բարեպաշտի թագաւորին հայոց Հեթմոյ Բ.» բանաստեղծությունը: Այն Էջմիածնի ձեռագրատանը գտել և համա-

պատասան ծանոթագրություններով հրատարակության է պատրաստել Սարգիս Մանկունին:

Հունիսի 7. «Արշալույս արարատյանը» (№ 859) գրաբար հրատարակում է Մկրտիչ Ջոհրաբյանի «Սիրելի Հայաստան. երգ» պոեմը և ժողովրդական աշխարհաբարով՝ աշուղ Նիրանու «Ասում ես ցամաքիր, ո՞նց ցամաքիմ…» բանաստեղծությունը:

Հունիսի 7. «Մասիսը» (№ 904), ֆրանսիական «Գոլուա» (ի՛մա.«Գաղղիացիներ») լրագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է երգիծական մի հարցազրույց, կապված Վիկտոր Հյուգոյի կյանքի հետ:

Հունիսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն սկսում է հրատարակել «Պտույտ Ալեքսանդրուպոլի շրջակայքում» ուղեգրական ակնարկը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 10. «Հույսը» (№ 33) արևմտահայերեն հրատարակում է «Վիրգիլիոսի դժոխքը» տեսական-գրականագիտական ուսումնասիրությունը և Զարեհ Հարությունյանի «Առ մէգ դաշտացն Հայաստանի» գրաբար բանաստեղծությունը: Հրատարակված է Խորեն վարդապետ Աշըխյանցի «Իններորդ տարեդարձ սահմանադրության» արևմտահայերեն հրապարակախոսական հոդվածը:

Հունիսի 14. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևմտահայերեն հրատարակում է «Համառոտ կենսագրություն Լամարթինի» հոդվածը (արտատպված է «Մասիսից». տե՛ս ներկա հատորը, 1869 թ. մարտի 8) և արևելահայերեն՝«Ա. Հ.»-ի «Մի՛ լար սիրական (նվեր Կ…-ին)» բանաստեղծությունը:

Հունիսի 14. Բաքվում իր գործունեությունն է սկսում Մովսես Ջոհրապյանցի տեսչության ներքո գտնվող իգական դպրոցը՝ «Գրիգոր Լուսավորիչ» անվամբ: Ավանդվում էր հայերեն և ռուսերեն լեզուներ, կրոնագիտություն, թվաբանություն և ձեռագործ: Սկզբնական շրջանում դպրոցն ուներ 25 աշակերտուհի:

«Մեղու Հայաստանի», 1869, № 26 («…խմբագիր»), № 44 («Հարգելի խմբագիր»), 1871, № 37 («Ազգային»):

Հունիսի 14. «Մասիսը» (№ 905) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը:

Հունիսի 17. Թիֆլիսում (Մուղնու «Ս. Գևորգ» եկեղեցու բակում) Հարություն քահանա Սուգանաձյանցի, Ն. Ալադաթյանի, Մ. Սիմոնյանի սատարմամբ, Զաքարիա Գրի-

զորյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում «Գայանյան օրիորդաց ուսումնարանը»: Ավանդվում էր կրոն, հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներ, ազգային և ընդհանուր պատմություն, թվաբանություն, բնագիտություն, վայելչագրություն, եկեղեցական երգեցողություն և ձեռագործ: 1878 թ. ուսումնարանն ուներ ինը դասարան:1921 թ. վերածվելով երկսեռ դպրոցի, գոյատևեց մինչև 1930-ական թվականները: Տարբեր տարիների ընթացքում «Գայանյան օրիորդաց ուսումնարանում» դասավանդել են Գր. Արծրունին, Գ. Բարխուդարյանը, Ս. Պալասանյանը, Լևոն Շանթը, Ս. Աբովյանը և ուրիշներ:

«Մեղու Հայաստանի», 1869, № 22 («Հայտարարություն»), № 23 («Ազգային»), 1870, № 15 («Մարիամյան ուսումնարան»), 1875, № 35 («Գայանյան ուսումնարանի տարեդարձը»):

Հունիսի 20. Իրկեն ավանում (Լիֆլանդիա, այժմ՝ Լատվիական ԽՍՀ) ծնվեց գերմանացի հայագետ, պատմաբան, խմբագիր Պաուլ Ռորբախը (Paul Rorbach): Վախճ. 1956 թ. հուլիսի 19-ին Լանգենբուրգում (Վյուրտենբերգի նահանգ, ԳՖՀ):

Գնորգյան Կ.,Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1957, էջ 646:

Հունիսի 21. «Արշալույս արարատյանը» (№ 860), Մկրտիչ Ջոհրաբյանի՝անգլերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Մեսիա» բանաստեղծությունը:

Հունիսի 21. «Մեղու Հայաստանին» (№ 23) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է աշուղ Շիրինի «Գիշեր ցերեկ արզմանդ քաշելով….» բանաստեղծությունը:

Հունիսի 28. «Մեղու Հայաստանին» (№ 24), Գևորգ Չմշկյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վիկտոր Հյուգոյի «Անջելո» դրաման, որն ավարտվում է նույն պարբերականի № 33-ում (օգոստոսի 30): Մելիք Տեր-Գրիգորյանցի՝բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Կարմիր ոչխար (Վալաքեցվոց վեպ)» պատմվածքը:

Հունիսի 28. «Մասիսը» (№ 907) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Արտավազդի» հերթական «Բանասիրական» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 910-ում (հուլիսի 19): Վերլուծված է ժամանակի գրական-հասարակական և մշակութային կյանքը:

Հունիսի 28. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 25) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գ. Մանդակունու «Հիմնական տարբերություն և իրավախոհ» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 30. «Սիոնը» (№ 6), Մկրտիչ Տեր-Ստեփանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Կենսագրություն Պասկալա» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 12-ում (դեկտեմբեր): Հրապարակված է նաև «Ազատություն» ակնարկը և «Զրուցատրություն աշակերտուհյաց մեջ» թատերական ստեղծագործությունը:

Հունիս-օգոստոս. «Հայկական աշխարհը» (№ 6-8), Թամար Ասլանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Վիկտոր Հյուգոյի «Կլոդ Գեո» վիպասանությունը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 3) գրաբար հրատարակում է երկու առակ «Աղվեսագրքից» և արևելահայերեն՝ Ս. Մարությանցի «Զանգակ» բանաստեղծությունը:

Վերջինիս ստեղծագործությունները «Արարատում» հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Զգացմունք պանդխտին» (1869 թ. № 4, օգոստոս): «Լա՞նք թե խնդանք» (1869 թ. № 5-6, հոկտեմբեր-նոյեմբեր): «Հայ գյուղացիք» (1870 թ. № 10,փետրվար): «Մասիս» (1871 թ. № 8, դեկտեմբեր):

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), Սամվել Կեսարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ամեդե Բոմիեյի «Լամարթին բանաստեղծ. առ բարեկամն իմ դր Ռիտէր» բանաստեղծությունը:

Հուլիսի 3. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 26) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը և Մ. Չարազլյանցի (ի՛մա. Մինաս Չերազ) «Հրաժեշտ» գրական էսսեն:

Հուլիսի 5. «Արշալույս արարատյանը» (№ 861), պարսկերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է մեկ չափածո և մեկ արձակ գեղարվեստական ստեղծագործություն պարսկական գրականության դասական Թոփավալուց: Թարգմանությունն ուղարկվել է Հնդկաստանից:

Հուլիսի 9. «Մասիս» օրաթերթը (№ 387) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Գ. Չարազլյանցի (ի՛մա. Մինաս Գրիգորի Չերազ) «Առ Լուսիկ Մյուհենդիզյանց, ի մահ երկամսյա ուստերն և երկամյա դստերն» եղերերգական պոեմը:

Հուլիսի 19. «Արշալույս արարատյանը» (№ 862) գրաբար հրատարակում է Վիչեն Հոգոցյանի «Առ օրիորիդն Է. Հ.» պոեմը (խմբագրությանն է ուղարկվել Փարիզից) և Թիֆլիսի բարբառով՝ Գյուրջի Նավեի «Նկարագիր գինովի» բանաստեղծությունը:

Հուլիսի 20. «Հույսը» (№ 35) արևմտահայերեն հրատարակում է«Ինչու առաջ չենք երթար» հրապարակախոսական առաջնորդողը (ունի «Ս.Վ.Յ.Փ.» ստորագրությունը) և Խորեն վարդապետ Աշըխյանցի՝«Համառոտ դիտողության մը առթիվ երկու խոսք» ընդդիմախոսականը (պաշտպանում է Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանի «Իրավախոհը» Գ. Մանդակունու՝ «Մամուլում» տպագրված «ցասկոտ» հոդվածից): Հրատարակված է Էդուարդ Ոսկանյանի «Տէր ապավէն իմ» գրաբար բանաստեղծությունը, անգլերեն բնագրից կատարված թարգմանությամբ և «Շեքսպիրի գործերեն քաղվածոյք» խորագրի ներքո, բերված են 25 ասույթներ: Տպված է «Հերձվածող պապություն էջ… գործ աբբա Կեթեի» ընծայականը, որտեղ բարձր է գնահատված այդ աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1869 թ.):

Հուլիսի 26. «Մասիսը» (№ 911) գրաբար հրատարակում է Մ. Չարազլյանցի «Առ զեփիւռ» պոեմը:

Հուլիսի 31.«Սիոնը» (№ 7) գրաբար հրատարակում է «Սրտաշարժ բանք Զաքարեայ հանգուցեալ պատրիարքի ս. Աթոռոյս» բանաստեղծությունը, Խաչատուր Նիկողոսյանի «Հրեա հայը և քրիստոնյա որդի» արևմտահայերեն ակնարկը: Հրատարակված է նաև «Բանախոսություն քանի մի օրիորդաց մեջ» արևմտահայերեն թատերական ստեղծագործությունը:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է «Կենսագրություն Վիկտոր Լանգլուայի» հոդվածը: Գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Կարևորություն բարվոք դաստիարակության. մոր մը մահվան անկողնին վրա ուխտագիր մը» գրական-

մանկավարժական վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի 1870 թ. N 12-ում (դեկտեմբեր):

Օգոստոսի 2. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 26) արևմտահայերեն հրատարակում է [Գևորգ Այվազյանի] «Հայոց պառլամենտ» երգիծական վիպակը:

Օգոստոսի 9. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 32) արևմտահայերեն հրատարակում է Մ. Չարազըյանցի ճառը («Անմահությո՜ւն, դու որ մարդկության վերջալույսին մեջ…»)՝ նվիրված ժամանակի գրական-մշակութային հարցերին:

Օգոստոսի 10. «Հույսը» (№ 36), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Լուի դ' Անտքուրթի «Արշավանք անգղիացվոց յԵթովպիա» պատմական վեպը որն ավարտվում է նույն պարբե-րականի № 42-ում (դեկտեմբերի 10): Պարույր Սիմոնյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է [Ալֆոնս Լամարթինի] «Հովիւ» բանաստեղծությունը և Միհրդատ Էսմերյանի՝ համանման արևմտա-հայերեն թարգմանությամբ՝ «Կրոնավորի մը ծաղրալից երազը» ակնարկը:

Օգոստոսի 15. Այնթափում ծնվեց հոդվածագիր, աստվածաբան-բանասեր (մասնագի-տությամբ՝ բժիշկ) Փառնակ Ադամյանը: Վախճ. 1925 թ. փետրվարի 3-ին, Ուստրում (ԱՄՆ):

Ամերիկահայ տարեցույցը, Բոստոն, 1912, էջ 148: **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 727: **«Հայաստանի կոչնակ»**, 1925, № 7 («Մահազդ»):

Օգոստոսի 16. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 33) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Այվազյանի «Ռևոլյուսիոն մկանց» երգիծական վիպակը:

Օգոստոսի 20. Թեոդոսիայում (Ղրիմ) ծնվեց հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով), խմբագիր, կրթական-մշակութային գործիչ Երվանդ Պալյանը: Վախճ. 1941 թ. Երևանում:

1900 թ. Ժնևում հիմնել և հրատարակել է «Հանդես» տնտեսական, հասարակական-քաղաքական ամսագիրը, 1904 թ. նույն տեղում՝ «Բանվոր» սոցիալիստական, տնտեսական և քաղաքական ամսագիրը: 1905 թ. Բաքվում հիմնել և խմբագրել է «Սոցիալ-Դեմոկրատ» ամսագիրը (հրատարակվել է մի քանի համար), իսկ 1918 թ. նույն տեղում՝ «Շեփոր» քաղաքական օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «D.», «D. Wander», «Վ. Վահու-

նի», «Վ. Վ.», «Լ. Արեգյան», «Ա. Վանանդյան», «Խ. Դիմաքսյան», «Demon» կեղծանուններով:

Պետրոսյան Հ., Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1957, էջ 1-2, **Բարսեղյան Խ.,** Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք 1-ին, Երևան, 1967, էջ 231-240, գիրք 2-րդ, Երևան, 1975, էջ 556-562:

Օգոստոսի 23. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 34) արևմտահայերեն հրատարակում է [Գևորգ Այվազյանի] «Մամլո ծրի ոսոխները» հրապարակախոսական հոդվածը:

Օգոստոսի 23. «Մեղու Հայաստանին» (№ 32) արևելահայերեն հրատարակում է Հայրապետ Ղուկասյանցի «…խմբագիր» հոդվածը: Գրախոսված է Մեսրոպ քահանա Փափազյանցի «Հրահանգ քերականության հայերեն լեզվի» աշխատությունը և բացասական է գնահատված:

Օգոստոսի 23. «Մասիսը» (№ 915) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Մանզումե կրակ կձգե և հրդեհ կկանչե» հրապարակախոսական հոդվածը: Քննադատված է այդ պարբերականի գրական քաղաքականությունը և մանավանդ նրա «միտումնավոր դրությունները» «Մասիսի» վերաբերյալ:

Օգոստոս. Էջմիածնի «Արարատը» (№ 4) գրաբար հրատարակում է Եղիազար արքեպիսկոպոսի «Դիմառնութիւն եւ թուումն մասանց» բանաստեղծությունը և Սիմեոն Մուշեղյանցի «Դատաստան արդարութեան (այգի, թուփ, վարդ, սոխակ, օձ, մանուկ, այգեպան, թագաւոր եւ աստուած)» պոեմը:

Եղիազար արքեպիսկոպոսի գործերը «Արարատում» հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Աղերս առ Տէր» (1869, մայիս, № 1: Յոթնյակների առաջին տառերը ձևացնում են հայկական այբուբենը): «Աղերս առ հոգին սուրբ» (1869, սեպտեմբեր, № 5): «Խրատ այլաբանութեան առ երիտասարդ ոմն» (1869, հոկտեմբեր-նոյեմբեր, № 6-7) և «Հանդէս համբերութեան»: «Դիմառնութիւն» (1870, № 5, սեպտեմբեր):

Օգոստոսի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 36) արևմտահայերեն հրատարակում է [Գևորգ Այվազյանի] «Թափառական հրեա» գրախոսականը: Գրախոսված է և դրական գնահատված Էոժեն Սյուի հիշյալ վիպասանության՝ Կարապետ Ութուջյանի արևմտահայերեն թարգմանությունը:

Օգոստոսի 30. «Մեղու Հայաստանին» (№ 33), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Արդյունավոր ասպարեզ» պատմվածքը:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) գրաբար հրատարակում է Կարապետ Բարունակյանի «Խնդութիւն ընդ երջանիկ դարձ յԵթովպիո… Սահակայ անձնանուէր արքեպիսկոպոսի եւ բարեջան Տիմոթէոս վարդապետի» ներբողական բանաստեղծությունը: Հրատարակված է «Բարեկամություն Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու» արևմտահայերեն բանասիրական հոդվածը և «Բանախոսությունք աղջկանց մեջ» թատերական ստեղծագործությունը:

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ժյուլ Վեռնի «Հինգ շաբաթ օդապարկի մեջ. ճանապարհորդություն երից անգղիացվոց ի Ափրիկե» արկածային վեպը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1872 թ. № 12-ը (դեկտեմբեր) և մնում է անավարտ:

Սեպտեմբերի 1. «Հույսը» (№ 37) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ազգություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է Հարություն-Վաղարշ Վարդանյանի «Քրիստոնեայն ի մահու» գրաբար բանաստեղծությունը, Խորեն վարդապետ Աշըղյանցի «Կրոնի վարդապետության մեջ գրոց հին լեզուն» արևմտահայերեն ուսումնասիրությունը և Արամ Պողոսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, «Նախախնամություն» ակնարկը:

Սեպտեմբերի 11. Ախեռնում (Գերմանիա) ծնվեց գերմանացի հայագետ, աստվածաբան-բանասեր Ավգուստինիոս Մերկը (Augustin Merk): Վախճ. 1945 թ. ապրիլի 3-ին, Հռոմում:

> **«Հանդես ամսօրյա»,** 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»): № 2 («ՀայերենագետԱվգուստինիոս Մերկ»):

Սեպտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 35) արևելահայերեն հրատարակում է Ստեփանոս Նազարյանցի Ներսիսյան դպրոցում արտասանած ճառը «Մեծապատիվ հոգաբարձություն» խորագրով, որտեղ բարձրացված են ազգային կրթության ու գրականության հարցեր: Հրատարակված է Հովհաննես Լալայանցի

«Մեծարգո տեսուչ և հարազատ հայր» ներբողական բանաստեղծությունը, որը ձոնված է Ստ. Նազարյանցին:

Սեպտեմբերի 19. Պոլսում ծնվեց ականավոր երգիծաբան, արձակագիր, հուշագրող, գրական-մշակութային գործիչ, խմբագիր Երվանդ Խաչիկի Օտյանը: Վախճ. 1926 թ. հոկտեմբերի 3-ին Կահիրեում:

1892-1895 թթ. Պոլսում վարել է **«Հայրենիք»** օրաթերթի օգնական-խմբագրի, իսկ 1896-ից՝ խմբագրի պաշտոնը: 1896-1901 թթ. Աթենքում խմբագրել է **«Միություն»** ամսագիրը: 1901 թ. Փարիզում հիմնել և 1902-1906 թթ. Ալեքսանդրիայում շարունակել է խմբագրել **«Ազատ խոսք»** ամսագիրը: 1903-1905 թթ. Ալեքսանդրիայում, նախորդի հետ միաժամանակ, խմբագրել է **«Ազատ բեմ»** շաբաթաթերթը, 1905 թ.՝ **«Օրենք»** շաբաթաթերթը. 1906 թ.՝ **«Կրակ»** պարբերականը: 1907 թ. Կահիրեում հիմնադրել և մինչև 1908 թ. խմբագրել է **«Արև»** ազգային օրաթերթը, 1910 թ. Պոլսում՝ **«Կառափնատ»** երգիծական շաբաթաթերթը: 1911 թ. Պոլսում հիմնել և մինչև 1912 թ. խմբագրել է **«Արևելք»** ազգային օրաթերթը, որի դադարի ժամանակ՝ 1911 թ., **«Լուսին»** օրաթերթը: 1912 թ. Պոլսում հրատարակել է **«Ապուշներու տարեցույցը»**, 1912-1913 թթ.՝**«Սև կատու»** շաբաթաթերթը, 1913-1914 թթ.՝**«Մանանա»** երգիծական շաբաթաթերթը, 1919-1920 թթ.՝ **«Իգնատ աղա»** շաբաթաթերթը, 1921-1922 թթ.՝ **«Երգիծական տարեցույցը»:** 1925 թ. Կահիրեում հիմնում է **«Հայկական սինեմա»** երգիծական շաբաթաթերթը, որը խմբագրում է մինչև իր մահը:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Երօտ», «Պարույր», «Ս. Ժիրայր», «Վահրամ», «Վահրամ Վահրամյան», «Իդիպոս» և այլ կեղծանուններով:

Մակարյան Ա., Երվանդ Օտյան, Երևան, 1965, 526 էջ: **«Բազմավէպ»,** 1969, № 11-12… («Երվանդ Օտյան (ծննդյան 100-ամյակին առթիվ»): **Ճանաշյան Մ.,** Պատմություն արդի հայ գրականության, հ. Ա, Վենետիկ, 1953, էջ 509:

Սեպտեմբերի 20. «Մասիսը» (№ 919) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» հերթական «Բանասիրական» գրական-հրապարակախոսական հոդվածը (բարձրացված են ուսման և դաստիարակության հետ առնչվող հարցեր) և «Սիսակի»՝ «Յոյսն առ լուսին» գրաբար բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 20. «Հույսը» (№ 38) գրաբար հրատարակում է Արշակ Կոմիտասյանի «Յառուակն Հայաստանի» բանաստեղծությունը, Ս.Վ.Յ.Փ.-ի (ի՞մա. Սարգիս վարդապետ Փիլոյան ?) «Երիտասարդ հյուրերն ու ծերունին» պատմվածքը և Գարեգին Սարաֆյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, «Ուրվական մը» ակնարկը:

Սեպտեմբերի 20.- «Կիլիկիա» հանդեսը (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Մանվել-Բարունակ Ութուջյանի] «Բնավորության ազնվությունը» տեսական-գրականագիտական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 16-ում (հոկտեմբերի 30):

Սեպտեմբերի 20. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 39) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Պուպլիի «Ազնիվ բարեկամ» գրական-հրապարակախոսական հոդվածը: Հրատարակված է «Ընտրություն պատրիարքի» երգիծական բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 20. «Մեղու Հայաստանին» (№ 36) արևելահայերեն հրատարակում է «Թոփալի» «Մի քանի խոսք «Արարատ» օրագրի մասին» հոդվածը, որտեղ դրվատված է Էջմիածնի «Արարատի» և նրա թղթակիցներից՝ Ղազարոս Աղայանի գործունեությունը: Բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Ամերիկայի գյուտը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 41-ում (հոկտեմբերի 25):

Սեպտեմբերի 26. Կուտինայում (Քյոթահիա, Արևմտյան Թուրքիա) ծնվեց հայ մեծ երաժիշտ, հայկական ժողովրդական երգերի հավաքող և ուսումնասիրող Կոմիտասը (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան): Վախճ. 1935 թ. հոկտեմբերի 22-ին, Փարիզում (աճյունը Երևան է բերվել 1936 թ. մայիսի 27-ին, հուղարկավորությունը՝ մայիսի 28-ին Երևանի քաղաքային կենտրոնական այգում (այժմ՝ Կոմիտասի անվան զբոսայգի):

Շահվերդյան Ալ., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, Երևան 1959, էջ 352-517: **Հարությունյան Շ.**, Սովետական Հայաստանը 40 տարում (Տարեգրություն), Երևան, 1960, էջ 217, 223: **«Սովետական արվեստ»,** 1969, № 10…(«Կոմիտասի կյանքի և գործունեության համառոտ տարեգրությունը»):

Սեպտեմբերի 27. «Արշալույս արարատյանը» (№ 867) գրաբար հրատարակում է «Տեսիլ. ի կարեվէր հալածյալն Յարութիւն վարդապետ Ալամդարեանց» բանաստեղ-

ծությունը: Վերջինիս երկտողերի առաջին տառերը կազմում են «Ի Մսերայ» բառը և ըստ այդմ մակաբերելի է, որ հեղինակը Մսեր Մսերյանցն է:

Սեպտեմբերի 27. «Մեղու Հայաստանին» (№ 37) արևելահայերեն հրատարակում է Ս. Մարության «Տոն Վարդապետի ի վանս Հառիճոյ» և «Բաղդ» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է «Տարբերություն բանաստեղծության և տաղաչափության» ուսումնասիրությունը և գրաբար՝ Մովսես Քյոմրյուքճյանի «Մաղթանք առ սուրբ երրորդությունն» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել Հովհաննես Աղթամարցու (Բազյան) «Համառոտ ստորագրություն Հայկաձոր և Ոստան գավառաց» ուղեգրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի 1870 թ. № 11-ում (նոյեմբեր):

Հոկտեմբերի 2. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 41) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գևորգ Այվազյանի] «Մամուլ» հրապարակախոսական առաջնորդողը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում և «Հ.»-ի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Հոկտեմբերի 4. «Մասիսը» (№ 921) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Արդեն ծանուցեր էինք…» գրախոսականը (պաշտպանության տակ է վերցված «Ազգային եկեղեցական խնդրույն վրա…» աշխատությունը Անտոն Հասունյանի հարձակումներից: Տե՛ս ներկա հատորը, 1869 թ.) և Ռուսաստանից «Ուսումնական ազգայինի» ուղարկած «Տեր խմբագիր» հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Բնութագրված է Ստ. Նազարյանցի գրական, խմբագրական և հասարակական գործունեությունը:

Հոկտեմբերի 10. «Հույսը» (№ 39) արևմտահայերեն հրատարակում է «Մեր ազգին ընթերցանության ախորժակն ու լրագիրներ» հրապարակախոսական առաջնորդողը և Հակոբ Զարմայրի «Յիշատակ արդարոց» գրաբար բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 10. Շուշիում (այժմ՝ ԼՂԻՄ-ի շրջկենտրոն) ծնվեց պատմաբան-բանասեր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), հոդվածագիր, խմբագիր Բաբկեն վարդապետ Աղավելյանցը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1894 թ. դեկտեմբերի 17-ից: Վախճ. 1916 թ. հունվարի 3-ին, Էջմիածնում:

1913 թ. մինչև մահը խմբագրել է Էջմիածնի «Արարատ» ամսագիրը, որտեղ հանդես է եկել «Աղավելյանց Ղուկաս սարկավագ» և «Բ.Վ.Ա.» ստորագրություններով:

«Արարատ», 1961, № 1-2 («Բաբկեն վարդապետ»): Մատենագիտություն «Արարատ» ամսագրի, Էջմիածին, 1970, էջ 237:

Հոկտեմբերի 11. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 43), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Երիվարն» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 11. «Արշալույս արարատյանը» (№ 868) արևմտահայերեն հրատարակում է Միհրան Թաթուլի «Աբելուհի կամ բարբարոս սիրահարի մը անմեղ զոհը» պոեմը: «Հարգո խմբագիր» խորագիրը կրող արձակ նախաբանում հեղինակը տվել է պոեմի գրության շարժառիթը:

Հոկտեմբերի 18. «Մասիսը» (№ 923) արևմտահայերեն հրատարակում է «Միսակի» հերթական «Տրամախոսությունը», որտեղ բացահայտված են ազգային մշակույթի հետ առնչվող մի քանի հարցեր: Հրատարակված է Մ. Չարազլյանցի «Աղոթք դպրոցական» գրաբար բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 18. «Մեղու Հայաստանին» (№ 40) արևելահայերեն հրատարակում է Ս. Մարությանի «Ինձ հարկավոր չէ» պոեմը:

Հոկտեմբերի 18. «Ծիածանը» (№ 7) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ինչ ընելու ենք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 10-ում (նոյեմբերի 10):

Հոկտեմբերի 18. Պոլսում ծնվեց մշակութային գործիչ, երաժշտագետ, հայ երաժշտության տեսաբան Աբրահամ Գաբրիելի Էպեյանը: Վախճ. 1958 թ. ամռանը իր ծննդավայրում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 821: **Գևորգյան** Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1959, էջ 598:

Հոկտեմբերի 19. Շամախիում, Անդրեաս արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ, Թադևոս քահանա Բուդաղյանցի, Ջավադ Մելիքյանցի, Գրիգոր Այվազյանցի սատարմամբ, իր գոյությունն է սկսում տեղի ծխական դպրոցը: Այն ուներ 12 աշակերտուհի (1 տարի հետո՝ 44), ավանդվում էր կրոն, հայերեն քերականություն, ազգային պատմություն և վայելչագրություն:

«Արարատ», 1869, № 2 («Շամախվո նորաբաց դպրոցն…»): **«Մեղու Հայաստանի»,** 1869, №42 («Մեծարու խմբագիր»), 1875, № 2 («Շամախի»):

Հոկտեմբերի 22. «Ծիածանը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է «Ամեն թռչնոց մսեն ճաշակել ներելի չէ» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 24. Գանձակում ծնվեց լրագրող, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), բանաստեղծ Ջավադ (նաև՝ Ջավադ-բեկ) Բեգլարի Բալուղյանը: Վախճ. 1915 թ. հունվարի 9-ին, Արմավիրում (այժմ՝ ՌԽՖՍՀ Կրասնոդարի երկրամաս):

«Կարիբ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մշակ», 1915, № 4 («Ջավադ Բալուղյան»), № 6 («Ջավադ-բեկ Բալուղյան»), № 7 («Հանգի՜ստ շիրիմիդ, Ջավա՜դ-բեկ»):

Հոկտեմբերի 25. «Մասիսը» (№ 994) գրաբար հրատարակում է Մ. Չարազյանցի «Առ հայրէնանուէրն Խրիմեան…» ներբողական բանաստեղծությունը (այն, Տիգրան Չուխաջյանի ձայնագրմամբ և Մ. Խրիմյանի նկարով, նույն թվականին հրատարակվել է առանձին թերթիկով), Գաբրիել Այվազովսկու՝ «Առ գերապատիւ Սարգիս Վարդապետ Թեոդորեան նամակը» (բացասաբար է ներկայացված Խորեն Գալֆայանի գործունեությունը) և արևմտահայերեն՝«Ս.[իսակի]» «Զվարճալիք» հրապարակախոսական հոդվածը (երգիծաբանորեն քննադատված են Կարապետ Փանոսյանն ու Խորեն Գալֆայանը):

Հոկտեմբերի 25. «Մեղու Հայաստանին» (№ 41) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Ազգային» գրական-հրապարակախոսական առաջնորդողը (Միքայել Տեր-Գրիգորյանցի մահվան առթիվ բնութագրված է նրա հասարակական և գրական-թատերական գործունեությունը): Այս կապակցությամբ տպագրված է Ստ. Նազարյանցի «Մեծապատիվ հանդիսականք» մահախոսականը:

Հոկտեմբերի 25. «Ծիածանը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» «Դու ո՜վ հեզ Մասիս, իզո՜ւր կաշխատիս» երգիծական բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) աշխարհաբարով հրատարակում է «Սեյադ ծերունի երգչի» «Տրտունջ Սեյադի» բանաստեղծությունը և Մովսես Կյոմրյուքճյանի «Առ տրտնջողն» պատասխանը: Երկուսի առիթով էլ՝ տողատակերում տրված է նրանց գրության բանասիրական պատմությունը:

Հոկտեմբեր-նոյեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 6-7) արևելահայերեն հրատարակում է Մեսրոպ Սմբատյանցի «Բնեռաձև արձանագրություն ի Արմավիրա» հոդվածը (կից տրված է արձանագրության ընդօրինակությունը): Հրատարակված է Փիլիպոս Նավասարդյանցի «Իմ ծաղիկ աշնան» բանաստեղծությունը (մյուսը՝ «Աստվածարեալ Հայրապետ եւ բազմագումար հանդիսականք» խորագրով, անդ, 1869 թ. հունիս № 2, գրաբար), հին տաղարանից հանված «Տաղ վասն չախուի» չափածո ստեղծագործությունը և գրաբար՝«Աղուէս եւ խեցգետին» առակը:

Նոյեմբերի 1. «Հույսը» (№ 40) արևմտահայերեն հրատարակում է «Կրոնական փիլիսոփայություն. սեր և մարդասիրություն» հրապարակախոսական առաջնորդողը Ս.Վ.Յ.Փ.-ի (հ՛մա. Սարգիս վարդապետ Փիլոյան ?)՝«Ազգին վրա ընդհանուր տեսություն մը» հոդվածը, Արշակ Կոմիտասյանի «Տէր լոյս իմ» գրաբար բանաստեղծությունը: Էդուարդ Ոսկանյանի՝ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Անապատին մանանայն» նովելը և Հակոբ-Զարմայր Այվազյանի՝ համանման թարգմանությամբ՝ «Աղեքսանդրիո ամֆիթատրոնին մեջ գազանամարտ մը» պատմվածքը:

Նոյեմբերի 1. «Եփրատը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է [Սիմոն Ֆելեկյանի] «Մրմունջք Եփրատա» բանաստեղծությունը և անստորագիր՝երկու հանելուկ:

Բանաստեղծությունները, որոնք պարբերաբար սկսում են հրապարակվել պարբերականում և ժամանակի ոչ այնքան նշանավոր մարդկանց գրչի արգասիքն են, ունեցել են հետևյալ հաջորդականությունը. «Նվեր սրտի առ Հայրիկն Խրիմյան» (հեղ. Ստեփան Գասպարյան), «Նվագ սիրատենչ առ Հայրիկն Խրիմյան» (հեղ. Տիգրան Նահապետյան), «Առ Հայրիկն Խրիմյան» (հեղ. Գ. Հովիկյան). անդ, № 3 նոյեմբերի 8: «Հրաժեշտ պանդուխտի առ Եփրատ» (հեղ. «Վ». անդ, № 4 նոյեմբերի 12): «Հայուն երազը» (անստ. անդ, № 5 նոյեմբերի 15): «Հառաչանք Եփրատա, նոր տարի» (անստ. անդ, 1870, № 19, հունվարի 3):

Հանելուկները, որոնց թվում կան երկու տողից մինչև 14 քառյակ ունեցողները, «Եփրատում» սկսել են հրատարակվել նոյեմբերի 1-ից (№ 1) մինչև տարվա վերջ՝ դեկտեմբերի 31-ը (№ 18), անընդմեջ:

Նոյեմբերի 1. «Ծիածանը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է «Թաթուլի» (հ՛մա. Միհրան Թաթուլ) «Ձոն առ Հայրիկն» բանաստեղծությունը, որը «եղանակել է»

Հակոբ Իսպիրյանը: Հակոբ Աթթարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, սկսվում է *** աբբայի «Ճիզվիտ» վեպի թերթոնային հրատարակությունը: Պարբերականի 1870 թ. № 60-ում (հունվարի 12) այն դեռ շարունակվում էր:

«Ծիածանի» հետագա համարները մեր գրապահոցում չլինելու պատճառով ուրիշ մանրամասներ ճշտել չենք կարողացել (տե՛ս ներկա հատորը՝ 1870թ.):

Նոյեմբերի 1. Պոլսում Սիմոն Ֆելեկյանի խմբագրությամբ (նրա բացակայության դեպքում այդ պարտականությունը վարում էր Գ. Ֆեսճյանը), սկսում է հրատարակվել «Եփրատ» ազգային-բանասիրական և առևտրական երկշաբաթաթերթը: Պարբերականը դադարում է 1871 թվականին:

Նոյեմբերի 4. «Մասիս» օրաթերթը (№ 448) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ճանապարհորդություն դեպի Կեյվե» ուղեգրությունը (հեղինակ՝***), որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Նոյեմբերի 5. «Ծիածանը» (№ 14) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Թաթուլի» «Մի՛ հասակներն, այլ խելքերը չափեցեք» հրապարակախոսական հոդվածը (կոչ է անում երիտասարդությանը զբաղվել գրականությամբ, «մտավորական և բարոյական աշխատությամբ») և Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Մեծապատիվ հանդիսականք» ճառը (տե՛ս **Մ. Պեշիկթաշլյան,** Երկերի լիակատար ժողովածու, Երևան 1987, էջ 439-441: Այստեղ այն զետեղված է «Օրթագյուղի աղքատախնամ ընկերության ի նպաստ» խորագրի ներքո և արտատպված է զգալի տարբերություններով):

Նոյեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 43), «Տիկին Ք.»-ի (ի՛մա. Քեթևան Տեր-Միքաելյանց) գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Պոլ Հեյզեի «Մայր և որդի» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 48-ում (դեկտեմբերի 13):

Նոյեմբերի 8. «Արշալույս արարատյանը» (№ 870) արևելահայերեն հրատարակում է ամերիկահայ Բ. Վարդուկյանի նամակը, որտեղ վարդագույն երանգներով պատկերված է ամերիկահայոց գրական-հասարակական կյանքը և «ուրիշ հայի մը» պատասխանը, որտեղ հերքվում է այդ ամենը:

Նոյեմբերի 12. «Եփրատը» (№ 4) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Սիմոն Ֆելեկյանի] «Մեր հայոց ազգը ինչո՞ւ առաջ չերթար» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 8-ում (նոյեմբերի 26):

Նոյեմբերի 14. «Ծիածանը» (№ 22) արևմտահայերեն հրատարակում է Նշան Շիրվանյան Վանեցու «Առ ամենապատիվ հայրենանվեր Ս. Հայրիկն Խրիմյան…» ներբողական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 15. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 47) արևմտահայերեն հրատարակում է [Գևորգ Այվազյանի] «Ակադեմիական ժողովք» երգիծապատումը և Մ. Չարազյանցի՝ «Սրբազան հայր» ուղերձը:

Նոյեմբերի 18. Զմյուռնիայում Գարեգին Բաբազյանի և Գալուստ Կոստանդյանի նախաձեռնությամբ, Խ. Մարկոսյանի, Տ. Կոստանդյանի, Գ. Եսայանի, Հ. Միրզա Վանանդեցու և այլոց անդամակցությամբ, իր գոյությունն է սկսում տեղի «Հայ ընթերցատունը», որի նպատակն էր «Ազգին մեջ ընթերցանություն և ուսմունք տարածել, զանազան օգտակար հանդեսներ և գրքեր ունենալ՝ ի ծառայություն հասարակության»: «Հայ ընթերցատունը» կազմակերպում էր նաև հրապարակային դասախոսություններ, որտեղ պարբերաբար հանդես են եկել Մ. Մամուրյանը, Գր. Չիլինկիրյանը, Գր. Մսերյանը, Գ. Սրվանձտյանը, Կ. Սիպիլյանը և ուրիշներ: Գրական-մշակութային այս կազմակերպությունը գոյություն ունեցավ մինչև 1922 թ. կեսերը:

> **«Հանդես ամսօրյա»,** 1893, № 7 («Զմյուռնիո հայ ընթերցատունը»): **Քոսյան Հ.,** Հայք ի Զմյուռնիա ի շրջակայս, հ. Ա, Վիեննա, 1892, էջ 193-203: **Սիմոնյան Պ.,** Հայկական Զմյուռնիան, Փարիզ, 1936:

Նոյեմբերի 20. «Հույսը» (№ 41), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Անդրանիկության իրավունքը» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված են նաև «Ալեքսանդրի երդումը» և «Հագուստին պատիժը» թարգմանածո նովելները:

Նոյեմբերի 22. «Մեղու Հայաստանին» (№ 45) արևելահայերեն հրատարակում է «Լուցիանի» (Պետրոս Սիմոնյանց ?) «Ստեփանեն իբրև հասարակական գործակատար և Հայասերը իբրև նորա փաստաբան» հրապարակախոսական առաջնորդողը (բացասաբար է գնահատված Խորեն Ստեփանեի և նրա «Հայկական

աշխարհի» գործունեությունը): Հրատարակված է նաև «Տխուր ժամեր» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 22. Արսլանբեկ գյուղում (Իզմիտի շրջան, Արևմտյան Թուրքիա) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, գրականագետ, բանասեր, բանահավաք Մուշեղ եպիսկոպոս Հայրապետի Սերոբյանը: Արմաշի միաբանության անդամ էր 1892 թ. սեպտեմբերի 27-ից, եղեռնամահ՝ 1915 թ.:

«Մուշեղ եպիսկոպոս» և «Վարդ-Մելիք» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Մշակ», 1908, № 86 («Մուշեղ եպիսկոպոս»), № 122 («Մուշեղ եպիսկոպոս Սերոբյան»), **Թեոդիկ,** Ամենուն Տարեցույցը, 1913, էջ 337:

Նոյեմբերի 24. «Ծիածանը» (№ 29) արևմտահայերեն հրատարակում է «Պարույրի» «Հայրիկ Խրիմյան» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 26. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 48) արևմտահայերեն հրատարակում է «Բանասիրական» հոդվածը (հեղ. «Հ» =«Հրաչյա»=Ռեթևոս Պերպերյան): Վերլուծված է ժամանակի հասարակական և գրական-մշակութային կյանքը:

Նոյեմբերի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 49), Գևորգ Պուպլիի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, սկսում է հրատարակել Հյուկընենի «Շեքսպիր» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն շաբաթաթերթի 1870 թ. № 56-ում (հունվարի 25): Հրատարակված է Թովմաս Թերզյանի «Ի վաղամեռիկ օրիորդն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գ. Շահինյանի «Հորդոր ազգասիրության» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում, «Ազնվականություն» ակնարկը, որտեղ արձակ շարադրությամբ բերված է Իվան Կռիլովի «Սագեր» առակը: Տպագրված է Մովսես Քյոմրյուքճյանի «Անապարծ ազնվական մը» արևմտահայերեն բանաստեղծությունը և Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «Երգ ընդ գալուստ օգոստափառ կայսեր Աւստրիո» գրաբար ներբողը:

Նոյեմբեր-դեկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 11-12), Եզիաբեթ Բայիսողոյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ժորժ Զանդ», ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի 1870 թ. № 1-ում (հունվար):

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Գալուստ Տեր-Բաղդասարյանցի «Ձայն հարազատի» բանաստեղծությունը և երկու հանելուկ, որոնք հրատարակության է ներկայացրել Եղիա Զալալյանը:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է «Ծննդյան հանդեսը ի արևմուտս» հոդվածը: Ալ. Մանձոնիի՝ այս առթիվ գրված բանաստեղծության գրաբար թարգմանությունը տալուց հետո, նկարագրված են արևմտյան մի քանի ժողովուրդների ազգային տոնակատարությունները ծննդյան տոների ժամանակ:

Դեկտեմբերի 1. «Ծիածանը» (№ 30) արևմտահայերեն հրատարակում է Թ. Ունճյանի «Տեսեք ինչ մնաց» երգիծական պոեմը:

Դեկտեմբերի 1. Պոլսում պանդուխտ թամզարանցիների ջանքերով Մատթեոս Իզմիրլյանի ատենապետությամբ (անդամների մեջ հիշատակվում են Խրիմյան Հայրիկի, Ռեթևոս Պերպերյանի, Գևորգ Մազմանյանի և այլոց անունները), իր գոյությունն է սկսում «Լամբրոնյան ընկերությունը», որն իր առջև նպատակ է դնում «Թամզարայի մեջ ցերեկյա և գիշերօթիկ վարժարան մ'ունենալ»: 1870 թ. ընկերության ջանքերով ու ֆինանսական միջոցներով Թամզարայում բացվում է երկսեռ համանուն մի վարժարան: «Լամբրոնյան ընկերությունը» և «Լամբրոնյան երկսեռ վարժարանը» 1879 թ. դադարում են գոյություն ունենալ:

Պողոսյան Ե.,Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 246-248:

Դեկտեմբերի 6. «Մեղու Հայաստանին» (№ 47) արևելահայերեն հրատարակում է Հովհ. Լալայանցի «Բանտարկյալ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 6. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 50) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Ի վերահաստատություն ազգային սահմանադրության» բանաստեղծությունը: Հրատարակված է Սրապիոն Հեքիմյանի՝ շաբաթաթերթի խմբագրությանն ուղղված 1869 թ. նոյեմբերի 15/27 թվակիր նամակը, որտեղ նա բողոքում է իր թարգմանությունների նկատմամբ ցուցաբերվող կամայականությունների դեմ:

Դեկտեմբերի 6. «Արշալույս արարատյանը» (№ 872) արևմտահայերեն հրատարակում է Արմենակ Կոստանդյանի «Առ վաղամեռիկ բարեկամն իմ, Գրիգոր Տիլպերյան» եղերերգական բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 6. Շուլավերում (Վրացական ԽՍՀ) ծնվեց հոդվածագիր, բանաստեղծ, արձակագիր, գրաքննադատ Գրիգոր Բալասանյանը:

1906 թ. Թիֆլիսում հիմնել և մեկ տարի խմբագրել է «Զարկ» շաբաթաթերթը: 1908 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1909 թ. խմբագրել է «Գրականություն և կյանք» շաբաթաթերթը (մեկ համար էլ՝ 1911 թ.): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վաչագան» կեղծանունով:

«Մշակ», 1910, № 144 («Գրիգոր Բալասանյանի…հոբելյանը»), 1913, № 246 («Մի համեստ հոբելյան», «Գրիգոր Բալասանյանի հոբելյանը»): **Ստեփանյան Գ.,**Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 174:

Դեկտեմբերի 10. «Հույսը» (№ 42), Գարեգին Սարաֆյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Տարվույն վերջին գիշերը և կենաց երկու ճամբաները» ակնարկը: Հրատարակված են «Կրակապաշտության ծագումը» անստորագիր ուսումնասիրությունը և «Արամյան տաբեցույց համազգային» գրախոսականը:

Դեկտեմբերի 13. «Մասիսը» (№ 931), «Արմավրեցու» գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Աբովյան» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Թարգմանությունը կատարված է Ֆրիդրիխ Բոդենշտեդի «Հազար ու մի օր արևելքում» գրքից: Վերջում տրված է նրա համառոտ կենսագրությունը:

Դեկտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 48), Հովհ. Լալայանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Հարտվիգի «Ծովը և նրա կյանքը» ստեղծագործությունից մի հատված, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Դեկտեմբերի 16. «Ծիածանը» (№ 42) արևմտահայերեն հրատարակում է «Երես» հրապարակախոսական առաջնորդողը:

Դեկտեմբերի 20. «Մեղու Հայաստանին» (№ 49) արևելահայերեն հրատարակում է Հայրապետ Ղուկասյանցի «Հայտարարությունը» (տեղեկացվում է, որ թարգմանվում է Ժան Մասեի «Մի կտոր հացի պատմությունը» վեպը և այս առիթով բնութագրված է «ֆրանսացի հեղինակն ու յուր գործքերը»): Հրատարակված է «Հաբեթ Լուկիասի» (ի՛մա. Հայրապետ Ղուկասյանց) «Իմ կոշիկների միտքս բերածը» երգիծական բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 27. «Մեղու Հայաստանին» (№ 50) արևելահայերեն հրատարակում է Պետրոս Սիմոնյանցի «Մեղուի հաշիվը» հրապարակախոսական հոդվածը, Մարտիրոս Աբրահամյանցի «Պարտեզ» և Նիկողայոս Լալայանցի «Զգացող» բանաստեղծությունները:

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) գրաբար հրատարակում է «Բանասիրական» հոդվածը: Վերլուծված է Հոմերոսի կյանքն ու գործը:

–––Պոլսում ծնվեց բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (ռուսերենից և ֆրանսերենից՝ հայերեն), դրամատուրգ, կրթա-մշակութային գործիչ Լևոն Շանթը (Լևոն Սեղբոսի Նահաշպետյան, հետագայում հոր անունով՝ Սեղբոսյան): Վախճ. 1951 թ. նոյեմբերի 29-ին, Բեյրութում:

«Լ.Ս.», «Ցոլք» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Տերտերյան Ա., Լևոն Շանթ, սեռի և դասալքության երգիչը, Էջմիածին, 1913, 59 էջ: **Սարգսյան Խ.**, Լևոն Շանթ, Երևան, 1950, 35 էջ: **Լևոն Շանթ**, կյանքը և գործը, Բեյրութ, 1969, 97 էջ: **Լևոն Շանթ**, Ընտիր երկեր, Երևան, 1968, 534 էջ:

–––Պոլսում ծնվեց գրական քննադատ, լեզվագետ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Տիգրան Ելքենճյանը: Վախճ. 1909 թ. հունիսի 17-ին, Այ-Ստեֆանոյում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 53:. 1913, էջ 63-64: 1921, էջ 37:

–––Աղաբազարում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց պատմաբան, խմբագիր Վահան Շահրիմանը: Վախճ. 1922 թ. հուլիսի 12-ին, Պոլսում:

1919 թ. Պոլսում հիմնել և մինչև 1920 թ. խմբագրել է «Արագած» պատկերազարդ շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սեդրակ Գուրթյան» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 416:

–––Բինկյան գյուղում (Ակնի գավառ, Արևելյան Թուրքիա), Աստվածատուր Խ. Մեծատուրյանի սատարմամբ, հիմնվում է կրթա-մշակութային «Սանուց ընկերությունը»: Այն գոյատևեց մինչև դարավերջ:

«Հանդես ամսօրյա», 1964, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

–––Կեսարիայում (Կենտրոնական Թուրքիա), Ա. Երեցյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Լուսավորչյան ընկերությունը»:

Կեսարիայի քաղաքական ժողովը 1883 թ. պաշտոնապես արգելում է նրա գոյությունը:

«Հանդես ամսօրյա», 1967, № 7-9 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

–––Սաղիանում (Շամախի, այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ), Սարգիս վարդապետ Միրզաբեկյանցի, Սահակ քահանա Հոնանյանցի, Հարություն Մխիթարյանցի, Հովհաննես Խալափյանցի ջանքերով իր գոյությունն է սկսում վանքի արական դպրոցը: Այն դադարում է 1875 թ. մայիսին:

«Մեղու Հայաստանի», 1872, № 18 («Նամակ Շամախուց»), 1874, № 31 («Հարցո խմբագիր»), № 47 («Ազգային»), 1875, № 19 («Ազգային»):

–––Թիֆլիսում ծնվեց հոդվածագիր, հուշագրող, բանաստեղծ (մասնագիտությամբ՝ դերասան), ՀՀ վաստակավոր արտիստ (1934 թ.) Արշակ Հակոբի Հարությունյանը: Վախճ. 1936 թ. հուլիսի 27-ին Երևանում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 170:

–––Հին Նախիջևանում ծնվեց հոդվածագիր, խմբագիր, թարգմանիչ Արշակ Եղիգարյանը:

1908 թ. Թիֆլիսում հիմնել և մեկ տարի խմբագրել է «Միտք» ազգային-քաղաքական լրագիրը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 656: **Ստեփանյան Գ.,** Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 296:

–––Վլադիկավկազում (այժմ՝ Օրջոնիկիձե) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր Բագրատ եպիսկոպոս Վարդազարյանը:

1904 թ. Նոր Նախիջևանում հիմնել և մինչև 1908 թ. խմբագրել է «Նոր Ջուղայի լրաբեր» թերթը: Այդտեղ և ժամանակի մյուս պարբերականներում հանդես էր գալիս «Բագրատ եպիսկոպոս» ստորագրությամբ:

«Արարատ»,1913, № 8-9 («Մայր Աթոռ»: **«Տաթև (կոնական տարեցույց)»,** Հալեպ, 1927, էջ 75-102 («Շինարար և անշահախնդիր հոգևորականը»):

–––Պարտիզակում ծնվեց հուշագրող, հոդվածագիր Ասատուր Պետիկյանը: Վախճ. 1957 թ. հոկտեմբերի 6-ին Կահիրեում:

Գնորգյան Կ.,Ամենուն տարեգիրքը, էջ 603:

–––Ալեքսանդրապոլում ծնվեց մանկավարժ, լրագրող Թադևոս Խզմալյանը: Վախճ. 1918 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 64:

–––Ագուլիսում (այժմ՝ Նախիջևանի ԻԽՍՀ, Օրդուբադի շրջան) ծնվեց արձակագիր, բանաստեղծ, կրթական-մշակութային գործիչ, լեզվաբան Հարություն Թումանյանը: Վախճ. 1943 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 379-380:

–––Մամուգա գյուղում (Չահարմահալի գավառ, Պարսկաստան) վախճանվեց աշուղ Հարթուն օղլին (Հովհաննես Հարությունի Հարությունյան): Ծնվ. 1789 (?) թ. Աստապատ գյուղում (Սպահանի նահանգ, Պարսկաստան):

Ա. Երեմյան, Աշուղ Հարթուն օղլի, Նոր Ջուղա, 1920, 237 էջ: **«Բազմավեպ»,** 1922, № 11-12 («Պարսկահայ աշուղներ. աշուղ Հարթուն օղլի»):

–––Բինկյան գյուղում (Ակնի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, հուշագրող Գեորգ արքեպիսկոպոս Կարապետի Արսլանյանը: Վախճ. 1951 թ. հունիսի 25-ին Պոլսում:

«Սիոն», 1951, № 7 («Տ. Գեորգ արքեպիսկոպոս Արսլանյան…»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 116:

–––Գաղատայում (Անկյուրա. Կենտրոնական Թուրքիա) ծնվեց հոդվածագիր, մանկավարժ Վարդուհի Հովսեփի Աղանալյանը: Վախճ. 1942 թ. դեկտեմբերի 14-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1943, № 2 («Տիկին Վ. Աղանալյանի հուղարկավորությունը»), № 7 («Տիկ. Վ. Աղանալյան»):

–––Վենետիկում, Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և առաջաբանով հրատարակվում է Վիկտոր դը Լաբրատի «Քերթուած ծառոյ» պոեմը: 14 էջ: Նախապես հրատարկվել էր «Բազմավեպի» 1868 թ. № 3 (մարտ) և № 4 (ապրիլ) ամսագրերում:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմա-գեղարվեստական արձակի առաջին հատորը: 540 էջ: Երկրորդ հատոր՝ 1870 թ., 567 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1920 թ. (Ա հատոր, 480 էջ) և 1921 թ. (Բ հատոր, 490 էջ): Նույնը համառոտ՝ «Գրական ցոլքեր» մատենաշարով (№ 3), 1946 թ., 166 էջ: Ամբողջ «Հուշիկք….»-ը հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1862 թ. հունվարից սկսած, «Հայագիր» ընդհանուր խորագրի ներքո:

Առաջին հատորի «Թեոդորոս Սալհունի» գլուխը 1872 թ. թարգմանվում է ֆրանսերեն («թարգ. Մ. Հեքիմյան») և առանձին գրքով հրատարակվում Վենետիկում (˝Theodore de Salahounien, Martur Armenien". Venise, p. 45): Նույն հատորի «Կարմիրն Վարդան» գլուխը իտալերեն թարգմանությամբ («թարգ. Էմիլիո Տեզա»), 1875 թ. հրատարակվում է Վենետիկում (˝Vartano il Grande… Un epistodio della Storia Armenia", p. 58):

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, հրատարակվում է Վիտտորիո Ալֆիերիի «Սաւուղ» ողբերգությունը: 61 էջ:

–––Վենետիկում, գրաբար տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Բառգիրք յաշխարհաբառէ ի գրաբառ, յաւելուածովք ոճոյ և դարձվածովք նախնեաց» աշխատությունը: 575 էջ:

Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուի» աշխատության երկրորդ հատորը հրատարակության պատրաստելու համար (որը հեղինակի մահվան պատճառով անավարտ էր մնացել), ի թիվս այլ երիտասարդ վարդապետների, ընդգրկված էր նաև Էդուարդ Հյուրմյուզյանը: Վերջինիս հանձնարարված էր լրացնել և ավարտին հասցնել այդ բառարանի՝ աշխարհաբար բառերը գրաբարով մեկնաբանող հատվածը, ինչպես նաև հին մատենագիտության մեջ հանդիպող ոճերն ու դարձվածքները արևմտահայերենով բացատրող հավելվածը: Հյուրմյուզյանը ոչ միայն խնամքով արել է այդ ամենը, այլև, մանավանդ երկրորդ բաժնում, կատարել է զգալի հավելումներ ու ճշգրտումներ: Այնպես որ, երբ 1769 թ. Վենետիկում հրատարակվեց Մխիթար Սեբաստացու «Բառգիրք հայկազեան լեզուին» (Բ. հատոր), նրա մի զգալի մասը հանդիսանում էր երիտասարդ վարդապետի աշխատանքի արդյունքը: Այդ մասին է ահա, որ վերստին լրացնելով ու ամբողջացնելով, Հյուրմյուզյանը հրատարակել է որպես իր գործը՝ նախորդից տարիներ հետո, և դրա հետևանքով էլ այն ունի «Բ տիպ» նշումը:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է Խոսրով Անձևացու «Մեկնութիւն աղօթից պատարագին» աշխատությունը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները Ղևոնդ Ալիշանի: 67 էջ:

–––Վենետիկում, Օգենտինիոս Գուրգենյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Բարբիի «Տարերք

իմաստասիրության ընդարձակ» աշխատության Ա հատորը («Հոգեխոսություն»): 270 էջ:

Բ հատոր («Բանախոսություն»), 218 էջ: Գ հատոր («Աստվածախոսություն»), 263 էջ: Դ հատոր («Բարոյախոսություն»), 98 էջ: Ե հատոր («Պատմություն իմաստասիրության»), 164 էջ՝ նույն թվականին:

–––Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ հունարեն և ֆրանսերեն բնագրերից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և ծանոթագրություններով, հրատարակվում է «Ճաշակք հին և նոր ողբերգութեանց ի հելլենաց և յարդեաց» ժողովածուն: 615 էջ:

Զետեղված են. Սոֆոկլեսից. «Էդիպոս թագավոր», «Անտիգոնե», «Էլեկտրա»: **Ռասինից.** «Գոթողիա», «Բրիտանիկ», «Միհրդատ», «Իփիգենի յԱւլիս»: **Ալֆիերիից.** «Սաւուղ արքա Իսրաելի»: **Վոլտերից.** «Ալզիրա», «Մեսրոպէ»:

–––Վենետիկում, Երվանդ Ոսկանյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Դավիթ Պրիերի «Բանալի բնական երևույթից» աշխատությունը: 640 էջ:

–––Թիֆլիսում, Հովհաննես Միրզաբեկյանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆենիմոր Կուպերի (?) «Սիրի՛ր թշնամիներիդ. պատմություն գաղթականների կյանքից Հյուսիսային Ամերիկայում» վիպակը: 150 էջ:

Նույնը՝ լեզվաոճական որոշ փոփոխություններով, Բաքու, 1873 թ., 152 էջ:

–––Թիֆլիսում, արևելահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Մեսրոպ Փափազյանցի (հայ նոր գրականության դասական Վրթանես Փափազյանի հոր) «Հրահանգ քերականության հայերեն լեզվի» աշխատությունը: 149 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Գևորգ Բարխուդարյանցի «Սեր կամ մահ» ողբերգությունը: 157 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթում, 1869 թ. փետրվարից սկսած:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Գևորգ Աբովյանի «Համառոտություն հայոց ազգին պատմության» աշխատությունը: 277 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1877 թ. (265 էջ), 1884 թ. (265 էջ) և 1894 թ. (270 էջ):

Ընդգրկում է պատմական Հայաստանի համառոտ պատմա-աշխարհագրությունը, սկսած հին ժամանակներից մինչև XIV դարը՝ Կիլիկիայի թագա-

վորության անկումը։ Աշխատությունը հրատարակության է պատրաստել հեղինակի եղբայրը՝ Բաղդասար Աբովյանը։

–––Մոսկվայում, Գ. Մկրտումյանի՝ բուլղարերեն բնագրից կատարած արևելահայերեն փոխադրությամբ, հրատարակվում է [Լյուբեն Կարավելովի «Տաճիկ փաշա (բուլ- գար միանձնուհու հիշատակարանը)» պատմվածքը։ 33 էջ։

–––Պոլսում, Միհրան-Թաթուլ Թոզլյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Տիկին Մոնսորո» վեպի առաջին հատորը։

Երկրորդ հատոր (186 էջ) և երրորդ հատոր (210 էջ) անդ նույն թվականին։

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Տիգրանյանի «Զեյթինի գործերը, Քյուրդիստանի և Մուշի վանորեից և վարժարաններու վիճակը» գրքույկը։ 16 էջ։

–––Պոլսում գրաբարախառն արևմտահայերենով հրատարակվում է Ս.Տ.Ս. Տարոնցու «Սահակ Պարթև կամ հայրապետ Մշո» պատմական ողբերգությունը։ 51 էջ։ Վերջում «Սանիկն հայոց» կեղծանունով զետեղված է նույն հեղինակի «Առ հայեր» արևմտահայերեն բանաստեղծությունը։

–––Պոլսում, Եգնիկ Ապահունու՝ բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Բարեպաշտ Մարիամը» վիպակը («Նվեր կաղանդի» ընդհանուր խորագրի ներքո)։ 52 էջ։

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Բարսեղ Այազմայանի «Աստղիկ հայրենյաց, կամ աղբերակունք ազգային առաջադիմության» ժողովածուն։ 94 էջ։

–––Պոլսում, գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Ազարյանի ճառը «Ատենաբանութիւն» խորագրով։ 12 էջ։

Լրիվ վերնագիրն է. «Ատենաբանութիւն Գերապայծառ Տեառն Ստեփաննոսի վարդապետի Ազարեան, պալատական երիցու Սուրբ Պապին Տեառն մերոյ Պիոսի Թ. խօսեցեալ առ սրբազումար հարս ազգային սիւնհոդոսիս և առ հաւատացեալ ժողովուրդս ի 5 յուլիս ամսոյ 1869, ի տօնի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ի կաթողիկոսական յեկեղեցւոջ նուիրելոյ յանուն Մարիամու Աստուածամօր»։

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Առ հայրենանվերն Խրիմյան, պատրիարք Կոստանդնուպոլսո ողջույն» գրքույկը:

«Այս անունով խիստ գեղեցիկ և Խրիմյան սրբազան հոր սիրալիր պատկերովը զարդարված տետրակ մը ի լույս ընծայվեցավ. կպարունակե յուր մեջ Մ. Չարազյան էֆենդիի (ի՛մա. Մինաս Չերազ- Ս. Շ.) մեկ գողտրիկ բանաստեղծությունը, զոր Տիգրան Չուխաջյան էֆենդի յուր՝ ազգիս ծանոթ եղող ձայնագրության հմտությամբը ոգևորված, կնվիրե նվագն հայոց սրտերուն» (տե՛ս ներկա հատորը, 1869 թ. հոկտեմբերի 25): «Եփրատ», 1869, № 3 (նոյեմբերի 8):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նշան Շիշմանյանի «Արա Գեղեցիկ» դյուցազներգությունը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հ. Բոլատի «Հարսանիք մը» վեպը: 140 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Կարապետ Շահնազարյանի «Ուսումն քրիստոնեական հաւատոյ, ըստ վարդապետութեան առաքելական, մի սուրբ և կաթողիկէ եկեղեցւոյ Հայաստանեայց» աշխատությունը: 296 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Էնֆիեճյանի «Ուղերձ Կոստանդնուպոլսո Կաթողիկյա հայոց առ մերձակա Սինհոդոսն գումարելի ի գերերջանիկ կաթողիկոսե Կիլիկիո» աշխատությունը: 108 էջ:

–––Պոլսում, Հովսեփ Գավաֆյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակվում է Ղ. Մյուլբախի «Պոնեռ միլիոնավոր (ի՛մա. միլիոնատեր- Ս.Շ.). թշվառ գործավորք և ընչատյաց սիրահարք» վեպի առաջին հատորը: 135 էջ:

Երկրորդ հատոր՝ 1869 թ., 137 էջ: Երրորդ հատոր՝ 1870 թ., 160 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գիրքը: 288 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տիրան Փափազյանի «Պետրոս և Սելիմա, կամ Ապտերի լերանց ստորոտի զույգ մը անմեղաց շիրիմքը» վիպակը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ.Ս. Գավաֆյանի «Մրցանակ կաղանդի առ ուսումնասեր մանկունս» գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուն: 48 էջ:

---Պոլսում, Տիրան Թերզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Նոթր դամ դը Պարի (Փարիզի մայր եկեղեցին)» վեպի Ա հատորը: 116 էջ:

Հետագա հատորները չեն հրատարակվել:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ազգային եկեղեցական խնդրույն վրա բերնուց սովորելու համառոտ խոսակցություն մը, հարցմամբ և պատասխանով» գրքույկը (հեղինակ՝ Մ.Մ.): 38 էջ: Իր հակակաթոլիկ գաղափարաբանության համար, նույն թվականի սեպտեմբերին Պոլսի հայ կաթոլիկների կաթողիկոս Անտոն-Պետրոս Թ. Հասունյանը բանադրում է գրքույկը:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հարություն Րուպիյանի «Ազգային եկեղեցական խնդրույն վրայոք համառոտ խոսակցության մը համառոտ պատասխան» գրքույկը: 25 էջ:

---1869 (?) Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Արկածք. ազնիվ տղային և թռչնույն հետաքրքրական վեպը» պատմվածքը:

Նույն անփոփոխ՝ 1871 թ., 79 էջ:

---Պոլսում, Գևորգ Պուպլիի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժյուլ Սիմոնի «Աղջկանց արվեստանոցներ» աշխատությունը:

---Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Թ. Պարտիզպանյանի «Առաջնորդ հայերեն և հունարեն զրուցատրությանց» աշխատությունը:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ձայն Սեբաստացվո, կամ քանի մը նամակներ ուղղյալ առ «Մանզումե» և առ «Մասիս», Սեբաստացվո առաջնորդական խնդրո մասին» գրքույկը: 37 էջ:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Հաճյանի «Հեղինե կամ զաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» վեպի առաջին հատորը: 200 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 228 էջ:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Վրթանես Գրիգորյանի «Հրավեր միության» ընդհանուր խորագիրը կրող աշխատության Ա նամակը («Նամակ սիրո առ լրության հայ բողոքականաց»): 31 էջ:

Նամակ Բ, անդ (ուրիշ մանրամասներ գտնել չենք կարողացել):

Նամակ Գ, («Առ համորեն հայ բողոքականս» խորագրով): 43 էջ:

–––Պոլսում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, ծանոթագրություններով և հավելվածով, հրատարակվում է դոկտոր Անկըսի «Ներածություն սուրբ գրոց ուսմանը» աշխատության առաջին մասը: 318 էջ:

Երկրորդ մաս, 1880 թ., 200 էջ: Առաջին մասի երկրորդ հրատարակությունը՝ 1892 թ., 303 էջ:

–––Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Գաբրիել Այվազովսկու «Լսաբան հոգեշահ պատմությանց. Պատմություն վարուց մեծին Ներսեսի հայրապետին մերոյ» գրքույկը: 29 էջ:

–––Թեոդոսիայում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Ուղղագրություն լեզվիս հայոց, ի պետս ազգային վարժարանաց» աշխատությունը: 94 էջ:

–––Թեոդոսիայում գրաբար հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Խանգարմունք հայկաբանութեան ի հնումն եւ ի նորումս» աշխատությունը: 53 էջ:

–––Թեոդոսիայում, Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի)՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պ. Չերնևսկու «Յոթն խոսք առ տղայս» մանկավարժական ուսումնասիրությունը: 61 էջ:

–––Կալկաթայում գրաբար հրատարակվում է Հովհաննես քահանա Խաչկյանի կազմած «Նոր տպարան, հիմնեալ յանուն Գրիգորի Լուսաւորչին» գրքույկը: 7 էջ:

Տրված է Կալկաթայում հիմնադրված այդ տպարանի՝ հնդկահայ գրականմշակութային և հասարակական կյանքում կատարած դերի բնութագրությունը: Այս կապակցությամբ թվարկված են այն բոլոր հրատարակությունները, որոնք եղել են հնդկահայ նախորդ տպարաններում և արդեն «սպառեալ են»: Ապա թվարկվում են այն ձեռագրերը, որոնք նախատեսվում են հրատարկել նորաստեղծ տպարանում (օր. «Տանջանարան», «Վիշտք դժոխոց», ինչպես նաև ամսօրյա տետրակ «Սրբազան մտրակ» անունով և այլն):

–––Կալկաթայում գրաբար հրատարակվում է Հովհաննես քահանա Խաչկյանի «Հայելի փոքրիկ, յորում պատկերէ զանբաւ խնամս աստուծոյ, առ աներախտ

բնութիւն ազգի մարդկան, զմոլար վիճակ աշխարհիս, զանցս հին և նոր Հնդկահայոց և ողորմելի վիճակ մերոյ այժմեան դարու» աշխատությունը: 41 էջ:

–––Երուսաղեմում, Մելքոն Փափազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ուսումն տրամաբանության» աշխատությունը: 162 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Միհրան-Թաթուլի (Թոզլյանց) չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Անուրջք ի Սիօն» խորագրով: 44 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է «Բանախոսություն աշակերտուհյաց մեջ» գրքույկը («Բանախոսությունք» ընդհանուր խորագրի ներքո»): 48 էջ:

Նույնը՝ 1874 թ.: 80 էջ:

–––Երուսաղեմում, աշխարհաբար տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիազար Մուրադյանի «Քերականություն գաղղիերեն լեզվի, հայերեն բացատրությամբ» աշխատությունը: 120 էջ:

–––Երուսաղեմում, Մկրտիչ Տեր-Ստեփանյանի (Տիգրանակերտցի)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է մադամ Պերիե Պասկալի (ֆիզիկոս Բլեզ Պասկալի քրոջ) «Կենսագրություն Պասկալա» աշխատությունը: 94 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Սիոն» ամսագրում, 1869 թ. № 6-ից (հունիս) մինչև № 12 (դեկտեմբեր):

–––Երուսաղեմում, գրաբար վերլուծական առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Մատթեոս Ուռհայեցու «Պատմութիւն»-ը: 579 էջ: Վերջում (էջ 465-547) զետեղված է «Շարայարութիւն ի Գրիգոր Երիցուէ» հատվածը:

–––Զմյուռնիայում, Սարգիս Միրզայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնս դը Պոշենի (ճիշտ ձևը՝ Բոշան) «Լուի ԺԷ. իր կյանքը, հոգեվարքը և մահը, թագավորական ընտանիքին Դամբլի մեջ բանտարկվելը» ուսումնասիրությունը: 169 էջ:

Թարգմանությունն ունի «Ա Գիրք» նշումը, որից պետք է ենթադրել, որ եղել են նաև հաջորդ գրքեր: Հատվածաբար (զուցե որոշ հատվածներ) սկսել է հրատարկվել Զմյուռնիայի «Իրավունք» թերթում: Այլ մանրամասներ ճշտել չի հաջողվել:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումա հոր «Ամորի» վեպը: 336 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակվում է Վոլտերի պատմվածքների ժողովածուն: 64 էջ:

–––Արմաշում, վանքի միաբանների (Խորեն Աշըղյան ?)՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վլադիմիր Կեթեի «Հերձվածող պատմություն, կամ Հռովմ ի հարաբերության ընդ արևելյան եկեղեցիս» աշխատության Ա գիրքը:

–––Պետերբուրգում արևմտահայերեն հրատարակվում է «Հայերեն կարդալ և գրել ուսուցանելու հրահանգ (Պետերբուրգի հայ ուսանողների աշխատություններից)» գիրքը: 42 էջ:

1870

Հունվարի 1. «Ծիածանը» (№ 54) արևմտահայերեն հրատարակում է «Ազգային. 1869» հրապարակախոսական հոդվածը (հեղ. Կարապետ Չուխաճյան ?) և աշուղ Սյադի «Առ տատրակ թռչունն», «Առ բու թռչունն», «Հուսահատություն և հույս» բանաստեղծությունները:

Հունվարի 1. Երզնկայում (Մեծ Սրմտան, Արևելյան Թուրքիա), Մատթեոս Ալիքսանյանի, Թեոդորոս Քյոսեյանի և Պողոս Հակոբյանի նախաձեռնությամբ, հիմնվում է մշակութային «Մամիկոնյան ընկերությունը»: Իր գոյությունը դադարեցնում է 1880 թ.:

«Հանդես ամսօրյա», 1960, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հունվարի 3. «Եփրատը» (№ 19), շարունակելով նախորդ տարվա իր ավանդույթը (տե՛ս 1869 թ. նոյեմբերի 1), հրատարակում է ընթացիկ տարվա առաջին «Հանելուկը»: Այս համարից սկսած, «Հանելուկների» հրատարակությունը դադարեցվում է:

Հունվարի 5. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 53) արևմտահայերեն հրատարակում է (Գևորգ Այվազյանի ?) «Կաղանդաբանություն» երգիծական պատմվածքը:

Շարունակելով նախորդ տարվա իր ավանդույթը (տե՛ս 1869 թ. փետրվարի 15), «Մամուլը» հրատարակում է այլնայլ բնույթի երգիծական անստորագիր պատմվածքներ ու մանրապատումներ, որոնց հեղինակը հավանորեն նույն Գևորգ Այվազյանն է, և որոնք արտացոլում են ժամանակի գրական-մշակութային և հասարակական կյանքը: Հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Թատրոն»** (№ 54, հունվարի 10), **«Պառնապոյին արբանյակը, հայորերույն խրտվիլակը»** (№ 57, հունվարի 31), **«Հրացանով տամ օրհնություն, խերն անիծեմ ամենեցուն»** (№ 58, փետրվարի 7), **«Ամեն, ամեն ասեմ ձեզ, կաֆորզեմ հա՛ զձեզ»** (№ 59, փետրվարի 13), **«Բարեկենդանի ծագումը, մուչինաներու մրցումը»** (№ 60, փետրվարի 21), **«Խըպըլիկին գալուստը...»** (№ 61, փետրվարի 28), **«Կոնկլավ ի Բերա»** (№ 63, մարտի 14), **«Սա խունախտը ո՞ր ժամուն դուռը կախենք»** (№ 65, մարտի 28), **«Գիրք ծննդյան հավկըթոց»** (№ 66, ապրիլի 4), **«Շաբխան գնաց, Բյուիմ մնաց»**, **«Պատերազմով դուռը բացեք, ծեծը կերեք, մեկղի գացեք»** (№ 67, ապրիլի 11), **«Պեյողլուն առինք, Սամաթիան նայինք»** (№ 69, ապրիլի 23), **«Սեղայի բերնին թըխան մը»** (№ 70, ապրիլի 25), **«Պարոն Ալիբորոնին նախատակությունը»** (№ 72, մայիսի 2), **«Թատրոնասիրություն»**, **«Այցելության բանակ մը»** (№ 74, մայիսի 9), **«Տիեզերական ժողովքին յավուրուն»** (№ 75, մայիսի 13), **«Օդափոխության հրաշալիքը»** (№ 77, մայիսի 20), **«Նախանձոտ էրիկ մը»** (№ 78, մայիսի 23), **«Ջեմպիլճի վարդապետներ»** (№ 79, մայիսի 30), **«Պեքրի Մուստաֆային թոռները, Ինճիլի չավուշին նեֆերները»** (№ 84, հունիսի 13), **«Նախընթաց թերթեն եվելցուկ բայ մը»** (№ 86, հունիսի 20), **«Սարտեկանի մը»** (№ 90, հուլիսի 4), **«Անկելոց Ժողովույն երկրորդ նիստը»** (№ 91, հուլիսի 9), **«Մեֆիստոֆելի մենամարտությունը»** (№ 92, հուլիսի 11), **«Մեֆիստոֆելի կողոպտվիլը»** (№ 95, հուլիսի 22), **«Պազշիշաբանություն»** (№ 98, օգոստոսի 1), **«Էոյլենդան սողրա նաղաբա, հոշ կելտին Բայրամ աղա»** (իմա՛. «Կեսօրից հետո թմբուկ, բարով եկար Բայրամ աղա») (№ 103, օգոստոսի 21), **«Գազամիա»** (№ 107, հոկտեմբերի 22), **«Գրպանը ծակ տունփեսա մը»** (№ 110, հոկտեմբերի 31), **«Ղահվեալթը մը»** (№ 112, նոյեմբերի 7), **«Մեֆիստոֆելին ճամբորդությունը»** (№ 115, նոյեմբերի 17), **«Խոսակցություն մ'ալ»**, «Իքի յուղին մոտան» (№ 119, դեկտեմբերի 3):

Հունվարի 6. Սիվրի-հիսարում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց կրթական-հոգևորական գործիչ Պետրոս արքեպիսկոպոս Սարաճյանը: Վախճ. 1940 թ. սեպտեմբերի 28-ին, Անթիլիասում (Լիբանան):

Զարդարյան Վ., Հիշատակարան, Կահիրե, 1940, էջ 66-69:

Հունվարի 8. Ռաշտ քաղաքում (Պարսկաստան) ծնվեց կատակերգակ դերասան, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), Հայկական ՀՀ ժողովրդական դերասան (1935 թ.) Գրիգոր Կարապետի Ավետյանը: Վախճ. 1946 թ. մայիսի 15-ին, Երևանում:

Ավետյան Գր. Քառասուն և հինգ տարի հայ բեմի վրա, Երևան, 1938, 194 էջ: **Հայ սովետական թատրոնի պատմություն**, Երևան, 1967, 648 էջ:

Հունվար. «Հայկական աշխարհը» (№ 1) Իշխան Բագրատունու (իմա՛. Խորեն Ստեփանե)՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Աստծու գովեստ» բանաստեղծությունը և Գրիգոր Արծրունու «Նոր տարի» հոդվածը:

Հունվար. «Հույսը» (№ 43) արևմտահայերեն հրատարակում է «Այգ» խմբագրական առաջնորդողը, Հակոբ-Արշակ Կոմիտասյանի «Յօծութիւն աստուածընտիր վանահօր մերոյ Տ.Տ. Գէորգայ» գրաբար ներբողական բանաստեղծությունը: Անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Իռլանդացի ժողովրդական պատմություն. մոգական շիշը» պատմվածքը:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Աթազինես Ղափթանյանի «Անցյալն և առաջիկայն» գրական-հրապարակախոսական հոդվածը: Արսեն Բագրատունու (?)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, սկսում է հրատարակվել [Ֆրանսուա Վոլտերի] «Մահ Կեսարու» ողբերգությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 9-ում (սեպտեմբեր):

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Սարգիս Մանկունու «Կարևոր դիտողություն և 1870 նոր տարի» հրապարակախոսական հոդվածը, Մանվել Ժամկոչյանցի «Շնորհավոր քեզ նոր տարի Արարատ...» բա-

նաստեղծությունը և միջին հայերենով՝ Հովհաննեսի (Թլկուրանցի ?) «Տաղ վասն Սուրբ Էջմիածնա նվիրակներու գլխատմանն» չափածո ստեղծագործությունը։

Հունվարի 10. «Կիլիկիա» հանդեսը (№ 2) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Մանվել-Բարունակ Ռիթուջյանի] «Տիկին դը Ստալ» հոդվածը, որն ավարտվում է (?)։

Հունվարի 10. «Երկրագունդը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չեբազի «Ի շիրիմ Լամարթինա, արտասուք» պոեմը։

Հունվարի 10. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 54) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Կը սիրե՞ս զիս» բանաստեղծությունը։

Հունվարի 10. «Ծիածանը» (№ 59) արևմտահայերեն հրատարակում է «Արշավանք» հրապարակախոսական առաջնորդողը։

Հունվարի 15. «Մասիսը» (№ 955) գրաբար հրատարակում է Հակոբ Նշկյանի «Ձօն յորդիական երախտագէտ սրտէ առ ամենապատիւ Ս. Հայրիկ (իմա՛. Մկրտիչ Խրիմյան – Ս.Շ.), հայրն հայրենեաց» բանաստեղծությունը։

Հունվարի 17. «Երկրագունդը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Հիսուս, ի մսուր Բեթլեհեմի» բանաստեղծությունը։

Հունվարի 17. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 55) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Առ Էֆրոզի» բանաստեղծությունը և [Գեորգ Այվազյանի ?] «Նոր տարին» երգիծական մանրապատումը։

Հունվարի 25. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 56) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Գրական հրաշակերտ մը» գրախոսականը։ Գրախոսված է Մկրտիչ Տիգրանյանի «Հայելի զործոց և աշխատությանց...» գիրքը (Պոլիս, 1864 թ., տե՛ս ներկա հատորի այդ թվականը) և բացասական գնահատված։

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Միրիջանյանի «Առակ բարոյական» ստեղծագործությունը և «Թաթուլի» «Արուսյակ հայոց բաղդին» բանաստեղծությունը։ Մկրտիչ Տեր-Ստեփանյանի՝ ֆրանսերեն

բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակ-վել Ֆրանսուա Ֆենելոնի «Արկածք Արիսթոնոյոսին» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 5-ում (մայիս):

Հունվարի 31. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 57) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Անկեղծ դիտողություն մը» հոդվածը: Դրվատաբար ներ-կայացված է նոր հրատարակվող «Երկրագունդ» հանդեսը, արված են դիտողու-թյուններ «ի մասին լեզվի»:

Հունվարի 31. «Երկրագունդը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չե-րազի «Արզա (իմա՛. Արգոսի – Ս.Շ.) խոկեր» հոդվածը, նվիրված Ալիշանին ու Պեշիկթաշլյանին: Խաչատուր Պասմաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Մանկիկն յօրրանի» բանաստեղծությունը:

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 10) գրաբար հրատարակում է «Բան զրպար-տութեան Լիբանանցի կարծեցեալ հայր Քերովբէի, առ ազգն հայոց...» բանաս-տեղծությունը (ավարտ՝ հաջորդ համարում), որը հայտնաբերել և հրատարա-կության է պատրաստել Գրիգոր Մաթեոսյանը: Սկսում է հրատարակվել Մես-րոպ Սմբատյանի «Ցոլակերտի արձանագիրք» արևմտահայերեն բանասիրական հոդվածը, որն ավարտվում է նույն ամսագրի հաջորդ համարում:

Փետրվար. «Հայկական աշխարհը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Ստեփան-նոս Ստեփանեի (իմա՛. Խորեն Ստեփանե) «Հայկական այբուբեն» ուսումնասի-րությունը (շարունակվում է հաջորդ համարում և մնում անավարտ) և նույնի՝ բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ «Իմ սերը» և «Փող չկա» բանաստեղծությունները (ունեն «Իշխան Բագրատունի» ստորագրությունը): Սալոմե Ստեփանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգ-մանությամբ, սկսում է հրատարակվել «Քեռի և քեռորդի» վիպակը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2) անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վաշինգտոն Իրվինգի «Այրի մայրն և իր որդին» պատմվածքը:

Փետրվարի 4. «Մասիսը» (№ 944) արևմտահայերեն հրատարակում է Կարապետ Ռիթուջյանի «Հայ լրագրության վիճակը» հոդվածը:

Փետրվարի 4. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (անգլերեն, ֆրանսերեն և հայերեն լեզուներով), թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն), արձակագիր Կարապետ Գրիգորի Պիլեզիկճյանը: Վախճ. 1899 թ. դեկտեմբերին իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Տիգրան Երկաթ», «Կարապետ Պեյ», «Միր Կարո», «Կարապետ», «Հայ-ազգ», «***» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 383-385: **«Սիոն»**, 1936, № 9, 10 («Տիգրան Երկաթ»): **«Հանդես ամսօրյա»**, 1962, № 9-12 («Պիլեզիկճյան գերդաստանը»):

Փետրվարի 7. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 58) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Սթափումն» բանաստեղծությունը:

Փետրվարի 11. «Մասիսը» (№ 964) արևմտահայերեն հրատարակում է «Լևոնի» «Հայկական նամականի (նամակ Զ.)» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Փետրվարի 11. Պոլսում Մկրտիչ պատրիարք Խրիմյանի նախաձեռնությամբ և Ղևոնդ Փիրղալեմյանի, Հովսեփ Փեհրիզյանի, Վարդան Պապիկյանի, Գևորգ Աճեմյանի և այլոց մասնակցությամբ, ստեղծվում է կրթական-լուսավորչական «Սանդխտյան ընկերությունը», որի նպատակն էր «Վանի մեջ Սանդըխտյան վարժարան բանալ և հոգալ անոր պիտույքները» (տե՛ս ներկա հատորը, 1870 թ. հուլիսի 25): Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 382-383: **«Հանդես ամսօրյա»**, 1958, № 1-4 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Փետրվարի 13. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 59) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Թաղումն» («Ոչ փող զարկինք...») բանաստեղծությունը

(տե՛ս **Մ.Պեշիկթաշլյան**, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1987, էջ 46-47, 522-524): Քննադատված է Մինաս Չերազի («Չարազլյանե ի Չերազ թլպատված «Արգո Խոկերի» պարոն հեղինակը...») լեզվաստեղծման դրությունը, որը որակված է որպես «տղայամտություն»:

Փետրվարի 14. «Մասիսը» (№ 947) [Կարապետ Ութուջյանի]՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Էդմոն դը Բրեզանսեի «Ճառ ի վերա ընկերային և կրոնական վիճակի արդի Հռովմա» տրակտատը, որն ավարտվում է նույն պարբերականի № 953-ում (մարտի 7):

Փետրվարի 14. «Երկրագունդը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Հառաչ ի տապան մեծին Լամարթինա» բանաստեղծությունը:

Փետրվարի 15. Երևանում ծնվեց հոդվածագիր, դրամատուրգ, խմբագիր, ֆելիետոնիստ Աշոտ Նահապետի Աթանասյանը: Վախճ. 1941 թ. ապրիլի 4-ին, իր ծննդավայրում:

1906 թ. հունվարին Թիֆլիսում հիմնել է «Աշխատանք» շաբաթաթերթը, որը 1907 թ. փետրվարից վերանվանվել է «Նոր աշխատանք» և գոյատևել մինչև տարեկեսը: 1909 թ. հունվարից Թիֆլիսում հիմնել է «Գյուղատնտես» շաբաթաթերթը, որը հրատարակվել է մինչև 1917 թ. սկիզբը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սալ-ման», «Ստորակետ», «Դոն-Պեդրո», «Ազրոնոմ», «Եսչեմ», «Մեբիս», «Կարմիր» կեղծանուններով:

Իշխանյան Ս., Հայ դեմոկրատական մտքի պատմությունից, Երևան, 1962, 179 էջ:

Փետրվարի 28. «Երկրագունդը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չերազի «Պանդուխտ, հիշե՞ս արդյոք» բանաստեղծությունը:

Փետրվարի 28. «Մամուլ» շաբաթաթերթը արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Փետրվարի 28. «Սիոնը» (№ 2) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Կրոնականք» տեսական-աստվածաբանական հոդվածաշարը, որն ավարտվում է նույն ամսագրի № 9-ում (սեպտեմբեր) (հեղ.՝*** = Մելքիսեդեկ Մուրադյան?): Գրախոսված է նաև Հովսեփ Գաթըրճյանի «Հիմնական տարբերություն կաթողիկե և էջմիածնական դավանությանց» աշխատությունը (Պոլիս, 1864 թ.: Տե՛ս «Ժամանակագրության» նախորդ հատորը, էջ 471) և բացասաբար է գնահատված:

Մարտ. Էջմիածնի «Արարատը» (№ 11) գրաբար հրատարակում է Գրիգոր Մատթեոսյանի «Ի տօնի սրբոց Վարդանանց» պոեմը, արևելահայերեն՝ Ս. Մարության «Մեր ազգային թատրոններուն համառոտ տեսությունը» հոդվածը: Բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակված է «Վերադարձ ի հայրենիս» բանաստեղծությունը (թարգ. Պ.Հ.Ռ.Գ.Ե.Ը.):

Մարտ. «Հույսը» (№ 45), Ստեփան Միհրդատյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Տակառ» նովելը: Հրատարակված է «Առաքինի, զիտուն և արվեստագետ պատանի» արևմտահայերեն գրախոսականը, որտեղ գրախոսված է Կեսար Քանդուի՝ հիշյալ խորագիրը կրող գիրքը և այն դրական է գնահատված:

Մարտի 1. «Կիլիկիա» հանդեսը (№ 9) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Մանվել-Բարունակ Ռ՞Իթուջյանի] «Աշխարհային երանությունք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի № 12-ում (մարտի 27): Վերլուծված է XIX դարի մշակութային կյանքը, մատնանշված են նրա զարգացման ուղիները («Շարունակ լույս, շարունակ լույս առնուլ, իմացականությունը զարգացնել, զգացմունքներն ազնվացնել, մեկ խոսքով **առաջ երթալ**»):

Մարտի 2. Ախալցխայում Սուքիաս վարդապետ Պարզյանցի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Եղիսաբեթյան իգական դպրոցը»: Սկզբնական շրջանում ուներ տասնհինգ աշակերտուհի, ծաղկուն ժամանակ՝ յոթանասունհինգ: Ավանդվում էր կրոն, հայերեն և ռուսերեն լեզուներ, ասեղնագործություն, թվաբանություն, վայելչագրություն և երգեցողություն:

«Մեղու Հայաստանի», 1870, № 6 («Պատվելի բարեկամ»): 1871, № 16 («Երկու խոսք»): № 36 («Պատճեն օրագրության»): 1873, № 5 («Ազգային»):

Մարտի 5. Բեռլինում վախճանվեց գերմանացի հայագետ, արևելագետ, թարգմանիչ (հայերենից՝ գերմաներեն և անգլերեն) Կարլ-Ֆրիդրիխ Նոյմանը (Karl-Fridrich Neumann): Ծնվ. 1798 թ. դեկտեմբերի 22-ին, Ռեյխմանսդորֆում (Կենտր. Գերմանիա, Բամբերգի մերձակա գյուղ):

«Հայկական աշխարհ», 1870, № 5-6 («Մեր ներքին գործեր»): **Զարբհանալյան Գ.**, ՈՒսումնասիրությունք հայ լեզվի և մատենագիտության արևմուտս, Վենետիկ, 1895, էջ 264-269:

Մարտի 7. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 62) արևմտահայերեն հրատարակում է «Թաղումը» հոդվածը: Դրվատաբար վերլուծված է Մկրտիչ Պեշիկթաշլյանի՝ «Մամուլում» հրատարակված այդ բանաստեղծությունը (տե՛ս ներկա հատորը, 1870 թ. փետրվարի 13), որը բնութագրված է «Գոզցես Օռաս Վեռնեյի նկարներեն հափշտակված տեսարան մըն է, կամ լավագույն ևս՝ Բեթհովենի նվագներեն կտոր մը»: Հրատարակված է նաև նույն հեղինակի «Ալեմտաղ» բանաստեղծությունը (տե՛ս **Մ.Պեշիկթաշլյան**, Երկերի լիակատար ժողովածու, էջ 56-57, 526): Հրատարակված է «Պ[արոն] Չերազ և իր տղայամտության վիժանքները» ընդդիմախոսականը, որտեղ քննադատված է վերջինիս «լեզվական գրությունները»:

Մարտի 7. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Զաքարիա Գրիգորյանցի «Նոր տարիի առթիվ մտածություններ» հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 8. Այլուր գյուղում (Վանի շրջան) ծնվեց դրամատուրգ, արձակագիր Արմեն Շիտանյանը:

«Հայաստանի կոչնակ», 1927, № 49 («Գաղութներ»):

Մարտի 14. «Երկրագունդը» (№ 11), Ա.Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ալֆոնս Լամարթինի «Մահ Սոկրատա» պոեմը, որն ավարտվում է նույն պարբերականի № 25-ում (հունիսի 20), իսկ Տ. Մանուկյանի թարգմանությամբ՝ Ժան-Ժակ Ռուսսոյի «Անձնասպանություն» ակնարկը:

Մարտի 14. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 63) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Տաճար» և [Գեորգ Այվազյանի] «Մեֆիստոֆելի մեկ խնդիրը» բանաստեղծությունները:

Մարտի 16. Պոլսում (Գատը-գյուղ), Վարդան Շիշմանյանի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում Վենետիկի Մխիթարյան միաբանության տնօրինության ներքո գտնվող «Մխիթարյան դպրոցը»: Այն բացելու պաշտոնական իրավունքը տրվել է նույն թվականի հունվարի 14-ին: Ծաղկուն ժամանակ ուներ հիսուն աշակերտ: «Մխիթարյան դպրոցը» դադարեց գոյություն ունենալ 1915 թվականին:

«Արշալույս արարատյան», 1870, № 880 («Ազգային»): **«Հանդես ամսօրյա»**, 1936, № 7-9 («Ծանոթությունք Ստամբոլի պատմության»):

Մարտի 18. Ախալցխայում, Գարեգին Ղազազյանցի տնօրինությամբ, իր գոյությունն է սկսում «Ախալցխայի Սուրբ Ստեփաննոսյան արական հոգևոր ուսումնարանը»: Ավանդվում էր կրոն, հայերեն և ռուսերեն լեզուներ, թվաբանություն, պատմություն: ՈՒներ քսան աշակերտ և շուրջ քառասուն կտոր գիրք ունեցող գրադարան: «Սուրբ Ստեփաննոսյան արական հոգևոր ուսումնարանը» դադարեցնում է իր գործունեությունը 1875 թ. կեսերին:

«Մեղու Հայաստանի», 1870, № 36 («Հարգո բարեկամ»), № 37 («Հարգո բարեկամ»), 1873, № 33 («Ախալցխա»), 1875, № 25 («Հարգո խմբագիր»):

Մարտի 21. «Մեղու Հայաստանին» (№ 3), անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգ. «Մելիք Շեկո»), հրատարակում է երկու էպիգրամ Ջորջ Բայրոնից «Պատասխան բարեկամին» խորագրով:

Մարտի 21. «Երկրագունդը» (№ 12), Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Լիճ» բանաստեղծությունը:

Մարտի 24. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանցի «Ընդհանուր հայացք արևելյան նոր գրավոր լեզվի վրա» հոդվածը:

Մարտի 28. «Երկրագունդը» (№ 13), Հ. Պոնճուկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ի կինն

անկյալ» բանաստեղծությունը և Ֆելիցիտե Լամընեի «Նժդեհը» արձակ բանաստեղծությունը՝ Պ. Տեմիրճիպաշյանի թարգմանությամբ։

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) գրաբար հրատարակում է Արիստակես Ներսիսյանի «Խրատ հայկական ուսման եւ աշակերտելոց նորին ի ձեւ բարառնական» և Մելքոն Հակոբյանի՝ «Նահատակութիւն Վարդանանց» բանաստեղծությունները։ Վերջինիս, ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ՝ Ժակ-Բենին Բոսուեի «Մոլության պատիժը նույն իսկ մեր մեջն է» ակնարկը։

Մարտ-ապրիլ. «Հայկական աշխարհը» (№ 3-4), «Կոմս դը Լատուրի» (Խորեն Ստեփանե?) ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ն. Նեկրասովի «Հարսանիք» և Գրիգոր Նիկողոսյանի թարգմանությամբ՝ Մ. Լերմոնտովի «Երազ» բանաստեղծությունները։ «Իշխան Բագրատունու»՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակված է Առնո Բերկենի «Արծաթյա կոճակներ» կատակերգությունը։ Տպագրված է նաև Գրիգոր Արծրունու «Մտքեր հայտնելու իրավունք» արևելահայերեն հրապարակախոսական հոդվածը։

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4) «Ծանուցումն առ սիրողս հայրենական հիշատակաց» խորագրով, խմբագրության փոքրիկ ներածականով, արևմտահայերեն հրատարակում է Ղևոնդ Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմա-գեղարվեստական արձակի վերջաբանը՝ «Վերջաբան առ Հայկակ» խորագրով։

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 12) գրաբար հրատարակում է Գրիգոր Մատթեոսյանի «Գարուն» բանաստեղծությունը։

Վերջինիս գործերը հետագայում հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Կայէն» (1870, № 3, հուլիս, գրաբար), «Օրորք մորն որդեսիրի» (№ 6, հոկտեմբեր, արևելահայերեն) և «Վարդան քաջն» (1872, № 3, մարտ, արևելահայերեն)։

Ապրիլի 3. Եվդոկիայում (Կենտրոնական Թուրքիա) ծնվեց գրականագետ, բանասեր, լեզվաբան, գրականության պատմաբան Հովհաննես Գազանճյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. մարտի 15-ին իր ծննդավայրում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 249-250: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, էջ 429:

Ապրիլի 4. «Երկրագունդը» (№ 14) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Լուսին» բանաստեղծությունը: Վերջում զետեղված է նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, Ալֆոնս Լամարթինի «Գիշեր» մանրապատումը:

Ապրիլի 4. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 66), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, (թարգմանիչ՝ «Ոմն ի բաժանորդաց մամլո»), հրատարակում է Պիեր-Ժան Բերանժեի «Նշխարք սրբոց» բանաստեղծությունը:

Ապրիլի 4. «Մեղու Հայաստանին» (№ 5), բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Մելիք Շուկո») հրատարակում է «Առակ հարուստների և աղքատների համար» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև «Թոփալի» հերթական «Ֆելիետոնը», որտեղ գրախոսված է «Ճառախոսություն և համարատվություն ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի» ժողովածուն:

Ապրիլի 4. «Մասիսը» (№ 961) արևմտահայերեն հրատարակում է «Հրաչյայի» (իմա՛. Ռեթևոս Պերպերյան) «Ամորի» գրախոսականը:

Ապրիլի 11. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Իմ ազնիվ եղբայրք» դամբանական ճառը, Աղեքսանդր Սիմոնյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ «Տխուր երազ» պատմվածքը (ավարտ՝ հաջորդ համարում) և ***-ի «Բանաստեղծ», «Աշխատասեր բանաստեղծ» չափածո ստեղծագործությունները:

Ապրիլի 11. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 67) արևմտահայերեն հրատարակում է «Հրաչյայի» (իմա՛. Ռեթևոս Պերպերյան) «Բանասիրական» հոդվածը: Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը և այդ հենքի վրա՝ Մ. Պեշիկ-

թաշլյանի պոեզիան: Հրատարակված է «Որ արասցէ եւ ուսուսցէ, նա մեծ կոչեսցի յարքայութեանն պապին» բանաստեղծությունը: Այն ունի «Հասուն, երկրպագու խաչադրոշ հողաթափների պապին» ստորագրությունը և գրված է Մ. Նալբանդյանի «Երգ ազատության» բանաստեղծության որոշակի հետևությամբ:

Ապրիլի 11. «Երկրագունդը» (№ 15), Ա. Ներսիսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժան Լաֆոնտենի «Քաղքին մուկը և դաշտին մուկը» առակը:

Ապրիլի 16. «Մասիսը» (№ 964), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գիտությունը և նորա վարդապետությունը ազատ է» տեսական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 966-ում (ապրիլի 22):

Ապրիլի 18. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 68) արևմտահայերեն հրատարակում է Պետրոս Ադամյանի «Առ...» բանաստեղծությունը («Աստեղափայլ երկնից տակ...»):

Ապրիլի 23. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 69) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է Սայադ Շամախեցու «Առ Հայաստան և առ Ս.Հայրիկ նորա» բանաստեղծությունը:

Ապրիլի 25. «Երկրագունդը» (№ 17), Պ. Տեմիրճիպաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընյեի «Արի զինվոր» արձակ բանաստեղծությունը:

Ապրիլի 27. Գեռլայում (Տրանսիլվանիա, Հունգարիա) վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, բանաստեղծ, բառարանագիր (բոլորը՝ հայերեն և հունգարերեն լեզուներով) Զաքարիա Հովսեփի Կապրուշյանը: Ծնվ. 1794 թ. օգոստոսի 18-ին:

Գովրիկյան Գր., Դրանսիլվանիո հայոց մետրոպոլիտը, Վիեննա, 1896, էջ 133-143: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 86:

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 4) Մաքսուտ Մաքսուտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ֆելիցիտե Լամընեի «Անմահություն հոգվո» ակնարկը: Հրատարակված է «Ի սուրբ Գրիգոր Նարեկացին» գրաբար բանաստեղծությունը (քառյակների առաջին տողերը կազմում են Գրիգոր անունը) և արևմտահայերեն՝ «Բանախոսություն բանասիրական» թատերական ստեղծագործությունը:

Մայիս. Էջմիածնի«Արարատը» (№ 1) գրաբար հրատարակում է Աբել Մխիթարյանի «Յամենասուրբ երրորդութիւնն դաւանութիւն հաւատոյ» չափածո ներբողականը (քառյակների առաջին տառերը կազմում են «Աբել վարդապետ» իմաստը) և արևելահայերեն՝ Հարություն Ռստանիկի «Նախամարգարեն» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել «Դարձյալ վարժապետներ պատրաստելու խնդիրը» տեսական-մանկավարժական արևմտահայերեն ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերական հաջորդ համարում (հեղ. Պ.Հ.Ռ.Գ.Ե.Ը.):

Մայիսի 1. Պոլսում, Կարապետ Սվաճյանի նախաձեռնությամբ, հիմնվում է «Դպրոցասիրաց ընկերությունը», որի նպատակն էր «նյութապես օգնել կարոտ դպրոցներու, կիրակնօրյա դասախոսություններ սարքել և գավառներու մեջ վարժարաններ բանալ»: Ընկերությունը գոյատևեց մինչև 1878 թվականը:

«Հանդես ամսօրյա», 1952, № 4-6 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»): **Թեոդիկ**, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 113:

Մայիսի 2. «Մեղու Հայաստանին» (№ 8), Հովհաննես Լալայանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ամերիկյան մենամարտություն» պատմվածքը:

Մայիսի 4. Թիֆլիսի քաղաքային թատրոնում հայ դերասանների խումբը Գևորգ Չմշկյանի ղեկավարությամբ առաջին անգամ բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» կատակերգությունը: Դրա նախնական տարբերակը՝ «Մալխաս» վերնագրով, բեմադրվել է Թիֆլիսում, 1864 թ. նոյեմբերի 28-ին:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ, Ա, Երևան, 1951, էջ 555-560:

Մայիսի 9. «Երկրագունդը» (№ 19), Խ. Մկրտչյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էմիլ Ժերարդենի «Հիվանդ տղան» նովելը և Հ. Քառափուշյանի թարգմանությամբ՝ Ժան Լաֆոնտենի «Գայլ ու գառնուկ» առակը:

Մայիսի 9. «Արշալույս արարատյանը» (№ 883), «Առաջաբան «Թափառական հրեայի» թարգմանչին» խորագրի ներքո, հրատարակում է Էոժեն Սյուի՝ վերոհիշյալ վիպասանության արևմտահայերեն առաջաբանը, որի հեղինակն է Կարապետ Ութուջյանը:

Մայիսի 9. «Մեղու Հայաստանին» (№ 9), Հովհաննես Լալայանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Անձրևային հեղեղ» պատմվածքը:

Մայիսի 13. «Մասիսը» (№ 972) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ս. Բեկնազարյանցի «Դաստիարակական նամակ. հայ գերդաստանի, հասարակության և ազգային դպրոցաց նշանակությունն ու կարևորությունը հայ մանկան դաստիարակության մեջ» հրապարակախոսական-մանկավարժական հոդվածը: Ավարտ՝ նույն պարբերականի № 974-ում (մայիսի 20):

Մայիսի 14. Ալեքսանդր II կայսրը հաստատում է Հայաստանում և Ադրբեջանում գյուղացիական ռեֆորմ անցկացնելու մասին կանոնադրությունը: Ռեֆորմի աշխատանքները նախապատրաստելու համար 1865 թ. սեպտեմբերի 1-ին ստեղծվել էր Երևանի նահանգի բարձր դասի հողատերերից բաղկացած վարչական միավոր՝ «Բեկական հանձնաժողով» անունով:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1861-1917), Երևան, 1955, էջ 140, 149:

Մայիսի 16. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն հրատարակում «Թոփալի» «Էլի մեկ զոհ» թատերախոսականը: Վերլուծված է Գաբրիել Սունդուկյանի այդ կատակերգությունը, նրա բեմադրությունը, արված են մի քանի դիտողություններ (պիեսը ձգձգված է, պետք է կրճատել, նոր սերունդը միակողմանի է պատկերված, Անանիի մասին գաղափար ենք կազմում ավելի շատ Միքայելի գո-

վեստներից, քան կերպարի զարգացումից)։ Սակայն դրանով հանդերձ, այն դրական է գնահատված։

> Հանդես գալով «Հարգո խմբագիր» վերնագրով նամակ-բացատրականով («Մեղու Հայաստանի», № 12, մայիսի 30), Սունդուկյանը տեղեկացնում է, որ եթե չլինեին դերասան Գևորգ Չմշկյանի ջանքերը «...իմ «Էլի մեկ զոհ» պիեսաս գուցե ոչ շուտ և կամ կարելի է երբեք չէր կարող լույս տեսնել», քանզի նա «հօգուտ թատրոնի աշխատելով, գրեց իմ ասելովս, գրեթե բոլոր պիեսաս, և այսպես գրեթե կիսով չափ թեթևացրեց իմ աշխատանքս, նույնպես շատ կարևոր խորհուրդներ տվեց»։

Մայիսի 23. «Երկրագունդը» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Զեփյուռ ու բանաստեղծ» բանաստեղծությունը։

Մայիսի 30. «Մեղու Հայաստանին» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Սելինյանի «Հայ օրիորդի երգ (նվեր Կ.Տ.-ին)» բանաստեղծությունը, որը խմբագրությանն է ուղարկվել Ղարասուբազարից (այժմ՝ Ղարասու, Ղրիմի մարզ)։

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել Աբրահամ Այվազյանի «Բանասիրականք» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում։ Հրատարակվում են «Աղաղակ ողբոցն Հայաստանի» և «Ի սգալի մահ Երանուհւոյ...» գրաբար բանաստեղծությունները։ Նշան Ճիվանյանի (իմա՛. «Հորո»)՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ջորջ Բայրոնի «Պատասխան «Հասարակաց վախճանը» անվանյալ քերթվածի մը», «Եղերերգ հաղագս մահվան սըր Բեղեր Բարքերի» և «Հրաժեշտ առ մուսայն» ստեղծագործությունները։

Մայիս-հունիս. «Հայկական աշխարհը» (№ 5-6) արևելահայերեն հրատարակում է Ս. Ստեփանեի (իմա՛. Խորեն Ստեփանե) «Լծողական դեղ ծուլության համար» կատակերգությունը և «Իշխան Բագրատունու»՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ «Թե նա գիտենար», «Ասացեք նորան» բանաստեղծությունները։

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Հարություն Ոստանիկի «Նվեր մտածող հայ երիտասարդներին» և Մեսրոպ Փափազյանի «Խորհրդավոր տեսիլ» բանաստեղծությունները: Հրատարակված է նաև գրաբար մի առակ Վարդան Այգեկցու «Աղվեսագրքից» («Իրավունք և խելացի դատաւոր»): Տպագրված է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի տեսուչ Ստեփաննոս Նազարյանցի «Յաստուածուստ պատուեալ մեծ Հայրապետ եւ աթոռակալ...» գրաբար ուղերձը:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Եվգենի Ֆլանտենի «Շիրազ, Սաադի և Հաֆըզ» հոդվածը:

Հունիս. «Հույսը» (№ 48) արևմտահայերեն հրատարակում է «Սետայը հազըգեթ» (իմա՛. «Ձայն ճշմարտության») հոդվածը: Գրախոսված է այդ խորագիրը կրող հայատառ թուրքերեն պարբերականը, որի գործունեությունը բացասաբար է գնահատված: Հրատարակված է «Ողբերգություն առ ափն Երասխա» ժողովրդական աշխարհաբարով գրված բանաստեղծությունը, որը կարճառոտ ներածությամբ հրատարակել է Հարություն Հովհաննիսյանը:

Հունիսի 4. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 81) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Սելամսըզի քվեատուփը» գրական էսսեն և գրաբար՝ Մկրտիչ Խրիմյանի կոնդակը, տրված 1870 թ. ապրիլի 10-ին: Խրիմյանը բարձր է գնահատում Պետրոս Շանշյանի «ՌԻսումն պարտուց» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1870 թ.):

Հունիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 13) գրաբար հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «յԱստուածուստ պատուեալ մեծ հայրապետ եւ աթոռակալ սրբոյն Գրիգորի...» ճառը, որը կարդացվել էր Ներսիսյան դպրոցում: Աղեքսանդր Սիմոնյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Բասկակ (իմա՛. հարկահավաք –Ս.Շ.) Տուրլուբա (ռուսաց ժողովրդական ավանդություն)» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 6. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 82), խմբագրության դրվատական նախաբա-նից հետո, արտատպում է Պետրոս Շանշյանցի «Ռիսումն պարտուց» աշխատու-թյան առաջաբանը:

Հունիսի 10. «Մասիսը» (№ 980), Կարապետ Ռիթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կա-տարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, առաջաբանով ու հա-վելվածով, սկսում է հրատարակել Մարիուս Թոբենի «Երկաթե դիմակով մարդը և Ավետիք պատրիարք հայոց» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 997-ում (օգոստոսի 8):

Հունիսի 13. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 84) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Հունիս 17. «Մասիսը» (№ 982) արևմտահայերեն հրատարակում է «Իզմիրեն հետևյալը կգրեն մեզ» նամակ-հոդվածը: Ի թիվս այլնայլ հարցերի՝ վերլուծված է քաղաքի գրական-մշակութային կյանքը: Բացասաբար են գնահատված Ստ. Ոսկանյանի մանկավարժական գործունեությունը («հայ դպրոց մը ըստ կարի գաղղիացնել կփափագե»), Վիկտոր Հյուգոյի «Նոտր դամ դը Պարի» վեպի՝ Մեսրոպ Նուպար-յանի թարգմանությունը («սափրիչությունը ժողովրդյան մորուքին վրա կսորվի»):

Հունիսի 20. «Մեղու Հայաստանին» (№ 15), Աղեքսանդր Սիմոնյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Ծո-վեզերային իրավունք» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 17-ում (հուլիսի 4):

Հունիսի 20. «Երկրագունդը» (№ 25), Կ. Արշակյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Աշուն» բանաստեղծությունը:

Հունիսի 20. «Արշալույս արարատյանը» (№ 886), «Առաջաբան «Հավաքածույք» կո-չեցյալ մատենին» խորագրի ներքո, հրատարակում է [Թորոս Նազարյանի] «Հաւաքածոյք յընտիր մատենագրաց» աշխատության առաջաբանը (տե՛ս ներկա հատորը, 1870 թ.):

Հունիսի 27. «Երկրագունդը» (№ 26) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Ա՜հ» բանաստեղծությունը:

Հունիսի 28. Պարտիզակում ծնվեց գրականագետ-բանասեր, աստվածաբան, ազգագրագետ Վարդան Հացունին: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1892 թ. հունիսի 5-ից, վախճ. 1944 թ. հուլիսի 8-ին Վենետիկում:

Սկզբնական շրջանում ստորագրում էր «Հ.Վ.Սոմունճյան»: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Հնախոս» և «Վենետացի» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 208: **«Բազմավեպ»**, 1942, № 1-12 («Քահանայական հիսնամյա հոբելյան...»): 1944, № 1-6 («Վարդան Հացունի»): 1970, № 11-12 («Վարդան Հացունիի ծննդյան հարյուրամյակը»):

Հուլիս. Պոլսում ծնվեց արձակագիր, հրապարակախոս, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Երուխանը (Երվանդ Պողոսի Սրմաքեշխանլյան): Եղեռնամահ՝ 1915 թ. մայիսին, Դիարբեքիրի շրջանում:

1898-1900 թթ. Վառնայում խմբագրել է «Շարժում» եռօրյա լրագիրը, 1900-1901 թթ. «Շավիղ» կիսամսյա հանդեսը: 1905 թ. Ալեքսանդրիայում խմբագրել է «Սիսվան» հանդեսը (լույս է տեսել երկու համար), 1908 թ. ընթացքում Կահիրեում՝ «Լուսաբեր» երկօրյա լրագիրը: 1908-1910 թթ. Պոլսում խմբագրել է «Արևելք» օրաթերթը: «Ե.Գաղթական» և «Աշուղ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 140: **Երուխան**, Նովելներ (կազմեց Ս. Հովհաննիսյան), Երևան, 1965, 438 էջ:

Հուլիս. «Հույսը» (№ 49) արևմտահայերեն հրատարակում է «Հիսնամյակ և հինգհարյուրամյակ կամ առաջին և տասներորդ հոբելյան» հրապարակախոսական առաջնորդողը, Ներսես Մռավյանի՝ «Արտավազդ Ա ի բանտին» գրաբար պոեմը՝ հեղինակի համապատասխան վերլուծություններով: Ստեփան-Միհրդատ Էսմերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Պզտիկ խեղկատակ» նովելը: Անգլերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ տպագրվում է «Առյուծ և սպանիական շուն» պատմվածքը:

Հուլիսի կեսեր. Պոլսում, Հարություն Ջինճիրճյանի, Ավետիս Սուրենյանի և Հարություն Թաշճյանի ջանքերով, հիմնվում է կրթական-հրատարակչական «Գործասեր ընկերությունը»: Վերջինս իր հիմնական խնդիրն էր համարում «զվարճալի պատմություններ կարդալ և տեղնիտեղը պատմել անգետ համբակաց»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1873 թվականը:

«Հանդես ամսօրյա», 1951, № 11-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հուլիսի 2. Ադանայում (Հարավային Թուրքիա) ծնվեց հոդվածագիր (անգլերեն, հայերեն և թուրքերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ թուրքերեն, անգլերենից և թուրքերենից՝ հայերեն) Հայկ Ատատուրյանը:

Պոտուրյան Մ. Հայ հանրագիտակ, էջ 891: **«Հայաստանի կոչնակ»**, 1944, № 21 («Ամուսնության հիսնամյակ»): 1950, № 45 («Վեր. Հայկ Ատատուրյան»):

Հուլիսի 2. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 89) արևմտահայերեն սկսում է հրատարակել Երեմիա սրբազանի «Հայաստանի և հայոց արդի վիճակը» ուղեգրությունը: Սկսած № 93-ից (հուլիսի 15) այն ստանում է նոր՝ «Ընկերական և հարաբերական վիճակ արդի հայոց» խորագիրը և շարունակվելով մինչև տարեվերջ, մնում է անավարտ:

Հուլիսի 4. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 90) արևմտահայերեն հրատարակում է «Հրատի» (Ստեփան Ոսկանյան?) «Հրաժեշտ» բանաստեղծությունը:

Հուլիսի 4. «Մեղու Հայաստանին» (№ 17), Մ. Սիմոնյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն համառոտ թարգմանությամբ և խմբագրության ներածականով, սկսում է հրատարակել Քերովբե Պատկանյանի կազմած և ծանոթագրած Պետրոս դի-Սարգիս Գիլանենցի «Հիշատակարանի» առաջաբանը, որն ավարտվում է նույն պարբերականի № 19-ում (հուլիսի 18):

Հուլիսի 11. «Մեղու Հայաստանին» (№ 18) արևելահայերեն հրատարակում է Աշխեն Դոլզյանի (իմա՛. Պերճ Պռոշյանի քենին) «Խոսք առ Գայանյան ուսումնարան Թիֆլիսոյ յուր կառավարչուհուց» բանաստեղծությունը:

Հուլիսի 11. «Երկրագունդը» (№ 28) ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Հիշատակ» բանաստեղծությունը:

Հուլիսի 15. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 93) արևմտահայերեն հրատարակում է Ա.Ց. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Շունչ մի ի տապանեն պ. Ռուբեն Զարդարյանի» եղերերգական պոեմը:

Հուլիսի 18. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 94) արևմտահայերեն հրատարակում է Մանու Մամիկոնյանի «Առաջաղիմություն (կարևորագույնիվք շատանալ)» եղերերգական բանաստեղծությունը: Նախորդող արձակ բացատրականում տրված է բանաստեղծության գրության պատմությունը:

Հուլիսի 22. «Մասիսը» (№ 992) արևմտահայերեն հրատարակում է Մ. Տամատյանի «...խմբագիր «Մասիս» լրագրո» նամակը: Նամակագիրը պաշտպանում է իր «Պոլիփեմ կամ անդրալբյան հայ մը» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1870 թ.) «Սետայը հազըգեթ» (իմա՛. «Ձայն ճշմարտության») թերթում տպագրված մի անստորագիր հոդվածի «կրիտիկից» և բարձրացնում է քննադատության ու նրա անկողմնակալության հետ կապված մի քանի հարցեր:

Հուլիսի 24. Ղզլարում (այժմ՝ Դաղստանի ԻԽՍՀ) ծնվեց մարքսիստ-հեղափոխական, լրագրող (ռուսերեն և հայերեն լեզուներով) Իսահակ Քրիստափորի Լալայանցը: Վախճ. 1933 թ. հուլիսի 14-ին Մոսկվայում:

ՌԻներ «Կոլումբ», «Իզարով», «Իսարով», «Նիկոլայ Նիկոլայիչ», «Կառլ», «Նիկոլայ Իվանովիչ», «Ժորժ», «Կլինիկա» կուսակցական ծածկանունները, որոնցից մի քանիսն օգտագործել է որպես գրական կեղծանուն:

«Исаак Христофорович Лалаянц» («Вопросы истории КПСС, 1965, № 8»): **«Սովետական Հայաստան»**, 1965, № 183 («Լենինի մտերիմն ու զինակիցը»): **«Երեկոյան Երևան»**, 1976, № 61 («Նոր փաստաթղթեր Լալայանցի գործունեության մասին»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 24-25:

Հուլիսի 25. «Մեղու Հայաստանին» (№ 20), Մարիամ Խոջայանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Անկոչ հյուր (Սեր

Չարլզ Յունգ-բարդի զրույցը)» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 23-ում (օգոստոսի 15):

Հուլիսի 25. Վանում, Դիոնիսիոս քահանա Արտամետցյանի տնօրինությամբ, իր գոյությունն է սկսում «Սանդխտյան աղջկաց վարժարանը»: Այն գտնվում էր Պոլսում գործող «Սանդխտյան ընկերության» ֆինանսական հովանավորության ներքո (տե՛ս 1870 թ. փետրվարի 11): Ծաղկուն ժամանակ (1912 թ.) ուներ «223 աշակերտուհի, 9 դասարանով և 13 ուսուցիչով»: Ավանդվող առարկաներն էին՝ հայոց լեզու, կրոն, հայոց պատմություն, թվաբանություն, ասեղնագործություն: «Սանդխտյան աղջկաց վարժարանը» գոյություն ունեցավ մինչև 1914 թվականը:

Պողոսյան Ե., Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 12-15: Վարժարանի մասին որոշ տեղեկություններ մեզ հաղորդել են Հարություն և Մայրանուշ Դերձակյանները, որոնց հայտնում ենք մեր շնորհակալությունը:

Հուլիսի 30. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 97) արևմտահայերեն հրատարակում է Արսեն Թոխմախյանի «Սիրուհին» բանաստեղծությունը:

Հուլիսի 31. «Սիոնը» (№ 7) գրաբար հրատարակում է Նշան Ճիվանյանի (հետագայում՝ «Հորո») «Խնդրեսցի եւ տուաւ ինձ հանճար, հայցեցի եւ եկն յիս ոգի իմաստութեան» և Կարապետ Տեր-Մինասյանի «Ի նկարագիր պատերազմին Գազկայ ընդդէմ Սկիւթաց» բանաստեղծությունները:

Հուլիս-օգոստոս. «Հայկական աշխարհը» (№ 7-8) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Բավական չէ՞» հոդվածը և «Հուշիկք հայրենյաց հայոց» գրախոսականը:

Օգոստոս. «Հույսը» (№ 50), Հակոբ-Արշակ Կոմիտասյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Գեղեցիկ եղանակ» ակնարկը: Հրատարակված է Զարմայր Այվազյանի «Որդւոց առ հայր բացակայ» գրաբար բանաստեղծությունը:

Օգոստոս. Էջմիածնի «Արարատը» (№ 4) արևելահայերն հրատարակում է Մեսրոպ Փափազյանի «Հայ երեխայից անվանակոչություն» հոդվածը: Վերջում, հանելուկի ձևով. տրված է հայկական անունների (Հայկ, Արմենակ, Տրդատ, Մարիամ, Սանդուխտ) ծագման պատմությունը: Հրատարակված է նաև երկու առած («Իմաս-

տուն մի ասաց...» և «Ժիժին առ մրջիմն գնաց...») Վարդան Այգեկցու «Աղվեսագրքից:»

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Բերնարդեն դը Սեն-Պիերի «Բրահման ճամբորդը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի՝ 1871 թ. № 12-ում:

Օգոստոսի 1. «Երկրագունդը» (№ 31) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի «Տեսություն փիլիսոփայության վրա» հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Օգոստոսի 1. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Տեր-Մարտիրոսյանի (Գիրքեցի) «Առակ» չափածո ստեղծագործությունը (թարգմանությունը՝ ?):

Օգոստոսի 2. «Երկրագունդը» (№ 32) Ամբրոսիոս Գալֆայանի՝ (?) ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ո՛վ իմ հրեշտակ» բանաստեղծությունը:

Օգոստոսի 8. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 100) արևմտահայերեն հրատարակում է «Գրավոր նշխար մը Խորեն եպիսկոպոսի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան – Ս.Շ.) երկասիրություններեն» հոդվածը: Զետեղված են Խորեն Գալֆայանի նամակը՝ իր բոլոր գրավոր աշխատությունները Բերայի հրդեհին զոհ դառնալու մասին և ապա նրա ուղերձը՝ նվիրված գրականությանը:

Օգոստոսի 15. «Երկրագունդը» (№ 33) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի «Հրաժեշտ» և նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, Վիկտոր Հյուգոյի «Ո՛վ իմ գեղեցիկ» բանաստեղծությունները: «Արևելյան առածներ» խորագրի ներքո զետեղված են քսանհինգ առած-ասացվածքներ:

Օգոստոսի 15. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 102) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Վշտաց դեղը» բանաստեղծությունը:

Օգոստոսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 23), Հովհաննես Լալայանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ստեփաննոս որսորդը և նրա Պոպ շունը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 27-ում (սեպտեմբերի 12):

Օգոստոսի 15. Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Սարգիս Սյունկյուճյանը: Եղեռնամահ՝ 1916 թ. ապրիլի 12-ին:

«Սվին Սարգիս» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 286-287, 1921, էջ 159-160: **Նույնի**՝ Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 64:

Օգոստոսի 21. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 103) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է աշուղ Սեյադի «Ափսոսանք» բանաստեղծությունը:

Օգոստոսի 22. «Երկրագունդը» (№ 34), Տիրան Միքայելյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Լուիզ Կոլեի «Մանկություն հռչակավոր արանց» ուսումնասիրությունը և «Պերդրան դյու Կեկլեն» դրաման: Վերջինս ավարտվում է նույն պարբերականի № 40-ում (հոկտեմբերի 3):

Օգոստոսի 23. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 104) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը (վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը և այդ հենքի վրա՝ Հովհաննես քահանա Մկրյանի գործունեությունը), Թովմաս Թերզյանի «Հառաչանք տարագրելոց ի Սիպիր» չափածո ստեղծագործությունը և ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ՝ «Մարսեյեզ կամ երգ հայրենի ազատության զաղղիացվոց» բանաստեղծությունը:

Օգոստոսի 24. Ոզուրդեթի գյուղում (Վրացական ԽՍՀ) ծնվեց հոդվածագիր, բանասեր Դիոնիսիոս Գաղատոսյանը (սկզբնական շրջանում՝ Կալատոզյան): Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1892 թ. հունիսի 5-ից: Վախճ. 1931 թ. հունիսի 23-ին, Թբիլիսիում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: **«Բազմավեպ»**, 1931, № 7-8 («Դիոնիսիոս Գաղատոսյան»):

Օգոստոսի 29. «Երկրագունդը» (№ 35-39), խմբագրության փոքրիկ վերջաբանում Ի. Կռիլովի առակների՝ Գաբրիել Այվազովսկու կատարած թարգմանությունները բնութագրելուց հետո, անկանոն պարբերականությամբ սկսում է նմուշներ հրատարակել այդ թարգմանություններից: Ներկա համարում հրատարակվել են «Փիղ և քոթոթ», «Ագռավ և աղվես», «Կապիկ և ակնոց», «Սանտր», «Անցորդք և շունք», «Էշ և սոխակ» առակները: № 46-ում (նոյեմբերի 14)՝ «Տակառ» և «Ոսկի»: № 48-ում (նոյեմբերի 28) «Մկունք» և «Բաժինք»: № 49-ում (դեկտեմբերի 5) «Մահ կենդանյաց»: № 52-ում (դեկտեմբերի 31) «Սագեր» առակները:

Օգոստոսի 29. «Մեղու Հայաստանին» (№ 25) արևելահայերեն հրատարակում է Գագիկ Ներսիսյանցի «Եթե սուտ է, թող ցույց տան» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 5) գրաբար հրատարակում է մի առած («Իմաստուն մարդ») Վարդան Այգեկցու «Աղվեսագրքից»: Հրատարակված է Աբել Մխիթարյանի «Կենսագրություն Զաքարիա պատմագրի, սարկավագի Հովհաննավանա» և Մեսրոպ Սմբատյանի «Արձակագիր Ցոլակերտի» արևմտահայերեն գրական-բանասիրական հոդվածները:

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9) բարբառով հրատարակում է Խիկար Իմաստունի «Զգինին հենց խմեցեք, որ զառյուծն սպանեք» առակը, որը վերցված է Վարդան Այգեկցու «Աղվեսագրքից»: Ֆրանսերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆեղի-բեն Գայյասի «Աստուծո հրեշտակը (պարսկական վեպ մը)» նովելը:

Սեպտեմբեր. «Հույսը» (№ 51) գրաբար հրատարակում է Հակոբ-Արշակ Կոմիտասյանի «Երկիւղ Աստուծոյ» բանաստեղծությունը և Խորեն վարդապետ Աշըղյանցի «Իմաստակության ամենեն սովորականը» արևմտահայերեն հրապարակախոսական հոդվածը: Քննադատված է Անտոն Հասունյանի գործունեությունը «ի մասին ազգի, անոր մշակույթի և գրականության»:

Սեպտեմբերի 5. Գորիում (Վրացական ԽՍՀ), Գրիգոր Գուլիշաբարյանցի, Գրիգոր Դավթյանցի և Եսայի Ամիրաղյանցի սատարմամբ, իր գոյությունն է սկսում տեղական իգական դպրոցը: Սկզբում ուներ 30 աշակերտուհի: Ավանդվում էր կրոն, հայոց, ռուսաց և վրաց լեզուներ, «Նկատողական ուսմունք», թվաբանություն, վայելչագրություն և ձեռագործ:

«Մեղու Հայաստանի», 1870, № 36 («Ազգային»): 1875, № 6 («Գորի»):

Սեպտեմբերի 11. Պոլսում, Ներսես Վարժապետյանի նախաձեռնությամբ, ստեղծվում է կրթական-լուսավորչական «Ներսիսյան սանուց ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «օգնել Խասգյուղի Ներսիսյան երկսեռ վարժարանաց» և նպաստել հայ գրականության զարգացմանը: «Ներսիսյան սանուց ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվերը:

«Հանդես ամսօրյա», 1955, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Սեպտեմբերի 12. «Մեղու Հայաստանին» (№ 27), Ալեքսանդր Սիմոնյանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Թշվառ եղբայր (Ալպյան որսորդների կյանքից առած մի դիպված)» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի 32-ում (հոկտեմբերի 17):

Սեպտեմբերի 12. Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին) ծնվեց նկարիչ-կերպարվեստագետ, ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1935 թ.) Եղիշե Մարտիրոսի Թադևոսյանը: Վախճ. 1936 թ. հունվարի 24-ին Թիֆլիսում, թաղումը՝ հունվարի 29-ին, Երևանում:

«Գրական թերթ», 1936, № 3 («Եղիշե Թադևոսյանի մահը»): **Դրամբյան Ռ.**, Եղիշե Թադևոսյան (կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1935, 171 էջ:

Սեպտեմբերի 19. «Մեղու Հայաստանին» (№ 28) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Տեր-Մարտիրոսյանցի (Գիրքեցի) «Աղվես և կատու» առակը:

Սեպտեմբերի 20. Տուրնեյում (Tournai, Արևմտյան Բելգիա) ծնվեց բելգիացի հայագետ, արևելագետ, Բելգիայի (1935 թ.), Հռոմի հնագիտական (1942 թ.) և Ֆրանսիայի գեղեցիկ դպրության (1945 թ.) ակադեմիաների պատվավոր անդամ Պաուլ Պետերսը: Վախճ. 1950 թ. օգոստոսի 18-ին, Բրյուսելում:

«Հանդէս ամսօրյա», 1905, № 3 («Ծաղկեփունջ»), 1951, № 11-12 («Paul Peeters»): **«Բազմավեպ»**, 1951, № 11-12 («Պաուլ Պետերս»):

Սեպտեմբերի 22. Հաճնում (Հարավային Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հնագետ, պատմաբան-բանասեր Արմենակ Հայկազյանը: Վախճ. 1921 թ. հուլիսի 7-ին, Խարբերդում:

1912 թ. Գոնիայում (ճիշտ ձևը՝ Կոնիա, Հարավային Թուրքիա) հիմնադրել և մինչև 1914 թ. խմբագրել է «Իկոնիոն» ամսաթերթը:

«Հայաստանի կոչնակ», 1921, № 35 («Դոկտոր Արմենակ Հայկազյան»): **Թեոդիկ**, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1922, էջ 416:

Սեպտեմբերի 26. «Մեղու Հայաստանին» (№ 29) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Սարգսի» «Քաղքի դալլաք» երգիծական բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) գրաբար հրատարակում է Թովմաս Երեցի «Երգ զուարճութեան» և XIV դարի անհայտ հեղինակի «Տաղ սրբոյ խաչին» բանաստեղծությունները: Տողատակերում հաղորդված են բանասիրական տեղեկություններ այդ գործերի և նրանց հեղինակների մասին: Հակոբ դպիր Ճամճիզադեի (նաև՝ Ճամճի Օղլու)՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Կատոնի «Յաղագս բարւոք կենցաղավարելոց» տրակտատը, որն ավարտվում է նույն պարբերականի № 11-ում (նոյեմբեր): Տողատակում խմբագրությունը կենսագրական ուշագրավ տեղեկություններ է հաղորդում թարգմանչի մասին:

Սեպտեմբեր-հոկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 9-11) արևելահայերեն հրատարակում է Ս. Ստեփանեի «Մանկական գրքեր» հոդվածը և ֆրանսերեն բնագրից կատարված արևելահայերեն ազատ թարգմանությամբ՝ Արնո Բերկենի «Թուր կամ պատժված հպարտը» վոդևիլը: Իշխան Բագրատունու (իմա՛. Խորեն Ստեփանե) ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Իվան Նիկիտինի «Բամբասանք» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10), «Մոռցված թղթիկը» խորագրի ներքո, արևմտահայերեն ծանոթագրություններով, հրատարակում է Մովսեսի «Երգ առ Յիսուս» գրաբար բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 5. «Մեղուն» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Հարսնացու աղջիկան մը սակարկություն» երգիծական պատմվածքը:

Հոկտեմբերի 8. Պարտիզակում ծնվեց մատենագետ, բանասեր, լեզվագետ, թարգմանիչ (իտալերենից, ֆրանսերենից, հունարենից՝ հայերեն) Արսեն Ղազիկյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1888 թ. հոկտեմբերի 18-ից: Վախճ. 1932 թ. հունիսի 9-ին, Պադուայում (Հս. Իտալիա):

«Բազմավեպ», 1909, № («Մեր արդի գրականությունը»), 1932, № 6-7 («Հանգիստ Արսեն Ղազիկյանի...»), 1970, № 11-12 («Հետադարձ ակնարկ...»):

Հոկտեմբերի 10. «Մեղուն» (№ 8) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Երմոնիկին կռիվը» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հոկտեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանի ««Մեղու Հայաստանիի» հարգո խմբագրին» հոդվածը: Անանիա Սուլթանշահի «Բարով երկիր» և ֆրանսերեն բնագրից նրա թարգմանած «Փաստաբան Ստեփան», Միքայել Տեր-Գրիգորյանի «Էս էլ քի մոցիկլութին», Մոլիերի «Սուտ հիվանդ» և այլ գործերի վերլուծության հենքի վրա բնութագրված է ժամանակի գրական-թատերական կյանքը:

Հոկտեմբերի 14. «Մասիսը» (№ 1016), «Հազար ու մեկ գիշերներ, արաբական վեպեր» խորագրի ներքո, արտատպում է այդ երկասիրության՝ Զմյուռնիայում հրատարակված առաջին հատորի (տե՛ս ներկա հատորի 1870 թ.)՝ Մ.Մամուրյանի կատարած արևմտահայերեն թարգմանությանը նախորդող թարգմանչի առաջաբանը: Փոքրիկ ներածականում «Մասիսը» բարձր է գնահատում «Հազար ու մեկ գիշերները» և բաժանում թարգմանչի տեսակետը, այդ գրքի՝ հայ ժողովրդի համար անհրաժեշտ ու պիտանի լինելու մասին:

Հոկտեմբերի 17. «Մեղուն» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Քամի» (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Մեկ օղիի մեկ ծանուցում» և «Հրավիրակ ամուսնության առ օրիորդս» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1968, էջ 7-9):

Հոկտեմբերի 17. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 106) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը: Վերլուծված է ժամանակի կրոնական, հասարակական և մշակութային կյանքը:

Հոկտեմբերի 19. Ղարաբոյա գյուղում (այժմ՝ Խնկոյան, ՀՀ) ծնվեց մանկական գրող, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), ՀՀ վաստակավոր գրող (1932 թ.), ՀՀ վաստակավոր ուսուցիչ (1932 թ.), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Աթաբեկ Հովհաննես Խնկոյանը: Վախճ. 1935 թ. հոկտեմբերի 6-ին, Երևանում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Խնկո ապեր», «Ախպեր», «Յուվենալ», «Աթիկ», «Աթ.», «Անստորագր.», «Սեփ-Սար», «Գյուղացի», «Գյուղթղթակից», «Խեչո բիձա», «Քեռի Պողոս», «Մարտնչող», «Խնկոյան Աթանես» կեղծանուններով:

Գյուլնազարյան Խ., Աթաբեկ Խնկոյան, Երևան, 1968, 134 էջ: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 233-237:

Հոկտեմբերի 20. Դաղքիսաման գյուղում (այժմ՝ Ադրբեջանական ԽՍՀ, Ղազախի շրջան) ծնվեց կուսակցական գործիչ, հրապարակախոս (գերմաներեն և հայերեն լեզուներով), թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Հովսեփ Ներսեսի Աթաբեկյանցը: Վախճ. 1916 թ. հունվարի 15-ին, Կարսում:

Իր գերմաներեն հոդվածները ստորագրում էր «At.», «Ath.» ձևով:

Բարսեղյան Խ., Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք Ա, Երևան, 1967, էջ 201-211, գիրք Բ, անդ, 1975, էջ 270-272:

Հոկտեմբերի 21. «Մեղուն» (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Օր մը Ակոպջան պեյին հետ» երգիծական վիպակը, որը շարունակվում և մնում է անավարտ, և «Քամի» (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Հայ տուտուներ և մոտիսթրաներ» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1968, էջ 9):

Հոկտեմբերի 21. «Մասիսը» (№ 1018) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Կատաղի տրամաբան մը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1020-ում (նոյեմբերի 4): Բանավիճելով «Մանզումիե էֆքյարում» (իմա՛. «Մտածումների շարք») «Ապահ» կեղծանունով (իմա՛. Մատթեոս

Մ. Այվազյան) հանդես եկող իր հակառակորդի հետ, հոդվածագիրն անդրադառնում է տրամաբանական քննադատության մի քանի խնդիրների։

Հոկտեմբերի 23. «Երկրագունդը» (№ 43) արևմտահայերեն հրատարակում է Սիմոն Ֆելեկյանի «Հառաչանք Եփրատա նոր տարի» բանաստեղծութունը։

Հոկտեմբերի 30. «Երկրագունդը (№ 44) արևելահայերեն հրատարակում է Ռափայել Պատկանյանի «Մշակ»» և «Գանգատ» բանաստեղծությունները։ Վերջում տրված է նրա գրական-հասարակական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկ։

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Խղճի ազատություն» տեսական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 12-ում (դեկտեմբեր)։ Հրատարակված է նաև Գևորգ Տեր-Հարությունյանի «Գեղեցիկ կաղնին» առակը և Թովմաս Երեցի «Տաղք» գրաբար բանաստեղծությունը։

Հոկտեմբերի 31. Ալեքսանդրապոլում ծնվեց պատմաբան, հոդվածագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), խմբագիր Կարապետ Գևորգի Ափինյանը։ Վախճ. 1944 թ. հունիսի 26-ին, Երևանում։

1902 թ. Ալեքսանդրապոլում հիմնել և մինչև 1907 թ. հրատարակել է «Александрапольские объявления» օրաթերթը, 1907 թ. հիմնել և մինչև 1914 թ. խմբագրել է «Ախուրյան» օրաթերթը։ Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Հարութ Ալվանճի» կեղծանունով։

Տեր-Աստվածատրյանց Հ., Բառարան հայ կենսագրությանց, պրակ առաջին, Թիֆլիս, 1904, էջ 180։ **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, էջ 335, 909։

Նոյեմբեր. «Հույսը» (№ 53) արևմտահայերեն հրատարակում է Խորեն վարդապետ Աշըխյանցի «Մանր ուսմունք բանասիրականք» գրականագիտական ակնարկը և «Կարդալ և հասկնալ» անստորագիր հոդվածը։ «Տաճկական առածներ» խորագրի ներքո հրատարակված են տասներկու առած-ասացվածքներ։

Նոյեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Հարություն Ոստանիկի «Ազգային մաղթանք» և Մարիամ Տեր-Գաբրիելյանի «Դիմառ-

նական խոսք» բանաստեղծությունները: Կոստանդ Թադևոսյանի, Վահան Հարությունյանի և Տիգրան Մկրտչյանի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Պոլկովնիկ Ֆրից» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի 1871 թ. № 9-ում (հունվար): Սկսում է հրատարակվել ժողովրդական առածների առաջին փունջը (63 անուն), որը հավաքել և համապատասխան ներածականով հրատարակության էր պատրաստել Հովհաննես Խոջայանցը: Ավարտ՝ նույն պարբերականի 1871 թ. № 9-ում (հունվար): Այդ ընթացքում տպագրվում է ևս 268 առած-ասացվածք:

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11), Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Բարպիերիի «Աշուն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 2. Կարբի գյուղում (այժմ՝ Աշտարակի շրջ.) ծնվեց երգիծաբան, հոդվածագիր, խմբագիր Մուշեղ Արսենի Բագրատունին: Վախճ. 1945 թ. նոյեմբերի 15-ին, Երևանում:

1911 թ. Երևանում հիմնադրել և մինչև 1912 թ. խմբագրել է «Կռան» շաբաթաթերթը, իսկ 1913-1914 թթ.՝ «Նոր մամուլ» եռօրյա թերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Փալանդուզ Մկո», «Խ. Նարիման», «Խ. Նար», «Մե-Բունի», «Սարխոշ» կեղծանուններով:

Պետրոսյան Հ., Հայ գիտնականներ, հրապարակախոսներ, ժուռնալիստներ, Երևան, 1960, էջ 282-284:

Նոյեմբերի 5. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 111) ժողովրդական հայերենով հրատարակում է «Վանի» «Միթե մոռացա՞ր զիս» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 7. «Մեղուն» (№ 15) արևմտահայերեն հրատարակում է «Ապառիկ ծանուցում մը» երգիծական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 7. «Երկրագունդը» (№ 45) արևելահայերեն սկսում է հրատարակել Ռափայել Պատկանյանի «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» պոեմը, որն ավարտվում է նույն պարբերականի № 52-ում (դեկտեմբերի 31):

Նոյեմբերի 9. Ալեքսանդրապոլում ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր, հոդվածագիր Գևորգ Ղազարյանը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 684-658:

Նոյեմբերի 11. «Մասիսը» (№ 1022) գրաբար հրատարակում է Սարգիս Սեֆերյանի «Պանդուխտ կամ հայն սթափեալ» բանաստեղծությունը: Հրատարակված է Գևորգ Շիրինյանի արևմտահայերեն նամակը Հովհաննես քահանա Մկրյանին և վերջինիս պատասխանը, որտեղ, Պարտիզակում հրատարակվող «Սոխակ» ձեռագիր շաբաթաթերթի առիթով, բարձրացված են ժամանակակից գրականության մի քանի հարցեր:

Նոյեմբերի 12. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 113) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Ազգայնություն» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 14. «Մեղուն» (№ 17) արևմտահայերեն հրատարակում է «Վախճանական» երգիծական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 18. «Մեղուն» (№ 18) արևմտահայերեն հրատարակում է «Օրն ութ փարա մեկ ստակ» երգիծական պատմվածքը և Սեյադի «Նկարագրություն» արևելահայերեն երգիծական բանաստեղծությունը: «Նվեր Սեյադեն» խորագրով նմանատիպ մի բանաստեղծություն էլ հրատարակվում է «Մեղվի» հաջորդ համարում (№ 19, նոյեմբերի 20):

Նոյեմբերի 25. «Մասիսը» (№ 1026) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» դրվատական գրախոսականը Ղազարոս Հովակիմյանի «Թալեյրան» գրքի մասին: Պատասխան հոդվածում վերջինս բանավիճում է իր գրախոսի հետ (անդ, 1870, № 1028, դեկտեմբերի 2) և այս հենքի վրա անդրադառնում պատմության՝ իբրև հասարակական գիտության մի ձևի հետ առնչվող հարցերին:

Նոյեմբերի 26. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 117) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Ֆելլահ թագավոր» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 120-ում (դեկտեմբերի 5): Բացասաբար է գնահատված Ղուկաս Պալդազարյանի «հրապարագրային» գոր-

ծունեությունը և նրա խմբագրությամբ հրատարակվող «Արշալույս արարատյան» թերթը:

Նոյեմբերի 28. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 118) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Առ աստղ» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 28. Դարդանելում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր Հայկ Թայքեսենյանը: Վախճ. 1931 թ. հունվարի 4-ին, Պոլսում:

Երջանիկ տարերք (կազմեց Բագրատ Թեյան), Պոլիս, 1949, էջ 78-81:

Նոյեմբերի 30. «Սիոնը» արևմտահայերեն սկսում է հրատարակել Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «Թշվառություն» հրապարակախոսական ակնարկը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Հրատարակվում է նաև «Արձան հանգստեան սարկավագ Գրիգորի Սարգսեան, որ ի Թալասէ» գրաբար բանաստեղծությունը:

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Մաղաք Պլուզյանի «Գրաբար լեզու» հոդվածը: «Իմաստուն և ազգասիրական» որակումով այն արտատպել է «Արշալույս արարատյանը» 1871 թ. № 910-ում (մայիսի 22):

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12), Սամվել Կեսարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Հին և նախնի պատմութիւն (մասն Ա. «Հարկ պատմութեանն», մաս Բ. «Ճառք պատմութեանն»)» բանաստեղծությունը: Անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ հրատարակվում է «Վերջ տարւոյ» չափածո ստեղծագործությունը:

Վերջինն ունի «Ամերիկ.» նշումը, և ըստ այդմ պետք է մակաբերել, որ այն պատկանում է Ամերիկյան մայրցամաքում բնակվող հեղինակներից որևէ մեկի գրչին: Ոիրիշ մանրամասնություններ պարզել չենք կարողացել:

Դեկտեմբեր. «Հույսը» (№ 54) արևմտահայերեն հրատարակում է Խորեն վարդապետ Աշըխյանցի «Պաշտոնական թշնամանք ազգային լեզվի» հոդվածը, Միհրդատ

էսմերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, «Արաբացի վեպ. թագավորի մը դաստիարակը» պատմվածքը: Հրատարակված է «Երկաթե դիմակով մարդը և Ավետիք պատրիարք հայոց» գրախոսականը, որտեղ դրական է գնահատված Մարիուս Թոբենի՝ հիշյալ խորագիրը կրող գիրքը:

Դեկտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Աշխարհաբարի նորաձևությունների հասարակական նշանակություն» հոդվածը, Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Գարուն» բանաստեղծությունը (տե՛ս **Մ.Պեշիկթաշլյան**, Երկերի լիակատար ժողովածու, էջ 90), և Ս. Ստեփանեի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ՝ Տ. Կարոշ-Դեմերվիլի «Հալ-Մեհի Կանտեմիր» պատմվածքը: Այն ավարտվում է նույն պարբերականի 1871 թ. № 1-ում (հունվար):

Դեկտեմբերի 2. «Մեղուն» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է «Պարոններուն և օրիորդներուն շուտ կարգվելու նոր միջոցը» երգիծական պատմվածքը և Սեյադի «Նկարագրություն» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 5. «Մեղուն» (№ 22) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Վարժապետաց սովը» երգիծական պատմվածքը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1972, էջ 7-11):

Դեկտեմբերի 12. «Մեղու Հայաստանին» (№ 40) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Երկու խոսք հարգո ընթերցողներին» հրապարակախոսական հոդվածը: Բնութագրված է Կովկասահայ պարբերականների աննախանձելի վիճակը և ընթերցողների անտարբերությունը նրանց նկատմամբ:

Դեկտեմբերի 12. «Մեղուն» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է «Քամի» (Հակոբ Պարոնյան) «Պատերազմ» երգիծապատումը և արևելահայերեն՝ Սեյադի «Փոխաբերություն» պոեմը:

Դեկտեմբերի 16. «Մասիսը» (№ 1032) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» «Ազնիվ Մասիս» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 18. «Մեղուն» (№ 24) արևմտահայերեն հրատարակում է «Քամի» «Կադանդ և կառավարիչներ» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1972, էջ 12-15), իսկ հաջորդ համարում (դեկտեմբերի 23, № 25)՝ Սեյադի «Երկու ընկեր» առակը:

Դեկտեմբերի 19. «Արշալույս արարատյանը» (№ 899) գրաբար սկսում է հրատարակել «Իրաւախոհութիւն-քարաձգութիւն-պատասխան» վերնագիրը կրող պոեմը, որը խմբագրությանն է ուղարկել «Պետերբուրգեն հայազգի բազմահմուտ ծերունի մը», այսինքն՝ Գաբրիել Պատկանյանը: Ավարտ՝ նույն շաբաթաթերթի 1871 թ. № 901-ում (հունվարի 16):

Դեկտեմբերի 19. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 122) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Ծեծկըռվուք» հոդվածը և Թովմաս Թերզյանի «Երգ ավազակաց» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 23. «Մեղուն» (№ 25) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Բարտոն» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 10-13):

Դեկտեմբերի 23. «Մասիսը» (№ 1034) արևմտահայերեն հրատարակում է Գ.Ս.Կարապետյանի «Ազգին հետադիմության մեկ մեծ պատճառը» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 26. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 123) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Պապա Զաքար» նովելը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում և Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Դեկտեմբերի 26. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Մեղուի հաշվին» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) գրաբար հրատարակում է Կարապետ Տեր-Մինասյանի «Առ Հայաստան» բանաստեղծությունը և Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «1870 թվականը» հրապարակախոսական հոդվածը:

–––Սեբաստիայում, Խաչատուր Գարապաճագյանի նախաձեռնությամբ ու քանևրկու ազգային երևելիների անդամակցությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Լուսաբեր» ընկերությունը: Այն իր առջև նպատակ է դնում «ամեն կիրակի զանազան մատյաններ կարդալ, չհասկցած կետերը բացատրել, անկարող ուսանողաց համար ձրիաբար թուղթ, գիրք, գրիչ, մելան մատակարարել»:

1882 թ. սեպտեմբերի 1-ին Պոլսում Մխիթար Գրմըզյանի, Մկրտիչ Տեմիրճյանի, Ոսկան Թերզյանի և այլոց նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում վերոհիշյալ ընկերության Պոլսի մասնաճյուղը, որը 1880-ական թվականներին հիմնում է իր գրավաճառանոցը և շուրջ 150 աշակերտ ունեցող դպրոցը: Ներքին որոշ վերակառուցումներից հետո «Լուսաբերը» գոյություն ունեցավ մինչև 1920-ական թվերը:

Ընդարձակ տարեցույց, Պոլիս, 1925, էջ 305-315: **Պողոսյան Ե.**, Պատմություն հայ մշակութային ընկերություններու, հ. Բ, Վիեննա, 1963, էջ 318-323:

–––Թեհրանում, Միքայել Մարգարյանի տեսչությամբ և Հովսեփ Գասպարյանի, Նազար Գորոյանի, Աբրահամ Ավետիսյանի, Գևորգ Ջոհրապյանի ուսուցչությամբ, իր գոյությունն է սկսում «Հայկազյան» հինգդասյա արական դպրոցը: Ավանդվում էր հայերեն (գրաբար), ֆրանսերեն, հնախոսություն, քերականություն, դիցաբանություն, աշխարհագրություն, ազգային պատմություն, հետագայում՝ նաև պարսկերեն: 1919-1920 ուս. տարում «Հայկազյան» արական դպրոցին միացվում է նաև աղջիկների դպրոցը (հիմն. 1881 թ. Մեսրոպ Փափազյանի ջանքերով, տրվում է նոր՝ «Թեհրանի հայկազյան երկսեռ դպրոց» անվանումը, որը ծաղկուն ժամանակ ուներ 329 սովորող (171 աղջիկ և 158 տղա):

Թեհրանի հայկազյան երկսեռ դպրոցի համառոտ պատմությունը, Թեհրան, 1925, 69 էջ: **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բայրութ, 1958, էջ 373-380, 1959, էջ 433-435:

–––Թեհրանում, Միքայել Մարգարյանի, Հովսեփ Գասպարյանի և Կարապետ Բազիրկանյանի ջանքերով, ստեղծվում է կրթական-լուսավորչական «Ռուսումնասիրաց ընկերությունը»: Վերջինիս նպատակն էր «Թեհրանում յուր ծախյուք և հոգա-

տարությամբ կառուցված «Հայկազյան» վարժարանում (տե՛ս վերև - Ս.Շ.) ամեն աստիճանի և վիճակի հայ մանկանց մտավորական կարողությունը մշակել տալ և ... ազգին և մարդկության համար ժիր մշակներ պատրաստել»: 1874 թ. ընկերությունը ստեղծում է մի քանի հարյուր կտորից բաղկացած իր գրադարանը, որն ի սպաս է դրվում նաև ամբողջ թեհրանահայությանը: «Ռխսումնասիրաց ընկերությունը» 1920-ական թվականներին դեռ գոյություն ուներ:

Աղբյուրները՝ վերևում:

---Պոլսում ծնվեց լրագրող, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Քերովբե Լիմոնճյանը: Վախճ. 1930 թ. իր ծննդավայրում:

«Լիոնքե» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 207: **Ընդարձակ տարեցույց**, Պոլիս, 1930, էջ 370: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 29:

---Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր, հայ արվեստի պատմաբան Սահակ Աստվածատուրյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1903 թ.: Վախճ. 1949 թ. օգոստոսի 28-ին, Երուսաղեմում:

«Սիոն», 1943, № 7-9 («Սահակ ծ.վ. Աստվածատուրյան»): **Մկրտիչ Աղավնունի**, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1920, էջ 442:

---Պոլսում ծնվեց հոդվածագիր, բանասեր (մասնագիտությամբ իրավաբան) Պետրոս Գարայանը: Վախճ. 1914 թ. իր ծննդավայրում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 475:

---Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Լևոն Եղիայի Տնտեսյանը: Վախճ. 1941 թ. հուլիսի 30-ին, իր ծննդավայրում:

Ընդարձակ տարեցույց ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1942, էջ 277:

---Պոլսում ծնվեց հոդվածագիր (հայերեն և թուրքերեն լեզուներով), հասարակական կյանքի տեսաբան Աբիկ Մուբահաճյանը: Վախճ. 1946 թ. մարտի 15-ին, իր ծննդավայրում:

«Արշամ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ընդարձակ տարեգիրք Ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1946, էջ 383: **«Հայաստանի կոչնակ»**, 1946, № 18 («Ա. Մուպահաճյանի մահը»):

–––Պոլսում ծնվեց լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), հուշագրող (մասնագիտությամբ բժիշկ) Պողոս Գոլոյանը: Վախճ. 1956 թ. սեպտեմբերի 7-ին Փարիզում:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1957, էջ 639:

–––1870 (?) Պոլսում ծնվեց նկարիչ, լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), արվեստի քննադատ Հրանտ Հովսեփի Ալանակյանը: Վախճ. 1938 թ. Փարիզում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 54-55, 851:

–––1870 (?) Պոլսում ծնվեց լրագրող, խմբագիր, թարգմանիչ (ֆրանսերենից և թուրքերենից՝ հայերեն) Սիմոն Չեռմլեքճյանը: Վախճ. 1930 թ.:

«Ժիրայր Շիրակացի», «Հայր Վարդան», «Հաջի Օգսեն», «Սիմոն Ծերունի» և այլ կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: 1907 թ. Պոլսում խմբագրել է «Փունջ» շաբաթաթերթը, 1906-1908 թթ. «Բյուրակն» ամսագիրը (Արտ. Գալպակչյանի հետ): 1896 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1901 թ. խմբագրել է «Առաջնորդ վաճառականաց» ամսաթերթը, 1903 թ. Ալեքսանդրիայում՝ «Փեթակ» շաբաթաթերթը, 1908 թ. Պոլսում խմբագրել է «Առևտուր» վաճառականական շաբաթաթերթը, 1925-1930 թթ. «Ժամանակ» օրաթերթը: 1911 թ. Պոլսում, Ա. Գալպակչյանի հետ համատեղ հիմնադրել և մինչև 1913 թ. խմբագրել է «Լուսարձակ» օրաթերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 337: **Ընդարձակ տարեցույց** , Պոլիս, 1930, էջ 369:

–––1870 (?) Պոլսում ծնվեց հոդվածագիր, գրող Տիգրան Ասլանյանը: Վախճ. 1925 թ. սեպտեմբերի 16-ին Փարիզում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1926, էջ 732-733: «Նոր լույս», 1925, № 307 («Անծանոթ ծերունիի մը անձնասպանությունը»):

–––1870 (?) Պոլսում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից և անգլերենից՝ հայերեն) Երվանդ Աղամյանը: Վախճ. 1935 թ. հոկտեմբերի 18-ին Նյու Յորքում:

«Երվանդունի» և «Մժեժ Գնունի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1935, № 46 («Մահ և հուղարկավորություն Երվանդ Աղամյանի»):

–––1870 (?) Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Ազապի Սայլապալյանը (Կյուլպենկյան): Վախճ. 1925 թ. մարտի 10-ին իր ծննդավայրում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Էտլվայս» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս 1913, էջ 336, 1927, էջ 618:

–––Կեսարիայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, եկեղեցու պատմաբան Փառնակ Իսկենդերյանը: Վախճ. Նյու Յորքում:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2036-2037:

–––Թալասում (Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց գրահրատարակիչ, հոդվածագիր, խմբագիր Բարսեղ Քեշիշյանը: Վախճ. 1909 թ. հունվարի 1-ին Զմյուռնիայում:

1907 թ. Զմյուռնիայում հիմնադրել և մինչև մահը խմբագրել է «Արշալույս» օրաթերթը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 138:

–––Չմշկածագում (Արևելյան Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, հոդվածագիր Ղազարոս Ե. Պոյաճյանը: Վախճ. 1944 թ. փետրվարի 23-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1943, № 4 («Ինքնատիպ հայ մը»): 1944, № 10 («Ղազարոս Պոյաճյանի մահը»): № 11 («Ղազարոս Պոյաճյան»):

–––Խանքենդ գյուղում (այժմ՝ Ստեփանակերտ, Լեռնային Ղարաբաղ) ծնվեց դրամատուրգ, ակնարկագիր Եկատերինա Բեգլարի Բահաթրյանը (Բահաթուր): Վախճ. 1944 թ. նոյեմբերի 9-ին Երևանում:

Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 247:

–––Արաբկիրում (Արևելյան Թուրքիա) ծնվեց բանասեր, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն, իտալերենից՝ ֆրանսերեն), բառարանագիր, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), բարբառագետ-լեզվաբան Մարտիրոս Սարգսյանը: Վախճ. 1938 թ. Փարիզում:

«Դավիթ-բեկ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1938, № 8 («Վաստակավորի մը մահը»):

–––1870 (?) Վանում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր Մարտիրոս Պաղտասարյանը: Վախճ. 1941 թ. սեպտեմբերին Բասսետինայում (Կալիֆորնիա, ԱՄՆ):

1903-1908 թթ. Բոստոնում խմբագրել է «Կոչնակ Հայաստանի» շաբաթաթերթը:

«Հայաստանի կոչնակ», 1941, № 1 («Հետադարձ ակնարկներ»), № 38 («Մ. Պաղտասարյանի մահը»), № 41 («Վեր. Մարտիրոս Պաղտասարյան»):

–––1870 (?) Նոր Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (անգլերենից և գերմաներենից՝ հայերեն), խմբագիր Թեոդորոս վարդապետ Տեր-Իսահակյանը: Վախճ. 1942 թ. սեպտեմբերի 1-ին իր ծննդավայրում:

1887 թ. Պոլսում հիմնել և մինչև 1889 թ. խմբագրել է «Եկեղեցի Հայաստանյայց» շաբաթական հանդեսը: 1900 թ. փոխադրվելով Մանչեստր, վերսկսել է հրատարակությունը, վերանվանելով պարբերականը «Հայ եկեղեցի և վերածելով ամսաթերթի», որը գոյատևել է մինչև 1901 թ.:

«Հայաստանի կոչնակ», 1943, № 27 («Տ. Թեոդորոս... Իսահակյան վախճանած»):

–––1870 (?) Թավրիզում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հոդվածագիր Մուշեղ Տեր-Օհանյանը: Վախճ. 1907 թ. փետրվարի 15-ին Կրասնովոդսկում (այժմ՝ Թուրքմենական ԽՍՀ):

«Մշակ», 1907, № 47 («Գրչի զինվորը»), № 49 («Մուշեղ Տեր-Օհանյանի սպանության առթիվ»), № 50 («Մշակ» լրագրի թղթակցի սպանության...»):

–––Արաբկիրում (Կենտրոնական Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, բառարանագիր, լեզվագետ, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն), խմբագիր Մ.Ս. Դավիթ Բեկը (Սարգիս Սարգսյան): Վախճ. 1938 թ. կեսերին Փարիզում:

1899 թ. Փարիզում հիմնել և մեկ տարի խմբագրել է «Նոր Պարիս» պարբերականը: Իր ֆրանսերեն հոդվածներն ու թարգմանությունները ստորագրում էր «Ell ei Moi» ձևով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 952-953: **«Հայաստանի կոչնակ»**, 1938, № 27 («Մ.Ս. Դավիթ-բեկի մահը»):

–––Քուշնա գյուղում (Արաբկիրի շրջան, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց կուսակցական գործիչ, հոգեբան, հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով) Հարություն Շեքերջյանը (Շերպեթճյան): Վախճ. 1912 թ. Թիֆլիսում:

1897 թ. Լոնդոնում խմբագրել է «Ապտակ» հանդեսը:

«Հնչակյան տարեգիրք», Պրովիդենս, 1931, էջ 84-91:

–––Ճանճղա գյուղում (Ախալքալակի շրջան, Վրացական ԽՍՀ) ծնվեց գրականագետ-բանասեր, լեզվաբան Գրիգոր Քրիստափորի Վանցյանը: Վախճ. 1908 թ. մայիսի 5-ին, Թիֆլիսում:

«Մշակ», 1908, № 98 («Մահազդ»), № 104 («Կյանքի տրագեդիաներից»), **«Հանդես ամսօրյա»**, 1908, № 7 («Գրիգոր Վանցյան»): **«Բազմավեպ»**, 1910, № 1 («Գրիգոր Վանցյան»):

–––Պարտիզակում ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, հոդվածագիր Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմյանը: Վախճ. 1951 թ. մայիսի 2-ին Աթենքում (Հունաստան):

«Սիոն», 1951, № 5 («Գեր. Տ. Կարապետ արքեպիսկոպոս Մազլըմյան»): **Գնորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1957, էջ 244-253:

–––1870 (?) Նոր Ջուղայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից՝ անգլերեն, ֆրանսերենից և անգլերենից՝ հայերեն) Հուսիկ Աստվածատուրի Մելքոնը (Մելքոնյան): Վախճ. 1935 թ. դեկտեմբերի 16-ին Լոս Անջելեսում (Կալիֆորնիա նահանգ, ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1936, № 2 («Հուսիկ Մելքոնի մահը»):

–––Սիվրի-Հիսարում (Արևելյան Թուրքիա) ծնվեց գրական-հասարակական գործիչ, հոդվածագիր, խմբագիր Հովհաննես Գամպերյանը:

«Մերամ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 223-224:

–––Թալասում (Կեսարիայի շրջ., Կենտրոնական Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր Կարապետ Քերթմենյանը: Վախճ. 1915 թ. (?):

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, Ա հատոր, Կահիրե, 1937, էջ 1245:

–––Անկարայում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, պատմաբան-բանասեր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Մատթեոս Ֆերահյանը: Վախճ. 1955 թ. ապրիլի 26-ին Լոս Անջելեսում:

Գնորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1956, էջ 567-568:

–––Ռնդևան գյուղում (Տիգրանակերտի նահանգ, Թուրքիա) ծնվեց հոդվածագիր, բանաստեղծ Վարդան Ամիրխանյանը: Վախճ. 1947 թ. դեկտեմբերի 31-ին Ֆրեզնոյում (Կալիֆորնիա նահանգ, ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1948, № 3 («Վերապատ. Վ. Ամիրխանյանի մահը»), № 7 («Վեր. Վարդան Ամիրխանյան»), № 20 («Անհետացող դեմքեր»):

–––Մարաշում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հարություն Վարդիվարի Մուրադյանը: Վախճ. 1948 թ. հուլիսի 5-ին Կոլումբիայում (Հարավային Ամերիկա):

«Հայաստանի կոչնակ», 1948, № 35 («Պրոֆ. Հարություն Վ. Մուրադյան»):

–––Շուշիում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց արձակագիր, բանաստեղծ, գրաքննադատ Արշակ Թումանյանը: Վախճ. 1905 թ. փետրվարին Բաքվում:

«Կայծունի» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Տարազ», 1905, № 5 («Թիֆլիսի քաղաքագլխից»), № 8 («Արշակ Թումանյան», «Կայծունի»):

–––Սանգիբարան գյուղում (Պարսկաստան, Փերիայի գավառ), Դավիթ Դավթյանի նախաձեռնությամբ, հիմնվում է արական դպրոց, որն սպասարկում է նաև շրջակա

քանութ հայկական գյուղերին: Դպրոցը ծաղկուն ժամանակ ուներ 200 աշակերտ և 15 ուսուցիչ: Իր գոյությունը դադարեցրել է 1906 թ.:

«Հայաստանի կոչնակ», 1928, № 27 («Վարպետը»):

–––Մուշում (Արևելյան Թուրքիա) ծնվեց լրագրող, պատմաբան, բանաստեղծ Եղիշե Պարսամյանը: Վախճ. 1936 թ. Միլանում (Հյուսիսային Իտալիա):

Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1937, էջ 409:

–––1870 (?) Պարտիզակում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հակոբ Ալոճյանը:

1910 թ. Պարտիզակում հիմնել և մինչև 1912 թ. խմբագրել է «Փարոս» ամսաթերթը (վերջին մի քանի համարները հրատարակվել են Պոլսում): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նշույլ», «Ջգոն Սյունի», «Գեղամ Գրասեր», «Ռ.Ռոզմերի», «Հայր Վարդաբույր» կեղծանուններով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 70-71:

–––1870 (?) Բաքվում ծնվեց գրական-հասարակական գործիչ, հոդվածագիր, խմբագիր Իսահակ Ամիրյանը: Վախճ. 1937 թ.

1919 թ. Բաքվում հիմնադրել և խմբագրել է «Երկիր» եռօրյա քաղաքական թերթը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 130:

–––Արմաշում (?) ծնվեց բանաստեղծ, կրթական-մշակութային գործիչ Միհրան Թապպազճյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 352:

–––1870 (?) Կեսարիայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և թուրքերեն լեզուներով), հայ եկեղեցու պատմաբան Կարապետ Ադանալյանը: Վախճ. Դետրոյդում (Միչիգան նահանգ, ԱՄՆ):

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո, հ. Բ, Կահիրե, 1937, էջ 2034-2036:

–––Մարաշում ծնվեց մշակութային գործիչ, թարգմանիչ Գեորգ Ջանազյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1902 թ., վախճ. 1947 թ. հունիսի 5-ին Երուսաղեմում:

«Սիոն», 1947, № 8 («Հանգիստ Տ. Գեորգ վարդապետ Ճանազյանի»):

–––Պարտիզակում ծնվեց գրահրատարակիչ, խմբագիր Հովհաննես Ազնավուրը:

1918 թ. Պոլսում հիմնել և մինչև 1919 թ. խմբագրել է «Խելոք Դավիթ» շաբաթօրյա երգիծաթերթը:

Թեոդիկ, Տիպ ու տառ, Պոլիս, 1912, էջ 128: **Պոտուրյան Մ**., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 46, 848:

–––Ալեքսանդրապոլում ծնվեց բանահավաք, գրող, մշակութային գործիչ Մկրտիչ Սահակի Իսահակյանը (Ավետիք Իսահակյանի ավագ եղբայրը): Վախճ. 1921 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 17:

–––Շամախիում ծնվեց արձակագիր, հոդվածագիր Սմբատ Գարագաշը:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 234:

* * *

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է [Հակոբոս Իսավերտենցի] «Գաղղիա և Պրուսիա. Ճակատամարտք 1870 ամին» աշխատության առաջին մասը: 378 էջ:

Երկրորդ մաս՝ նույն թվականին (ունի «Գաղղիա և Պրուսիա. Ճակատամարտք 1870-1871 թթ.» վերնագիրը, 548 էջ:

Երրորդ մաս, 1871 թ. (ունի «Գաղղիա և Պրուսիա. քաղաքական պատերազմ» խորագիրը), 276 էջ:

–––Վենետիկում, Աբրահամ Ճարյանի՝ հունարեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակվում է Պլատոնի «Փեդոն կամ վասն անմահութեան հոգւոյ» աշխատությունը: 192 էջ:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակվում է Պուբլիոս Վիրգիլիոսի «Հովուականք» ստեղծագործությունը: 143 էջ:

–––Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժակ-Բենին Բոսյուեի (Մելդացի) «Ճառք դամբանականք վեց» ժողովածուն: 254 էջ:

–––Վենետիկում, անգլերեն և գրաբար համատեղ բնագրերով, հրատարակվում է «Լորդ Բայրոնի հայերեն վարժությունները և բանաստեղծությունները» ժողովածուն (”Lord Byron’s armenian exercises and poetry”): 167 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1907 թ.:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Նշմարք և նշխարք Հայաստանի» աշխատությունը: 110 էջ:

Նույնն անփոփոխ՝ նույն թվականին, նույնը՝ «Հայ դասականների գրադարան» մատենաշարով (բնագիրը, առաջաբանն ու ծանոթագրությունները Ս. Շտիկյանի), Երևան, 1981, էջ 231-296: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1869 թ. № 3-ից սկսած:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սերովբե Դավթյանի «Պատճառք վիճից հայոց ուղղափառաց» աշխատությունը: 40 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գրիգոր Դերձակյանի բանաստեղծությունների ժողովածուն «Օրական կաղանդ» խորագրով: 34 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եղիա Տեմիրճիպաշյանի «Շահնազարյանի մը խղճին պարզ քննությունը» գրքույկը: 37 էջ:

Տեմիրճիպաշյանի ճառն է, որը նա կարդացել է Պոլսի «Նուպար-Շահնազարյան վարժարանի»՝ 1870 թ. մրցանակաբաշխության հանդեսի ժամանակ (տե՛ս «Մասիս» 1870, № 1003):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Խոսակցություն մեռելոց» գրքույկը: 16 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ.Գ. Տեիրմենճյանի «Օդային սուրհանդակ, տետր այլաբանական» հրապարակախոսական աշխատությունը: 48 էջ:

–––Պոլսում, Տիմիթրիոս Չոլաքիդեսի՝ հունարեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ենիչերիք» պատմական վեպի Ա մասը: 308 էջ: Բ մասը՝ նույն թվականին, 268 էջ:

––––Պոլսում հրատարակվում է Տ. Գրիգորյանի «Բառեր և խոսակցություններ ութը լեզուե, տաճկերեն, հայերեն, հունարեն, ռուսերեն, գաղղիերեն, իտալերեն, գերմաներեն, անգղիերեն» աշխատությունը: 47 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ավետիս Պերպերյանի «Կայծակ բրգակործան» աշխատությունը: 110 էջ:

––––Պոլսում գրաբար հրատարակվում է «Ճանապարհորդութիւն տէր Յօհաննէս քահանայի Վաղարշակերտցւոյ (իմա՛. Ոսկերչյան – Ս.Շ.) ի սահմանս բարձր Հայոց» գրքի Ա հատորը: 80 էջ: Հետագա հատորների մասին մանրամասնություններ գտնել չենք կարողացել:

––––Պոլսում, Մկրտիչ Աճեմյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆելիցիտե Լամընյեի «Գիրք ժողովրդյան» աշխատությունը: 144 էջ: Վերջում (էջ 101-144) զետեղված է նույն հեղինակի «Ձայն ի բանտե» գործը:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Թադևոս Միհրդատյանցի «Հատկություն Արարատա և Նորին սուրբ եկեղեցվո» աշխատությունը: 57 էջ:

––––Պոլսում, Թովմաս Թերզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էմե Մարդենի «Հրաշալիք բնության» աշխատությունը: 128 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Շիշմանյանի (Ծերենց) հրապարակախոսական-գրաքննադատական հոդվածների ժողովածվի Ա գիրքը, «Հրատարակության հավաքմունք» խորագրով: 164 էջ:

Ժողովածուի հետագա գրքերը չեն հրատարակվել:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պետրոս Շանշյանի «ՈԻսումն պարտուց» մանկավարժական աշխատությունը: 160 էջ:

Նույնը՝ Երուսաղեմ, 1874 թ., 324 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ա.Պեյլերյանի «Գեղջկական հարսանիք ի Հայաստան» աշխատությունը: 63 էջ:

––––Պոլսում, Ղազարոս Պողոսյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Թովմաս Ըփհայմի «Կամք կամ կամական հանգամանք մտաց» աշխատությունը: 314 էջ:

–––Պոլսում, գրաբար և արևմտահայերեն լեզուներով, հրատարակվում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի ստեղծագործությունների անդրանիկ ժողովածուն, «Մատենագրութիւնք Մ. Պեշիկթաշլյանի» վերնագրով: 600 էջ: Այն հրատարակության է պատրաստել Հովսեփ Շիշմանյան-Ծերենցը:

–––Պոլսում, իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ա. Դուղիի «Արևելյան կաթոլիկ հայոց իրավանցը իրավաբանական պաշտպանություն» աշխատությունը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Նահապետ Ռուսինյանի «Տեղեկագիր վերաքննիչ հանձնախմբին Սահմանադրության» ուսումնասիրությունը: 22 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 483 էջ:

Գիրքն ավարտվում է դժվարիմաց բառերը մեկնաբանող բառարանով: (Տե՛ս նաև՝ **Գրիգոր Նարեկացի**, Մատեան Ողբերգութեան, Երևան, 1985, էջ 219):

–––Պոլսում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Ա.Ս.Տ.), հրատարակվում է Ալեքսանդր Դյումա-հոր «Հռչակավոր ոճիրք (Պորճիայք)» վիպակը:

–––Պոլսում, Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Իվան Կռիլովի առակների ժողովածուն «Առակք Քռիլովի յինն գիրս» վերնագրով: 436 էջ: Նույնը՝ Վաղարշապատում, 1896 թ., 407 էջ:

Որպես առաջաբան՝ նույնի թարգմանությամբ զետեղված է Պյոտր Ալեքսանդրովիչ Պլետնյովի «Վարք Հովհաննես Քռիլովի» ուսումնասիրությունը:

–––Պոլսում, Կարապետ ՈՒթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է Մարիուս Թոբենի «Երկաթե դիմակով մարդը և հայոց Ավետիք պատրիարքը» ուսումնասիրությունը: 143 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Մասիսում», նույն թվականի հունվարի 10-ից (№ 980) սկսած (տե՛ս ներկա հատորը, այդ թվականը):

–––Պոլսում, Համբարձում Փառնակյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է գերմանացի Օտտո Հյուպների «Տարերք քաղաքական տնտեսության» աշխատությունը: 199 էջ:

–––Պոլսում, Անտոն Գարագաշյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էմե Մարթենի «Դաստիարակություն մարց կամ քաղաքականություն ազգի մարդկան ի ձեռն կանանց» աշխատության առաջին հատորը: 146 էջ:

Հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Անտոն-Մատաթիա Գարագաշյանի «Գործնական քերականություն հայկական լեզվի» դասագիրքը: 256 էջ:

Նույնը՝ 1874 թ. (248 էջ), 1876 թ. (250 էջ), 1880 թ. (271 էջ), 1881 թ. (271 էջ), 1883 թ. (?), 1884 թ. (303 էջ), 1887 թ. (296 էջ), 1890 թ. (294 էջ), 1893 թ. (300 էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Թ.Մ.Տ.Ա.Մ.-ի (իմա՛.՝ Թադևոս Միհրդատի Տեր-Աստվածատրյան Միհրդատյանց) «Հրաբուղխ Արարատայ Նորին ամենամաքուր եկեղեցւոյն դէմ մաքառող թշնամեաց և լուծումն խնդրոյ հռովմէական գրությանց» աշխատությունը (Ա, Բ, Գ հատորներ): 233 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Թադևոս Միհրդատյանցի «Յատկութիւն Արարատայ և Նորին սուրբ եկեղեցւոյ» աշխատությունը: 57 էջ:

Աշխատությունը բաղկացած է երկու ինքնուրույն մասերից՝ «Մասն Ա. Բանասիրական քննութիւն ի վերայ Արարատ անուան, թէ զինչ նշանակէ» (էջ 1-34) և «Մասն Բ. Բանասիրական տեղեկութիւն ի վերայ Արարատեան սուրբ եկեղեցւոյ թէ զինչ կոչել պարտ է արդեօք՝ Լուսաւորչական, Առաքելակա՞ն և թէ Քրիստոսական» (էջ 36-57):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ղազարոս Հովակիմյանի «Թալերան» ուսումնասիրությունը: 93 էջ:

–––Պոլսում, Ս. Ղուկասյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Դեպրեո Գաթրֆաժի «Մարդաբանություն» աշխատության Ա պրակը («Միություն մարդկային տեսակի»): 46 էջ:

Բ պրակ («Ընդհանուր խնդիրք»)՝ 1871 թ., 51 էջ:

Գ պրակ («Ծագումն մարդոց»)՝ նույն թվականին, 40 էջ:

–––Պոլսում, Կարապետ Պաղճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Խորեն Նար-Պեյի (իմա՛. Խորեն Գալֆայան) «Հայոց եկեղեցին և անդրալեռնականք» գրքույկը: 78 էջ: Մի հատված սկզբից, նույն վերնագրով, արտատպել է Զմյուռնիայի «Արշալույս արարատյանը» (1870 թ., № 887, հուլիսի 4):

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Պողոս Գալըպճյանի «Կրթություն տաճկական լեզվի» աշխատությունը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Յոթն գիշերք կամ խոսակցություն երկու հայազգի եղբարց (Գիշեր առաջին)» գրքույկը (հեղ. Մ.Տ.Գ.): 88 էջ:

Հետագա գրքույկները չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Արմենակ Ասատուրյանի «Քերականություն անգղիերեն լեզվի» աշխատությունը: 279 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Էմմանուել Եսայանի «Արշակ Բ» պատմական ողբերգությունը: 95 էջ:

–––Պոլսում, իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պիոս 9-րդ պապի «Առաքելական թուղթ առ կաթողիկե հայս պատրիարքությանն Կիլիկիո» կոնդակը: 8 էջ:

–––Պոլսում հայերեն, ֆրանսերեն և իտալերեն զուգահեռ տեքստերով հրատարակվում է «Թուղթ քահանայից արևելյան հայ կաթողիկե ազգին ի պատասխանի թղթոյն մոնսինյոր Բլյումի» աշխատությունը: 62 էջ:

Նույն թվականին, աշխատության միայն հայերեն հատվածը հրատարակվել է առանձին գրքով, անփոփոխ: 15 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Թորոս Նազարյանի կազմած «Հաւաքածոյք յընտիր մատենագրաց» աշխատության Ա. հատորը (արձակ): 351 էջ:

Բ. հատոր (ոտանավոր), նույն թվականին, 114 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Բյում ի Կոստանդնուպոլիս, կամ արևելյան հայք և Պրոպագանդա» գրքույկը: 22 էջ:

–––Պոլսում, Հակոբ Աթթայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է *** աբբայի «Ճիզվիթն» վիպակի Ա հատորը: 296 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Համբարձում Գալֆայանի «Ծեր սիրահար» բանաստեղծական վիպասանությունը: 80 էջ:

–––Պոլսում, Հովսեփ Շիշմանյանի (իմա՛. Ծերենց)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էդմոն դը Բրեսանսեի «Տիեզերական ժողով Վատիկանա. նախաշավիղ նորա և կազմություն» աշխատությունը: 71 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է «Ընտանեկան բառարան տղայոց վարժության համար (մասն առաջին)» աշխատությունը: 48 էջ:

Հեղինակն իրեն կոչում է «Ռ.Մ.», որի ով լինելը մեզ չհաջողվեց պարզել: Աշխատության հետագա մասերը չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ. Տամատյանի «Պոլիփեմ կամ անդրալըյան հայ մը» աշխատությունը: 80 էջ:

–––Վաղարշապատում, առաջաբանով ու ծանոթագրություններով, գրաբար հրատարակվում է Սիմեոն Ապարանցու «Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի» աշխատությունը: 162 էջ:

–––Վաղարշապատում, առաջաբանով ու ծանոթագրություններով գրաբար, հրատարակվում է Աբրահամ կաթողիկոս Կրետացու «Պատմագրութիւն անցից իւրոց և

Նատր-շահին պարսից» աշխատությունը: Հաջորդում է «Կոնդակ Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ» կոնդակը և «Պատմութիւն Անի քաղաքին, զոր գրեալ է Աբրահամու Ռաբունապետի եւ բանի սպասաւորի եւ առաջնորդին Թրակիոյ» ուսումնասիրությունը: 129 էջ:

–––Վաղարշապատում, առաջաբանով ու ծանոթագրություններով, գրաբար հրատարակվում է Մինաս Համդեցու «Ազգաբանութիւն հայոց» աշխատությունը: 144 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Պատմութիւն Հոռոմոսին եւ տեղագրութիւն Մարմաշէն վանորէիցն ի Շիրակ» աշխատությունը: 53 էջ: Վերջում զետեղված է «Տեղագրութիւն Մարմաշինոյ վանացն ի Շիրակ» գործը:

–––Վաղարշապատում, առաջաբանով ու ծանոթագրություններով, գրաբար հրատարակվում է Զաքարիա Սարկավագի (Քանաքեռցի) «Պատմագրութիւն» աշխատության առաջին հատորը: Դ+87 էջ:

Երկրորդ հատոր (Բ+143 էջ) և երրորդ հատոր (46 էջ)՝ նույն թվականին:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Հազար ու մեկ գիշերներ, արաբական վեպեր» ժողովածվի առաջին հատորը: 223 էջ:

Բ. գիրք (219 էջ), Գ. գիրք (318 էջ), Դ. գիրք (212 էջ) անդ, նույն թվականին, Ե. գիրք (231 էջ) և Զ. գիրք (204 էջ) անդ, 1871 թ.:

–––Զմյուռնիայում գրաբար հրատարակվում է Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը: 519 էջ:

Չնայած համարվում է 1843 թ. Զմյուռնիայում հրատարակված համանուն գրքի վերահրատարակությունը (տե՛ս՝ **Շտիկյան Ս**., Հայ նոր գրականության ժամանակագրություն, Երևան, 1973, էջ 267), որի հետևանքով էլ ունի «Բ. տպագրութիւն» նշումը, բայց կատարված են որոշ հավելումներ ու բնագրի ճշգրտումներ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էոժեն Սյուի «Մատիլդ (նորատի կնոջ մը հիշատակները)» վեպի առաջին հատորը: 317 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին: 335 էջ: Երրորդ (350 էջ) և չորրորդ (326 էջ) հատորներ՝ 1871 թ.:

–––Զմյուռնիայում, Գեորգ Պուպլիի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Շազլը Ֆիլարեթի «Մարդ իրենց գործերու զավակները» ճառը: 30 էջ:

–––Կալկաթայում գրաբար հրատարակվում է Հովհաննես քահանա Խաչկյանի «Տեսիլ արժանեաց ի դաստիարակութիւն աշխարհի» աշխատությունը: 24 էջ:

–––Կալկաթայում գրաբար հրատարակվում է Հովհաննես Խաչկյանի «Համառոտ քրիստոնէականութիւն, ըստ դավանութեան Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյ, յատուկ ի պէտս դպրատանց Հնդկաստանի և Ջուղայ» աշխատությունը: 102 էջ:

–––Կալկաթայում գրաբար հրատարակվում է Հովհաննես քահանա Խաչկյանի «Երկնային հրաւիրակ, որ ի խաւարէ կենցաղոյս կոչէ զմեղաւորս ի լուսեղէն խորանս երկնից» աշխատությունը: 37 էջ:

–––Պետերբուրգում գրաբար հրատարակվում է Մաղաքիա Աբեղայի «Պատմութիւն վասն ազգին նետողաց» աշխատությունը: Տեքստաբանական աշխատանքները, գրաբար առաջաբանը Քերովբե Պատկանյանի: 64 էջ:

–––Պետերբուրգում հրատարակվում է Միքայել Միանսարյանի «Հայկական քնարի այբուբենական ցանկը» աշխատությունը: 32 էջ:

–––Պետերբուրգում հրատարակվում է Ռափայել Պատկանյանի «Ժողովածույք օտարազգի բառերի, Նոր Նախիջևանցվոց լեզվի մեջ մտած» աշխատությունը: 32 էջ:

Նոր Նախիջևանի բարբառին պատկանող բառերի կողքին տրված են նաև նրանց գրական հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն հոմանիշները:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Պալասանյանցի «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի» աշխատությունը: 120 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է «Ճառախոսություն և համարատվություն Ներսիսյան ազգային հոգևոր դպրոցի» ժողովածուն: 70 էջ:

Զետեղված են դպրոցի պատմությանը վերաբերող զանազան նյութեր, ինչպես նաև Ստ. Նազարյանցի, Ս. Պալասանյանցի, Զ. Գրիգորյանի ուսումնասիրությունները՝ նվիրված մանկավարժությանն ու գրականությանը:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Կյուրեղ Սրապյանի «Քերականություն հայերեն լեզվի» աշխատությունը: 215 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Զանազան արարողութիւնք յԵրուսաղէմ ի Սուրբ Յակոբ» աշխատությունը: 58 էջ: Սկզբում զետեղված է «Կանոն տղայանուէրի» ճառը:

–––Երուսաղեմում, առաջաբանով ու ծանոթագրություններով, գրաբար հրատարակվում է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւն» աշխատությունը: 625 էջ:

–––Երուսաղեմում, Հովհաննես Թաղևոսյանի (Յոտեմիշցի)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է Ռենիյարի «Հենրիկոս Մարիամ կամ երկու որբերը» բարոյավեպը: 109 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Հովսեփ Մալեզյանի «Հրահանգ սիրոյ աւանդեալ ի ձև հարցման և պատասխանւոյ ի պէտս դպրոցական մանկանց» աշխատությունը: 132 էջ:

–––Երուսաղեմում, առաջաբանով ու ծանոթագրություններով, գրաբար հրատարակվում է Վարդան Պատմիչի (նաև՝ Վարդան Արևելցի, Վարդան Գանձակեցի, Վարդան Մեծ) «Պատմութիւն թաթարաց» աշխատությունը: 76 էջ:

Ինչպես հետագայում պարզեց բանասիրությունը, հրատարակիչները սխալվել էին, և Մաղաքիա Աբեղայի գործը վերագրել էին Վարդան Պատմիչին:

–––Թեոդոսիայում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Տեր-Աբրահամյանի «Համառոտ պատմություն հայոց, դպրատան տղայոց համար» դասագիրքը: 196 էջ:

Նույնը՝ Ռոստով-Դոն, 1874 թ. (163 էջ) և 1880 թ. (222 էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով և լրացումներով:

Քառասուն դասի սահմաններում հեղինակը շարադրում է հայ ժողովրդի պատմությունը, սկսած Հայկ-Բելից, մինչև իր ժամանակը:

–––Շուշիում, Հայկ Խաչատրյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Կյանք գեներալ-լեյտենանտ Կնյազ Մադաթովին» աշխատությունը: 176 էջ:

–––Մոսկվայում արևելահայերեն հրատարակվում է Մովսես Ջոհրապյան-Արցախեցու «Անբախտ Սանդուխտ Աղվանցի» ստեղծագործության Ա մասը: 69 էջ:

Բ մաս՝ Բաքու, 1873 թ., 114 էջ:

1 8 7 1

Հունվար. Զմյուռնիայում արևմտահայերեն Մատթեոս Մամուրյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Արևելյան մամուլ» քաղաքական, պատմական, տնտեսական, իմաստասիրական ամսագիրը: Մամուրյանի մահից հետո (1901 թ. հունվար), խմբագիր-հրատարակչի պարտականությունները շարունակում է վարել որդին՝ Հրանտ Մամուրյանը, և «Արևելյան մամուլը» պարբերականության որոշ փոփոխումներով շարունակում է իր գոյությունը մինչև 1909 թ. վերջը:

Հունվար. «Արևելյան Մամուլը» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գրիգոր Մսերյանի «Ճշմարտության վրա գրավ մը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 10-ում (հոկտեմբեր) և ունի «հետևություն ֆրանսերենի» նշումը: Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Վալտեր Սկոտի «Իվանոե» վեպը, որն ավարտվում է նույն պարբերականի 1871 թ. № 8-ում (օգոստոս):

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 9) գրաբար հրատարակում է Հովհաննես Մուշեղյանցի «Նորոգ քեզ ամ, նորոգ օր...» բանաստեղծությունը և արևելահայերեն՝ Մաղաք Պլուզյանի «Նկարագիր մտավոր կուրության» հրապարակախոսական հոդվածը:

Հունվար. «Բազմավեպը» (№ 1), անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Լիդիա-Հովարդ Սիգուրնու «Զօրութիւն մայրական բարեպաշտութեան» բանաստեղծությունը: Հունարեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ սկսում է հրատարակվել «Մ.Ատտիլիոս Հռեգուղոս» պատմական ողբերգությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 7-ում (հուլիս):

Հունվարի 1. Կիրասոնում, Վահան Բարսեղյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-հրատարակչական «Սանուց ընկերությունը», որը շուտով իր ջանքերով սկսում է հրատարակել ընկերության անդամների ստեղծագործությունների ժողովածուն «Աստղիկ Կիրասոնո» վերնագրով: «Սանուց ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա», 1964, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Հունվարի 9. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 125) գրաբար հրատարակում է Թովմաս Թերզյանի «Վահագն վիշապամարտ» պոեմը:

Հունվարի 9. «Մասիսը» (№ 1040) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» (իմա՛. Մինաս Գափամաճյան) «Գարուն» բանաստեղծությունը:

Հունվարի 10. Բռնակոթ գյուղում (այժմ՝ Սիսիանի շրջան) ծնվեց հայագետ, բյուզանդագետ, պատմաբան, բանասեր Նիկողայոս Գևորգի Ադոնցը (Տեր-Ավետիքյան): Վախճ. 1942 թ. հունվարի 27-ին Բրյուսելում (Բելգիա):

«Հանդես ամսօրյա», 1947, № 1 («Մահվան հունձքը հայագիտական դաշտի վրա»): 1947, № 5 («Ոխուցչապետ Նիկողայոս Ադոնց»): Адонц Н., Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, стр. 3-20:

Հունվարի 14. Խարբերդում (Արևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր, խմբագիր Հայկակ Խազոյանը: Վախճ. 1940 թ. դեկտեմբերի 30-ին, Բաստինայում (ԱՄՆ):

1900 թ. Բոստոնում (ԱՄՆ) հիմնել է «Կոչնակ» պարբերականը (Հ. Սանդիկյանի և Խ. Պեններյանի հետ) և խմբագրել երեք տարի:

«Հայաստանի կոչնակ», 1941, № 1 («Հետադարձ ակնարկներ»), № 2 («Վեր. Հ. Խազոյանի մահը»), № 4 («Վեր. Հայկակ Խազոյան»), № 9 («Անդարձ մեկնողներ»):

Հունվարի 16. Շարունակելով նախորդ տարիների գրական ավանդույթը, «Մամուլ» շաբաթաթերթը (№ 126) սկսում է պարբերաբար հրատարակել արևմտահայերեն կարճառոտ երգիծապատումներ, որոնց հեղինակն ամենայն հավանականությամբ խմբագիրն է՝ Գևորգ Այվազյանը: Հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Վանեցվոց պրոպատիկեն»**, **«Կլորիկ հաշիվ մը»** (անդ), **«Աղջիկներուն վերջին հույսը»**, **«Անտեր աղջիկ մը»** (անդ № 127, հունվարի 23), **«Տունը չունինք տաք ապուր, դուրսը կքաղե եքեապուր»** (անդ № 129, փետրվարի 6), **«Ցուցանք»** (անդ № 131, փետրվարի 20), **«Պահքը գնաց, անունը մնաց»** (անդ № 132, փետրվարի 27), **«Հիմակու գործերը»** (անդ № 133, մարտի 6, ավարտ հաջորդ համարում), **«Սուր երկսայրի»** (անդ № 136, մարտի 27, ավարտ՝ № 138, ապրիլի 10), **«Պեշլիկով մը հարուստ ըլլալու նոր ճամբա մը»** (անդ № 138, ապրիլի 10):

Հունվարի 18. «Մեղուն» (№ 28) արևմտահայերեն հրատարակում է Լ...-ի «Հիշատակք» բանաստեղծությունը:

Հունվարի 19. «Մասիսը» (№ 1043) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» «... Տեր» գրախոսականը: Պատմությունը, իբրև տվյալ ազգի գոյության հիմնական վավերաթուղթ ներկայացնելուց հետո, դրվատված են Մ. Խորենացու և Ավ. Պերպերյանի աշխատությունները, բացասաբար է գնահատված Միք. Չամչյանի «Պատմութիւն հայոցը», քանզի այն գրված է «կուսակցության մը ծառայելու նպատակով», որի հետևանքով էլ միտումնավոր աղավաղված են փաստերը: Հրատարակված է նաև «Հիշատակ» արևմտահայերեն բանաստեղծությունը (հեղ. Լ...) (Արտատպված է «Մեղու» պարբերականից (տե՛ս՝ նախորդ նշումը):

Հունվարի 23. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 127) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Սետային սնտան» («Սեդայի սերը») հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում, և «Պատմութիւն հայոց, սկսեալ ի 1772 ամի, մինչև ցամն 1860, հանդերձ կարևոր տեղեկութեամբք» գրախոսականը: Վերլուծաբար ներկայացված է Ավետիս Պերպերյանի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1871 թ.) և դրական է գնահատված:

Հունվար 28. «Մասիսը» (№ 1047) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Միսակի» «Բանասիրական» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1056-ում (փետրվարի 20): Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, դրվատված է «Անձնվեր ընկերությունը», հայոց լեզուն բնութագրված է իբրև ազգային գրականության ու նկարագրի միակ արտահայտչաձևը:

Հունվարի 30. Ալեքսանդրապոլում Գրիգոր Աղափիրյանցի սատարմամբ և Բեգնազարյանցի տեսչությամբ, իշխան Ղահրաման Արղության-Երկայնաբազուկի կտակի համաձայն և նրա ֆինանսական միջոցներով իր գոյությունն է սկսում «Արղության հայ օրիորդաց դպրոցը» (նաև՝ «Ազգային հոգևոր օրիորդական դպրոց»): Այն երկդասյա էր, ուսման տևողությունը՝ չորս տարի: Սկզբնական շրջանում ուներ 89 աշակերտուհի: Ծաղկուն ժամանակ (1917 թ.) դպրոցը միջնակարգ էր, ուներ 385 աշակերտուհի: Ավանդվում էր ընդհանուր պատմություն, ռուսաց պատմություն, հայկաբանություն, աշխարհագրություն, բնագիտություն, հանրահաշիվ, երգ, ձեռագործ և ֆրանսերեն: «Արղության հայ օրիորդաց դպրոցը» 1921 թ. դարձավ երկսեռ և նույն թվականին դադարեցրեց իր գործունեությունը:

«Մեղու Հայաստանի», 1871, № 8 («Ազգային»), 1873, № 3 («Ազգային»), № 29 («Ալեքսանդրապոլ»):

Հունվարի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 128) արևմտահայերեն հրատարակում է «Աչքերդ բաց զիս չես տեսներ, կփնտռես ու չես գտներ» երգիծական բանաստեղծությունը:

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Վերակենդանություն» առաջնորդողը: Սկսում են հրատարակվել Կարապետ Տեր-Մինասյանի «Լույս և զարգացում» գրական հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 3-ում (մարտ) և Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «Ընդ դարձ Գեր. Ներսիսի Ծ. վարդապետի և Սարգսի շնորհունակ վարդապետի...» գրաբար բանաստեղծությունը:

Փետրվար. «Արևելյան Մամուլը» (№ 2), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն կրճատ թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Նոյեմի»), սկսում է հրատարակել տիկին Բոտուի «Մայրական գիտություն (քանի մը խոսք առ մայրս)» գրական-մանկավարժական տրակտատը, որն ավարտվում է նույն պարբերականի № 9-ում (սեպտեմբեր): Սկսում է հրատարակվել «Վրույրի» «Հայկական նամականի» արևմտահայերեն հրապարակախոսական աշխատությունը:

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2) Սամվել Կեսարյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալիգերի Դանտեի «Դժոխք» պոեմի երրորդ երգը (ունի «Երթ Դանտէի ի դժոխս» վերնագիրը): Հրատարակված են Աբրահամ Ճարյանի «Ի մկանունս գետոյ. նուագ» գրաբար բանաստեղծությունը, Քերովբե Քուշներյանի «Առյուծն ի որսի» արևմտահայերեն առակը և անստորագիր՝ «Ալեքսանդր Դյումա» գրական-վերլուծական հոդվածը:

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Մելքիսեդեկ Քալանթարյանցի «Աղքատ կյանք» և Հարություն Արտազյանցի «Ավարայրի աղբյուրը» բանաստեղությունները:

Փետրվարի 6. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 129) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Նվեր բարեկենդանի, ճառ և հանդես ներկայացման Պողոս վարդապետին Վանա» երգիծական թատերախաղը, որն ավարտվում է հաջորդ համարում: Այն գրված է Գրիգոր Նարեկացու «Մատեան...»-ի որոշակի հետևությամբ:

Փետրվարի 6. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Չմշկյանցի՝ Հ. Հայնեի հետևությամբ գրված «Սրտիս խոստովանանքը» բանաստեղծությունը:

Փետրվարի 13. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն սկսում է հրատարակել Սարգիս Վարդանյանցի «Մի քանի նկատմունք և առաջարկություններ» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Հրատարակված է «Հ.Գրիգոր-որդու», «Նվեր Վ.Վ.-ին» երգիծական բանաստեղծությունը:

Փետրվարի 16. «Մասիսը» (№ 1054) արևմտահայերեն սկսում է հրատարակել «... խմբագրապետ» հրապարակախոսական հոդվածը (հեղ. Հ.Վ.Ս.), որն ավարտվում է նույն պարբերականի № 1056-ում (փետրվարի 20): Վերլուծված է Անտոն Հասունյանի և նրա համախոհների պառակտիչ, ազգատյաց գործունեությունը, որի առաջմղիչ ոգին է արծաթասիրությունը, ամբարտավանությունը, նախանձը, ատելությունը:

Փետրվարի 18. «Մասիսը» (№ 1055), արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «... խմբագիր» թատերախոսականը: Վերլուծված և դրական է գնահատված «Տիրան կամ կույրն Կուաշա» թատրերգությունը, բեմադրությունը, դերասանների խաղը:

Փետրվարի 20. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 131) արևմտահայերեն հրատարակում է «Խըլլավուզ Կոմիտաս» երգիծական բանաստեղծությունը:

Սկած այս ժամանակվանից, «Մամուլը» անկանոն պարբերականությամբ սկսում է հրատարակել երգիծական բանաստեղծություններ, մեծ մասամբ անստորագիր, որոնց հեղինակը, դատելով լեզվի և ոճի ընդհանրություններից, նույն անձնավորությունն է: Հրատարակվել են. **«Հարուստն և յուր աքլորն»** (ժողովրդական աշխարհաբարով, № 132, փետրվարի 27), **«Սիրեմ զքեզ, ասեմ ով ես...»** (հեղ. Համբարձում Սահակյան, № 133, մարտի 6), **«Առեղծված»** (№ 134, մարտի 13), **«Հարց պատասխանի»** (№ 139, ապրիլի 17), **«Մայրապետանոցեն ելած հայու աղջկան մը...»** (№ 140, ապրիլի 22), **«Սոն ուրբաթ»** (№ 143, մայիսի

1), **«Տարոնու բախտն, Մշեցի տղան»** (№144, մայիսի 5), «Խոսակցություն» (№ 146, մայիսի 11), **«Կանանց խոսարան»** (№ 150, հունիսի 5), **«Ամուսնության լուրեր»** (№ 151, հունիսի 10), **«Ընտանեկան»** (№ 154, հուլիսի 3), **«Առ ու կեր»** (№ 166, սեպտեմբերի 25), **«Մամուլի ուխտավորները»** (№ 168, հոկտեմբերի 2, ավարտ՝ հաջորդ համարում), **«Դերձակին աղջիկները»** (№ 171, հոկտեմբերի 14), **«Գառնիկին պատմությունը»** (№ 177, նոյեմբերի 17), **«Օրթագյուղի պզտիկ հարսը»** (№ 181, դեկտեմբերի 11), **«Եփրոս հանըմին ճեհեզը»** (№ 185, դեկտեմբերի 25), **«Ժամանակը չէ»** (№ 186, դեկտեմբերի 29):

Փետրվարի 28. «Սիոնը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է Կյուրեղ Պահլավյանի «Քանի մը խոսք ազգային դաստիարակության վրա» հրապարակախոսական հոդվածը:

Մարտ. «Արևելյան մամուլը» (№ 3), անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ Մ. Մամուրյան ?), հրատարակում է Չարլզ Դիկենսի «Յոթ թիվ» պատմվածքը:

Վերջում տրված է Դիկենսի կյանքի և գործունեության համառոտ բնութագիրը: Հրատարակված է «Արդի հայերեն լեզու» հոդվածը:

Մարտ. «Բազմավեպը» (№ 3), Սամվել Կեսարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Բոնապարտ» պոեմը և Աբրահամ Ճարյանի «Ի վերջին օր սեպտեմբերի. նուագ» գրաբար բանաստեղծությունը:

Մարտ. Երևանում ծնվեցականավոր քանդակագործ, մշակութային գործիչ Անդրեաս Մարուքեի Տեր-Մարուքյանը: Վախճ. 1919 թ. մարտի 16-ին, Փարիզում:

Մարտ. «Հայկական աշխարհը» (№ 3) հրատարակում է Քերովբե Պատկանյանի «Հայկական բարբառների քննություն» ուսումնասիրությունը, որը մնում է անավարտ:

Մարտ. Էջմիածնի «Արարատը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Մուշեղյանցի «Անցուկ հոգվո» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել «Հիշատակարան թագավորական ճաշոցին կամ համառոտ պատմություն Ռու-

բինյան իշխանաց» պատմա-բանասիրական ուսումնասիրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Մարտի 2. Ղուբայում (նաև՝ Կուբա, Ադրբեջանական ԽՍՀ), Անդրեաս արքեպիսկոպոսի, Գրիգոր Իզմիրյանցի սատարմամբ, Աննիբաղ Նազարյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում Հայկական ազգային հոգևոր դպրոցը: Ավանդվում էր ընթերցանություն, վայելչագրություն, հայերեն և ռուսերեն լեզուներ, երգեցողություն, թվաբանություն և կրոն: Սկզբում ունեին քսան աշակերտ (հետագայում՝ հիսուն): Ղուբայի ազգային հոգևոր դպրոցը դադարեց գոյություն ունենալ 1875 թ. սկզբներին:

«Մեղու Հայաստանի», 1870, № 36 («Հարգո խմբագիր»), 1871, № 12 («Հարգո խմբագիր»), 1875, №7 («Մանր լուրեր»):

Մարտի 2. «Մասիսը» (№ 1060) արևմտահայերեն հրատարակում է «Վահրամի» (իմա՛.՝ Ստեփան Ոսկանյան ?) «... խմբագիր» գրախոսականը: Գրախոսված և բացասական է գնահատված Ալեն Ռընե Լեսաժի «Ժիլ Բլյազ» վեպի, Վ. Չալըխյանի՝ բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությունը: Նշված են թարգմանական, լեզվա-ոճական բնույթի բազմաթիվ անճշտություններ:

Մարտի 3. Նոր Ջուղայում (Պարսկաստան) ծնվեց հնդկահայ կրթական-մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն), հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով) Մեսրոպ Հակոբ-Սեյրի Սեթյանը: Վախճ. 1939 թ. հոկտեմբերի 21-ին, Կալկաթայում:

«Բազմավեպ», 1928, № 11-12 («Մեսրոպ Հ. Սեթյանցի հոբելյանը Կալկաթայում»), **«Սիոն»**, 1940, № 1-2 («Մեսրոպ Հ. Սեթյան, Նոր Ջուղայեցի»), **«Բազմավեպ»**, 1944, № 1-6... («Մեսրոպ Հ. Սեթյան»):

Մարտի 6. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է «Նիոբեի» (իմա՛. Գրիգոր Արծրունի) «Գիտնական անսխալականություն» հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 16. «Մեղուն» (№ 32) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի նամակը ուղղված Մատթեոս Մամուրյանին, որտեղ բարձրացված են գրականության մի քանի հարցեր:

Մարտի 20. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է «Նիոբեի» (Գրիգոր Արծրունի) «Մեկս մեկին մեղադրում ենք» հրապարակախոսական հոդվածը։

Մարտի 20. «Մասիսը» (№ 1067), Կարապետ ՈՒթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի ճառը, նվիրված ժողովուրդների ազատությանն ու անկախությանը «զոր մեծանուն քերթողն Ազգային ժողովո փոխաղրության առթիվ խոսած է»։

Մարտի 23. «Մեղուն» (№ 33) արևմտահայերեն հրատարակում է «Իրարու բառգիրք, երկու լրագիրք» երգիծական հոդվածը և Վանի բարբառով՝ Նահապետ Տոսպեցու «Գիշեր մը» բանաստեղծությունը։

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Տեր-Ստեփանյանի «Կարծյաց միություն» հոդվածը և Կարապետ Յազըճյանի «Դաստիարակություն ոգի ազգության, բարոյականություն կյանք է մարդկության» բանաստեղծությունը։ «Արևելյան մամուլ» խորագիրը կրող «գրությունով» վերլուծաբար ներկայացված է այդ պարբերականը։

Ապրիլ. «Արևելյան մամուլը» (№ 4), Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ ու ծանոթագրություններով, հրատարակում է Նիկոլա Բուալոյի «Մարդուս երգիծաբանությունը» սատիրայի ութերորդ գլուխը, որն ավարտվում է հաջորդ համարում։ Սկզբում թարգմանիչը տվել է Բուալոյի կյանքի ու գրական գործունեության համառոտ դրվատական բնութագիրը։ Սկսում է հրատարակվել Գաբրիել Պատկանյանի «Վահագն» գրաբար դյուցազներգությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 6-ում (հունիս)։

Ապրիլ. «Բազմավեպը» (№ 4), Սամվել Կեսարյանի (հետագայում՝ Գանթարյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Յետին ողջոյնք առ ծով» բանաստեղծությունը։

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 12), Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է մի

հատված Բլեզ Պասկալի «Մտածություններ» աշխատությունից, «Մարդուս անկատարելությունը» խորագրով:

Ապրիլի 4. Հաճնում ծնվեց հասարակական-քաղաքական գործիչ, հոդվածագիր, պատմաբան Կարապետ Թուր-Սարգսյանը: Վախճ. 1937 թ. հուլիսի 4-ին Փարիզում:

«Աղասի» և «Տորոսցի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 360-362: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 71: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, էջ 99:

Ապրիլի 6. «Մասիսը» (№ 1072) հրատարակում է «... Խմբագիր «Մասիս» լրագրո» հոդվածը (հեղ. «Կաթողիկյա հայ ոմն (Արևելյան)»: Տրված է Միքայել Չամչյանի «Վահան հաւատոյ ուղղափառութեան հայոց» աշխատության գրության բանասիրական պատմությունը արևմտահայերեն, որին հաջորդում է գրաբար մի հատված այդ գրքից:

Ապրիլի 10. «Մասիսը» (№ 1074) արևմտահայերեն հրատարակում է «Տեսություն մը» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղ. «Խ.Խ.»): Շեշտված է հայոց լեզվի և գրականության առաջնահերթ անհրաժեշտությունը հայկական կյանքում, ազգային վարժարաններում և ընտանիքներում:

Ապրիլի 10. «Արշալույս արարատյանը» (№ 907) արևմտահայերեն հրատարակում է «Հրանտի» (իմա՛. Ս. Չիվիճյան) «Հայերեն հին և նոր լեզու» ընդդիմախոսականը: Բանավիճելով Էջմիածնի «Արարատ» ամսագրում տպագրված Մ. Պլուզյանի «Գրաբար լեզու» հոդվածի հետ (տե՛ս ներկա հատորը, 1870 թ. դեկտեմբեր), ընդդիմախոսը զարգացնում է գրաբարի հետագա հեռանկարի, այդ լեզվով ստեղծված գրականության օգտագործման, «գրականություն-լեզու» փոխկապակցության մասին իր տեսակետները:

Ապրիլի 10. «Մեղու Հայաստանին» (№ 13) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Նազարյանցի «Իմ ազնիվ հայրենակից եղբարք» դամբանականը: Այն

կարդացվել է թիֆլիսահայ կրթական-մշակութային գործիչ Ավետիք Փիրոյանցի մահվան առիթով:

Ապրիլի 15. «Մասիսը» (№ 1076) գրաբար հրատարակում է «Առ նորընտիր հովուապէտ Նիկոմիդիոյ, Գեր. Ներսէս եպիսկոպոս...» ներբողական բանաստեղծությունը (հեղ. «Շենկիլլերցի պարմանին Ա. Լուսինեան» = Ամբրոսիոս Գալֆայան):

Ապրիլի 16. Նոր Նախիջևանում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով), պատմաբան-բանասեր Մինաս Հովհաննեսի Բերբերյանը: Վախճ. 1919 թ. հունվարի 14-ին, Երևանում:

«Մշակ», 1919, № 11, հունվարի 15 («Մինաս Բերբերյան»), № 12, հունվարի 16 («Մինաս Հովհաննիսյան Բերբերյան»)...

Ապրիլի 17. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 139) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է Նահապետ Տոսպեցու «Գարուն» պոեմը:

Ապրիլի 24. «Մեղու Հայաստանին» (№ 15), Հռիփսիմե Տեր՝Հովհաննիսյանցի՝ բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Փոքրիկ երաժիշտը» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Ապրիլի 29. Թբիլիսիի քաղաքային թատրոնում հայ դերասանների խումբը Գևորգ Չմշկյանի ղեկավարությամբ առաջին անգամ բեմադրում է Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը: Նույնը՝ վրացերեն, Քութաիսիում, 1874 թ. հոկտեմբերի 21-ին, Թբիլիսիում՝ 1875 թ. նոյեմբերի 27-ին: Ռուսերեն լեզվով «Պեպոն» խաղացվել է Թբիլիսիում 1874-75 թթ. թատերաշրջանի ընթացքում:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ. Բ, Երևան, 1951, էջ 449-485:

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 4) գրաբար հրատարակում է Ստեփաննոս Թովմաճանյանի «Վերադարձ Տ. Յակոբայ եպիսկոպոսի» և Կարապետ Տեր-Մինասյանի «Հրաժեշտ պանդուխտին» բանաստեղծությունները: Նշան Ճիվանյանի (հետագայում՝ «Հոռո»)՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Հաղագս մահվան Ռիչարդ-Բրինալի» մահախոսականը և «Յ.Ա.»-

ի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, «Հին և նոր Երուսաղեմ» ուսումնասիրությունը: Այն ավարտվում է հաջորդ համարում:

Ապրիլ-մայիս. «Հայկական աշխարհը» (№ 4-5), «Մխիթար Գոշի» (իմա՛. Քերովբե Պատկանյան ?) թարգմանությամբ, հրատարակում է «Երկու աղքատներ» բանաստեղծությունը:

Մայիս. Դիարբեքիրում, Թովմաս Ղուզաթյանի, Գևորգ Չախճյանի և Մկրտիչ Ապտալյանի ջանքերով, իր գոյությունն է սկսում մշակութային-կրթական «Հայրենասեր ընկերությունը», որի նպատակն էր «Նոր դպրոց մը բանալ երեսուն աշակերտաց համար և կիրակնօրյա ընթերցարան մը»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվերը:

«Հանդես ամսօրյա», 1963, № 7-9 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մայիս. «Արևելյան մամուլը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է «Ռեֆորմ» հայոց վրա կխոսի՞» հրապարակախոսական հոդվածը (հեղ. «Լ.» = Մատթեոս Մամուրյան): Բացասական գույներով ներկայացված և անհարգալից ածականներով պիտակավորված է ինչպես Ստեփան Ոսկանյանի ամբողջ գործունեությունը, այնպես էլ նրա խմբագրությամբ Զմյուռնիայում հրատարակվող «Լա Ռեֆորմ» ֆրանսալեզու պարբերականը:

Մայիս. «Բազմավեպը» (№ 5), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Քրիստափոր Շմիդտի «Մարգարտածաղիկ» նովելը:

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 1) գրաբար հրատարակում է «Կովկաս և Արարատ» և Ստեփաննոս Հայրունու «Առ հայրենիսն իմ» բանաստեղծությունները: Սկսում է հրատարակվել Վահրամ Մանկունու «Այրի վանք կամ Գեղարդա վանք» արևելահայերեն ուսումնասիրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում և Հովհաննես Մուշեղյանցի «Հայ ազգություն» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 5. Տրապիզոնում ծնվեց հոդվածագիր Եղիշե Պապիկյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1894 թվականից: Վախճ. 1947 թ. նոյեմբերի 28-ին Վենետիկում:

«Բազմավեպ», 1945, № 1-12 («Քահանայական հիսնամյա հոբելյաններ»), 1947, № 11-12 («Հանգիստ հոգվո Եղիշե վարդապետ Պապիկյանի»):

Մայիսի 8. «Արշալույս արարատյանը» (№ 909) գրաբար հրատարակում է «Ի վերայ գեղջ Աշտարակայ» բանաստեղծությունը, որը թերթի խմբագրությունը ստացել էր Հայաստանից: Բանաստեղծության առաջին տառերը կազմում են «Աբել» անունը (Մխիթարյան ?):

Մայիսի 8. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Ազգային» գրական-թատերական հոդվածը:

Մայիսի 10. «Երկրագունդը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Նկատողություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (տե՛ս **Մ.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 3, Երևան, 1940, էջ 219-226):

Հոդվածն ունի խմբագրության հետևյալ նախաբանը «Ռուսաստանեն բարեհիշատակ հանգուցելույն երկու հոդվածը ստացանք, որ ցարդ ուրիշ տեղ չեն հրատարակված: ՈՒստի, ի հիշատակ նորա, «Երկրագնդիս» մեջ կդնենք զանոնք, թեև տեղ-տեղ իր կարծյացը բոլորովին համաձայն չենք: Հոդվածները թեև 7-8 տարի առաջ գրված են, բայց ներկայիս համար ալ բավական հետաքրքրական և միանգամայն օգտակար կողմեր ունին»:

Մայիսի 11. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 146) արևմտահայերեն հրատարակում է «Ասպետի» (Օննիկ Չիֆթե Սարաֆ?) «Խաչքար չկա պանդխտին» պոեմը:

Մայիսի 13. «Մասիսը» (№ 1087) արևմտահայերեն հրատարակում է «Պերճի» (իմա՛. Գրիգոր Չիլինկիրյան) «Արտոսր մի» մահախոսականը: «Ազգայնոց» ազդարարվում է Սարգիս Միրզա Վանանդեցու (իմա՛. Հովհաննես Վանանդեցու որդու՝ Մարգար Միրզայան Վանանդեցու որդին) մահը և այս առիթով տրվում է նրա կենսագրությունն ու գրական-մշակութային գործունեությունը:

Մայիսի 16. Տրապիզոնում ծնվեց բանաստեղծ (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Եվպիս Հովհաննեսի Կապբաշյանը: «Անարատ հղության կուսանաց» միության անդամ էր 1890 թվականից: Վախճ. 1937 թ. հունվարի 14-ին, Հռոմում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ք.Ե.Կ.» (Քույր Եվպիս Կապբաշյան) և «Մայր Արագած» կեղծանուններով:

«Բազմավեպ», 1937, № 2-5 («Մայր Եվպիս Կապբաշյան»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 86:

Մայիսի կեսեր. Պոլսում (Ռումելի-Հիսար) իր գոյությունն է սկսում կրթական-հասարակական «Հայ սանուց ընկերությունը», որն իր առջև նպատակ էր դրել «Կարելի եղածին չափ թե նյութապես և թե բարոյապես օգնել հայ մանկտվույն դաստիարակությանը»: Ընկերությունը որոշ ընդհատումներով գոյություն ունեցավ մինչև 1922 թ.:

Մայիսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է «Նիոբեի» (Գրիգոր Արծրունի) «Սունդուկյանցի «Պեպո» գրախոսականը»:

Մայիսի 23. Տրգու-Ֆրումա ավանում (Ռումինիա) ծնվեց գրական քննադատ, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ռումիներեն), Ռումինիայում հայկական մշակույթի պրոպագանդիստ, Ռումինական ակադեմիայի իսկական անդամ (1948 թ. հետմահու) Կարապետ Թեոդորի Իբրըիլյանուն: Վախճ. 1936 թ. մարտի 12-ին, Բուխարեստում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 7:

Մայիսի 27. «Մեղուն» (№ 37) արևմտահայերեն հրատարակում է Պետրոս Դուրյանի «Հծծյուն» բանաստեղծությունը:

Հետագայում «Մեղուն» պարբերաբար անդրադառնում է Պետրոս Դուրյանին, հրատարակելով նրա «Իցի՜վ թե» (հունիսի 10, № 43), «Սիրեցի քեզ» (հուլիսի 1, № 46), «Հայացք մի» (հուլիսի 10, № 49), «Սիրել», «Դրժել» (հուլիսի 19, № 50) բանաստեղծությունները:

Մայիսի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 149) արևմտահայերեն հրատարակում է Եղիազար Մելիքյանի «Երգ ի հանդես մետասաներորդ տարեդարձի ազգային սահմանադրության» և Մկրտիչ Մեզպուրյանի՝ նույն վերնագիրը կրող բանաստեղծությունները: Երկու գործերի երաժշտության հեղինակն էլ Արիս Հովհաննիսյանն է:

Մայիսի 29. «Մեղուն» (№ 38) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Քամի»-ի (Հակոբ Պարոնյան) «Բառագիտական» երգիծական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 43-ում (հունիսի 19): Հրատարակված է «Ճառ» երգիծապատումը (հեղ. Հակոբ Պարոնյան?): (Տե՛ս **Հակոբ Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 17-21, հ. 8, էջ 26):

Մայիսի 30. «Երկրագունդը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Միքայել Նալբանդյանի հաջորդ՝ «Նկատողություն» հրապարակախոսական հոդվածը (տե՛ս 1871 թ. մայիսի 10): (Տե՛ս **Մ.Նալբանդյան**, ԵԼԺ, հ. 4, էջ 304-307): Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Քսավիե դը Մեստրի «Աոստի ուրուկը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 7-ում (հուլիսի 10): Թարգմանչի մասին նշված է, որ «երևելի հայ ընտանիքե ազնվական տիկին մը է, որը կուզե անծանոթ մնալ»:

Հունիս. «Արևելյան մամուլը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է «Բողոքականություն ի Վաղարշապատ» ակնարկը (քննադատված է Էջմիածնի «Արարատ» ամսագրի գործունեությունը) և [Մատթեոս Մամուրյանի] «Նորեն «Ռեֆորմ» հոդվածը: Անհարգալից պիտակավորումներով բնութագրված է Ստեփան Ոսկանյանի հիշյալ ֆրանսալեզու պարբերականի գործունեությունը:

Հունիս. «Բազմավեպը» (№ 6), Ղևոնդ Ալիշանի՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և թարգմանչի արևմտահայերեն ընծայականով, հրատարակում է Ֆրիդրիխ Շիլլերի «Զանգակն» բանաստեղծությունը:

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Հ. Ղուկասյանցի «Վասակի ապաշխարանքը» պոեմը, Լևոն-Ոստանիկ Տեր-Հարությունյանի «Այրարատ» ողջունաբեր» բանաստեղծությունը, գրաբար՝ Միքայել Տեր-Հովհան-

նիսյանցի «Մարգարէն Յովնան» և Արա Խաչատրյանցի «Մայր եւ մանուկ» չափածո ստեղծագործությունները:

Հունիսի 3. «Մեղուն» (№ 40) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Հարբուխ» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերականի № 43-ում (հունիսի 19) (տե՛ս **Հակոբ Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 26-31):

Հունիսի 5. Բոդուշանում (Ռումինիա) ծնվեց ռումինացի պատմաբան, քննական բնագրերի հրատարակիչ, արևելագետ, հայագետ պրոֆ. Նիկոլա Յորգան: Հայրը՝ Նիկու Դրըկիչ Յորգա: Եղեռնամահ՝ 1940 թ. նոյեմբերի 27-ին Ստրեշնիկ գյուղում (Բուխարեստից արևելք), հուղարկավորությունը՝ նոյեմբերի 28-ին Բուխարեստում:

Սիրունի Հ.Ճ., Հայ եկեղեցին ռումեն հողի վրա. Նիկոլա Յորգա, Էջմիածին, 1966, 266 էջ: **Նույնի**. Նիկոլա Յորգային հետ, Անթիլիաս-Լիբանան, 1972, 462 էջ:

Հունիսի 5. «Մասիսը» (№ 1097) արևմտահայերեն հրատարակում է Մ. Գարագաշյանի «Հայ լեզու» հոդվածը և Տիգրան Ամիրջանյանի՝ «Թէպէտ հայրենեացս ի գիրկ փափկալի...» բանաստեղծությունը: Նախորդող արևմտահայերեն ընծայականում տրված է բանաստեղծության գրության պատմությունը:

Հունիսի 10. «Մեղուն» (№ 41) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Հավասարություն» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 31-32):

Հունիսի 12. «Մեղու Հայաստանին» (№ 22), անգլերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Ամերիկյան կյանքից» վեպը, որը շարունակվելով որոշ ընդհատումներով, ավարտվում է նույն թվականի № 45-ում (դեկտեմբերի 11):

Հունիսի 17. Մեղրիում ծնվեց արձակագիր, գյուղագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Ազարիա Աղեյանը (Ազարիա Մարտիրոսի Դանիելյան): Վախճ. 1903 թ. նոյեմբերի 9-ին, Նախիջևանում:

Աղեյան Ա., Երկերի ժողովածու (կազմեց Ա. Ինճիկյան), Երևան, 1950, 521 էջ: **Դանիելյան Մ.**, Ազարիա Աղեյան, Երևան, 1964, 165 էջ:

Հունիսի 19. «Մեղուն» (№ 43) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Գանձանակներ...» երգիծապատումը (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 35-38):

Հունիսի 22. «Մասիսը» (№ 1103), Պողոս Պառնասյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Երկու կոթողք» բանաստեղծությունը: Նախորդող ընծայականում տրված է նրա գրության բանասիրական պատմությունը:

Հունիսի 24. «Մեղուն» (№ 44) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Սկյուտարի հասարակաց պարտեզին շուրջը պտույտ մը» երգիծապատումը (ավարտը՝ հաջորդ համարում) և «Ազգասիրություն» էսսեն (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 34-36):

Հունիսի 26. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 153) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես-Վահագն Աճեմյանի «Միության խնդիր» գրականհրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի №164-ում (սեպտեմբերի 11):

Հունիսի 26. «Մեղուն» (№ 45) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Հառաջադիմություն», «Ահա այժմ փառավորվեցավ Պ.Ս.Պ.Պ.Փ.» (իմա՛. Պարոն Ստեփան-Պերճ Պողոս Փափազյան) և «Թատերական» երգիծական մանրապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 46, հ. 8, էջ 38-42):

Հունիսի 30. «Երկրագունդը» (№ 6), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Հայոց գրականություն» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում: Ընդգրկում է հայ մատենագիտության պատմությունը՝ քրիստոնեության՝ Հայաստանում տարածվելուց սկսած, մինչև XIX դարի սկզբները:

Հունիսի 31. «Սիոնը» (№ 6) գրաբար հրատարակում է Կարապետ Տեր-Մինասյանի «Աղօթաւորն ի լեառն Ձիթենեաց» բանաստեղծությունը:

Հուլիս. «Բազմավեպը» (№ 7), անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ և արևելահայերեն ընձայականով, հրատարակում է տիկին Բարտլետի «Անհեծելաւոր ձիք» բանաստեղծությունը: «Ազգային երգ» խորագրի ներքո հրատարակված է հայկական ժողովրդական «Արտուտիկ օդապարիկ, քաղցր ձայնեմ, ո՞ւր ես վարդիկ...» բանաստեղծությունը, «Առածք ազգայինք ի գրոց նախնեաց» խորագրի ներքո՝ հայկական ասացվածքների մի փունջ (23 անուն, գրաբար)՝ իրենց համապատասխան մեկնաբանություններով: Արևմտահայերեն հրատարակված է «Գայլ և աղվես» առակը:

Հուլիս. «Արևելյան մամուլը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Շահնուրի» (Մատթեոս Մամուրյան) «Թղթակցություն» հոդվածը (վերլուծված է ժամանակի հայ գրական-մշակութային կյանքը) և Մատթեոս Մամուրյանի «Ռեֆորմի լպրշանքը» բանավիճականը: Վերջինս ուղղված է «Լա Ռեֆորմ» ֆրանսալեզու պարբերականի դեմ:

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 3) մի ամբողջ բաժին հատկացրել է երիտասարդ ստեղծագործողներին: Տպագրվել են Խաչատուր Քեշիշյանցի «Տարաբաղդ հայ մանուկը» (արևելահայերեն), Արտաշես Առաքելյանցի «Յարութիւն պատանւոյն ի նային» (գրաբար), Թովմաս Յուզբաշյանցի «Հովիւ եւ հօտ» (գրաբար), Հարություն Տեր-Պետրոսյանցի «Բանք ընդ արշալուսոյ» (գրաբար) բանաստեղծությունները, Հարություն Աղիբեկյանցի «Սասանումն հրեշտակին ի փառաց» գրաբար պոեմը: Հրատարակված է Շողակաթ Տեր-Ավետիսյանցի «Առ մայրն Հայաստան» արևելահայերեն բանաստեղծությունը:

Հուլիսի 1. «Մեղուն» (№ 46) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Մանր ճշմարտություններ» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերականի № 49-ում (հուլիսի 10) (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 50-53):

Հուլիսի 3. «Մեղու Հայաստանին» (№ 26) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Լալայանց Ղզլարեցու «Հարգո խմբագիր» գրախոսականը: Գրախոսված է Աբգար Գուլամիրյանցի «Դաւիթ Բէգ. ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին...» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1871 թ.):

Հուլիսի 3. «Մեղուն» (№ 47) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Հասունին երազը» և «Դասագիրք վերաքննելի սահմանադրության» երգիծական մանրապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 45-47):

Հուլիսի 3. «Մասիսը» (№ 1108) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Փունջ» (խոսքը վերաբերում է Հ. Ալաջաջյանի խմբագրությամբ հրատարակվող պարբերականին - Ս.Շ.) խորագիրը կրող գրականագիտական հոդվածը (հեղ.՝ «Սուր»), որն ավարտվում է նույն պարբերականի № 1111-ում (հուլիսի 10):

Հուլիսի 8. «Մեղուն» (№ 48) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ազատություն է ազատություն» երգիծական մանրապատումը: Սկսում է հրատարակվել նույնի՝ «Թե որները» գրական էսսեն, որն ավարտվում է նույն պարբերականի № 50-ում (հուլիսի 19) (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 54-58):

Հուլիսի 10. «Մեղուն» (№ 49) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Կարգվիլ փափագող երիտասարդի մը խորհրդածությունները», «Օրվան խնդիրը», «Երթաս բարյավ», «Պապին ճառին պոչը», «Վանցի Պողոս աղբարը» երգիծապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 59-61, հ. 8, էջ 49-56):

Հուլիսի 17. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն հրատարակում է Սեննեքերիմ Արծրունու «Նվեր Արմենուհիվույն» բանաստեղծությունը: Գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Գրիմ եղբայրների «Քաջ դերձակ» հեքիաթը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հուլիսի 19. «Մեղուն» (№ 50) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ի՞նչն է մարդուս կյանքը մաշեցնողը» և «Թատերական» երգիծական մանրապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 64-65, հ. 8, էջ 60-61):

Հուլիսի 20. «Մասիսը» (№ 1115) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Աճեմյան Պրուսացու «Բանասիրական» հոդվածը, որտեղ վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը և այն բացասաբար է գնահատված:

Հուլիսի 29. «Մասիսը» (№ 1119) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ազգային վիճակի վրա խորհրդածություն մը» հրապարակախոսական հոդվածը (հեղինակ՝ Ս.Տ.Ս.), որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Օգոստոս. «Արևելյան մամուլը» (№ 8) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Պատկանյանի «Զարմայր և Պանդազելե» պատմական ողբերգությունը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև 1872 թ. № 12-ը (դեկտեմբեր): ՈՒնի «երգեալ ի 1862 ամի ի Կոստրոմա քաղաքի, ի տարագրութեան» նշումը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ (թարգ. Մ. Մամուրյան?) սկսում է հրատարակվել Թեոդոր Ժոֆրուայի «Փիլիսոփայություն և հասարակաց դատողություն» փիլիսոփայական-գրականագիտական տրակտատը, որն ավարտվում է նույն պարբերականի 1871 թ. № 10-ում (հոկտեմբեր): Սկզբում ներկայացված են հեղինակի կյանքն ու գործը:

Օգոստոս. «Բազմավեպը» (№ 8), Սամվել Կեսարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Լիճ» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև «Մոնթալանբեր» հոդվածը, որտեղ տրված է ֆրանսիացի այդ նշանավոր գրական-հասարակական գործչի կյանքի և գործունեության համառոտ բնութագիրը:

Օգոստոսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 30) արևելահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Լալայանցի (Ղլլարցի) «Արթուն պահապան» բանաստեղծությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Օգոստոսի 14. «Մեղուն» (№ 51) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ինչու համար, որովհետև», «Հայերուն զվարճության աղբյուրները» և «Ազգային դատաստանական խորհուրդին դեմ բողոք մը» երգիծապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 66-70, հ. 8, էջ 62-63):

Օգոստոսի 19. «Մասիսը» (№ 1128) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Ապարանս Չրաղանի» բանաստեղծությունը, Հովհաննես Մկրյանի «Հարգո խմբագիր» հոդվածը (քննադատված է Եղիա Տեմիրճիպաշյանի գրական-մանկավարժական գործունեությունը) և Եղիա Տեմիրճիպաշյանի «... խմբագիր» պատասխան նամակը:

Օգոստոսի 21. «Մեղուն» (№ 52) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ծանրագլուխ Կիներ» և «Արարատ» երգիծապատումները (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 71-72, հ. 8, էջ 64-65):

Օգոստոսի 28. «Մասիսը» (№ 1132) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Բաբազյանի «... խմբագիր» հոդվածը: Անհարգալից պիտակավորումներով բնութագրված է Եղիա Տեմիրճիպաշյանի գրական-հասարակական, մանավանդ մանկավարժական գործունեությունը:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) գրաբար հրատարակում է Կարապետ Տեր-Մինասյանի «Բան Հայրապետին Հայաստանեայց առ քրիստոսանուէր նորընծայս» բանաստեղծությունը:

Սեպտեմբեր. «Բազմավեպը» (№ 9) ռուսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակում է Իվան Կռիլովի «Կապկին մոգական լապտերը» առակը:

Սեպտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է «Հրաժեշտ Վարդանա Մամիկոնեի և ամուսնո նորա Երանյակ տիկնոջ» պոեմը: Ա. Բազրատունու՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով սկսում է հրատարակվել Մարի-Ժան Բրոսեի «Հիշատակարան Հայաստանի» ուսումնասիրությունը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Պոեմն ունի «Հայկազն ծերունի, հեղինակ իրավախոհության և Վահագնի, տպագրելով ի Զմյուռնիա» ստորագրությունը: Հիշատակված երկու գործերն էլ պատկանում են Գաբրիել Պատկանյանի գրչին, և պարզ է դառնում, որ «Հայկազն ծերունին» Գաբրիել Պատկանյանն է:

Սեպտեմբեր. «Արևելյան մամուլը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Շահնուրի (Մատթեոս Մամուրյան) «Թղթակցություն» հոդվածը (վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, քննադատված է Մկրտիչ Խրիմյանի՝ հայ պարբերական հրատարակությունների դեմ ուղղված ելույթը) և Ա.Ց. Լուսինյանի (իմա՛. Ամբրոսիոս Գալֆայան) «Ի՞նչ ըսին նոքա» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 1. Պոլսում (Խասգյուղ), Ռուբեն Գրիգորյանի, Ռուբեն Քեմահճյանի, Բյուզանդ Յուղաբերյանի և այլոց նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական «Վարդանյան ընկերությունը», որը նպատակ է դնում «ուսումն տարածել գավառացի հայոց մեջ»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1879 թ.:

«Հանդես ամսօրյա», 1955 թ., № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Սեպտեմբերի 4. «Մասիսը» (№ 1135) արևմտահայերեն հրատարակում է «Արամի» «... խմբագիր» հրապարակախոսական հոդվածը: Հոդվածագիրն անդրադառնում է «քնքույշ օրիորդներու» գրական-հասարակական դաստիարակության հարցերին:

Սեպտեմբերի 4. «Մեղու Հայաստանին» (№ 33) արևելահայերեն սկսում է հրատարակել «Հայկազունու» (իմա՛. Հայրապետ Ղուկասյանց-Շամախեցի) «ՌԻսումնական կյանքիցս» ինքնակենսագրական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Սեպտեմբերի 5. «Արշալույս արարատյանը» (№ 919) արևելահայերեն հրատարակում է «Տորա» ընծայականը, որտեղ ներկայացնում է Նշան Միրզայի հիշյալ վեպը:

Սեպտեմբերի 7. Պոլսում ծնվեց մանկավարժ, հոդվածագիր Արամ Նիկողոսյանը: Վախճ. 1937 թ. սեպտեմբերի 8-ին իր ծննդավայրում:

Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1938, էջ 312: **Գնորգյան Կ.**, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1961, էջ 208-210:

Սեպտեմբերի 10. Պոլսում ծնվեց դերասան, ռեժիսոր, թատերական տեսաբան, հուշագրող, ՀՀ ժողովրդական դերասան (1935 թ.) Արմեն Արմենյանը (Արմենակ Նուրիջանի Իփեկյան): Վախճ. 1965 թ. հուլիսի 18-ին Լենինականում:

Արմենյան Ա., Վաթսուն տարի հայ բեմի վրա, Երևան, 1954, 332 էջ: **Մուրադյան Ն.**, Արմեն Արմենյան, Երևան, 1959, 119 էջ: **Խալաթյան Լ.**, Արմեն Արմենյան, Երևան, 1961, 27 էջ:

Սեպտեմբերի 11. «Մասիսը» (№ 1138) արևելահայերեն հրատարակում է Սմբատ Շահազիզի «Հովիտ տրտմության» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 11. «Մեղուն» (№ 55) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Պետրոս առաքյալի աթոռը» երգիծապատումը (տե՛ս. **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 69-70):

Սեպտեմբերի 20. Պոլսի հայկական գերեզմանոցում Հ.Վ.Աճեմյանի ջանքերով տեղի է ունենում ավելի քան երկու ժամ տևող սգո հանդիսություն, նվիրված Մկրտիչ Պեշիկթաշլյանի մահվան հերթական տարեդարձին, «ի ներկայություն հարյուրեն ավելի ազգայնոց»: Խորեն Գալֆայանի դամբանական խոսքից հետո «սրտառուչ ատենաբանություններ խոսվեցան քանի մը ազգայնոց կողմե»: Ապա հրատարակվում է Գրիգոր Օտյանի նամակ-մահախոսականը:

«Մասիս», 1871, № 1144 («Հրավեր առ հայ եղբայրս»), № 1145 («Ինչպես որ լրագրոցս մեջ ծանուցված էր...»):

Սեպտեմբերի 21. Սուլինայում (Ռումինիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Վահան Ֆրանկյուլի Մալեզյանը: Վախճ. 1967 թ. մայիսի 4-ին Նիցցայում (Ֆրանսիա):

«Զեփյուռ» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Բանաստեղծ Վահան Մալեզյանի ... գործունեությունը (հուշամատյան)», Փարիզ, 1951, էջ 87-124, **«Լրաբեր»** (ԱՄՆ), 1967, № 84 («Վահան Մալեզյան»): **«Հայրենիքի ձայն»**, 1967, № 22 («Վահան Մալեզյան»):

Սեպտեմբերի 23. «Մասիսը» (№ 1143) արևմտահայերեն սկսում է հրատարակել Կարապետ ՌԻթուջյանի «Օրագիր» և իր սատար Զոիլը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1146-ում (սեպտեմբերի 30): Քննադատված է Օգսեն Խռճասարյանի խմբագրությամբ հրատարակվող «Օրագիր Կ.Պոլսո» ամսագրի և նրա «Զ» ստորագրող թղթակցի (այս տառի հիմքի վրա ՌԻթուջյանը բառախաղով ստեղծել է «Զոիլ» ձևը: «Զ»-ն Մատթեոս Մ. Այվատյանն է) հասարակական և գրական գործունեությունը:

Սեպտեմբերի 25. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 166) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Պեշիկթաշլյան» առաջնորդողը: Վանի բարբառով հրատարակվում է «Վանցի պառավ Սառայի խրատ» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 166) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Պեշիկթաշլյանի տարեդարձը» հոդվածը: Մահվան հերթական տարելիցի կապակցությամբ վերջինիս կյանքն ու գործը վերլուծելուց հետո, բերված են Գրիգոր Օտյանի և Արուսյակ Պեզիրճյանի՝ այդ առթիվ արտասանած ճառերը:

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Ավազյանի «Բանասիրական» ուսումնասիրությունը: Այն տպագրված է խմբագրության կատարած հավելումներով ու ծանոթագրություններով:

Եվրոպական գրականության համառոտ նկարագիրը տալուց հետո, հոդվածագիրն անդրադառնում է XIX դարի հայ գրականության ներկայացուցիչներին:

Հոկտեմբեր. «Արևելյան մամուլը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է [Մատթեոս Մամուրյանի] «Ազատություն» հոդվածը:

Հոկտեմբեր. «Բազմավեպը» (№ 10), արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Մարի և արտույտ» առակը:

Հոկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 6) գրաբար հրատարակում է Հովհաննես Տեր-Զաքարյանցի «Պաղատանք առ եռանձնեայ էակն էիցս համայնից» բանաստեղծությունը և արևելահայերեն՝ «Մայր որդեկորույս ի Գանձակ» անստորագիր եղերերգությունը: Սկսում է հրատարակվել Սենեքերիմ Արծրունու «Քաղաքական օրենսգիտության նշանակությունը հայոց կյանքի համար» արևելահայերեն տրակտատը, որը շարունակվում է մինչև «Արարատի» 1872 թ. մարտը (№ 3) և մնում անավարտ:

Հոկտեմբերի 2. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 168) արևմտահայերեն հրատարակում է Սրապիոն Հեքիմյանի «Հանպատրաստից խոսված» ատենաբանությունը Մկրտիչ

Պեշիկթաշլյանի մահվան հերթական տարելիցի ժամանակ (տե՛ս ներկա հատորը, սեպտեմբերի 30):

Հոկտեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 36) արևելահայերեն հրատարակում է «Լոռեցու» ««Մշակի» հայտարարությունը» հոդվածը: Վերլուծված է Գրիգոր Արծրունու՝ «Մշակի» հրատարակության «պրոգրամը», այդ կապակցությամբ արված են մի քանի խորհրդածություններ:

Հոկտեմբերի 7. «Մասիսը» (№ 1149) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովսեփ Շիշմանյանի «Ալի փաշա և արևելյան խնդիր» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հոկտեմբերի 8. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 169) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Գալֆայանի «սրտառուչ ատենաբանությունը» «Խոսք ի շիրիմ Պեշիկթաշլյանի» խորագրով: Հրատարակված է Պետրոս Դուրյանի «Նոր սև օրեր» բանաստեղծությունը, որն ունի «1871 թ. հոկտեմբերի 1» նշումը (տե՛ս. **Պ. Դուրյան**, Երկերի ժողովածու երկու հատորով, հ. Ա, Երևան, 1971, էջ 75-77):

Հոկտեմբերի 12. «Մասիսը» (№ 1151) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ռիթուջյանի] «Օրագրի» սատար Զոհիլը» բանավիճական հոդվածը: Քննադատելով «Օրագիր» պարբերականում «Զ.» ստորագրությամբ (այդ տառի հիման վրա Ռիթուջյանը ստեղծել է «Զոհիլ» բառախաղը) հանդես եկող Մատթեոս Մ. Ավատյանին, բարձրացվում են ժամանակի գրականության հետ առնչվող մի քանի հարցեր:

Հոկտեմբերի 16. «Մեղու Հայաստանին» (№ 38) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Երկու խոսք» հրապարակախոսական առաջնորդողը (վերլուծված են անհատի և հասարակության փոխհարաբերության հարցերը) և Միքայել Աթանասյանցի «Գյուղացի հայ օրհորդ» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 20. Կախովկա ավանում (Տավրիկյան նահանգ, Ղրիմ. այժմ՝ ՌԻԽՍՀ, Խերսոնի մարզ) ծնվեց հայ երաժշտության դասական, կոմպոզիտոր, մանկավարժ, մշակութային գործիչ, ՀՀ ժողովրդական դերասան (1926 թ.) Ալեքսանդր

Աֆանասիի (Ստեփանոսի) Սպենդիարյանը: Վախճ. 1928 թ. մայիսի 7-ին Երևանում:

«Բազմավեպ», 1925, № 8 («Հայ նորագույն կոմպոզիտորներ»), **Հարությունյան Շ.**, Սովետական Հայաստանը 40 տարում (Տարեգրություն), Երևան, 1960, էջ 149-160:

Հոկտեմբերի 23. «Արշալույս արարատյանը» (№ 921) արևմտահայերեն հրատարակում է «Տորա» գրախոսականը (հեղ.՝ «Ռուստան Ց.Ա.»):

Հոկտեմբերի 23. «Մասիսը» (№ 1156) արևմտահայերեն հրատարակում է «Արտավազդի» «Բանասիրական (առաջադիմություն. դպրոցներ. լրագիրք. ուսումնականք. ընկերությունք. ազգին ըրած առաջադիմությունը)» հրապարակախոսական հոդվածը: «Խիստ ճշմարտապատում հոդված» որակումով այն անփոփոխ արտատպել է «Արշալույս արարատյանը» (1871 թ. № 923, նոյեմբերի 20):

Հոկտեմբերի 30. Տրապիզոնում ծնվեց գրականագետ-բանասեր, արձակագիր, դրամատուրգ, խմբագիր Սիմոն Երեմյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1895 թ. ապրիլի 14-ից: 1930-ական թվականներին հրաժարվել է միաբանությունից: Վախճ. 1938 թ. նոյեմբերի 29-ին Միլանում:

1899-1905 թթ. Վենետիկում խմբագրել է միաբանության «Բազմավեպ» ամսագիրը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Ե.» և «Ատրուշան» կեղծանուններով:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 226: **Զարդարյան Վ.**, «Հիշատակարան», Կաիրե, 1941, էջ 85-86:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Վարդգեսի» «Ոչխար և այծ» առակը: Նշան Ճիվանյանի (հետագայում՝ «Հորո»)՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Ջորջ Բայրոնի «Շիլիոնի բանտարկյալը» պոեմը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Նոյեմբեր. «Արևելյան մամուլը» (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել Մատթեոս Մամուրյանի «Սև լերին մարդը» վեպը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև նույն պարբերականի 1881 թ. № 3-ը (մարտ):

Նոյեմբեր. «Բազմավեպը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է «Հենրիկոս Իբսեն» հոդվածը:

Նոյեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 7) արևելահայերեն սկսում է հրատարակել Ստեփաննոս Մանդինյանի «Դիտողություն Հովսեփ Օրբելվո աշխատասիրած «Եկեղեցական պատմության վրա», տպած Թիֆլիզում, 1871 ամի» գրախոսականը, որն ավարտվում է հաջորդ համարում: Արևելահայերեն հրատարակված է «Խանգարմունք Հայկաբանության ի հնումն և ի նորումս, գրեց Գաբրիել եպիսկոպոս Այվազյան» գրախոսականը, որտեղ բարձր է գնահատված Այվազովսկու հիշյալ աշխատությունը (հեղինակ՝ ***): Երիտասարդ բանաստեղծներին հատկացված առանձին բաժնում հանդես են եկել Պետրոս Հայկազունին («Տեսարան դաշտին Շաւարշական»), Գաբրիել Ղուլիքևխյանցը («Անցք իսրայելացւոց ընդ ծովն Կարմիր») և Միքայել Ղալաբեկյանցը («Լոյս և խաւար»): «Բանաստեղծք և հյուսվածք Ջիվանի» խորագրի ներքո հրատարակված է հինգ ստեղծագործություն Ջիվանուց, որը հավաքել և համապատասխան ներածականով հրատարակության է պատրաստել Կարապետ Մատինյանցը: Ավարտը՝ հաջորդ համարում:

Նոյեմբերի 2. «Մասիսը» (№ 1160) արևմտահայերեն հրատարակում է «Արամի» «Առաջադիմություն» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 4. «Մասիսը» (№ 1161) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Շիրինյանի «Երգ վասն Ազգայյանց» ներբողական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 5. Մեծ Սալա գյուղում (այժմ՝ ՌԽՖՍՀ Ռոստովի մարզի Մյասնիկյանի շրջան) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), հայ եկեղեցու պատմաբան Հուսիկ Զոհրաբյանը: Էջմիածնի միաբանության անդամ էր 1894 թ. սեպտեմբերի 11-ից: Վախճ. 1942 թ. հոկտեմբերի 23-ին, Բուխարեստում:

Իր աշխատությունները ստորագրում էր «Հուսիկ վարդապետ», «Հուսիկ եպիսկոպոս» և «Հուսիկ արքեպիսկոպոս» ձևով:

Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի, Պոլիս, 1942, էջ 305: **Սուրեն Շ. Վանեցի**, Վազգեն Առաջին. Համառոտ տարեգրություն (1908-1955), Էջմիածին, 1986, էջ 91:

Նոյեմբերի 13. «Մասիսը» (№ 1165) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Ամիրխանյանցի «Բանասիրական» հոդվածը: Տրված է սեպագրերի հայտնաբերման և նրանց ընթերցման գիտա-բանասիրական պատմությունը:

Նոյեմբերի 18. «Մասիսը» (№ 1167) արևմտահայերեն հրատարակում է Հ.Թերխանյանի «... Տեր» հոդվածը: Ստուգաբանված է «Արմենիա» բառը, այս կապակցությամբ քննության են առնված հայ ժողովրդի հին շրջանի պատմության մի քանի հարցեր:

Նոյեմբերի 20. «Մամուլ» երկշաբաթաթերթը (№ 178) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Հայ գրագիտաց բերնին համը» երգիծական-հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 27. «Մասիսը» (№ 1171) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Ամիրխանյանցի «... խմբագիր» հոդվածը: Բանավիճելով Հ. Թերխանյանի հետ «Արմենիա» բառի ստուգաբանության վերաբերյալ (տե՛ս 1871 թ. նոյեմբերի 18), Ամիրխանյանը պնդում է իր տեսակետը, վկայակոչելով եվրոպացի բազմաթիվ հեղինակություններ:

Նոյեմբերի 28. «Մեղու Հայաստանին» (№ 43), Ս.Արարատյանցի՝ բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Բույս հավաքող» նովելը:

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ժակ-Բենին Բոյուեի «Սեր հայրենյաց» ակնարկը:

Դեկտեմբեր. «Արևելյան մամուլը» (№ 12), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգ. Մ.Մամուրյան?), հրատարակում է Էմիլ դը Ժիրարդենի «Պատժելու իրավունքի մասին» գրքի առաջաբանը՝ «Գործելու ազատություն» վերնագրով: Սկզբում թարգմանիչը տվել է Ժիրարդենի հիշյալ աշխատության ստեղծման բանասիրական պատմությունը: Հրատարակված է «Երբ պիտի շինենք մեր լեզուն» արևմտահայերեն հոդվածը և Մանուկ Սա-

դաթյանի «Առ քեզ Գիրսաս, կարդա, ցնծաս» բանաստեղծությունը: Ինչպես հայտնի է, Գիրսաս անվան ներքո հեղինակը նկատի ունի Սարգիս Ջալալյանին:

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է «Աստղիկի» «Հայոց կյանքի վերա թյուր կարծիքներ» գրախոսությունը և Հովհաննես Մուշեղյանցի «Զարմայրա հրաժեշտը» բանաստեղծությունը:

«Աստղիկը» գրախոսել է ռուս պատմաբան Ն.Ֆ.Դուբրովինի «История войска и владычества русских на Кавказе» աշխատությունը, և հայկական իրականությանը վերաբերող մատենագիտական, գրական-բանասիրական բնույթի մի շարք դիտողություններից հետո, այն բացասական է գնահատել:

Դեկտեմբեր. «Բազմավեպը» (№ 12) գրաբար հրատարակում է Աբրահամ Ճարյանի «Ի նկարագիր ծաղկաբլուր լերին. նուագ» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 2. «Մասիսը» (№ 1173) արևմտահայերեն սկսում է հրատարակել Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1175-ում (դեկտեմբերի 8):

Դեկտեմբերի 4. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 180) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Հայ էֆենտիներուն ժողովը» երգիծական պոեմը:

Դեկտեմբերի 11. «Մեղու Հայաստանին» (№ 45), Մ. Տեր-Սարգսյանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Նելսոնի մահը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 48-ում (1872, հունվարի 1):

Դեկտեմբերի 18. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 138) արևմտահայերեն հրատարակում է «Գուրգենի» (իմա՛. Հակոբ-Անտոն Պիպեռճյան?) «Առ վաղամեռիկն իմ Շուշան» դամբանական բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 18. «Մեղու Հայաստանին» (№ 46) արևելահայերեն հրատարակում է «Հայ ոմն»-ի «Երկու խոսք» գրախոսականը: Գրախոսված է Ստեփաննոս Մանդինյանցի «Համառոտ եկեղեցական պատմություն նոր ուխտի, միջնակարգ ուսումնարանների ձեռնարկության համար» աշխատությունը և բացասական է գնահատ-

ված («Այսպիսի գրվածքներն աշխատանք չեն ներկայումս, այլ աղճատանք միայն»):

Դեկտեմբերի 18. «Մեղուն» (№ 62) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Երազ մը» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 73-75):

Դեկտեմբերի 25. «Մասիսը» (№ 1182) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Վարդովյանի (թուրքերեն՝ Գյուլլի Յաղուբ) հոդվածը «Խմբագիր տեր» վերնագրով, որտեղ բողոքում է իր ներկայացումների նկատմամբ ցուցաբերած միտումնավոր քննադատության դեմ:

Դեկտեմբերի 25. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 185) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ոսկի մարտիկ փայտե տոտիկի» (հմա՛. Գեորգ Այվազյան) «Պոշ թյուֆենկի մամուլա սրզ» (հմա՛. «Դատարկ հրացանդ կրակիր «Մալուլի» վրա») կատակերգությունը: Ավարտ՝ նույն պարբերականի 1872 թ. № 189-ում (հունվարի 12):

Դեկտեմբերի 28. «Մասիսը» (№ 1183) արևմտահայերեն հրատարակում է Թորոս Սարաճյանի «... Տեր» հոդվածը: Քննադատված է հայ պարբերականների վարած կողմնակալ քաղաքականությունը:

Դեկտեմբերի 29. «Մեղուն» (№ 64) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Մոտա» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 76):

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) գրաբար հրատարակում է Կ. Մարկոսյանի «Ի սուրբ թարգմանիչս մեր Սահակ եւ Մեսրովբ, առ հրեշտակն Մասսեաց» թատերական չափածո ստեղծագործությունը: Հրատարակված է նաև «Հատընտիր մտածությունք դաստիարակության և կրթության վրա» արևմտահայերեն հրապարակախոսական հոդվածը:

–––Պոլսում իր գոյությունն է սկսում կրթահրատարակչական «Գրասիրական ընկերությունը»: Վերջինս գոյություն ունեցավ մինչև 1870-ական թվականների վերջը և կարողացավ չորս անուն գիրք հրատարակել:

«Հանդես ամսօրյա», 1955, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

–––Նոր Նախիջևանում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հայ գրականության և եկեղեցու պատմաբան Աբրահամ Հարությունի Ջամինյանը: Վախճ. 1937 թ. Երևանում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 317:

–––Կարինում (Արևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Հովհաննես Սերենգյուլյանը: Վախճ. 1915 թ.:

«Վարդգես», «Յ. Զարմայր» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, «Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի», Ալեքսանդրիա, 1939, էջ 57-58:

–––Սիմ-Հաջի գյուղում (Մարզվանի մոտ, Հյուսիսային Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր, բանաստեղծ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հովակիմ Սիմոնի Ֆերմանյանը: Վախճ. 1934 թ. մայիսի 28-ին, Սենտ-Էտիենում (Ֆրանսիա):

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Խոսնակ», «Հովնաթան եղբայր», «Ռեֆնամ», «Կրտսեր Նատարացի» և «Նատարացի Նամրեֆ» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 24 («Հ. Ֆերմանյան հանկարծամահ»), № 26 («Հովակիմ Ս. Ֆերմանյան»), № 29 («Խոսնակ սոխակը դադրած է գեղգեղալէ»), № 31 («Հովակիմ Ս. Ֆերմանյան»), №37 («Խոսնակ»), 1935, № 23 («Խոսնակի թղթերուն մեջ»):

––– Թիֆլիսում (?) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և վրացերեն լեզուներով), թարգմանիչ (հայերենից՝ վրացերեն և վրացերենից՝ հայերեն) Դավիթ Տեր-Դավթյանը: Վախճ. 1901 թ. նոյեմբերի 17-ին, Թիֆլիսում:

«Տարազ», 1901, № 45 («Մահացուցակ»), **«Մշակ»**, 1901, № 259 («Դ. Տեր-Դավթյան»), **«Լումա»**, 1902, № 1 («Դ. Տեր-Դավթյան»):

–––Սըվազում (Սեբաստիա, Արևելյան Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր Նշան Սարգսի Պալիոզյանը: Վախճ. 1923 թ. դեկտեմբերի 2-ին, Նյու Յորքում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Տաճար» և «Պայլ» կեղծանուններով:

«Հայաստանի կոչնակ», 1923, № 50 (Մահգույժ), № 51 («Թաղում պրոֆ. Ն. Պալիոզյանի»), № 52 («Պրոֆ. Նշան Ս. Պալիոզյան»), 1924, № 3 («Պրոֆ. Նշան Պալիոզյան-Տաճար»):

–––Ադաբազարում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց պատմաբան, բանասեր, խմբագիր Սեդրակ Գուրթյանը: Ջախճ. 1938 թ. հուլիսի 15-ին, Պոլսում:

1919-20 թթ. Պոլսում խմբագրել է «Արազած» շաբաթաթերթը, որտեղ հանդես է եկել «Վահան Շահրիման» կեղծանունով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 942:

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Արշակ Վռամյանը (Օննիկ Գ.Դերձակյան): Եղեռնամահ՝ 1915 թ. ապրիլի 4-ին, Շատախի շրջանում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նեռ» և «Օգիմդա» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 336:

–––Բերդում (այժմ՝ Շամշադինի շրջկենտրոն), Մովսես քահանա Տեր-Անանյանցի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում տեղական երեքդասյա (1933 թվականից՝ միջնակարգ) արական դպրոցը: Սկզբում այն ուներ 30 աշակերտ և երեք դասարան: 1900-ական թվականներից դպրոցը դարձավ երկսեռ, ծաղկուն ժամանակ ունենալով 1100 աշակերտ և 35 դասարան: Բերդի շրջանային դպրոցը 1971 թ. նշեց իր գոյության հարյուրամյակը (կոչվում է «Բերդի № 1 միջնակարգ դպրոց»):

«Այգաբաց», 1971 թ.

–––Սպակերտ գյուղում (Բաղեշի մոտ, Արևելյան Թուրքիա) ծնվեց արձակագիր, բանաստեղծ Սիմոն Բազելյանը: Վախճ. 1943 թ. ԱՄՆ-ում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 172:

–––Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և գերմաներեն-գրաբար զուգահեռ տեքստերով, հրատարակվում է Ֆրիդրիխ Շիլլերի «Երգ ի զանգակն» բանաստեղծությունը: 22 էջ: Նախապես հրատարակվել է «Բազմավեպի» 1871 թ. № 6-ում (հունիս): Տե՛ս ներկա հատորում այդ թվականը:

–––Վենետիկում, Մաղաքիա Պետրոսյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և հայերեն ու անգլերեն զուգահեռ տեքստերով, հրատարակվում է Օլիվեր Գոլդսմիտի «Գյուղն ամայի» պոեմը:

–––Վենետիկում, Հ.Բ.Ե.Վ.Մ.-ի (իմա՛. Հայր Բառնաբաս Եսայան, Վարդապետ Մխիթարյան)՝ հունարեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Եպիկտետոսի առածների ժողովածուն՝ «Առածք բարոյականք» խորագրով: 218 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Սերովբե Տերվիշյանի «Այրի մայրն ու միամոր որդյակը» պատմվածքը: 19 էջ:

–––Թիֆլիսում գրաբար և աշխարհաբար լեզուներով հրատարակվում է «Լիակատար երգարան» ժողովածուն, որն ընդգրկում է շուրջ չորս հարյուր հայկական ազգային և ժողովրդական երգեր, եկեղեցական տաղեր: Ժողովածուն հրատարակության է պատրաստել Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցը: 132 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն մեկնաբանություններով հրատարակվում է Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի «Մայրենի լեզու. այբբենարան և սկզբնական ընթերցարան մանուկների համար» դպրոցական դասագիրքը: 247 էջ:

Նույնը՝ 1873 թ., 1874 թ., 1877 թ., ամեն անգամ որոշ փոփոխումներով և հավելումներով:

–––Թիֆլիսում, Հայրապետ Ղուկասյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Մասեի «Մի կտոր հացի պատ-

մություն. նկարագրություն մարդու և անասունների կյանքի, նամակներում» մանկավարժական աշխատությունը: 242 էջ:

–––Թիֆլիսում, տեղական բարբառով, հրատարակվում է Գաբրիել Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը: Հեղինակն իր գործն ավարտել է 1870 թ. օգոստոսի 3-ին: 123 էջ:

–––Թիֆլիսում, աշխարհաբար տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ստեփաննոս Նազարյանցի «Տեսական և գործնական առաջնորդ ռուսաց լեզվի, ի պետս հայկազնյան մանուկների» աշխատությունը: 317 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է «Խնդիր սրբազան տեղյաց, և նորա պաշտոնական քննությունը» աշխատությունը: 292 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Տիմոթեոս Սափրիչյանի «Երկամյա պանդխտություն ի Հաբեշստան կամ բարոյական, քաղաքական և կրոնական վարք Հապեշից» մեմուարային աշխատության առաջին հատորը: 168 էջ: Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 160 էջ:

Նույնը՝ նույն թվին, ֆրանսերեն (թարգ. Տիգրան Սավալանյան): 181+175 էջ:

Գիրքը նվիրված է Մեծ Բրիտանիայի Վիկտորիա թագուհուն, Երուսաղեմի հայոց պատրիարք Եսայի արքեպիսկոպոսի կողմից: Պատասխան ուղերձում թագուհին իր շնորհակալությունն է հայտնում թանկագին նվերի համար:

–––Երուսաղեմում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով և հայերեն-ֆրանսերեն զուգահեռ տեքստերով, հրատարակվում է «Կրթություն գաղղիերեն լեզվի ընթերցման, ի պետս Հայոց» դասագիրքը: 72 էջ:

Նույնը՝ Վան, 1882 թ., 75 էջ, անփոփոխ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Ներսես Շնորհալու ճառերի և ուղերձների ժողովածուն «Թուղթք ընդհանրական» խորագրով: 334 էջ:

–––Երուսաղեմում, գրաբար առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Միքայել Ասորու «Ժամանակագրութիւն հանեալ ի հնագոյն գրչագրէ» աշ-

խատությունը և «Յաղագս քահանայութեան, թէ ուստի սկսանի եւ ուր կատարի եւ զինչ է քահանայութիւն» ճառը: ԺԵ+526 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Մելքիսեդեկ Մուրադյանցի «Կրթական ավետարանական բանից» ընդհանուր խորագրի ներքո զետեղված կրոնազեղարվեստական աշխատությունների առաջին պրակը, «Սիմոն, Պետրոս» վերնագրով: 56 էջ:

«Կրթական ավետարանական բանիցը» հիմնականում թարգմանություն է ֆրանսերենից, սակայն կան պրակներ, որոնք ինքնույն ստեղծագործություններ են: Պրակների հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **Տետր Բ**, «Սամարացին», անդ, 1871, 54 էջ: **Տետր Գ**, «Որդիք աստուծո», անդ, 1872, 101 էջ: **Տետր Դ**, «Աման անուշահոտության», անդ, 1875, 47 էջ: **Տետր Ե**, «Անտարբերություն կրոնական», անդ, 1875, 61 էջ: **Տետր Զ**, «Արտասուք և երգ» , անդ, 1875, 69 էջ: **Տետր Է**, «Տաճարի քարերը», անդ, 1876, 54 էջ: **Տետր Ը**, «Հերմաս և Ոնեսիմ», անդ, 1876, 55 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Մելքիսեդեկ Մուրադյանցի «Պատմութիւն Նոր Կտակարանի» աշխատությունը: 320 էջ:

Նույնը՝ 1872 թ. (320 էջ), 1882 թ. (368 էջ), 1896 թ. (340 էջ), ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:

–––Վաղարշապատում աշխարհաբար հրատարակվում է Ստեփաննոս Մանդինյանի «Սրբազան պատմություն հին և նոր ուխտի եկեղեցվո» աշխատությունը: 113 էջ:

–––Վաղարշապատում, Գաբրիել Այվազյանի (հմմ՛. Այվազովսկի)՝ գերմաներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով, հրատարակվում է Յանոսի (հմմ՛. Իգնատիոս Դյոլլինգեր. գերմանացի աստվածաբան-բանասեր) «Յաղագս պապին և ժողովոյ նորա» աշխատությունը և «Կանոնական կոնդակ Պիոսի Թ., յաղագս եկեղեցւոյն աստուծոյ, մատուցեալ ի քննութիւն հարց պատուականաց» կոնդակը:

–––Վաղարշապատում արևմտահայերեն (առաջաբանը՝ գրաբար) հրատարակվում է Վահրամ Մանկունու «Այրիվանք կամ Գեղարդա վանք» ուսումնասիրությունը: 55 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Ստեփաննոս Շահումյանի «Ընտիր պատմութիւն Դաւիթ բեգին եւ պատերազմացն հայոց Խափանու, որք եղեն ընդդեմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722» աշխատությունը: Բնագիրը հրատարակության է պատրաստել Աբգար Գյուլամիրանցը: 136 էջ:

–––Վաղարշապատում, ֆրանսերեն բնագրից կատարված աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Մասեի «Երկու խնձորածախ տղայոց պատմությունը կամ մեծ պապի թվաբանությունը» պատմվածքը: 86 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Մանվել Գյումուշխանեցու «Պատմութիւն անցից անցելոց Սեւանայ վանուց» աշխատությունը: Բնագիրը հրատարակության է պատրաստել Եղիա աբեղա Ջալալյանցը: 115 էջ: Հատվածաբար հրատարակվում էր Էջմիածնի «Արարատում», 1871 թ. մայիս–սեպտեմբեր (№№1- 5) համարներում:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է ՌԻխտանես եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» աշխատությունը: 116+141 էջ:

–––Էջմիածնում, Փիլիպոս Վարդանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆերդինանդ Շմիդտի «Բենիամին Ֆրանկլինի կյանքը» ստեղծագործությունը: 166 էջ: Հատվածաբար հրատարակվում էր Էջմիածնի «Արարատում», 1871 թ. հուլիսից (№ 3), մինչև դեկտեմբեր (№ 8):

–––Վաղարշապատում հրատարակվում է Գևորգ Աբովյանի կազմած և ծանոթագրած «Ձայն բազմաց» խորագիրը կրող ժողովածուն: 155 էջ: Պարունակում է արձակ և չափածո ուղերձներ (գրաբար և աշխարհաբար լեզուներով), ուղղված Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցուն, նրա ընտրության առթիվ:

–––Պոլսում, Աբրահամ Մուրադյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, հրատարակվում է Յուլիուս Միշլեի «Սեր» աշխատությունը: 426 էջ:

–––Պոլսում, Ռեթեոս Պերպերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆելիցիտե Լամընյեի «Բանք հավատացելո ուրուք» աշխատությունը: 159 էջ:

–––Պոլսում, իտալերեն-արևմտահայերեն զուգահեռ տեքստերով, հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Արշակ Բ» ողբերգությունը: 111 էջ:

–––Պոլսում, Խոսրով Օհանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ֆրանսուա կամ սուտ բանալի» վիպակը:

–––Պոլսում, Թովմաս Թերզյանի՝ հին հունարեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով, հրատարակվում է Անակրեոնի բանաստեղծությունների ժողովածուն, «Տաղք Անակրէոնի» վերնագրով: 94 էջ:

Ժողովածվի առաջին՝ «Տաղք Անակրէոնի» բաժնում զետեղված են հիսուներեք բանաստեղծություններ, որոնց հեղինակային հարազատությունը կասկած չի հարուցում: Երկրորդ՝ «Տաղք համարեալք Անակրէոնի» բաժնում զետեղված ինն անուն բանաստեղծությունների՝ Անակրեոնի գրչին պատկանելը բանասիրությունն ընդունում է երկբայությամբ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գերասիմ Պաղտասարյանի «Բարեկամ մանկանց (նվեր կաղանդի)» պատմվածքը: 64 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ղազարոս Հովակիմյանի «Մեթթեռնիք» ուսումնասիրությունը: 84 էջ:

–––Պոլսում Նազարեթ Ջամպազճյանի՝ բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ադոլֆ Ռիոնի «Առողջաբանություն» աշխատությունը: 100 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Անտոն Մաղաթիա Գարագաշյանի «Գաղղիերեն քերականություն ըստ Օլեն-տորֆի դրության» աշխատությունը: 615 էջ:

Բ. տիպ, անդ, 1882, 550 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Համբարձում Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատա այցելուն» վեպի Ա գիրքը: 116 էջ:

Բ. գիրք անդ, 1872, 118-294 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Չոլազյանի «Դասագիրք ազգային պատմության հայոց, սկսյալ ի Հայկա, մինչ ի թվականն Քրիստոսի, 1870» աշխատությունը: 239 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1875 թ., 255 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Վիճակահանությամբ ամուսնու-թյուն և հարստություն մը» ստեղծագործությունը: 31 էժ:

–––Պոլսում հրատարակվում է Վ. Միքայելովի «Բառք և խոսակցությունք ինն լեզուե բաղկացյալ. տաճկերեն-հայերեն (իմա՛. արևմտահայերեն. Ս.Շ.)-հունարեն-ռու-սերեն-ուլահերեն (իմա՛. մոլդավերեն. Ս.Շ.)-գաղղիերեն-իտալերեն-գերմաներեն -անգլերեն» խոսակցական բառատետրի Ա. տետրակը:

Հաջորդ տետրակները չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակվում է «Հռովմա քահա-նայապետին կարծեցյալ նախազահությունը» (Տետր Ա.) գրքույկը: 14 էջ: Նույն թվականին հրատարակվում է նույն շարքի Բ. գրքույկը՝ «Հռովմա սրբույն Պետրոսի կեղծ աթոռը» վերնագրով: 12 էջ:

–––Պոլսում, Հակոբ Աճեմյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Գաղտնի ատյան անկախ դատավորաց» աշխատությունը: 144 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հռովմա քահանայապետը, կամ ինչ պետք է քահանայապետին աշխարհական իշխանություն (օրվան խնդրույն վրա տասնութ հարցում-պատասխան)» աշխատությունը: 49 էջ:

Հեղինակն իրեն կոչում է «Հռովմեական ուղղափառ հայ կաթոլիկ քահանա մը», որի ով լինելը մեզ չհաջողվեց պարզել:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հ.Գ. Կյուրճյանի «Գեղագրություն հայերեն, գաղղիերեն, հունարեն և տաճկերեն» աշխատությունը: 21 էջ:

––––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պետրոս Տեր-Մելքոնյանի «Պատմություն ազատությանն Հաճընո, ի ձեռն Քոզանյանց (քրդական ցեղախմբերից մեկի անվանումն է. Ս.Շ.)» գրքույկը: 27 էջ: Այն հրատարակության է պատրաստել Հարություն Սըվաճյանը:

––––Պոլսում գրաբար (առաջաբանը՝ արևմտահայերեն) հրատարակվում է Մկրտիչ Հիսարյանի բանաստեղծությունների ժողովածուն «Դիւան, որ է տաղարան» վերնագրով: 127 էջ:

Նույնը՝ 1910 թ., անփոփոխ:

––––Պոլսում, Զենոբ Մսրլյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և Հովսեփ Շիշմանյանի առաջաբանով, հրատարակվում է Իոսիֆ-Գեորգ Շտրոսմայերի «Պապ և ավետարան» աշխատությունը:

––––Պոլսում, Սրապիոն Հեքիմյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Քրիստոս ի Վատիկան» գործը: 15 էջ:

––––Պոլսում, Գևորգ Պուպլիի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Շարլ-Վիկտոր Արլենկուրի «Մենակյացը» վիպակը: 290 էջ:

––––Պոլսում գրաբար հրատարակվում է Ավետիս Պերպերյանի «Պատմութիւն հայոց, սկսեալ ի 1772 ամէ փրկչին, մինչեւ ցամն 1860» աշխատությունը: 621 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սիմոն Ֆելեքյանի «Տրամախոսություն ավերակունս Հայաստանի» պատմական ողբերգությունը: 24 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է «Քերական, հնաձև գրով և հին ոճով» դասագիրքը: 36 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Աճեմյանի «Վահագն» դյուցազներգությունը (2072 տող): 93 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մկրտիչ Աճեմյանի չափածո ստեղծագործությունների ժողովածուն, «Ժպիտք և արտասուք» վերնագրով: 217 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» աշխատությունը: Վերջում զետեղված է «Նոյն Եզնըկա վարդապետի խրատք» խրատաբանությունը: 386 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Արմենակ Ասատուրյանի «Անգղիերեն-հայերեն քերականություն» ձեռնարկը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Փիրղալեմյան-Տոսպեցու «Ճանապարհորդություն ի Մայր Աթոռն Արարատյան և անտի ի Պոլիս» ուղեգրական չափածո աշխատությունը: 151 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Նաթանյանի «Առաջին տեղեկագրություն վիճակին Նիկոմիդիո» ուղեգրական աշխատությունը: 42 էջ:

Հեղինակի ուղեգիծը եղել է հետևյալը. Նիկոմիդիա, Արմաշ, Խասկալ, Թամլըխ, Նոր-Գյուղ, Ադաբազար, Կեյվեի Միջագյուղ, Գուրտփելեն, Սապանջա, Ասլանբեկ, Օվաճըգ, Պարտիզակ, Չենկիլեր, Միջագյուղ, Յալախ դերե, Մերդի Գյոզ: Վերջում «Նշանտուք, խնամություն և հարսանիք» խորագրի ներքո տրված է Յալովա նահանգի հայկական գյուղերի՝ նման արարողությունների նկարագրությունը:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց ըստ Անձնացեացն օրինակի» գիրքը, որի վերջում զետեղված է «Բան խրատու Եղիշէի վարդապետի յաղագս միանձանց» ճառը: 130 էջ:

Նույնը՝ նույն թվականին, անդ, փոքրադիր, լեզվա-ոճական որոշ խմբագրումներով և վերնագրից հետո՝ «Բ. տպագրութիւն» հավելումով: 472 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Մաղաքիա Օրմանյանի «Ի հանդիսի յուղարկաւորութեան Պողոս պեյի Տիւզեան» (շապկի վրա՝ «Ի մահ Պողոս պեյի Տիւզեան») դամբանականը: 13 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Վրեժ (վեպ ժամանակակից և ժողովրդական)» ստեղծագործութունը (հեղ. «Լ.Տ.»): 167 էջ:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Նշան Միրզայանի «Տորա» վեպը: 224 էջ:

–––Զմյուռնիայում, Գ. Չափրաստճյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Քրիստափոր Շմիդտի «Պալերմայի Վարդուհին (վեպ բարոյական)» գեղարվեստական ստեղծագործությունը: 114 էջ:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Ա. Սուրենյանի «Նոր դասագիրք ազգային պատմության» ձեռնարկը: 155 էջ:

Նույնը՝ 1876 թ. (148 էջ), 1879 թ. (160 էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով և լրացումներով:

Հարցուպատասխանի ձևով հեղինակը շարադրել է հայ ժողովրդի ողջ պատմությունը, սկսած Հայկ-Բելից մինչև 1870-ական թվականները:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժորժ Զանդի «Օրիորդ Լագենթինի» վեպը: 368 էջ:

–––Զմյուռնիայում, Մեսրոպ Նուպարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Նոտր-Դամ Փարիզի» վեպի առաջին հատորը: 212 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 223 էջ:

Երրորդ հատոր՝ 1872 թ., 205 էջ:

Վեպի թարգմանության ժամանակ թարգմանիչը կատարել է կրճատումներ, մանավանդ այն մասերում, երբ հեղինակը խոսում է փոքր ազգերի՝ հասարակական կյանքում ճնշված ու անհավասար վիճակի մեջ լինելու մասին և տվել է ընդարձակ ծանոթագրություններ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Երեք հրացանակիրք» վեպի Ա. հատորը: 271 էջ:

Բ. հատոր (272 էջ) և Գ. հատոր (288 էջ), անդ, 1872 թ.:

–––Արմաշում արևմտահայերեն հրատարակվում է Խորեն Աշըխյանցի «Համառոտ տրամաբանություն» գիտաուսումնական ձեռնարկը: 148 էջ:

Նույնը՝ Նիկոմեդիա, 1884 թ., 157 էջ:

–––Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է Վասակ Մաղաթյանցի չափածո ստեղծագործությունների ժողովածուն՝ «Փնջիկ. երկասիրությունք ազգային երգչի» խորագրով: Զետեղված են յոթանասունմեկ անուն բանաստեղծություններ, որոնցից մի քանիսը՝ Թիֆլիսի և Վանի բարբառներով: 65 էջ:

–––Արմաշում, Խորեն Աշըգյանցի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Վլադիմիր Կեթեի (ճիշտ ձևը՝ Գյոտե) «Վարդապետարան ընդհանրական ուղղափառ եկեղեցվո» աշխատությունը: 343 էջ:

–––Թեոդոսիայում, Արիստակես Սեդրակյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էրնեստ Նավիլլի «Հավիտենական կյանք» աշխատությունը: 252 էջ:

1 8 7 2

Հունվար. «Բազմավեպը» (№ 1), Կարապետ Րեիզյանի՝ բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Նախակրթական դպրոցք.

անոնց ապազան» գիտամանկավարժական ուսումնասիրությունը, որը շարունակվում է մինչև ապրիլ (№ 4) և մնում է անավարտ:

Հունվար. «Արևելյան մամուլը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Հին ցավ» հրապարակախոսական հոդվածը և արևելահայերեն՝ Մանուկ Սաղաթյանցի «Հայաստան» բանաստեղծությունը:

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է «1872 նոր թվական» հրապարակախոսական առաջնորդողը: Սկսում է հրատարակվել Պողոս վարդապետ Պետրոսյանի «Տեղագրութիւն Շիրակայ» գրաբար աշխատությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 9-ում (սեպտեմբեր): Հրատարակվում է Էմմանուել Եսայանի «Դոկտոր Մորթման և Վանա սեպաձև արձանագրությունները» արևմտահայերեն հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունվարի 1. Թիֆլիսում, Գրիգոր Արծրունու խմբագրությամբ և Վասիլ Շահվերդյանի, Պերճ Պռոշյանի, Պողոս Իզմաիլյանի, Միհրդատ Ամրիկյանի, Գևորգ Չմշկյանի ջանքերով, սկսում է հրատարակվել «Մշակ» գրական և քաղաքական շաբաթաթերթը: Իր գոյությունը, պարբերականության որոշ փոփոխումներով, շարունակում է մինչև 1920 թ. վերջը:

«Մշակի» խմբագիրները եղել են՝ **Գրիգոր Արծրունու** մահվանից (1892թ.) հետո **Ալեքսանդր Քալանթար**. 1893-1913 թթ.: **Համբարձում Առաքելյան**. 1913-1918 թթ: 1918 թ. հուլիսից (Հ. Առաքելյանի մահվանից հետո) մինչև նոյեմբեր, նշվում է «Խմբագրական մարմին, հրատարակիչ՝ աշխատակիցների խումբ», ապա՝ **Լևոն Քալանթար**. 1918 թ. նոյեմբերից-1919 թ. ապրիլ: 1919 թ. ապրիլից-դեկտեմբեր «Մշակը» դադարել է, 1920 թ. հունվարից վերսկսել է, ունենալով «հրատարակությամբ խմբագրական մարմնի» նշումը, և այդպես շարունակվել է մինչև հունիս: 1920 թ. հունիսից մինչև տարվա վերջ՝ խմբագիր **Ա. Բաբախանյան** (Լեո):

Հունվարի 1. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 187) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «1871 տարվույն դատաստանը» և « «Մամուլ» առ «Մեղու» հիվանդատես երթալ» գրական-հրապարակախոսական հոդվածները:

Հունվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Երկու խոսք» հրապարակախոսական առաջնորդողը:

Հունվարի 1. «Մեղուն» (№ 65) արևմտահայերեն հրատարակում է «Մեղուին մաղթանքը» երգիծական բանաստեղծությունը: Տպագրված է [Հակոբ Պարոնյանի] «Հայերուն առաջիկա տարվան մեջ ընելիքները» և «Կաղանդի նվեր» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 7-9, հ. 8, էջ 72):

Հունվարի 1. «Մշակը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» (իմա՛. Միհրդատ Ամիրկյան) «Ֆելիետոնը», որտեղ ի թիվս այլ հարցերի, քննարկվում են հայ հին ու նոր մատենագիտության հարցեր: Սկսում է հրատարակվել Գևորգ Չմշկյանի «Կալատուզ Սահակ» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունվար 7. Պոլսում ծնվեց գեղարվեստի պատմաբան, գեղանկարչագետ Արմենակ Հովհաննեսի Սազըքյանը: Վախճ. 1944 թ. հուլիսի 17-ին, իր ծննդավայրում:

«Հանդես ամսօրյա», 1948, № 1-2 («Արմենակ պեյ Սազըքյան»):

Հունվարի 8. «Մեղուն» (№ 66) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Աճեմյանի «Հայ ապրինք» չափածո ընդդիմախոսականը, որը պատասխան է Խորեն Գալֆայանի՝ համանուն խորագիրը կրող բանաստեղծության: Հրատարակված է [Հակոբ Պարոնյանի] «Ելի յախոռոց և եկի ի ժամ…» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 74-75):

Հունվարի 12. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 189) արևմտահայերեն հրատարակում է «Սխալ ես, սխալ» և «Մեֆիստոֆել ի Տրապիզոն» երգիծական մանրապատումները:

Շարունակելով նախորդ տարվա ավանդույթը (տե՛ս 1871 թ. փետրվարի 20), «Մամուլը» անկանոն պարբերականությամբ հրատարակում է այլևայլ բնույթի

երգիծական մանրապատումներ, մեծ մասամբ անստորագիր, որոնց հիմնական հերոսը Մեֆիստոֆելն է: Դատելով լեզվա-ոճական ընդհանրություններից, մանրապատումների հեղինակը նույն անձնավորությունն է: Հրատարակվել են. «Մեֆիստոֆելյան մատենադարան» (№ 190, հունվարի 15), «Օրթագյուղի հրաշագործը» (№ 192, հունվարի 22), «Մաղը ծակ է, պատը ծակ է» (№ 194, հունվարի 29), «Արևելյան թատրոն կամ Ալքազար» (№ 197, փետրվարի 9), «Այցելություն մը» (№ 200, փետրվարի 19), «Անճարակ փեսացուն» (№ 203, մարտի 2), «Կատակի մը փորձանքը» (№ 208, մարտի 18), «Միշտօրյա զինով մը» (№ 215, հուլիսի 15), «Վտանգավոր սիրահար մը» (№ 217, հուլիսի 22), «Քահանայացուների քննություն» (№ 219, հուլիսի 29), «Դպրոցի մը արձակուրդը» (№ 223, օգոստոսի 12), «Մեֆիստոֆելի նոր մեկ գյուտը» (№ 226, օգոստոսի 26), «Հավկիթականք» (№ 229, սեպտեմբերի 6), «Ձկնորսուհի» (№ 237, հոկտեմբերի 7), «Վերոնիկա տուտուին բախտը» (№ 238, հոկտեմբերի 11, անավարտ), «Գիշեր մը զբոսարանին մեջ» (№ 241, հոկտեմբերի 21), «Ըյնալ կա, ելնել կա, տե՞ր ես» (№ 244, նոյեմբերի 2), «Ապտակին մոտան» (№ 246, նոյեմբերի 8), «Վերնատան մը կռիվը» (№ 251, նոյեմբերի 20), «Կլորիկ նշանատվություն մը» (№ 252, նոյեմբերի 29, ավարտը՝ հաջորդ համարում), «Թափառական զնչուն» (№ 254, դեկտեմբերի 6), «Աղջիկտես» (№ 255, դեկտեմբերի 8, ավարտը՝ հաջորդ համարում), «Կաղանդչեք» (№ 258, դեկտեմբերի 20):

Հունվարի 13. «Մշակը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Դուք և մենք» հրապարակախոսական հոդվածը և Թիֆլիսի բարբառով՝ «Համալի» «Համալի մասլահաթը» ստեղծագործությունը (տե՛ս՝ **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 239-244):

Հունվար 15. «Մասիսը» (№ 1189) արևմտահայերեն հրատարակում է «Ներսեսի» «Բանասիրական» հոդվածը: Վերլուծված է ժամանակի հայկական գրական-մշակութային կյանքը, բնութագրված է Կարապետ Ռւթուջյանի և Տիգրան Չուխաջյանի գործունեությունը:

Հունվարի 19. «Մեղուն» (№ 67) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թարգման կազինոճին» և «Ազգային» երգիծապատումները (տե՛ս. **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 76-79):

Հունվարի 20. «Մշակը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինքնակոչ խմբագիր» հրապարակախոսական հոդվածը, Ստեփաննոս Պալասանյանի «Մատենագրություն» գրախոսականը (գրախոսված են Նիկողայոս Տեր-Հակոբյանցի «Մայրենի լեզու. այբբենարան» և «Մայրենի լեզու. ընթերցարան» դասագրքերը: «Պարոն Րաֆֆիի ուղևորությունից Պարսկաստանում» ընդհանուր խորագրի ներքո սկսում է հրատարակվել ուղեգրական բնույթի նրա առաջին նամակը: Հրատարակությունը անկանոն պարբերականությամբ շարունակվում է մինչև 1873 թ. № 27-ը (հուլիսի 19), որի ընթացքում լույս է տեսնում քսաներեք նամակ (տե՛ս. **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 310-487):

Հունվարի 23. Սեբաստիայում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Խոսրով Խաչատուրի Գարապաճագյանը: Վախճ. ?:

«Խ. Սմբատ», «Սմբատ», «Խոսրով», «Արմեն Արտոնց», «Արտավան», «Ցավունի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 265-266: **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, էջ 310-311:

Հունվարի 26. «Մեղուն» (№ 68) արևելահայերեն հրատարակում է Սեդրակ Տեր-Սարգսենցի «Վայրենություն» բանաստեղծությունը:

Հետագայում վերջինիս գործերը «Մեղվում» հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. «Զգույշ իմ պարտք» (հունիսի 14, № 90), «Այս չէ մեր կյանք» (հունիսի 17, № 91), «Որ զպտուղ իւր ի ժամու տացէ...» (հունիսի 21, № 92, գրաբար):

Հունվարի 27. «Մշակը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Կրոնական մեթոդը գրականության մեջ» գրական-հրապարակախո-

սական հոդվածը, «Չաքուճի» (իմա՛. Միհրդատ Ամրիկյան) «Ֆելիետոնը» (քննադատված են քաղաքային բարքերը): Սկսում է հրատարակվել Գևորգ Չմշկյանի «Մազթաղի հարսնիքը» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 6-ում (փետրվարի 10):

Հունվարի 27. «Մասիսը» (№ 1194) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովսեփ Շիշմանյանի «Ժուռնալճի, երեսփոխանական ժողով, մամուլ» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Մեկնաբանված է ազատամիտ հրապարակախոսության անհրաժեշտությունը հայի համար և այդ հենքի վրա վերլուծված է մամուլի և հոդվածագիրների դերը:

Հունվարի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 194), Կ. Քերեսթեճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Գեղջուկն տարագիր» բանաստեղծությունը:

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Մուշեղյանցի «Զեփյուռ հայրենի» բանաստեղծությունը և Աբգար Գյուլամիրյանցի «Խմբագրության «Արարատ» ամսագրո» ընդդիմախոսականը: Վերջինն ավարտվում է նույն պարբերականի № 5-ում (մայիս):

Փետրվար. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 2) Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Մար-Ժան Բրոսսեի «Հայաստանի հին պատմության վրա, ըստ սրբաղրոշմ և սեպաձև բնագրաց» ուսումնասիրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում, Մատթեոս Մամուրյանի «Քննադատական» հոդվածը և «Կամսարի» «Առակք Կռիլովի, թարգմանություն գեր[ապատիվ] Գաբրիել Այվազյանի» գրախոսականը: Վերջում, արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, զետեղված է Իվան Կռիլովի «Երկու տակառք» առակը:

Փետրվար. Պոլսում ծնվեց արձակագիր, հոդվածագիր Անայիսը (Եվփիմե Հակոբի Չոպանյան-Ավետիսյան): Վախճ. 1950 թ. օգոստոսի 4-ին, Փարիզում:

Սկզբնական շրջանում հանդես էր գալիս «Ե.Չ.» ստորագրությամբ: Օտարալեզու պարբերականներում ստորագրում էր «A.B.» ձևով:

Անայիս, Հուշերս, Փարիզ, 1949, 351 էջ: **«Հայաստանի կոչնակ»**, 1950, № 35 («Անայիսի մահը»), № 37 («Հարգանք տիկին Անայիսին»), № 42 («Անայիս քերթողուհին»):

Փետրվար. «Բազմավեպը» (№ 2), իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ընծայականով, հրատարակում է «Ցուցակ գիտության և արվեստից ի Իտալիա, VI դարե մինչև մեր ժամանակս» գրական-բանասիրական ուսումնասիրությունը: Ավարտ՝ նույն պարբերականի № 8-ում (օգոստոս):

Փետրվարի 3. «Մասիսը» (№ 1197) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Բաբազյանի «Պետրոս Դուրյան» հոդվածը:

Փետրվարի 3. «Մեղուն» (№ 69) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խորեն եպիսկոպոսի բանակցությունը» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 81-82):

Փետրվարի 9. Աշտարակում ծնվեց գյուղագիր, արձակագիր, բանաստեղծ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934-ից) Արշակ Գաբրիելի Շահնազարյանը: Վախճ. 1942 թ. դեկտեմբերի 29-ին, Երևանում:

«Թորգոմ», «Սագաշ», «Էմիլ» և «Բարիլույսյան» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայ գյուղագիրներ» (կազմեց Ա. Թամրազյան), Երևան, 1950, էջ 572-573: **«Գրական թերթ»**, 1972, № 34 («Արշակ Շահնազարյան»): **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 422-423:

Փետրվարի 9. Թիֆլիսում ծնվեց հոդվածագիր, ֆելիետոնիստ, բանաստեղծ, խմբագիր Աստվածատուր (նաև՝ Ասատուր, Բոգդան) Սարգսի Երիցյանը: Վախճ. 1929 թ.:

1906 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1925 թ. խմբագրել է «Խաթաբալա» (սկզբում՝ «Թատրոն և գեղարվեստ - խաթաբալա») երգիծական շաբաթաթերթը: 1919 թ. Թիֆլիսում հիմնել և մինչև 1912 թ. խմբագրել է «Սուրհանդակ» օրաթերթը (1911 թվականից՝ Սարգիս Մուբայաջյանի (իմա՛. Ատրպետ) հետ: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Հ. Ճանճառյանց», «Ջանֆի-Մարտին», «Գու-Դրի-Ջան», «Կարմիր ծիծակ», «Դուս – տուր- Դոն» կեղծանուններով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 313: **ՉԱԳԱԹ** Աստվածատուր Երից-յանի ֆոնդ:

Փետրվարի 12. «Մասիսը» (№ 1201) արևմտահայերեն հրատարակում է Գ. Չոպանյանի «Ազդը»: Բարձրացված է Պետրոս Դուրյանի ժառանգության հավաքման, դրա համար տասնչորս հոգուց բաղկացած մասնաժողով ստեղծելու, Դուրյանի հետ-մահու «գրությունքը», որ «տասնեն ավելի արձակ և ոտանավոր, թատերական և քնարերգական հեղինակություններէ կբաղկանան» հրատարակության պատ-րաստելու հարցերը:

Սկիզբ. «Փարոսը» (Տետր Ա) արևելահայերեն հրատարակում է [Մսեր մագիստրոս Մսերյանցի] «Նախաշավիղ քրիստոնեական գիտելյաց» գրախոսականը: Գրա-խոսված և բացասաբար է գնահատված Ստեփան Մանդինյանի՝ այդ վերնագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը 1870 թ):

Փետրվարի 15. «Մասիսը» (№ 1202) արևմտահայերեն հրատարակում է Ս. Ղուկաս-յանի «Հայերեն լեզու» հոդվածը:

Փետրվարի 17. «Մշակը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչպես պիտի ընտրվի տեսուչը» և «Հրավեր թղթակիցներին» հրապարակախո-սական հոդվածները և «Չաքուճի» «Ֆելիետոնը», որտեղ քննադատված է Թիֆլիսի հայերի անընթերցասիրությունը:

Փետրվարի 18. «Մեղուն» (№ 70) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոն-յանի] «Օրագրին դեմ օրագրին պատասխանը» և «Վրիպակք» երգիծապատում-ները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 83-86):

Փետրվարի 19. «Մասիսը» (№ 1204) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այ-վազյանի «Առակք Կռիլովի» գրախոսականը: Գրախոսված է Գաբրիել Այվա-զովսկու թարգմանությամբ հրատարակված «Առակք Կռիլովի յիննն գիրս» ժողո-վածուն (Պոլիս, 1870 թ.: Տե՛ս ներկա հատորը, այդ թվականը): Այն դրական է գնահատված:

Փետրվարի 23. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 201) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մաթկյանի (Մաշկերտցի) «Հայրենակից ի՞նչ ընենք» բանաստեղծու-

թյունը, որը գրված է Ռ. Պատկանյանի «Հիմի է՞լ լռենք»-ի ազդեցության ներքո: Հրատարակված է «Գուրգենի» (Հակոբ-Անտոն Պիպեռճյան?) «Ո՞Իր ես Շուշան» չափածո ստեղծագործությունը:

Փետրվարի 24. «Մշակը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» «Ֆելիետոնը» (ի թիվս այլ հարցերի, տեղեկացվում է, որ ներկայացվել է Գ. Սունդուկյանի «Պեպոն», որն անցել է «չտեսնված»): Սկսում է հրատարակվել Գևորգ Չմշկյանի «Աբրասիմ Արխիպիչ» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 11-ում (մարտի 16):

Փետրվարի 29. «Սիոնը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում է «Քաղված ճառախուսության դոկտոր Մորթմանի» հոդվածը: Տրված է սեպագիր արձանագրությունների հայտնաբերման և գերմանացի գիտնականների ջանքերով նրանց ընթերցման պատմությունը:

Մարտ. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 3) արևմտահայերեն հրատարակում է «Շահնուրի» (իմա՛. Մատթեոս Մամուրյան) «Թղթակցություն» գրական-հրապարակախոսական տեսությունը:

Մարտի 2. «Մշակը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Անընդունակության հերոսներ» հրապարակախոսական հոդվածը և Ղարաբաղի բարբառով «Փրեյդունի» (իմա՛. Երգիհն Արամյան) «Պարոն կազեթ կրեող» պատմվածքը:

Մարտի 3. Վանում Հակոբ Կալոյանի, Նշան Շիրվանյանի, Գարեգին Սրվանձտյանի ղեկավարությամբ, Կարապետ Իսաջանյանի, Հովսեփ Ջանյանի, Ավետիս Գալջյանի, Պետրոս Թուրշյանի և այլոց անդամակցությամբ, իր գոյությունն է սկսում «Միություն ի փրկություն» ազգային-ազատագրական գաղտնի կազմակերպությունը: Նույն օրը «Միություն...»-ը հրատարակում է 46 հոգու ստորագրություն ունեցող իր կոչը, հայտարարելով, որ «կամ պետք է մեռնել ու չտեսնել այս սարսափելի վիճակը, կամ վերակենդանություն ստանալ ի ծոց հայրենյաց»: Կազմակերպությունը եռանդուն գործունեություն ծավալեց Վասպուրականի հայությա-

նը թուրքերի ու քրդերի բռնություններից ազատելու համար։ Դադարեց գոյություն ունենալ 1874 թ. վերջերին, ոստիկանական միջամտության հետևանքով։

«Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 269-278 (վավ. Ղ-ՂԵ)։

Մարտի 4. «Մասիսը» (№ 1209) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովսեփ Շիշմանյանի «Խրիմյան և սահմանադրություն» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում։

Մարտի 4. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 4-ին մարտի» հրապարակախոսական առաջնորդողը (վերլուծված է ժամանակի գրական-հրապարակախոսական կյանքը) և Թիֆլիսի բարբառով՝ Գևորգ Տեր-Ալեքսանդրյանցի «Սերգեյ Իվանիչն ու նրա օղլուշաղը» պատմվածքը։

Մարտի 8. «Մեղուն» (№ 73) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Վիեննայի արվեստահանդեսին ղրկվելիք հայ բերքերն ու աստվածները» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 10-11)։

Մարտի 9. «Մշակը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Մաղաքիա Աբեղայի Պատմութիւն վասն ազգին նետողաց» գրախոսականը։ Գրախոսված է 1871 թ. Պետերբուրգում, Ք. Պատկանյանի ռուսերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով հրատարակված «История Монголов инока Макагии, XIII века» գիրքը, որը թարգմանական և լեզվաոճական բնույթի որոշ դիտողություններից հետո, դրական է գնահատված։

Մարտի 11. «Արշալույս արարատյանը» (№ 931) գրաբար հրատարակում է Մեսրոպ Թաղիադյանի «Տաղ, շարադրեալ հանգուցյալ Մեսրովբայ Թաղիադեանց, յամին 1841 թ. Հնդկաստան» բանաստեղծությունը (տե՛ս **Մ.Թաղիադյան**, Գեղարվեստական երկեր, կազմեց Ռ. Նանումյան, Երևան, 1965, էջ 63-64։ Այստեղ բանաստեղծությունը զետեղված է վերնագրի հապավումով և առանց վերջին քառյակի)։

Մարտի 11. «Մասիսը» (№ 1212) գրաբար հրատարակում է «Հիշատակարանք Ավետիք պատրիարքի» հուշագրությունը։ Այն «Վենետկո Մխիթարյան միաբանութենեն

արժանապատիվ վարդապետե մի» ձեռքով Փարիզից ստացել և հրատարակության է հանձնել Հովսեփ Շիշմանյան-Ծերենցը:

Մարտի 11. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն սկսում է հրատարակել Մարտիրոս Սիմոնյանցի «Լալոն ու Խախոն» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մարտի 16. «Մշակը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Լեզու և կյանք» հրապարակախոսական հոդվածը և «Չաքուճի» «Ֆելիետոնը»:

Մարտի 18. «Մեղու Հայաստանին» (№ 3) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 18-ին մարտի» հրապարակախոսական առաջնորդողը:

Մարտի 21. «Մասիսը» (№ 1216) արևմտահայերեն հրատարակում է «Լրագրական խոտորմունք» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղ՝ «Ս.Տ.Ս.»):

Մարտի 23. «Մշակը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Նոքա» հրապարակախոսական հոդվածը և «Նիոբեի» (իմա՛. Գրիգոր Արծրունի) «Հինգերորդ դարի հայ-աբեղա պապերը և «Մեղու Հայաստանի» լրագիրը» ընդդիմախոսականը:

Մարտի 25. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Մարտիրոս Սիմոնյանցի «Ասլան աղայի թաղումը» պատմվածքը:

Մարտի 25. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 210) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Տպագրական ազատություն» հրապարակախոսական առաջնորդողը և «Մկներուն ժողովը» երգիծական ակնարկը:

Մարտի 30. «Մասիսը» (№ 1220) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովսեփ Շիշմանյանի «Քառասուն տարի» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1222-ում (ապրիլի 4): Վերլուծված է հիշյալ ժամանակահատվածի հայկական հոգևորական և գրական-մշակութային կյանքը:

Ապրիլ. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 4) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Հայկական նամականի» ժողովածվի առաջաբանը, «զայն քննա-

դատելու պաշտոնն ուրիշներու թողլով»: Հրատարակված է Արմենակ-Սարգիս Պալապանյանի «Ատամնացաւ» գրաբար երգիծական բանաստեղծությունը:

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 4), գերմաներեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ա.Դ.Մորթմանի «Հայաստանի նախկին հիշատակարանք» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 6-ում (հունիս): Հրատարակված է [Գաբրիել Պատկանյանի] «Ցուպն Մովսիսի ի նախնումն հռչակի գործարան հրաշից» գրաբար բանաստեղծությունը (ունի «Հեղինակ հրաժեշտին Վարդանայ» ստորագրությունը, որը, ինչպես հայտնի է, Գաբրիել Պատկանյանի կեղծանունն է, տե՛ս ներկա հատորը, 1871 թ., սեպտեմբեր):

Ապրիլի 1. Պոլսում ծնվեց երաժիշտ-կատարող, խմբավար, հայ ազգային երաժշտության մասնագետ, մանկավարժական-մեթոդական աշխատությունների հեղինակ Հարություն Գրիգորի Սինանյանը: Վախճ. 1938 հունվարի 8-ին իր ծննդավայրում:

«Բազմավեպ», 1904, № 2 («Հարություն Սինանյան»), 1909, № 3 («Հայ հանճարը գնահատված»): **«Նոր լուր»**, 1938, № 6080 («Մահ Հարություն Սինանյանի», № 6081 («Հարություն Սինանյան»), № 6084 («Հարություն Սինանյան»):

Ապրիլի 6. «Մշակը» (№ 14) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ո՞վ է մեղավոր» հրապարակախոսական հոդվածը:

Ապրիլի 6. Աղաբազարում ծնվեց հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), կրթական-մշակութային գործիչ (մասնագիտությամբ՝ բժիշկ) Հովհաննես Արթինյանը: Վախճ. 1951 թ. հոկտեմբերի 19-ին, Արնուվիլում (Հարավային Ֆրանսիա):

«Հայաստանի կոչնակ», 1949, № 17 («Փարիզահայ ժամանակակից դեմքեր»), 1950, № 5 («Դոկտ. Հովհաննես Արթինյան...»), 1951, № 47 («Մահ դոկտոր Արթինյանի»), 1952, № 3 («Դոկտոր Հովհաննես Արթինյան»):

Ապրիլի 8. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Գրոշը» պատմվածքը:

Սկիզբ.Մոսկվայում Մսեր Մագիստրոս Մսերյանցի խմբագրությամբ (նրա մահվանից հետո այդ պարտականությունը վարել է որդին՝ Զարմայր Մսերյանցը) սկսում է հրատարակվել «Փարոս. խմբագիր բանասիրական գիտելյաց» տարեգիրքը: 1876

թ. կեսերին, հինգերորդ տարեգրքի հրատարակությունից հետո, «Փարոսը» դադարում է:

Ապրիլի 8. «Արշալույս արարատյանը» (№ 933) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Փոքրիկ ճամբորդություն մի ի Իտալիա (Նեապոլ, Պոմպեյ, Վեզուվ, Հռոմ, Ֆլորանա, Պիզա)» ուղեգրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 939-ում (հուլիսի 1):

Ապրիլի 15. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Սխալ բաղդատություն» ընդդիմախոսականը (բանավիճելով Ստ. Պալասանյանցի հետ, բարձրացված են քննադատության խնդիրներ: Հեղինակ «Տ.Շ.») և Զաքարիա Գրիգորյանցի «Քաղքի հանաք» պատմվածքը:

Ապրիլի 15. «Մեղուն» (№ 78) գրաբար հրատարակում է «Սուրի» (իմա՛. Բարթող Թաթարյան) «Առեղծուած» երգիծական ակրոստիքոսը: Այն ուղղված է Խորեն Գալֆայանի դեմ:

Ապրիլի 16. Շուշիում ծնվեց մշակութային գործիչ, հայ մաթեմատիկայի պատմաբան-բանասեր, բնագրագետ Բահաթուր Ավետիսի Բահաթրյանը (Բաղադրյան): Վախճ. 1934 թ. դեկտեմբերի 1-ին, Երևանում:

«Խորհրդային Հայաստան», 1934, № 276 («Մահ»), № 277 («Բահաթուր Բահաթուրյան»):
«Մեր անվանի դասախոսները», Երևան, 1970, էջ 46-47:

Ապրիլի 22. «Մեղուն» (№ 79) գրաբար հրատարակում է «Սուրի» (իմա՛. Բարթող Թաթարյան) «Առ համբաւորն քերթող ապտակ մտերմական» երգիծական բանաստեղծությունը, որն ուղղված է Խորեն Գալֆայանի դեմ:

Ապրիլի 22. «Արշալույս արարատյանը» (№ 934) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է Ղուլ Հովհաննեսի «Նկարագրություն ի հասակ անձին» բանաստեղծությունը: Այն շաբաթաթերթի խմբագրությանն է ուղարկվել Հնդկաստանից:

Ապրիլի 22. «Մասիսը» (№ 1228) արևմտահայերեն հրատարակում է «Կավուր ի Ղ[ազարոս] Հովակիմյանե» գրախոսականը (հեղինակ՝ «Ե.Տ.»):

Ապրիլի 22. «Մեղու Հայաստանին» (№ 8) Թիֆլիսի բարբառով հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Տանու աղջիկը անկտրիլ խաբբուզակ է» պատմվածքը:

Ապրիլի 26. «Փող Արևելյանը» (№ 68), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, շարունակում է հրատարակել Ալեքսանդր Դյումա-որդու «Կամելիազարդ տիկին» վեպը: Այն նույն պարբերականի № 91-ում (հունիսի 4) դեռևս շարունակում էր հրատարակվել:

«Փող արևելյանի» լրիվ հավաքածուն ձեռքի տակ չունենալու պատճառով, այլ մանրամասներ ճշտել չենք կարողացել:

Ապրիլի 27. «Մշակը» (№ 16) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Պոլեմիկա» բանավիճային հոդվածը: Հեղինակը բարձրացնում է ազգային կրթության հարցերը, կոչ անելով հայ պատանիներին նյութ քաղել ազգային մատենագիրներից ու հայ դասական գրականությունից: Այդ հենքի վրա բանավիճում է «Մեղու Հայաստանի» պարբերականում հրատարակված «Մեր ընտանեկան կյանքի մասին» հոդվածում արծարծած հարցերի շուրջ, պաշտպանելով «Մշակի» «Նիոբեի» (Գրիգոր Արծրունի) տեսակետները (տե՛ս ներկա հատորը, 1872 թ. մարտի 23):

Ապրիլի 29. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Grand rond» (իմա՛. «Մեծ շրջան») պատմվածքը:

Ապրիլի 30. Պոլսում, Ղևոնդ Փիրղալեմյանի ջանքերով և այնտեղ գտնվող արտամետցիների նախաձեռնությամբ, հիմնվում է «Արշակունյաց ընկերությունը» (անդամներ՝ Մ. Մուրատ Բյուզանդյան, Գևորգ Աճեմյան, Պողոս Գալուստյան, Պետրոս Ճենմամյան): Վերջինիս նպատակն էր «Արտամետի մեջ դպրոց մը բանալ և մշակույթին զարկ տալ»: Նույն թվականին ընկերությունն իր ջանքերով ու ֆինանսական միջոցներով կարողանում է Արտամետում դպրոց բանալ «Արտաշեսյան» անունով, իսկ 1874 թ. ապրիլին դրա համար հատուկ շենք կառուցել: «Ընկերությունը կլուծվի 1896 թ. ծանոթ դեպքերու պատճառավ»:

Պողոսյան Ե., «Պատմություն հայ մշակութային ընկերություններու», հ. Բ, Վիեննա, 1963, էջ 201-204:

Ապրիլի 30. Պոլսում, Արյուսակ Պեզիրճյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Վարդուհյան» (հետագայում «Նունյան-Վարդուհյան») իգական վարժարանը: Դարավերջին միանում է նույն թաղում գտնվող «Ս.Սահակյան» վարժարանի հետ (հիմնադրվել էր 1843 թ. փետրվարի 22-ին, անվանակոչվել էր Սահակ Պարթև կաթողիկոսի անունով), ստանում է նոր՝ «Սահակյան-Նունյան վարժարան» անվանումը և դառնում է երկսեռ: Ավանդվում էր հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, թվաբանություն, աշխարհագրություն, գծագրություն և եկեղեցական երաժշտություն: «Սահակյան-Նունյան վարժարանը» գոյություն ունի առ այսօր: 1955 թ. այն ուներ 15 ուսուցիչ, 660 աշակերտ, տնօրենն էր Վ. Կոստանյանը:

«Մասիս», 1853, № 56 («Ազգային»), № 57 («Ազգային»), 1855, № 180 («Հետևյալ շնորհակալության հայտարարությունը...»), **«Մեղու»**, 1872, № 81 («Սամաթիայեն»), № 82 («Տիկին Արուսյակ Պեզիրճյանի խոսքը...»): **«Հայաստանի կոչնակ»**, 1927, № 22 («Հայ կյանքը Թուրքիո մեջ»), 1955, № 18 («Պոլսո հայ վարժարանները»):

Մայիս. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մարդկային հոգվո կարողությունք» հոգեբանական-փիլիսոփայական ուսումնասիրությունը: Ավարտը՝ «Արևելյան մամուլ» № 9 (սեպտեմբեր): Հեղինակ (թարգմանիչ?)՝ Թ.Ժ.:

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել Վահան Բաստամյանցի «Թե ինչպես կազմվեցավ հայոց ազգը» պատմա-բանասիրական ուսումնասիրությունը: Ավարտը՝ նույն պարբերականի № 8-ում (օգոստոս): Սկսում է հրատարակվել «Հայկազն Ծերունու» (Գաբրիել Պատկանյան) «Սանատրուկ թագավորին վախճանը» արևելահայերեն պատմական ողբերգությունը, որն ավարտվում է «Արարատ» №8-ում (օգոստոս)

Մայիս. «Բազմավեպը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Հյուծյալ աղջիկն» բանաստեղծությունը և Ղևոնդ Ալիշանի «Երկու դարադարձ ազգային հիշատակք գալի տարվո» հոդվածը:

Մայիսի 1. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան, խմբագիր Ահարոն Սըրըյանը:

1908 թ. Պոլսում հիմնել և խմբագրել է «Քնար հայկական» կիսամյա երաժշտական հանդեսը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 222:

Մայիսի 1. Ակն քաղաքում (Արևելյան Թուրքիա) Խոսրով Մուրատյանի ջանքերով ու սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Ազգասիրական ընկերությունը» : Դադարում է 1877 թ.:

Պարսամյան Մ., Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 161:

Մայիսի 4. «Մշակը» (№ 17) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Ալափ Գևո» պատմվածքը:

Մայիսի 6. «Արշալույս արարատյանը» (№ 935), Կարապետ Շերիտճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Առաջին ապաշավն» բանաստեղծությունը:

Մայիսի 6. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն, որպես հավելված հրատարակում է Սենեքերիմ Արծրունու «Մեր ներկա պարբերական հրատարակությունը» քննադատականը, որն ավարտվում է նույն պարբերականի № 19-ում (հուլիսի 8):

Մայիսի 9. «Մասիսը» (№ 1235), Աբրահամ Ամիրխանյանի արևմտահայերեն ընծայականով, հրատարակում է Մկրտիչ Պեշիկթաշլյանի «Քնար կուսին» գրաբար բանաստեղծությունը (տե՛ս «Մկրտիչ Պեշիկթաշլյանի քերթվածներն ու ճառերը», հրատ. Ա. Չոպանյան, Փարիզ, 1904, էջ 70-73):

Մայիսի 13. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է «Այրի Թալալը և յուր որդի Գիզոլին» պատմվածքը: Հեղինակ՝ Ն.Մ.:

Մայիսի 13. Սեբաստիայում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (մասնագիտությամբ՝ քիմիկոս) Մարտիրոս Նալբանդյանը: Վախճ. 1916 թ. օգոստոսի 15-ին Պոլսում:

«Մնալ», «Մ.Ն. Բնագետ» և «Բնագետ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Թեոդիկ. Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1910, էջ 312, 1921, էջ 323, 1907, էջ 92:

Մայիսի 16. «Մասիսը» (№ 1238) արևմտահայերեն հրատարակում է «Լուսինյանի» (իմա՛. Խորեն Գալֆայան) «Հանճար. ողջույն մը առ Միսաքյան» հոդվածը:

Մայիսի 18. «Մշակը» (№ 19) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» (Միհրդատ Ամրիկյան) «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, քննադատված է ժամանակի գրական-հասարակական կյանքը:

Մայիսի 25. «Մեղու Հայաստանին» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Սարգիս Մանկունու «Համառոտ եկեղեցական պատմություն նոր ուխտի միջնակարգ ուսումնարանների...» գրախոսականը: Գրախոսված և բացասական է գնահատված Ստեփաննոս Մանդինյանի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը:

Մայիսի կեսեր. Պոլսում, Պետրոս Պեյլիկճյանի և Ա.Կ.Վարդանյանի սատարմամբ, իր գոյությունն է սկսում կրթա-դաստիարակչական «Կրթասեր ընկերությունը»: Այն իր առջև նպատակ էր դնում «երկու սեռե աղքատ և որբ՝ բայց և ուսման և կրթության ընդունակություն ունեցող տղայք յուր խնամոց ներքև առնուլ և դաստիարակել տալ բարեկարգ վարժարանաց մեջ»: Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները:

«Հանդես ամսօրյա» , 1956, № 7-8 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մայիսի 25. «Մշակը» (№ 20) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Հիշատակարան օրագրություններից» հոդվածը (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 643-648):

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը: Քննարկված է Ղ. Ալիշանի «Հուշիկք հայրենյաց հայոց» պատմա-գեղարվեստական արձակը, Մկրտիչ Աճեմյանի «Ժպիտ և արտասուք», «Վահագն» «ընտիր քերթողական երկասիրություններն», Մ. Հիսարյանի «Դիվան» ժողովածուն և Մ. Թաղիադյանի «Սոս և Սոնդիպի» «բանաստեղծական

վեպը»: Տպագրված է նաև Վանի բևեռագիր արձանագրությունների հայտնաբերման և վերծանման պատմությունը:

Հունիս. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 6) արևմտահայերեն հրատարակում է Ծերենցի «Թղթակցությունը» (բնութագրված է ժամանակի գրական-հասարակական կյանքը) և «Շահնուրի» (Մատթեոս Մամուրյան) «Ազնիվ բարեկամ» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Հունիսի 1. «Մշակը» (№ 21) արևելահայերեն հրատարակում է «Նիոբեի» (Գրիգոր Արծրունի) «Խաթաբալա» գրախոսականը: Սկսում է հրատարակվել «Մելիքզադեի» «Գեղեցիկ Վարթիկը» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 493-506):

Հունիսի 6. Մոսկվայում ծնվեց ռուս հայագետ, գրականագետ, թարգմանիչ (հայերենից՝ ռուսերեն), թատերագետ Յուրի Ալեքսեյի Վեսելովսկին: Վախճ. 1919 թ. ապրիլի 11-ին իր ծննդավայրում:

Շահնազարյանց Ս., Մարդասիրության և աշխատանքի ազնիվ զինվորը, Մոսկվա, 1901, 82 էջ: **«Հանդես ամսօրյա»**, 1908, № 12 («Գրական դեմքեր. Յուրի Վեսելովսկի»):

Հունիսի 7. «Մասիսը» (№ 1246) արևմտահայերեն հրատարակում է «Շահենի» «Բանասիրական. ասկե-անկե» հոդվածը, որում բացասաբար է բնութագրված Օգսեն Խոճաասարյանի և նրա «Լրագրի» գործունեությունը, դրվատված է Հովսեփ Բուշարդիի «Սուրբ Պետրոսի զանգակահարը» թատերախաղը (տե՛ս ներկա հատորը, 1868 թ.), դրա թարգմանությունը և Թ. Ֆասուլաճյանի ու Պ. Ադամյանի խաղը:

Հունիսի 10. «Մասիսը» (№ 1248) արևմտահայերեն հրատարակում է «Լուսինյանի» «... խմբագիր» գրական-հրապարակախոսական հոդվածը: Նկարագրված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, վերլուծված է Ազգային սահմանադրությունը և նրա՝ վայրիվերումներով լի պատմությունը: Տրված է ազգի՝ որպես հավաքական միավորի բնութագիրը:

Հունիսի 10. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն սկսում է հրատարակել «Հաբեթ Լուկիասի» (իմա՛. Հայրապետ Ղուկասյանց) «Նամակ Շամախուց» ակ-

նարկաշարը, որը որոշ ընդհատումներից հետո, ավարտվում է նույն պարբերականի № 27-ում (սեպտեմբերի 2):

Հունիսի 12. Թիֆլիսում ծնվեց երաժշտագետ, հայկական ժողովրդական երգերի հավաքող և հրատարակող, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1930 թ.) Ստեփան Գուրգենի Դեմուրյանը: Վախճ. 1934 թ. հունվարի 13-ին Երևանում:

«Գրական թերթ», 1934, № 1 («Ստեփան Դեմուրյան»):

Հունիսի 14. «Եփրատը» (№ 69) արևմտահայերեն հրատարակում է [Սիմոն Ֆելեքյանի] «Բանաստեղծական» ակնարկը: Ծաղրված է Կարապետ Փանոսյան-բանաստեղծի գործունեությունը:

Հունիսի 15. «Մեղուն» (№ 23) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Նոր Ղազարոս մը» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 90),

Հունիսի 15. «Մշակը» (№ 23) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» (Միհրդատ Ամրիկյան) «Ֆելիետոնը», որտեղ, ի թիվս եվրոպական և հայկական իրականության պայմաններում տեղի ունեցած այլևայլ հասարակական-քաղաքական երևույթների, վերլուծված է նաև հայ «կրիտիկոսների» գործունեությունը: Բացասաբար են գնահատված նրանցից մի քանիսի հոդվածները:

Հունիսի 17. «Մասիսը» (№ 1251) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ա. Լուսինյանի (Ամբրոսիոս Գալֆայան) «Քաղվածո տեսություն դաստիարակության վրա» հոդվածը: Ավարտը՝ № 1254-ում (հունիսի 24):

Հունիսի 22. «Մշակը» (№ 24) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ով մնաց» հրապարակախոսական հոդվածը (քննադատված է հայ իրականության՝ հին և նոր սերունդների հարաբերությունները, որոնք, մանավանդ ավագների կողմից, երբեմն հասնում են բացահայտ թշնամության): Հրատարակված է «Սաքոյի» (իմա՛. Սարգիս Աղամյանց) «Կոշկակարի խրճթից» պատմվածքը, որն ավարտվում է «Մշակի» նույն թվականի № 27-ում (հուլիսի 13):

Հունիսի 24. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն (հերոսների խոսակցությունը՝ Թիֆլիսի բարբառով) հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Հոգաբարձու Սիմոն Պետրովիչը» պատմվածքը:

Հունիսի 29. «Մշակը» (№ 25) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում» պատմական քրոնիկը:

Հունիսի 30. «Սիոնը» (№ 6) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Բանասիրական տրամախոսություն» թատերական ստեղծագործությունը (հեղ. «Կորյուն Մ.»): Ավարտը՝ հաջորդ համարում:

Հուլիս. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 7) արևմտահայերեն հրատարակում է «Շահնուրի» (Մատթեոս Մամուրյան) «Թղթակցություն» գրական-հրապարակախոսական հոդվածը, և արևելահայերեն՝ Գաբրիել Պատկանյանի «Արդի բարեբաստիկ վիճակ հայոց» բանաստեղծությունը:

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 7) արևելահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Տեր-Գրիգորյանի «Մայրենի լեզու» գրախոսականը: Ավարտը՝ «Արարատ» № 10-ում (հոկտեմբեր):

Հուլիսի 8. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն (հերոսների խոսակցությունը՝ Թիֆլիսի բարբառով) հրատարակում է Մարտիրոս Սիմոնյանցի «Հեքիմ Խամփերին ու դոխտուր Ռիղալթունովը» պատմվածքը:

Հուլիսի 13. «Մշակը» (№ 27) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Էլ չե՞նք հավատում» հրապարակախոսական հոդվածը:

Հուլիսի 15. «Արշալույս արարատյանը» (№ 940) արևմտահայերեն հրատարակում է «Վ»-ի (իմա՛. «Վրույր»=Մատթեոս Մամուրյան) «Հայկական նամականիի» առաջաբանը: Տպագրված է Հովհաննես Խաչկյանի «Հանելուկ» խորագիրը կրող գրաբար չափածո ստեղծագործությունը, որը խմբագրությանն էր ուղարկվել Հնդկաստանից և պարունակում էր տասնմեկ անուն հանելուկ:

Հուլիսի 15. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 215) արևմտահայերեն հրատարակում է Ղևոնդ վարդապետի (Փիրղալեմյան) «Ցավակցական հորդոր առ զույգ խմբագիրս հայոց» երգիծական բանաստեղծությունը:

Հուլիսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 20) արևելահայերեն (հերոսների խոսակցությունը՝ Թիֆլիսի բարբառով) հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Զանդիկզերենց Սալոմի պիկնիկը» պատմվածքը:

Հուլիսի 15. Պոլսում ծնվեց գրականագետ, հրապարակախոս, թարգմանիչ (հայերենից՝ ֆրանսերեն և հակառակը), հայ դասականների քննական բնագրերի հրատարակիչ Արշակ Հովհաննես Չոպանյանը: Վախճ. 1954 թ. հունիսի 8-ին Փարիզում:

1895-96 թթ. Պոլսում խմբագրել է «Ծաղիկ» կիսամսյա հանդեսը: 1898-ին Փարիզում հիմնադրել և մինչև 1949 թ. (ընդմիջումներով) խմբագրել է «Անահիտ» ամսագիրը: 1918-21(?) թթ. Փարիզում հիմնադրել է «Վերածնունդ» երկշաբաթաթերթը, իսկ 1921-34 թթ.՝ «Ապագա» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ֆանթազիո», «Թիթեռնիկ», «Ս. Պիծակյան» և «Տերվիշ» կեղծանուններով:

Արսեն, Թող չմեղադրեն (Արշակ Չոպանյանի մասին), Փարիզ, 1902, էջ 32: **Հապեշյան Հ**., Արշակ Չոպանյան. կենսագրական գիծեր, Փարիզ, 1924, էջ 28: Ֆեներճյան Գ., Արշակ Չոպանյան. կենսագրական և մատենագիտական նոթեր, Փարիզ, 1938, էջ 111: **«Արշակ Չոպանյան»** (վկայություններ անձին ու գործի մասին)», հավաքեց Սուրեն Մանվելյան, Նյու Յորք, 1950, էջ 31: **«Բազմավեպ»**, 1954, № 6-7 («Մահ Արշակ Չոպանյանի»): **Ճանաշյան Մ**., Պատմություն արդի հայ գրականության, Վենետիկ, 1953, էջ 497:

Հուլիսի 19. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 216) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Գրական ասպարիզին մեջ կուկուչի խաղ մը» հրապարակախոսական առաջնորդողը:

Հուլիսի 20. «Մշակը» (№ 28) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Գրականական երաշտություն» հրապարակախոսական հոդվածը և «Չաքուճի» «Պարոն Հ. Գեղամյանը և «Մեղուի» սքանչելահրաշ ընդդիմախոսականը»:

Հուլիսի 22. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 22-ին հուլիսի» հրապարակախոսական առաջնորդողը (առանց անունը տալու բանավիճում է Գրիգոր Արծրունու հետ, առաջ քաշելով գրականության հասարակական դերի հարցը) և * *-ի՝ «Ձեռաց հարսանիք»:

Հուլիսի 22. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 217) գրաբար թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Ե») հրատարակում է «Որ ցնորիցս իցէ հուն» բանաստեղծությունը:

Հուլիսի 29. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 29-ին հուլիսի» հրապարակախոսական առաջնորդողը և Ալեքսանդր Քալանթարի «Քելեխ ուտող Փարսադանը» պատմվածքը:

Հուլիսի 31. «Սիոնը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Հորդորական խոսք առ հայկազուն մանկունս» և Սահակ Խապայանի «Անաչառ դիտողություն մի» (քննադատված են ժամանակի պարբերականները) հրապարակախոսական հոդվածները: Հրատարակված է Մամբրե Մարկոսյանցի «Խոսք արտասանեալ ի հանդիսի սուրբ թարգմանչաց» գրաբար բանաստեղծությունը:

Օգոստոս. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 8) արևմտահայերեն հրատարակում է Ծերենցի «Թղթակցություն» հրապարակախոսական հոդվածը, ուր բարձրացված են հայկական հասարակական կյանքի հետ առնչվող մի քանի հարցեր և մեր ազգային գործիչների՝ այդ ասպարեզում ցուցաբերած ապաշնորհ գործունեությունը: Բացասաբար է ներկայացված Վենետիկի Մխիթարյանների գրական քաղաքականությունը, որը որակված է որպես «կարճամիտ և հիմար», որպես «ձեր՝ առ Հռովմա ջախջախ զահին ըրած շողոքորթություն», որպես «ձեր ի՞նչ հովն է ազգի մը բարոյականին ավրվիլը» և այլն:

Օգոստոս. Էջմիածնի «Արարատը» (№ 8), Ս. Մարությանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Անտուան-Ժան Սեն-Մարտենի «Հայոց լեզվի և գրականության գիտնական նշանակությունը» ուսումնասիրությունը: Ավարտ՝ № 10-ում (հոկտեմբեր):

Օգոստոս. Ակնում Հակոբ Գորյանի, Զարեհ Թորոսյանի, Հարություն Բեիզյանի և այլոց ջանքերով իր գոյությունն է սկսում «Ուսումնասիրական ընկերությունը»: «Այս

ընկերությունը հիմնած է լսարան, գրադարան, թանգարան և «Ծաղիկ» անունով շաբաթաթերթ մը» (Պարսամյան Մ.)։ Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1877 թ.։

Իր գործունեության ընթացքում ընկերությունը կարողացավ նաև թատերական խումբ կազմակերպել և ներկայացումներ տալ։

Պարսամյան Մ. Ակն և ակնցիք, Փարիզ, 1952, էջ 161։ **«Հանդես ամսօրյա»**, 1963, № 10-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»)։

Օգոստոսի 1. «Մասիսը» (№ 1269) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը։ Ավարտը՝ № 1274-ում (օգոստոսի 12)։

Օգոստոսի 3. «Մշակը» (№ 30) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Լսեն են, թե Ալին մեռել է, բայց չեն իմացել ո՛ր Ալին» (քննադատված է ժամանակակից երիտասարդության անպտուղ վարքն ու բարքը) և Գևորգ Չմշկյանի՝ «Հայ էր» ակնարկը։

Օգոստոսի 5. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 221) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Ռամկավարական Մասիս», «Եպիկուրյան փող», «Ազնվապետական Մեղու», «Դերդլի Մանզումե», «Արարատին թերթուրը», «Սրբակրոն Ավետաբեր» և «Սեդային սկալաները» քննադատական ակնարկները։ Երգիծական ոճով բնութագրված են հիշված պարբերականները։ Հրատարակված է Հակոբ Ոսկանի «Լուսավորչյան վարժարան օրիորդաց, երգ, նվեր առ Հայկուհի» արևմտահայերեն բանաստեղծությունը։

Օգոստոսի 5. «Մասիսը» (№ 1271) արևմտահայերեն հրատարակում է «Ա. Լուսինյանի» «Համր պերճախոսությունք» գրական էսսեն։ Այն նվիրված է «Առ ազնիվ Օննիկ պեյ Պոտուրյան»։

Օգոստոսի 10. «Մշակը» (№ 31) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Թատրոն հարկավո՞ր է թե ոչ» գրական-հրապարակախոսական հոդվածը և «Նիրբեի» «Օրինակի նշանակությունը մանկավարժության մեջ» ուսումնասիրությունը։

Օգոստոսի 12. «Մեղու Հայաստանին» (№ 24) արևելահայերեն հրատարակում է Գաբրիել Տեր-Հովհաննիսյանցի «Սուրբ Գևորգի դուլը» պատմվածքը: Ավարտը՝ հաջորդ համարում: Պատմվածքը գրվել է Մոսկվայում, 1864 թ. նոյեմբերի 18-ին:

Օգոստոսի 17. «Մշակը» (№ 32) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» «Ֆելիե-տոնը»: Քննադատված են «ծուլություն և անընդունակություն» դրսևորող ժամանակակից հասարակական գործիչները, որոնք «փոխանակ ձագեր պատրաստելու, ընդհակառակը, իրենց անշարժությամբ ամեն նոր զարթնող ուժերը լաք դարձրին»: Քննված է Սենեքերիմ Արծրունու գործունեությունը, «Մեղու Հայաստանի» պարբերականի «տխուր և խայտառակ անցյալը», ներկայացված է «Մեղու Հայաստանի» - «Մշակ» բանավեճը և այն ծնող շարժառիթները:

Օգոստոսի 19. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 224) արևմտահայերեն հրատարակում է Տոսպեցու (իմա՛. Նահապետ) «Հանելուկը»:

Շարունակելով այս ավանդույթը, «Մամուլը» անկանոն պարբերականությամբ սկսում է հրատարակել այլևայլ հանելուկներ, բառախաղեր, ժողովրդական ասացվածքներ, «Լուծումն հանելուկաց»-ներ: Հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Հանելուկ»** (№ 227, օգոստոսի 30), **«Լուծումն հանելուկի»** (№ 229, սեպտեմբերի 6), **«Հանելուկ»** (№ 230, սեպտեմբերի 9, հեղ.՝ Նահապետ Տոսպեցի), **«Հանելուկ»** (№ 232, սեպտեմբերի 16, հեղ.՝ Նահապետ Տոսպեցի), **«Լուծումն հանելուկի»** (անդ, հեղ. Գ.Մ.Է.), **«Լուծումն հանելուկի»** (№ 233, սեպտեմբերի 23, հեղ.՝ Գ. Պոլսեցի), **«Բառական առեղծված»** (№ 234, սեպտեմբերի 27), **«Լուծումն առեղծվածոց»** (№ 235, սեպտեմբերի 30, հեղ.՝ «Թավ»), **«Հանելուկ»** (անդ, հեղ.՝ Նահապետ Տոսպեցի), **«Բառական առեղծված»** (№ 236, հոկտեմբերի 5, հեղ. Գ.Մ.Է.), **«Բառական առեղծված»** (№ 237, հոկտեմբերի 7), **«Լուծումն առեղծվածոց»** (անդ, հեղ.՝ Կ.Մ.Գ.), **«Լուծումն հանելուկի»** (անդ, հեղ.՝ Գ. Պոլսեցի), **«Բառական առեղծված»** և **«Լուծումն հանելուկի»** (№ 238, հոկտեմբերի 11), **«Բառական առեղծված»** և **«Լուծումն երկու բառական առեղծվածոց»** (№ 239, հոկտեմբերի 14. վերջինն ունի «Շահանդուխտ» ստորագրությունը), **«Լուծումն առեղծվածոց»** (հեղ.՝ Գ. Ռշտունի) և **«Բառական առեղծված»** (անստորագիր) (№ 240, հոկտեմբերի 18), **«Բառախաղի լուծումն»**

(№ 241, հեղ.՝ Մելքոն Կարապետյան), **«Բառական առեղծված»** (№ 242, հոկտեմբերի 25, հեղ.՝ Ա. Մոմձյան), **«Հանելուկ»** (հեղ.՝ Կ.Ս.Տ.Մ. Միաբան Երուսաղեմի) և **«Լուծումն»** (հեղ.՝ Տ.Ց.Գափամաճյան, № 243, հոկտեմբերի 28), **«Հանելուկ»** (№ 244, նոյեմբերի 2), **«Լուծումն հանելուկի»** (№ 245, նոյեմբերի 4, հեղ.՝ «Երվանդ»), **«Բառական առեղծված»** (№ 246, նոյեմբերի 8, հեղ.՝ Գ.Պ.Ճ.)։

Օգոստոսի 22. «Մասիսը» (№ 1278) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ Ութուջյանի] «Զոհրյան խաչակրություն» «բանավիճական գրությունը»։ Քննադատված է «Զոհրի» (Մատթեոս Մ.Այվատյան) անազնիվ վարքագիծը գրական բանավեճի ժամանակ։

Օգոստոսի 24. «Մշակը» (№ 33) արևելահայերեն հրատարակում է «Գրականական խանութ» քննադատական հոդվածը (հեղ. Ստեփաննոս Պալասանյան?), որտեղ գրախոսված է «Кавказ» լրագրի հավելվածը հանդիսացող «О существе национальной индивидуальности и об образовательном значении крупных народных единиц» գրքույկը։ Սկսում է հրատարակվել Գևորգ Չմշկյանի «Իմ թատրոնական հիշողություններից» հուշապատումը, որը շարունակվում է մինչև 1872 թ. դեկտեմբերի 21-ը (№ 50) և մնում է անավարտ։

Օգոստոսի 26. «Արշալույս արարատյանը» (№ 943) գրաբար հրատարակում է Տեր Հովհաննեսի (Խաչկյան ?) «Ոտաերձ սիրոյ և յարգանաց առ տէր Գրիգորիս արքեպիսկոպոս, նորընտիր առաջնորդն վանաց Ջուղայ» ներբողական ակրոստիքոսը։ Այն շաբաթաթերթի խմբագրությանն է ուղարկվել Կալկաթայից։ Քառյակների առաջին տողերի առաջին և վերջին տառերը կազմում են «Տէր Գրիգորիս եպիսկոպոս» բառակապակցությունը։ Հրատարակված է Հարություն Սըվաճյանի «Նուագ» գրաբար բանաստեղծությունը։

Օգոստոսի 26. «Մասիսը» (№ 1280) արևմտահայերեն հրատարակում է «Ա. Լուսինյանի» «Գրականություն և յուր անմահությունը կամ Միսաքյան և յուր գրական երկոց ի նպաստ բացված հանգանակությունը» հոդվածը։

Օգոստոսի 26. «Մեղու Հայաստանին» (№ 26) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 26-ին օգոստոսի» հրապարակախոսական առաջնոր-

դողը (վերլուծված է ժամանակի գրական-հասարակական կյանքը) և Մարտիրոս Սիմոնյանցի «Աղաթ է» պատմվածքը:

Օգոստոսի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 227) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Երկու մուրացկան» երգիծական մանրապատումը և Կ.Ք.-ի «Բանաստեղծություն» չափածո ստեղծագործությունը:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ժան-Ժակ Ռուսսոյի «Յիսուս Քրիստոս» ակնարկը: Ժողովրդական աշխարհաբարով հրատարակվում է «Սաղմոս-երգու Մակարի» «Առ ուխտաղրուժ ամուսնավորն» և արևմտահայերեն՝ Հարություն Սահակյանի «Իղձ պանդխտին» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի 1. «Մասիսը» (№ 1282) գրաբար հրատարակում է «Ա. Լուսինյանի» «Բօթ մեծ գուժեաց Ողիմպոսէն» եղերերգական պոեմը: Միհրան Էքմեքճյանի ընծայական նամակից հայտնի է դառնում, որ այն գրվել է պոլսահայ կրթական-մշակութային գործիչ Հարություն Պոտուրյանի մահվան առթիվ:

Սեպտեմբերի 9. Զմյուռնիայում վախճանվեց մշակութային-հոգևորական գործիչ, թարգմանիչ (իտալերենից, լատիներենից և թուրքերենից՝ հայերեն) Պողոս Թագթագյանը: Ծնվ. 1797 թ. Պրուսայում:

«Արշալույս արարատյան», 1872, № 945 («Հանգիստ Ս. Առաջնորդին Զմյուռնիո»): **«Բազմավեպ»**, 1918, էջ 169 («Կ.Պոլսո հայ պատրիարքներու տապանագիրները»):

Սեպտեմբերի 9. «Արշալույս արարատյանը» (№ 977) արևմտահայերեն հրատարակում է «Ազգասիրական դիտողություն մի» հրապարակախոսական հոդվածը: Քննադատված է արևմտահայության մեջ գոյություն ունեցող այն «ձախորդ կուսակցությունը, որ միշտ չարամտութամբ և ատելությամբ կխոսի Ռուսիո հզոր և բարեխնամ կառավարության նկատմամբ...»:

Սեպտեմբերի 12. «Մասիսը» (№ 1287) արևմտահայերեն հրատարակում է «Օշինի» (իմա՛. Շավարշ Եսայան) «Աշխարհաբարի խնդիրը» հոդվածը:

Նույն վերնագիրը կրող պատասխան հոդվածով «Մասիսում» (№ 1292, սեպտեմբերի 23) հանդես եկավ Կարապետ ՌԻթուջյանը, որին էլ հաջորդեց

«Օշինի» պատասխանը (№ 1300, հոկտեմբերի 12), ապա՝ Խորեն Աշըգյանի ընդարձակ ամփոփիչ հոդվածը (№ 1310, նոյեմբերի 4)։

Սեպտեմբերի 14. «Մասիսը» (№ 1288) արևմտահայերեն հրատարակում է «Ժողովրդական կրթություն» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղինակ՝ «Լ.Պ.»)։

Սեպտեմբերի 16. Պոլսում Ստեփան Ռում օղլու ատենապետությամբ և Հակոբ Աճառյանի գանձապետությամբ, իր գոյությունն է սկսում «Արշակունյան ընկերությունը», որի նպատակն էր «նույն թաղին մեջ վարժարանի մը հաստատումը և մատուռի կառուցումը»։ Ընկերությունը 80-ական թվականներին դեռ գոյություն ուներ։

«Հանդես ամսօրյա», 1952, № 7-9 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»)։

Սեպտեմբերի 21. «Մշակը» (№ 37) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Արի խայտառակենք» հրապարակախոսական հոդվածը։

Սեպտեմբերի 23. «Մեղու Հայաստանին» (№ 30) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Մատենագրություն» գրախոսականը։ Գրախոսված է Ֆրիդրիխ Կեռների «Գերմանական իրավունքի, բանասիրության և մանկավարժության դպրոցական դասընթաց...» աշխատությունը և դրական գնահատված։ Հրատարակված է ***-ի «Հունար հունար իչուն» (իմա. «Արվեստը արվեստի համար») պատմվածքը։

Սեպտեմբերի 28. «Մշակը» (№ 38) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Սով» պատմվածքը։ Որոշ կրճատումներով և «ոճը մերինին հարմարելով» այն արտատպել է Զմյուռնիայի «Արևելյան մամուլը», 1872 թ. նոյեմբերի (№ 11) համարում։ Հրատարակված է նաև [Գրիգոր Արծրունու] «Մեր կուսակցությունները» հրապարակախոսական հոդվածը։

Սեպտեմբերի 30. Պոլսում ծնվեց կրթական-հոգևորական գործիչ, պատմաբան-բանասեր Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյանը։ Երուսաղեմի միաբանության անդամ էր 1902 թ. մարտից։ Վախճ. 1944 թ. հուլիսի 26-ին Երուսաղեմում։

«Հանդես ամսօրյա», 1939, № 1-6 («Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան»), 1947, № 10-12 («Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան, պատրիարք Հայոց Երուսաղեմի»): **«Էջմիածին»**, 1944, № 7-9 («Մեսրոպ արքեպիսկոպոս Նշանյան»):

Սեպտեմբերի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 235) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Նախկին երևելի և աներևույթ լրագիրք» հրապարակախոսական առաջնորդողը, որն ավարտվում է նույն պարբերականի № 239-ում (հոկտեմբերի 14): Տրված են հայերեն և հայատառ թուրքերեն 73 պարբերականների երգիծական բնութագրությունները:

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևմտահայերեն սկսում է հրատարակել Սահակ Խապայանի «Բարոյական կրթություն իբրև առաջին խարիսխ ընկերական շինության» հրապարակախոսական աշխատությունը, որն ավարտվում է նույն ամսագրի № 12-ում (հոկտեմբեր): Հրատարակվում է նաև Մամբրե Մարկոսյանի «Մուկն դաշտի և մշակ» արևմտահայերեն առակը:

Հոկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 10), Արիստակես Սեդրակյանի՝ բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է «Պատմութիւն և օգուտ նորա» ուսումնասիրությունը: Ավարտը հաջորդ համարում:

Հոկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 10), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակում է մի հատված Գորտհոլդ Լեսսինգի «Նաթան Իմաստուն» թատրերգությունից (ունի «Ճշմարիտ կրոնը» խորագիրը): Հրատարակվում է նաև Մատթեոս Մամուրյանի «Այլաբուն հայեր» արևմտահայերեն հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 5. «Մշակը» (№ 39) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Օրագրության նշանակությունը» հրապարակախոսական հոդվածը և «Չաքուճի» հերթական «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, ֆելիետոնիստն անդրադարձել է ժամանակի գրական բարքերին, ապա քննադատել «Մեղու Հայաստանի» ամսագրի գործունեությունը:

Հոկտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 32) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 7-ին հոկտեմբերի» և Սեներքերիմ Արծրունու

«Եթե ինքն աստված խոսեր մարդու բարբառով...» (քննված են ժամանակի գրականության խնդիրները) հրապարակախոսական հոդվածները։

Հոկտեմբերի 12. «Մշակը» (№ 40) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մեր ամենամեծ թշնամիները» հրապարակախոսական հոդվածը և Գևորգ Չմշկյանի «Պիտի ընկնե՞ր նա թե ոչ» պատմվածքը։

Հոկտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 33) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 14-ին հոկտեմբերի» հրապարակախոսական առաջնորդողը և անստորագիր՝ «Մեր գրականական երեկո» պատմվածքը։

Հոկտեմբերի 15. Պոլսում, Խորեն քահանա Փեհլիվանյանի ատենապետությամբ և Հովհաննես Բարսեղյանի ատենադպրությամբ, իր գոյությունն է սկսում մշակութային «Տարոնյան ընկերությունը», որն իր առջև նպատակ է դնում «Սթենիայի ազգային դպրոցին նյութական և բարոյական մատակարարությանը հոգ տանիլ և անոր հարատևությանը համար փոքր եկամուտ մ'ալ ավելցնելու ջանալ»։ Ընկերությունը գոյություն ունեցավ մինչև 1880-ական թվականները։ Ծաղկուն ժամանակ ուներ 250 անդամ։

«Հանդես ամսօրյա», 1954, № 9-10 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»)։

Հոկտեմբերի 18. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 240) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Տրազի-Կոմեդի» հրապարակախոսական առաջնորդողը։

Հոկտեմբերի 19. «Մշակը» (№ 41) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Է՛ղ էր պակաս» հրապարակախոսական հոդվածը։

Հոկտեմբերի 21. «Մեղու Հայաստանին» (№ 34) արևելահայերեն սկսում է հրատարակել Մարտիրոս Սիմոնյանցի «Կոլի» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում։

Հոկտեմբերի 24. «Մասիսը» (№ 1305) արևմտահայերեն հրատարակում է «Ժողովրդական լրագիր» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղինակ՝ «Լ.Պ.») և գրաբար՝ Էմմանուել Եսայանի «Ի մահ սիրելւոյ մտերմիս Եսայի Եսայեան»

բանաստեղծությունը: Նախորդող կարճառոտ ընծայականում տրված է վերջինս գրության պատմությունը:

Հոկտեմբերի 24. Ալեքսանդրապոլում ծնվեց մատենագետ, արվեստաբան, գրականագետ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1932 թ.), պրոֆեսոր, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Գարեգին Ջիվանու Լևոնյանը: Վախճ. 1947 թ. սեպտեմբերի 28-ին Երևանում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գոշ», «Գրասեր», «Լ.», «Ճռինչ», «Մեֆիստոֆել», «Շավարշ», «Վաղինակ» կեղծանուններով:

«Գրական թերթ», 1947, № 36 («Գարեգին Ջիվանու Լևոնյան»): **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 214-215:

Հոկտեմբերի 26. «Մշակը» (№ 42) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Կուսագրություն» պատմվածքը (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 507-512):

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Տեր-Հարությունյանցի (Իսմայելցի) «Պաշտոնյա և պաշտոնավարություն» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբեր.Էջմիածնի «Արարատը» (№ 11) արևելահայերեն սկսում է հրատարակել Գալուստ Շիրմազանյանի «Թե ուր են Ավարայր և Տղմուտ» բանասիրական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Հրատարակվում է «Հայկազն ծերունու» (Գաբրիել Պատկանյան) «Յուպն Մովսիսի յերկրորդումն պատառէ եւ կարկատէ զծովն Կարմիր» գրաբար պոեմը (ավարտը՝ հաջորդ համարում) և Մկրտիչ Շահնազարյանցի «Անի» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 2. «Մշակը» (№ 43) արևելահայերեն սկսում է հրատարակել Սողոմոն Եղիազարյանի «Հարսանիք» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 49-ում (նոյեմբերի 14):

Նոյեմբերի 4. «Մեղուն» (№ 101) արևմտահայերեն հրատարակում է «Անանունի» (Հակոբ Պարոնյան) «Ապտակք» և [Հակոբ Պարոնյանի] «Ճակատամարտ օրագրո ընդդեմ Մանզումիեի», «Մասիսի ուղեղը» երգիծապատումները (տե՛ս՝ **Հակոբ**

Պարոնյան, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 12-19, հ. 8, էջ 91-95)։ Խաչիկ Օտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է տպագրվել Վիկտոր Հյուգոյի «Կլոդ Գեո» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 111-ում (դեկտեմբերի 8)։

Նոյեմբերի 4. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 245) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] «Ծախված թերթեր» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 247-ում (նոյեմբերի 11)։ Ներկայացված են Պոլսի «Օրագիր» և «Մանզումիեի էֆքյար» («Մտածումների շարք») պարբերականները, որոնց գործունեությունը բացասաբար է գնահատված։

Նոյեմբերի 5. Պոլսի հայկական ազգային գերեզմանատանը, միջոցառումն իրականացնող մասնաժողովի սատարմամբ (նախագահ Հ.Վ.Աճեմյան), տեղի է ունենում Մկրտիչ Պեշիկթաշլյանի մահվան հերթական տարելիցին նվիրված սգո հանդիսություն։ Դամբանականով հանդես է եկել Հովսեփ Շիշմանյան-Ծերենցը։

Նոյեմբերի 8. «Մեղու» (№ 102) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Մարդոց թշվառությունը և անասնոց երջանկությունը» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերականի № 105-ում (նոյեմբերի 18) և «Գործքով բարոյական» երգիծական էսսեն (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 79-82, հ. 8, էջ 96-97)։

Նոյեմբերի 9. «Մշակը» (№ 44) արևելահայերեն սկսում է հրատարակել «Մելիքզադեի» «Անբախտ Հռիփսիմեն» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (**Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 513-525)։ Հրատարակված է [Գրիգոր Արծրունու] «Կլասիկական ուսման վնասները» հրապարակախոսական հոդվածը։

Նոյեմբերի 11. «Մեղու Հայաստանին» (№ 37) արևելահայերեն հրատարակում է Սիմյոն Հուրիհերի «Կողբ» պատմա-աշխարհագրական ակնարկը։

Նոյեմբերի 11. «Մեղու» (№ 103) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Երեք օր, երեք գիշեր Սարնիճի մեջ», «Կոնդակին խորհուրդը» և «Հերիք

խնդացի» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 84-85, հ. 8, էջ 99-103):

Նոյեմբերի 14. «Մասիսը» (№ 1314) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Տեր-Կարապետյան Տերոյենցի «... Խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» հոդվածը: Վերլուծված է ժամանակի գրական-մանկավարժական կյանքը:

Նոյեմբերի 15. «Մասիսը» (№ 104) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Սխալ ըմբռնում մը» և «Օրագրո ուրախությունը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 104-106):

Նոյեմբերի 18. «Մեղու Հայաստանին» (№ 38) արևելահայերեն սկսում է հրատարակել Ալեքսանդր Քալանթարի «Քաջերի այր (հին անցք)» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 44-ում (դեկտեմբերի 30):

Նոյեմբերի 18. «Մեղուն» (№ 105) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խորեն եպիսկոպոսի հարցմունքը», «Կոնդակին խնդիրը», «Օրագրո չորեքշաբթի ավուր մեկ հոդվածը», «Շնորհակալություն մը առ օրագիր» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 25-26, հ. 8, էջ 107-111):

Նոյեմբերի 21. Վենետիկում վախճանվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Արիստակես Ճիզմեճյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1809 թ.: Ծնվ. 1787 թ. մարտին, Պոլսում:

Մխիթարյան հոբելյան, Վենետիկ, 1901, էջ 221-222:

Նոյեմբերի 22. «Մեղուն» (№ 106) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Երկուշաբթիեն մինչև հինգշաբթի օրվան հարսը» երգիծական վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 114-ում (դեկտեմբերի 20) և «Առակ Եզովպոսի» երգիծական էսսեն (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 88-101, հ. 8, էջ 112-113):

Նոյեմբերի 23. «Մշակը» (№ 46) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Հայոց լեզու (նվեր Անդրեաս Արծրունուն)» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 23. «Մասիսը» (№ 1317) արևմտահայերեն հրատարակում է Տ.Սեթյանի «Առ վաղամեռիկն Մելիք Իգիթբաշյան» եղերերգական պոեմը։

Նոյեմբերի 25. «Մեղուն» (№ 107) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] երգիծական մանրապատումները «Մանր լուրեր» ընդհանուր խորագրի ներքո։ Հրատարակությունները որոշ ընդհատումներով և հաճախ նոր վերնագրով շարունակվում է մինչև 1873 թ. հունվարի 17-ը (№ 121)։ (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 28-37)։

Դեկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Բ տարի, № 12) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Սյունիի» «Լեզվի վրա» ուսումնասիրությունը։ Ավարտը՝ նույն պարբերականի № 10-ում (հոկտեմբեր)։

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Եղիա Ջալալյանցի «Կազմվիլ կամ բաղկանալ» հոդվածը։ Հոդվածագիրը բանավիճում է «Արարատում» 1872 թ. մայիսից (№ 5) տպագրվող Վահան Բաստամյանցի «Թե ինչպես կազմվեցավ հայոց ազգը» հոդվածի մի քանի դրույթների դեմ (տե՛ս ներկա հատորը, այդ թվականը), այդ առթիվ զարգացնում է իր տեսակետները։

Դեկտեմբերի 2. «Մեղուն» (№ 109) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թաղականի մը հաշիվը...», «Ջուրս մի՛ պղտորեր», «Էքշյանն ի թատեբաբեմ» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 124-129)։

Դեկտեմբերի 7. «Մշակը» (№ 48) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» «Ֆելիետոնը»։ Ի թիվս այլևայլ հարցերի, երգիծական պիտակավորումներով ներկայացված է Սենեքերիմ Արծրունու գրական-հասարակական գործունեությունը։

Դեկտեմբերի 8. Պոլսում ծնվեց կենսագիր, հոդվածագիր, խմբագիր Վահան Գևորգի Զարդարյանը։ Վախճ. 1945 թ. նոյեմբերին, Կահիրեում։

1893-1894 թթ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է «Տեսական» գրական հանդեսը, իսկ 1897-ին (Ղուկաս Բոլատի հետ) հրատարակել է «Հանրագիտակ» շաբաթաթերթը։ Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Դիտող» կեղծանունով։

Թեոդիկ, Տառ ու տիպ, Պոլիս, 1912, էջ 32-33: **Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի**, Պոլիս, 1946, էջ 373:

Դեկտեմբերի 8. «Մեղուն» (№ 111) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Սամաթիո կռիվը», «Բողոք մեռելոց», «Այվազին գրասենյակին մեջ» և «Փունջին անգթությունը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 131-138):

Դեկտեմբերի 9. «Մեղու Հայաստանին» (№ 41) արևելահայերեն սկսում է հրատարակել «Մատենագիտությունք» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Գրախոսված է Միքայել Միանսարյանցի «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1872 թ.): Արված մասնագիտական բնույթի դիտողություններից հետո, այն դրական է գնահատված:

Դիտողությունների վերաբերյալ տրվող համապատասխան պարզաբանումներով (օգտագործելով նաև Ստ. Նազարյանցի տեսակետները), «Մեղու Հայաստանին» (1873 թ. № 2, հունվարի 20) հանդես եկավ անստորագիր պատասխան հոդվածով, «Մեղուի» № 41 և 42-ի Մատենագրության առիթով» վերնագրով:

Դեկտեմբերի 13. «Մեղուն» (№ 112) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ատենաբանություն մեղուի առ սամաթիացիս», «Գում Գաբույի թաղականը» և «Լրագրական դիցաբանության ապիսը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 139-145):

Դեկտեմբերի 14. «Մշակը» (№ 49) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ է պահանջում մեր դարը» հրապարակախոսական հոդվածը: Տպագրված է նաև «Միրզա Մելքում խան» անստորագիր դիմանկարը, որտեղ տրված է «Պարսկաստանի երևելի այս հայկազն պաշտոնակալի» կյանքի և հասարակական-մշակութային-գրական գործունեության բնութագիրը:

Դեկտեմբերի 16. «Մեղուն» (№ 113) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խմբագիրն Մեղուի առ տերն Մեղուի», «Խնդրոց մեռյալն ի տեսյանն Մեղվի» և «Ժամանակագրությունք երևելի անցից» երգիծապատում-

ները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 146-151): Անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն արձակ թարգմանությամբ, տպագրվում է Ջորջ Բայրոնի «Լարա» պոեմի առաջին երգը: Ստեղծագործությունը մնում է անավարտ:

Դեկտեմբերի 16. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 16-ին հոկտեմբերի» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 20. «Մեղուն» (№ 114) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Հելվածիին լապտերը» և «Գերեզմանատան խնդրույն վրա հայ էֆենտիի մը կարծիքը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 105-109): Հրատարակված է Եղիազար Տնլեթյանի «Ողբերգ ի տարաժամ մահ Վարդան էֆ. Համամճյանի» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 23. «Մեղուն» (№ 115) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Բառերու նոր սահմաններ» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերական հաջորդ համարում (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 38-39), «Հարություն մեռելոց», «1872-ի հիվանդությունը», «Պատրիարքարանի մեկ անիրավությունը», «Հակոբ պեյ Պալյան», «Այվազին վերջին վայրկյանները», «Կրկնամուսնություն» ստեղծագործությունները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 155-163):

Դեկտեմբերի 26. «Մասիսը» (№ 1330), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Էոժեն Բելտանի «Առտնին օրենք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի 1873 թ. № 1334-ում (հունվարի 5):

Դեկտեմբերի 27. «Մեղուն» (№ 116) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Մեղուի բարկությունը», «Օրացույց Մեղուի 1873 թվականին» և «Դարձյալ այն խնդիրը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 110-111, հ. 8, էջ 164-168):

Դեկտեմբերի 28. «Մշակը» (№ 51) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «1871 և 1872» հրապարակախոսական հոդվածը և «Մ.Բ.»-ի (Մուշեղ Բագրատունի?) թատերախոսականը, որտեղ գրախոսված է «Երեսուն տարի կամ թուղթ խաղացողի կյանքը» պիեսը:

Դեկտեմբերի 30. «Մեղուն» (№ 117) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խաղամոլություն», «Արյան բիծը», «Փունջ և դիվանապետը» երգիծապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 112-113, հ. 8, էջ 173-176): Հրատարակված է նաև Եղիազար Տնլեթյանի «Հեքն ի միայնության» բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 30. «Մասիսը» (№ 1332) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Գրասերյանի «Պ[արոն] Ե[ղիազար] Մուրադյանի շինած գաղղիերեն քերականության մեջ երևցած թարգմանական և կանոնական սխալները» հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Գրախոսված է Ե. Մուրադյանի «Քերականություն գաղղիերեն լեզվի, հայերեն բացատրությամբ» (Երուսաղեմ, 1869 թ., տե՛ս ներկա հատորը, այդ թվականը) աշխատությունը, որտեղ մատնանշված են բազմաթիվ սխալներ ու անճշտություններ:

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12) արևմտահայերեն հրատարակում է «Առեղծված» բանաստեղծությունը:

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր (մասնագիտությամբ՝ ղեղագործ) Հերակլիտես Դովլաթյանը: Վախճ. 1920 թ. նոյեմբերի 15-ին:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1922, էջ 413:

–––Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր Լևոն Թաշճյանը: Վախճ. 1943 թ. հունիսի 11-ին Կահիրեում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 387: **«Հայաստանի կոչնակ»**, 1943, № 24 («Մահ Լևոն Թաշճյանի»):

–––Պոլսում ծնվեց թուրքագետ, թուրքերեն դասագրքերի հեղինակ, բառարանագիր Պետրոս Կարապետյանը (Ջեքի): Վախճ. 1937 թ. դեկտեմբերի 23-ին:

«Ընդարձակ տարեգիրք ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1938, էջ 315: **Մխիթարյան Մ.**, Ժողովրդական տարեգիրք, Պոլիս, 1938, էջ 48-49: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 100:

–––Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) (Պողոս Մարտիրոսի Քոլոզյանը):

«Հայաստանի կոչնակ», 1948, № 2 («Ժամանակակից ֆրանսահայ դեմքեր»):

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, հուշագրող Վահան Գրիգորի Մոզյանը: Վախճ. 1945 թ. հուլիսի 15-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1945, № 30 («Վահան Մոզյան»):

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Թաթուլ Դուրյանը: Վախճ. 1914 թ. Պանտրմայում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 633:

–––Ռոդոստոյում ծնվեց գրական-մշակութային գործիչ, աստվածաբան, հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով) Գնորգ Թուրյանը: Արմաշի միաբանության անդամ՝ 1911 թ.: Եղեռնամահ՝ 1915 թ. Կարինի շրջանում:

Մկրտիչ Աղավնունի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 67:

–––Տիգրանակերտում (Դիարբեքիր, Արևելյան Թուրքիա) ծնվեց գեղանկարչուհի, թարգմանչուհի (հայերենից՝ անգլերեն), արձակագիր (անգլերեն լեզվով) Զապել Թովմասի Պոյաճյանը: Վախճ. 1957 թ. հունվարի 26-ին Լոնդոնում:

Անգլերեն թարգմանություններն ու հոդվածները հաճախ ստորագրում էր «Varteni» ձևով:

«Բազմավեպ», 1911, № 6 («Հայ արվեստագիտուհի մը»), 1957, № 5-6 («Օր. Զապել Պոյաճյանի մահը»): **Գնորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1958, էջ 678: **Хуршудян Г.Г.**, Забел Бояджян (Жизнь и творчество), Ереван, 1978, 25 стр.

–––Թավրիզում (Իրան) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, հուշագրող Իսկուհի Սիմոնի Հակոբյանը:

Մահվան վերաբերյալ տեղեկություններ գտնել չենք կարողացել: Հայտնի է, որ 1966 թ. ապրում էր Համբուրգում (ԳՖՀ) և «բավականին քաջառողջ էր»:

Վարդեն Ծ.Վ. Դեմիրճյան, Դիվան Ատրպատականի հայոց պատմության (հ. Ա), Թավրիզ, 1966, էջ 162:

–––Ստավրոպոլում ծնվեց արձակագիր, բանաստեղծ, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով), թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Կարա-Դարվիշը (Հակոբ Միսակի Գենջյան): Վախճ. 1930 թ. դեկտեմբերի 16-ին Թիֆլիսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Altalena», «Միկանդաժ», «Վ. Նուրյան», «Հ.Գ.» կեղծանուններով:

«Հանդես ամսօրյա», 1937, № 6-8 («Թիֆլիսի հայկական պանթեոններում»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 89:

–––Տիգրանակերտում ծնվեց հոդվածագիր, խմբագիր Թովմաս Չարշաֆճյանը: Վախճ. 1953 թ. հունվարի 1-ին Ֆրեզնոյում:

1899 թ. Նյու Յորքում հիմնադրել և մինչև 1900թ. խմբագրել է «Հայրենիք» շաբաթաթերթը:

Գնորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, Բեյրութ, 1955, էջ 521:

–––Արաբկիրում ծնվեց պատմաբան-բանասեր, հոդվածագիր Մարտիրոս Տերպետերյանը: Վախճ. 1931 թ. հունիսին Փարիզում:

«Կյանք և արվեստ» (Տարեգիրք), Փարիզ, 1932, էջ 188:

–––Քյոթուկ գյուղում (Լեռնային Ղարաբաղ) ծնվեց պատմաբան-բանասեր, հոդվածագիր (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն լեզուներով), խմբագիր Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան): Վախճ. 1934 թ. ապրիլի 24-ին Մարսելում:

1905-1907 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Հառաջ» օրաթերթը, 1913-1916 թթ.՝ «Հորիզոն» օրաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Էկո» կեղծանունով:

«Կյանք և արվեստ» (Տարեգիրք), Փարիզ, 1935, էջ 121-122:

–––Մոսկվայում վախճանվեց պատմաբան-բանասեր, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով), բառարանագիր, դասագրքերի հեղինակ Մկրտիչ Ղազարի Բերոյանը (Никита Лазаревич Бероев): Ծնվ. 1795 թ. Աստրախանում:

Այվազյան Ա., Շար հայ կենսագրությանց, հ. Գ, Պոլիս, 1893, էջ 33-47: Арешян С., Армянская печать и царская цензура, Ереван, 1957, 514 стр.

–––Թալասում (Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց հոդվածագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Սարգիս Արզըյանը (նաև՝ Արզույան): Վախճ. 1953 թ. դեկտեմբերին Երևանում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 269-270:

–––Ակնում ծնվեց դրամատուրգ, երգիծաբան, հոդվածագիր Հովհաննես Ամիրյանը:

1911 թ. Գրիգոր Թորոսյանի հետ Պոլսում խմբագրել է «Կուկուկ» երգիծական շաբաթաթերթը, իսկ 1911-1914 թթ.՝ «Ջուռնա» երգիծաթերթը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 130-131: **Ազատյան Թ.**, Ակն և ակնցիք, էջ 61:

–––Ալեքսանդրապոլում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Արամ Իսահակյանը (Ավետիք Իսահակյանի պապի (Սիմոն) եղբոր որդին): Վախճ. 1940 թ. Երևանում:

Ավ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1979, էջ 390:

* * *

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Հովսեփ Գեղեցիկ» պատմական ողբերգությունը: 35 էջ:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Լյուդովիկոս Ռասինի «Երգք ի կրօնս» ստեղծագործությունը: 156 էջ:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Կոռնելիոս Տակիտոսի «Տարեգիրք (սկսեալ ի մահուանէ Մեծին Աւգուստեայ)» աշխատությունը: 501 էջ:

Տրված է Գայոս Օկտավիոս Օգոստոսի մահվանից (մ.թ.ա. 14 թ.) մինչև Կլավդիոս Ներոնը (մ.թ. 37 թ.) ընկած ժամանակաշրջանի հռոմեական կայսրերի պատմությունը:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Վարդան Ըստկարյանի «Եկեղեցական պատմություն, հանդերձ ազգային եկեղեցական պատմությամբ» աշխատությունը: 483 էջ:

–––Վիեննայում, Սերովբե Տերվիշյանի՝ բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Սրբոյ Յուստինիանոսի պատասխանատուութիւնք առաջին և երկրորդ և պատմութիւն Նորին վկայութեան» աշխատությունը: 97 էջ:

–––Վիեննայում գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Կոնրադ Պոլանտի «Հինն Աստված» պատմական վեպը: 121 էջ:

–––Վիեննայում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիշե Գավթանյանի «Սկզբնական ընթերցվածք գաղղիերեն և հայերեն, բառական մեկնությամբ» աշխատությունը: 175 էջ:

–––Զմյուռնիայում, Ս.Կ. Էքիզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆոնս Լամարթինի «Կրացիելլա» վիպակը: 128 էջ: Նույնը՝ 1873 թ., 126 էջ, 1874 թ., 128 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Աբբա Պրևոյի «Մանոն Լեսկո» վիպակը: 192 էջ:

–––Զմյուռնիայում, Կարապետ Շերիտճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Աիդա» ողբերգությունը: 48 էջ:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է «Վրույրի» (Մատթեոս Մամուրյան) հրապարակախոսական հոդվածների ժողովածուն, «Հայկական նամականի» խորագրով: 275 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Վալտեր Սկոտի «Իվանոե» վեպի առաջին հատորը: 176 էջ:

Երկրորդ (146 էջ) և երրորդ (154) հատորներ՝ անդ, նույն թվականին: Հատվածաբար հրատարակվում էր «Արևելյան մամուլում», 1871 թ. հունվարից (տե՛ս ներկա հատորը, նույն թվականը): Այդ պատճառով սույն հրատարակությունն ունի «Երկրորդ տիպ» նշումը:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Եսայի վարդապետ Ղևոնդյանցի «Արկածք Սրսրա հայուհվույն» պատմվածքը: 16 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Քսան տարի ետք» վեպի Ա հատորը: 254 էջ:

Բ (263 էջ) և Գ (260 էջ) հատորներ՝ անդ, նույն թվականին: Դ հատոր՝ անդ, 1874 թ., 251 էջ:

–––Զմյուռնիայում, Արմենակ-Սարգիս Հովհաննեսի Պալապանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Աստուծո շնորհիքը» պատմվածքը: 23 էջ:

–––Զմյուռնիայում, Կ. Ցազմաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Ժոզեֆ Պալսամո (բժշկի մը հիշատակները)» վեպի առաջին հատորը: 223 էջ:

Երկրորդ (197 էջ), երրորդ (212) հատորներ՝ նույն թվականին:

Չորրորդ (206 էջ), հինգերորդ (210 էջ) հատորներ՝ 1873 թ.:

Վեցերորդ հատոր՝ 1875 թ., 208 էջ:

Յոթերորդ հատոր՝ 1877, 203 էջ:

ՈՒթերորդ հատոր՝ 1878 թ., 215 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Մսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, հրատարակվում է Ալեքսանդր Դյումայի «Բոլին» վիպակը: 160 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ղազարոս Աղայանի «Երկու քույր. եղերական վեպ գյուղական կյանքից» վիպակը: 108 էջ:

Նույնը՝ 1892 թ., 141 էջ, 1916 թ. 98 էջ, ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Երեմիա Արծրունու (Գրիգոր Արծրունու հայրը) «Խնդիր երկաթե ճանապարհի վերա դեպի Հնդկաստան» գրքույկը: 52 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Վասիլի Խոչայանցի «Ճանապարհորդություն Վեզուվյան հրաբուխ սարի վրա, այլև ի Պոմպեյի, Հերքուլանում, Հռոմ, Վենետիկ և այն քաղաքներ Իտալիայի, ի 1865 և 1866 ամի» գիրքը: 125 էջ:

–––Պոլսում, Հովհաննես Աճեմյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումա-որդու «Կամելիազարդ տիկինն» վիպակը: 287 էջ:

–––Պոլսում, իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Սուքիաս Գազանճյանի «Վերջնական պատասխան Արևելյայց առ Արևմտյայս» գրքույկը: 20 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ.Յ.Խ.-ի (իմա՛.Մկրտիչ Խրիմյան ?) «Ի՞նչ է մեր թշվառության պատճառը, և ի՞նչ է անոր դարմանը» գրքույկը: 11 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Երեմիա Տեր-Սարգսյանց Վանեցու «Հայրենասիրություն հայոց» աշխատությունը: 552 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Բագրատ Արթինոֆի «Դյուրուսույց այբբենարան, հեգարան և ընթերցարան հայկազն մանկանց» դասագիրքը: 36 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Պողոս Էմանուելյանի «Տարերք բանական փիլիսոփայության» աշխատության առաջին հատորը («Տրամաբանութիւն և համաբնաբանութիւն»): 414 էջ:

Երկրորդ հատորը («Բարոյական փիլիսոփայութիւն»)՝ նույն թվականին, 240 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Հազար ութը հարյուր յոթանասուներկու» աշխատությունը: 29 էջ:

––– Պոլսում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով հրատարակվում է Եղիազար Մուրադյանի «Առձեռն գրագիտություն կամ համառոտ ընթացք տրամաբանության, ճարտասանության և բանաստեղծության» աշխատությունը: 375 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Աճեմյանի «Ներշնչությունք արդյան ժամանակի (հայկական նամականի)» աշխատությունը: 96 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Խրատտուի» (իմա՛. Ավետիս Կյոզուրյան) «Նամակներ առ ընտանիս» մանկավարժական ուսումնասիրությունը: 248 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Վարքագրություն Հարություն ամիրայի Պեզճյան Խազեզ անվանելո ազգային անզուգական բարերարի» աշխատությունը: 167 էջ:

Հեղինակն իրեն կոչում է «Մ.Պ. հանգուցյալ բարերարի քվեր թոռն»: Մեզ չհաջողվեց պարզել նրա ով լինելը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ս. Թերզյանի «Ամոլք սիրայինք» վիպակը: 143 էջ:

–––Պոլսում, Գևորգ Ապտուլլահյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մորթմանի «Հայ բևեռաձև արձանագրությունք» աշխատությունը: 57 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գևորգ Շիրինյանի «Երկու աշակերտք» պատմվածքը: 39 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գևորգ Շիրինյանի «Աղքատություն և իր դարմանները ի գյուղորես» աշխատությունը: 168 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Օհան Պաղտատլյանի «Ես իմ որդիս եմ» կատակերգությունը: 59 էջ:

ՌԻնի «Նմանությամբ գրեց» նշումը: Այլ մանրամասներ չենք գտել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գերասիմ Պաղտասարյանի «Պատեբազմ ընդդեմ թշնամյաց մարդկային կենաց կամ առողջ, երջանիկ և երկար կյանք անցնելու միջոցները» աշխատությունը: 50 էջ:

Աշխատությունն ունի «Առաջնորդ ընտանեկան, թիվ Ա» ընդհանուր խորագիրը: ՌԻրիշ հատորներ, սակայն, չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Նաթանյանի «Տեղեկագրություն Սիվրիհիսարում» աշխատությունը: 22 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Բառնաբաս վարդապետ Գանձակեցու (Հովսեփյան) «Յաջորդութիւն պատրիարքացն Երուսաղեմի ի Յակովբայ առաքելո տեառնեղբօրէ մինչև ցմեր ժամանակս» աշխատությունը: 106 էջ

––– Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Քնար Ազատյան և Փանոսյան սանուց» խորագրը կրող չափածո ստեղծագործությունների ժողովածուն: 32 էջ:

––– Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Էմանուել Եսայանի «Հռիփսիմե» ողբերգությունը: 72 էջ:

––– Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի «Տիեզերագրություն կամ ուսումնական աշխարհագրություն ի պետս ազգային դպրոցաց» դասագիրքը: 120 էջ:

Նույնը՝ 1880 թ. (128 էջ), 1892 թ. (189 էջ)՝ ամեն անգամ որոշ փոփոխումներով և լրացումներով:

––– Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ղազարոս Հովակիմյանի «Կավուր» ուսումնասիրությունը: 94 էջ:

––– Պոլսում հրատարակվում է Մինաս Չերազի չափածո և արձակ ստեղծագործությունների ժողովածուն «Գրական փորձեր» խորագրով:

Նույնն անփոփոխ՝ 1874 թ., 238 էջ:

––– Պոլսում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Փիրղալեմյանի (Տոսպեցի) բանաստեղծությունների ժողովածուն «Տաղերգութիւն բարոյական եւ ազգային» խորագրով: 32 էջ:

––– Պոլսում, Խաչիկ Օտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Գլոտ-Կեո» վիպակը: 24 էջ:

––– Պոլսում, Տ.Գ.Փափազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Շատախոս սափրիչը» կատակերգությունը: 24 էջ:

––– Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Դժոխքեն փախած մարդ մը, կամ դժոխոց սուրհանդակը» ստեղծագործության Ա տետրը: 24 էջ: Բ (25-40 էջ) և Գ (41-56 էջ) տետրեր՝ նույն թվականին:

––– Պոլսում, Իսկյուտարի ընթերցասիրաց ընկերության ջանքերով, հրատարակվում է Պետրոս Դուրյանի ստեղծագործությունների ժողովածուն՝ «Տաղք և թատրերգությունք» խորագրով: Ժողովածուն հրատարակության են պատրաստել Սիմոն Ֆելեկյանն ու Հակոբ Պարոնյանը: 493 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եղիազար Ն. Տեովլեթյանի «Եղերերգ ի սգալի մահ Պ[ետրոս] Դուրյան երիտասարդ քերթողին» գրքույկը:

–––Պոլսում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Հակոբ Թագվորյանի «Դասագիրք տաճկերեն քերականության» աշխատությունը: 24 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տ.Լ.-ի կազմած ժողովածուն «Զվարճալի մանրավեպեր «ժողովրդական» » խորագրով: 78 էջ:

Ժողովածուի մեջ զետեղված են ինչպես ինքնուրույն արձակ մանրապատումներ, այնպես էլ այդ բնույթի ժողովրդական ստեղծագործություններ, որոնք հավաքել է կազմողը:

–––Երուսաղեմում, Ժառանգավորաց վարժարանի տասնյոթ աշակերտների՝ իտալերեն բնագրից կատարած արևմտահայերեն համատեղ թարգմանությամբ, հրատարակվում է «Բարոյական պատմություններ» մանրապատումների ժողովածուն: 399 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է Մամբրե վարդապետ Մարկոսյանի «Երկու խօսք եկեղեցւոյ պաշտօնէից» աշխատությունը: 179 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Սավալանյանի «Պատմություն կամ ուղեցույց սրբազան տեղյաց, որ ուխտավորաց սուրբ տեղիքն շրջելու համար մեծ դյուրություն և առաջնորդություն կընձեռե» աշխատությունը: 296 էջ:

Նույնը՝ 1884 թ. (298 էջ), 1888 թ. (432 էջ), 1902 թ. (415 էջ) և 1910 թ. (415 էջ), ամեն անգամ որոշ փոփոխություններով ու լրացումներով:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Ս[արկավագ] Կ[արապետ] Տեր-Մինասյանի (հետագայում՝ Վահան վարդապետ Պարտիզակցի) «Գագիկ վերջին, արքա Հայոց Բագրատունի» պատմական ողբերգությունը: 192 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Մելքիսեդեկ Մուրադյանի «Պատմություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո» աշխատությունը: 640 էջ:

Ընդգրկում է Հայոց եկեղեցու պատմությունը սկսած Քրիստոսի ծնունդից մինչև Գևորգ Դ կաթողիկոսի ընտրվելն ու Էջմիածին մեկնելը (1867 թ.):

–––Վաղարշապատում, Արիստակես Սեղրակյանի՝ ռուսերենից կատարած գրաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Օգոստոս (Օգյուստ) ֆոն Հակստհաուզենի «Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս եւ ի Վիրս» աշխատությունը: 410 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր Էջմիածնի «Արարատում» 1872 թ. հոկտեմբերից (№ 10) մինչև 1873 թ. սեպտեմբեր (№ 9):

–––Բաքվում, Ավազ Գրիգորյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Լ. Բեյյանկինի «Հնդկացվո անցքը անմարդաբնակ կղզիներում» վիպակը: 173 էջ:

–––Պետերբուրգում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Միանսարյանի «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» աշխատությունը: 259 էջ:

1 8 7 3

Հունվար. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 1) արևելահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Նոր տարի» առաջնորդողը:

Հունվարի 1. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 261) արևմտահայերեն հրատարակում է «Օրվան դեպքեր» երգիծական պատմվածքը:

Շարունակելով նախորդ տարիների ավանդույթը (տե՛ս 1872 թ. հունվարի 12), «Մամուլը», անկանոն պարբերականությամբ, սկսում է հրատարակել այլևայլ բնույթի երգիծական մանրապատումներ, մեծ մասամբ անստորագիր, որոնց հիմնական հերոսը Մեֆիստոֆելն է, և որոնց հեղինակը, դատելով լեզվի և ոճի ընդհանրություններից, նույն անձնավորությունն է, ամենայն հավանականությամբ խմբագիր Գեորգ Այվազյանը: Հրատարակությունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Պողոս աղբորը փորձանքը»** (№ 262, հունվարի 3), **«Իքիլի խոզին փորձանքը»** (№ 264, մարտի 7), **«Չամաշըրին թերնեն»** (№ 267, մարտի 17), **«Հանդարտ շաբաթ մը»** (№ 273, ապրիլի 6), **«Քսան ուկիով ճառախոսություն»** (№ 278, ապրիլի 28), **«Թրֆանտա խաթունին երազը»** (№ 281, մայիսի 9), **«Խոսակցություն մը»** (№ 294, հունիսի 22), **«Հեքիմը քիչ է, բախլաճին կանչենք»** (№ 296, հունիսի 30), **«Օդափոխություն»** (№ 297, հուլիսի 4), **«Խըլավուզ Մարիամ»** (№ 298, հուլիսի 7), **«Դոն Մանավ ասպետ»** (№ 300,

հուլիսի 14), **«Մեֆիստոֆելական»** (№ 308, օգոստոսի 11), **«Աներես սիրահարին փորձանքը»** (№ 312, օգոստոսի 25), **«Երեսփոխանաց ոըսորդները»** (№ 320, սեպտեմբերի 2), **«Խայմախը պակաս չառնելուն ճարը»** (№ 341, դեկտեմբերի 5), **«Գինետան մը մեջ»** (№ 343, դեկտեմբերի 12, հեղ.՝ «Հ»), **«Ընտանեկան»** (№ 347, դեկտեմբերի 26)։

Հունվարի 3. «Մեղուն» (№ 118) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Երկու ամսվան հարսը» և «Քաղաքավարություն» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 114-116)։ Սկսում է հրատարակվել Հուլիոս Բազկենցի «Թատերական տեսություն» գրախոսականը, որն ավարտվում է հաջորդ համարում։

Հունվարի 4. «Մշակը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ ենք արել և ինչ պետք է անենք» հրապարակախոսական առաջնորդողը (խոսելով առաջիկա տարում շաբաթաթերթի խնդիրների և նպատակների մասին, բարձրացվում են գրական-հասարակական բնույթի հարցեր), Ստեփաննոս Պալասանյանցի «Մատենագիտություն» խորագիրը կրող գրախոսականը (գրախոսված են Մ. Միանսարյանի «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» և Կ. Տեր-Դավթյանցի թարգմանած «Մանկական աշխարհ» Ա և Բ աշխատությունները) և Նիկողայոս Լալայանի «Թարգմանական գրվածքները բեմի վրա» հոդվածը։ Դրվատանքով արտահայտվելով Սունդուկյանի «Պեպոյի» ու «Խաթաբալայի» մասին, Լալայանը գտնում է, որ թարգմանաբար պետք է ներկայացնել նաև Շեքսպիր, Շիլլեր և օտարազգի այլ դրամատուրգներ։

Հունվարի 10. «Մեղուն» (№ 119) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Նոր տարի նոր խնդիր», «Հետս կոչում», «Փունջին անկողինը» և «Նոր խնդիր» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, Երևան, հ. 8, 1972, էջ 181-187)։

Հունվար-մարտ. «Բազմավեպը», ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Գաղղիո ներկա ժամանակիս առաջին բեմասաց» Հ. Փելիքսի «Խոսք և գիրք» տեսական-գրականագիտական հոդվածը, բնագրից կատարված արևմտահայերեն արձակ թարգմանությամբ՝ Թերեզիայի

«Երգ մեծ սիրո» ստեղծագործությունը, Թովմաս Թերզյանի «Տիրամայրն առ խաչին» արևմտահայերեն բանաստեղծությունը, Էդուարդ Հյուրմյուզյանի «Տիրացու Համբարձում» դիմանկար-կենսագրականը, Ղևոնդ Ալիշանի «Թորոս Բ» հոդվածը և միջին հայերենով՝ «Տաղ ի ծաղկազարդն» ժողովրդական բանաստեղծությունը:

Ծանոթություն. հիշյալ ժամանակվանից սկսած, «Բազմավեպը» դառնում է եռամսյա հանդես և սկսում է հրատարակվել մարտ, հունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Խմբագրությունն այս «ընթացքը» դիտում է որպես նոր սկիզբ, որի հետևանքով 1873 թ. առաջին եռամսյա պրակն ունի «առաջին տարի» նշումը:

Հունվարի 12. «Մեղուն» (№ 120) արևմտահայերեն հրատարակում է Եղիազար Տնլեթյանի «Հիշեմ զքեզ» բանաստեղծությունը, [Հակոբ Պարոնյանի] «Խոսակցություն մեռելոց», և «Բարի սովորություն մը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1972, էջ 188-189) և Եղիազար Մուրադյանի «Գրասերյանի խծբծանքը» գրախոսությունը: Այն ավարտվում է հաջորդ համարում:

Ե. Մուրադյանը պատշպանում է 1869 թ. Երուսաղեմում հրատարակված իր «Քերականություն գաղղիերեն լեզվի հայերեն բացատրությամբ» դասագիրքը (տե՛ս ներկա հատորը, այդ թվականը) «Մասիսի» գրախոս «Գրասերյանի» հարձակումներից:

Հունվարի 12. «Մասիսը» (№ 1336) արևմտահայերեն հրատարակում է Ա. Լուսինյանի (Ամբրոսիոս Գալֆայան) «Կրոնական ողջախոհություն» հոդվածը, որը շարունակվում է մինչև № 1348-ը (փետրվարի 10) և մնում է անավարտ:

Հունվարի 16. Պոլսում ծնվեց արվեստի տեսաբան, հոդվածագիր (հայերեն, ֆրանսերեն և թուրքերեն լեզուներով) Տիգրան Եսայանը: Վախճ. 1920 թ. Փարիզում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Միհրան» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 256-257, 1922, էջ 200-203:

Հունվարի 17. «Մեղուն» (№ 121) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թաղի մը քեհյան», «Մեղու առ պ. Եսայան Էմմանուել» և «Հավելված

«Մեղուի»» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 118-120, հ. 8, էջ 190-191, 193-195):

Հունվարի 18. «Մշակը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Հայոց օրագրության գործը» հրապարակախոսական հոդվածը: Սկսում է հրատարակվել Անդեաս Արծրունու «Մի ճանապարհորդության տպավորությունները» հուշագրության Ա մասը: Բ և վերջին մասը՝ 1873 թ. № 5-ում (փետրվարի 8):

Հունվարի 25. «Մշակը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ ենք պահանջում թատրոնից» հրապարակախոսական հոդվածը և «Չաքուճի» (Միհրդատ Ամրիկյան) «Ֆելիետոնը», որտեղ, ի թիվս այլ հարցերի, քննադատված է թիֆլիսահայոց անտարբեր վերաբերմունքը մայրենի գրականության հանդեպ:

Հունվարի 27. «Արշալույս արարատյանը» (№ 954) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Հովվուհի» և «Առ պահապան հրեշտակն ի գիշերի մանկանց մաղթանք» բանաստեղծությունները: Հրատարակված են նաև Հովհաննես Խաչկյանի «Յարացոյց» և «Հատուած ինչ Բ» գրաբար չափածո ստեղծագործությունները, որոնք «խմբագրությունն ստացել է ի Կալկաթայե»:

Հունվարի 27. «Մեղու Հայաստանին» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Մարտիրոս Սիմոնյանցի «Գյուղական կյանքից. աստոծ որ տալիս չի, զոռի խո չի» պատմվածքը:

Հունվարի 29. Ռոդոստոյում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող Գևորգ-Սարգիս Գևորգ-Գուզուլի Քեպապյանը:

Մուշեղ եպիսկոպոս, Ամերիկահայ տարեցույցը, Բոստոն, 1912, էջ 270:

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Ռընե Շատոբրիանի «Բոյնք թռչնոց» ակնարկը:

Հունվար-փետրվար. Պոլսում Հակոբ Պալյանի, Տիգրան Յուսուֆյանի, Հովսեփ Շիշմանյան-Ծերենցի, Նշան Օտյանի, Միքայել Թոփհանեյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթամշակութային «Լսարանի ընկերությունը», որը դադարում է 1880 թ.:

«Լսարանի ընկերության» նիստերում դասախոսություններով հանդես են եկել Մկրտիչ Խրիմյանը, Խորեն Նար-Պեյը, Մաղաքիա Օրմանյանը, Կղեմես Սիպիլյանը, Եղիշե Դուրյանը, Հակոբոս Ճեճիզյանը, Սրապիոն Հեքիմյանը, Ռեթեոս Պերպերյանը, Մարկոս Աղաբեկյանը, Ա.Դ. Մորթմանը և ՌԽոշբրոնը:

«Հանդես ամսօրյա», 1953, № 1-3 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 2) գրաբար հրատարակում է Մելիքշահ Բագ-րատունու «Վարդանն ի բանտի» պոեմը:

Փետրվարի 1. «Մշակը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Սողոմոն Եղիազար-յանի «Գառնի բասրա զավառումը» պատմվածքը:

Փետրվարի 3. «Մասիսը» (№ 1345) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ա. Լու-սինյանի» «Քաղաքակրթություն» տեսական-հրապարակախոսական հոդվածը: Շարունակվում է մինչև փետրվարի 27-ը (№ 1354) և մնում է անավարտ:

Վերլուծված է Ֆրանսուա-Պիեր Գիզոյի «Եվրոպական քաղաքակրթության ընդհանուր պատմություն» աշխատությունը: Այդ առթիվ արված են հայկա-կան հասարակական կյանքի բարելավման համար անհրաժեշտ համարվող մի քանի առաջարկություններ:

Փետրվարի 3. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է [Պետ-րոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 3-ին փետրվարի» հրապարակախոսական հոդվածը (բարձրացված է կանանց դաստիարակության և նրանց գրական-հասարակա-կան կյանքին հաղորդակից անելու խնդիրը) և Համբարձում Առաքելյանցի՝ «Մու-հարրեմի տասներորդ օրը» պատմվածքը:

Փետրվարի 9. Կարինում (Արևելյան Թուրքիա) ծնվեց կուսակցական-հասարակական գործիչ, թարգմանիչ (ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Արմեն Գարոն (Գարեգին Հարությունի Փաստրմաճյան): Վախճ. 1923 թ. մարտի 23-ին, Ժնևում:

«Հայաստանի կոչնակ», 1923, № 14 («Մահ»), № 19 («Արմեն Գարո», «Կենսագրական գիծեր»):
«Տարեցույց ազգային հիվանդանոցի», Պոլիս, 1924, էջ 171:

Փետրվարի 10. «Արշալույս արարատյանը» (№ 955) գրաբար հրատարակում է «Ի վշտալի մահ Աբրահամու Երեմեան, սիրելի բարեկամին մերոյ» եղերերգությունը (հեղինակ՝ «Ոմն ի բարեկամացն»): Մ. Միանսարյանի՝ «Կանոնավոր և վայելուչ գրության պատմությունը և տեսությունը» աշխատությունը իր ընթերցողներին ներկայացնելուց հետո, շաբաթաթերթը սկսում է նրա մի հատվածի՝

«ՈՒսուցիչների և ուսանողների պարապմունքների կերպը և հարաբերությունները», հրատարակությունը, որն ավարտվում է մարտի 10-ին (№ 957):

Փետրվարի 10. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն սկսում է հրատարակել Ալեքսանդր Քալանթարի «Սոփո» վեպը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև մայիսի 19-ը (№ 18) և մնում է անավարտ:

Փետրվարի 13. «Մասիսը» (№ 1349) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Բանասիրական» հոդվածը: Ավարտ՝ փետրվարի 22-ին (№ 1352): Գրախոսված են Տիմոթեոս Սափրիչյանի և Գաբրիել Այվազովսկու մի քանի ստեղծագործություններ:

Փետրվարի 15. «Մշակը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» (իմա՛. Գրիգոր Արծրունի) «Ֆելիետոնը»: Բնութագրված են ռուսական թատրոնում ներկայացվող «Թագավորի հարսնացուն» պատմական դրաման և Գ. Սունդուկյանի «Օսկան Պետրովիչն էն կինքումը» վոդևիլը, որոնք բացասաբար են գնահատված: Քննադատված է նաև «Մեղու Հայաստանի» պարբերականի գրական-մշակութային գործունեությունը:

Փետրվարի 17. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է «Բզնունու» «Մատենախոսություն» գրախոսականը: Գրախոսված է և բացասաբար գնահատված Մեսրոպ Փափազյանցի «Մանկավարժական վերծանություն հայկազուն երկու մանուկների համար» դասագիրքը (Վաղարշապատ, 1872 թ.):

Փետրվարի 22. «Մշակը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է Մելիքզադեի (Րաֆֆի) «Է՞ դ էլ քեզ կրիտիկա» բանավիճային հոդվածի Ա մասը: Վերջաբանը («Մի քանի խոսք»)՝ 1873 թ. հունիսի 28-ում, (№ 24) (տե՛ս՝ **Րաֆֆի**, երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1959, էջ 33-34 և 58-59):

Փետրվարի 24. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» (Պետրոս Սիմոնյանց) «Ֆելիետոնը»: Բնութագրված է ժամանակի գրական-հասարակական կյանքը, քննադատված է «Մշակը»:

Փետրվարի 28. «Սիոնը» (№ 2) ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Ֆրանսուա Ֆենելոնի «Զգեղեցկութենէ զրոց սրբոց» ակնարկը և արևմտահայերեն՝ Մամբրե Մարկոսյանի «Բան ի նախատակություն սրբոյ Վարդանանց» բանաստեղծությունը:

Մարտ. «Արևելյան մամուլը» (Գ. տարի, № 3) արևմտահայերեն հրատարակում է Ծերենցի «Թղթակցությունը» (վերլուծված է ժամանակի հայկական գրական-մշակութային և հասարակական կյանքը) և «Ասպետի» (Սեդրակ Տեր-Սարգսյանց) «Մեր հայր սուրբ» երգիծական բանաստեղծությունը: Այն նույնությամբ արտատպել է «Մեղու Հայաստանին» 1873 թ. հուլիսի 28-ի (№ 28) համարում:

Մարտի 1. «Մշակը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է «Չաքուճի» հերթական «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, ֆելիետոնիստն անդրադառնում է հայ օրագրության պասսիվ-կրավորական վիճակին, գտնելով, որ նա «դեռ չէ մտել ավազան, որ ձեռին բռնել տանք գավազան», ապա քննարկված են թարգմանական գրականության հետ առնչվող մի քանի հարցեր:

Մարտի 3. «Մասիսը» (№ 1356) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Կարապետ ՌՒթուչյանի] «Հայք և հույնք» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1358-ում (մարտի 8):

Մարտի 4. Վենետիկում իր ուսումնական առաջին տարեշրջանն է սկսում Վենետիկի Մխիթարյան միաբանության տնօրինության ներքո գտնվող «Մուրատ-Ռափայելյան ազգային վարժարանը»: Առաջին տեսուչն էր Իգնատիոս Կյուրեղյանը: Սկզբում ուներ 50 աշակերտ: Ավանդվում էր հայերեն (գրաբար և աշխարհաբար), լատիներեն, իտալերեն, ֆրանսերեն, պատմություն, ազգային մատենագիտություն, քննական աշխարհագրություն, կրոնագիտություն: Մուրատ-Ռափայելյան վարժարանը, որոշ ընդհատումներով, գոյություն ունի առ այսօր:

«Բազմավեպ», 1936, № 8-12 («Հիշատակ դարադարձի Մուրատ- Ռափայելյան վարժարանաց»):

Մարտի 5. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, կենսագիր, տարեցույցի հեղինակ, արձակագիր Թեոդիկը (Թեոդորոս Գրիգորի Լաբճինճյան): Վախճ. 1928 թ. մայիսի 24-ին, Փարիզում:

«Սողոթե», «Մտոստիկ», «Թեոդիկ», «Թ.Ա.» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 2 («Թեոդիկ»):

Մարտի 8. «Մշակը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Հոգևորականություն և ժողովուրդ» հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 10. «Արշալույս արարատյանը» (№ 957) «Ազգային» խորագրի ներքո, փոքրիկ առաջաբանում «Արծվի Վասպուրականի» պարբերականի գործունեությունը բնութագրելուց հետո, արտատպում է 1873 թ. № 1-ում հրատարակված նրա «Ողջույն հայրենյաց և հայերուն» առաջնորդողը:

Մարտի 12. «Մասիսը» (№ 1360) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Աշըգյանի «Լեզվի խնդիրը» տեսական-լեզվաբանական հոդվածը:

Մարտի 14. Վերին Ագուլիսում (Նախիջևանի ԻԽՍՀ) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հասարակական կյանքի տեսաբան, խմբագիր, հոդվածագիր Հովսեփ Թաղևոսյանը: Վախճ. 1957 թ. հունվարի 14-ին, Ժնևում:

1931 թ. Թեհրանում հիմնել և մինչև 1936 թ. խմբագրել է «Ալիք» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ոմն» կեղծանունով:

«Հայաստանի կոչնակ», 1957, № 21 («Հովսեփ Թաղևոսյան»), **Գևորգյան Կ**., «Ամենուն տարեգիրքը», էջ 390-391, 673:

Մարտի 17. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն հրատարակում է Միքայել Աթանասյանցի «Սուրբ ... եկեղեցվո հաշիվը» պատմվածքը:

Մարտի 18. «Մեղուն» (№ 122) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] երգիծապատումների շարքը՝ «Անկե-անկե» խորագրով, որն ավարտվում է նույն պարբերականի № 138-ում (մայիսի 16): Հրատարակված են նաև «Հառաջաբան», «Կամ Աղթամարա կաթողիկոս, կամ ...», «Հապա մոռցան» երգիծաբանությունները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7,Երևան, 1969, էջ 43-55, հ. 8, էջ 196-202):

Մարտի 21. «Մեղուն» (№ 123) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ես»-ի (Հակոբ Պարոնյան) «Բարեկենդանեն առաջ» երգիծական պատմվածքը: Շարունակվում է մինչև ապրիլի 4-ը (№ 127) և մնում անավարտ: Տպագրվում է նաև [Հակոբ Պարոնյանի] «Անասնոց դեմ հարձակում» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 205-207):

Մարտի 22. «Մշակը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է Մելիքզադեի (Րաֆֆի) «Մի օրավար հող» պատմվածքը (տե՛ս. **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1955, էջ 526-531):

Մարտի 24. «Արշալույս արարատյանը» (№ 958) գրաբար հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Տորք նահապետն ի Պոնտոս» բանաստեղծությունը:

Մարտի 24. «Մեղուն» (№ 124) արևմտահայերեն հրատարակում է «Դուն»-ի (Հակոբ Պարոնյան) «Կարդացող Տերպապան» երգիծապատումը, որը շարունակվում է մինչև մարտի 31-ը (№ 126) և մնում է անավարտ: Հրատարակված է [Հակոբ Պարոնյանի] «Բարեկենդանի փեսան» գրական էսսեն (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 121-122):

Մարտի 24. Թիֆլիսում ծնվեց գրականագետ-բանասեր, լեզվաբան, հոդվածագիր, խմբագիր Նիկոլ (նաև՝ Նիկողայոս) Պողոսի Աղբալյանը: Վախճ. 1947 թ. օգոստոսի 15-ին, Բեյրութում:

1913-1914 թթ. Թիֆլիսում խմբագրել է «Նոր հոսանք» ամսագիրը:

«Հանդես ամսօրյա», 1948, № 3-6 («Նիկողայոս Աղբալյան»): **Մըսրյան Հ.**, Նիկոլ Աղբալյանի բանասիրական վաստակը և մատենագիտությունը, Բայրութ, 1948, 76 էջ:

Մարտի 27. «Մասիսը» (№ 1366) արևմտահայերեն հրատարակում է «... խմբագիր» գրախոսականը (հեղ.՝ Ն.Ճ.=Նշան Ճիվանյան=Հորո): Գրախոսված է 1872 թ. «Արամյան օրացույցը», արված են մի շարք դիտողություններ: Սկսում է հրատարակվել [Կարապետ Ռիթուչյանի] «Օրագրաց անկողմնասիրությունը» բանավիճական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1370-ում (ապրիլի 6):

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է Մարտիրոս քահանա Սարգսյանցի «Երգ ի վերա Երուսաղեմի» և գրաբար՝ «Հէք պանդուխտն» բանաստեղծությունները (վերջինն ունի «Մ.Վ.Ս.» ստորագրությունը): Այն նույնությամբ արտատպել է «Արևելյան մամուլը»՝ 1873 թ. № 4-ում: Տպագրված է «Համառոտություն քրիստոնեական ուսման Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո» գրախոսականը (քննության է առնված Պետրոս Շանշյանցի՝ այդ խորագիրը կրող աշխատության երկրորդ տպագրությունը, որը գնահատված է որպես «դասական և օգտավետ երկասիրություն») և «Մի գլխավոր պայման պատմագրության» հոդվածը:

Մարտի 31. «Մասիսը» (№ 1368) արևմտահայերեն սկսում է հրատարակել Եղիա Տնտեսյանի «Եկեղեցական երգեցմունք» բանասիրական-երաժշտագիտական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Մարտի 31. «Մեղուն» (№ 126) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ալեաթճյան Գրիգորիս վարդապետը» և «Տակառի խնդիրը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 208-212):

Ապրիլ-հունիս. «Բազմավեպը» արևմտահայերեն հրատարակում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Հայկական տաղաչափություն» հոդվածը, «Սարվանդիքարի ասպետները և տնտոնական օրդենը» վերնագիրը կրող 1271 թ. գրված գրաբար պատառիկը, որը հայտնաբերել և ֆրանսերեն ծանոթագրություններով ներկայացրել է Ղևոնդ Ալիշանը, ինչպես նաև Արսեն Սուքրյանի «Սուրբ Բարսեղ (իմա. Կեսարացի-Ս.Շ.) և իր երկասիրությունքն» ուսումնասիրությունը:

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 4) գրաբար հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Ի Ս. Պետերբուրգե» նամակը (նկարագրված է Ռափայել Պատկանյանի՝ Նոր Նախիջևանում ծավալած կրթական-մշակութային գործունեությունը) և Մեսրոպ Փափազյանի՝ «Պատասխանի» արևելահայերեն հոդվածը, ուր հեղինակը պաշտպանում է իր «Մանկավարժ վերծանության. հայկազուն երկսեռ մանուկների համար» դասագիրքը «Մեղու Հայաստանիի» գրախոս Բզնունու «աղճատաբանական հոդվածից», հավելելով, որ «Հայրաբար կզգուշացնեմ պ(արոն) Բզնունուն, որ նկարիչ Ապելեսի պատկերի քննադատող կոշկակարի նման, յուր կոշիկներից բարձր դատողություն անելու չհամարձակվի»:

Ապրիլի 4. «Մեղուն» (№ 127) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Արփիարյանի «Ի վարդիկն իմ թառամյալ» բանաստեղծությունը և [Հակոբ Պարոնյանի] «Զատկին հիվանդները» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 123-124):

Ապրիլի 5. «Մշակը» (№ 13) արևելահայերեն հրատարակում է «Պատկեր գյուղական կյանքից» պատմվածքը (հեղ.՝ «Ս.Մ.Ա.»):

Ապրիլի 18. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 275) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Հայ խմբագրաց առջի արհեստը» հրապարակախոսական հոդվածը:

Ապրիլի 18. «Մեղուն» (№ 131) գրաբար հրատարակում է Մարտիրոս Շիտանյանի «Ցընկեր իմ ծովամոյն» բանաստեղծությունը:

Ապրիլի 19. Թիֆլիսի քաղաքային թատրոնում հայ դերասանների խումբը՝ Ամիրան Մանդինյանի ղեկավարությամբ առաջին անգամ ներկայացնում է Գաբրիել Սունդուկյանի «Քանդած օջախ» կատակերգությունը: Այն 1883 թ. հունվարի 23-ին ներկայացվում է նաև վրացերեն թարգմանությամբ:

Սունդուկյան Գ., Երկերի լիակատար ժողովածու, հ. Բ, Երևան, 1951, էջ 508-515:

Ապրիլի 21. «Մեղու» (№ 132) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Ազնվության չաստվածներ ու չաստվածուհիներ» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերականի № 134-ում (ապրիլի 28), և «Չորս վարագույրով կատակերգություն մը» երգիծանքը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 125-132, հ. 7, էջ 152-155):

Ապրիլի 24. «Մասիսը» (№ 1376) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գարեգին Մուրադյանցի (հետագայում՝ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս) «Խորհրդածություն» տեսական-աստվածաբանական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի մայիսի 1-ին (№ 1379): Հոդվածը, որոշ շտկումներից հետո, հրատարակության է ներկայացրել Եղիա Տնտեսյանը:

Ապրիլի 25. «Մեղու» (№ 133) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Եպիսկոպոսը կզբոսնու», «Քաջասիրտ քիթ մը» և «Ծանոթություն» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 216-222):

Ապրիլի 28. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Գեորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Խղճմտանքով միջի մարդկանց վճիռը» պատմվածքը:

Ապրիլի 28. «Մեղու» (№ 134) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Մեղու լրջորեն խոսելու ստիպված», «Հիվանդանոց և օրագիր», «Ալքազարի խնդիրը» և «Մեղուի դեմ հարձակողներուն» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 223-230):

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է Եղիա Տնտեսյանի «Եկեղեցական երգեցմունք» հոդվածը և Սահակ Խապայանի (?) «Տեր Երեմիա քահանա և սխալացույց յուր» ընդդիմախոսականը, ուր տոմարագետ Երեմիա քահանա Խասգյուղցու կյանքից վերցված մի քանի փաստերի հենքի վրա ցույց է տրված տոմարագիտության բնագավառում նրա սխալները:

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Աբել Մխիթարյանի «Հայ ազգն ի հավատս և ի առաջադիմություն» գրական-հրապարակախոսական հոդվածը և Գալուստ Շիրմազանյանի «Դարձյալ թե ուր են Ավարայրն և Տղմուտ» բանավիճականը:

Մայիսի 2. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 279) արևմտահայերեն հրատարակում է «Փանոսյան» դիմանկարը (Հեղինակ «Մ»): Կարապետ Փանոսյանի գործունեության երգիծական նկարագիրը տալուց հետո, հավելվում է, որ «Փանոսյան հայ մամլույն նախատիքը, դաստիարակության քոլերան և ազգության դավաճանն եղավ»:

Մայիսի 3. «Մշակը» (№ 16) Հովհաննես Միրզաբեկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էդուարդ Դյուլյորիյի «Հայոց լեզվի և գրականության ուսումնասիրության հարկավորությունը» հոդվածը: Ավարտ՝ հաջորդ համարում:

Մայիսի 5. «Արշալույս արարատյանը» (№ 961) գրաբար հրատարակում է «Գրաւական ուխտի սրբոյ առ տէր Գրիգորիս արքեպիսկոպոս, բարեխնամ առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի» ներբողը (ստորագրություն՝ ***=Հովհաննես Խաչկյան?) և Նշան Միրզայի «Ի սգալի մահ առաքինափայլ հարսին իմոյ» եղեբերգը: «Թարգմանյալ ի պարսկականե» խորագրի ներքո, բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակված է մի ութնյակ («Հայրն կալնու զձեռ որդւոյն սիրելւոյ ի տիս մանկութեան»):

Մայիսի 5. «Մեղու Հայաստանին» (№ 16) արևելահայերեն սկսում է հրատարակել «Մ.Ա.»-ի (Սեներքերիմ Արծրունի?) ««Քանդած օջախ» կատակերգություն պարոն Գաբրիել Սունդուկյանցի, երեք արարողությամբ» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի № 20-ում (հունիսի 2):

Մայիսի 5. «Մեղուն» (№ 135) արևմտահայերեն հրատարակում է Լճեցու «Քերթված առ քիթս» երգիծական բանաստեղծությունը և [Հակոբ Պարոնյանի] «Երկու վայրկյան ժպիտիս հետ», «Եկուր խնդանք», «Ասիային շատ բարև», «Նոր թատրոնապետ մը» երգիծական մանրապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 231-238):

Մայիսի 12. «Մեղուն» (№ 137) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Պատասխանին պատասխանը», «Ալքազար», «Վարպետ Մուրացկան», «Մանզումիեյի խելքին երթևեկության ժամերը», «Ալեմտաղիի կռիվ մը» երգիծական մանրապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 133-134, հ. 8, էջ 239-243):

Մայիսի 17. «Մշակը» (№ 18) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Շարունակենք» հրապարակախոսական հոդվածը (բարձրացված է եվրոպական և մանավանդ ռուսաց լեզվի՝ ամենայն խորությամբ սովորելու անհրաժեշտությունը) և «Մելիքզադեի» (Րաֆֆի) «Քանդված օջախ» խորագիրը կրող գրախոսականը (**Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 52-58):

Մայիսի 19. «Մասիսը» (№1386) արևմտահայերեն հրատարակում է «Սիսակի» (իմա՛. Մինաս Գափամաճյան) «Մամլո ազատություն կամ առանձինն հայ մամուլ» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 19. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 284) արևմտահայերեն հրատարակում է «Փանոսյան Կարապետ» գրական դիմանկարը (հեղ.՝ Գեորգ Այվազյան?): Բացասական է գնահատված վերջինիս ամբողջ գրական-մշակութային գործունեությունը:

Մայիսի 19. «Մեղուն» (№ 139) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Խայթվածք» խորագիրը կրող երգիծական մանրապատումների շարքը, որն ավարտվում է նույն պարբերականի 1874 թ. № 214-ում (մարտի 2) և «Ծեփողականություն կամ շողոքորթություն», «Մեղու առ սրբազան պատրիարքն հունաց», «Ասիային փախուստը», երգիծական մանրապատումները (**Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 136-138, հ. 7, էջ 65-141, հ. 8, էջ 248):

Մայիսի 23. «Մեղուն» (№ 140) արևմտահայերեն հրատարակում է «Դուն»-ի (Հակոբ Պարոնյան) «Մեռելակոխի մը» երգիծապատումը, [Հակոբ Պարոնյանի] «Սխալացույց», «Լեզու սորվելու նոր դրություն մը» երգիծական մանրապատումները (**Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 252-255) և Պ. Ատրունու «Պանդուխտն առ վտակ» բանաստեղծությունը:

Մայիսի 23. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 285) արևմտահայերեն հրատարակում է Ենոք Դեմիրճյանի «Հայ թերթերուն վիճակը» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 24. «Մասիսը» (№ 1388) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ա. Սուրենյանի «Նոր եղանակք ուսուցման ազգային լեզվի» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1390-ում (մայիսի 29):

Մայիսի 26. «Մեղու Հայաստանին» (№ 19) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 26-ին մայիսի» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 26. «Մեղուն» (№ 141) արևմտահայերեն հրատարակում է «Դուն»-ի (Հակոբ Պարոնյան) «Անուշի կռիվ մը» երգիծապատումը, [Հակոբ Պարոնյանի] «Երազահան», «Տարեդարձ», «Դիվահար թերթ մը» երգիծական ստեղծագործությունները (**Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 139-143, հ. 8, էջ 255-257) և Տիգրան Արփիարյանի «Տասներեքերորդ տարեդարձ ազգային սահմանադրության» բանաստեղծությունը:

Մայիսի 28. Ալեքսանդրապոլում, Աղաբեկ Արշակունու վերակացությամբ, իր գոյությունն է սկսում «Սահականուշյան օրիորդական ուսումնարանը»: Դպրոցը ծխական էր, դասավանդումը՝ անվճար: Ուսումնարանն ուներ 50 աշակերտուհի, որոնց ավանդվում էր հայոց և ռուսաց լեզուներ, առարկայախոսություն (?), թվաբանություն, գծագրություն, վայելչագրություն, ձեռագործ և երգ: Ուսուցիչների թվում հիշատակվում է նաև Ղազարոս Աղայանը:

«Մեղու Հայաստանի», 1873, № 22 («Ալեքսանդրապոլ»), 1874, № 12 («Հաշվեցուցակ»):

Մայիսի 30. «Մեղուն» (№ 142) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Լրագրի առուտուր», «Տարեդարձ», երգիծական մանրապատումները (**Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 258-264) և Եղիազար Տնլեթյանի «Իցի՜վ» բանաստեղծությունը:

Մայիսի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 287) արևմտահայերեն հրատարակում է Ենոք Դեմիրճյանի «... խմբագիր» հրապարակախոսական հոդվածը: Բացասաբար է գնահատված Օգսեն Խոճասարյանի «Օրագիր» օրաթերթի գործունեությունը:

Մայիսի 31. «Մշակը» (№ 20), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ (թարգմանիչ՝ ***), «Բանասիրական» խորագրի ներքո սկսում է հրատարակել մարշալ Հելմուտ-Կարլ Մոլտկեի՝ արևելյան երկրներին ու Հայաստանին վերաբերող նամակների ընտրանին: Նամակագիրը, ի թիվս այլ

նյութերի, անդրադառնում է հայ ժողովրդի ստեղծած մշակութային արժեքներին: Ավարտ՝ հաջորդ համարում:

Ինչպես հավաստում է Խ.Հ.Բարսեղյանի կազմած «Մշակի» ծածկանունների բառարան» մատենագիտական ձեռնարկը, *** ստորագրությամբ «Մշակում» հանդես են եկել Արփիար Արփիարյանը, Առաքել Օհանյանը և Ստեփան Ղորղանյանը: Այլ մանրամասներ ճշտել չենք կարողացել:

Մայիսի 31. Բլուր գյուղում (Սուրմալուի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր (մասնագիտությամբ՝ գյուղատնտես) Ստեփան Օհանջանի Կամսարականը: Վախճ. 1955 թ. հոկտեմբերի 9-ին, Երևանում:

Էջմիածին, 1955, № 12 («Ստեփան Օհանջանի Կամսարական»):

Հունիս. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 6) արևմտահայերեն հրատարակում է Շահնուրի (իմա՛. Մատթեոս Մամուրյան) «Թղթակցություն» հոդվածը (քննության է առնված «Մասիս», «Փունջ», «Մեղու» պարբերականների բանավեճը գեղեցիկ և տգեղ բառերի կիրառության մասին): Ժողովրդական աշխարհաբարով հրատարակված է «Ողբ Ղարիպի ասացյալք» բանաստեղծությունը: ՈՒնի «Դարավոր հնություն մ'է» նշումը:

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Խորհրդածություն» հոդվածը:

Տեղեկացնելով այն մասին, որ անգլիացի հնագետ Սմիտը Լոնդոնի «Աստվածաշունչի հնախոսական ընկերության» հերթական նիստում հանդես է եկել սեպագրերի մասին զեկուցումով, Պատկանյանը որոշ հավելումներ է անում նրա զեկուցմանը, ապա տալիս է սեպագրերի ուսումնասիրության պատմությունը Եվրոպայում:

Հունիսի 2. «Մեղուն» (№ 143) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ազգային տուրք» և «Մանր լուրեր», երգիծապատումները (**Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 263-266):

Հունիսի 9. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Մշակ» պատմվածքը: Որպես բնաբան վերցված է մի քառյակ Ռ. Պատկանյանի «Մշակ» բանաստեղծությունից:

Կեսեր. «Փարոսը» (տետր Բ.) արևելահայերեն հրատարակում է Մսեր Մսերյանցի «Հայ կաթողիկոսաց թղթակցությունք Հռոմա պապերի հետ» բանասիրական հոդվածը (շարադրված է 17 հայազգի կաթողիկոսների նամակագրությունը և քննադատված են Մ. Չամչյանի, Մ. Բժշկյանի և Իգ. Փափազյանի աշխատությունները): «Ազգային բարերարք վերջին դարու» խորագրի ներքո տրված է Միրզայան Մանուկ պեյի կենսագրությունը: «Մատենագրություն» բաժնում գրախոսված են Գաբրիել Այվազովսկու թարգմանած «Յանոսի՝ յաղագս Պապին և ժողովոյ նորա», Քերոբե Պատկանյանի «История монголов по Армянским источникам», Մկրտիչ Էմինի «Шараканы или священные шины Армянской восточной церкви» աշխատությունները, «Ձայն բազմաց» ժողովածուն և Ավետիս Պերպերյանի «Պատմութիւն հայոց, սկսեալ ի 1772 ամէ Փրկչին, մինչեւ ցամն 1860...» գիրքը: «Մահ Մսերայ Մագիստրոսի Մսերեանց» հոդվածում Զարմայր Մսերյանցը, գուժելով իր հոր մահը, գրական դրվագներ է շարադրում նրա կյանքից, ավարտելով իր խոսքը «Ողոք առ մահ» գրաբար բանաստեղծությամբ, որի տների առաջին տառերը կազմում են «Մսեր» բառը:

Հունիսի 13. «Մեղու» (№ 146) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խմբագրի մը վիշտերը», երգիծապատումը (**Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 267-269):

Հունիսի 14. «Մշակը» (№ 22) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ է նշանակում գիտություն» հրապարակախոսական հոդվածը և «Չաքուճի» (Միհրդատ Ամրիկյան) «Ֆելիետոնը», որտեղ ի թիվս այլ հարցերի, քննադատված է հայ ընթերցողների՝ առ գիր-գրականություն ունեցած անտարբերությունը:

Հունիսի 14. «Մասիսը» (№ 1397) արևմտահայերեն հրատարակում է Եղիա Տնտեսյանի «Քանի մը դիտողությունք» հոդվածը (բանավիճելով «Բազմավեպի» հետ, հոդվածագիրը նորանոր տվյալներ է հաղորդում հայ երաժշտության պատմության և նրա երախտավորների մասին), Մարտիրոս Շիտանյանի «ՈՒղերձ առ մեծանուն Ոստանիկ էֆենդի Տեր-Մարգարյանց» բանաստեղծությունը և «Մ.Հ.»-ի «Խոսք առ Խորեն եպիսկոպոս Նար-Պեյ» գրականագիտական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունիսի 16. «Արշալույս արարատյանը» (№ 964) գրաբար հրատարակում է Հովհաննես Աղամալյանցի «Ի լեառն Մասիս», Գրիգոր Տեր-Հովհաննեսյանցի «Այցելութիւն գերեզմանի քերթողահօրն մերոյ, երանելւոյն Մովսիսի Խորենացւոյ» և Նշան Միրզայի «Ի պսակ հայրենեաց» բանաստեղծությունները:

Հունիսի 16. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևելահայերեն (հերոսների երկխոսությունները Թիֆլիսի բարբառով) հրատարակում է Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Պրիկազչիկ Միշելը» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերական հաջորդ համարում:

Հունիսի 20. «Մեղուն» (№ 148) արևմտահայերեն հրատարակում է «Դուն»-ի (Հակոբ Պարոնյան) «Թացիկ Մարգար» երգիծապատումը, [Հակոբ Պարոնյանի] «Պզտիկ թատրերգություն մը», «Ազգային տեսություն» երգիծական ակնարկները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 144-149, հ. 8, էջ 273-274) և Եղիազար Տնլեթյանի «Ո՜հ, ո՛ւր ես» բանաստեղծությունը:

Հունիսի 21. «Մշակը» (№ 23) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մեր բարձր ուսում ստացած Օսեփներ» թատերական-գրականագիտական առաջնորդողը: Հրատարակված է նաև Գևորգ Չմշկյանի «Պարոն խմբագիր» գրախոսականը, որտեղ խոսվում է «Кавказ» լրագրում տպագրված Ալ. Երիցյանի «История армянской сцены» աշխատության մասին:

Հունիսի 27. «Մեղուն» (№ 149) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «ՌԻսումնական խորհրդո մահացու մեղքը», «Գորտերու և մուկերու թագավորին ձախող ճամբորդությունը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 275-281)

Հունիսի 28. «Մասիսը» (№ 1402) արևմտահայերեն սկսում է հրատարակել Տիգրան Մանավյանի «Միսաքյան էֆենդի մեծահամբավ հայ գրագետին գրավոր ատենաբանությունը» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: «Մասիս» և «Փունջ» պարբերականների միջև ծավալված բանավեճի հենքի վրա ցույց է տրված Խաչատուր Միսաքյանի կողմնակալ դիրքն ու միակողմանի մոտեցումները ժամանակի գրական հարցերում:

Հունիսի 28. «Մշակը» (№ 24) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Կրոն և ազգություն» հրապարակախոսական հոդվածը և «Խմբագիր Ասիացու»

(իմա՛. Գրիգոր Արծրունի) «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, քննադատված է «Մեղու Հայաստանի» (անվանված է «Լու Հայաստանի. լրագիր անշարժական և ոչխարային») պարբերականի գործունեությունը:

Հունիսի 30. «Արշալույս արարատյանը» (№ 965) գրաբար հրատարակում է Գրիգոր Տեր-Հովհաննեսյանցի «Վերջին դիւցազունք հայոց ի Հալիձոր», Հովհաննես Աղամալյանցի «Ամառային երեկոյ» և Միքայել Ղալաբեկյանցի «Աշուն», «Ի գետն Տղմուտ» բանաստեղծությունները:

Հունիսի 30. «Սիոնը» (№ 6), Պողոս Հակոբյան Չանաքկալեցու՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Հ. Շուխտի «Մարդուս հոգեկան ներդաշնակ կրթությունն» գրական-փիլիսոփայական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է նաև նույն թարգմանչի «Մանկութիւն» գրաբար ակնարկը:

Հունիսի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 287) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Միսաքյանի կավե քննադատները» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Հունիսի 30. «Մեղու Հայաստանին» (№ 24) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 30 հունիսի» հրապարակախոսական առաջնորդողը (Ներսիսյան դպրոցի քննությունների նկարագրության հիմքի վրա վերլուծված է ժամանակի գրական-հասարակական կյանքը) և Հ. Նազարյանցի՝ «Օչով չասի թե իր ճրագը ընչանք առավոտը լիս կտա» պատմվածքը:

Հուլիս-սեպտեմբեր. «Բազմավեպը», անգլերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է «Առ Յիսուս» բանաստեղծությունը, «Եթովպացվոց առածք» խորագրի ներքո հրատարակված է այդ ազգի 25 առած-ասացվածքներն ու գեղարվեստական մանրապատումները, արևմտահայերեն ներածականով հրատարակված է ֆրանսիացի հայագետ Էդուարդ Դյուլյորիեյի ”Les études arméniennes, leur ètat actuel” («Հայ գրականությունը և նրա այժմյան վիճակը») ֆրանսերեն հոդվածը: Բանասիրական վերլուծականով հրատարակված է Վարդան Հայկազնի «Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ և սուրբ կաթողիկոսին հայոց Գրիգորի Վկայասիրի» գրաբար պոեմը, իսկ միջին հայերենով՝ «Երգ ազգային» ժողովրդական բանաստեղծությունը:

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Հեղինակ հրաժեշտին Վարդանա...-ի» (իմա՛.Գաբրիել Պատկանյան. տե՛ս «Արարատ», 1871, սեպտեմբեր) «Մտածություն և վիշտք Ախուրյան վտակի» բանաստեղծությունը: Հայրապետ Ղուկասյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Ժողովրդական ուսուցչի ինքնակրթությունը» գրական-մանկավարժական աշխատությունը: Ավարտը՝ հաջորդ համարում:

Հուլիսի 1. Պոլսում, Սիմոն Ֆելեկյանի ջանքերով ու սատարմամբ, իր գոյությունն է սկսում «Ֆելեկյան հայոց գիշերօթիկ վարժարանը»: Այն երկդասյա էր («Ռեսումնարան» և «Նախակրթարան»), սկզբնական շրջանում ուներ 30 աշակերտ: Ռեսումնարանում ավանդվում էր քրիստոնեական վարդապետություն, բարոյական կրթություն, հայերեն, տաճկերեն, ֆրանսերեն, անգլերեն, թվաբանություն, պատմություն, իսկ «Նախակրթարանում»՝ քրիստոնեական համառոտ, բարոյական կրթություն, ընթերցանություն, մաքրագրություն, հայոց պատմություն և քերականություն: Վարժարանն ուներ հինգ ուսուցիչ:

«Մամուլ», 1873, № 305 («Ս.Ֆելեկյան գիշերօթիկ վարժարան հայոց»):

Հուլիսի 4. «Մեղուն» (№ 151) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ծովու բաղնիք», «Առ Մատթեոս վարդապետ Իզմիրլյան» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 150, հ. 8, էջ 282-284):

Հուլիսի 5. «Մշակը» (№ 25) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչի մեր օրիորդները հեռու են հայությենից» հրապարակախոսական հոդվածը և Հովհաննես Տեր-Գրիգորյանցի «Նինո» պատմվածքը:

Հուլիսի 7. «Մեղու Հայաստանին» (№ 25) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանցի «Կիրակոս» պատմվածքը: Անավարտ:

Հուլիսի 7. Մեղուն» (№ 152) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Երեկ հուղարկավորության հանդես մը», «Հավատս չգար» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 285-287):

Հուլիսի 10. «Մասիսը» (№ 1407) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Գափամաճյանի «Ցուցանք ժամանակի. առ մեծանուն Միսաք էֆենդի» հրապարակախոսական հոդվածը:

Հուլիսի 11. Մեղուն» (№ 153) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ստակ վաստակելու նոր միջոց», «Ժամանակք նշանի» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 290-295):

Հուլիսի 12. «Մշակը» (№ 26) արևելահայերեն հրատարակում է «Մատենագրություն» հոդվածը (հեղինակ՝ **): Գրախոսված է Ալեքսանդր Քիշմիշյանի «Մշակ (պատկեր)» պատմվածքը:

Հուլիսի 14. «Արշալույս արարատյանը» (№ 966) գրաբար հրատարակում է Գրիգոր Տեր-Հովհաննեսյանցի «Փայլակն», Աղամալ Աղամալյանցի «Սոխակ տարաշխարհիկ» և Համբարձում Մախմուրյանցի «Ի ծնունդ կենարար Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի», «Զեփիւռ Հայաստանի» բանաստեղծությունները:

Հուլիսի 14. «Մեղու Հայաստանին» (№ 26) արևելահայերեն (որոշ հատվածներ՝ Թիֆլիսի բարբառով) հրատարակում է «Քաղքցու» (իմա՛.Պետրոս Սիմոնյան) «Ֆելիետոնը»: Թիֆլիսի բարբառով գրված երգիծական պոեմով ծաղրված է ժամանակի գրական-մշակութային կյանքը: Բացասաբար է գնահատված Րաֆֆու անդրանիկ բանաստեղծությունների՝ դեռևս «տպի տակ գտնվող» ժողովածուն, որը որակված է «Փունջ» անգույն և անհոտ ծաղկանց»:

Հուլիսի 14. «Մասիսը» (№ 1409) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Կարապետ Ութուջյանի] «Քանի մը խոսք առ Խաչատուր Պուետ Միսաքյան» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1425-ում (օգոստոսի 21):

Հուլիսի 14. «Մեղուն» (№ 154) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Սահմանադրության բնավորությունը», «Թատրոն Ազիզյե» երգիծապատումները: Սկսում է հրատարակել «Թե ինչպես կսկսի սիրահարությունը, և ինչպես կվերջանա» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 173-ում (սեպտեմբերի 23): (Տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 151-163, հ. 8, էջ 296-299):

Հուլիսի 18. «Մասիսը» (№ 1410) արևելահայերեն սկսում է հրատարակել Խորեն եպիսկոպոսի (Աշըգյան) «Լեզվի խնդիրը» հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1415-ում (հուլիսի 28):

Հուլիսի 18. «Մեղուն» (№ 155) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Նոր վիճակահան...», «Բարեվավան» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, h. 8, էջ 300-303):

Հուլիսի 19. «Մշակը» (№ 27) արևելահայերեն հրատարակում է Րաֆֆու նամակը, որտեղ նա անդրադառնում է «Քաղքցու» (Պետրոս Սիմոնյան)՝ «Մեղու Հայաստանի» ամսագրում հրատարակված «վատ կարծիքին» իր բանաստեղծությունների «Փունջ» ժողովածվի վերաբերյալ (տե՛ս ներկա հատորը, 1873թ. հուլիսի 14):

Հուլիսի 21. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն սկսում է հրատարակել Հ. Գեղամյանցի «Ալաֆրանկա, կատակերգություն ի հինգ արարվածս, գրեաց Խոռբեն Գալֆայան» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հուլիսի 21. «Մեղուն» (№ 156) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Մեղու առ վսեմապատիվ Հակոբ էֆենդի Կյոկչեյան», «Երեսփոխանական ժողով», «Օմնիպյուս մտնելու եղանակը», «Շմենտֆերի բիանքոն» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, h. 8, էջ 304-308):

Հուլիսի 26. «Մշակը» (№ 28) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մենք ձեզ կմերկացնենք» հրապարակախոսական հոդվածը (քննադատված է «Մեղու Հայաստանի» շաբաթաթերթի գրական-մշակութային և հասարակական անսկզբունքայնությունը): Սկսում է հրատարակվել Հովհաննես Տեր-Գրիգորյանցի «Փուղի բազար» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հուլիսի 28. «Արշալույս արարատյանը» (№ 967) գրաբար հրատարակում է Աղամալ Աղամալյանցի «Ի լեառն Շահապիվան» և Սիմեոն Հախումյանցի «ՈՒխտ դստեր Շապհոյ, որդւոյն քաջին Սմբատայ արքային Բագրատունւոյ, ի հրաժեշտի իւրում...», «Անտառն սօսեաց Արմենակայ» բանաստեղծությունները:

Հուլիսի 28. «Մեղուն» (№ 158) արևմտահայերեն հրատարակում է «Ով է նէ»-ի (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Ծովաբաղնեբուժություն» երգիծապատումը և [Հակոբ Պարոնյանի] «Թե ինչու Կյոկչեյան էֆենդի «Մեղուեն» ավելի բարեկամ ունի» երգիծական պատմվածքը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, h. 8, էջ 312-314):

Հուլիսի 31. «Սիոնը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Բարեկամական տեսակցություն ընդ խմբագիրն Արշալույսո (իմա՛. «Արշալույս արարատյանի». Ս.Շ.)» գրականագիտական-բանավիճական հոդվածը (ունի «Երուսաղեմի միաբան վարդապետ մի» ստորագրությունը), որտեղ քննադատվում է նրա մոտեցումը գրաբարի և գրաբարալեզու գրականության հանդեպ: Հրատարակված է նաև «Ի սգալի մահ վաղամեռիկ օրիորդին Հռիփսիմեայ, անդրանիկ դստեր...» գրաբար եղերերգությունը:

Օգոստոս. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 8) արևմտահայերեն հրատարակում է Շահնուրի (Մատթեոս Մամուրյան) «Թղթակցությունը» (նկարագրված է Մկրտիչ Խրիմյանի և նրա «Արծվի Վասպուրականի» պարբերականի գործունեությունը): Ժողովրդական աշխարհաբարով հրատարակված է «Ասպետի» (իմա՛. Սեդրակ Տեր-Սարգսյանց) «Լաց պլպուլին վարդի չոր թփի վրա» բանաստեղծությունը:

Օգոստոս. Կերչում (այժմ՝ Ղրիմի մարզ) ծնվեց պատմաբան, ազգագրագետ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն, հայերենից՝ ռուսերեն, գերմաներենից՝ հայերեն) Խաչիկ Ստեփանի Սամուելյանը (Սամվելյան): Վախճ. 1940 թ. հոկտեմբերի 16-ին Երևանում:

Աշխատություններից մի քանիսն ունեն «Նիմանդ» կեղծանունը:

«Սովետական Հայաստան», 1940, № 245 («Խաչիկ Ստեփանի Սամուելյան»): **«Լրաբեր»**, 1958, №1 («Խաչիկ Սամվելյանը ազգագրագետ»): **«Գրական թերթ»**, 1968, № 48 («Անվանի հայագետը»): **«Հայրենիքի ձայն»**, 1973, № 47 («Հայագիտության երախտավորը»):

Օգոստոսի 1. «Մեղուն» (№ 159) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Աշխարհիս վերջը ե՞րբ պիտի գա» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 315-316):

Օգոստոսի 3. Էհնեշ գյուղում (նաև՝ Ներսես, Հարավային Թուրքիա) ծնվեց հոգևորական գործիչ, հոդվածագիր, բանասեր, կենսագիր Փառեն եպիսկոպոս Մելքոնյանը: Արմաշի միաբանության անդամ էր 1896 թ. սեպտեմբերի 15-ից: Վախճ. 1957 թ. հոկտեմբերի 22-ին Երուսաղեմում:

«Էջմիածին», 1957, № 11 («Հանգիստ... Փառեն եպիսկոպոս Մելքոնյանի»):

Օգոստոսի 4. «Մեղու Հայաստանին» (№ 29) արևելահայերեն հրատարակում է Հ.Նազարյանցի «Մինչև Շուշանը զարդարվեց, ժամերն արձակվեց» պատմվածքը:

Օգոստոսի 4. «Մեղու» (№ 160) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Օրթագյուղ» և «Սակարկություն մը» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 164-165, հ. 8, էջ 317):

Օգոստոսի 9. «Մշակը» (№ 30) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ո՞ւմն ենք խաբում» հրապարակախոսական առաջնորդողը և Մ.Մ.Ա.-ի «Պետինանց Հանեսը» պատմվածքը:

Օգոստոսի 11. «Մեղու Հայաստանին» (№ 30) արևելահայերեն հրատարակում է Մարտիրոս Սիմոնյանցի «Էիտիբար» վիպակը: Ավարտը՝ նույն պարբերականի № 32-ում (օգոստոսի 25):

Օգոստոսի 11. «Արշալույս արարատյանը» (№ 968) գրաբար հրատարակում է Հովհաննես Բելլուբեկյանցի «Ի գետն Ճորոխ» և «Հառաչանք Գազկայ վերջնոյ» բանաստեղծությունները: Տեսական կարճառոտ վերլուծականից հետո, հրատարակված է «Երգ սիրահարի» աշուղական բանաստեղծությունը՝ հնդկահայոց բարբառով: Այն խմբագրությանն է ուղարկվել Հնդկաստանից:

Օգոստոսի 11. «Մեղու» (№ 162) արևմտահայերեն հրատարակում է «Ով է նէ»-ի (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Պերեքեթլի տուն մը» և [Հակոբ Պարոնյանի] «Մեղու սխալմունքի մեջ» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 322-324):

Օգոստոսի 11. «Մասիսը» (№ 1421) արևմտահայերեն հրատարակում է Նահապետ Ռուսինյանի «Իղձ թարգմանչին» հոդվածը, որը հեղինակը զետեղել է Վիկտոր Հյուգոյի «Ռիյ Պլաս» («Ժյուլ Բլյազ». տե՛ս ներկա հատորը, 1873 թ.) եղերերգության՝ իր կատարած արևմտահայերեն թարգմանության վերջում, որպես վերջաբան: Հոդվածին նախորդում է Կարապետ ՌԻթուջյանի ընծայականը, որտեղ դրվատված է հիշյալ թարգմանությունը:

Օգոստոսի 18. «Մասիսը» (№ 1424) արևմտահայերեն հրատարակում է «Ալֆրեդ դը Մյուսե. «Դարուս մեկ զավակին խոստովանանքը», թարգ. Գրիգոր Չիլինկիրյան, հատոր երկրորդ» գրախոսականը:

Օգոստոսի 23. «Մշակը» (№ 32) արևելահայերեն հրատարակում է «Տան բռնակալը» պատմվածքը (հեղինակ՝ Դ.Ս. = Դանիել Սարգսյան ?):

Օգոստոսի 25. «Մեղու» (№ 166) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Նկարագիրք Մեղուի» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 326-328):

Օգոստոսի 30. «Մշակը» (№ 33) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մի՞թե պարտավոր ենք» հրապարակախոսական առաջնորդողը (քննադատված է ռուսական «Голос» և «Кавказ» լրագրերի սխալաշատ և կողմնակալ հոդվածները հայ ժողովրդի գրական-մշակութային կյանքի մասին) և Սողոմոն Եղիազարյանի «Կախարդ Սանդուխտը» պատմվածքը:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է «Ազատության վրա ակնարկ մի» հրապարակախոսական առաջնորդողը և Սահակ Խապայանի «Փոքրիկ նկատողություն մի» քննադատական հոդվածը:

Սեպտեմբեր. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 9) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է «Ասպետի» «Դու աստ կատու» բանաստեղծությունը: Փիլիպոս Վարդանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Ֆերդինանդ Շմիդտի «Գեորգ Վաշտինգտոն» վիպակը, որն ավարտվում է 1874 թ. № 3-ում (մարտ):

Սեպտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 9) մի բաժին հատկացրել է երիտասարդ ստեղծագործողներին: Հրատարակված են Հովհաննես Մուշեղյանի «Կարոտ» և «Պանդուխտ հայ» արևելահայերեն բանաստեղծությունները, Ալեքսանդր Մխիթարյանցի «Հորդոր քաջին Վարդանա Մամիկոնեի ի մեծ պատերազմին» և Սարգիս Գնունու «Ողբ Անի մայրաքաղաքին Բագրատունյաց» արևելահայերեն չափածո ստեղծագործությունները: Հրատարակված են Միքայել Սալլանթյանցի «Տապանագիր Իսահակայ Մովսիսեանց Գասպարեանց» և «Տապանագիր գեներալ մայեօր Պօղոսի Մովսիսեան Մելիքեանց» գրաբար դամբանականները և զուգահեռաբար դրանց ռուսերեն չափածո թարգմանությունները, որոնք կատարել է Հովակիմ Մելիքյանը:

Սեպտեմբերի 1. «Մեղու» (№ 168) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Արտասուք Մեղուի» երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 329-332):

Սեպտեմբերի 1. «Մեղու Հայաստանին» (№ 33) արևելահայերեն հրատարակում է «Հուրիերի» «Բռնաբարված Հռիփը» պատմվածքը: «Ազգային» խորագրի ներքո հրատարակված մահախոսականում տրված է Մսեր Մսերյանցի կյանքն ու գործունեությունը:

Սեպտեմբերի 5. «Մեղուն» (№ 169) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Իզմ էֆենդի» և «Մամուլին շողոքորթությունը» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 333-337):

Սեպտեմբերի 7. «Մասիսը» (№ 1433) արևմտահայերեն հրատարակում է «Գավառացի հայերի» «Օրագրո ահռելի կիրքն ու պատկերը» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 34) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Ֆելիետոնը»: Բնութագրված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, երգիծական երանգավորումներով ներկայացված է Րաֆֆու «Փունջ» ժողովածուն:

Սեպտեմբերի 12. «Մեղուն» (№ 170) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ջռիկյան բանակը», «Մամուլի լեզուն» և «Մեղուի խմբագիրն ալ մա՞րդ է մի» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 338-344):

Սեպտեմբերի 20. «Մշակը» (№ 36) արևելահայերեն հրատարակում է Անդրեաս Արծրունու գրախոսականը Վիկտոր Շերբուլիեյի «Ոխումնասիրություններ գրականության և արվեստի մասին» աշխատության մասին:

Սեպտեմբերի 22. «Արշալույս արարատյանը» (№ 971), արտատպելով Պոլսի «Հայրենիք» լրագրից, հրատարակում է «Քննադատություն եկեղեցական պատմության Մելքիսեդեկ վարդապետի Մուրադյան» արևմահայերեն գրախոսականը (հեղինակ՝ «Հայաստանյայց սուրբ եկեղեցվո սարկավագ պաշտոնյա»): Ավարտը՝ նույն պարբերականի № 973-ում (հոկտեմբերի 20): Գրախոսը բացասական է գնահատել Մելքիսեդեկ Մուրադյանի հիշյալ աշխատությունը:

Կրքոտ «Հերքողականով» Պոլսի «Մասիսում» (1873 թ. հոկտեմբերի 2) հանդես եկավ Մելքիսեդեկ Մուրադյանը, նրան էլ «Անիրավ պատմություն» անստորագիր հոդվածով պատասխանեց «Արշալույս արարատյանը» (1873 թ.

հոկտեմբերի 20, № 973)։ Բանավեճն ամփոփեց «Սիոն» ամսագիրը, 1873 թ. հոկտեմբերի համարում հրատարակված «Հերքումն քննադատության «Եկեղեցական պատմության» Մելքիսեթ Վ. Մուրադյանի» խորագիրը կրող հոդվածով (հատվածաբար արտատպել է «Արշալույս արարատյանը» 1873 թ. № 976, դեկտեմբերի 1), որտեղ եզրակացվում էր, որ «Հայաստանյայց Եկեղեցվույն հակառակ չէ Մելքիսեդեկ վարդապետի եկեղեցական պատմությունն»։

Սեպտեմբերի 23. «Մեղու» (№ 172) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ռոբերտյան վարժարան», «Բոնի կրոնափոխություն» և «Դրամական ընթացք ազգային ժողովո» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 350-354)։

Սեպտեմբերի 27. «Մշակը» (№ 37) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Տիրացուների կրթության դարը» և «Աղլայի» «Պարոն Կիրակոսյան կամ տզիտության ինքնահավանությունը» հրապարակախոսական հոդվածները։

Սեպտեմբերի 29. Մեղու» (№ 175) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Սեթյանի «Վարդ մի» բանաստեղծությունը և «Խայթված» երգիծապատումը (հեղ.՝ Հակոբ Պարոնյան ?)։ Հրատարակված է [Հակոբ Պարոնյանի] «Ազդարարություն» երգիծական ստեղծագործությունը։

Սեպտեմբերի 29. «Մեղու Հայաստանին» (№ 37) արևելահայերեն հրատարակում է Կարապետ Մատինյանցի «Հարությունի և Վարդիշաղի պսակը» վիպակը։ Ավարտ՝ № 39-ում (հոկտեմբերի 13)։

Հոկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 10) գրաբար սկսում է հրատարակել Աբել Մխիթարյանի «Արկածք Հայաստանի» պոեմը։ Ավարտը՝ հաջորդ համարում։ Արևելահայերեն սկսում է հրատարակվել Գաբրիել Պատկանյանի «Դաստիարակություն մարդկանց հայոց» գրական-մանկավարժական աշխատությունը, որը նույնպես ավարտվում է հաջորդ համարում։

Հոկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 10) արևմտահայերեն հրատարակում է «Ի Մինտոն, ղ» երգիծական բանաստեղծությունը։ Նկարագրված է Մինտոն անունով «մասխարա շնիկի» պախարակելի վարքն ու բարքը, արված են ժամանակի մտավորականների կյանքին առնչվող այլևայլ թափանցիկ ակնարկներ։

Հոկտեմբերի 3. Մալկարայում (Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, արձակագիր, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Արտաշես Հարությունի Հարությունյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. օգոստոսի 16-ին, Նիկոմեդիայում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Մանիշակ», «Ռիրվական», «Կարո», «Շահեն-Կարո» և «Պան» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1912, էջ 396-397, էջ 44, 1916-20, էջ 162: **Արտ. Հարությունյան**, Գիշերվան ձամփորդը (կազմեց Օն. Փանյան), Երևան, 1968, էջ 381:

Հոկտեմբերի 6. «Արշալույս արարատյանը» (№ 972) գրաբար հրատարակում է Սեդրակ Նազարյանցի «Գագիկ վերջին արքա Բագրատունեաց, ի բարձրագոյ ատենի կայսեր Յունաց, ի Բիւզանդիոն» և «Քաղաքն Անի» բանաստեղծությունները:

Հոկտեմբերի 6. «Մասիսը» (№ 1445) արևմտահայերեն հրատարակում է Ծերենցի «Ծերենց առ Խրիմյան Հայրիկ» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 9. «Մասիսը» (№ 1446) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Ջոիլյանց քաղաքականությունն և անոնց բերան եղող «Օրագրո» սարսափելի հակաությունները» հրապարակախոսական հոդվածը (հեղինակ՝ «Ք»), որն ավարտվում է նույն պարբերականի № 1450-ում (հոկտեմբերի 18):

Հոկտեմբերի 10. «Մեղուն» (№ 178) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Այցելություն մը ի Խասգյուղ» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 364-365):

Հոկտեմբերի 11. «Մասիսը» (№ 1447) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «... խմբագրապետ» գրախոսականը: Գրախոսը պաշտպանության տակ է վերցնում Մելքիսեդեկ Մուրադյանի «Պատմություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո» աշխատությունը «Հայրենիք» պարբերականի «երկարաձիգ ու խծբծագիր» հոդվածից, այս առիթով անդրադառնում է նաև քննադատության անկողմնակալության հետ առնչվող հարցերին:

Հոկտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 39) արևելահայերեն սկսում է հրատարակել «Վահագնի» «Ճանապարհորդություն Սյունյաց աշխարհում» ուղեգրության առաջին մասը: Երկրորդ մաս՝ № 42 (նոյեմբերի 3) և երրորդ մաս՝ № 45 (նոյեմբերի 24):

Հոկտեմբերի 13. «Մեղուն» (№ 179) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Որո՞ւն հավատանք», «Պապ առ Կիյոմ կայսր», «Խնդրույն բնությունը երազի կերպարանափոխյալ», «Հրաշք», «Խորհրդածությունք Մեղվի» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 366-375):

Հոկտեմբերի 18. «Մշակը» (№ 40) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Գիժը մի քար գցեց փոսը, հազար խելոքներ չկարողացան հանել» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 20. «Արշալույս արարատյանը» (№ 973) գրաբար հրատարակում է Կոստանդ Մելիք-Շահնազարյանցի «Առ լուսին ի մահ քաջին Վարդանայ», Թադեոս Աղամալյանցի «Վերջին հառաչանք Սմբատայ Ա., արքայի Բագրատունեաց» և Մարգարե Գրիգորյանի «Հրաւէր առ Հայկազն մանկտի, յայց ելանել զերեզմանին մեծին Սահակայ Հայրապետին հայոց» բանաստեղծությունները: Տպագրված է նաև «Խօսք ընդ Երասխ գետոյ» գրաբար անստորագիր ներբողը:

Հոկտեմբերի 20. «Մեղու Հայաստանին» (№ 40) արևելահայերեն հրատարակում է «Նետի» «Ինչ կանե «Մշակը» եթե... » հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 20. «Մեղուն» (№ 181) արևմտահայերեն հրատարակում է «Բելիարի» (իմա. Հակոբ Պարոնյան) «Բառեղծված» բանաստեղծությունը և «Ընտանեկան» երգիծապատումը: Հրատարակված են նաև [Հակոբ Պարոնյանի] «Աստված ակնահարութենե ազատ պահեսցե», «Ծանուցմունք» և «Քաբսուլ դը ռաքեն» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 379-382):

Հոկտեմբերի 23. «Մասիսը» (№ 1452) արևմտահայերեն հրատարակում է Բ. Վարդուկյանցի «Ամերիկացի միսիոնարք» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 24. «Մեղուն» արևմտահայերեն հրատարակում է Տ.Հ.-ի «Իղձք հայորդվույն» բանաստեղծությունը և «Երազի» (իմա. Հակոբ Պարոնյան) «Նոր մոտա մը և բարի լուր մը» երգիծապատումը: Հրատարակված են [Հակոբ Պարոնյանի] «Պազենի դատը» և «Զբոսանաց եղանակ» գրական էսսեները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 383-386):

Հոկտեմբերի 25. «Մշակը» (№ 41) արևմտահայերեն հրատարակում է ***-ի (Ստեփան Ղորղանյան ?) «Մատենագրություն» գրախոսականը: Գրախոսված է Ն. Տեր-

Ղևոնդյանի փոխադրությունը հանդիսացող «Մայրենն լեզու (Բ տարի)» դպրոցական դասագիրքը և գրական-մեթոդաբանական բնույթի մի քանի դիտողություններից հետո այն դրական է գնահատված:

Հոկտեմբերի 27. «Մեղուն» (№ 183) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Իրաց վիճակը», «Ընդհանուր ժողովո ընտրություն» և «Մեղուին հիվանդը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 387-394):

Հոկտեմբեր-դեկտեմբեր. «Բազմավեպը» գրաբար հրատարակում է Թովմաս Թերզյանի «Առ տիկնայս ողորմութիւն» բանաստեղծությունը, Էդուարդ Հյուրմյուզյանի «Թարգմանության վրա» արևմտահայերեն հոդվածը, Ավետիք Պատրիարքի «Գարնան տաղ» աշխարհաբար բանաստեղծությունը, որը հրատարակության էր պատրաստել Ղևոնդ Ալիշանը:

Հոկտեմբերի 30. «Մասիսը» (№ 1455) արևմտահայերեն սկսում է հրատարակել Կարապետ ՈՒթուջյանի «Առանց դատաստանի ներկա ազգային տագնապը չենք կրնար անցուցել» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Հերքումն քննադատության եկեղեցական պատմության Մելքիսեդեկ վարդապետ Մուրադյանցի» հոդվածը և Մեսրոպ Պոլսեցու «Մահարձան առաքինւոյ Մարիամիկ օրիորդի Թոզաթլյան...» գրաբար եղերերգությունը:

Նոյեմբերի 1. «Մշակը» (№ 42) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» (Գրիգոր Արծրունի) «Ֆելիետոնը»,, ուր ի թիվս այլ հարցերի, քննադատված է Գ. Քալանթարյանցի՝ «Тифлисский вестник» -ում տպագրված հոդվածը, որտեղ նա հայերին «ոչինչ արժանավորություն չէ ճանաչում, բայց լավ ուտելու հատկութենից», «Մեղու Հայաստանի», «Մասիս», «Փունջ» և «Օրագիր» պարբերականների գործունեությունը, որոնք «չբավականանալով միմյանց դեմ գրավոր պոլեմիկայով, միմյանց դատի կանչեցին»:

Նոյեմբերի 3. «Արշալույս արարատյանը» (№ 974) գրաբար հրատարակում է Արշակ Շիփյանցի «Մրմունջ Սմբատայ Խոստովանողին», Սամփսոն Աթաբեկյանցի «Իմ օրորոց», Հովհաննես Տեր-Մարտիրոսյանցի «Առուակ այգւոյ մերոյ» և

Համբարձում Մախմուրյանցի «Ի յարութիւն կենարար փրկչին մերոյ Յիսուսի» բանաստեղծությունները:

Նոյեմբերի 3. «Մասիսը» (№ 1457) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գ.Ս. Խապայանի «... խմբագիր» ընդդիմախոսականը, որն ավարտվում է հաջորդ համարում: Գրախոսը պաշտպանել է Մելքիսեդեկ Մուրադյանի «Պատմություն Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցվո» աշխատությունը «Հայրենիք» թերթում տպագրված միտումնավոր գրախոսականից:

Նոյեմբերի 3. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է Հ. Նազարյանցի «Նկատողական ուսում» գրախոսականը: Գրախոսված է Վասիլ Շահվերդյանի՝ վերոհիշյալ խորագիրը կրող դպրոցական ձեռնարկը, արված մանկավարժական-գրականագիտական բնույթի դիտողություններից հետո, այն դրական է գնահատված:

Նոյեմբերի 3. «Մեղուն» (№ 185) արևմտահայերեն հրատարակում է «Մեղուի» (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Մեղու առ տիկին» և [Հակոբ Պարոնյանի] «Ի ծունր», «Մամուլին հիվանդությունը» երգիծական մանրապատումները:

Նոյեմբերի 5. «Մշակը» Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Համալի» (Գաբրիել Սունդուկյան) «Շուբին ջվալումը չի թախ կենա» ֆելիետոնը (տե՛ս. **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1952, էջ 245-247):

Նոյեմբերի 7. «Մեղուն» (№ 186) արևմտահայերեն հրատարակում է «Մեղուի» (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Նամականի» երգիծական մանրապատման առաջին հատվածը: Երկրորդը՝ նույն պարբերականի հաջորդ համարում (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 175-179):

Նոյեմբերի 8. «Մշակը» (№ 44) արևելահայերեն հրատարակում է Սողոմոն Եղիազարյանցի «Գյուղական տիեզերագրություն» պատմվածքը:

Նոյեմբերի 10. «Մասիսը» (№ 1460) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Յուսուֆյանի «Տիկին Բեմպե Պալյան» նովել-դիմանկարը:

Նոյեմբերի 10. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 334) արևմտահայերեն հրատարակում է «Էշ և փող» առակը:

Նոյեմբերի 10. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Ֆելիետոնը», ուր վերլուծված է ժամանակի հասարակական-քաղաքական և գրական-մշակութային կյանքը:

Նոյեմբերի 10. Ախալցխայում ծնվեց պատմաբան-բանասեր, մատենագետ, գիտության վաստակավոր գործիչ (1935 թ.), ակադեմիկոս (1939 թ.) Հակոբ Համազասպի Մանանդյանը: Վախճ. 1952 թ. փետրվարի 4-ին Երևանում:

Բաբայան Լ.Հ., **Հակոբյան Վ. Ա.**, Հակոբ Մանանդյան, Երևան, 1974, էջ 179:

Նոյեմբերի 13. «Մասիսը» (№ 1461), Կարապետ ՈՒթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Մ.Է. Լեկուվեի «Դրամօժիտ (առտնեն տեսարան)» պատմվածքը: Ավարտ՝ № 1463-ում (նոյեմբերի 17):

Նոյեմբերի 13. Ախալցխայում ծնվեց բանասեր, աշխարհագրագետ Սուքիաս Էփրիկյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ՝ 1895 թ. ապրիլի 14-ից: 1910 (?) հրաժարվել է միաբանությունից: Վախճանվել է 1952 թ. մարտին, Միլանում:

«Մխիթարյան հոբելյան», Վենետիկ, 1901, էջ 226: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 342: **«Հայաստանի կոչնակ»**, 1952, № 12 («Մահ Սուքիաս Էփրիկյանի»):

Նոյեմբերի 15. «Մշակը» (№ 45) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Համալի» ֆելիետոնը՝ «Համալի մասլահաթը» վերնագրով (տե՛ս. **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1952, էջ 247-250):

Նոյեմբերի 17. «Արշալույս արարատյանը» (№ 975) գրաբար հրատարակում է Համբարձում Մախմուրյանցի «Ի ծնունդ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» և Հակոբ Օհանյանցի «Բարբառ Մուշեղայ, որդւոյ Սմբատայ Բագրատունւոյ ի փախստեանն սեւորդեաց ի պատերազմեն, որ ի Նիգ գավառի» բանաստեղծությունները:

Նոյեմբերի 17. «Մասիսը» (№ 1463) արևմտահայերեն սկսում է հրատարակել Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի «... խմբագիր «Մասիս» լրագրո» ընդդիմախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1471-ում (դեկտեմբերի 6): Գարագաշյանը պաշտպանում է իր «Համառոտ պատմություն սուրբ գրոց» աշխատությունը Հովհաննես Չամուռճյան-Տերոյենցի՝ «Հայրենիք» լրագրում հրատարակած

«զրաբան դատականից» Այս կապակցությամբ անդրադառնում է ժամանակի գրականության քննադատության մի քանի խնդիրների:

Նոյեմբերի 17. «Մեղու Հայաստանին» (№ 44) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Եվանգուլյանցի «Հարգո խմբագիր» նամակը և [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 17 նոյեմբերի» առաջնորդողը: Անդրադառնալով նամակագրի այն պնդմանը, որ «Մշակի» և «Մեղուի» մեջ ծնած տարաձայնությանց պատճառը էական, կարևոր խնդիրներ չեն, այլ մանր, ինքնասեր և ընտանեկան վեճեր մասնավոր անձանց մեջ», Սիմոնյանցը հերքում է «խորին ցավակցությանց արժան» այդ տեսակետը և թվարկում տարաձայնություն ծնող գրական-հասարակական բնույթի մի քանի պատճառներ:

Նոյեմբերի 22. «Մշակը» (№ 46) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Իզուր են ձեր բոլոր ջանքերը» հրապարակախոսական հոդվածը:

Նոյեմբերի 24. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 338) արևմտահայերեն հրատարակում է Սրապիոն Հեքիմյանի «Հայ թատրոն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 27. «Մասիսը» (№ 1467) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Վշտահար ամուսինն առ վաղամեռիկն Նազելի» եղերերգությունը:

Նոյեմբերի 28. «Մեղուն» (№ 189) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Մոլորակներուն տարեդարձը» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 403-405):

Նոյեմբերի 29. «Մշակը» (№ 47) արևելահայերեն հրատարակում է «Գ.ՌԻ.»-ի (Գրիգոր Արծրունի) «ՌԻրիշի աչքումը փուշ եք տեսնում, իսկ ձեր աչքի մեջ գերանն էլ չեք նկատում» հրապարակախոսական հոդվածը և «Աբտաձանի» «Բառարան ի ռուսաց լեզուէ ի հայ» աշխատասիրեալ ի Գաբրիելէ Երեցփոխեանց» խորագիրը կրող գրախոսականը:

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է «Ազգին արդի վիճակը» հրապարակախոսական առաջնորդողը:

Դեկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Գ տարի, № 12) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Զմյուռնիո հայոց հուզմունքը» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 1. «Մեղու Հայաստանի» (№ 46) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Բաս ո՞վ է» ֆելիետոնը: «Մելիքզադեի», «Համալի», «Խմբագրի» (Պետրոս Սիմոնյանց) միջև ծավալվող վեճի միջոցով վերլուծված է ժամանակի գրական-հասարակական կյանքը: «Թիֆլիզ, դեկտեմբերի 1-ին» խմբագրականում (հեղ.՝ [Պետրոս Սիմոնյանց]) բնութագրված են «ազգ», «ժողովուրդ» հասկացությունները, այդ առիթով քննադատված են «Մշակն» ու մանավանդ Գրիգոր Արծրունին:

Դեկտեմբեր. Թիֆլիսում Հարություն Շամշինյանի, Գևորգ Բաշինջաղյանի, Դ. Օքրոյանի և Հմայակ Հակոբյանի ջանքերով իր գոյությունն է սկսում «Գեղարվեստը խրախուսող Կովկասյան ընկերություն» մշակութային կազմակերպությունը: Ընկերությունը Կովկասի զանազան քաղաքներում կազմակերպել է համերգներ, կերպարվեստի ցուցահանդեսներ, գրական-գեղարվեստական երեկոներ: «Գեղարվեստը խրախուսող Կովկասյան ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1921 թ. փետրվարը:

Սարգսյան Մ., Հայկական և ռուսական գեղարվեստի կապերը 19-20-րդ դարերում, Երևան, 1953, էջ 65-140:

Դեկտեմբերի 1. Մոսկվայում ծնվեց գրականագետ, թարգմանիչ (հայերենից՝ ռուսերեն), հայ գրականության և մշակույթի պրոպագանդիստ, Հայաստանի ժողովրդական բանաստեղծ (1929) Վալերի Յակովլի Բրյուսովը: Վախճ. 1924 թ. հոկտեմբերի 9-ին:

Տերտերյան Ա., Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան, Երևան, 1944, էջ 171: Григорьян К., Валерий Брюсов и армянская поэзия, Москва, 1962, стр. 134, **Մարգարյան Ա.**, Վալերի Բրյուսով, Երևան, 1963, էջ 42:

Դեկտեմբերի 3. Մունճուսուն գյուղում (Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Հովհաննես Ասլանյանը:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո (հատոր Ա), Կահիրե, 1937, էջ 1184-1185:

Դեկտեմբերի 5. «Մեղուն» (№ 191) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թատրոն արևելյան» և «Վերջին մոտա» երգիծապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 406-413):

Դեկտեմբերի 6. «Մշակը» (№ 48) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Թատրոնական խնդիր» խմբագրական առաջնորդողը:

Դեկտեմբերի 8. «Մասիսը» (№ 1472), գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ և Կարապետ Ռ-Իթուջյանի՝ համապատասխան դրվատական նախաբանով, հրատարակում է Ա.Տ. Մորթմանի «Հայոց հին Տիգրանակերտ մայրաքաղաքին դրից վրա» պատմա-բանասիրական ուսումնասիրությունը:

Դեկտեմբերի 12. «Մեղուն» (№ 193) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] «Հայհոյիչ զվարճախոսը» երգիծապատումը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 414-419):

Դեկտեմբերի 13. «Մշակը» (№ 49) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ներսիսյան դպրոց» հրապարակախոսական հոդվածը և «Մելիքզադեի» «Մի քանի գծեր Խրիմյանի կյանքից» գրական դիմանկարը:

Դեկտեմբերի 15. «Արշալույս արարատյանը» (№ 977) գրաբար սկսում է հրատարակել Մսեր Մսերյանցի ինքնակենսագրությունը «Վէպ Մսուրայ, յիւրմէ գրեալ ի 1831 ամի ի Տփղիս» խորագրով, որին նախորդում է Զարմայր Մսերյանցի՝ հոր կյանքն ու գործունեությունը բնութագրող ներածականը: Ավարտ՝ նույն պարբերականի №979-ում (1874 թ. հունվարի 12):

Դեկտեմբերի 15. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 15-ը դեկտեմբերի» հրապարակախոսական առաջնորդողը (ներկայացված է վերջին քսան տարում հայկական գրական-մշակութային կյանքի զարգացման ընթացքը, քննադատված է «Մշակը»): Սկսում է հրատարակվել Հ. Նազարյանցի «Էրեխա ա, իր էրեխությունը կանի» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Դեկտեմբերի 15. «Մեղուն» (№ 194) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խոսակցություն մը» և «Մեղուին խափանումը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 180-181, հ. 8, էջ 419-420):

Դեկտեմբերի 20. «Մշակը» (№ 50) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ո՞վ է եկեղեցու պաշտպան» հրապարակախոսական առաջնորդողը և «Վանո»-ի (Միհրդատ Ամրակյան) «Ֆելիետոնը»:

Դեկտեմբերի 22. Մեղու Հայաստանին» (№ 49) արևելահայերեն հրատարակում է Հ. Նազարյանցի «Մայրենի լեզու, երկրորդ տարի, 1873 թ.» գրախոսականը:

Գրախոսված է Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի՝ հիշյալ խորագիրը կրող դասագիրքը, որը մի քանի դիտողություններից հետո, դրական է գնահատված:

Դեկտեմբերի 22. «Մեղուն» (№ 196) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Զույգ մը ... էր» (իմա՛. էշեր-Ս.Շ.) երգիծապատումը (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 424-427):

Դեկտեմբերի 26. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 347) արևմտահայերեն սկսում է հրատարակել Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի «Հարգո խմբագիր «Մամուլ» հանդիսի» տեսական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի 1874 թ. № 350-ում (հունվարի 5):

Դեկտեմբերի 27. «Մշակը» (№ 51) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» «Ֆելիետոնը»:

Դեկտեմբերի 29. «Մեղուն» (№ 198) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Տարօրինակ հարս մը», «Հոս չէ, դուրս իկավ» և «Օրացույց մեղուի» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ.Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 182, հ. 8, էջ 428-430):

–––Պոլսում (Գատը-Գյուղ) Մատթևոս և Աբիկ ՌԻնճյանների նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Արամյան» երկսեռ վարժարանը (որոշ ժամանակ՝ «Արամյան-ՌԻնճյան»): Այստեղ են դասավանդել Խաչատուր «պուետ» Միսաքյանը, Հովհաննես Սեթյանը, Միհրան Ասքանազը, Նազարեթ Տաղավարյանը, Ռեթևոս Պերպերյանը: Դպրոցը գոյություն ունի առ այսօր: 1955 թ. ուներ 11 ուսուցիչ, 264 աշակերտ: Տնօրենն էր Վահրամ Պուրմանյանը:

«Հայաստանի կոչնակ», 1927, № 22 («Հայ կյանքը Թուրքիո մեջ»), 1955, № 19 («Պոլսո հայ վարժարանները»), **«Հանդես ամսօրյա»**, 1936, № 7-9 («Ծանոթություններ Ստամպոլո պատմության»):

–––Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, խմբագիր Վաղարշակ Գալփակճյանը: Վախճ. 1923 թ. հունվարի 29-ին Մարսելում:

1909 թ. Պոլսում խմբագրել է «Գարուն» շաբաթաթերթը, 1919-20 թթ.՝ «Նոր այգ» պարբերաթերթը, 1909-1919 թթ.՝ «Ժամանակ» օրաթերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1925, էջ 371: **«Տարեցույց ազգային հիվանդանոցի»**, Պոլիս, 1924, էջ 170: **«Վերջին լուր»**, 1923, փետրվարի 12, № 2721 («Մահագույժ»):

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ Հայկ Օգսենի Խոճասարյանը: Վախճ. 1936 թ. նոյեմբերի 11-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1936, № 47 («Հայկ Խոճասարյան», «Հայկ Խոճասարյանի մահը»), № 48 («Հայկ Խոճասարյան»), № 50 («Հայկ Խոճասարյան» առաջնորդողը)

–––Էրզրումում (նաև Կարին, Արևելյան Թուրքիա) ծնվեց բանաստեղծ Միհրան Մամիկոնյանը: Վախճ. 1929 թ. Պոլսում:

«Կյանք և արվեստ» (Տարեգիրք), Փարիզ, 1932, էջ 52-53:

–––Վանում (Արևելյան Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, հասարակական կյանքի տեսաբան Ավետիս Թերզիբաշյանը: Վախճ. 1947 թ. մարտի 31-ին Փարիզում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Աթոս» կեղծանունով:

«Հայաստանի կոչնակ», 1947, № 18 («Ա. Թերզիբաշյանի մահը»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 359:

–––Վանում ծնվեց կուսակցական և մշակութային գործիչ, լրագրող Հակոբ Ավետիսյանը (Արծրունի): Եղեռնամահ՝ 1915 թ.:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 327:

–––Ռոդոստոյում (Ռումինիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (հայերենից՝ թուրքերեն) Սարգիս Սրենցը: Վախճ. 1955 թ. հուլիսի 19-ին Բուխարեստում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ծերուկը» կեղծանունով:

«Հայաստանի կոչնակ», 1955, № 41 («Սարգիս Սրենցի մահը»): **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, , էջ 218-220, 570:

–––Սեբաստիայում ծնվեց գրական-մշակութային գործիչ, արձակագիր Միհրան Իսպիրյանը: Վախճ. 1915 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վրույր», «Էսփերո», «Նարիմ», «Պուետ», «Մուշեղ» և «Տորք» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 264: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 20:

–––Ռեշտ քաղաքում (Պարսկաստան) ծնվեց հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով), թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Սեդրակ Կարապետի Ավետյանը: Վախճ. 1949 թ. Երևանում:

«Հայ մշակույթի օրրանը» («Ներսիսյանցիների հուշերը»), Երևան, 1971, էջ 83-87:

–––Բալուում (Արևելյան Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Արշակ Գաբրիելի Մահտեսյանը (նաև՝ Տեր-Մահտեսյան): Վախճ. 1950 թ. մայիսին Ֆրեզնոյում (ԱՄՆ, Կալիֆորնիայի նահանգ):

1905-1906 թթ. և 1908 թ. Բոստոնում հիմնել և խմբագրել է «Արծիվ» կիսամսյա պարբերականը, 1918 (?) թ. Նյու Յորքում՝ «Ազատ» կիսամսյա հանդեսը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ա.Տ.», «Ատել», «Արշակ», «Արցունք» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 288-289: **«Հայաստանի կոչնակ»**, 1950, № 18 («Արշակ Մահտեսյանի մահը»):**Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 274:

–––Տրապիզոնում ծնվեց ճարտարապետ, լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), բանասեր, բանաստեղծ Լևոն Կյուրեղյանը: Վախճ. 1950 թ. սեպտեմբերի 2-ին Ազոլոյում (Հյուսիսային Իտալիա):

«Բազմավեպ», 1950, № 11-12 («Մահ պրոֆ. Լևոն Կյուրեղյանի»): **«Հայաստանի կոչնակ»**, 1951, №7 («Մահ պրոֆ. Լևոն Կյուրեղյանի»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 115:

–––Ալեքսանդրապոլում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, լրագրող, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Հովհաննես Ալեքսանի Արաբաջյանը: Վախճ. 1918 թ.:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 137:

–––Չենկիլերում (Յալովա, Արևմտյան Թուրքիա) ծնվեց հասարակական կյանքի տեսաբան, խմբագիր Սարգիս Մինասյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

1903-1905 թթ. Բոստոնում խմբագրել է «Հայրենիք» թերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Արամ-Աշոտ» կեղծանունով:

Ալպոյաճյան Ա., Պատմության հայ Կեսարիո (հ. Ա), էջ 1216-1217: **Թեոդիկ**, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 31-32:

–––Աղաբազարում (Արևմտյան Թուրքիա) ծնվեց լրագրող, խմբագիր, հրապարակախոս, բանաստեղծ, թարգմանիչ Անդրանիկ Գյոնճյանը: Վախճ. 1957 թ. Բեյրութում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Դրանիկ», «Ներսեհ», «Զգայնիկ», «Աղաբազարցի» կեղծանուններով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 106:

–––Մարատչայ գյուղում (Արևելյան Թուրքիա) ծնվեց հոգևորական-մշակութային գործիչ, լրագրող, խմբագիր Վարդան եպիսկոպոս Գասպարյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1892 թ.: Վախճ. ?:

«Ֆրեզնոյի մեջ պաշտոնավարության օրերուն (իմա. 1912-33 թթ.-Ս.Շ.) միջոց ունեցած է հրատարակելու ամսաթերթիկ մը «Էջմիածին» անունով, որ 13 թիվ հրատարակվելէ հետո դադրած է տպագրիչ Հայկակ Էկինյանի մահով»:

«Միոն», 1948, № 9-10 («Հոբելյաններ», «Առաջնորդարան հայոց Կալիֆորնիո»):

–––Էվերեկ գյուղում (Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց մշակութային գործիչ, լրագրող, բանաստեղծ, արձակագիր Հմայակ Ասատուրի Ոխդուրյանը:

Ալպոյաճյան Ա., Պատմության հայ Կեսարիո (հ. Ա), էջ 1223-1225:

–––Թիֆլիսում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), հասարակական կյանքի տեսաբան Գևորգ Մելիք-Կարագյոզյանը:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 325:

–––Ղզլարում (այժմ՝ Դաղստանի ԻԽՍՀ) ծնվեց երաժշտագետ, լրագրող Ռուբեն Ղորդանյանը: Վախճ. 1915 թ. Թիֆլիսում:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 251:

–––Նոր Նախիջևանում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, գրականագետ-բանասեր (հայերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզուներով) Ռուբեն Հովհաննեսի Բերբերյանը: Վախճ. 1942 թ. Փարիզում:

1918 թ. Նոր Նախիջևանում Երվանդ Շահազիզի հետ հիմնել և մինչև 1919 թ. խմբագրել է «Հայ համայնք» շաբաթաթերթը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 394, 917 (հավելված):

–––Նոր Նախիջևանում ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), լրագրող Վոնոփրիոս Հակոբի Անոփյանը: Վախճ. 1934 թ. փետրվարի 10-ին Սիմֆերոպոլում:

«Գրական թերթ», 1934, № 7 («Վոնոփրիոս Անոփյան»):

–––Ծնվեց բանասեր, լրագրող, մշակութային գործիչ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն) Լևոն Դավթի Դանիելյանը: Վախճ. 1961 թ. հունիսի 15-ին Երևանում:

«Երևան», 1961, № 140 (հունիսի 16): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 276:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Վիտտորիո Ալֆիերիի «Ողբերգութիւն ի Մերոպէ» գիրքը:

–––Վենետիկում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Նիկողայոս Չիքիի «Նոր այբբենարան Տրանսիլվանիո տղոց համար» դպրոցական դասագիրքը: 36 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1887 թ.:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Թորոսյանի «Ընտիր Հայկազունք» արձակ գեղարվեստական ստեղծագործությունը: 320 էջ:

Նույնը՝ 1891, 1902, 1941 թթ, ամեն անգամ փոփոխումներով ու լրացումներով:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Մարի-Սոֆի Կոտենի (թարգմանության վրա նշված է «Գոթեն») «Աքսորականք ի Սիպերիա» վեպը: 140 էջ:

Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպի» 1873 թ. հուլիս-սեպտեմբեր ամսատետրակից (№ 3) մինչև 1874 թ. հուլիս-սեպտեմբերյան (№ 3) ամսատետրակը:

–––Վենետիկում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Թովմաս Թերզյանի «Գործնական քերականություն ֆրանսերեն լեզվի Անի ոճով» աշխատության Ա. մասը («Ոխումն պարզ շարադրության»): 126 էջ:

Նույնը՝ 1879 թ. (128 էջ), 1882 թ. (173 էջ), 1886 թ. (173) էջ, 1891 թ. (173 էջ), 1899 թ. (181 էջ) և 1910 թ. (197 էջ)՝ ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:

Բ. մաս («Հրահանգք»)՝ 1882 թ., 98 էջ:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է Ղազար Փարպեցու «Պատմութիւն հայոց»-ը և «Մեղադրութիւն ստախօս աբեղայից» թուղթը: Բնագրագիտական աշխատանքները, գրաբար առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Ղևոնդ Ալիշանի: 639 էջ:

–––Վենետիկում, Մխիթարյան հայրերի՝ բնագրերից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է եվրոպական անտիկ և նոր շրջանի դասականների

գործերի ժողովածվի Ա հատորը, «Ծաղկաքաղ հատուածք յօտարազգի մատենագրաց» վերնագրով (արձակ), 495 էջ:

Նույնը՝ 1887 թ., «Կրկին բաղդատեալ և ուղղագրեալ խնամօք ընդ բնագրացի», 535 էջ:

Բ հատոր («Քերթուածք»), 1880 թ., 488 էջ: Նույն տարին ունեցել է նաև երկրորդ հրատարակությունը:

Առաջին հատորում զետեղված են ստեղծագործություններ Ֆենելոնից, Շատոբրիանից, Պլուտարքոսից, Լամարթինից, Շիլլերից, Տակիտոսից, Հուլիոս Կեսարից, Ցիցերոնից, Մասիլիոնից, Ռոլենից, Դեմոսթենեսից, Սենեկայից և ուրիշներից: **Երկրորդ** հատորում զետեղված են չափածո ստեղծագործություններ Պետրարկայից, Կոռնելից, Տասսոյից, Եվրիպիդեսից, Լամարթինից, Լաֆոնտենից, Գյոթեից, Հայնեից, Հյուգոյից, Միլտոնից, Շիլլերից, Բայրոնից, Ռասինից, Վոլտերից, Դանտեից, Կռիլովից և ուրիշներից:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագա յուր» աշխատությունը: 538 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1872 թ. հունվարից:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբոս Իսավերտենցի «Լճակիս ձկնորսը (երեկոյան ժամուց խորհրդածությունք)» վիպակը: 118 էջ: Հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», 1872 թ. սեպտեմբերից (№ 8) մինչև դեկտեմբեր (№ 12) և մնում է անավարտ:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է Ներսես Շնորհալու ստեղծագործությունների ժողովածուն «Ներսէս Շնորհալւոյ Հայոց Կաթողիկոսի թուղթք» խորագրով: 331 էջ:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Վիչենցո Մոնտիի «Ողբերգութիւն յԱրիստոդեմ» ստեղծագործությունը: 72 էջ:

–––Վենետիկում, Համազասպ Թերճիմանյանի՝ իտալերենից կատարած արևմտահայերեն ազատ թարգմանությամբ, հրատարակվում է «Խորհրդական խոստովանություն» աշխատությունը: 195 էջ:

–––Վենետիկում, Օգսենտինիոս Գուրգենյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է լորդ Չեստըրֆիլդի «Խրատք առ որդին յուր» աշխատությունը: 214 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Գաթըրճյանի «Իրավախոհի կեղծիք և իրաց ճշմարտությունք ի բանի վարդապետության և պատմության» աշխատությունը: 164 էջ:

Հեղինակը բանավիճում է Հովհաննես Պրուսացի Տերոյենց-Չամուռճյանի «Իրավախոհ» աշխատության կապակցությամբ (Պոլիս, 1868 թ., տես ներկա հատորը, այդ թվականը) և այդ առթիվ անդրադառնում է հայագիտական և կրոնա-բանասիրական բնույթի մի շարք հարցերի:

–––Մոսկվայում, Հարություն քահանա Կյոկչյանցի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է «Գասպարեան աղքատանոց, վասն հայազգի տնանկաց և Մոսկուա» գրքույկը: 23 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Սիմեոն Ա. Կաթողիկոս Երևանցու «Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս, և իւրոյ շրջակայից վանօրէիցն» (ավելի հայտնի «Ջամբռ» անունով, որը ֆրանսիական «շամբռ» (իմա. սենյակ, chambre) բառի աղճատված արտասանությունն է) աշխատությունը: 304 էջ:

–––Վաղարշապատում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփաննոս Մխիթարյանցի «Ստորագրություն հռչակավոր մեծ ուխտին Այրի վանաց սրբոյն Գեղարդա (հանդերձ պատմական ծանոթությամբք)» աշխատությունը: 124 էջ: Այն հրատարակության է պատրաստել (բնագրի ճշտում, առաջաբան և ծանոթագրություններ) Աբգար Գուլամիրյանցը:

–––Վաղարշապատում աշխարհաբար հրատարակվում է Պետերբուրգի հայ ուսանողների համատեղ հեղինակություն հանդիսացող «Դասագիրք բաղդատական աշխարհագրության (Ասիայի, Աֆրիկեյի, Ամերիկայի և Ավստրալիայի բնական, տոհմական և քաղաքական նկարագրությունը)» աշխատությունը: 264 էջ: Քանի որ այն հանդիսանում է Պետերբուրգի հայ ուսանողների հրատարակած հերթական՝ չորրորդ գիրքը, այդ պատճառով էլ ունի «Դ» նշումը:

–––Վաղարշապատում, Ղազարոս Աղայանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Սկզբնական բացատրություն բնական երևույթից» ձեռնարկը: 140 էջ: Հատվածաբար հրատարակվում էր Էջմիածնի «Արարատում», 1872 թ. № 11-ից (նոյեմբերի 30) մինչև 1873 թ. № 5-ը (մայիսի 31):

–––Վաղարշապատում, Համբարձում Առաքելյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի ծանոթագրություններով, հրատարակվում է Սամսոն Շոեյլի «Պատմություն խաչակրության և թագավորության Երուսաղեմի» աշխատությունը: 259 էջ:

–––Պոլսում, Կարապետ Ռ֊Իթուջյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժոզեֆ Կառնիեի «Սկզբունք քաղաքական տեսության» աշխատությունը: 584 էջ:

–––Պոլսում, Գաբրիել Գրասերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ա. Տըպեի «Բնական պատմություն առն և կնոջ» աշխատությունը: 175 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գևորգ Ասլանյանի «Նոր աշխարհագրություն ի պետս ազգային վարժարանաց» դասագիրքը: 421 էջ:

Նույնը՝ 1886 թ. (351 էջ) և 1890 թ. (416 էջ), ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով:

–––Պոլսում, Կ.Ա. Պարոնյանի սատարմամբ, հրատարակվում է «Երգարան թատերական, ազգային և սիրահարական, կամ քնար հայկական» ժողովածուն: 160 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1874 թ., 159 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հակոբ Արշավիրի (նաև՝ Հակոբ Արշավիրի Աճեմյան) «Գաղտնիք երջանկության կամ լուսատու երիտասարդաց և ընտանյաց» աշխատությունը: 89+Է էջ:

Նույնն անփոփոխ՝ նույն թվականին:

Վերջում զետեղված է նույն հեղինակի «Ի մահ Զարեհի Ստեփանեան Պրուսացւո յիշատակք» գրաբար մահախոսականը:

–––Պոլսում, Հակոբ Չրաքյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Վարդենին կամ հիշատակ երախտագիտության» վեպը:

–––Պոլսում, Նահապետ Ռուսինյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Ռիյ Պլաս» (իմա՛. «Ժյուլ Բլյազ») եղերերգությունը:

Սկզբում զետեղված է Նահապետ Ռուսինյանի և Վիկտոր Հյուգոյի նամակագրությունը թարգմանության հետ առնչվող մի քանի հարցերի մասին: Վերջում «Իղձք թարգմանչին» խորագիրը կրող «ավարտաբանականում» Ռուսինյանն անդրադարձել է հայոց կյանքում թատրոնի կատարած բարերար դերին, ապա քննել է գրաբար-աշխարհաբարի խնդիրը, անվերապահորեն առաջնությունը տալով աշխարհաբարին, քանզի նրա շնորհիվ է, որ ստեղծվելու է «ժողովրդային գրականություն մը»:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Խորեն Նար-Պեյի «Նախակրթարան ֆրանսերեն լեզվի» դասագիրքը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Բացատրություն հրաժարագրի ազգային քաղաքական ժողովո կենտրոնական վարչության առ ազգային ընդհանուր ժողովն» գրքույկը: 36 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հ.Ռ.Վ.Մ.-ի (Հայր Ռափայել վարդապետ Միասերյան) «Քանի մի խոսք «Ակնարկություն» տետրակին անանուն հեղինակին դեմ» գրքույկը: 16 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անդեաս Վ.-ի «Վեր[ապատվելի] Միասերյանի «Քանի մի խոսք» անունով տետրակին քննությունը և հերքումը» աշխատությունը: 120 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Անտոն-Մաղաթիա Գարագաշյանի «Փոքրիկ քարտուղար կամ կանոնք նամակագրության և այլևայլ նյութոց վրա նամակի օրինակներ» աշխատությունը: 312 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Շիշմանյանի «Եվրոպական քաղաքականության՝ ներկա ժամանակներուս հայ ազգին վրա ըրած ազդեցությունը» գրքույկը: 24 էջ:

Գրքույկը սկսվում է Տիգրան Յուսուֆյանի առաջաբանով, որտեղ նա ներկայացնում է նույն՝ 1873 թ. Պոլսի Օրթագյուղ թաղամասում հիմնված «Ազգային լսարանի» պատմությունը, նրա դերն ու նշանակությունը, խնդիրներն ու անելիքները առաջիկայում:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Յնորք և երևակայությունք դոքտոր Շիշմանյանի ի Ազգային լսարանի Օրթագյուղ» ընդդիմախոսականը (հեղ. «Ազգասեր հայ մը»): 23 էջ:

Կրոնա-դավանաբանական գաղափարաբանության տեսանկյունից վերլուծված և բացասաբար է գնահատված Ծերենցի «Եվրոպական քաղաքակրթության՝ ներկա ժամանակներուս հայ ազգին վրա ըրած ազդեցությունը» գրքույկը (տե՛ս վերևում):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մարուքե Հովսեփյանի «Ուղղացույց սխալացույցի 1873 ամին» գրքույկը: 16 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիազար Մուրադյանցի «Համառոտ քերականություն հայերեն լեզվի տեսական և գործնական, ի պետս նախնական դասուց» աշխատությունը: 143 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է «Ճառ յաղագս բնիկ և համարիւն գործակալութեան» գրքույկը: 31 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Կարապետ Ղազարոսյանի «Տիեզերական տարեցույց վասն 1873 թվականին Քրիստոսի» աշխատությունը: 84 էջ:

Նույնը՝ 1879 թ., ընդարձակ, 264 էջ:

–––Պոլսում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, հրատարակվում է «Հենրիկոս և անոր բարեկամները կամ երկնից ճամբան» վեպը: 202 էջ:

–––Պոլսում, Ք.Մ. Առանձարի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, վերահրատարակվում է «Դաստիարակ մանկանց կամ ընթերցարան ի պետս դպրոցաց» դասագիրքը: 128 էջ: Առաջին հրատարակության վերաբերյալ մանրամասնություններ գտնել չենք կարողացել:

–––Պոլսում, Հ.Գ. Գալֆաճյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ընտիր խորհրդածությունք երևելի հեղինակաց» ժողովածուն: 48 էջ:

–––Պոլսում, Աբրահամ Մուրադյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Գ. Դանիելի «Պազեն մարաջախտին դատաստանը» հուշագրական ստեղծագործության Ա հատորը: 515 էջ: Թարգմանությունը հետագայում շարունակել և ավարտել է Կարապետ Պաղճյանը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պողոս Նաթանյանի «Տեղեկագրություն ընդհանուր վիճակին Գաղատիո» աշխատությունը: 78 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Նշան Մ. Շիշմանյանի «Նոր քերականություն գաղղիերեն, որո մեջ կպարունակի գաղղիերեն լեզվո ամենահարկավոր կանոններն, հանդերձ իրենց հրահանգներով» աշխատությունը: 200 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գերասիմ Պաղտասարյանի «Աշնան տերևներ կամ հետևանք գիճության և դարմանք նոցին» գրքույկը: 78 էջ:

–––Պոլսում, Ե. Բաղդասարյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մերի Սուիֆթի «Բարեկամ մանկանց կամ մանր ուսմունք բնագիտության» գրքույկը: 68 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տիրան Փափազյանի «Խասգյուղի քնաշրջիկը կամ սիրո զոհը» վիպակի Ա տետրը: Բ-Է տետրեր՝ նույն թվականին, 286 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է «Պարտէզ հոգեւոր» ժողովածուն: 358 էջ:

Ի թիվս կրոնական բովանդակության այլևայլ աղոթքների, վերջում զետեղված է չորս գլուխ (ԻԸ, Ղ, ՂԱ, ՂԵ) Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմից:

–––Պոլսում, «Մ. Սահակյան վարժարանի սաներեն միույն» ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Չերվանտեսի (Միգել

Սերվանտես) «Դոն Կիխոտ» վիպասանության Ա տետրը: Բ տետր, նույն թվականին:

Այս հրատարակության մասին վկայում է Կ.ՌԻթուջյանի «Մասիսը» (1873 թ. №1471, «Հրատարակություննք») և նրա հետևությամբ՝ Գարեգին Զարբհանալյանը («Հայկական մատենագիտություն», 1883, էջ 685), որն ի դեպ, վիպասանության հրատարակության տարեթիվը սխալմամբ դնում է 1874: Կարողացանք պարզել միայն, որ «Դոն Կիխոտը» հրատարակվել է մինչև 7-րդ տետրը ներառյալ, որը լույս է տեսել 1874 թ. սկզբներին («Մամուլ», 1874, № 351, «Ազդ»):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Գեր[ապատիվ] Գազանճյանին հանած տետրակին վրա ակնարկություն մը» աշխատությունը: 32 էջ:

Գրքի հեղինակն իրեն անվանում է «Կաթոլիկ հայ մը», որով, ինչպես հայտնի է, ստորագրում էր Անդրեաս Վ.-ն: Գիրքն ուղղված է Սուքիաս Գազանճյանի «Վերջնական պատասխան Արևելյայց առ արևմտյայս» (Պոլիս, 1872: Տե՛ս ներկա հատորը այդ թվականը) աշխատության դեմ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Յուսուֆյանի «Առաջադիմություն» գրքույկը: 47 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Դյումա-հոր «Պրաժլոն դերկոմս» վեպի Ա հատորը: 221 էջ:

Բ (207 էջ), Գ (218 էջ), Դ (202 էջ) հատորներ անդ, նույն թվականին:

Ե (201 էջ), Զ (220 էջ), Է (211 էջ), Ը (207 էջ), Թ (229 էջ), Ժ (214 էջ), ԺԱ (199 էջ) և ԺԲ (203 էջ) հատորներ անդ, 1874 թ.:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Չիլինկիրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ալֆրեդ Մյուսեի «Դարուս մեկ զավակին խոստովանանքը» վեպի Ա հատորը: 165 էջ:

Բ հատոր, անդ, նույն թվականին, 135 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Մսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Օգտավ Ֆեոյեի «Աղքատ երիտասարդի մը վեպը» գիրքը: 172 էջ:

–––Թեոդոսիայում արևելահայերեն հրատարակվում է Հովակիմ Գեղամյանի երկու արձակ ստեղծագործություններ պարունակող գիրքը: Զետեղված են «Զենիաթ-Ղենիաթ» դրաման և «Մեռնեմ իրեն, խոստցեր եմ (նվեր Ախալցխայի օրիորդներին)» վոդևիլը: 78 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ալեքսանդր Քիշմիշյանցի «Մշակ (պատկեր)» պատմվածքը: 12 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Վասիլ Շահվերդյանի «Նկատողական ուսում» մանկավարժական-մեթոդական ձեռնարկը: 176 էջ: Վերջում զետեղված են մեր պատմիչների գործերից վերցրած և երեխաների ընթերցանության համար հարմարեցրած 33 հատվածներ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ալեքսանդր Խուդյանցի կազմած հայկական ժողովրդական երգերի ժողովածուն «Մուզայք Հայաստանի, նոր երգարան» խորագրով: 144 էջ:

Զետեղված են հարյուր չափածո ստեղծագործություններ, որոնց թվում ստեղծագործություններ Հ. Սվաճյանից, Ալ. Արարատյանից, Ս. Շահազիզից, Ռ. Պատկանյանից, Ք. Պատկանյանից, Ղ Ալիշանից, Մ. Թաղիադյանից, Գ. Դոդոխյանից, Մ. Պեշիկթաշլյանից և ուրիշներից:

–––Թիֆլիսում, Ա. Նահապետյանի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էրնեստ Բյոմեի «Մանկավարժական նամակներ» աշխատությունը: 199 էջ:

–––Թիֆլիսում, Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Մեծ մարդերի պատմություններ միջին և նոր դարերում» աշխատությունը: 258 էջ:

–––Թիֆլիսում, Գևորգ Բարխուդարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած աշխարհաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրիդրիխ Շիլլերի «Վիլհելմ Տելլ» դրաման: 208 էջ:

–––Արմաշում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վլադիմիր Գյոտեի «Պարապություն հերձվածող, կամ Հռովմ ի հարաբերության ընդ արևելյան եկեղեցիս» ուսումնասիրությունը: Չնայած գիրքն ունի «Հատոր Ա» նշումը, բայց հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Վանում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Ամիրջանյանի «Մրմունջք» ողբերգությունը: 13 էջ:

–––Վանում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Ամիրջանյանի «Ռհսյալ պանդուխտ» պատմական ողբերգությունը: 65 էջ:

Նույնը՝ Խորեն Տեր-Հովհաննիսյանի համառոտությամբ, Թիֆլիս, 1903, 40 էջ:

–––Լեյպցիգում աշխարհաբար հրատարակվում է Միքայել Միանսարյանի «Հայկական կանոնավոր և վայելուչ գրություն» աշխատությունը: 56 էջ:

–––Հռոմում լատիներեն և գրաբար համատեղ տեքստերով հրատարակվում է Պիոս IX պապի՝ հայ հանրությանն ուղղված կոնդակը՝ «Թուղթ շրջաբերական առ պատրիարքն, արքեպիսկոպոսունս, առ կղերն և ժողովուրդն հայածէս, որ ի շնորհս և ի հաղորդութեան առաքելական աթոռոյ են» խորագրով: 71 էջ:

–––Երուսաղեմում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, վերահրատարակվում է Տեր-Գրիգոր[յան] Ղ.-ի «Գիրք խոսակցության ի տաճկերենե ի հայ» աշխատությունը: 80 էջ

Երրորդ հրատարակությունը՝ անդ, 1882 թ., անփոփոխ:

Առաջին հրատարակության վերաբերյալ մանրամասնություններ ճշտել չենք կարողացել:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Մամբրե վարդապետ Մարկոսյանի «Ամեն մարդոց բարեկամ (խոսք առողջական)» աշխատությունը: 192 էջ:

–––Երուսաղեմում, Աստվածատուր Տեր-Հովհաննեսյանցի՝ թուրքերեն (տաճկերեն) բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Արապշահ Աhմեդի «Պատմություն Լենկ-Թիմուրա» աշխատությունը: 286 էջ:

1 8 7 4

Հունվար. Վաղարշապատում, Վահան վարդապետ Բաստամյանցի խմբագրությամբ, արևելահայերեն սկսում է հրատարակվել «Դպրոց» մանկավարժական ամսագիրը: Այն իր խնդիրն էր համարում «յուր կարողության չափ ձեռնատու լինել ազգային դպրոցների առաջադիմության» և ըստ այդմ, հրատարակում է «Քաղվածքներ հայոց, ռուսաց և ընդհանուր պատմությունից, համառոտ կենսագրականներ երևելի մարդոց, մանկական վեպեր, ոտանավորներ, առակներ, այլևայլ թարգմանությունք»: «Դպրոցը» դադարում է 1876 թ. հունիսին:

Հունվար. «Դպրոցը» (№ 1) արևմտահայերեն սկսում է հրատարակել Վահան Բաստամյանցի «Պատմական տեղեկություններ ազգային հին և նոր դպրոցների վերա» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի 1875 թ. № 9-10-ում (սեպտեմբեր-հոկտեմբեր):

Հունվար. «Դպրոցը» (№ 1, երկրորդ մաս), ռուսերեն բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ ու ծանոթագրություններով, սկսում է հրատարակել «Քրիստափոր Կոլոմբո և Ամերիկայի գտնելը» վիպակը, որն ավարտվում է նույն ամսագրի № 4-5-ում (ապրիլ-մայիս):

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 1) Սոֆյա Առաքելյանցի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Հիշատակարան ի վերա տերության և կրոնի նախկին հայոց» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 7-ում (հուլիս): Հրատարակված է Վահրամ Մանկունու «Ազգային հրապարակական պարբերությունք» հրապարակախոսական հոդվածը և գրաբար՝ Ա.Ղ. Դավրիժեցու «Նոր տարի» բանաստեղծությունը:

Հունվար. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 1) արևմտահայերեն հրատարակում է Մատթեոս Մամուրյանի «Ազգային» հրապարակախոսական հոդվածը և Նշան Միրզայի «Օրիորդ Հռիփսիմե Ա. Կարապետյան» եղերերգը։

Հունվար. «Հույսը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Լեզվի վրա» բանավիճային հոդվածը, «Ջատագովություն քրիստոնեության» ուսումնասիրությունը և «Մինակ ուժովին օրենք չտրվիր» առակը։ Եղիշե Այվազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Մովսես ի վերա Նեղոսի» բանաստեղծությունը։

Հունվարի 1. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 349) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գեորգ Այվազյանի (?) «Պարահանդես» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 351-ում (հունվարի 9)։

Շարունակելով իր ավանդույթը (տե՛ս 1873 թ. հունվարի 1) «Մամուլը» անկանոն պարբերականությամբ, հրատարակում է այլևայլ երգիծական մանրապատումներ, հիմնականում անստորագիր, որոնց հեղինակը, ամենայն հավանականությամբ, խմբագիրն է՝ Գեորգ Այվազյանը։ Հաջորդաբար հրատարակվել են **«Ներսեն-դրսեն»** (№ 353, հունվարի 16), **«Ներսեն-դրսեն»** (№ 359, փետրվարի 6), **«Տոլանտրճի մը»** (№ 365, փետրվարի 27), **«Պնակալեզին տոպրակը պատռեցավ»** (№ 376, ապրիլի 6), **«Օրիորդ «Փունջին» ամուսնությունը»** (№ 383, մայիսի 29), **«Մուսյու Գրիգորիս Ալեաթճան»** (№ 385, հունիսի 5), **«Նորելուկ արհեստ մը»** (№ 391, հունիսի 26), **«Ազատ դաստիարակության փորձանքը»** (№ 395, հուլիսի 10), **«Բախտախնդիր կին մը»** (№ 400, հուլիսի 27), **«Կնիկներուն ձեռքեն բժիշկներուն քաշածը»** (№ 404, օգոստոսի 10), **«Երախային անունը»** (№ 410, օգոստոսի 31), **«Հարսանիք մը»** (№ 413, սեպտեմբերի 11), **«Հացագործին տասը դուրուշը»** (№ 418, սեպտեմբերի 28), **«Քաղաքավարություն»** (№ 420, հոկտեմբերի 5), **«Մանր-մունր»** (№ 424, հոկտեմբերի 19), **«Սիրահարաց բաժանում»** (№ 425, հոկտեմբերի 23, ավարտ՝ հաջորդ համարում), **«Մութի մեջ սիրահարություն»** (№ 430, նոյեմբերի 9), **«Սուվընի՞ր»** (№ 442, դեկտեմբերի 21, ավարտ հաջորդ համարում)։

Հունվարի 2. «Մեղուն» (№ 199) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Նոր տարի», «Ֆար դյու Բոսֆորի գրասենյակին մեջ», «Բինարի արժեթուղթին մեջ զույգ մը պոթին» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 183-184, հ. 8, էջ 431-435):

Հունվարի 3. «Մշակը» (№ 1) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Համալի» «Համալի մաալահաթը» (տե՛ս **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 251-256) և [Գրիգոր Արծրունու] «Մենք հրաշք չենք գործել» հրապարակախոսական հոդվածը:

Հունվարի 5. «Մեղուն» (№ 200) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոյանի] «Պարահանդեսի վերաբերյալ» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 185-186):

Հունվարի 6. Կերմիրում (նաև՝ Կարմիր, Կեսարիա, Կենտրոնական Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, կրթական-մշակութային գործիչ Գառնիկ Դավթյանը:

«Գիմսեդա», «Հայկակ» և «Սիրունի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Ալպոյաճյան Ա. Պատմություն հայ Կեսարիո (հ. Ա), էջ 1194-1195, **Պոտուրյան Մ**., Հայ հանրագիտակ, էջ 607:

Հունվարի 12. «Արշալույս արարատյանը» (№ 979) գրաբար հրատարակում է Արմենակ-Սարգիս Պալապանյանի «Ի սգալի մահ Հռիփսիմեայ Կարապետեան ազնիւ եւ ուսումնազարդ օրիորդին» չափածո եղերերգությունը:

Հունվարի 12. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 12-ին հունվարի» առաջնորդողը (վերլուծված է ազգայնություն գաղափարը և այդ հենքի վրա քննված է հայ ազգի պատմական դերը) և «Ազգայնության հարցը պատմության և գրականության մեջ» գրախոսականը (հեղինակ՝ Հ.Տ.Հ.): Գրախոսված է և դրական գնահատված Ալեքսանդր Գրադովսկու՝ նույն խորագիրը կրող աշխատությունը: Ավարտ՝ նույն պարբերականի № 13-ում (մարտի 30):

Հունվարի 12. «Մեղուն» (№ 201) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] երգիծական աֆորիզմների շարքը «Սըկենըկե» խորագրով: Հրատարակությունը հետագայում շարունակվում է «Թատրոնում» (մի քանիսն այստեղ ունեն Գ.Ո.Ղ. ստորագրությունը) և ավարտվում 1877 թ. ապրիլի 27-ին՝ № 251-ում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1969, էջ 229-249):

Հունվար-մարտ. «Բազմավեպը» (պրակ Ա) արևմտահայերեն հրատարակում է [Կոմիտաս Իսկենդերյանի] «Բազմավեպ առ բաժանորդս յուր» հրապարակախոսական առաջնորդողը, ժողովրդական գրաբարով՝ Սրիկ Կոստանդինի «Տաղ ի ծնունդ Քրիստոսի» բանաստեղծությունը: «Հին տպագրապետ բանասեր պանդուխտ վաճառական մի» հոդվածով վերլուծված է Նաhապետ որդի Գյուլնազարի Ագուլեցու գրական-մշակութային գործունեությունը, որին հաջորդում է «Հոբա գիրքը» արևմտահայերեն հոդվածը: Գերմաներեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակված է Կարոլոս Կերոքի «Մարգարիտք և արտասուք» բանաստեղծությունը:

Հունվարի 17. «Մասիսը» (№ 1488) գրաբար սկսում է հրատարակել «Կենսագրութիւն Աւետիք պատրիարքի» գործը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1500-ում (փետրվարի 19): Այն հայտնաբերել և արևելահայերեն նամակով Կարապետ Ութուջյանին էր ուղարկել հայագետ Էդուարդ Դյուլորիեն:

Հունվարի 17. «Մշակը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Մեր թղթակիցներին» հրապարակախոսական հոդվածը (արծարծված են հայկական ուսումնարանների և հայեցի ուսման հետ առնչվող հարցեր) և Նիկողայոս Լալայանի «Պ.Լ. Ջագորսկու ճանապարհորդությունը Ախալցխայի գավառում» խորագիրը կրող գրախոսականը:

Հունվարի 19. «Մեղու Հայաստանին» (№ 3) արևելահայերեն հրատարակում է «Թոխմախի» (Արսեն Թոխմախյան) «Գավառական ֆելիետոնը»: Բնութագրված են ժամանակի պարբերականները («Դաստիարակ», «Մեղու», «Մշակ», «Բազմավեպ» և այլն) և գրական-մշակութային գործիչները (Ղ. Ալիշան, Սուքիաս Պարզյան):

Հունվարի 19. «Մեղուն» (№ 203) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Աղքատության դար» և «Ռէսումնական աշխարհագրություն Մեղուի» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 438-441):

Հունվարի 20. Ամասիայում (Կենտրոնական Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, աստվածաբան-բանասեր Երվանդ Փերտահճյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1901 թ. մայիսի 20-ից: Վախճ. 1938 թ. դեկտեմբերի 10-ին Սոֆիայում (Բուլղարիա):

«Սիոն», 1939, հունվար, № 11 («Տ. Երվանդ եպիսկոպոս Փերտահճյան»):

Հունվարի 24. «Մշակը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Հայոց լրագրության նյութական դրությունը» հրապարակախոսական հոդվածը և Հովհաննես Տեր-Գրիգորյանցի «Մարդասպան» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունվարի 26. «Արշալույս արարատյանը» (№ 980) գրաբար հրատարակում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Տապանագիր Մսերայ Մագիստրոսի Մսերեանց Զմիւռնիացւոյ» դամբանականը:

Հունվարի 30. «Մեղուն» (№ 206) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ջյունին օգուտները» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 187-188):

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Նոր տարի» հրապարակախոսական առաջնորդողը: Գեորգ Տեր-Հարությունյանցի (Իսմայելցի)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Ֆրանսուա Ռընե Շատոբրիանի «Ինչ պիտի լիներ ընկերականության վիճակը, եթե քրիստոնեությունը չերևեր բնավ աշխարհի վերա» կրոնա-փիլիսոփայական տրակտատը, որն ավարտվում է նույն ամսագրի № 4-ում (ապրիլ):

Փետրվար. «Հույսը» (№ 2) արևմտահայերեն հրատարակում «Առ Տղմուտ և Ավարայր» պոեմը և արաբերենից կատարված թարգմանությամբ՝ «Կաթիլ ջրո» առակը:

Փետրվարի 2. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն, անկանոն պարբերականությամբ, սկսում է հրատարակել «Իմ ճանապարհորդական տպավորությունները» (հետագայում՝ «Իմ ճանապարհորդական հիշողությունները») ուղեգրական ակնարկաշարը (հեղ.՝ ***), որն ավարտվում է նույն շաբաթաթերթի № 42-ում (հոկտեմբերի 26)։

Փետրվարի 2. «Մեղուն» (№ 207) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Գերմանիայեն հրահանգ» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, h. 8, էջ 443-445)։

Փետրվարի 5. Այնթապում (Հարավային Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, պատմաբան, բանասեր Եղիա Քասունին։ Վախճ. 1959 թ. մարտի 10-ին Ֆիլադելֆիայում (ԱՄՆ)։

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, 1960, էջ 501, 608։

Փետրվարի 6. «Մեղուն» (№ 208) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Բարեկենդան» երգիծական պատմվածքը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, h. 8, էջ 446-447)։

Փետրվարի 7. «Մշակը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մենք ինքներս մեզ պատժում ենք» հրապարակախոսական առաջնորդողը և Հովհաննես Տեր-Գրիգորյանցի «Քաղքի աղաք» խորագիրը կրող գրախոսականը։ Գրախոսված է Գ. Քալանթարյանի՝ հիշյալ խորագիրը կրող կատակերգությունը։ Մի քանի դիտողություններից հետո, այն դրական է գնահատված։

Փետրվարի 7. «Մասիսը» (№ 1496) արևմտահայերեն հրատարակում է Աբրահամ Այվազյանի «Առ որդյակն իմ Գարեգին (մայր և մանկիկ)» եղերերգական բանաստեղծությունը, որը նույնությամբ արտատպել է «Մամուլ» շաբաթաթերթը (№ 360, փետրվարի 9)։ Գրիգոր Մսերյանցը ընթերցողներին ներկայացնելով Օ. Ֆեոյեի «Աղքատ երիտասարդի մը վեպը» գրքի՝ ֆրանսերենից արևմտահայերեն կատարած իր թարգմանությունը, բնութագրում է ժամանակի ֆրանսիական արձակը, շեշտելով Էոժեն Սյուի, Վիկտոր Հյուգոյի, Ալ. Դյումայի, Օ. Բալզակի, Ժորժ Սանդի և այլոց գործունեությունը։

Փետրվարի 9. «Մեղու Հայաստանին» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Սենեքերիմ Արծրունու «Քաղքի ադաթ», հեղինակություն Գ. Քալանթարյանցի» գրախոսականը:

Փետրվարի 9. «Մեղուն» (№ 209) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թե՛ հարուստ ըլլալու, թե՛ հայրենիքը, թե՛ ազգը և թե՛ անձը սիրելու ճամբան» և «Գրաբարի խնդիր» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 448-452):

Փետրվարի 9. «Մասիսը» (№ 1497) արևմտահայերեն հրատարակում է «Վանա Պողոս վարդապետ» գրախոսականը (հեղինակ՝ «Ք»): Գրախոսված է «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վրա» գրքույկը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.), այդ առիթով քննադատված են հայ ժողովրդի հոգևոր կյանքի մի քանի կողմերը:

Փետրվարի 13. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 366) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Մասիսի» ազգատեցությունը» հրապարակախոսական հոդվածը:

Փետրվարի 14. Մալաթիայում (նաև՝ Մելիտինե, Արևելյան Թուրքիա) ծնվեց հոդվածագիր (հայերեն, անգլերեն և ֆրանսերեն լեզուներով), բանաստեղծ, թարգմանիչ (անգլերենից և ֆրանսերենից՝ հայերեն), հուշագրող Ռուբեն Որբերյանը: Վախճ. 1931 թ. հունվարի 3-ին, Փարիզում:

Սկզբնական շրջանում հանդես էր գալիս «Ռ.Ալիքյան» ստորագրությամբ:

«Բազմավեպ», 1931, № 1 («Հայկական արձագանք»), 1932, № 2 («Ռուբեն Որբերյան»), № 3 («Լորդ Բայրոն»): **Որբերյան Ռ**, Երկեր (կազմեց Եղիշե Պետրոսյանը), Երևան, 1963, 195 էջ:

Փետրվարի 16. «Մասիսը» (№ 1499) արևմտահայերեն հրատարակում է «Ի վաղամեռիկ կուսին Աղայեկյանց, ազնվուհի օրիորդին Նեկտարինյա...» եղերերգական պոեմը (հեղինակ՝ Ե.Վ.Ք.), որին որպես բնաբան վերցված է մի քանի տող Ֆրանչեսկա Պետրարկայի սոնետից:

Փետրվարի 16. «Մեղուն» (№ 211) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Կոճակի բարեխոսությամբ ամուսնություն մը» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 189-190):

Փետրվարի 20. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 363) արևմտահայերեն հրատարակում է «Ի դառնակսկիծ մահ ազնվատոհմ պայազատի Տիրանա Կյոկչեյան» եղերերգական բանաստեղծությունը (հեղ. Է.Մ.Մ.): Ներկայացնելով այն, շաբաթաթերթը ծանուցում է, որ հեղինակը «ազգային նշանավոր բանաստեղծներեն մին է»:

Փետրվարի 20. «Մեղուն» (№ 212) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մեղուի» (Հակոբ Պարոնյան) «Թղթակցությունք «Մեղուի» երգիծապատումների շարքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 214-ում (մարտի 2) (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 191-195):

Փետրվարի 21. «Մշակը» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» (Գրիգոր Արծրունի) «Ֆելիետոնը»: Դրական են գնահատված Գ. Սունդուկյանի «Էլի մեկ զոհ» և Գ. Քալանթարյանի «Քաղքի աղաթ» դրամատիկական ստեղծագործությունները, քննադատված են «Մեղու Հայաստանի» ամսագրում տպագրված «անհամ» ֆելիետոններն ու գրախոսականները:

Մարտ. «Հույսը» (№ 3) արևմտահայերեն հրատարակում է «Քաղված Սոկրատա վրա Քսենոֆոնի հիշատակարաններեն» հուշագրությունը, ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար թարգմանությամբ՝ Գաբրիել Ժիլբերի «Օր վերջին» բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել նաև «Ավազակույտերու մեջ պատահած դեպք մը» վեպը, որն ավարտվում է նույն ամսագրի № 6-ում (հունիս):

Մարտ. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 3), Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ջուզեպպե Մաձինիի «Պ. Ռենան և Ֆրանսա» գրախոսականը, որն ավարտվում է նույն ամսագրի № 5-ում (մայիս): Արևմտահայերեն թարգմանությամբ հրատարակված է Էլիզ Գուբրի «Առ իմ սեր» բանաստեղծությունը:

Մարտ. Էջմիածնի «Արարատը» (№ 3) արևելահայերեն հրատարակում է «Մշակի» ընթացքը» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղ.՝ «...Դ, եկեղեցական

ոմն»), Ենոք Մովսիսյանի «Լևոն Զ և նորա արկածք» պոեմը և Ս.Բ.Վ.Գ.-ի (Սարգիս Բարսեղյան Գնունի վարդապետ?) «Կսկիծ Հայաստանի» գրաբար բանաստեղծությունը:

Մարտի 2. «Մասիսը» (№ 1503) արևմտահայերեն հրատարակում է «Ի սգալի մահ ազնվազարմ Կյոկչեյան Տիրանա» եղերերգական պոեմը:

Մարտի 2. «Մեղու Հայաստանին» (№ 9) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Թաբուն» պատմվածքը:

Մարտի 7. «Մշակը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, գրախոսված է Րաֆֆու «Փունջի» Ա հատորը:

Մարտի 9. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն սկսում է հրատարակել Հ. Նազարյանցի «Ռեհանը» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 14-ում (ապրիլի 13):

Մարտի 14. «Մշակը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վերա» գրախոսականը: Գրախոսված է Պոլսում հրատարակված անհայտ հեղինակի՝ հիշյալ վերնագրով գրքույկը (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 70-77):

Մարտի 14. «Մասիսը» (№ 1508) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Թաթարյանի «Առ սգակիր մայրն Հայաստանի» բանաստեղծությունը: Նախորդող կարճառոտ ընծայականում տրված է բանաստեղծության գրության բանասիրական պատմությունը:

Մարտի 16. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Ֆելիետոնը»: Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, մասնավորապես Գր. Արծրունու և նրա «Մշակի» գործունեությունը:

Մարտի 21. «Մշակը» (№ 11) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Դուք սխալվում եք» հրապարակախոսական հոդվածը (սխալ է հայտարարված «Մշակի» հասցեին ասվող այն մեղադրանքը, թե նա «հարձակվում է հոգևորա-

կանության դեմ») և Նիկողայոս Ղալայանցի «Որսորդական կյանքից» պատմվածքը:

Մարտի 21. «Մասիսը» (№ 1511) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Օրվան խնդիրներ» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղինակ՝ «Հայ երեց»), որն ավարտվում է նույն պարբերականի № 1520-ում (ապրիլի 16):

Մարտի 23. «Արշալույս արարատյանը» (№ 984) գրաբար հրատարակում է Հովհաննես Աղամալյանցի «Ազգային գործս չէ պարտ խառնել զանձնական կիրս» հրապարակախոսական հոդվածը և Հարություն Սվաճյանի «Քոյր մահացեալ» պոեմը:

Մարտի 31. Պոլսում, Միհրան Քյաթիբյանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Համակամ» ընկերությունը, որի նպատակն էր «գիրքերու թանգարան մը ունենալ, ամեն կիրակի դասախոսության պարապիլ, ուր պիտի ընդունին ուսման փափագ ունեցող ազգայինք, մանավանդ պանդուխտ եղբարք»: Ընկերությունը 80-ական թվականներին դեռ գոյություն ուներ:

«Հանդես ամսօրյա», 1952, № 4-6 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) գրաբար սկսում է հրատարակել Հակոբ Պարթևյանի «Բանք ապաշաւանաց» պոեմը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Այն ուղարկվել է Եգիպտոսից, քառյակների առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը:

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Տարակույս» բանասիրական հոդվածը (քննված է հայկական տառերի ստեղծման պատմությունը, նրանց արտասանական օրինաչափությունները, տեղեկություններ են հաղորդվում Քերովբե և Ռափայել Պատկանյանների մասին), որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Հրատարակված են Գրիգոր Նարեկացու (կամ նրան վերագրվող) «Տաղ քառասնօրեայ գալստեանն Տեառն», «Այլ տաղ գալստեան Տեառն առ Ղազար, ի ձայն Կենդանատուին...», «Այլ տաղ յարութեան ի Նարեկացւոյ» գրաբար բանաստեղծությունները:

Ապրիլ. «Հույսը» (№ 4) գրաբար հրատարակում է «Մաղթանք յարաւական» պոեմը և «Վարդ եւ մանիշակ» առակը:

Ապրիլ-մայիս. «Դպրոցը» (№ 4-5) արևմտահայերեն հրատարակում է «Վարդանանց պատերազմ (մանկական թատրոն)» դրամատիկական ստեղծագործությունը (հեղ.՝ Վահան Բաստամյանց?):

Ապրիլ-մայիս. «Հայկական աշխարհը» (№ 1-2) Խորեն Ստեփանեի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Ալ. Պուշկինի «Արձան» («Памятник») բանաստեղծությունը:

Ապրիլ-հունիս. «Բազմավեպը» (պրակ 2) արևմտահայերեն հրատարակում է «Խեղճ ծաղիկ» նովելը, գրաբար՝ «Երգ ի յարութիւն տեառն» բանաստեղծությունը: «Առածք» խորագրի ներքո հրատարակված են հայկական ժողովրդական տասներկու առակ-ասացվածքներ: «Նորատիպ մատյանք» բաժնում վերլուծաբար ներկայացված են Ղևոնդ Ալիշանի «Ընդ եղեւնեաւ յամայութեան բացավայրի խորհրդածութիւն» փիլիսոփայական աշխատությունը և Վիկանոյի «Գործավորք» վեպը:

Ապրիլի 6. Պոլսում, Հակոբ Պարոնյանի խմբագրությամբ, արևմտահայերեն և թուրքերեն զուգահեռ լեզուներով, սկսում է հրատարակվել «Թատրոն» երկօրյա երգիծաթերթը: Իր գոյությունը, պարբերականության որոշ փոփոխություններով, շարունակում է մինչև 1877 թ. հունիսը: Առաջին իսկ համարից սկսում է հրատարակվել [Հակոբ Պարոնյանի] «Քաղվածք» երգիծական մանրապատումների շարքը, որը շարունակվում է մինչև 1875 թ. № 155 (հուլիսի 3): Հակոբ Պարոնյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել Պիեր Վերոնի «Բառարանին բարեկենդանը» մանրապատումների գիրքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 11-ում (մայիսի 11) (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 309-362):

Ապրիլի 10. «Օրագիրը» (№ 1208) արևմտահայերեն սկսում է հրատարակել Անտոն վարդապետ Թարգմանյանի «Հայոց լեզվին և գրականության վիճակը հին ժամա-

նակը» ուսումնասիրությունը։ Շարունակվում է մինչև № 1215-ը (ապրիլի 18) և մնում անավարտ։

Ապրիլի 11. «Մասիսը» (№ 1518) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Պատկանյանի «Փնջիկ ազգային պատմության հայոց հետին ժամանակաց ի Ռուսաստան» աշխատությունը։ Շարունակվում է մինչև № 1541-ը (հունիսի 6) և մնում է անավարտ։

Ապրիլի 13. «Մասիսը» (№ 1519) արևմտահայերեն հրատարակում է «... խմբագիր» թատերախոսականը (հեղինակ՝ «Քսանևվեցերորդ աթոռ արևելյան թատրոնին մեջ»)։ Վերլուծված է Ֆրիդրիխ Շիլլերի «Ավազակներ» ստեղծագործության բեմականացումը և ցույց է տրված նրա դերը հայկական գրական կյանքում։

Ապրիլի 18. «Մշակը» (№ 15) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Որոգայթ գցողները» հրապարակախոսական առաջնորդողը (նկարագրված է այն անազորույն վիճակը, որին արժանանում են Եվրոպայում ուսում ստացած և հայրենիք վերադարձած երիտասարդ մտավորականները) և Գրիգոր Արծրունու «Բոկլի գրքի նշանակությունը պատմության մեջ» հոդվածը։

Ապրիլի 20. Պոլսի «Թատրոնը» (№ 5) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հուշարարի» (իմա՛. Հակոբ Պարոնյան) «Ի՞նչ է կինը» երգիծապատումը, որն ավարտվում է հաջորդ համարում և «Հազվագյուտ բաներ» մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 196-201)։

Ապրիլի 20. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն հրատարակում է «Թոխմախի» (Արսեն Թոխմախյան) «Գավառական ֆելիետոնը»։ Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, բացասաբար է գնահատված Րաֆֆու «Փունջ» ժողովածուն։

Ապրիլի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 7) արևմտահայերեն հրատարակում է «Հուշարարի» (Հակոբ Պարոնյան) «Թե ինչպես կըլլա, որ աղջիկները տունը կմնան» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 201-204)։

Ապրիլի 30. «Մասիսը» (№ 1526) արևմտահայերեն հրատարակում է «Բանագողություն» գրական-բանասիրական հոդվածը (հեղինակ՝ ***)։ Հաջորդաբար բերված են Խորեն Գալֆայանի «Միայնություն» («Վարդենիք» ժողովածու) և Զապել Խանջյանի (հետագայում՝ Սիպիլ) «Պանդուխտն անմխիթար» բանաստեղծությունները և ապացուցված է, որ վերջինը բանագողություն է նախորդից։ Բերված են համանման այլ դեպքեր էլ։

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 4) արևմտահայերեն հրատարակում է «Ամեն հանցանք իր հատուցումն ունի» հրապարակախոսական առաջնորդողը։

Մայիս. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 5) Կորնելիա Փափազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էրնեստ Լըկուվյեի «Դեռահաս աղջիկը» պատմվածքը, որը քաղվածաբար հանված է վերջինիս «Փարիզյան բնավորությունը» ժողովածվից։ Վերջում Մ. Մամուրյանը ներկայացրել է Է. Լըկուվյեի կենսագրությունն ու գրական գործունեությունը։

Մայիսի 1. Պոլսի «Թատրոնը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է «Խիկարի», «Տյուրյուկի» և «Թատրոնի» (հմմ՛. Հակոբ Պարոնյան) «Դպրոցական քննության արձանագրութենեն քաղված», «Նամականի» և «Պատասխան» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 205-207, հ. 7, էջ 200-202)։

Մայիսի 2. «Մշակը» (№ 17) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Համալի» «Համալի մասլահաթը» ֆելիետոնը (տե՛ս. **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 257-262)։

Մայիսի 4. «Արշալույս արարատյանը» (№ 987) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Պատկանյանի «Ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ... Ներսիսի Ե Վեհափառ և ազգասեր կաթողիկոսի ամենայն հայոց» աշխատությունը, որն ավարտվում է նույն պարբերական 1876 թ. № 1037-ում (ապրիլի 3)։

Մայիսի 4. Պոլսի «Թատրոնը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Օրիորդ Տյուրյուկին նամակը» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 207-208)։

Մայիսի 5. Շուշիում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Եղիսաբեթ Իսահակի Զորյանը:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 807-808:

Մայիսի 8. Պոլսի «Թատրոնը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Թելեկրաֆի վկայականով բժիշկ մը» կատակերգությունը և [Հակոբ Պարոնյանի] «Թե որն է մարդուն ամենեն ծաղրելի վիճակը», «Մյուրյուվվեթ (իմա՛. «Մարդասիրություն». Պոլսում հրատարակվող թուրքերեն լրագիր – Ս.Շ.) Ժորժ Տերտերոֆ» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 209-210):

Մայիսի 9. «Մշակը» (№ 18) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Հայերի կոչումը Ասիայի մեջ» հրապարակախոսական հոդվածը:

Մայիսի 11. Պոլսի «Թատրոնը» (№ 11) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հակոբ Պարոնյանի (?) «Երգիծական կենսագրություն պապերու» թատերական ստեղծագործությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 15-ում (մայիսի 25) և «Տյուրյուկի» «Օրիորդ Տյուրյուկեն նամակ մը» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 210-211):

Մայիսի 16. «Մշակը» (№ 19) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մի հայացք աղջիկների կրթության վրա» հրապարակախոսական առաջնորդողը և «Մելիքզադեի» «Քնար մշեցվոց և վանեցվոց» գրքույկի առթիվ» գրախոսականը:

Մայիսի 18. Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր, լեզվագետ Վարդան Մելքիսեդեկյանը: Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ էր 1897 թ. հունիսի 5-ից: Վախճ. 1941 թ. դեկտեմբերի 10-ին, Վիեննայում:

1898-1901 թթ. եղել է Վիեննայի Մխիթարյանների «Հանդես ամսօրյա»-ի խմբագիրը:

Մայիսի 18. Պոլսի «Թատրոնը» (№ 13) արևմտահայերեն հրատարակում է «Հուշաբարի» (Հակոբ Պարոնյան) «Խըչըլըխին փորձանքը» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 212):

Մայիսի 20. «Օրագիրը» (№ 1241) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գաբրիել Պատկանյանի «Ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ սրբազան հայրապետի Ներսիսի Ե Վեհափառ և ազգասեր կաթողիկոսի ամենայն հայոց» ուսումնասիրությունը, որը շարունակվելով որոշ ընդհատումներով, հասնում է մինչև № 1266 (հունիսի 19) և մնում անավարտ:

Մայիսի 21. «Մասիսը» (№ 1534) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Սեթյանի «Առ հարսնն վաղազրավ, տիկին Վիրգինէ Հակոբյան» եղերերգական պոեմը: Նախորդող համառոտ ներածականում հեղինակը տվել է իր պոեմի գրության բանասիրական պատմությունը:

Մայիսի 22. Պոլսի «Թատրոնը» (№ 14) արևմտահայերեն հրատարակում է «Մինաս Չերազ. «Գրական փորձեր» գրախոսականը: Վերլուծաբար ներկայացված է և դրական գնահատված Չերազի՝ այդ խորագիրը կրող ժողովածուն (տե՛ս ներկա հատորը, 1872 թ.):

Մայիսի 23. «Մշակը» (№ 20) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Կ.Պոլսի «Մասիս» լրագիրը» հրապարակախոսական առաջնորդողը: Վերլուծված են այն անտանելի պայմանները, որոնցում գտնվում է «Մասիսը», որի հետևանքով էլ «ամեն հարց, ամեն խնդիր վճռում է երեխայական դատողություններով, նախադասություններով, առանց որևէ խորհրդի»: Դիտողություն է արվում, որ «Մասիսը» ստանում և կարդում է թե «Մշակ», և թե «Մեղու»: «Ինչի՞ ուրեմն մեկի գրվածքներին չի հավատում, իսկ մյուսին կուրորեն հավատում է»:

Մայիսի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 383) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Քերուխս Կեռաս. գրական փորձեր կամ տղայական գործեր» գրախոսականը: Մինաս Չերազի անուն-ազգանունը երգիծաբար վերափոխելով «Քերուխս Կեռաս» ձևով, գրախոսված և բացասաբար է գնահատված նրա «Գրական փորձեր» ժողովածուն (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.)

Մայիսի 30. «Օրագիրը» (№ 1251) արևմտահայերեն հրատարակում է «Սփոփ առ մեծապատիվ այրին Միքայել էֆենդի Հակոբյան» եղերերգական պոեմը: Հետագայում հրատարակվել են «Որդեկորույս հայրն և մայրն, տյար և տիկին Մամուրյան» (№ 1347, սեպտեմբերի 25, հեղ. Ամբրոսիոս Լուսինյան=Գալֆայան), «Լուսին, իղձ սրտի» (№ 1363, հոկտեմբերի 14, հեղ. Գարեգին Արիստակեսյան, գրաբար):

Մայիսի 30. «Մշակը» (№ 21) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Հարոյի» (իմա՛. Նիկողայոս Տեր-Հարությունյան) «Նամակ Փարիզից» ակնարկը: Բնութագրված է տեղի հայության գրական-մշակութային կյանքը:

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5), Գեորգ Տեր-Հարությունյանի (Իսմաելացի)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Աստված (նախկին փոլոսոփայության քաղվածոյք)» փիլիսոփայական-աստվածաբանական տրակտատը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 6), Լյուսյա Մանդակունու՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Երկու պսակներ» պատմվածքը: Ավարտը՝ հաջորդ համարում: Հրատարակված է Միքայել Տեր-Հովհաննիսյանցի «Բան առ Արծն քաղաք» գրաբար բանաստեղծությունը և Ենովք Մովսիսյանի «Պանդուխտ հայ մշակ» արևելահայերեն պոեմը:

Հունիս. «Հույսը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Ստեփանեի «...Սուրբ հարք» գրական-հրապարակախոսական հոդվածը և Գրիգոր ՌԻթուջյանի (հետագայում՝ Գևորգ վարդապետ) «Պանդուխտ ծերունւոյ դարձ ի հայրենիս» գրաբար բանաստեղծությունը: Սկսում է հրատարակվել «Մարդկային զործողություն. մեր պարտուց տեսակները և գիտակցության դատմանց հատուկ առարկան» արևմտահայերեն գրականագիտական-փիլիսոփայական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 9-ում (սեպտեմբեր):

Հունիս. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 6), Փիլիպոս Վարդանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Վենետիկի Մխիթարյանք» գրական-հրապարակախոսական հոդվածը:

Հունիսի 1. «Մեղու Հայաստանին» (№ 21) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Ո՞վ է մեղավոր» ֆելիետոնը: Երգիծական-սարկաստիկ ոճով վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը:

Հունիսի 6. «Մասիսը» (№ 1541) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Սեթյանի «Քանի մը խոսք առ պարոն Մինաս Չերազ» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունիսի 8. «Մասիսը» (№ 1542), Կարապետ ՈԻթուջյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Ա.Դ. Մորթմանի «Ազգային պատմական տեղեկությունք» հոդվածաշարը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև № 1577 (սեպտեմբերի 3) և վերջում ստանում «Հատվածք պատմության Հայաստանի, քաղյալք արաբացի պատմագրաց» վերնագիրը:

Հունիսի 8. Պոլսի «Թատրոնը» (№ 19) արևմտահայերեն հրատարակում է «Հուշաբարի» (Հակոբ Պարոնյան) «Ծերենց» դիմանկարը: Ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ (թարգմանիչ՝ «ՈԻսանող մը») տպագրվում է «Աղուէսն եւ աքաղաղ» առակը:

Հունիսի 12. Պոլսի «Թատրոնը» (№ 20) արևմտահայերեն հրատարակում է «Խմբագրի մը գրասենյակին մեջ» երգիծապատումը և Պետրոս Ատրունու «Հիշե՞ս» բանաստեղծությունը:

Հունիսի 13. «Մշակը» (№ 23) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Տեր-Գրիգորյանցի «Հայոց թատրոն» գրախոսականը (վերլուծված է Գ. Սունդուկյանի «Պեպոն» և այն ներկայացրած դերասանների խաղը) և «Հարոյի» (Նիկողայոս Տեր-Հարությունյան) «Նամակ Փարիզից» հոդվածը: Հոդվածագիրը տեղեկացնում է, որ Էդուարդ Դյուլյորիեն հանդես է եկել հայ հին գրականությանը նվիրված զեկուցումով, ապա տալիս է այդ զեկուցման վերաշարադրանքը:

Հունիսի 14. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 388) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Առ սաղմոսաքաղն Սրվանձտյանց» հոդվածը:

Հունիսի 15. «Մեղու Հայաստանին» (№ 23) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու «Թաթոսի թաթոսությունները» պատմվածքը:

Հունիսի 19. Պոլսի «Թատրոնը» (№ 21) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Կարգվի՞նք թե չէ» երգիծական մանրապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 213-215):

Հունիսի 20. Մեծ Ղարաքիլիսայում (այժմ՝ Կիրովական, ՀՀ) Գևորգ Խոսրովյանցի ղեկավարությամբ և Համբարձում Բալասանյանի քարտուղարութամբ, իր գոյությունն է սկսում «Կանտորա հայրենյաց սիրո» հասարակական-մշակութային գաղտնի խմբակը: Վերջինիս նպատակն էր «հավաքելու երեկոյի, հաղագս զանազան լրագիրս կարդալո, նմանապես ազգային պատմությունս, և միով բանիվ ամենատեսակ ազգաօգուտ գործոց վերա մտածելու, բացի տերությանց գործոց, որն որ արգելված է»: Խմբակը լիկվիդացվում է 1875 թ. ապրիլին, Երևանի ժանդարմական վարչության ջանքերով:

Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, էջ 531:

Հունիսի կեսեր. «Փարոսը» (տետր Գ) գրաբար հրատարակում է Գաբրիել Այվազյանցի (Այվազովսկի) «Տապանագիր Մսերայ Մագիստրոսի Մսերեանց» բանաստեղծությունը: Զարմայր Մսերյանցի ծանոթագրություններով ու ներածականով՝ «Վերջին բանք Մովսիսի Խորենացւոյ» խորագրով, հրատարակվում է Մսեր Մսերյանցի հայտնաբերած՝ Մովսես Խորենացու «Ողբի» մի պակասող հատվածը: Տպագրված է Մսեր Մսերյանցի «Վէպք Արարատայ (ամք տեառն 1827-1831)» ուսումնասիրությունը (տեղեկություններ են հաղորդված Հ. Ալամդարյանի գործունեության մասին) և «ի չափածո բանից Մսերայ Մագիստրոսի Մսերեանց» խորագրի ներքո՝ վերջինիս բանաստեղծությունները: «Մատենագրություն» բաժնում գրախոսված են հայկական գրական-մշակութային կյանքին վերաբերող ռուսերեն մի քանի աշխատություններ: «Սալլանթյանի և Ալամդարյանի գրավոր երկասիրությունքն ո՞ր են և ի՞նչ եղեն» հոդվածով (հեղ. Զ. Մսերյանց) տեղեկացվում է, որ նրանց գրական ժառանգությունը գտնվում է Հարություն Կյոկչյայանի մոտ, որին և պարտավորեցվում է «ի տպի տալ» դրանք:

Հունիսի 20. «Մասիսը» (№ 1546) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մկրյանի «Պարբերական հրատարակությունք Թուրքիո և Ռուսիո հայոց» հոդվածը: Ռուսահայաստանում հրատարակվող հայկական պարբերականների վիճակը գերադաս համարելով թուրքահայ «եղբայրակիցներու թերթերեն», հոդվածագիրը նշում է լեզվառճական և «մտային» բնույթի մի շարք տարբերություններ:

Հունիսի 27. «Մշակը» (№ 25) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Առաջադիմության գործիչները» հրապարակախոսական հոդվածը: Սկսում է հրատարակվել Սողոմոն Եղիազարյանցի «Օվչի Ավոն հարսանիքում» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունիսի 27. «Մասիսը» (№ 1549) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ ՈՒթուջյանի] «Լեզվի բարեկարգություն» հոդվածը և Հովհաննես Սեթյանի «Առ պարոն Մինաս Չերազ» ընդդիմախոսականը: Երկու հոդվածագիրներն էլ քննության են առել Մինաս Չերազի «Գրական փորձեր...» ժողովածուն:

Հունիսի 29. «Մեղու Հայաստանին» (№ 25) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Ֆելիետոնը»: Ի թիվս այլ հարցերի, քննադատված է ժամանակի հայկական և ռուսական պարբերական մամուլը, բացասաբար է գնահատված «Համալի» գործունեությունը:

Հունիս 30. «Սիոնը» (№ 6) գրաբար հրատարակում է Մինաս դպիր Եվդոկիացու (Թոխաթցի) «Գովութիւն ի վերայ հերիսայի, ի հողոյ հաւասար անձէ, և զանարժան ձեր ծառայէ» երգիծական բանաստեղծությունը: Սկզբում, բանաստեղծության հայտնաբերման պատմության հենքի վրա, բնութագրված են հայկական ժողովրդական բանաստեղծությունները (հեղ.՝ Մ.Վ.):

Հուլիս. «Դպրոցը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Վահան Բաստամյանցի «Մանկավարժական տարակուսանքներ մեր մեջ» գրախոսականը: Գրախոսված է Սեդրակ Մանդինյանցի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1875 թ.), որին տրված են բանասիրական և մանկավարժական բնույթի դիտողություններ:

Հուլիս. «Հույսը» (№ 7), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Հաջի Սաֆեր. ռուսք ի Սամարղանդ» պատմավեպը, որն ավարտվում է նույն ամսագրի 1876 թ. № 3-ում (մարտ):

Հուլիսի 1. «Լույսը» (№ 3) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հմայակ Դիմաքսյանի] «Հայկական լեզու և դպրություն» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի № 5-ում (օգոստոսի 1):

Հուլիսի 5. «Օրագիրը» (№ 1280) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ամբրոսիոս Լուսինյանի (Գալֆայան) «Հայերեն լեզու» գրական-լեզվաբանական հոդվածի Ա մասը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև նույն պարբերականի № 1352-ը (Հոկտեմբերի 1): Այդ ընթացքում լույս է տեսնում վեց մաս:

Հուլիսի 11. «Մշակը» (№ 27) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Մասիս» լրագրի պատասխանը» հրապարակախոսական հոդվածը (քննադատված են այդ պարբերականի «երեխայական, միամիտ դատողությունները» գրականության վերաբերյալ) և «Աշխարհական ոմն»-ի «Նամակ Ախալքալակից» «դատականը»: Վերլուծված է «Արարատ», «Մշակ», «Մեղու Հայաստանի» պարբերականների վարած գրական-հրապարակախոսական քաղաքականությունը:

Հուլիսի 13. «Մասիսը» (№ 1555) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Թումայանցի «... խմբագիր» նամակ-գրախոսականը: Գրախոսված և դրական է գնահատված Ջ. Բայրոնի «Երկինք և երկիր» գրքի՝ Դոմնի Գաբրիելյանի կատարած թարգմանությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.):

Հուլիսի 13. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն հրատարակում է «Թոխմախի» «Գավառական ֆելիետոնը»: Բարձրացված են գրական-հասարակական բնույթի հարցեր, բացասաբար է գնահատված «Ասիացու» գործունեությունը և Րաֆֆու «Փունջ» ժողովածուն:

Հուլիս-սեպտեմբեր. «Բազմավեպը» (պրակ 3), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Ծերունի մուրացիկ մը» նովելը, գրաբար՝ «Թշուառ ծերունին» բանաստեղծությունը: «Առածք», «Նշանավոր ասացվածք», «Տապանագիրք», «Հանելուկ» խորագրերի ներքո զետեղված են

այդ ժանրերին պատկանող քսանչորս անուն գործեր: Ղևոնդ Ալիշանի՝ բնագրագիտական ծանոթագրություններով ու Ներսես Լամբրոնացու կյանքը ներկայացնող ներածական հոդվածով, հրատարակվում է նրա «Ողբք ի տէր Ներսէս արքեպիսկոպոս Տարսոնի, ասացեալ Խաչատուր պաշտօնէի նորին աշակերտի» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Ս. Թորոսյանի «S. Grégoire de Narek et ses oeuvres» («Ս. Գրիգոր Նարեկացին և նրա գործերը») ֆրանսերեն հոդվածը, որին ֆրանսերեն ազատ թարգմանությամբ հաջորդում են հատվածներ նրա ստեղծագործություններից: «Նորատիպ մատյանք» խորագրի ներքո վերլուծաբար ներկայացված են «Վկայաբանությունք սրբոց», «Մայր, առաջին դաստիարակ մանկության», «Ս.Բեռնարդոսի ճառք» և «Քնար Ամերիկյան» գրքերը:

Հուլիսի 15. «Լույսը» (№ 4), ռուսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Իվ. Կռիլովի «Անհավատություն» չափածո ստեղծագործությունը: «Հայախոս առածք» ընդհանուր խորագրի ներքո հրատարակված է տասնվեց առած-ասացվածք:

Այս ժանրի գործերի հետագա հրատարակությունը «Լույսում» ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. № 7 (սեպտեմբերի 1)՝ յոթ անուն, № 8 (սեպտեմբերի 15) ՝ տաս անուն, «Լեզու և գրիչ» խորագրի ներքո և № 10 (հոկեմբերի 15)՝ երեսուն անուն:

Հուլիսի 16. «Օրագիրը» (№ 1279) արևմտահայերեն հրատարակում է Օգսեն Խոճասարյանի «Ազգայինք» հոդվածը: Գրախոսված է Մինաս Չերազի «Գրական փորձեր...» ժողովածուն (տե՛ս ներկա հատորը, 1872 թ.):

Հուլիսի 18. «Մշակը» (№ 28) արևելահայերեն սկսում է հրատարակել Փիլիպոս Վարդանյանի «Օսմանյան պետության արդի վիճակը» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հուլիսի 18. Պոլսում ծնվեց բանաստեղծուհի, արձակագիր, լրագրող Զարուհի Գալեմքյարյանը (Սեֆերյան): Վախճ. 1971 թ. հուլիսի 20-ին Նյու Յորքում:

«Եվտերպե», «Զարուհի Սեֆերյան», «Ս. Զարուհի», «Գ. Զարուհի» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

Գալեմքյարյան Զ., Կյանքիս ճամբեն, Անթիլիաս, 1952, 380 էջ: **Գալեմքյարյան Զ.**, Օրեր և դեմքեր, Երուսաղեմ, 1965, 418 էջ: **«Լրաբեր»** (Նյու Յորք),1971, № 7 («Զարուհի Գալեմքյարյան ոչ ևս է»):

Հուլիսի 23. «Մասիսը» (№ 1559) արևմտահայերեն հրատարակում է Համբարձում Իփեկչյանի «Ձեռնարկություն մը» հրապարակախոսական հոդվածը:

Հուլիսի 30. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 401) գրաբար հրատարակում է «Ոտանաւոր բարեպաշտ թագաւորին հայոց Հեթմոյ, շարադրեալ ի վերջին ճարտարագիր աստուածաշնչին իւրոյ» բանաստեղծությունը: Այն հրատարակության ներկայացնող «Հովհաննես Մկրտչի» (իմա՛. Հովհ. Մկրյան?) հավաստմամբ բանաստեղծությունը գրվել է 1293 թ. և «տպագրեալ է գործատան Մարդասիրական ճեմարանին ի Կալկաթա, 1828 ամի»:

Հուլիսի 31. Պոլսի «Թատրոնը» (№ 32) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] երգիծական մանրապատումների շարքը «Այլ և այլ» ընդհանուր խորագրի ներքո (մի քանիսը ստորագրված են «Գ.Ո.Ղ.» և «Ապտակ» կեղծանուններով): Շարքն ավարտվում է նույն պարբերականի 1875 թ. № 156-ում (հուլիսի 5) (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 205-226):

Օգոստոս. Էջմիածնի «Արարատը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Գալուստ Շիրմազանյանի «Քննադատություն պարոն Րաֆֆիի «Փունջ» բանաստեղծության վերա» գրախոսականը:

Օգոստոս. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 8), Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Թովմաս Մակոլեյի «Պատմություն» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի 1875 թ. № 1-ում (հունվար): Հրատարակվում է Ստեփան Չաքըրյանի «Ընդ ցավալի կորուստ...» արևմտահայերեն եղերերգությունը:

Օգոստոսի 1. «Լույսը» (№ 5) արևմտահայերեն հրատարակում է [Հմայակ Դիմաքսյանի] «Միություն» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է Ալ. Լամարթինի՝ ֆրանսերեն բնագրից արևմտահայերեն թարգմանված մի քառյակով: Ռուսերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Իվ. Կռիլովի «Ազատություն» չափածո ստեղծագործությունը:

Օգոստոսի 1. «Մշակը» (№ 30) արևելահայերեն հրատարակում է «Հարոյի» (Նիկողայոս Տեր-Հարությունյան) «Մի քանի խոսք Լևոն 6-ի վրա» պատմագրական հոդվածը:

Օգոստոսի 8. «Մշակը» (№ 31), Փիլիպոս Վարդանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Վենետիկի Մխիթարյանք» հոդվածը:

Օգոստոսի 8. «Մասիսը» (№ 1566) արևմտահայերեն սկսում է հրատարակել Մկրտիչ Խրիմյանի «Իմ դիտողությունք և վշտահար ողբերս» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է Կարապետ Նաթանյանցի «... տեր» նամակը, որտեղ քննական դիտողություններ են արված «անցյալ տարիներն ի Պոլիս հրատարակված «Խրիմյան և գործք յուր» տետրակին» վերաբերյալ (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.):

Օգոստոսի 10. «Արշալույս արարատյանը» (№ 994) գրաբար սկսում է հրատարակել Զարմայր Մսերյանցի «Ազդ» հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հոդվածագիրը շարադրել է «իր պաշտելի ծնողի» գիտահրապարակախոսական համառոտ գործունեությունը, ապա ներկայացրել մի հատված «Ի պատմութենէ կաթողիկոսաց էջմիածնի» վերնագրով: Վերջում Մսերյանցն իր դրական կարծիքն է հայտնում «Արշալույս արարատյան» № 987-ում (մայիսի 4, 1874 թ., տե՛ս ներկա հատորը, այդ թվականը) հրատարակված Գաբրիել Պատկանյանի «Ծաղկաքաղ ի լիակատար կենսագրութենէ...» աշխատության մասին և «ի դեպս» անում է լրացումներ ու ճշգրտումներ:

Օգոստոսի 10. «Մեղու Հայաստանին» (№ 31) արևելահայերեն հրատարակում է «Ջիավորի» «Ղզղալա և Մանթաշղալա» հուշագրական ակնարկը:

Օգոստոսի 15. «Մշակը» (№ 32) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Աշխարհաբար լեզու» հոդվածը և «Ասիացու» հերթական «Ֆելիետոնը»:

Օգոստոսի 15. «Լույսը» (№ 6) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հրաչյա»-ի «Վերադարձ ի բնություն» գրական-փիլիսոփայական ուսումնասիրությունը, որը շարունակվելով որոշ ընդհատումներով, ավարտվում է նույն հանդեսի 1875 թ. №

19-ում (մարտի 1): Նույնի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է [Անտուան Առնոյի] «Մարդ և տերև» բանաստեղծությունը:

Օգոստոսի 17. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 406) արևմտահայերեն հրատարակում է «Ստվերք հայկականք» գերապատիվ Խորեն արքեպիսկոպոսի Նար-Պեյ» գրախոսականը (հեղ.՝ «Ռ»):

Օգոստոսի 24. «Մասիսը» (№ 1573) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Արմաշու վանաց «Հույս» ամսագիրը» գրական-հրապարակախոսական հոդվածը (հեղ.՝ «Մանավազ»), որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Բացասաբար է գնահատված այդ ամսագրի գործունեությունը հայ ժողովրդի գրական և հասարակական կյանքում:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Մամբրե վարդապետ Մարկոսյանի «Կարևոր է ուսանիլ զմարդն...» հրապարակախոսական առաջնորդողը: Հրատարակված է նաև «Հավիտենական կամ բնության օրենք» բանաստեղծությունը:

Սեպտեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Հովհաննես Քուչուբեկյանի «Նվեր» և «Հարություն Ոստանիկի» (Հովհաննես Քուչուբեկյան) «Ասացեք հայեր» բանաստեղծությունները:

Սեպտեմբեր. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 9) գրաբար հրատարակում է Միքայել Նալբանդյանի «Արկածք Ադամայ» բանաստեղծության առաջին մասը («Աղցմիք» շարքից): Հրատարակվում է Ա. Լուսինյանի (Ամբրոսիոս Գալֆայան) «Տիկին և տիար Մամուրյան...» արևմտահայերեն եղերերգությունը: Մ. Նալբանդյանի բանաստեղծության շարունակությունը, ինչպես նշում է խմբագրության «Ազդը», «Հրատարակության անպատշաճությունք պարունակելու պատճառավ չշարունակվիր»:

Սեպտեմբեր. Հին Նախիջևանում Մկրտիչ Թունյանի, Ստեփան Կարախանյանի և Հարություն քահանա Տեր-Եսայանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում

«Հին Նախիջևանի արական ուսումնարանը», որը սկզբում ուներ քառասուն աշակերտ: ՈՒսումնարանն իր գոյությունը դադարեցրեց 1918 թվականին:

«Մեղու Հայաստանի», 1874, № 39 («Հին Նախիջևան»), 1875 թ., № 2 («Մեզ հաղորդում են»): **«Մշակ»**, 1919, № 15 («Հին Նախիջևանի հայերը»):

Սեպտեմբերի 4. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 411) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Ինչո՞ւ չեն կարդար» հրապարակախոսական հոդվածը:

Սեպտեմբերի 5. «Մասիսը» (№ 1578) արևմտահայերեն հրատարակում է արևմտահայ մշակութային գործիչներ Հայրապետ Ճանիկյանի, Ավետիս Սահառունու, Տիգրան Ամիրջանյանի, Մելքոն Պարթևյանի և Մկրտիչ Ատոմյանի համատեղ ստորագրությունները կրող հանրագիրը, որոնք սկզբունքային քննադատական դիտողություններ են անում «Խրիմյան և գործք յուր» (Պոլիս, 1874, տե՛ս ներկա հատորը այդ թվականը) աշխատության վերաբերյալ:

Սեպտեմբերի 7. Պոլսի «Թատրոնը» արևմտահայերեն հրատարակում է ազդարարություն այն մասին, որ հաջորդ համարից սկսած, անկանոն պարբերականությամբ հրատարակվելու է հայ գրական, մշակութային, հասարակական և պետական գործիչների երգիծական դիմանկարների մի շարք: Այդ շարքը, հետագայում հավաքվելով մեկ ընդհանուր խորագրի ներքո, դարձավ հռչակավոր «Ազգային ջոջերը»:

Սեպտեմբերի 7. «Մասիսը» (№ 1579) արևմտահայերեն հրատարակում է Գևորգ Պարթևյանցի «... խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» նամակ-գրախոսականը: Գրախոսված է «Խրիմյան և գործք յուր» աշխատությունը (Պոլիս, 1874, տե՛ս ներկա հատորը այդ թվականը), որը բացասաբար է գնահատված:

Սեպտեմբերի 10. «Օրագիրը» (№ 1335) արևմտահայերեն հրատարակում է Սմբատ Գաբրիելյանի «Հայկական լեզու» հոդվածը:

Սեպտեմբերի 11. Պոլսի «Թատրոնը» (№ 44) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Բարունակ Մանվել ՈՒթուջյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 244-246):

Սեպտեմբերի 12. «Մշակը» (№ 36) արևելահայերեն սկսում է հրատարակել Սողոմոն Եղիազարյանցի «Կիրակնամուտի զոհ» պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Սեպտեմբերի 14. «Մասիսը» (№ 1582) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մկրյանի «Բանադատական. աշխարհաբար լեզու» հոդվածը: Բանավիճելով «Մշակի» հետ, հոդվածագիրը բարձրացնում է լեզվի մեջ անհարկի փոխառությունների հարցը, որոնք «աղավաղում կընեն նաև գրականության մեջ»:

Սեպտեմբերի 14. Պոլսի «Թատրոնը» (№ 45) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Ըսի, ըսիր, ըսավ» երգիծական մանրապատումը, [նույնի] «Ռուսյալ աղջկա մը և տգետ մոր մը բանակռիվը» երգիծական պատմվածքը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 219-221) և Խաչիկ Սարաճյանի «Հուսահատ վիճակ» բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 36), Ալեքսանդր Քալանթարի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել Բերտոլդ Աուերբախի «Կայծակ բռնող Ղուկասը» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի № 38-ում (սեպտեմբերի 28):

Սեպտեմբերի 14. Պարտիզակում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, մատենագետ, բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից և գրաբարից՝ հայերեն), խմբագիր Թորգոմ Խաչերեսի Գուշակյանը (Պիլիճյան): Երուսաղեմի միաբանության անդամ էր 1896 թ. սեպտեմբերի 15-ից: Վախճ. 1939 թ. փետրվարի 10-ին Երուսաղեմում:

Յոթ տարի խմբագրել է «Սիոն» ամսագիրը: Այստեղ և ժամանակի այլ պարբերականներում հանդես է եկել «Թ.», «Թ.Ե.Գ.» (Թորգոմ եպիսկոպոս Գուշակյան), «Թ.Ա.Գ.» (Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան) ստորագրություններով, 1937-38թթ. «Սիոնի» առաջնորդողները ստորագրում էր *** ձևով:

«Սիոն», 1931, № 7 («Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան...»), № 12 («Աթոռն և աթոռակալը»), 1939, № 3-7 («Հանգուցյալ Թորգոմ պատրիարք...»): **Ալպոյաճյան Ա.**, Թորգոմ պատրիարք Գուշակյան, Կահիրե, 1940, 712 էջ:

Սեպտեմբերի 18. «Մասիսը» (№ 1583), Գրիգոր Օտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Առ Խրիմյան ի Վիկտոր Հյուգոյե» գրական էսսեն:

Ինչպես հետագայում վկայում է «Մասիսը» (№ 1585, սեպտեմբերի 21) էսսեի վերնագիրը դրվել է թարգմանչի կողմից, ի նշան հարգանքի Մկրտիչ Խրիմյանի:

Սեպտեմբերի 18. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 415) արևմտահայերեն հրատարակում է «Բանաստեղծական» հոդվածը (հեղ. Հ.Մ.Հ.): Քննելով Խաչիկ Սարաճյանի «Հուսահատ վիճակ» բանաստեղծությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. սեպտեմբերի 14) հոդվածագիրն անդրադառնում է քննադատության խնդիրներին ու անելիքներին:

Սեպտեմբերի 20. «Օրագիրը» (№ 1343) արևմտահայերեն հրատարակում է [Օգսեն Խոճասարյանի] «Ծաղր ի Վիկտոր Հյուգոյե առ Խրիմյան, կամ անարգանք ի Խրիմյանե առ Վիկտոր Հյուգո» գրական-հրապարակախոսական հոդվածը: Քննադատված է Վիկտոր Հյուգոյի՝ Մկրտիչ Խրիմյանին ուղղված բանաստեղծության պատմությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ., սեպտեմբերի 18):

Սեպտեմբերի 21. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 416) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Խաբեություն» գրական-հրապարակախոսական առաջնորդողը: Բացասաբար է ներկայացված «Մասիսի» գրական քաղաքականությունը, ծաղրված է Վիկտոր Հյուգոյի մի բանաստեղծությունը Մկրտիչ Խրիմյանին նվիրված ձոն համարելու ամբողջ պատմությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ., սեպտեմբերի 18): Սրան ընդդեմ «Առ պնակալեզն ի Վիկտոր Հյուգոյե» խորագիրը կրող արևմտահայերեն բանաստեղծությամբ հանդես է գալիս ամբաստանյանը (անդ, № 420, հոկտեմբերի 5):

Սեպտեմբերի 26. Պոլսի «Թատրոնը» (№ 49) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Կարապետ Փանոսյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 289-292):

Սեպտեմբերի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 50) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Հին աշխարհին Խաչիկը, նոր աշխարհին Գաբիկը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի № 105-ում (փետրվարի 18):

Վիպակի սկզբնական մի քանի հատվածներ ունեն «Ես», իսկ հաջորդները՝ «Դուն» ստորագրությունը, որոնք, ինչպես հայտնի է, Հակոբ Պարոնյանի կեղծանուններն են:

Սեպտեմբերի 28. Էջմիածնում իր աշխատանքային գործունեությունն է սկսում «Ժառանգավորաց Հոգևոր Ճեմարան Սուրբ Գևորգյան» անունը կրող կրթական հաստատությունը, որն ավելի հայտնի էր Գևորգյան հոգևոր ճեմարան անունով, և որն այդպես էր կոչվում ի պատիվ նրա հիմնադիր Գևորգ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի: Հիմնադրումը անձամբ կաթողիկոսի ձեռքով կատարվել էր 1869 թ. մայիսի 25-ին: Ճեմարանը սկզբում վեցամյա էր (հետագայում՝ իննամյա), ուներ 60 աշակերտ (ծաղկուն ժամանակ՝ 336) և հինգ ուսուցիչ (հետագայում՝ 19): Առաջին տեսուչն էր Գաբրիել Այվազովսկին: 1874 թ. նոյեմբերի 4-ին Ռուսաստանի ներքին գործերի մինիստրությունը վավերացնում է նրա գոյությունը և այն պաշտոնական ճանաչման իրավաբանական ստատուս է ստանում: Տարբեր ժամանակներում Գևորգյան ճեմարանում դասավանդել են Արիստակես Սեդրակյանցը, Սեդրակ Մանդինյանը, Լեոն, Կարապետ Կոստանյանը, Կոմիտասը, Մաղաքիա Օրմանյանը, Հակոբ Մանանդյանը, Հրաչյա Աճառյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Մակար Եկմալյանը, Մանուկ Աբեղյանը և ուրիշներ: Գևորգյան հոգևոր ճեմարանը իր գոյությունը դադարեցրեց 1917 թվականին:

«Արարատ», 1874, № 9 («Հանդես տոնախմբության...»), 1896, № 10 («Տեղեկագիր...»), 1899, № 12 («Ճեմարան մայր աթոռ»): **«Էջմիածին»**, 1959, № 7 («... Գևորգյան ճեմարանի հիմնադրման 90-ամյակի առթիվ»):

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Մ. Մարկոսյանի «Հանդիմանություն խաբեության Չամուռճյանի» ընդդիմախոսականը և գրաբար՝ Կարապետ Բազրատունյանի «Գիտե՞ք զինչ արարի» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 10) արևմտահայերեն հրատարակում է «Տոմար ընտանեկան, 1874-1875 թթ., Ա հատոր» գրախոսականը: Գրախոսված և

դրական է գնահատված Սրբուհի Երիցյանի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.):

Հոկտեմբեր. «Հույսը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Իրավունք անձին» գրական-փիլիսոփայական տրակտատը և «Ճարտարություն արվեստից» ուսումնասիրությունը:

Հոկտեմբերի 2. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 419) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Հայոց ազգին ներկա՛յը և ապագա՛յը» առաջնորդողը:

Հոկտեմբեր-դեկտեմբեր. «Բազմավեպը» (պրակ 4) արևմտահայերեն հրատարակում է «Վրաստանն, իր պատմությունն և ավանդությունք» հոդվածը, «Ով գիշեր» արձակ բանաստեղծությունը (ունի «Գիշերվան վրա բանաստեղծական այս գեղեցիկ տողերը արևելյան են և կերգվի Արևելք շատ կողմեր, բազում դարերե ի վեր» ծանոթագրությունը): Սրիկ Կոստանդինի «Տաղ ի ծնունդն Քրիստոսի (կենակապ)» բանաստեղծությունը: Հրատարակված է նաև Պ. Միսքճյանի «Հառաչ մի առ Հայրենիս» գրաբար բանաստեղծությունը, «Առածք ազգայինք» խորագրի ներքո՝ հայկական ժողովրդական 65 առած-ասացվածքներ

Հոկտեմբերի 5. «Մշակը» (№ 39) արևելահայերեն հրատարակում է «Հարոյի» «Շնորհալի և պարագա յուր. գրեց Հ. Ղևոնդ Մ. Ալիշան» գրախոսականը: Հրատարակված է Րաֆֆու «Պատասխանը», որտեղ նա պաշտպանում է իր «Փունջի» առաջին հատորը «ուխտյալ կրիտիկոս» Գալուստ Շիրմազանյանի հարձակումից (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. օգոստոս):

Հոկտեմբերի 4. Պոլսի «Թատրոնը» (№ 56) արևմտահայերեն հրատարակում է «Լճեցու» «Տենչանք հայոց», իսկ պարբերականի հաջորդ համարում (հոկտեմբերի 9, № 60)՝ «Կուսանք հայոց» բանաստեղծությունները:

Հոկտեմբերի 5. «Մեղու Հայաստանին» (№ 39) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Ստեփան Պալասանյանց. Քերականություն մայրենի լեզվի» գրախոսականը:

Հոկտեմբերի 5. Պոլսի «Թատրոնը» (№ 57) արևմտահայերեն հրատարակում է «Հուշա-րարի» «Տոքթոր Ռուսինյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշա-կումներից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում(տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 284-287):

Հոկտեմբերի 5. «Մասիսը» (№ 1592) արևմտահայերեն հրատարակում է Տիգրան Սեթ-յանի «Ի տարաժամ մահ մեծապատիվ դոկտոր Հովհաննես էֆենդի Մելիքյան» եղերերգական պոեմը: Տողատակում տրված է վերջինիս համառոտ կեն-սագրությունը:

Հոկտեմբերի 7. Պոլսի «Թատրոնը» (№ 58) արևմտահայերեն հրատարակում է «Լճեցու» «Կլկլակն իմ (նարգիլե)», իսկ պարբերականի հաջորդ համարում (հոկտեմբերի 8, №59)՝ «Կույս մի փափկիկ կամ ուռած տիկ» երգիծական բանաստեղծություն-ները:

Հոկտեմբերի 8. «Մասիսը» (№ 1593) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Պան-դուխտի» «Բանասիրական» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերա-կանի № 1598-ում (հոկտեմբերի 19): Գրախոսված է Սրբուհի Երիցյանի «Տոմար ընտանեկան, 1874-1875 թթ., Ա հատոր» աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.), որին արված են սկզբունքային դիտողություններ: Գրիգոր Օտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրա-տարակվում է Վիկտոր Հյուգոյի «Ներոն» պատմվածքը:

Հոկտեմբերի 10. «Մասիսը» (№ 1594) արևմտահայերեն սկսում է հրատարակել Անտոն -Մաղաթիա Գարագաշյանի «Արգո խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» գրախոսականը, որն ավարտվում է հաջորդ համարում: Գրախոսված է Ա.Ա. Սուրենի «Նոր գործնական քերականություն» աշխատությունը (տե՛ս ներկա հա-տորը, 1874 թ.), որի կապակցությամբ ներկայացված են մատենագիտական բնույթի որոշ տեսակետներ:

Հոկտեմբերի 11. «Օրագիրը» (№ 1361) արևմտահայերեն հրատարակում է Մովսես քահանա Մեծուղյանցի «Նախապաշարմունք» հոդվածը: Քննված են հայկական ժողովրդական հավատալիքները:

Հոկտեմբերի 12. Պոլսի «Թատրոնը» (№ 63) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Խաչատուր Միսաքյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշակումներից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 293-298):

Հոկտեմբերի 15. «Կիլիկիա» հանդեսը (№ 3) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Պրուսացի Տերոյենցի «Հին եգիպտացիներուն արվեստները և սովորությունները» հոդվածը: Սկսում են հրատարակվել Սիմոն Ֆելեկյանի «Ազգային» հրապարակախոսական առաջնորդողը, որն ավարտվում է նույն հանդեսի № 5-ում (նոյեմբերի 15) և [Մանվել-Բարունակ ՌԻթուջյանի] «Սկզբունք ժողովրդյան կամ Մալթուս և իր սկզբունքը» ուսումնասիրությունը: Այն ավարտվում է նույն պարբերականի № 5-ում (նոյեմբերի 15):

Հոկտեմբերի 15. «Լույս» հանդեսը (№ 10) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ամբրոսիոս Լուսինյանի (Գալֆայան) «Հայերեն լեզու» գրական-լեզվաբանական հոդվածը, որն ավարտվում է նույն հանդեսի 1875 թ. № 17-ում (փետրվարի 1):

Հոկտեմբերի 17. «Մշակը» (№ 41) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ է հայը Կովկասում և ինչ պետք է լիներ» հրապարակախոսական առաջնորդողը, որտեղ ցույց է տրված հայ ժողովրդի պատմահասարակական ու մշակութային տեղը կովկասյան մյուս ժողովուրդների շարքում: Սկսում է հրատարակվել Գրիգոր Տեր-Հովհաննիսյանի «Հասունյանները և հակահասունյանները» ուսումնասիրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հոկտեմբերի 19. «Մասիսը» (№ 1598) գրաբար հրատարակում է Գարեգին Արիստակեսյանի «Նուագ ի շնորհաւորութիւն պանծալի անուան Ս. Պատրիարքի, Ներսէսի սրբազան արքեպիսկոպոսի...» ներբողական բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 19. «Մեղու Հայաստանին» (№ 41) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Պուպրի» պատմվածքը:

Հոկտեմբերի 19. Պոլսի «Թատրոնը» (№ 69) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Օսեն Խոճասարյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական

բնույթի որոշ փոփոխություններից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 247-252):

Հոկտեմբերի 22. «Մասիսը» (№ 1599) արևմտահայերեն հրատարակում է Արիստակես Հովհաննիսյանի «... էֆենդի» նամակը (տեղեկացնում է, որ հավաքել, ձայնագրել և «բնագրորեն ճշտել է» հայկական շարականները) և գրաբար՝ Հովհաննես Թաթարյանի «Մրմունջ որդիական առ Կարապետ էֆենդի Գարակյոզյան» չափածո եղերերգությունը:

Հոկտեմբերի 23. «Օրագիրը» (№ 1371) արևմտահայերեն հրատարակում է Պ. Պորսումյան Արաբկերցու «... խմբագիր» հոդվածը: Վերլուծված է բացասաբար է գնահատված Մինաս Չերազի գրական-հասարակական և առանձնապես լեզվաշինության բնագավածում ծավալած գործունությունը:

Հոկտեմբերի 24. «Մշակը» (№ 42) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Հասունյանը և յուր կուսակցությունը» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 24. «Մասիսը» (№ 1600) արևմտահայերեն սկսում է հրատարակել Ա.Ա. Սուրենի «... խմբագիր «Մասիս» պատվական լրագրո» բանասիրական-լեզվաբանական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Բանավիճելով Ա. Մ. Գարագաշյանի հետ (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. հոկտեմբերի 10), հեղինակն անդրադառնում է «գրաբար լեզու և գրաբարալեզու գրականություն» հարցերին:

Հոկտեմբերի 26. Պոլսում ծնվեց արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Օննիկ Չիֆթե-Սարաֆը (Հովհաննես Գրիգորի Աբիսողոմյան): Վախճ. 1932 թ. հուլիսի 11-ին Ժնևում (Շվեյցարիա):

1919 թ. Պոլսում հիմնել և մի տարի խմբագրել է «Հայ միտք» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես է եկել «Հովհաննես ասպետ», «Շանթլեռ» և «Քոտաք» կեղծանուններով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 337: **«Հայաստանի կոչնակ»**, 1932, № 32 («Մահ»), 1933, № 1 («Օննիկ Չիֆթե-Սարաֆ»): **Պետրոսյան Ե.**, Գրական դեմքեր (Օննիկ Չիֆթե - Սարաֆ), Երևան, 1977, էջ 247-285:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Ժողովրդական երգիչներ» ուսումնասիրությունը: Սայաթ-Նովայի գործունեությունը բնութագրելուց և Գ. Ախվերդյանի՝ 1852 թ. Մոսկվայում հրատարակված «Սայաթ-Նովա, լուս զգած աշխատասիրութենով» ժողովածուն ներկայացնելուց հետո, համապատասխան ծանոթագրություններով, հրատարակված են Ղուլ Էկազի «Միրտ մարդո» և Ղուլ Արդունի «Գրիչ» ժողովրդական հայերենով գրված բանաստեղծությունները: Վերջիններս խմբագրությունն ստացել է Հնդկաստանից:

Հոկտեմբերի 31. Վիեննայում ծնվեց գեղանկարիչ օֆորտիստ Էդգար Պետրոսի Շահինը: Վախճ. 1947 թ. մարտի 18-ին Փարիզում:

Շիշմանյան Ռ., Էդգար Շահին. կյանքն ու ստեղծագործությունը, Երևան, 1956, 207 էջ:

Նոյեմբեր. «Հույսը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մավյանի «Հիշատակարանաց օգուտը» ուսումնասիրությունը: Սկսում է հրատարակվել «Իրավունք այլոց» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում և «Քաղվածք Սենեկա առ Լյուկիլիոս գրած նամակեն» հուշապատումը: Եղիշե Այվազյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Ելովա» բանաստեղծությունը:

Նոյեմբեր. «Արևելյան մամուլը» (Դ տարի տարի, № 11) արևմտահայերեն հրատարակում է Ծերենցի «Թղթակցություն» գրական-հրապարակախոսական հոդվածը և գրաբար՝ Ստեփան Չաքրյանի «Ի յիշատակ սգալի մահուան օրիորդ Մարիի Ց. Տայիեան» եղերերգությունը:

Նոյեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է Արիստակես Սեդրակյանի «Քերականություն մայրենի լեզվի» գրախոսականը: Գրախոսված է Ստ. Պալասանյանի՝ 1874 թ. Թիֆլիսում հրատարակված՝ այդ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.), որը լեզվաոճական ու տեսական բնույթի մի քանի դիտողություններից հետո դրական է գնահատված:

Նոյեմբեր. Սաղիանում (Շամախի) Սարգիս վարդապետ Միրզաբեկյանցի, Սահակ քահանա Հունանյանցի, Հարություն Մխիթարյանցի, Հովհաննես Խալափյանցի,

Խաչիկ Մաթևոսյանցի ջանքերով իր գոյությունն է սկսում կրթադաստիարակչական «Ս. Ստեփաննոս Նախավկայի անվան գյուղական ընկերությունը»: Շուտով այն իր հովանավորության ներքո է վերցնում 1869 թ. հիմնադրված վանական դպրոցը (տե՛ս ներկա հատորը, 1869 թ., Սաղիան): Ներքին երկպառակություններից հետո ընկերությունը դադարում է գոյություն ունենալ 1875 թ. մայիսին:

«Մեղու Հայաստանի», 1874, № 31 («Հարգո խմբագիր»), № 47 («Ազգային»), 1875, № 19 («Ազգային»):

Նոյեմբերի 2. «Մասիսը» (№ 1604) արևմտահայերեն հրատարակում է Պողոս Շաշյանի «Առ մեծն Հովհաննես Այվազովսկի պատկերահան» ներբողական բանաստեղծությունը: Նախորդող ընծայականում տրված է վերջինիս գրության բանասիրական պատմությունը:

Նոյեմբերի 2. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է Ալեքսանդր Քալանթարի «Տեր Վրթանես» պատմվածքը:

Նոյեմբերի 6. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 429) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Գեորգ Այվազյանի] երգիծական-հրապարակախոսական մանրապատումների շարքը «Ծաղրասիրական» ընդհանուր խորագրի ներքո: Հրատարակությունն ավարտվում է նույն պարբերականի՝ 1875 թ. № 474-ում (ապրիլի 17): Այդ ընթացքում հրատարակվում է 39 «ծաղրասիրական հոդված»:

Նոյեմբերի 7. «Մասիսը» (№ 1606) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Բանաստեղծություն և ստվերք հայկականք գերապատիվ Խորեն եպիսկոպոսի Նար-Պեյ» գրախոսականը (հեղ. Մ.Ն.Ն.), որն ավարտվում է նույն պարբերականի № 1609-ում (նոյեմբերի 14):

Նոյեմբերի 7. «Մշակը» (№ 40) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Վանքը և կուսակրոն հոգևորականությունը» հոդվածը:

Նոյեմբերի 13. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 431) «Առածք» խորագրի ներքո հրատարակում է արևմտահայերեն 13 առած-ասացվածքներ:

Նոյեմբերի 21. «Մշակը» (№ 47) Թիֆլիսի բարբառով հրատարակում է «Համալի» «Համալի մասնահաթը» ֆելիետոնը (տե՛ս. **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 263-267):

Նոյեմբերի 27. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 435), ֆրանսերեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ (թարգմանիչ՝ Մ.Կ.Ն.), հրատարակում է Ալֆոնս Լամարթինի «Ախուն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 28. «Մշակը» (№ 48) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Հեղինակների վիճակը» հոդվածը:

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11), Զաքարիա Համբարձումյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էմե Մարթենի «Հավատք և հույս» նովելը: Հրատարակված է Խորեն վարդապետ Մխիթարյանի «Բանասիրական» արևմտահայերեն ուսումնասիրությունը, որտեղ վերլուծված են «կռապաշտից պատշամունքները, սովորությունները, արարողությունները, ձևերը, հանդեսները»: Ավարտը՝ հաջորդ համարում: Ժողովրդական աշխարհաբարով հրատարակված է աշուղ Ջամալիի «Երգ Հայաստանի շինական խնճոյից» բանաստեղծությունը, խմբագրության՝ հայ նոր գրականության հարցերը վերլուծող ներածականով՝ Գևորգ Բարխուդարյանի «Հայրենասեր եղբայր» աշխարհաբար ուղերձը, որտեղ հեղինակը ներկայացնում է իր «Միրզա և Աննա» վիպասանությունը և արևմտահայերեն՝ Մ. Կյոմրյուքճյանի «Առ խմբագրություն «Սիոնի» նամակը: Հակադրվելով «Մասիսի» հոդվածագրին (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. նոյեմբերի 7), նամակագիրն ապացուցում է, որ Խ. Գալֆայանի բանաստեղծություններից իր կատարած բանագողության մասին ասվածը զրպարտություն է:

Նոյեմբերի 30. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Հիմի ո՞վ է մեղավոր» երգիծական պատմվածքը:

Նոյեմբերի 30. «Արշալույս արարատյանը» (№ 1002) արևմտահայերեն հրատարակում է «Իրք հանգուցյալ Տեպեճյանի, գրյալ ի նմանե անկողնի հիվանդության յուրո»

(ունի Փ.Ա.Ս.Տ. ստորագրությունը) և գրաբար՝ Նշան Միրզայի «Ի սգալի մահ առաքինափայլ օրիորդին Մարի Տաեան» չափածո եղերերգությունները:

Դեկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Դ տարի, № 12) գրաբար հրատարակում է Արմենակ-Սարգիս Պալապանյանի «Առ վաղամեռիկն Տիրուհի, ուսումնազարդ դուստր մեծաշուք Գրիգոր էֆենդի Ապրօեան» չափածո եղերերգությունը:

Դեկտեմբերի 1. «Լույս» հանդեսը (№ 13) արևմտահայերեն հրատարակում է [Հմայակ Դիմաքսյանի] «Քննական կրոնագիտություն» գրախոսականը: Գրախոսված և դրական է գնահատված Սահակ Տեր-Սարգսյանի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.):

Դեկտեմբերի 1. Տանակերտ գյուղում (այժմ՝ Նախիջևանի ԻԽՍՀ, Օրդուբադի շրջան) ծնվեց մանկագիր, բանաստեղծ, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), ՀՀ վաստակավոր ուսուցիչ (1950 թ.), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Հայրապետ Մարգարի Հայրապետյանը: Վախճ. 1962 թ. մարտի 7-ին Երևանում:

Խաչատրյան Հ., Գրական Տեղեկատու, էջ 279-282: **«Սովետահայ գրականության տարեգրություն»**, Երևան, 1977, էջ 87:

Դեկտեմբերի 2. Սղնախում (Վրացական ԽՍՀ), Ստեփաննոս Տեր-Ստեփանյանցի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Շուշանիկյան օրիորդաց դպրոցը»: Սկզբում այն ուներ քառասուներկու աշակերտուհի: Ի թիվս այլ առարկաների, ավանդվում էր կրոն, ձեռագործ, երգեցողություն:

«Մեղու Հայաստանի», 1874, № 52 («Հարգո խմբագիր»):

Դեկտեմբերի 5. «Մշակը» (№ 49) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու?] «Ազատությունը Թուրքիայի մեջ» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 7. «Մասիսը» (№ 1618) արևմտահայերեն հրատարակում է Մարկոս Աղաբեկյանի «Առ շնորհազարդ Գարեգին վարդապետ Սրվանձտյանց, ծրագրող «Գրոց ու բրոց» և «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» անուն գրքույկին» նամակ-բանախոսականը:

Դեկտեմբերի 7. «Մեղու Հայաստանին» (№ 49) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» «Հոգաբարձական մենամարտություն կամ ով է մեզնից ուժեղը» երգիծական պատմվածքը:

Դեկտեմբերի 11. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 439) գրաբար հրատարակում է Համբարձում Ալաճաճյանի «Զօն առ մեծն Այվազովսկի, տիեզերահռչակ հայկազն նկարիչն» բանաստեղծությունը: Այն արտատպված է հեղինակի «Փունջ» ժողովածվից և քառյակների տողերից և ոչ մեկում «ա» տառ գոյություն չունի:

Դեկտեմբերի 12. «Մասիսը» (№ 1620) արևմտահայերեն հրատարակում է Անտոն Մադաթիա Գարագաշյանի «Ա.Մ. Գարագաշյանի պատասխանն առ պ. Սուրեն» լեզվաբանական-բանասիրական հոդվածը: Բանավիճելով Ա.Ա. Սուրենի հետ (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. հոկտեմբերի 24), Գարագաշյանը նորից քննության առարկա է դարձնում գրաբարալեզու գրականության և գրաբարի հետ կապված հարցերը:

Դեկտեմբերի 13. Կեսարիայում ծնվեց մշակութային գործիչ, հոդվածագիր Բարսեղ Օհանյանը: Վախճ. Ալեքսանդրիայում (Եգիպտոս):

1904-1905 թթ. Ալեքսանդրիայում խմբագրել է «Ազատ բեմ» շաբաթաթերթը (վերջին մի քանի համարները հրատարակվել են Կաhիրեում): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Արա» կեղծանունով:

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո (№ հատոր), Կահիրե, 1937, էջ 2077-2080:

Դեկտեմբերի 14. «Մասիսը» (№ 1621) արևմտահայերեն սկսում է հրատարակել Հովհաննես Մկրյանի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Միհերի դուռ» գրախոսականը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Դեկտեմբերի 14. «Մեղու Հայաստանին» (№ 50) արևելահայերեն հրատարակում է «Ազգային պատմության դասատվություն և ձեռնարկ» պատմաբանասիրական հոդվածը (հեղինակ՝ Հ.Տ.Հ.):

Դեկտեմբերի 14. «Արշալույս արարատյանը» (№ 1003) գրաբար հրատարակում է Ստեփան Չաքրյանի «Ի սգալի մահ օրիորդի Տիրուհւոյ, դստեր մեծաշուք Գրիգոր

էֆենդի Ապրօեան» և Հարություն Սվաճյանի «Ներսէս Մավեան, երիտասարդ դաստատու Արմաշի վանից, եղերերգ մահու» չափածո եղերերգությունները:

Դեկտեմբերի 15. «Լույս» հանդեսը (№ 14) արևմտահայերեն սկսում է հրատարակել Անտոն Թարգմանյանի «Հայք ի Տրանսիլվանիա և ի Հունգարիա վաղ և արդի ժամանակաց մեջ» պատմաբանասիրական ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն հանդեսի 1875 թ. № 16-ում (հունվարի 15):

Դեկտեմբերի 19. «Մշակը» (№ 51) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Երեք տարի անցավ» հրապարակախոսական առաջնորդողը և նրա՝ «Հայոց թատրոն. Գ. Սունդուկյանի «Քանդած օջախ» թատերախոսականը:

Դեկտեմբերի 21. «Մասիսը» (№ 1624), Մակար Գրիգորյանի արևմտահայերեն նամակընծայականով, հրատարակում է Գևորգ Բարխուդարյանի «Հայրենասեր եղբայր» նամակը, որն արտատպված է «Սիոն» ամսագրի նոյեմբեր թվից» (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. նոյեմբերի 30): Գ. Բարխուդարյանը մեկնաբանում է իր «Միրզա և Աննա» վիպասանության նպատակը և գրության շարժառիթները:

Դեկտեմբերի 24. Պոլսի «Թատրոնը» (№ 73) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Դունի» «Լանկա բոստանին պախըճի պատվելի մը» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի 1875 թ. № 84-ում (հունվարի 19):

Դեկտեմբերի 26. «Մասիսը» (№ 1626) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մկրյանի «Հազար ու մի առակավոր բանք, ազգային և օտարք, ի Գաբրիելէ եպիսկոպոսէ Այվազյան» գրախոսականը:

Դեկտեմբերի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 76) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Կաղանդը կուգա կոր» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 224-226):

Դեկտեմբերի 31. «Սիոնը» (№ 12), Զաքար Համբարձումյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էմէ Մարթենի «Մարդկային ազգին կրոնքը» և գրաբար՝ Կարապետ Բագրատունյանի «Ի ծնունդն Քրիստոսի» բանաստեղծությունը:

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, աշխարհագրագետ, լրագրող, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Հրանտ Խանջյանը: Վախճ. 1951 թ. հունիսին:

«Հայաստանի կոչնակ», 1951, № 23 («Մահ ուսուցիչ և հեղինակ Հրանտ Խանջյանի»):

–––Պոլսում ծնվեց պատմաբան-բանասեր, արձակագիր, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն), լրագրող Միքայել Շամտանճյանը: Վախճ. 1926 թ. օգոստոսի 21-ին Ղազիրում (Լիբանան):

«Վահագն ջահակիր» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: 1898-1899 թթ. Պոլսում խմբագրել է «Մասիս» լրագիրը, 1903-1904 թթ.՝ «Ծաղիկ» կիսամսյա հանդեսը, 1911-1912 և 1919-1922 թթ.՝ «Ոստան» եռամսյա պարբերականը, 1925 թ. Բեյրութում՝ «Հայ կյանք» եռօրյա թերթը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1908, էջ 334, 1927, էջ 631-632: **«Ընդարձակ օրացույց»**, Պոլիս, 1927, էջ 433:

–––Պոլսում (?) ծնվեց լրագրող, մատենագետ, բանասեր Խաչատուր Գուրյանը: Վախճ. 1950 թ. հունվարի 28-ին Ալեքսանդրիայում:

«Հայաստանի կոչնակ», 1950, № 21 («Մահ Խ.Ս. Գուրյանի»):

–––Սևերեկ քաղաքում (նաև Սևավերակ. Արևելյան Թուրքիա) ծնվեց արձակագիր, մշակութային գործիչ, գրականագետ, թարգմանիչ (ռուսերենից, ֆրանսերենից, թուրքերենից՝ հայերեն), խմբագիր Ռուբեն Զարդարյանը: Եղեռնամահ՝ 1915 թ. ապրիլին, Հալեպի շրջանում:

«Էժտահար», «Աչք Եհովայի», «Ասլան», «Աքսորական» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում: 1906-ին Ֆիլիպեում (Բուլղարիա) հիմնադրել և մինչև 1908-ը խմբագրել է «Ռազմիկ» օրաթերթը (սկզբում՝ եռօրյա): 1919 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1915 թ. խմբագրել է «Ազատամարտ» օրաթերթը:

«Արյունի ժանիքեն (ժողովածու)**»**, Պոլիս, 1906: **Զարդարյան Ռ.**, Ամբողջական երկեր (արձակ էջեր ու հեքիաթներ), Փարիզ, 1930, 218 էջ: **Նույնի**, Յայզալույս (կազմեցին Վ. Նորենց և Ս. Տարոնցի), Երևան, 1959, 603 էջ:

–––Եփրատում (Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (հայերենից՝ անգլերեն), լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով) Խորեն Անդրեասյանը: Վախճ. 1954 թ. դեկտեմբերի 17-ին Բոստոնում (ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1955, № 34 («Մահ Մ. Անդրեասյանի»):

–––Սեբաստիայում (Արևելյան Թուրքիա) ծնվեց գրական-մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), արձակագիր, խմբագիր Տիգրան Զավենը (Չուգասըզյան): Վախճ. 1938 թ.:

1906 թ. Թիֆլիսում հիմնադրել և մինչև 1908 թ. խմբագրել է «Երկրի ձայնը» երկշաբաթաթերթը (վերջին տարին՝ Պոլսում), 1908 թ. Պոլսում խմբագրել է «Սուրհանդակ» օրաթերթը: 1918 թ. Պոլսում հիմնադրել և մինչև 1920 թ. խմբագրել է «Ժողովուրդ» ամենօրյա լրագիրը: 1921-1922 թթ. խմբագրել է «Զարթոնք» ֆրանսերեն թերթը:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, գիրք Ա. էջ 318:

–––Գանձայում (Ախալքալակի շրջան, Վրացական ԽՍՀ) ծնվեց հուշագրող, գյուղագիր, թարգմանիչ (ռուսերենից՝ հայերեն), ԽՍՀՄ գրողների միության անդամ (1934 թ.) Ջավախեցին (Ղազարոս Սուքիասի Տեր-Գրիգորյան): Վախճ.՝ 1937 թ. Երևանում:

Ջավախեցի, Պատկերներ (ժողովածու, Ա. Տերտերյանի առաջաբանով), Երևան, 1930, 125 էջ: **Հայ գյուղագիրներ** (կազմ. Արմ. Թամազյան), Երևան, 1950, էջ 575-576: **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 464-465:

–––Նոր Ջուղայում ծնվեց գրական-մշակութային գործիչ, բանասեր, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով) Վարդան Աղանյանը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1927, էջ 593: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, գիրք Ա. էջ 69:

–––Քեսիրիկ գյուղում (Խարբերդի շրջան, Արևելյան Թուրքիա) ծնվեց լրագրող, հուշագրող Փիլիպոս Գազանճյանը: Վախճ. 1936 թ. հոկտեմբերի 22-ին Լոս Անջելեսում (ԱՄՆ):

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, Բուխարեստ, 1938, էջ 431:

–––Կյուրինում (Սեբաստիայի նահանգ, Արևելյան Թուրքիա) ծնվեց բանաստեղծ, լրագրող, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Հայկազուն Սեդրակի Խանդամուրը: Վախճ. 1943 թ. օգոստոսի 11-ին Կահիրեում:

«Ակյուլինե» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1943, № 43 («Վեր. Հայկազուն Խանդամուր»), № 45 («Մահ վեր. Հայկազուն Խանդամուրի»), 1957, № 36 («Ակյուլինեի հիշատակին»): **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, գիրք Բ. էջ 39:

–––Պոլսում ծնվեց դերասան, թատերական գործի կազմակերպիչ, արձակագիր, հուշագրող Անդրանիկը (Սողոմոնյան): Վախճ. 1949 թ. հունվարի 17-ին Լոս Անջելեսում:

«Հայաստանի կոչնակ», 1949, № 7 («Դերասան Անդրանիկի մահը»): **Ստեփանյան Գ.**, Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության, հ. Գ, Երևան, 1975, էջ 139-145, 404:

––––––

–––Վենետիկում, Ղևոնդ Ալիշանի՝ անգլերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ և անգլերեն-գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է ամերիկյան բանաստեղծների ստեղծագործությունների ժողովածուն՝ «Քնար Ամերիկեան» վերնագրով: 85 էջ:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Զարբհանալյանի «Մայր, առաջին դաստիարակ մանկության» ստեղծագործությունը: 484 էջ:

–––Վենետիկում, Աբրահամ Ճարյանի՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է Կոռնելիոս Տակիտոսի պատմագիտական գործերի ժողովածուն: 286 էջ:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Զարբհանալյանի «Պատմություն մատենագրության միջին և նոր դարուց արևմուտս» աշխատության Ա հատորը: 434 էջ: Բ հատոր, նույն թվականին, 515 էջ:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է Ղևոնդ Ալիշանի «Ընդ եղեւնեաւ. յամայութեան բացավայրի խորհրդածութիւն» փիլիսոփայական աշխատությունը: 71 էջ:

Նույնը՝ Վահան Հովհաննիսյանի՝ բնագրից կատարած արևմտահայերեն կրճատ թարգմանությամբ, 1930 թ., 110 էջ (հատվածաբար հրատարակվում էր «Բազմավեպում», նույն թվականի հունվարից սկսած): Վերահրատարակությունը՝ «Գրական ցոլքեր» շարքում (№ 4) 1944 թ. 110 էջ: Նույնը՝ Ս. Շտիկյանի՝ բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, «Հայ դասականների գրադարան» շարքում, Երևան, էջ 297-351:

–––Վենետիկում գրաբար հրատարակվում է «Վարք և վկայաբանութիւնք սրբոց, հատընտիր քաղեալք ի ճառընտրաց» ժողովածվի Ա հատորը: 724 էջ: Երկրորդ հատոր՝ նույն թվականին, 550 էջ:

Երկու հատորների բնագրագիտական աշխատանքները, առաջաբաններն ու ծանոթագրությունները՝ Ղևոնդ Ալիշանի:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Զբոսարան տոնից, այսինքն՝ տոներու վրա մտածականներ» աշխատությունը: 606 էջ:

–––Վենետիկում, Արսեն Բագրատունու՝ լատիներեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և Գևորգ Հյուրմյուզյանի առաջաբանով, հրատարակվում է Գայոս Հուլիոս Կեսարի «Յիշատակարանք գալլիական պատերազմին» աշխատությունը: 229 էջ:

Առաջաբանում նշվում է, որ վերոհիշյալ աշխատության թարգմանությանը Արսեն Բագրատունին ձեռնամուխ է եղել իր կյանքի առաջացյալ տարիներին և վրա հասած մահվան հետևանքով չի հասցրել այն ավարտել: Թարգմանությունը իր ավարտին է հասցրել և ամբողջ գիրքը հրատարակության պատրաստել Գևորգ Հյուրմյուզյանը:

–––Վենետիկում, իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիկանոյի «Գործավորք» վեպը: 215 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Հովնանյանի «Գիտություն տերության Եվրոպա, այսինքն նկարագիր արդի հանգամանաց Եվրոպական տերությանց» աշխատությունը: 241 էջ:

–––Մոսկվայում աշխարհաբար, Զարմայր Մսերյանցի առաջաբանով, հրատարակվում է Մսեր մագիստրոս Մսերյանի «Մանր ուսմունք ազգային եկեղեցական պատմության ի պետս հայկազնյաց մանկանց» գիրքը: 56 էջ:

–––Բաքվում, Խորեն Միրզաբեկյանի՝ գրաբար բնագրից կատարած աշխարհաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ներսես Լամբրոնացու «Ներբող հոգվոյն սրբոյ գալստեան վրա» ստեղծագործությունը: 63 էջ:

–––Բաքվում հրատարակվում է Ավագ Գրիգորյանի (հետագայում՝ Գրիգոր քահանա Գրիգորյան) «Սոխակ Հայաստանի (լիակատար երգարան)» ժողովածուն: 284+VIII էջ: Զետեղված են հայկական ժողովրդական և դասական երգերի 250 տեքստեր:

–––Բաքվում, Ալեքսանդր Քալանթարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրանց Հոֆմանի «Հակոբ Էրլիխ» վեպը: 107 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Հայրապետ Ղուկասյանի «Համառոտ հայացք մայրենի լեզվի ուսման վերա» աշխատությունը: 34 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Սրբուհի Երիցյանի կազմած «Տոմար ընտանեկան (առաջին նվեր հայ տիկնանց)» ժողովածուն: 226 էջ: Չնայած այն ունի «հատոր առաջին» նշումը, սակայն հետագա հատորները չեն հրատարակվել:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Ավետիք Բաբայանի «Ա և Բ ընծայաբերության Ներսիսյան դպրոցի» աշխատության Ա պրակը: 44 էջ: Բ պրակ, նույն թվականին, 32 էջ:

–––Թիֆլիսում Ղազախի բարբառով հրատարակվում է Ղազախեցու (Գրիգոր Պապյան) «Դավի դառաբա կամ մի հարսանիք» կատակերգությունը: 88 էջ: Վերջում

կցված փոքրիկ «Հավելվածում» տրված են հարսանիքի ժամանակ սովորաբար ասվող մի քանի բանաստեղծություններ՝ Ղազախի բարբառով:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Րաֆֆու գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածվի առաջին հատորը «Փունջ (բանաստեղծություններ)» վերնագրով: 320 էջ:

Երկրորդ հատոր (վիպասանություններ)՝ անդ, նույն թվականին, 327 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Գրիգոր Տեր-Մելքիսեդեկյանցի «Մի համառոտ հայացք 19-րդ դարի հայ հոգևորականության վրա, այլև Ներսես 5-ը հարևանցի համեմատության մեջ Մխիթար Սեբաստացու հետ» գրքույկը: 36 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ղազարոս Աղայանցի «Հայկական հնչյունների մասին (լուծումն տարակուսանաց)» աշխատությունը: 50 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Ստեփան Պալասանյանի «Քերականություն մայրենի լեզվի» աշխատությունը (մասն Ա, «Կազմությունք և մասունք բանի», մասն Բ, «Ստուգաբանություն», մասն Գ «Բաղդասություն»):

Նույնը՝ անդ, նույն թվականին (միայն Բ մասը), 242 էջ, 1884 թ. (միայն Գ մասը), 56 էջ, 1888 թ. (միայն Ա մասը), 76 էջ և 1906 թ. (երեք մասերը միասին), 242 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) կազմած «Հազար ու մի առակավոր բանք, ազգայինք և օտարք» ժողովածուն: 284 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հարություն-Մանուկ Ամասիացու «Աշխարհ կամ ապաշխարության ազատ բանտ, կամ հոս ու հոն» ստեղծագործությունը: 113 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Երեք ճառք դամբանականք համառոտ, ասացյալք երից վարդապետաց, վասն ննջման և հուղարկավորության, վասն երանաշնորհ եպիսկոպոսին Պոնտոսի Հովհաննես գերապայծառի Կյուրդյան» գրքույկը: 21 էջ:

Դամբանականները ստորագրված են Մ.Վ.Ա (առաջին ճառը), Պ.Վ.Խ. (երկրորդ ճառը) և Ս.Վ.Ջ. (երրորդ ճառը): Այլ մանրամասներ այս կապակցությամբ ճշտել չենք կարողացել:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գերասիմ Պաղտասարյանի «Լապտեր ծնողաց» աշխատությունը: 111 էջ:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Մալեզյանի «Առակ տասն կուսանաց տաղաչափորեն» ստեղծագործությունը:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եղիա Տնտեսյանի «Նկարագիր երգոց Հայաստանյայց եկեղեցվո (տետր Ա)» ուսումնասիրությունը: 147 էջ: Հետագա հատորները չեն հրատարակվել:

---Պոլսում, Ս. Էթմեքճյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, թարգմանչի առաջաբանով և ծանոթագրություններով, հրատարակվում է անգլիացի սոցիոլոգ Սամուել Սմայլսի «Ինքնօգնություն կամ նկարագիր, վարմունք և հարատևություն» աշխատությունը: 564 էջ:

---Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Փոփոխյալ տրամադրությունք ազգային սահմանադրության և տեղեկագիր վերահսկիչ հանձնաժողովո առ ազգային ընդհանուր ժողովն» գրքույկը: 44 էջ:

---Պոլսում, Մ. Ա. Կյուլապյանի՝ ֆրանսերենից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆրիդրիխ Շիլլերի «Կիլյոմ Թելլ» («Վիլհելմ Տելլ») ողբերգությունը: 188 էջ:

---Պոլսում, Մանվել Անանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Կառլոս Ռամումերի «Դաստիարակություն աղջկանց» աշխատությունը: 75 էջ:

---Պոլսում գրաբար և արևմտահայերեն լեզուներով հրատարակվում է Նշան Շիվանյան Վանեցու «Վիշտք իմ ի Փարիզ, յերեսաց Ոստանիկի Տեր-Մարգարեանց» բանաստեղծությունների ժողովածուն: 38 էջ:

–––Պոլսում, Մկրտիչ Տամատյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժան Ռասինի «Միհրդատ» ողբերգությունը:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Տեր-Սարգսյանցի «Քննական կրոնագիտություն» աշխատությունը: 579 էջ:

Նույնը՝ 1879 թ., զգալի վերամշակումներով ու լրացումներով: 1038 էջ:

–––Պոլսում, Դոմնի Գաբրիելյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ջորջ Բայրոնի «Երկինք և երկիր (սրբազան ողբերգություն)» ստեղծագործությունը: 35 էջ:

–––Պոլսում, Կարապետ ՈՒթուջյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ա. Մորթմանի «Հատվածք պատմության Հայաստանի, քաղյալք արաբացի պատմագրաց» աշխատության Ա տետրը: 79 էջ:

Հիշյալ աշխատության երկրորդ տետրը չի հրատարակվել: Հատվածաբար տպագրվում էր Պոլսի «Մասիսում» 1874 թ. հունիսի 8-ից (№ 1542) սկսած (տե՛ս ներկա հատորը, այդ թվականը):

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Տամատյանի «Կենաց բաժակը» կատակերգությունը: 75 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ա.Ա. Սուրենյանի «Նոր գործնական քերականություն» դասագիրքը: 224 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Խորեն Նար-Պեյի (Գալֆայան) չափածո ստեղծագործությունների ժողովածուն,«Ստվերք Հայկականք» վերնագրով: 164 էջ:

Նույնն անփոփոխ՝ 1914 թ.: 147 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Քիրասոնի վարժարանի աշակերտների գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուն, «Աստղիկ Քիրասոնո» վերնագրով: 44 էջ:

–––Պոլսում, Կարապետ Պաղճյանի՝ ֆրանսերենից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Շարլ-Պոլ դը Կոկի «Եղբայր Հակոբոս» վեպը: 560 էջ:

–––Պոլսում, Նշան Ճիվանյանի (հետագայում՝ «Հորո»)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ա. Տրպեի «Հայտնությունք ծածկելոց, կամ պատմություն թաքուն գիտությանց որ ի նախնի ժամանակաց հետե մինչև ցայսօր» աշխատությունը: 650 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Եղիազար Տեվլեթյանի բանաստեղծությունների և պոեմների ժողովածուն, «Քնար կամ քերթվածք» վերնագրով: 78 էջ:

–––Պոլսում, Տիգրան Միքայելյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Սապատողն Հակոբ կամ բարի և ճարպիկ պատանին» պատմվածքը: 48 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Խրիմյան և գործք յուր» գրքույկը:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է [Հովսեփ Մալեզյանի] «Բառատետր ռամկորենե ի հայերեն, մաքուր աշխարհաբառ խոսելու փափագ ունեցողներուն համար» գիրքը: 85 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վրա» գրքույկը: 77 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Համբարձում Ալաճաճյանի բանաստեղծությունների ժողովածուն, «Տողիկք» վերնագրով: 32 էջ:

–––Պոլսում, Խաչիկ Եղիայանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Անձնվիրություն կամ ակամա բժիշկը» պատմվածքը: 46 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ա. Աճեմյանի «Աղալա կամ կղերին տզիտական մեկ զոհը» ողբերգությունը:

–––Պոլսում, Հրանտ Ասատուրյանի (հետագայում՝ Ասատուր) կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Պատմություն Մալվինայի» պատմվածքը: 23 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Գարեգին Սրվանձտյանի «Հնոց և նորոց» ուսումնասիրությունը: 192 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն առաջաբանով, հրատարակվում է Գարեգին Սրվանձտյանի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» աշխատությունը: 192 էջ:

–––Էջմիածնում գրաբար հրատարակվում է Դավիթ քահանա Սարգսյանի «Խաղաղութիւն մտաց» աշխատությունը: 341 էջ:

–––Էջմիածնում գրաբար հրատարակվում է Եղիշե Մեծատունյանի «Դաշնագիր ավետարանական սիրոյ և միաւնութեան» աշխատությունը: 32 էջ:

–––Վաղարշապատում արևելահայերեն հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Վաղարշապատ քաղաքամայր Հայաստանի, հանդերձ աշխարհագրությամբ Այրարատյան նահանգի» աշխատության Ա հատորը: ԺԱ+75 էջ:

Երկրորդ հատոր («Կաթողիկե մայր եկեղեցի Վաղարշապատա, ընդ չորից վանորեից նորին»)՝ 1875 թ.: 56 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ, հանդերձ կանոնագրութեամբք» աշխատությունը: 159 էջ:

–––Վաղարշապատում, արևելահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Նիկողայոս Թաշճյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրության» աշխատությունը: 54 էջ:

–––Վաղարշապատում հրատարակվում է Արիստակես Սեդրակյանի կազմած «Քնար Մշեցվո և Վանեցվո» ժողովածուն: 46 էջ: Զետեղված են 36 անուն ժողովրդական երգեր:

–––Թեոդոսիայում, ռուսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Կարգադրություն հաղագս զինվորական պարտավորության, բարձրագույնս հաստատյալ» գրքույկը: 141 էջ:

–––Նյու Յորքում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Վիլիամ Կուտելի «Ավետարանական քարոզներ» գիրքը: 615 էջ:

–––Նյու Յորքում, անգլերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մ.Է. Վեստի «Միրո խրատներ Տաճկաստանի քրիստոնյա կնիկներուն համար» գիրքը: 231 էջ:

–––Երուսաղեմում արևմտահայերեն հրատարակվում է Սահակ Խապայյանի «Համառոտ աշխարհագրություն բնական, քաղաքական, ուսումնական» աշխատությունը: 364 էջ:

–––Զմյուռնիայում, Փիլիպոս Վարդանյանի՝ գերմաներեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ֆերդինանդ Շմիդտի «Գեորգ Վաշինգտոն» աշխատությունը: 88 էջ:

Նույնը լրացումներով՝ Թիֆլիս, 1885 թ., 170 էջ:

–––Զմյուռնիայում, իտալերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «Ե.Մ.Ս. պատվելի»), հրատարակվում է Ֆրանչիսկո դալլ Օնգարոյի «Ճերմակ վարդը» վիպակը: 128 էջ:

–––Զմյուռնիայում, Արամ-Կարապետ Տետեյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Մոլիերի «Թարթյուֆ» կատակերգությունը:

Նույնն անփոփոխ՝ 1882 թ.:

––-Դոնի Ռոստովում, Մարիամ Չուվալյանի՝ ռուսերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Վարդուհի (պարզև փոքրիկ մանուկներին») դասագիրքը: 142 էջ:

Սկզբում այբբենարանի սկզբունքով երեխաներին գրաճանաչ դարձնելուց հետո, զետեղված է վերոհիշյալ վերնագիրը կրող դիդակտիկ վիպակը:

––-Փարիզում, ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Սահմանադրություն, օրենք և ընդհանուր կանոնք որմնադրական ուխտին (իմա՛. ֆրա-մասոնների. Ս.Շ.) Գաղղիո» գիրքը: 159 էջ

1875

Հունվար. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 1) արևմտահայերեն հրատարակում է Սեդրակ Տեր-Սարգսենցի «Գրոց և բրոց» գրախոսականը: Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Իմ որդիքս» պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Հունվար. Էջմիածնի «Արարատը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Ծերն ի Մասիս» բանաստեղծությունը և անստորագիր՝ «Մշակ» լրագրի համար» քննադատական հոդվածը: Բացասաբար է գնահատված ինչպես Գրիգոր Արծրունի-գործիչը, այնպես էլ «Մշակի» գործունեությունը:

Հունվար. «Հույսը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Քննադատություն իմաստասիրական ստուգության» գրական-փիլիսոփայական հոդվածը: Համապատասխան ծանոթագրություններով սկսում է հրատարակվել «Արիստոտել» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 4-ում (ապրիլ): Տպագրված է նաև «Իղձք հայրենասիրի» գրաբար բանաստեղծությունը:

Հունվարի 1. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 445), «Գրաքաղ» ընդհանուր խորագրի ներքո հրատարակում է հայկական ժողովրդական առած-ասացվածքների արևմտահայերեն առաջին փունջը, բաղկացած 11 անունից: Հաջորդ փունջը (18 անուն)՝ անդ, №446, հունվարի 4:

Մկիզբ. Հին Նախիջևանում Մկրտիչ Թունյանի և Հարություն քահանա Տեր-Եսայանի նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում «Հին Նախիջևանի օրիորդական ծխական դպրոցը», որն ուներ քանիհինգ աշակերտուհի: Դպրոցը փակվում է 1918 թվականին:

«Մեղու Հայաստանի», 1875, № 39 («Հին Նախիջևան»): **«Մշակ»**, 1919, № 15 («Հին Նախիջևանի հայերը»):

Հունվարի 1. «Լույս» կիսամսյա հանդեսը (№ 15) գրաբար սկսում է հրատարակել հայկական առած-ասացվածքների առաջին փունջը «Եօթանասնեակ» ընդհանուր խորագրով (18 անուն), որը խմբագրությանն է ուղարկվել Զմյուռնիայից: Հրատարակված է նաև «Տեր հողմոց և ծովու» նմանողությամբ գրված բանաստեղծությունը (հեղինակ՝ Ֆ.Ս.):

«Եօթանասնեակի» հրատարակությունը հետագայում ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. № 17, փետրվարի 1 (10 անուն), № 19 (15 անուն), № 20, մարտի 15 (17 անուն) և № 23, մայիսի 1 (24 անուն):

Հունվարի 1. Պոլսի «Թատրոնը» (№ 80) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Խիկարի» «Կանանց հետ մ'իյնաք, ձեզ կըլլան փորձա՛նք» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 227-229):

Հունվարի 2. «Մասիսը» (№ 1629), Գրիգոր Օտյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Թախիծ բանաստեղծին» ստեղծագործությունը:

Հունվարի 2. «Մշակը» (№ 1) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչպես վարվեցիք մեզ հետ» հրապարակախոսական առաջնորդողը (տեղեկացվում է, որ չնայած «Մշակի» և նրա համախոհների դեմ սանձազերծված պայքարին, իրենք շարունակելու են աշխատել նույն ձևով) և «Ասիացու» հերթական «Ֆելիետոնը», ուր մեկնաբանված է այն մեծ գործը, որ կատարել է «Մշակը» իր հրատարակության երեք տարիների ընթացքում, հայ ժողովրդի հասարակական -քաղաքական և մանավանդ գրական-մշակութային կյանքում:

Հունվար-մարտ. «Բազմավեպը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է Արսեն Սուքրյանի «Բազմավեպ առ բաժանորդս յուր» հրապարակախոսական հոդվածը, «Մեսրոպյան դար հայկական լեզվի» ուսումնասիրությունը, որտեղ վերլուծված են տառերի գյուտի շարժառիթներն ու V դարի հայ պատմիչների ու թարգմանիչների գործունեությունը: Հրատարակված է «Տաղ մեծի զատկին» գրաբար բանաստեղծությունը: Դավիթ Նազարեթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Վիկտոր Հյուգոյի «Վասն աղքատաց» բանաստեղծությունը և դը Լաբրատի «Թագաւորութիւն աշխարհի» պոեմը: «Առածք ազգայինք» խորագրի ներքո հրատարակված են հայկական հիսունվեց աշխարհաբար առածներ:

Հունվարի 4. «Մեղու Հայաստանին» (№ 1) արևելահայերեն սկսում է հրատարակել Սոֆյա Բաբայանի «Տեղեկությունք Գոթայից» ուղեգրությունը, որը շարունակվելով որոշ ընդհատումներով, ավարտվում է նույն պարբերականի № 34-ում (սեպտեմբերի 6):

Հունվարի 8. Թիֆլիսում ծնվեց կուսակցական-պետական գործիչ, բանաստեղծ, հոդվածագիր, թարգմանիչ (ռուսերենից և վրացերենից՝ հայերեն) Աշոտ (Ալեքսանդր) Քրիստափորի Խումարյանը: Վախճ. 1937 թ.:

1893 թ. Թիֆլիսում հիմնել և խմբագրել է «Ազատ Հայաստան» թերթը (կոնսպիրացիայի նպատակով թերթի հրատարակության վայրը նշված է Բրյուսել): 1902 թ.՝ «Պրոլետարիատ» շաբաթաթերթը (այստեղ էլ, նույն պատճառով, հրատարակության վայրը նշված է Ժնև): Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ա.Խ.-յան», «Ընկեր», «Ընկեր Ա.», «Մրրկաբեր», «Հայ բանվոր», «Ա. Մռայլյան», «Աշոտ», «Ա. Մենավոր» կեղծանուններով:

Խումարյան Գ., Աշոտ Խումարյան, Երևան, 1971, 91 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 75:

Հունվարի 9. «Մասիսը» (№ 1631) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մկրյանի «Վիլհելմ Տելլ, հեղինակություն Շիլլերի, թարգմանություն ի գերմանականէ պ[արոն] Բարխուդարյանցի» գրախոսականը:

Հունվարի 15. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 448) արևմտահայերեն հրատարակում է «Հայուն 1875-րդ տարեդարձը» բանաստեղծությունը (հեղ. «Մ.Կ.Ն.»)։

Հետագայում շաբաթաթերթը անկանոն պարբերականությամբ հրատարակում է հետևյալ բանաստեղծությունները. «Մեծաշուք առ պաշտպանն իմ Միքայէլ էֆենդի Մամիկոնեան...» (գրաբար, № 450, հունվարի 22, հեղ. «Մ.Ն.»)։ «Գինեմոլը» (արևմտ., № 460, փետրվարի 26, հեղ. «Ռ»)։ «1, 587, 020» (արևմտ., № 467, մարտի 22)։ «Հավա-թեփտիլի» (իմա՛ «Օդափոխություն», արևմտ., № 495, հունիսի 27)։ «Օ՜հ, հոգըս չէ» (արևմտ., № 506, օգոստոսի 6, հեղ. «Զվարթուն»)։ «Առ արժանապատիվ Գարեգին վարդապետ Սրվանձտյանց» (արևմտ., № 510, օգոստոսի 20, հեղ. Արիստակես վարդապետ Տեր-Սարգիսյան)։ «Առ սգակիր մայրն Հայաստանի» (գրաբ., № 511, օգոստոսի 23, հեղ. «Յ.Խ.Թ.»)։ «Ո՞վ է» (արևմտ., № 515, սեպտեմբերի 6, հեղ. ***)։ «Նոր խաչ» (արևմտ., № 525, հոկտեմբերի 11, հեղ. Սեդրակ Տեր-Սարգսյանց)։ «Խոստովանանք» (արևմտ., № 529, նոյեմբերի 1, հեղ.՝ նույնը)։

Հունվարի 16. «Մշակը» (№ 2) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «Թուրքիա» վերլուծական ակնարկը և «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ գրքույկի առթիվ» գրախոսականը։ Վերջինս ավարտվում է հաջորդ համարում (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 94-113)։

Հունվարի 16. Մեզիրեում (Խարբերդի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց պատմաբան, հուշագրող (ֆրանսերենով) Հովհաննես Նազլյանը։ Հռոմի ՈՒրբանյան միաբանության անդամ էր 1898 թ.։ Վախճ. 1957 թ. սեպտեմբերի 15-ին Բաաբտադում (Լիբանան)։

«Բազմավեպ», 1957 թ., № 9-10 («Հանգիստ հոգվո Հովհաննես Նազլյանի»)։ **Գևորգյան Կ.**, Ամենուն տարեգիրքը, էջ 671։

Հունվարի 18. «Մեղու Հայաստանին» (№ 2) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» հերթական «Ֆելիետոնը»։ Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, բացասաբար է գնահատված «Մշակի», «Համալի» և Ալեքսանդր Երիցյանի գործունեությունը։

Հունվարի 21.Աստրախանում ծնվեց հասարակական կյանքի տեսաբան, տնտեսագետ, պատմաբան, հոդվածագիր (հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իտալերեն լեզուներով) Վահան Թովմասի Տոտոմյանցը (Թոթոմյանց): Վախճ. 1953 թ.:

Հունվարի 25. «Մասիսը» (№ 1638) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մկրյանի «Կենաց բաժակը. կատակերգություն երիս արարս. գրեց Ս. Տամատյան» գրախոսականը:

Հունվարի 25. «Արշալույս արարատյանը» (№ 1006) գրաբար հրատարակում է Գասպար Գասպարյանի «Ճեմարան» բանաստեղծությունը: Այն խմբագրությանն է ուղարկվել Հնդկաստանի Բաթավիա քաղաքից:

Հունվարի 30. Պոլսի «Թատրոնը» (№ 97) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Կարապետ ՈՒթուջյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական փոփոխություններից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» գրքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 299-302): Հրատարակված է Ե.Ս. Զուլալյանի «Գայլ Վահան» գրախոսականը: Գրախոսված են Տիգրան Մանավյանի՝ հիշյալ վերնագիրն ունեցող ողբերգությունն ու բեմադրությունը:

Հունվարի 30. «Մշակը» (№ 30) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Հասարակական կարծիքի բացակայություն» հրապարակախոսական առաջնորդողը:

Հունվարի 31. «Սիոնը» (№ 1) արևմտահայերեն հրատարակում է «Ազդեցություն ազգային պարբերական հրատարակությանց» հոդվածը և համապատասխան բանասիրական վերլուծություններով՝ Ղուլ Արզունի «Մեղա Աստուծո» բանաստեղծությունը (ժողովրդական հայերենով): Հրատարակված է Գալուստ վարդապետ Փափազյանցի «Աշոտ» աշխարհաբար պոեմը և նույնի՝ գերմաներեն բնագրից կատարած թարգմանությամբ, «Հայր մեր» բանաստեղծությունը: Տպագրված է «Գրոց ու բրոց կամ Սասունցի Դավիթ կամ Միհերի դուռ» արևմտահայերեն գրախոսականը:

Հունվար-փետրվար. «Հայկական աշխարհը» (№ 1-2) արևելահայերեն հրատարակում է Աբրահամ Ամիրխանյանի «Մայրենի լեզու» գրախոսականը: Գրախոսված է

Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի՝ այդ վերնագիրը կրող դասագիրքը (տե՛ս ներկա հատորը, 1871 թ.)։ Հարություն Ոստանիկի (իմա՛. Հովհաննես Քուչուբեկյան)՝ ռուսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Միխայիլ Միխայլովի «Պոետին» բանաստեղծությունը և Շիլլերի «Սերմնահան» քառյակը։

Փետրվար. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 2) արևմտահայերեն հրատարակում է «Ասպետի» «Ի հիշատակ Խաչատուր Աբովյանի» բանաստեղծությունը։ Ի թիվս այլ հարցերի, ընդգծվում է, որ «քո փոշիներ եթե Աբովյան չեն հարուցաներ, թող Նալբանդյաններ շնորհե հայ ազգին»։

Փետրվար. Էջմիածնի «Արարատը» (№ 2) արևմտահայերեն սկսում է հրատարակել Գալուստ Շիրմազանյանի «Երջանկահիշատակ Ղուկաս Կաթողիկոսի վրա» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում։ Գրախոսված է Մելքիսեդեկ Մուրադյանցի «Պատմություն Հայաստանյայց սուրբ եկեղեցվո» աշխատությունը (Երուսաղեմ, 1872 թ., տե՛ս ներկա հատորը, այդ թվականը), որը մի քանի մասնագիտական դիտողություններից հետո դրական է գնահատված։

Փետրվարի 1. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 453) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Երկու լարախաղ մեկ չվանի վրա» երգիծական մանրապատումը։

Շարունակելով ավանդույթը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ. հունվարի 1), «Մամուլը» անկանոն պարբերականությամբ հրատարակում է երգիծական մանրապատումներ, հիմնականում անստորագիր, որոնց հեղինակն ամենայն հավանականությամբ խմբագիր Գեորգ Այվազյանն է։ Հաջորդաբար հրատարակվել են. «Դիպլոմալը դոկտոր մը» (№ 454, փետրվարի 5)։ «Երկու բաշիներ» (№ 456, փետրվարի 12, ավարտ՝ № 462-ում)։ «Փերի Առաքելը» (№ 457, փետրվարի 15, ավարտ՝ հաջորդ համարում)։ «Զաքար և Սակառ» (№ 463, մարտի 8)։ «Երաժիշտ էշը» (№ 470, ապրիլի 2)։ «Բանաստեղծ տղա մը հորմեն ծեծ ուտելը» (№ 475, ապրիլի 19)։ «Լրտես մուրացկան» (№ 492, հունիսի 18)։ «Խենթ Աբրահամ և խեղճ Իսահակ» (№ 495, հունիսի 27)։ «Գինեմոլի մը կտա-

կը» (№ 500, հուլիսի 16)։ «Ոսկի և պատիվ» (№ 513, օգոստոսի 30)։ «Էրիկ կնկան դատ մը» (№ 527, հոկտեմբերի 25)։ «Կարինե տուտույին փեսան» (№ 536, նոյեմբերի 29)։ «Ղալաթիո կատուները» (№ 538, դեկտեմբերի 6)։ «Փայտե թուրին հրաշքը» (№ 542, դեկտեմբերի 20)։

Փետրվարի 1. «Լույս» հանդեսը (№ 17) «Բանք օգտակարք» ընդհանուր խորագրի ներքո արևմտահայերեն հրատարակվում է հայկական առած-ասացվածքների առաջին փունջը (14 անուն)։ Այն հրատարակության է պատրաստել և «ինքնուրույններով ճոխացրել է» Ֆ.Ս.-ն (Ֆելեկյան Սիմոն?)։

Հետագայում «Բանք օգտակարք»-ը շարունակվել է հետևյալ հաջորդականությամբ. № 18, փետրվարի 15 (8 անուն, «Մտածություն»), № 19 (16 անուն, «Կանոնք»), № 23, մայիսի 1 (13 անուն, «Օգտակար խոսքեր»), № 15, Բ տարի, հոկտեմբերի 11 (9 անուն, «Բարոյական առածներ»), № 16, հոկտեմբերի 18 (11 անուն, «Օգտակար խրատներ»)։

Փետրվարի 1. «Մեղու Հայաստանին» (№ 4) արևելահայերեն հրատարակում է Ս. Դադյանցի «Հեշտ միջոց հարստանալու» պատմվածքը։

Փետրվարի 4. «Մասիսը» (№ 1642) արևմտահայերեն հրատարակում է Հ. Շահնազարյանի «... խմբագիր» նամակ-ընդդիմախոսականը։ Նամակագիրը վիճարկում է «Մասիսի» 1875 թ. № 1638-ում (հունվարի 25, տե՛ս ներկա հատորի այդ թվականը) հրատարակված Հովհ. Մկրյանի գրախոսականի բոլոր հիմնական դրույթները)։

Փետրվարի 6. Պոլսի «Թատրոնը» (№ 100) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Պիոս IX» դիմանկարը։

Փետրվարի 6. «Մշակը» (№ 5) արևելահայերեն հրատարակում է ***-ի (Առաքել Օհանյան?) «Դպրոցական սահմանադրություն. հորինեց Սեդրակ Մանդինյան» գրախոսականը։

Փետրվարի 8. «Մեղու Հայաստանին» (№ 5) արևելահայերեն հրատարակում է Հ. Նազարյանցի «Մայրենի լեզու, առաջին տարի, երրորդ տիպ» գրախոսականը։ Գրա-

խոսված է Նիկողայոս Տեր-Ղևոնդյանի՝ այդ խորագիրը կրող դասագիրքը, որը մի շարք դիտողություններից հետո դրական է գնահատված:

Փետրվարի 13. Պոլսի «Թատրոնը» (№ 103) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Քրիստոստուր Ղազարոսյան» դիմանկարը: Լեզվաոճական որոշ փոփոխություններից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 303-306):

Փետրվարի 15. «Լույս» հանդեսը (№ 18) արևմտահայերեն սկսում է հրատարակել Արշակ Փափազյանի «Կոտորած և մահ Վարդանա Մամիկոնեի ի դաշտին Շավարշան» պոեմը, որն ավարտվում է նույն պարբերականի № 21-ում (ապրիլի 1):

Փետրվարի 22. Պոլսի «Թատրոնը» (№ 106) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Ստեփան-Պերճ Պողոս Փափազյան» դիմանկարը: Լեզվաոճական որոշ փոփոխություններից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 307-309):

Փետրվարի 22. «Մասիսը» (№ 1649) արևմտահայերեն սկսում է հրատարակել Աբրահամ Այվազյանի «Գարեգին վարդապետ Սրվանձտյանց. Գրոց ու բրոց, կամ Սասունցի Դավիթ. Միհրի դուռ» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Գարեգին Սրվանձտյանի բանասիրական կենսագրությունը շարադրելուց հետո, վերլուծված է վերոհիշյալ աշխատությունը, որը բարձր է գնահատված:

Փետրվարի 22. «Մեղու Հայաստանին» (№ 7) արևելահայերեն հրատարակում է «Թոխմախի» «Գավառական ֆելիետոնը»: Վերլուծված է ժամանակի գրական-մշակութային կյանքը, բացասաբար է գնահատված Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագա յուր» աշխատությունը, Էդուրդ Հյուրմյուզյանի գործունեությունը:

Փետրվարի 27. «Մասիսը» (№ 1651) արևմտահայերեն հրատարակում է Մկրտիչ Խրիմյանի «Հիշատակ տոնի առ քաջն Վարդան և նիզակակից յուր» պոեմը:

Փետրվարի 28. «Սիոնը» (№ 2), Զաքար Համբարձումյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էմե Մարդենի

«Վարդապետություն և բարոյական» նովելը: Հրատարակված է Մամբրե Մարկոսյանի «Խոստովանություն Տերոյենց պատվելվույն» հոդվածը, որտեղ հեղինակը նորից անդրադառնում է Հովհաննես Տերոյենց-Չամուռճյանի թույլ տված կրոնա-աստվածաբանական բնույթի սխալներին:

Մարտ. Կամարակապ գյուղում (Ակնի շրջան, Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Ատոմ Կարապետի Երեցյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ատոմ-Շահեն», «Օտա Ակնի» կեղծանուններով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 722: **Պարսամյան Մ.**, Ակն և ակնցիք, էջ 639, 675:

Մարտ. «Հույսը» (№ 3) Առաքել Շարաբխանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Սոսկալի գիշեր մը» և «Վեհանձնություն» ակնարկները: Հրատարակվում է նաև Սիմոն Հովակիմյանի «Ի գարունն» գրաբար բանաստեղծությունը:

Մարտ. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 3) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մեծն Պետրոս» ուսումնասիրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է «Ասպետի» «Ագռաւն նախախնամեալ» գրաբար առակը:

Մարտի 1. Պոլսի «Թատրոնը» (№ 109) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Հակոբ Վարդովյան» դիմանկարը: Լեզվաոճական բնույթի որոշ վերամշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 253-255): Հրատարակված է «Բելիարի» (Հակոբ Պարոնյան) «Երգ քոքոզաց (իմա՛. աքաղաղներ – Ս.Շ.») բանաստեղծությունը:

Մարտի 1. Պոլսում ծնվեց երաժշտագետ, հայկական պատարագների հետազոտող Անտոն Պետրոսյանը:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 261-262:

Մարտի 6. Պոլսի «Թատրոնը» (№ 111) արևմտահայերեն հրատարակում է «Լրաբերի» (Հակոբ Պարոնյան?) «Պոլսո Թաղերեն մեկուն դպրոցին մեջ» երգիծապատումը:

Մարտի 6. «Մասիսը» (№ 1654) արևմտահայերեն սկսում է հրատարկել Եղիա Տնտեսյանի «Դասագիրք եկեղեցական ձայնագրության հայոց և Նիկողայոս Թաշճյան Պոլսեցի» գրախոսականը։

Տե՛ս նաև «Մասիս», 1875, № 1671, ապրիլի 19 (Ն.Թաշճյանի պատասխանը), № 1683, մայիսի 17 (Ե. Տնտեսյանի երկրորդ պատասխանը «Առ Նիկողայոս Ս. Թաշճյան էֆենդի»), № 1684, մայիսի 20 (Արիս Հովհաննիսյանի և Դիմիտրիոս Չոլաքյանի՝ խմբագրությանն ուղղված և Ն. Թաշճյանին պաշտպանող նամակները), № 1689, հունիսի 3 («Սիոնից» արտատպված և «Վեճ ի մասին հայոց եկեղեցական ձայնագրության» խորագրով հոդվածը՝ ուղղված այդ երկուսի դեմ), № 1691, հունիսի 7 (Ն. Թաշճյանի՝ երկու համարներում տպագրվող հոդվածը) և այլն։ Բանավեճի ընթացքում արծարծվեցին հայկական դասական երաժշտության, խազային գրականության վերծանության, հայ դասական բանաստեղծության նոտագրման և դրա բարդությունների հետ կապվող մի շարք հարցեր։

Մարտի 13. «Մշակը» (№ 10) արևելահայերեն հրատարակում է «Հարոյի» (Նիկողայոս Տեր-Հարությունյան) «Մատենագրություն» հոդվածը։ Համառոտ վերաշարադրությամբ ներկայացված է Վաշինգտոնում անգլերեն հրատարակված «Միացյալ Նահանգների մեջ դաստիարակության տեսությունը» աշխատությունը, արված են մանկավարժական, տեսական-գրականագիտական բնույթի որոշ դիտողություններ։

Մարտի 13. «Մասիսը» (№ 1657) արևմտահայերեն հրատարակում է «Վահրամի» (Գրիգոր Օտյան) «Ավետաբեր» գրական-հրապարակախոսական հոդվածը։ Ներկայացված է Պոլսի նշված պարբերականը և նրա գործունեությունը, որը բացասաբար է գնահատված։

Մարտի 14. Նոր Նախիջևանում ծնվեց արվեստագետ, թատերական տեսաբան, պատմաբան, հայագետ (գրում էր հայերեն և ռուսերեն լեզուներով), ՀՀ ԳԱ թղթակից անդամ (1945 թ.) Ալեքսեյ Կարապետի Ջիվելեգովը (Ճիվելեկյան)։ Վախճ. 1952 թ. դեկտեմբերի 14-ին Մոսկվայում։

ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Дживилов А.», «Керпо А.», «Р.Ж.», «Славянин» կեղծանուններով:

Հարությունյան Շ., Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն (1801-1917), Երևան, 1955, էջ 158: **Նույնի**՝ Սովետական Հայաստանը 40 տարում, Երևան, 1960, էջ 342: «Սովետական գրականություն», 1984, № 4 («Ալեքսեյ Ջիվելեգով»):

Մարտի 15. «Մեղու Հայաստանին» (№ 10) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիզ, 15 մարտի» հրապարակախոսական առաջնորդողը:

Մարտի 15. «Լույս» հանդեսը (№ 20) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Չիլինկիրյանի «Ի տարաժամ մահ Դերենիկի Աշոտո, անդրանիկ որդվույն սիրեցելո Բարթող Սուր. էֆ. Թաթարյանի» եղերերգական բանաստեղծությունը:

Մարտի 18. Պոլսի «Թատրոնը» (№ 116) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Թադևոս էֆ. Պեկյան» դիմանկարը: Լեզվաոճական բնույթի որոշ վերամշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 256-258):

Մարտի 19. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 466) արևմտահայերեն հրատարակում է [Գեորգ Այվազյանի] «Ախլեագը պոզուգին ճեզան» («Բարոյականը խաթարողի պատիժը») հրապարակախոսական հոդվածը:

Մարտի 22. «Արշալույս արարատյանը» (№ 1010) արևմտահայերեն հրատարակում է Ստեփան Չաքըրյանի «Խրախույս Վահանա Գողթնացվույն, առ Վահանյան նորակազմ ընկերություն»... ներբողական բանաստեղծությունը:

Մարտի 22. «Մեղու Հայաստանին» (№ 11) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիս, 22-ին մարտի» գրական-հրապարակախոսական առաջնորդողը: Բնութագրված են հասարակական այն պայմանները, որոնք պետք է ծնունդ տան ճշմարտացի գրականությանն ու գրական քննադատությանը:

Մարտի 25. Պոլսի «Թատրոնը» (№ 119) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Սիմոն Խ. Ցազըճյան» դիմանկարը: Լեզվաոճական բնույթի որոշ վերամշակումներից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 259-260):

Մարտի 27. «Մշակը» (№ 12) Արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Այդ ձեր պարտավորությունը կլիներ» հրապարակախոսական հոդվածը (քննադատված է հայ հոգևորականության անտարբեր վերաբերմունքը իր ազգի, նրա լեզվի ու գրականության հանդեպ) և «Ասիացու» հերթական «Ֆելիետոնը»: Քննադատված են ժամանակի պարբերականները, որոնք որակված են «հիմար, ողորմելի, մանր կրքերով մեծ թերթեր», ինչպես նաև Պոլսի «Մասիսը», որի վերջին հոդվածը «կատարյալ գրականական հիմարության մի գեղեցիկ օրինակ է»:

Մարտի 31. «Սիոնը» (№ 3) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Կրթություն ժողովրդական» հրապարակախոսական առաջնորդողը, որն ավարտվում է նույն ամսագրի № 5-ում (մայիս): Մաքրուհի Թոզաթյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Էմե Մարդենի «Մարդկային սեռի կատարելագործություն» ակնարկը, իսկ Նիկողոս Թոզաթյանի՝ համանման թարգմանությամբ, «Երգող թռչուններ» և «Սրինգ հովվական» նովելները: Հրատարակված է Զաքարիա Եղիայանի «Արձան յաւերժական սիրոյ ի սգալի մահ սիրելի եղբօր իմոյ...» գրաբար եղերերգը և ժողովրդական աշխարհաբարով՝ Սուրենի «Լսեցեք ո՜վ իմ հայեր» բանաստեղծությունը: Այն տպագրված է Ա. Գրիգորյանի «Սոխակ Հայաստանի» (Բաքու, 1874 թ.) ժողովածուից:

Մարտի 31. Պոլսում ծնվեց հայ երաժշտության տեսաբան, երաժիշտ, խմբավար Էդգար Ալեքսանդրի Մանասը: Վախճ. 1964 թ. մարտի 10-ին իր ծննդավայրում:

«Հանդես ամսօրյա», 1957, № 3-5 («Երգահան Էդգար Մանաս»): **«Մարմարա»**, 1964, № 7157 («Մահազդ»), № 7160 («Էդգար Մանասի հուղարկավորությունը»), № 7164 («Պրոֆ. Էդգար Մանասի կյանքն ու վաստակը»): **«Սովետական Հայաստան»**, 1965, № 5 («Էդգար Մանաս»):

Ապրիլ-հունիս. «Բազմավեպը» (պրակ 2) «Երգք ազգայինք» խորագրի ներքո հրատարակում է երկու ժողովրդական բանաստեղծություն, որոնցից առաջինի քառյակների առաջին տառերը կազմում են «Երգ Մովսեսի» բառակապակցությունը: Հրատարակված է «Հելլենաբանություն և հելլենաբան թարգմանիչք հայկական լեզվի (դար Զ-Ժ)» արևմտահայերեն հոդվածը, որին հունարեն բնագրից կատարված գրաբար չափածո թարգմանությամբ, կցված է Գեորգ Պիսիդացուց մի բանաստեղծություն: Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Հովսեփ Պապիերիի

«Ամառն» բանաստեղծությունը և «Ճաշակ յաստուածային տեսարանեն Դանտեի» խորագրի ներքո՝ տասներկու տարբեր հատվածներ նրա «Աստվածային կատակերգությունից», իրենց համապատասխան ծանոթագրություններով: «Առածք ազգայինք» խորագրի ներքո հրատարակված են հայկական ժողովրդական հիսուներկու առած-ասացվածքներ:

Ապրիլ. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 4), Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Կինը» ակնարկը: Հրատարակված է «Ասպետի» «Ազատամիտ ռուս մը» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Ապրիլ. «Հույսը» (№ 4), Առաքել Շարաբխանյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Վասն աղքատաց» բանաստեղծությունը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ ու թարգմանչի առաջաբանով, սկսում է հրատարակվել Մկրտիչ Էմինի «Հետազոտությունք ի վերա հայկական հեթանոսության» աշխատությունը (ունի նաև «Կրոնական հնագիտություն ազգային» վերնագիրը), որն ավարտվում է նույն ամսագրի № 7-ում (հուլիս):

Ապրիլ. Էջմիածնի «Արարատը» (№ 4) արևելահայերեն հրատարակում է «Մ.»-ի (Մանկունի ?) «Գրականություն և խրախույս» հոդվածը: Մեկնաբանված է գրականության նշանակությունը ժողովուրդների հասարակական կյանքում, այդ հենքի վրա բարձրացված են «հայկաբանության և ազգային պատմության դասագրյանք» հրատարակելու և տարածելու հարցերը, դրվատված է Հովսեփ Իզմիրլյանցի գրական-մշակութային գործունեությունը:

Ապրիլի 3. Պոլսի «Թատրոնը» (№ 123) արևմտահայերեն հրատարակում է «Բելիարի» (Հակոբ Պարոնյան) «Զատկական խոսակցության մը արդյունքը» երգիծապատումը:

Ապրիլի 3. «Մասիսը» (№ 1666) գրաբար հրատարակում է «Ի սգալի մահ տիրամօր ամենապատիւ Տ.Տ. Ներսէսի Ս. պատրիարքի հայոց» չափածո եղերերգությունը:

Ապրիլի 6. Կարինում (Արևելյան Թուրքիա) ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Փիլիպոս Ցաղիկյարյանը: Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ էր 1895 թ. ապրիլի 14-ից: Վախճ. 1951 թ. նոյեմբերի 8-ին Վենետիկում:

«Բազմավեպ», 1945, № 1-12 («Քահանայական հիսնամյա հոբելյաններ»), 1951, № 11-12 («Հանգիստ Փիլիպոս վարդապետ Ցաղիկյարյանի»):

Ապրիլի 9. Պոլսի «Թատրոնը» (№ 125) արևմտահայերեն հրատարակում է «Խոսակցություն» երգիծապատումը (հեղինակ՝ «Գ»):

Ապրիլի 15. «Լույս» հանդեսը (№ 22) արևմտահայերեն հրատարակում է Ավետիս Զաքարյանի «Նվեր երախտապարտ սրտի, առ Գեորգ էֆենդի Չիլինկիրյան» բանաստեղծությունը:

Հետագայում չափածո ստեղծագործությունները «Լույսում» հրատարակվել են հետևյալ հաջորդականությամբ. **«Հայաստան»** (հեղ. Շահին Ֆեսճյան, № 23, մայիսի 1), **«Առ Հերիքնազ քաջուհի նահատակին հայոց»** (հեղ. Մամբրե Բզնունի, № 1 և 2, հուլիսի 5, 12), **«Միրուն վարդ»** (հեղ. Մկրտիչ Ճշմարտախոսյան, № 4, հուլիսի 26), **«Վիշտք ի ավերակունս Անվո»** (հեղ. Մամբրե Բզնունի, № 5, օգոստոսի 2), **«Անձուկն պանդխտին»** (հեղ. նույնը, № 6, օգոստոսի 9), **«Առ հոգեշնորհ Գարեգին վ. Սրվանձտյանց»** (հեղ. Արիստակես Տեր-Սարգսյանց, № 8, օգոստոսի 23), **«Անձուկք հայրենյաց»** (հեղ. Մամբրե Բզնունի, № 9, օգոստոսի 30), **«Առա՛ջ հայեր»** (հեղ. Շահին Ֆեսճյան, № 11, սեպտեմբերի 13), **«Եղեղերգություն Արարատա»** (հեղ. Մամբրե Բզնունի, № 13, սեպտեմբերի 27, 28), **«Առ վարդն»** (հեղ. Միհրան Թաթուլ, № 15, հոկտեմբերի 11), **«Գայլ և հովիվ»** (հեղ. Հովհաննես Մոմջյան, № 17, հոկտեմբերի 25), **«Առակ»** (հեղ. Միհրան Թաթուլ, № 18, նոյեմբերի 1), **«Մինչև ցե՞րբ անտարբերություն»** (հեղ. Շահին Ֆեսճյան, № 22, նոյեմբերի 29), **«Ի թավուտն Սարա-Իչիի»** (հեղ. Արշակ Փափազյան, № 24, դեկտեմբերի 13):

Ապրիլի 17. «Մշակը» (№ 15) արևելահայերեն հրատարակում է Սողոմոն Եղիազարյանի «Մեր հեղինակները» հոդվածը:

Ապրիլի 17. «Մասիսը» (№ 1670), Նշան Ճիվանյանի («Հորո»)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Վիկտոր Հյուգոյի «Ճառ դամբանական, խոսեցյալ ի վերա Էդգար Քինյեի» մահախոսականը:

Ապրիլի 22. «Մասիսը» (№ 1672) արևմտահայերեն հրատարակում է Գարեգին Սրվանձտյանի «Շնորհակալիք» հոդվածը, որտեղ արծարծված են գրականության և նրա զարգացման հետ կապվող մի քանի հարցեր:

Ապրիլի 24. Պոլսի «Թատրոնը» (№ 129) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Համբարձում Իփեկչյան» դիմանկարը: Լեզվաոճական բնույթի որոշ վերամշակումներից հետո այն զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 310-312): Հրատարակված է նաև «Մասիսին անկողմնակալությունը» արևմտահայերեն հոդվածը:

Ապրիլի 26. Պոլսի «Թատրոնը» (№ 130) արևմտահայերեն հրատարակում է «Անկողմնակալություն» կատակերգությունը:

Ապրիլի 26. «Մեղու Հայաստանին» (№ 15) արևելահայերեն սկսում է հրատարակել Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրախոսականը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում: Գրախոսված և դրական է գնահատված Գարեգին Սրվանձտյանցի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը:

Ապրիլի 29. Պոլսի «Թատրոնը» (№ 131) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չերազի «Գրիչ և սուր (նամակ ԻԹ)» հոդվածը: Անդրադառնում է «Հայրենիքում», «Հույսում» և «Մասիսում» իր շուրջ ծայր առած գրական պայքարին:

Ապրիլի 30. «Սիոնը» (№ 4) գրաբար հրատարակում է Անտոն աբեղա Տփղիսեցու «Հակադրութիւն բարառնաբար, ոգեալ ոտանաւոր չափով» բանաստեղծությունը: Այն գրվել է 1839 թվականին և յուրաքանչյուր զույգ քառյակի առաջին տառերը կազմում են հայկական այբուբենը:

Մայիս. Էջմիածնի «Արարատը» (№ 5) «Բարոյական» խորագրի ներքո բաժին է հատկացնում երիտասարդ ստեղծագործողներին: Հրատարակված են Ենովք Մով-

սիսյանի «Առ սարեկ», Փիլիպոս Շահրիմանյանցի «Քնար» և Եզեկյանցի «Հայկա նետը» արևմտահայերեն բանաստեղծությունները: Հրատարակված է Գաբրիել Պատկանյանի «Դարձյալ երջանկահիշատակ Ղուկաս կաթողիկոսի վերա» արևմտահայերեն բանասիրական հոդվածը, որտեղ վիճարկված են Գալուստ Շիրմազանյանցի մի քանի դրույթները (տե՛ս ներկա հատորը, 1875 թ. փետրվար):

Մայիս. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 5) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սըվաճյանի «Առ Խրիմյան Հայրիկ» գրական-հրապարակախոսական հոդվածը և Արմենակ-Սարգիս Պալապանյանի՝ Մկրտիչ Խրիմյանին նվիրված «Հայրիկ» գրաբար բանաստեղծությունը:

Մայիսի 1. «Մշակը» (№ 17) արևելահայերեն հրատարակում է Անդրեաս Արծրունու «Ա.Թ. Ֆան-Կրիկեն» մահախոսականը:

Մայիսի 1. Պոլսում (Բերա) Ամբրոսիոս Ռուբինյանի (Գալֆայան) ջանքերով իր գոյությունն է սկսում «Ռուբինյան օրիորդաց վարժարանը», որը բաղկացած էր Նախակրթարան և Ուսումնարան բաժիններից: Ուսման տևողությունը յոթ տարի էր, անհրաժեշտության դեպքում «կընդունվին նաև գիշերօթիկ աշակերտուհիք»: Ավանդվում էր (Նախակրթարանում) «հայերեն՝ գիր ճանչնալ, հեգել և ընթեռնուլ, գեղագրություն՝ այբուբեն գրել ի տախտակ, թվագիտություն, Տերունական աղոթք, գծագրություն և ձեռագործի սկզբունք»: Ուսումնարանում՝ «հայերեն ընթերցանություն առոգանությամբ, ուղղագրություն, հայերեն լեզու, գաղղիերեն, թվաբանություն, աշխարհագրություն, պատմություն Ս. գրոց և ազգային, գծագրություն, գեղագրություն հայկական և եվրոպական»:

«Մամուլ», 1875, № 481 («Հայտարարություն նորահաստատ Ռուբինյան օրիորդաց վարժարանի...»:

Մայիսի 3. «Մասիսը» (№ 1677) արևմտահայերեն հրատարակում է [Հովհաննես Մկրյանի] «Նոր Ջուղայու հայոց վիճակը» գրական-հրապարակախոսական հոդվածը: Տեղի հայության ողբերգական վիճակը նկարագրելուց հետո, ուշագրավ տեղեկություններ են հաղորդված Մեսրոպ Թաղիադյանի մասին:

Մայիսի 3. Հաջի-Հաբիբլի ավանում (Մուսա լեռ, Սիրիա) ծնվեց հոգևորական գործիչ, մատենագետ Վարդան Վարդերեսյանը: Ծննդավայրի հոգևոր միաբանության անդամ էր 1913 թ.: Վախճ. 1953 թ. փետրվարի 19-ին Էջմիածնում:

«Էջմիածին», 1953, № 2 («Հանգիստ Վարդան քահանա Վարդերեսյանի»):

Մայիսի 6. Պոլսի «Թատրոնը» (№ 134) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չերազի «Գրիչ և սուր (նամակ է)» հոդվածը, ուր քննության են առնվում արևմտահայերենի լեզվաշինության մի քանի հարցեր:

Մայիսի 8. Պոլսի «Թատրոնը» (№ 135) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Քահանա մը, որ չկշտանար» երգիծապատումը:

Մայիսի 10. Պոլսի «Թատրոնը» (№ 136) արևմտահայերեն հրատարակում է «Կարկուտի» (Հակոբ Պարոնյան) «Հավիտյանս հավիտենից ամեն», «Քանի մը բաներ, որ մարդուն լացը կշարժեն» և «Քանի մը բաներ, որ մարդուն ծիծաղը կշարժեն» երգիծական մանրապատումները:

Մայիսի 10. «Մեղու Հայաստանին» (№ 17) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիս, 10 մայիսի» գրական-հրապարակախոսական առաջնորդողը:

Մայիսի 15. Պոլսի «Թատրոնը» (№ 138) արևմտահայերեն հրատարակում է «Խմբագրատան մը մեջ» երգիծապատումը և «Խելացի Դավիթ» առակը:

Մայիսի 15. «Մշակը» (№ 19) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Գրական Տարտյուֆներ» հրապարակախոսական առաջնորդողը, որտեղ քննադատված է «Մասիսի» քաղաքականությունը գրականության և մանավանդ հայ հոգևորականության գնահատման բնագավառում: Սկսում է հրատարակվել «Մելիքզադեի» «Տարոնի և Վասպուրականի անցյալ և արդի վիճակը» ազգագրական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Մայիսի կեսեր. «Փարոսը» (տետր Դ.) գրաբար հրատարակում է «Կտակօրէն զեկուցումն ի վաթսուննութն ամենի տարաբաղդ ծերունի Մանուէլ վարդապետս Կիւմիւշխանցւոյ...» կենսագրականը, որը նրա «յուրաձեռագիր օրինակեն քա-

ղելով» հրատարակության է պատրաստել Զարմայր Մսերյանցը: «Մատենագրություն» խորագրի ներքո գրախոսված են Սեդրակ Մանդինյանի «Համառոտ եկեղեցական պատմություն նոր ուխտի» (բացասական է գնահատված), Սիմեոն Կաթողիկոսի կազմած «Ջամբռ», Սրբուհի Երիցյանի կազմած «Տոմար ընտանեկան 1874-1875 թթ.» և Ներսես Լամբրոնացու «Ներբող հոգվույն սրբո գալուստյան վրա (թարգ. գրաբարից արևելահայերեն՝ Խորեն Միրզաբեկյանի)» աշխատությունները:

Մայիսի 17. Պոլսի «Թատրոնը» (№ 139) արևմտահայերեն հրատարակում է «Անկողմնակալն խոսեցավ» հոդվածը (քննադատված է «Մասիսի» գրական քաղաքականությունը և «Հավաքիչի» «Առն և կնոջ ճանաչումն» երգիծական մանրապատումը:

Մայիսի 17. Պոլսում վախճանվեց կրոնական-մշակութային գործիչ, աստվածաբան Եզնակ Տեր-Վրթանեսի Գրիգորյանը: Ծնվ. 1787 թ.:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 367-368:

Մայիսի 20. «Մասիսը» (№ 1684), [Կարապետ ՈՒթուջյանի]՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է Էդուարդ Դյուլյորիեի «Սիրելի պարոն» նամակը: Նամակագիրը նորանոր փաստեր է հաղորդում Ավետիք Պատրիարքի կյանքի, գրական-մշակութային գործունեության մասին, որոնք ինքը կարողացել էր հավաքել «Գաղղիո այլևայլ դիվանաց մեջեն»:

Մայիսի 24. Պոլսի «Թատրոնը» (№ 141) արևմտահայերեն հրատարակում է «Դիոգինեսի» «Թրախոման վերացավ, էմանեթն (իմա՛. վստահություն – Ս.Շ.) եկավ» երգիծական մանրապատումը:

Մայիսի 25. Արդերթ գյուղում (Տարոնի գավառ, Արևելյան Թուրքիա) ծնվեց գրականագետ-բանասեր, հայ եկեղեցու պատմաբան, հոդվածագիր Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյանը: Արմաշի միաբանության անդամ էր 1901 թ. մայիսի 20-ից: Վախճ. 1944 թ. հունիսին Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գյուտ», «Հարմակ» կեղծանուններով, «Սիոնում»՝ «Մ.Ե.Ն.» (Մեսրոպ եպիսկոպոս Նարոյան) և «Մ.Ա.Ն.» (Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան) ձևով:

«Արարատ», 1913, № 8-9 («Մայր Աթոռ»): **«Էջմիածին»**, 1944, № 6 («Մեսրոպ արքեպիսկոպոս Նարոյան»): **«Սիոն»**, 1944, № 4-6 («Հանգիստ Մեսրոպ Ս. արքեպիսկոպոս Նարոյանի»):

Մայիսի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 142) արևմտահայերեն հրատարակում է «Ստակ շահելու գործեր» երգիծական պատմվածքը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Մայիսի 31. «Սիոնը» (№ 5) ժողովրդական աշխարհաբարով հրատարակում է «Միրզա պատանու» «Միրզա առ Մասիս» բանաստեղծությունը և «Ո.Գ.Բ.»-ի (իմա՛. Ոստա Գևորգ Բարխուդարյանց) «Մասիս առ Միրզա» չափածո պատասխանը:

Հունիս. «Դպրոցը» (№ 6, երկրորդ մաս) արևելահայերեն հրատարակում է Վահան Բաստամյանցի «Նշանավոր հեղինակներ հայկական մատենագրության. Մար Աբաս Կատինա» ուսումնասիրությունը: Հեղինակը քննում է Մար Աբաս Կատինայի ծագումնաբանության հետ առնչվող հարցերը և վերականգնում այդ աղբյուրն իր սկզբնական ձևով:

Հունիս. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 6) արևելահայերեն սկսում է հրատարակել «Ֆրեդերիկ Ֆրոբել» մանկավարժական-գրականագիտական հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակվում է Հռիփսիմյան վարժարանի աշակերտուհիների համատեղ հեղինակություն հանդիսացող «ՈՒղերձ առ սրբազան Հայրիկ» գրաբար բանաստեղծությունը:

Հունիս. Էջմիածնի «Արարատը» (№ 6) արևելահայերեն հրատարակում է Գաբրիել Պատկանյանի «Բացազանչություն առ արդյունավոր ամսագիրն Արարատ» գրական-բանասիրական հոդվածը: «Բարոյական» ընդհանուր խորագրի ներքո հրատարակված են երիտասարդ ստեղծագործողներ Գաբրիել Ղուլիքեխյանի «Ի մահ Մեծին Ներսիսի» և «Արշակ Պալասանյանի «Եղիշէն յԱւարայր»» գրաբար բանաստեղծությունները: Հ. Չաթալբաշյանի՝ ռուսերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում են «Թռչնակն ձագակորույս» և «Առաւօտ» բանաստեղծությունները:

Հունիսի 5. «Մշակը» (№ 22) արևելահայերեն հրատարակում է «Մելիքզադեի» «էլի մեկ զոհ» գրախոսությունը (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու, հ. 9, էջ 113-120):

Հունիսի 8. Պոլսում ծնվեց արձակագիր, հոդվածագիր Արշակունիի Թեոդիկը (Ճեզվեճյան): Վախճ. 1922 թ. հունվարի 2-ին Լեյզինում (Շվեյցարիա):

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1911, էջ 259, 1923, էջ 3-32, 413:

Հունիսի 14. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 491) արևմտահայերեն հրատարակում է «Արձանականք հավերժից կամ ջամբազ բանաստեղծը» գրախոսականը (հեղ. Գեորգ Այվազյան ?): Գրախոսված է Հովհաննես Ճամպազյանի՝ հիշյալ խորագիրը կրող գիրքը (տե՛ս ներկա հատորը, 1875 թ.), որը բացասաբար է գնահատված:

Հունիսի 14. «Արշալույս արարատյանը» (№ 1016) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սրվաձյանի «Ծերունին որ երգը հիշե» բանաստեղծությունը:

Հունիսի 14. «Մեղու Հայաստանին» (№ 22) արևելահայերեն «Նյութեր հայկական բարբառների ուսումնասիրության համար» հոդվածով բնութագրելով «Ռ. Ախտամերկյանի» (Ռափայել Պատկանյան) գրական գործունեությունը (հեղ. Պետրոս Սիմոնյանց), հրատարակում է նրա «Էրէվան» պատմվածքը՝ Նոր Նախիջևանի բարբառով: Այն արտատպված է Ռ. Պատկանյանի «Ռ. Ախտամերկյանի պատմվածքները Նոր Նախիջևանի ոճով» ժողովածվից (Պետերբուրգ, 1875 թ.: Տե՛ս ներկա հատորը, այդ թվականը):

Հունիսի 14. «Մասիսը» (№ 1694) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Մասնավոր տեղեկությունք ի վերա հանգուցյալ Ներսեսի 5-ի կաթողիկոսի ամենայն Հայոց պատմյալք ի ականատես անձնե ումեմնե...» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1712-ում (հուլիսի 29):

Հունիսի 19. «Մշակը» (№ 24) արևելահայերեն հրատարակում է ***-ի (Առաքել Օհանյան ?) «Մանկավարժական տարակուսանքներ մեր մեջ Սեդրակ Մանդինյանի» գրախոսականը:

Հունիսի 24. Պոլսի «Թատրոնը» (№ 152) արևմտահայերեն հրատարակում է «Հայերեն չսիրող հայը» և «Լողալու արվեստ» երգիծական մանրապատումները:

Հունիսի 26. «Մշակը» (№ 25) արևելահայերեն սկսում է հրատարակել «Հարոյի» (Նիկողայոս Տեր-Հարությունյան) «Նամակ Փարիզից» հոդվածը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հունիսի 26. Պոլսի «Թատրոնը» (№ 153) արևմտահայերեն հրատարակում է «Հոգեխոսության մեկ արդյունքը», «Գինովության համար ազդու դեղ մը» և «Այլևայլք» երգիծական մանրապատումները:

Հունիսի 28. «Արշալույս արարատյանը» (№ 1017) գրաբար հրատարակում է Արմենակ-Սարգիս Պալապանյանի «Ծագիւ մատին ճաշակառու...» երգիծական բանաստեղծությունը:

Հունիսի 30. «Սիոնը» (№ 6) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Մխիթարյանի «Խորհուրդ և միության գործ (ճանաչելու համար խորհուրդ է պետք, շինելու համար՝ միություն և գործ)» գրական-հրապարակախոսական առաջնորդողը: Ժողովրդական աշխարհաբարով հրատարակվում է Գևորգ Վրթանիսյանի «Առ ազգն հայոց» բանաստեղծությունը:

Հուլիս-սեպտեմբեր. «Բազմավեպը» արևմտահայերեն հրատարակում է «Պելազգյան և հունական արվեստ» ուսումնասիրությունը: «Երգք ազգայինք» ընդհանուր խորագրի ներքո տպագրված են հայկական ժողովրդական չորս աշխարհաբար բանաստեղծություններ, «Առածք ազգայինք» խորագրի ներքո՝ քսան առածասացվածքներ: Անդրեաս Շաշատյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Կեսար Արիչիի «Ի վերափոխումն Ս. Կուսին» և «Ի ծնունդ Կուսին» բանաստեղծությունները, ինչպես նաև իր՝ թարգմանչի «Ի սուրբ խաչն քրիստոսակիր» չափածո ստեղծագործությունը: Հրատարակված է «Հիշատակարան Սիլվիո Բելլիքոյի ի Սալուցցո» արևմտահայերեն կենսագրականը և վերջապես՝ «Նորատիպ մատյանք» խորագրի ներքո վերլուծաբար ներկայացված են Ալ. Մանձոնիի «Խօսեցեալք» (թարգ. Էդ.

Հյուրմյուզյան) և Հակոբոս Իսավերտենցի «Հայաստան և հայք» (անգլերեն) գրքերը։

Հուլիս. «Դպրոցը» (№ 7, առաջին մաս) արևելահայերեն հրատարակում է Վահան Բաստամյանցի «Դպրոցական սահմանադրություն» գրախոսականը։ Գրախոսված է Սեդրակ Մանդինյանցի՝ հիշյալ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1875 թ.), որը որոշ դիտողություններից հետո դրական է գնահատված։

Հուլիս. «Դպրոցը» (№ 7, երկրորդ մաս) արևելահայերեն հրատարակում է Վահան Բաստամյանցի «Պլուտարքոս. կենսագրություն» հոդվածը։

Հուլիս. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 7) արևմտահայերեն հրատարակում է «Շուշան Շավարշանա, շարադրեց Գ[արեգին] վ[արդապետ] Սրվանձտյանց» գրախոսականը։ Հրատարակված է «Ի սգալի մահ հոգեհատոր բարեկամին իմոյ Սահակայ Ճեվահիրճեան» գրաբար բանաստեղծությունը (հեղ.՝ Տ.Յ.Գ.)։

Հուլիս. Էջմիածնի «Արարատը» (№ 7) արևելահայերեն սկսում է հրատարակել Մկրտիչ Պալյանի «Սուրբ Հռիփսիմե» գեղարվեստական ստեղծագործությունը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում։ Հրատարակված է Սարգիս Գնունու (Սարգիս Բարսեղյան Գնունի Վանեցի) «Բան Հայաստանի առ դավաղիրս հայոց» բանաստեղծությունը։

Հուլիսի 1. Պոլսի «Թատրոնը» (№ 154) արևմտահայերեն հրատարակում է «Արվեստ բանաստեղծության» երգիծապատումը։ Հայկական առածների մասին տեսական վերլուծությունից հետո, «Առածներու բացատրությունները» խորագրի ներքո զետեղված են արևմտահայերեն առածներ ու ասացվածքներ, որոնց հրատարակությունն ավարտվում է հաջորդ համարում։

Հուլիսի 3. Պոլսի «Թատրոնը» (№ 156) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Սիմոն Ֆելեկյան» երգիծական դիմանկարը։ Լեզվառճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 261-265)։

Հուլիսի 5. «Մասիսը» (№ 1702) արևմտահայերեն հրատարակում է Փ. Քեշիշյանի նամակ-գրախոսականը առ Հովհաննես Մաթկյան, որտեղ բարձր է գնահատված վերջինիս «Մուշեղ և Կալինիկե» վեպը:

Հուլիսի 10. Պոլսի «Թատրոնը» (№ 157) արևմտահայերեն հրատարակում է Մինաս Չերազի «Գրիչ և սուր (ԼԲ)» հոդվածը: Վերլուծված են գրաբար-աշխարհաբար լեզուների փոխհարաբերության հարցերը, այդ հենքի վրա քննադատված է «Շահնուրի» (Մ.Մամուրյան) հայացքները:

Հուլիսի 12. «Արշալույս արարատյանը» (№ 1018) արևմտահայերեն հրատարակում է Հարություն Սվաճյանի «Երգ» բանաստեղծությունը:

Հուլիսի 12. «Մեղու Հայաստանին» (№ 26) արևելահայերեն հրատարակում է Կ. Տեր-Աստվածատրյանի «Հայկական թատրոն» երգիծական բանաստեղծությունը:

Հուլիսի 12. Պոլսի «Թատրոնը» (№ 158) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Թովմաս Ֆասուլաճյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 266-268):

Հուլիսի 12. «Լույս» հանդեսը (№ 2), ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Պիեր-Ժան Բերանժեի «Ձմեռ» բանաստեղծությունը:

Հուլիսի 13. Վառնայում (Հյուսիսային Բուլղարիա) ծնվեց բանաստեղծ, արձակագիր, գրական-մշակութային գործիչ Միհրան Ջգոնյանը:

> «Մ.Ջգոն» ստորագրությամբ հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:
>
> **Պոտուրյան Մ**., Հայ հանրագիտակ, էջ 785:

Հուլիսի 14. Պոլսի «Թատրոնը» (№ 160) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Երանուհի Գարազաշյան» երգիծական դիմանկարը: Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 269-271):

Հուլիսի 16. Պոլսի «Թատրոնը» (№ 162) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Հովսեփ Շիշմանյան» երգիծական դիմանկարը։ Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 313-317)։

Հուլիսի 17. «Մասիսը» (№ 1707) արևմտահայերեն հրատարակում է Ներսես պատրիարք Վարժապետյանի նամակ-գրախոսականը Գարեգին Սրվանձտյանին, որտեղ դրվատանքով է արտահայտվում նրա «Շուշանն Շավարշանա» ստեղծագործության մասին։

Հուլիսի 19. «Մեղու Հայաստանին» (№ 27) արևելահայերեն սկսում է հրատարակել Ղազարոս Աղայանի «ՈՒսումն մայրենի լեզվի» ուսումնասիրությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 30-ում (օգոստոսի 9)։

Հուլիսի 21. Պոլսի «Թատրոնը» (№ 162) արևմտահայերեն հրատարակում է Հակոբ Պարոնյանի «Հարություն-Հեթում Մերիեմ Գուլի» երգիծական դիմանկարը։ Լեզվաոճական որոշ մշակումներից հետո զետեղվել է «Ազգային ջոջեր» շարքում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 318-322)։

Հուլիսի 21.Վանում իր գոյությունն է սկսում «ՈՒսումնատարած» արական դպրոցը, որտեղ ուսուցիչներն էին Տիգրան Ամիրջանյանն ու Խաչատուր Դարբինյանը։ Ավանդվող առարկաներն էին. հայերեն, հայոց պատմություն, գաղղիերեն, տաճկերեն, թվաբանություն, աշխարհագրություն, տոմարակալություն, գրահաշիվ, գեղագրություն և սրբազան պատմություն։ Դպրոցը գոյություն ունեցավ մինչև 1876 թ. դեկտեմբերի 1–ը։

«Հանդես ամսօրյա», 1958, № 1-4 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»)։

Հուլիսի 24. «Մշակը» (№ 29) արևելահայերեն հրատարակում է [Գրիգոր Արծրունու] «Ինչ որ ձեզ պետք է ասեն, դուք ուրիշին եք ասում» բանավիճական հոդվածը։

Հուլիսի 26. «Մասիսը» (№ 1711) արևմտահայերեն հրատարակում է Գրիգոր Մանսուրյանի «...Խմբագիր» նամակ-գրախոսականը, որտեղ նա դրվատանքով է արտահայտվում Հովհաննես Մաթկյանի «Մուշեղ և Կալինիկե» վիպասանության մասին։

Հուլիսի 31. «Սիոնը» (№ 7), Հովհաննես Տամկաճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Նախախնամության վրա վստահություն», «Տերը պիտի հոգա» և «Անսխալ առաջնորդ» բանաստեղծությունները: Հրատարակված է Խորեն Մխիթարյանի «Ժամանակի անգործությունը մեր կորուստներեն ամենեն մեծն է, ինչպես որ նորա կիրառությունը մեր շահերու գլխավորն է» գրական-հրապարակախոսական հոդվածը: Դրվատական գնահատականներով ընթերցողին է ներկայացված Գ. Սրվանձտյանցի «Շուշանն Շավարշանա» ստեղծագործությունը:

Օգոստոս. «Հույսը» (№ 8) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Պրուսացի Տերոյենցի «Հայաստանի նորագյուտ հնության մը վրա» բանասիրական հոդվածը (վերլուծաբար ներկայացված է Մկրտիչ Էմինի գրծունեությունն այդ բնագավառում): Սկսում է տպագրվել «Ազատություն» հրապարակախոսական «տեսաբանականը», որն ավարտվում է հաջորդ համարում: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Արաբացի թագավորն ու բանաստեղծը» նովելը:

Օգոստոս. «Մասիսը» (№ 1717) գրաբար հրատարակում է Գաբրիել Պատկանյանի նամակ-գրախոսականը «ի Պետերբուրգէ», Գարեգին Սրվանձտյանցի «Շուշանն Շավարշանա» երկասիրության մասին, որը դրական է գնահատված: Հրատարակված է Տոնապետ Անտոնյանի արևմտահայերեն բացասական գրախոսականը Հովի. Մաթևյանի «Մուշեղ և Կալինիկե» վիպասանության մասին:

Օգոստոս. Էջմիածնի «Արարատը» (№ 8) արևելահայերեն հրատարակում է Մկրտիչ Բժշկյանցի «ՈՒղևորություն» պոեմը, որի տողատակի ծանոթագրության մեջ տեղեկություններ են հաղորդված ինչպես հեղինակի, այնպես էլ պոեմի մասին: Հրատարակված է Մեսրոպ Սմբատյանի «Բևեռագիր արձանագրություն ի Գանլիճա, գեղջ Շիրակա» արևելահայերեն հոդված-հաղորդումը. տրված է նաև սեպագիր արձանագրության նկարը:

Օգոստոսի 9. «Արշալույս արարատյանը» (№ 1020) գրաբար հրատարակում է Գասպար Գասպարյանի «Երազ» պատմվածքը:

Օգոստոսի 9. Պոլսի «Թատրոնը» (№ 159) արևմտահայերեն սկսում է հրատարակել [Հակոբ Պարոնյանի] առաջին անստորագիր մանրապատումը: Հրատարակությունը շարունակվում է նույն պարբերականի № 164 (օգոստոսի 30), № 165 (սեպտեմբերի 20) և № 173 (նոյեմբերի 15) համարներում (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 7, էջ 246-249):

Օգոստոսի 14. «Մշակը» (№ 32) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Մեր հաշիվը հին սերունդի հետ» հրապարակախոսական առաջնորդողը և «Ասիացու» հերթական «Ֆելիետոնը»: Վերջում «Կայծակի» (իմա՛. Նիկողայոս Տեր-Գաբրիելյան)՝ խմբագրությանն ուղարկված արևելահայերեն մի քանի բանաստեղծության հենքի վրա, քննության է առնված ժամանակակից պոեզիայի հարցերը:

Օգոստոսի 14. «Մասիսը» (№ 1719) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Մաթկյանի «... խմբագրապետ «Մասիս» պատվական լրագրո» նամակը: Շնորհակալություն հայտնելով բոլոր ընթերցողներին, «խմբագրաց և խմբագրապետաց» իր «Մուշեղ և Կալինիկե» վիպասանության առթիվ դրվատական կարծիքների համար, նամակագիրն անդրադառնում է վիպագրության հետ կապված մի քանի հարցերի:

Օգոստոսի 23. «Մեղու Հայաստանին» (№ 32) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Թիֆլիս, 23-ին օգոստոսի» հրապարակախոսական առաջնորդողը (բացառում է «հին և նոր սերունդ» հասկացողությունը հայկական կյանքում, առավել ևս՝ նրանց ազդեցությունը գրականության վրա) և Հ. Նազարյանցի «Հայկական հնչյունների մասին (լուծումն տարակուսանաց)» գրախոսականը: Գրախոսված է Ղազարոս Աղայանի՝ այդ խորագիրը կրող աշխատությունը (տե՛ս ներկա հատորը, 1874 թ.), որին արված են բազմաթիվ դիտողություններ:

Օգոստոսի 30 . «Լույս» հանդեսը (№ 9) արևմտահայերեն հրատարակում է [Հմայակ Դիմաքսյանի] «Շուշանն Շավարշանա» գրախոսականը: Գրախոսված է և դրական գնահատված Գարեգին Սրվանձտյանցի հիշյալ ստեղծագործությունը:

Օգոստոսի 30. «Մեղու Հայաստանին» (№ 33) արևելահայերեն հրատարակում է Ղազարոս Աղայանի «Պատասխանի Հ. Նազարյանցին» հոդվածը: Հոդվածագիրը հերքում է իր «Հայկական հնչյունների մասին (լուծումն տարակուսանաց)» աշխատության վերաբերյալ Հ. Նազարյանցի արած դիտողությունները (տե՛ս օգոստոսի 23), հավելելով ՝ «մեր երիտասարդ քննիչին խորհուրդ ենք տալիս մյուս անգամ անպատրաստից քննության ասպարեզ չմտնել»:

Օգոստոսի 31. «Սիոնը» (№ 8), Հովհաննես Տամկաճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Քրիստոս առ քրիստոնյայն» և «Մանուկն և քերովբեն» բանաստեղծությունները (զետեղված են «Ծաղկաքաղ ամերիկյան» ընդհանուր խորագրի ներքո): Ժողովրդական աշխարհաբարով հրատարակված է աշուղ Մարդուլի «Տարագիր սոխակ» բանաստեղծությունը և արևմտահայերեն՝ Սեդրակ Մանդինյանի «Մեր ժամանակվա ոգին» գրական-հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Սեպտեմբեր. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 9) արևմտահայերեն հրատարակում է Պ. Դելփյանի «Թղթակցություն» գրական-քննադատական հոդվածը: Գրախոսված է Գարեգին Սրվանձտյանցի «Գրոց-բրոց», «Հնոց-նորոց», «Շուշանն Շավարշանա» ստեղծագործությունները, ինչպես նաև Հ. Մաթկյանի «Մուշեղ և Կալնիկե» վիպակը: Բոլորը դրական են գնահատված:

Սեպտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 9) արևելահայերեն հրատարակում է օր. Աշխեն Փափազյանցի «Զարդասեր մոր ուսումնասեր դուստրը» պոեմը:

Սեպտեմբեր. Փիր գյուղում (Գանձակի գավառ), Աստվածատուր վարդապետի սատարմամբ և Մ. Եպիսկոպոսյանի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում տեղական ծխական արական դպրոցը:

«Մշակ», 1911, № 184 («Փիր գյուղի ուսումնարանի անցյալից»):

Սեպտեմբեր. «Հույսը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է «Ազատություն» տեսական-հրապարակախոսական հոդվածը և Սիմոն Հովակիմյանի «Աղօթք մանկան առ աստուած» գրաբար բանաստեղծությունը:

Սեպտեմբերի 4. «Մշակը» (№ 35) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Ձեր դարդակ խոսքերը» հրապարակախոսական հոդվածը (ցույց է տրված մտավոր աշխատանքի անհրաժեշտությունը ազգի զարգացման համար) և «Ասիացու» «Ժան Վալժան» ֆելիետոնը: Վիկտոր Հյուգոյի այս հերոսին «փոխադրելով» Թիֆլիսի, հեղինակը բացահայտում է քաղաքի հայ մտավորականության հոռի բարքերը:

Սեպտեմբերի 6. Պոլսի «Թատրոնը» (№ 163) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ազգային սնտուկին անձնական տկարությունը» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1979, էջ 7-8):

Սեպտեմբերի 6. «Արշալույս արարատյանը» (№ 1022) արևմտահայերեն հրատարակում է Միհրան Աբիկյանի «Ասունը անասուններեն ինչ տարբերություն ունի» և Ստեփան Չաքրյանի «Սատանա», «Հազկերտ», «Քաղքեդոն» բանաստեղծությունները:

Սեպտեմբերի 11. «Մշակը» (№ 36) արևելահայերեն հրատարակում է Եղիսաբեթ Տեր-Գրիգորյանցի «Գրականական երեկոները, իբրև հայ գրականական լեզու տարածելու միջոցներից մինը» հոդվածը:

Սեպտեմբերի 11. Պոլսում ծնվեց բանաստեղծ, հոդվածագիր, գրականության տեսաբան Տիրան Գասպարի Չրաքյանը: Եղեռնամահ՝ 1921 թ. հուլիսի 6-ին Սիլվանի շրջանում (Արևելյան Թուրքիա):

«Ինտրա» կեղծանունով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում:

«Հայաստանի կոչնակ», 1939, № 29... («Տիրան Չրաքյան»): **Գաղութահայ տարեգիրք** (կազմ. Մ. Պոտուրյան), Բուխարեստ, 1939, էջ 113-123 («Հիշատակներ Տիրան Չրաքյանեն»): **«Գրական թերթ»**, 1982, № 9 («Տիրան Չրաքյանի ժողովածուն»):

Սեպտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 35) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» հերթական «Ֆելիետոնը»: Բնութագրված է ժամանակի հասարակական-մշակութային կյանքը, բացասաբար է ներկայացված «Մշակի» գործունեությունը, ծաղրական-երգիծական երանգավորումներով նկարագրված է «Ասիացու» մահն ու թաղումը:

Սեպտեմբերի 13. Պոլսի «Թատրոնը» (№ 164) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Դերասանական», «Լա թուրքին» և «Չուխաջյանի խումբը» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1979, էջ 9-12):

Սեպտեմբերի 17. Թիֆլիսում ծնվեց դերասանուհի, թարգմանչուհի (ռուսերենից՝ հայերեն) Սաթենիկ Արտեմի Աղամյանը: Վախճ. 1915 թ. հուլիսի 17-ին Բաքվում:

Քալանթար Ե., Սաթենիկ Աղամյան, Երևան, 1970:

Սեպտեմբերի 18. «Մասիսը» (№ 1734) գրաբար հրատարակում է Խաչատուր «պուետ» Միսաքյանի «Եղերեգութիւն զմահուանէ մօր տեառն Ներսիսի արքեպիսկոպոսի, ազգապետի Հայոց...» պոեմը:

Սեպտեմբերի 18. «Մշակը» (№ 37) արևելահայերեն հրատարակում է «Սլկունու» «Այսպես ենք կարծում» գրական-մանկավարժական հոդվածը, ուր առաջ են քաշված հայ ժողովրդի կրթության հետ կապված մի քանի հարցեր, շեշտելով, որ միայն կրթված հասարակությունը կարող է վերահասու լինել դասական գրականության ընկալմանը:

Սեպտեմբերի 20. Պոլսի «Թատրոնը» (№ 165) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թատերական», «Եղիազարն ու Չուխաջին» և «Թոհաֆճի բժիշկը» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 12-15):

Սեպտեմբերի 20. «Մեղու Հայաստանին» (№ 36) արևելահայերեն հրատարակում է Ստեփաննոս Պալասանյանի «Հաղպատ և Սանահին» ուղեգրական ակնարկը:

Սեպտեմբերի 20. «Լույս» հանդեսը (№ 12) անկանոն պարբերականությամբ սկսում է հրատարակել հայկական ժողովրդական բանաստեղծություններ աշխարհաբար լեզվով՝ «Փունջ նախնյաց» ընդհանուր խորագրի ներքո: Յուրաքանչյուր բանաստեղծության սկզբում տրվում էր նրա բանասիրական պատմությունը: Շարքը հայտնաբերել և խմբագրությանն է ներկայացրել «Թաթուլը» (իմա՛. Միհրան Թաթուլ):

«Փունջ նախնյացի» հրատարակությունը ընթացել է հետևյալ հաջորդականությամբ. **«Իմաստյուք է լի...»** (№ 13, սեպտեմբերի 27), **«Ո՜հ թէ լինէր գերույս...»** (№ 14, հոկտեմբերի 4), **«Որ տաս սիրով անձրև, արև...»** (№ 20, նոյեմբերի 15), **«Առ Ս.Կույսն Մարիամ»** (№ 22, նոյեմբերի 29, գրաբար), **«Անի քաղաք»** (№ 24, դեկտեմբերի 13):

Սեպտեմբերի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 166) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Դրամական պտույտները» և «Թատրոններ» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 16-19):

Սեպտեմբերի 28. Ծուղրուտ գյուղում (նաև՝ Ծղրութ. Ախալցխայի շրջան) Սուքիաս վարդապետ Պարզյանի ջանքերով և Հովակիմ Գեղամյանցի տեսչությամբ, իր գոյությունն է սկսում «Ծուղրուտի արական ուսումնարանը»: Սկզբնական շրջանում ուներ քսան աշակերտ, ավանդվում էր կրոն, հայերեն, ռուսերեն, թվաբանություն, նկատողական ուսում (?), հայոց և ռուսաց վայելչագրություն:

«Մեղու Հայաստանի», 1873, № 32 («Ծուղրուտ գյուղ»), 1875, № 40 («Հարգո խմբագիր»), № 50 («Ախալցխա»):

Սեպտեմբերի 30. «Սիոնը» (№ 9) արևմտահայերեն հրատարակում է Մամբրե Մարկոսյանի «Ի տարաժամ մահ Մուրատա դեռահասակ որդվո Պասկալա...» եղերերգությունը: Հովհաննես Տամկաճյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Առանց տիրոջ երբ կապրեի...» բանաստեղծությունը:

Հոկտեմբեր-դեկտեմբեր. «Բազմավեպը» (պրակ 4), Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար չափածո թարգմանությամբ, հրատարակում է Սեն-Լամբերի «Այգեկութք», Հովսեփ Պապիերիի «Որս» և Անտոն Լըմիերի «Օր մեռելոց» բանաստեղծությունները, Հովսեփ Միսքճյանի՝ «Տաղ ի ծնունդ Քրիստոսի» և «Այլ տաղ ի ծնունդ Քրիստոսի» չափածո ստեղծագործությունները: «Հին քնար» ընդհանուր խորագրի ներքո հրատարակված են «Մեղեդի ծննդեան» և «Մեղեդի մարտիրոսաց» գրաբար բանաստեղծությունները, որոնց տողերի առաջին տառերը համապատասխանաբար կազմում են «Թադևոս» և «Թեոդորոս» անունները, և որոնց մասին ծանուցված է, որ «թեպետ աս երգչաց ով և որ ժամանակ ըլ-

լալը որոշ չենք գիտեր, բայց գրության ոճեն կրնանք կարծել, որ չափավոր հնություն ունենան»: Հրատարակված են նաև «Ընդհանուր տեսություն մը նախնյաց թարգմանությանց վրա դատաստան ընելու» տեսական-գրականագիտական հոդվածը, «Քլե գերմանացի աստվածաբան վարդապետին համառոտ վարքն» և «Տյուբանլու եպիսկոպոս Օռլեանի»կենսագրականները:

Հոկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Ե տարի, № 10) աշխարհաբար սկսում է հրատարակել Գաբրիել Պատկանյանի «Մտածությունք և վիշտք Ախուրյան գետակի» պոեմը, որն ավարտվում է հաջորդ համարում: Հրատարակված է «Վառարանի մը կայծեր. Սեդրակ Տեր-Սարգսյանց» արևելահայերեն գրախոսականը և գրաբար՝ «Շնորհակալութեան երգ. առ տողասացն Ս[եդրակ]» Տեր-Սարգսյանց բանաստեղծությունը:

Հոկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 10) գրաբար հրատարակում է «Ողբերգութիւն առ ափն Երասխայ, ժողովրդեանն հայոց, որք գերեալ ի մեծէն Շահաբբասայ արքայեն Պարսից՝ պարտաւորեցան անցանել ընդ նոյն գետ» պոեմը (հեղինակ՝ «Յ, ի Նոր-Ջուղայ»=Հովհաննես քահանա Մկրյան ?):

Հոկտեմբեր. «Դպրոցը» (№ 4, մաս երկրորդ), գերմաներեն (?) բնագրից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Աստվածամոր պատկեր» վիպակը, որն ավարտվում է նույն պարբերականի 1876 թ. № 1-ում (հունվար):

Հոկտեմբեր. «Հույսը» (№ 10) արևմտահայերեն հրատարակում է «Հրանտի» «...Խմբագիր հարք» հրապարակախոսական նամակ-հոդվածը (բանավիճելով «Շահնուրի» (Մատթեոս Մամուրյան) հետ, առաջ են քաշվում ազգային մշակույթի հետ առնչվող մի քանի հարցեր): Մարտիրոս Թորոսյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Գաբրիել Ժիլբերի «Յետին ժամք քերթողի» բանաստեղծությունը:

Հոկտեմբերի 2. «Մշակը» (№ 39) արևելահայերեն հրատարակում է «Համալի» «Համալի մաչլահաթը» ֆելիետոնը (տե՛ս. **Գ.Սունդուկյան**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 268-271):

Հոկտեմբերի 4. «Լույս» հանդեսը (№ 14), Արշակ Փափազյանի արևմտահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Գիշեր կամ երկյուղած ծերունին» խոհափիլիսոփայական նովելը, որն ավարտվում է նույն հանդեսի № 16-ում (հոկտեմբերի 18):

Հոկտեմբերի 4. Պոլսի «Թատրոնը» (№ 167) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Խիկարին թուղթերը», «Թատրոններ» և «Դըս... դըս... դըսրովախոս «Սիմոսը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 19-23):

Հոկտեմբերի 5. Նոր Նախիջևանում, Գևորգ եպիսկոպոս Աղափիրյանի և Փիլիպոս Վարդանյանի ջանքերով, իր գոյությունն է սկսում «Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի հոգևոր դպրոցը»: 1881 թ. նոյեմբերի 8-ից այն վերածվում է թեմական վեցդասյա դպրոցի, որտեղ ավանդվում էր կրոն, հայերեն, ռուսերեն, լատիներեն, ֆրանսերեն, թվաբանություն, պատմություն, աշխարհագրություն, գծագրություն, գեղագրություն, երգեցողություն և մարմնամարզություն: Դպրոցը ծաղկուն ժամանակ ուներ 180 աշակերտ, իսկ 1915 թվականին՝ 275 աշակերտ և 18 ուսուցիչ: «Նոր Նախիջևանի թեմական դպրոցը» փակվեց 1920 թ. սկզբներին:

«Արարատ», 1892, № 1 («Տեղեկագիր»), 1893, № 1 («Տեղեկագիր»), 1895, № 5 («Նոր Նախիջևանի ուսումնական գործի անցյալը»):

Հոկտեմբերի 8. Բարանա գյուղում (այժմ՝ Նոյեմբերյանի շրջան) ծնվեց պատմաբան, հնագետ-բանասեր, աղբյուրագետ Սմբատ Վարդանի Տեր-Ավետիսյանը: Վախճ. 1943 թ. փետրվարի 27-ին Երևանում:

Մեր անվանի դասախոսները, էջ 228-229:

Հոկտեմբերի 9. «Մշակը» (№ 40) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Ինչ ցանեցիք այն էլ հնձում եք» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 11. «Լույս» հանդեսը (№ 15) արևմտահայերեն հրատարակում է [Հմայակ Դիմաքսյանի] «Վառարանի մը կայծեր» գրախոսականը: Գրախոսված և դրական է գնահատված Սեդրակ Տեր-Սարգսենցի՝ այդ խորագիրը կրող ժողովածուն

(տե՛ս մեզ մոտ, 1875 թ.)։ Վերջում այդ ժողովածվից տպագրված է «Փառք քեզ աքլոր» բանաստեղծությունը։

Հոկտեմբերի 14. «Մասիսը» (№ 1745) արևմտահայերեն հրատարակում է «Հիվանդին մրմունջը. առ թռչնիկն» բանաստեղծությունը (հեղինակ՝ «Խ.Ե.Ն.»)։

Հոկտեմբերի 15. Կեսարիայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, թարգմանիչ (թուրքերենից՝ հայերեն), մատենագիր Հակոբ Թիմուրյանը (հետագայում՝ Արիստակես քահանա Թիմուրյան)։ Եղեռնամահ՝ 1915 թ. սեպտեմբերի 9-ին Ուրֆայի շրջանում։

Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ Կեսարիո (Հ. Ա), էջ 1207-1208։

Հոկտեմբերի 16. «Մշակը» (№ 41) արևելահայերեն հրատարակում է Գևորգ Չմշկյանի «Կարճառոտ հայացք հայ թատրոնի անցյալի ու ներկա դրության վրա» հոդվածը։

Հոկտեմբերի 18. Ղազարապատ գյուղում (այժմ՝ Իսահակյան) ծնվեց հայ գրականության դասական, բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ (ֆրանսերենից ու ռուսերենից՝ հայերեն), հասարակական գործիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1936), ՀՀ ԳԱ ակադեմիկոս (1943 թ. նոյեմբերի 25), ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր (1946 թ. հունիսի 26), Հայաստանի գրողների միության նախագահ (1946-1957) Ավետիք Սահակի Իսահակյանը։ Վախճ. 1957 թ. հոկտեմբերի 17-ին Երևանում, հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 22-ին քաղաքային պանթեոնում։

Հարությունյան Ծ., Սովետական Հայաստանը 40 տարում, 1969, էջ 275, 299, 404։ **Խաչատրյան Հ.**, Գրական տեղեկատու, էջ 208-212։ **Սովետահայ գրականության տարեգրություն**, Երևան, 1977, էջ 14-19։ **Ավ. Իսահակյան**, Մատենագիտական ցանկ, Երևան, 1976, 507 էջ։

Հոկտեմբերի 18. Պոլսի «Թատրոնը» (№ 169) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Էրիկ կնկան սերը», «Նավահանգստին մեջ մրրիկ», «Լուսավորյալ վարպետ մը», «Ժիրոնֆլե ժիրոնֆլա» և «Դրամական» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 230-232, հ. 10, էջ 29-37)։

Հոկտեմբերի 23. «Մշակը» (№ 42) արևելահայերեն սկսում է հրատարակել «Հարոյի» «Իմ մանկական հիշողություններից» հուշագրությունը, որն ավարտվում է հաջորդ համարում:

Հոկտեմբերի 25. «Մեղու Հայաստանին» (№ 41) արևելահայերեն սկսում է հրատարակել Համբարձում Առաքելյանցի «Ճանապարհորդություն Դավրիժից Նախիջևան» ուղեգրությունը: Որոշ ընդհատումներով շարունակվում է մինչև նույն պարբերականի № 48-ը (դեկտեմբերի 13):

Հոկտեմբերի 25. Պոլսի «Թատրոնը» (№ 170) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Դարձյալ դսրովախոսն», «Համարակալներուն պատմությունը», «Հյուր ընդունելու զգեստ» և «Քրիստոսատուր էֆենդիի ճրագը մարելու վրա» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 24-25, 37-43):

Հոկտեմբերի 25. «Մասիսը» (№ 1750) արևմտահայերեն հրատարակում է [Կարապետ ՈՒթուջյանի] «Երզնկայի և Ջմյուռնիո խնդիրք» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 30. «Մշակը» (№ 43) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Դավաճաններ» հրապարակախոսական հոդվածը:

Հոկտեմբերի 31. «Սիոնը» (№ 10) գրաբար սկսում է հրատարակել Գաբրիել դպիր Փոդիշանցու «Տիփտիկոն կամ հիշատակագիրք եկեղեցվո» ուղեգրական աշխատությունը, որն ավարտվում է հաջորդ համարում: Այն Ռումինիայում հայտնաբերել և հրատարակության է պատրաստել Մ. Մարկոսյանը: Հրատարակված է Կարապետ Բագրատունու «Բարառնութիւն» գրաբար բանաստեղծությունը:

Հոկտեմբեր-նոյեմբեր. «Հայկական աշխարհը» (№ 10-11), Հովհաննես Քուչուբեկյանի՝ ռուսերենից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, սկսում է հրատարակել «Անբաղդ Սելիմը և յուր պատմությունը» վեպը, որն ավարտվում է նույն պարբերականի հաջորդ համարում:

Նոյեմբեր. «Հույսը» (№ 11) արևմտահայերեն հրատարակում է «Ռուսիաբնակ հայք» հրապարակախոսական հոդվածը: Հակոբ Զաքարյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ժան-Բատիստ Մասիլեոնի «Աշխարհ» փիլիսոփայական էսսեն:

Նոյեմբերի 1. «Արշալույս արարատյանը» (№ 1026) արևմտահայերեն սկսում է հրատարակել Նահապետ Ռուսինյանի «Տարեբաշխական տեղեկությունք» տեսական-տոմարագիտական աշխատությունը, որն ավարտվում է նույն պարբերականի № 1031-ում (1876 թ. հունվարի 10):

Նոյեմբերի 1. «Մեղու Հայաստանին» (№ 42) արևելահայերեն հրատարակում է «Կուշտեր և սովալլուկներ» պատմվածքը (հեղ. Ս.Մ.=Սիմոնյանց Մարտիրոս ?):

Նոյեմբերի 1. Պոլսի «Թատրոնը» (№ 171) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Սիմոսին» խայտառակությունը», «Սիմոս» կատղած», «Վարչական մեքենա» և «Խիկարն կրոնավոր» երգիծապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 24-25, 37-43):

Նոյեմբերի 4. «Մասիսը» (№ 1754) արևմտահայերեն հրատարակում է Խորեն Նար-Պեյի «Հայկական սեպագիր ի Շիրակ» ընդդիմախոսականը: Բանավիճելով Մեսրոպ Սմբատյանի՝ «Արարատում» տպագրված «Բևեռագիր արձանագրություն ի Գանլիճա...» հոդվածի հետ (տե՛ս ներկա հատորը, 1875 թ. օգոստոս), Նար-Պեյն ապացուցում է, որ նրա հայտնաբերած արձանագրությունը «տասն տարիէ ի վեր» հայտնի էր գիտական աշխարհին:

Նոյեմբերի 6. «Մասիսը» (№ 1755) արևմտահայերեն հրատարակում է Հովհաննես Զամբազյանի «Դամբանական ընդ անակնկալ գուժ մահու Պալյան Հակոբ Սեպուհին...» եղերերգական բանաստեղծությունը:

Նոյեմբերի 8. «Մեղու Հայաստանին» (№ 43) արևելահայերեն հրատարակում է «Քաղքցու» հերթական «Ֆելիետոնը»: Երգիծաբար ներկայացված և բացասական է գնահատված «Օրիորդ Ն...»-ի գիրքը, որը վերանվանված է «Ընտանեկան անիծախոսություն»:

Նոյեմբերի 8. Պոլսի «Թատրոնը» (№ 172) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Ժամանակը ինչեր կընե», «Հարստահարությունք», «Հարյուրին տասը» երգիծապատումները։ Սկսում է հրատարակվել «Հարուստ ըլլալու միջոցները» պատմվածքը, որն ավարտվում է 1876 թ. № 185-ում (հունիսի 3) (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 47-63)։

Նոյեմբերի 11. «Մասիսը» (№ 1757) արևմտահայերեն հրատարակում է Պետրոս Ադամյանի «Ի մահ վսեմաշուք Հակոբ Պեյի Պալյան, արքունի ճարտարապետ և հայր արվեստողաց» եղերերգական բանաստեղծությունը։

Նոյեմբերի 13. «Մշակը» (№ 45) արևելահայերեն հրատարակում է «Մել.»-ի (Մելիքզադե=Րաֆֆի) «Մեր լուսավորիչները (հիշողություն մանկական կյանքից)» հուշագրությունը։ Որոշ վերամշակումներից հետո, որպես առանձին գլուխներ («Մանկավարժ և քահանա», «Դպրոց») հեղինակը այն զետեղել է իր «Կայծեր» վեպում (տե՛ս **Րաֆֆի**, Երկերի ժողովածու տաս հատորով, հ. 4, Երևան, 1956 թ.)։

Նոյեմբերի 14. Սևքար գյուղում (Իջևանի շրջան) ծնվեց մանկական բանաստեղծ, հոդվածագիր Հակոբ Աղաբաբը (Հակոբ Բեժանի Աղաբաբյան)։ Վախճ. 1926 թ. նոյեմբերի 28-ին Թիֆլիսում։

«Նեկտար» և «Ալմազ» կեղծանուններով հանդես էր գալիս ժամանակի պարբերականներում։

Մխիթարյան Ա., Վրաստանի սովետահայ գրականությունը, Երևան, 1966, էջ 84-92։

Նոյեմբերի 15. Պոլսի «Թատրոնը» (№ 173) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Շահեն չվաստկած միջոցին ծախսեն կվաստկին», «Թընելի կաշին», «Մինասյանց ատենաբանությունը» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 63-67)։

Նոյեմբերի 17. Նոր Ջուղայում ծնվեց երաժշտագետ, հայկական եկեղեցական երաժշտության տեսաբան Համբարձում քահանա Սիմյոնի Վարդանյանը։

«Հայաստանի կոչնակ», 1936, № 36 («Համբարձում քահանա Վարդանյան»)։

Նոյեմբերի 22. «Մասիսը» (№ 1762) արևմտահայերեն հրատարակում է Թովմաս Թերզյանի «Ի դառնաղետ մահ վսեմաշուք Հակոբ պեյի Պալյան» եղերերգական պոեմը:

Նոյեմբերի 22. Պոլսի «Թատրոնը» (№ 174) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Բարեկամ կառավարության ուշադրությունը», «Արգո թվաբանություն էֆենդի...» և «Մասիս» դարձյալ սահմանեն դուրս» երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 67-71):

Նոյեմբերի 22. «Լույս» հանդեսը (№ 21), Միհրան Թաթուլի բանաքաղությամբ և արևմտահայերեն դրվատական ներածականով, հրատարակում է մի հատված Գաբրիել Պատկանյանի «Անուշավան» ողբերգությունից (ունի «Առ հայրենասեր Գաբրիել Պատկանյան, հայկազն պուետ» վերնագիրը), որին հաջորդում է բանաքաղի «Պսակ ի քնար Գաբրիել Պատկանյանի» արևմտահայերեն բանաստեղծությունը:

Նոյեմբերի 26. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 535), ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն թարգմանությամբ (թարգմանիչ՝ «ուսումնական երիտասարդ մը»), հրատարակում է Ալֆոնսոս Լամարթինի «Կաթնածախ կինն և կաթնամանն» բանաստեղծությունը:

Նոյեմբերի 27. «Մշակը» (№ 47) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Միօրական ժողովագրություն» հրապարակախոսական հոդվածը: Այն հոդվածագրի հրապարակային դասախոսությունն է, որը կարդացվել է նոյեմբերի 11-ին, Թիֆլիսի Գիմնազիայում: Բարձրացված են ազգային կրթության և դաստիարակության մի քանի հարցեր:

Նոյեմբերի 29. «Մամուլ» շաբաթաթերթը (№ 536) արևմտահայերեն հրատարակում է «Սմբատի» «Ընթերցասիրություն» հրապարակախոսական հոդվածը: Ֆրանսերեն բնագրից կատարված արևմտահայերեն չափածո թարգմանությամբ հրատարակվում է Ժան Լաֆոնտենի «Կնիկ և գաղտնիք» առակը:

Նոյեմբերի 30. «Սիոնը» (№ 11) գրաբար հրատարակում է պարսկական Նուշիրվան արքայի չափածո խրատների ծաղկաքաղը «Ի բանից Նուշրէվանի» խորագրով, որոնք «քաղված են Ս. Աթոռույս (իմա՛. Երուսաղեմի «Ս.Հակոբ» վանքի – Ս.Շ.)

թանգարանի գրչագիրներեն» (տե՛ս «Խրատք Նուշիրուանի», աշխատասիրությամբ Բ.Լ. Չուգասզյանի, Երևան, 1966, էջ 212):

Նոյեմբեր-դեկտեմբեր. «Դպրոցը» (№ 11-12, երկրորդ մաս), ռուսերենից կատարված արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակում է «Տիցիան Վիչինելլի» կենսագրականը և «Ճանճը թռչում է», «Կախարդական լապտեր» նովելները:

Դեկտեմբեր. «Արևելյան մամուլը» (Ե. տարի, № 12) արևմտահայերեն սկսում է հրատարակել «Սյունիի» «Հույս» հանդեսն ու լեզվի խնդիրը» հրապարակախոսական հոդվածը, որն ավարտվում է նույն պարբերականի 1876 թ. № 7-ում (Զ. տարի, հուլիս): Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն համառոտ թարգմանությամբ, սկսում է հրատարակվել «Արդի Ռուսիա. կառավարություն, երիտասարդություն և ազնվապետություն» աշխատությունը: Ավարտ՝ նույն պարբերականի 1876 թ. № 2-ում (փետրվար):

Դեկտեմբեր. Էջմիածնի «Արարատը» (№ 12) արևելահայերեն հրատարակում է Վահրամ Մանկունու «Հոգվո փրկություն» հրապարակախոսական հոդվածը, Գաբրիել Պատկանյանի «Ցուպն Մովսիսի, յերրորդումն բղխեցուցանէ ջուր ի վիմի» գրաբար պոեմը և Ալեքսանդր Մխիթարյանցի «Ձմռան եղանակ» արևելահայերեն բանաստեղծությունը:

Դեկտեմբերի 9. Պարտիզակում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն) Արշավիր քահանա Վարդերեսյանը: Վախճ. 1958 թ. հունիսի 22-ին Կահիրեում:

Գևորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, էջ 598:

Դեկտեմբերի 11. «Մշակը» (№ 49) արևելահայերեն հրատարակում է «Ասիացու» հերթական «Ֆելիետոնը»:

Դեկտեմբերի 13. «Մեղու Հայաստանին» (№ 48) արևելահայերեն հրատարակում է Սեդրակ Մանդինյանի «Ազգային» հրապարակախոսական հոդվածը:

Դեկտեմբերի 17. Պոլսի «Թատրոնը» (№ 175) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Պաշտոնական ծանուցում», «Շնորհակալություն», «Ցավակցա-

կան նամակ մը» և «Նամակք «Թատրոնի» » երգիծական մանրապատումները (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 71-76):

Դեկտեմբերի 18. «Մշակը» (№ 50) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Լեզվի ազդեցությունը բնավորության կազմվելու վրա» հոդվածը:

Դեկտեմբերի 25. «Մշակը» (№ 51) արևելահայերեն հրատարակում է Գրիգոր Արծրունու «Հայերը Թուրքիայում» հրապարակախոսական առաջնորդողը: «Մատենագիտություն» խորագրի ներքո Անդրեաս Արծրունին վերաշարադրում է Մաքս Թիլմանի «Ուղևորություններ Կովկասում, Պարսկաստանում և Ասիական Թուրքիայում» աշխատությունը, անելով նաև որոշ դիտողություններ: «Ներքին լուրերում» տեղեկացվում է, որ Գևորգ Բարխուդարյանը ավարտել է Շիլլերի «Դոն Կառլոսի» թարգմանությունը և զբաղված է այն ծանոթագրելով: Այս առիթով տրված է «Դոն Կառլոսի» համառոտ վերլուծությունը:

Դեկտեմբերի 25. Սեբաստիայում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր, թարգմանիչ (անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից, պարսկերենից՝ հայերեն) Մարտիրոս Անանիկյանը: Վախճ. 1924 թ. օգոստոսի 3-ին Դամասկոսում:

«Հայաստանի կոչնակ», 1924, № 32 («Պրոֆ. Անանիկյանի մահը»), № 33 («Պրոֆ. Մարտիրոս Հ. Անանիկյան»), № 34 (ամբողջ համարը): **Պոտուրյան Մ.**, Հայ հանրագիտակ, էջ 160-161:

Դեկտեմբերի 27. «Մեղու Հայաստանին» (№ 50) արևելահայերեն հրատարակում է [Պետրոս Սիմոնյանցի] «Ազգային» գրախոսականը: Գրախոսված է Զարմայր Մսերյանցի «Պատմութիւն կաթողիկոսաց էջմիածնի, ի Սիմէօնէ մինչ ցՅովհաննէս (1763-1831)» աշխատությունը և այն դրական է գնահատված

Դեկտեմբերի 27. Պոլսի «Թատրոնը» (№ 175) արևմտահայերեն հրատարակում է [Հակոբ Պարոնյանի] «Թե սերը մարդս ինչպես կցատկեցունե» երգիծապատումը (տե՛ս **Հ. Պարոնյան**, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 233-236):

1875 (?). Պոլսում ծնվեց հոդվածագիր, հուշագրող Տելեմաք Բարթիկի Բարթողյանը: Վախճ. 1937 թ. նոյեմբերին Կահիրեում:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 378:

1875 (?). Պոլսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և ֆրանսերեն լեզուներով), թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Արտաշես Ճիզմեճյանը: Վախճ. 1938 թ. հունվարին Պոլսում:

Պոլսում խմբագրել է ”Journal d'Orient” (իմա՛. «Արևելյան ամսագիր») պարբերականը:

«Հայաստանի կոչնակ», 1938, № 6 («Մահ Արտաշես Ճիզմեճյանի»):

1875 (?). Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Արսեն Շմավոնյանը: Վախճ. 1940 թ. օգոստոսին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1940, № 32 («Վեր. Ա. Շմավոնյանի մահը»), № 34 («Վեր. Արսեն Շմավոնյան»):

1875 (?). Պոլսում (?) ծնվեց արվեստագետ, գրականության տեսաբան, վիպագիր (գերմաներեն և հայերեն լեզուներով), հոդվածագիր (մասնագիտությամբ՝ բժիշկ) Ռաֆայել Պազարճյանը: Վախճ. 1928 թ. հոկտեմբերի 19-ին Թուրինում (Հյուսիսային Իտալիա):

«Հայաստանի կոչնակ», 1923, № 47 («Ազգային կյանք»), 1924, № 30 («Ռաֆայել Պազարճյանի գրական գործը»):

1875 (?). Ալեքսանդրապոլում ծնվեց հոդվածագիր, խմբագիր Պարույր Զիվանու Լևոնյանը: Վախճ. 1934 թ. մայիսին Բուխարեստում:

1922 թ. Բուխարեստում հիմնել և մինչև մահը խմբագրել է «Նոր Արշալույս» եռօրյա լրագիրը:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 20 («Պարույր Լևոնյանի մահը»):

1875 (?). Արաբկիրում ծնվեց գրական-մշակութային գործիչ, հոդվածագիր (հայերեն և անգլերեն լեզուներով) Փիլիպոս Մինասյանը: Վախճ. 1929 թ. փետրվարի 11-ին Ֆիլադելֆիայում (Պենսիլվանիա նահանգ, ԱՄՆ):

«Հայաստանի կոչնակ», 1929, № 8 («Փիլիպոս Մինասյանի մահը»), № 15 («Փիլիպոս Մինասյան»):

1875 (?). Արաբկիրում ծնվեց հոդվածագիր (մասնագիտությամբ՝ դեղագործ) Արմենակ Սիրականյանը: Վախճ. 1938 թ. հունիսի 4-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1938, № 25 («Արմենակ Սիրականյանի մահը»), № 15 («Արմենակ Սիրականյան»):

1875 (?). Ակնում ծնվեց գրականագետ-բանասեր, հոդվածագիր Գարեգին Մանուկյանը: Վախճ. 1944 թ. վերջերին Պոլսում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Գ. Հնասեր» կեղծանունով:

«Հայաստանի կոչնակ», 1945, № 25 («Գարեգին Մանուկյան մեռած»), № 32 («Գ. Հնասեր»):

1875 (?). Շուշիում ծնվեց պատմաբան, թարգմանիչ (գերմաներենից՝ հայերեն) Լևոն Բաբայանը: Վախճ. 1920 թ. մարտի 30-ին:

«Հայ մշակույթի օրրանը (Ներսիսյանցիների հուշերը)», Երևան, 1971, էջ 90-91:

1875 (?). Շուշիում ծնվեց գրական-հասարակական գործիչ, լրագրող Գրիգորիս Տեր-Ավետիքյանը: Վախճ. 1913 թ. մարտի 7-ին:

«Մշակ», 1919, № 64 («Գրիգորիս Տեր-Ավետիքյան»):

1875 (?). Ծնվեց լրագրող, բանասեր-պատմաբան, կրթական-մշակութային գործիչ Համբարձում Ջորթյանը: Վախճ. 1952 թ. հոկտեմբերի 3-ին Հալեպում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Առնակ» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1923, էջ 227: **«Հայաստանի կոչնակ»**, 1952, № 50 («Պ.Հ. Ջորթյան հանկարծամահ»): **Անասյան Հ.**, Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ 974:

1875 (?). Թիֆլիսում ծնվեց գրական-մշակութային գործիչ, արձակագիր, բառարանագիր, թարգմանիչ (ռուսերենից և ֆրանսերենից՝ հայերեն) Աղեքսանդր Մելիքը (Գարեգին Քոլոշյան): Վախճ. 1934 թ. ապրիլի 5-ին Նյու Յորքում:

«Հայաստանի կոչնակ», 1934, № 15 («Մահազդ»), № 16 («Աղեքսանդր Մելիքի մահը»), № 17 («Աղեքսանդր Մելիք»):

–––Պոլսում ծնվեց երաժիշտ-կատարող, արձակագիր, հոդվածագիր Ստեփան Բաբելյանը: Վախճ. 1960 թ.:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 341-342: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. 1, էջ 169:

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, հոդվածագիր Սմբատ Գազազյանը: Երուսաղեմի միաբանության անդամ էր 1902 թ.: Վախճ. 1935 թ. հունվարի 10-ին Երուսաղեմում:

«Սիոն», 1935, № 2 («Հանգիստ Սմբատ եպիսկոպոս Գազազյանի»):

–––Պոլսում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանաստեղծ, թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն), խմբագիր Լևոն Լարենցը (Քիրիշճյան): Եղեռնամահ՝ 1915 թ.:

1908 թ. Բոստոնում հիմնել և մինչև 1910 թ. խմբագրել է «Ձայն հայրենյաց» ազգային, գրական և քաղաքական շաբաթաթերթը (վերջին տարիներին այն տեղափոխվել էր Պոլիս): 1912 թ. Պոլսում հիմնադրել և խմբագրել է «Մուրճ» օրաթերթը:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 37:

–––Ալեքսանդրապոլում ծնվեց իրավաբան, հայ իրավունքի պատմաբան, հոդվածագիր (հայերեն և ռուսերեն լեզուներով) Սիրական Թադևոսի Տիգրանյանը: Վախճ. 1947 թ. Երևանում:

«Մեր անվանի դասախոսները», էջ 246-247:

–––Կամարակապ գյուղում (Ակնի շրջան, Արևելյան Թուրքիա) ծնվեց կրթական-մշակութային գործիչ, մանկավարժ-լրագրող, թարգմանիչ (թուրքերենից՝ հայերեն) Մատթեոս Թորոսյանը:

Ազատյան Թ., Ակն և ակնցիք, Իսթանպուլ, 1943, էջ 103:

–––Կամարակապ գյուղում ծնվեց կրթական-մշակութային գործիչ, բանասեր, պատմաբան Մարտիրոս Հարությունի Հանեսյանը:

Նույն տեղում, էջ 105:

–––Զմյուռնիայում ծնվեց հոդվածագիր, թարգմանիչ (ֆրանսերենից՝ հայերեն), խմբագիր Հրանտ Մատթեոսի Մամուրյանը: Վախճ. 1935 թ. հունվարին Աթենքում:

1901-1909 թթ., ինչպես նաև 1919-1921 թթ. Զմյուռնիայում խմբագրել է «Արևելյան մամուլ» շաբաթաթերթը: Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Նուրիան» կեղծանունով:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 336: **«Հայաստանի կոչնակ»**, 1935, № 6 («Մահ Հրանտ Մամուրյանի»): **«Տարեցույց ազգային հիվանդանոցի»**, Պոլիս, 1936, էջ 187:

–––Զմյուռնիայում (?) ծնվեց արձակագիր, երգիծաբան, լրագրող (հայերեն և անգլերեն լեզուներով), խմբագիր Ալեքսանդր Շաքլյանը: Վախճ. 1912 թ. օգոստոսի 13-ին Փարիզում:

Հանդես էր գալիս ”D. Alexander” (անգլիական թերթերում), «Զարեհ Վարսամյան» («Անահիտում») և «Շայլոք» («Վաղվան ձայնում») կեղծանուններով: Զգալի դեր է կատարել «Վաղվան ձայնը» ամսաթերթի (Մանչեստր, 1898 թ.) և «Դաշինք» օրաթերթի (Զմյուռնիա, 1909-1919թթ.) հիմնադրման գործում:

Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Պոլիս, 1913, էջ 393-395, 1909, էջ 257:

–––**Հունիսի 2**. Ախալքալակում ծնվեց լրագրող (հայերեն և ռուսերեն լեզուներով), թատերագետ, հուշագրող, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ (1935 թ.), երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր (1936 թ.) Հովհաննես Տիգրանի Կարապետյանը: Վախճ. 1943 թ. դեկտեմբերի 4-ին Երևանում:

Ավագյան Լ., Երկրաբան Հովհաննես Կարապետյան, Երևան, 1975, 67 էջ: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 99:

–––Բալու քաղաքում ծնվեց երաժշտագետ, հայկական երաժշտության տեսաբան Սամվել Խաչատրյանը: Վախճ. 1945 թ. Ալեքսանդրիայում (?):

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 54:

–––Խարբերդում ծնվեց մշակութային գործիչ, լրագրող (հայերեն և թուրքերեն լեզուներով), թարգմանիչ (անգլերենից՝ հայերեն) Տոնապետ Լյուլեճյանը: Վախճ. 1917 թ. Կարինում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Բագրատ» կեղծանունով:

Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, էջ 32:

–––Երզնկայում ծնվեց մշակութային գործիչ, հասարակական կյանքի տեսաբան Վահրամ Արծրունին: Վախճ. Ալեքսանդրիայում 1944 (?) թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Ճշմարտախոս», «Տաբաշրջիկ», «Արծիվ», «Արշամ» կեղծանուններով:

Պոտուրյան Մ., Հայ հանրագիտակ, էջ 283: **Ստեփանյան Գ.**, Կենսագրական բառարան, հ. Ա, էջ 153:

–––Էրզրումում ծնվեց բանաստեղծ, թարգմանիչ (պարսկերենից, անգլերենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն) Արամ Չարըզը (Չարխչյան): Վախճ. 1947 թ. մայիսին Մոսկվայում:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Վտարանդի» կեղծանունով:

«Բազմավեպ», 1935, № 2-3 («Արամ Չարըզ»): **«Հայաստանի կոչնակ»**, 1947, № 34 («Արամ Չարըզի մահը»): **«Գրական թերթ»**, 1947, № 17 («Արամ Չարըզ»):

–––Այնթապում, Նշան Թերզյանի, Գրիգոր Լեյլեկյանի, Կարապետ Չեպեճյանի, Միսաք Գոչունյանի («Քասիմ») և այլոց նախաձեռնությամբ, իր գոյությունն է սկսում կրթական-մշակութային «Աղենական ընկերությունը»: Վերջինս ֆինանսապես նպաստում էր Այնթապի դպրոցներին, հրատարակում էր «Աղեն» խմորատիպ ամսագիրը, իրականացնում մշակութային զանազան նախաձեռնություններ: «Աղենական ընկերությունը» գոյություն ունեցավ մինչև 1915 թվականը:

«Հանդես ամսօրյա», 1962, № 9-12 («Պատմություն հայ մշակութային ընկերություններու»):

–––Գանձակում ծնվեց մշակութային-հասարակական գործիչ Լևոն Օղաբաշյանը: Եղեռնամահ՝ 1915 թ.:

Ժամանակի պարբերականներում հանդես էր գալիս «Սարգիս Բարսեղյան» և «Շամիլ» կեղծանուններով:

Թեոդիկ, Հուշարձան 1915 թ. ապրիլի 24-ի, Ալեքսանդրիա, 1939, էջ 61-62:

–––Ռոդոստոյում ծնվեց մշակութային գործիչ, բանաստեղծ (հայերեն և ֆրանսերեն լեզուներով) Ասատուր Նավարյանը: Վախճ. 1936 թ. մարտի 23-ին Նիցցայում (Հարավային Ֆրանսիա):

Գնորգյան Կ., Ամենուն տարեգիրքը, էջ 576:

* * *

–––Վենետիկում, Դավիթ Նազարեթյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ և իտալերեն-գրաբար զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Դանտե Ալիգիերիի «Հատընտիր քերթուածք յԱստուածային տեսլարանեն» ժողովածուն: 199 էջ:

Թարգմանությունից որոշ հատվածներ հրատարակվել են «Բազմավեպում», 1875 թ. էջ 149-160:

–––Վենետիկում, Էդուարդ Հյուրմյուզյանի՝ իտալերեն բնագրից կատարած գրաբար թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Մանցոնիի «Խօսեցեալք» վեպի առաջին հատորը: 461 էջ:

Երկրորդ հատոր՝ նույն թվականին: 477 էջ:

–––Վենետիկում հրատարակվում է Մաղաքիա Պետրոսյանի Նոր բառգիրք հայ-անգ-ղիարէն«» բացատրական բառարանը: 786 էջ:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Սամվել Գանթարյանի «Տարերք հռետորական արվեստի» աշխատությունը: 382 էջ:

–––Վենետիկում, անգլերեն և աշխարհաբար (միջին հայերեն) զուգահեռ բնագրերով, հրատարակվում է Հակոբ քահանա Գրիգորենցի «Գովք Պրիթանիո» չափածո ստեղծագործությունը: Այն հրատարակության է պատրաստել Ղևոնդ Ալիշանը: 36 էջ:

–––Վենետիկում արևմտահայերեն հրատարակվում է Մանվել Քաջունու «Արվեստա-բանություն կամ շտեմարան գիտելյաց» աշխատությունը: 460 էջ:

Նույնը՝ 1897 թ. (694 էջ), 1909 թ. (720 էջ), ամեն անգամ զգալի հավելումնե-րով ու լրացումներով:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Հովսեփ Գաթըրճյանի «Բան դամբանական ի մահ Պետրոս էֆենդի Յաղլըքճյան» խորագիրը կրող մահա-խոսականը: 15 էջ:

–––Վիեննայում արևմտահայերեն հրատարակվում է Ստեփան Մելքիսեդեկյանի «ՈՒթօրյա հոգևոր կրթություն ի պետս կուսանաց և բարեպաշտ անձանց» կրոնափիլիսոփայական աշխատությունը: 446 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժյուլ Վեռնի «Աշխարհի շրջանն ութսուն օրվան մեջ» վեպը: 246 էջ:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Մատթեոս Մամուրյանի «Համառոտ ընդհանուր պատմություն դպրոցաց համար (հին պատմություն արևելյան ժողովրդոց)» աշխատության Ա հատորը: 208 էջ:

Նույնն անփոփոխ՝ Պոլիս, 1884 թ., 200 էջ:

Մասն երկրորդ (Ա հատորի)՝ Զմյուռնիա, 1877 թ., 400 էջ:

Մասն երրորդ (Ա հատորի)՝ Զմյուռնիա, 1878 թ., 508 էջ:

Հատոր Բ (ունի «Հին պատմություն Կարքեդոնացվոց, հունաց և հռովմեացվոց» վերնագիրը), Զմյուռնիա, 1878 թ.:

Նույնն անփոփոխ՝ Զմյուռնիա, 1900 թ., 210 էջ:

Հատոր Գ. (ունի «Միջին դարու պատմություն» վերնագիրը), Զմյուռնիա, 1878 թ., 508 էջ:

–––Զմյուռնիայում արևմտահայերեն հրատարակվում է Հարություն Սվաճյանի «Դրախտահարս Մարի Տայյան» եղերերգական պոեմը: 40 էջ:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Իք. Մարվելի (իմա՛. Դոնալդ Միտչել) «Ամուրիի մը երազները կամ սրտի գիրք մը» աշխատությունը: 146 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Մսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժորժ Զանդի «Ֆլավի» վիպակը: 105 էջ: Վերջում (էջ 84-105) «Ժորժ Սան» խորագրի ներքո թարգմանիչը զետեղել է իր հեղինակած հոդված-դիմանկարը:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Մսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Ժորժ Զանդի «Լեոն Լեոնի» վեպը: 166 էջ:

–––Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Մահ Պարետի» դյուցազներգությունը: 170 էջ:

–––Զմյուռնիայում, Գրիգոր Մսերյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Լուի-Ամեդեյ Աշարի «Հետվիճի երդումը» վիպակը: 92 էջ:

–––Զմյուռնիայում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Անուշավան» պատմական ողբերգությունը: 119 էջ: «Նախաշավիղ մատենիս» խորագիրը կրող առաջաբանում, որի հեղինակն է Գարեգին Սրվանձտյանցը (էջ Ա-ԺԳ), տրված է Գաբրիել Պատկանյանի կյանքի և գրական գործունեության գնահատականը:

–––Զմյուռնիայում, Մատթեոս Մամուրյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է *** աբբայի «Անիծյալն» վեպի առաջին հատորը: 192 էջ:

Երկրորդ (224 էջ), երրորդ (202 էջ) և չորրորդ (191 էջ) հատորներ՝ նույն թվականին:

–––Մոսկվայում արևելահայերեն հրատարակվում է Ավագ Գրիգորյանցի (հետագայում՝ Գրիգոր քահանա Գրիգորյան) «Հայկական գեղագրություն» վիմատիպ աշխատությունը: 12 էջ:

–––Դոնի Ռոստովում աշխարհաբար հրատարակվում է Արսեն Կրիտյանի «Աղավնյակ (երեխայական վիպասանություն)» գեղարվեստական ստեղծագործությունը: 77 էջ:

–––Դոնի Ռոստովում աշխարհաբար հրատարակվում է Ռափայել Պատկանյանի «Սրբուհի Եղիայան Խլըտճյանի կենսագրությունը» աշխատությունը: 60 էջ:

–––Դոնի Ռոստովում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Մրմունջք Հիսուսի» դյուցազներգությունը: 65 էջ: Որպես առաջաբան հեղինակը զետեղել է Խրիմյան հայրիկի և Գարեգին Սրվանձտյանի՝ իրեն հասցեագրված նամակները, որտեղ վերջիններս մեծ գովեստով են արտահայտվում վերոհիշյալ դյուցազներգության մասին:

–––Դոնի Ռոստովում աշխարհաբար հրատարակվում է Գաբրիել Պատկանյանի «Հռիփսիմե կամ փրկություն Հայաստանի» պատմական ողբերգությունը: 171 էջ:

–––Դոնի Ռոստովում աշխարհաբար հրատարակվում է Գրիգոր Ալթնթոփյանի «Սեր հայրենյաց» թատրերգությունը: 98 էջ:

–––Դոնի Ռոստովում Նոր Նախիջևանի բարբառով հրատարակվում է «Խրիմու հայոց լեզվովը շարադրված առակներ» ժողովածուն: Այն հրատարակության է պատրաստել (բնագրի ճշտում, առաջաբան, ծանոթագրություններ) Գաբրիել Այվազյանը (Այվազովսկի):

–––Պոլսում, Մելքոն Նազիկյանի՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն չափածո թարգմանությամբ, հրատարակվում է Ալեքսանդր Վեյի բանաստեղծությունների ժողովածուն «Քերթվածք Նվիրականք» խորագրով: 104 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Տիգրան Գափամաճյանի արձակ գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուն «Դյուցազնությունք» խորագրով: 102 էջ:

–––Պոլսում, Հ. Քիպարյանի՝ անգլերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է Տ. Սկուտրի «Պատմություն Հնդկաստանու հեթանոս կռապաշտից» աշխատությունը: 85 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Յ. Ա.-ի (Համբարձում Ալաճաճյան?) «Ո՞վ է մեղավոր» գրքույկը (Ա. տետր): 46 էջ: Հետագա տետրակները չեն հրատարակվել:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Բարաղամյանի «Կենսագրություն և պարտք պանդուխտին» գիրքը: 63 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պետրոս Ազնավուրի (Ազնավուրյան) «Առևտրական և արվեստագիտական աշխարհագրություն Եվրոպիո և Օսմանյան պետության» աշխատությունը: ԺԳ+380 էջ: Վերջում զետեղված է նույն հեղինակի «Մետրական չափուց արժեքը օսմանյան չափուց բաղդատությամբ» հատվածը:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Հակոբ Գուրգենի ճառը «Խօսք ասացեալ ի Հակովբայ Գուրգենայ ի կաճառի Վարազդատյան ընկերության» աշխատությունը (Ա հրատարակություն): 16 էջ:

–––Պոլսում, Գրիգոր Կոստանդնուպոլսեցու բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Սիրուն զբոսարան» աշխատությունը: 88 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Սեդրակ Տեր-Սարգսյանցի «Վառարանի մը կայծեր կամ մաս մը իմ հին խաղերից» ստեղծագործությունը: 73 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Հովհաննես Ճամպազյանի չափածո և արձակ ստեղծագործութիւնների ժողովածուն, «Արձանականք յաւերժից» վերնագրով: 224 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Ղևոնդ Շիրոյան Վանեցու «Անխոս Մարգարիտ» դյուզացներգությունը: 127 էջ:

–––Պոլսում գրաբար հրատարակվում է Հովհաննես Փափազյանի «Լուծումն պատասխանւոյ Ակնայ բողոքականաց առ Ակնից և համօրէն բողոքական ազգայինս» աշխատությունը: 112 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Պետրոս վարդապետ Կալակոհեցու «Բացատրություն եպիսկոպոսական ամուսնության» գրքույկը: 26 էջ:

–––Պոլսում Վանի բարբառով հրատարակվում է Արիստակես Տեր-Սարգսենցի «Պանդուխտ վանեցին. նամակներ, երգեր, առածներ, առեղծվածներ» խորագիրը կրող ժողովածուն: 166 էջ: Որպես առաջաբան զետեղված է Խրիմյան Հայրիկի նամակը, որտեղ նա դրվատանքով է արտահայտվում ամբողջ ժողովածվի մասին:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Հովհաննես Մաթևյանի «Մուշեղ և Կալինիկե կամ պսակ մը անջրդի» վեպը: Վերջում զետեղված են նույն հեղինակի «Պանդուխտ», «Գանգատ», «Հայրենակիցք ինչ ընենք» բանաստեղծությունները: 260 էջ:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Գարեգին Սրվանձտյանի «Շուշան Շավարշանա» ողբերգությունը: 110 էջ:

Նույնը՝ 1911 թ., 64 էջ:

–––Պոլսում, արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Եղիազար Մուրադյանի «Տեսական և գործնական քերականություն ֆրանսերենի, հայերեն բացատրությամբ» աշխատությունը: 207 էջ:

Չնայած հանդիսանում է Երուսաղեմում հրատարակված՝ նույն հեղինակի համանուն աշխատության վերահրատարակությունը (տե՛ս ներկա հատորը, 1869 թ.), որի համար էլ ունի «երկրորդ տիպ» նշումը, բայց հեղինակի կատա-

րած ուղղումներն ու լրացումներն այնքան շատ են, որ ինքնուրույն աշխատության արժեք է ստանում:

–––Պոլսում արևմտահայերեն հրատարակվում է Մ.Բ. Խոջայանցի «Նոր հրաշք ի Գում Գաբու և նոր գյուտ աներևույթ ըլլալու» աշխատությունը: 79 էջ:

–––Վաղարշապատում գրաբար հրատարակվում է Աբել Մխիթարյանի «Կաթողիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ ընդ չորից վանօրէից նորին» աշխատության Բ հատորը: 56 էջ: Առաջին հատորի վերաբերյալ մանրամասնություններ գտնել չենք կարողացել:

–––Վաղարշապատում արևմտահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Գաբրիել Այվազյանի (Այվազովսկի) «Նախակրթարանք հայերէի լեզուի, յօրինեալ ի պէտս ազգային դպրոցաց» դասագրքի Ա մասը: 107 էջ (Մինչ այդ ունեցել է ևս երեք հրատարակություն):

Բ մաս՝ անդ, 1876 թ., 123 էջ:

Գ մաս՝ անդ, 1877 թ., 287 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Սեդրակ Մանդինյանի «Մանկավարժական տարակուսանքներ մեր մեջ» աշխատությունը: 73 էջ:

–––Թիֆլիսում աշխարհաբար հրատարակվում է Սեդրակ Մանդինյանի «Դպրոցական սահմանադրություն» աշխատությունը: 46 էջ:

–––Թիֆլիսում, արևելահայերեն տրվող մեկնաբանություններով, հրատարակվում է Ղազարոս Աղայանի «ՌԻսումն մայրենի լեզվի, ծնողաց և ուսուցչաց համար» մեթոդական-շպրոցական դասագիրքը:

Նույնը՝ 1876 թ. (45 էջ), 1878 թ. (45 էջ), 1882 թ. (64 էջ), 1889 թ. (80 էջ), 1894 թ., (81 էջ), 1895 թ. (80 էջ), 1897 թ. (80 էջ), 1901 թ. (80 էջ), 1902 թ. (80 էջ), ամեն անգամ որոշ փոփոխումներով ու լրացումներով: Այս ցանկում կան վերահրատարակությունների մի քանի բացթողումներ, որոնց վերաբերյալ տեղեկություններ գտնել չենք կարողացել:

–––Թիֆլիսում, Ղ. Ափյանցի՝ անգլերեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ և թարգմանչի առաջաբանով, հրատարակվում է Բենիամին Ֆրանկլինի «Փորձառու Ռիշարի խրատները կամ հարստանալու միջոց» աշխատությունը: 48 էջ:

–––Թիֆլիսում արևելահայերեն հրատարակվում է Գևորգ Շահվերդյանցի «Վարդ և Մանիշակ. վիպասանություն գյուղական կյանքից» գեղարվեստական ստեղծագործությունը: 64 էջ:

–––Պետերբուրգում, Քերովբե Պատկանյանի նախաձեռնությամբ, հրատարակվում է Ռափայել Պատկանյանի արձակ գեղարվեստական ստեղծագործությունների ժողովածուն, «Ռ. Ախտամերկյանի պատմվածքները Նոր Նախիջևանի ոճով» վերնագրով: 140 էջ:

–––Արմաշում, Հովհաննես Տեր-Կարապետյան-Տերոյենցի (Չամուռճյան)՝ ֆրանսերեն բնագրից կատարած արևմտահայերեն թարգմանությամբ և առաջաբանով, հրատարակվում է Մկրտիչ Էմինի «Հնախոսությունք ի վերա հայկական հեթանոսության» աշխատությունը: 79 էջ:

–––Արմաշում արևմտահայերեն հրատարակվում է Ներսես Վարժապետյանի «ՈՒսումն համաբարբառ ավետարանի տյառն մերո» աշխատությունը: 733 էջ:

–––Բաքվում, Ա. Քալանթարյանցի՝ գերմաներեն բնագրից կատարած արևելահայերեն թարգմանությամբ, հրատարակվում է «Բեռլինյան գաղտնիք» գրքից մի հատված՝ «Ոստայնանկ (իմա՛. ջուլհակ – Ս.Շ.) Գրեյֆը և նրա ընտանիքը» վերնագրով: 88 էջ:

–––Բաքվում արևելահայերեն հրատարակվում է Ց.Խ.Ք.Մ.-ի (իմա՛. Հարգոյապատիվ Խորեն քահանա Միրզաբեկյանց) բանաստեղծությունների ժողովածուն, «Պարտիզիկ» խորագրով: 198 էջ:

–––Երուսաղեմում գրաբար հրատարակվում է «Նշխարք նախնեաց» ժողովածվի Ա գիրքը: 60 էջ:

–––Երուսաղեմում գրաբար, մասնագիտական առաջաբանով ու ծանոթագրություններով, հրատարակվում է «Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» » պոեմը («Ընտիր մատենագիրք»շարքով): 600 էջ:

Վերջում (էջ 539-600) զետեղված է «Աւետարանք բժշկութեան» հատվածը: